

Հ Հ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ISSN 2953-822X:

ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿՈՒԹՅԱՆ
ԵՎ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՂՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2023 թ., նոյեմբերի 15-16)

1

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

Հ Հ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2023 թ., նոյեմբերի 15-16)

1

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհուրդը:

Խմբագրական խորհուրդ՝

Վ.Լ. Գատվալյան (նախագահ) Հ.Վ. Սուքիասյան
Լ.Շ. Հովհաննիսյան Գ.Կ. Խաչատրյան
Ն. Մ. Սիմոնյան Թ.Ա. Ասոյան

Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ (Միջազգային գիտաժողովի նյութեր.
Երևան, նոյեմբերի 15-16, 2023թ.) - Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023.- 277 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2023 թ. նոյեմբերի 15-16-ին Երևանում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի, ԵՊԲՀ հայոց լեզվի ամբիոնի և Գավառի պետական համալսարանի
կազմակերպած միջազգային գիտաժողովի զեկուցումները: Ներկայացվող նյութերը վերաբերում են
լեզվի ուսումնասիրության տարբեր ոլորտների (ընդհանուր լեզվաբանություն, հայոց լեզվի
պատմություն, բառագիտություն, բարբառագիտություն և այլն): Դիտարկվում են նաև լեզվի
ուսուցման և կանոնարկման արդի խնդիրներ: Ժողովածուն օգտակար կլինի ինչպես ընդհանուր
լեզվաբանական, այնպես էլ հայոց լեզվի ուսումնասիրության տեսական ու գործնական հարցերով
հետաքրքրվողներին, նաև՝ ուսանողներին:

DOI: 10.54412/2953822X

© ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2023

ՀԵՏԱԶԳՎԱԾ ԽՈՍՔ ՌԻՍՈՒՑՉԻՍ

Սուրբհայան Հենրիետա

Երևանի պետական բժշկական համալսարան
Հայոց լեզվի և բժշկական տերմինաբանության ամբիոն
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
henvs@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-3

Բանալի բառեր. երախտագիտություն, մասնագետ, գիտական ղեկավար, պատմություններ, հիշողություններ:

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ, սիրելի՛ գործընկերներ, թույլ տվեք վստահություն հայտնել, որ այս տարի ոչ միայն լեզվաբանական, այլև ամբողջ հայագիտական ու արևելագիտական հանրության շուրթերին մեկ վսեմ անուն է՝ Էդուարդ Աղայան: Նրա մտքի թռիչքները վեր էին և այսօր էլ վեր են տարածությունից և ժամանակից, ուստի նաև թույլ տվեք արձանագրել, որ ժամանակային մեծ չափումներով նա ընդամենը 110 տարեկան է և իբրև հավերժի երիտասարդ ճամփորդ՝ դարձյալ մեզ հետ է: Եվ հենց մեծ գիտնականի հոբելյանի առթիվ էլ նախաձեռնել ենք սույն հայերենագիտական գիտաժողովը՝ նվիրելով մեծ լեզվաբանի խնկելի հիշատակին:

Թանկագի՛ն բարեկամներ, ահա այս բարձր լսարանի առջև կանգնած՝ մտածում եմ՝ ի վերջո ով էր այդ զարմանահրաշ մարդը՝ լոկ ականավոր լեզվաբան, ընդհանուր լեզվաբանության խոշոր տեսաբան, անզուգական բառարանագի՛ր, մեղվաջան բարբառագե՛տ, հայոց լեզվի պատմահամեմատական քննության ոլորտում նոր լայնահուն ուղիներ բացած խոշոր գիտնական, Երևանի պետական համալսարանի բանիբուն դասախոս, Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի բազմագետ գիտաշխատող, մեծահամբավ ակադեմիկոս, թե՛ մի այնպիսի անհատականություն, որին շատերը տակավին չեն հասցրել ամբողջապես ճանաչել: Ուստի կհամարձակվեմ մի կողմ տանել տասնամյակների վարագույրը և մի այլ, փոքր-ինչ անսովոր լույսի տակ ավելի տեսանելի ու շոշափելի դարձնել Էդուարդ Աղայան մարդո՛ւ կերպարը: Հավանաբար նկատելի է, որ ինձ համար փոքր-ինչ դժվար է մնալ սոսկ գիտաժողովի համար պահանջվող ակադեմիական վարվելակարգի սահմաններում և չասել այն, ինչը տարիներով կուտակվել է իմ՝ նրա աշակերտի սրտում և թերևս սպասել է հենց ա՛յս առիթին՝ իր ուսուցչին վերադարձնելու այն, ինչը հոգու ամբողջ ջերմությամբ նա տվել է ինձ նման շատերին:

Եվ այսպես, թերթենք նրա վառ ու բեղմնավոր կյանքի էջերը և տեսնենք՝ ինչ գաղտնիքներ ու գեղեցիկ անակնկալներ են անթեղված այնտեղ:

Բարեկամներ, նրա երբեմնի՛ ուսանողներ, գիտե՛ի՞ք արդյոք, որ ընկեր Աղայանը ոչ միայն հայ ժողովրդական երգի ու երաժշտության մեծ սիրահար էր, այլև հմուտ թառահար:

Ականատեսները վկայում են, որ պատանի Էդուարդը տարբեր առիթներով սիրել է ձեռքը վերցնել հորից ժառանգություն ստացած թառը և հնչեցնել արևելյան ու հայկական հոգեպարար մեղեդիներ: Հարցրեք Ռուբեն Մաթևոսյանին. նա կպատմի ավելին: Ցավոք, Ադայանի մանկությունը լեցուն է եղել տխուր ու մռայլ գուներով: Առաջին աշխարհամարտից չվերադարձած հոր մանկահասակ որդին Մեդրի քաղաքատիպ ավանի իր հայրենի տանը դուլերով ջուր է կրել՝ ջրելու իրենց այգու ծառերը, օգնել է մայրիկին՝ վաճառքի համար մրգերով լի պարկեր ուսին տանելով շուկա: Եվ այդ ամենն արել է հրնթացս իր բացառիկ ընթերցասիրությանն ու թվաբանական բարդ գործողություններ անելուն: Ընտանիքի հոգսերը թեթևացնելու համար այգեգործություն է արել, անգամ հաշվապահ է աշխատել կոլտնտեսությունում:

Տաղանդավոր երիտասարդն ընդունվում է համալսարան: Այստեղ նրան միանգամից նկատում է Հրաչյա Աճառյանը, ընդ որում՝ ոչ առանձնապես դրական հայացքով: Խնդիրն այն է, որ երբ ուսանող Էդուարդն իր հանճարեղ դասախոսի օրինակով փորձում է կատարելապես տիրապետել ֆրանսերենին ու պարսկերենին, ամեն դասից հետո սկսում է իր հարցերով պարզապես հարցապնդել Աճառյանին՝ պրոֆեսոր, ֆրանսերեն ինչպե՞ս է այս բառը, այն բառը և այլն: Եվ ինչն է հետաքրքիր: Աճառյանին թվում է, թե այդ տղան չարաճճիորեն փորձում է իր իմացությունը: Բայց երբ Էդուարդը նրան ցույց է տալիս ֆրանսերենից կատարած իր թարգմանության տեքստը, Աճառյանը խոր շունչ է քաշում, հիանում թարգմանության բարձր որակով և անգամ ներողություն խնդրում անտեղի կասկածի համար: Բարեկամներ, գուցե հենց այդ պահից է սկսվել գիտնական Ադայանի մեծ ճանապարհը և Աճառյան-Ադայան մեծ բարեկամությունը, որը շարունակվել է մինչև Աճառյանի կյանքի վերջին օրերը: Ադայանը պաշտել է իր ուսուցչին և հատուկ ակնածանքով ու բարեխղճությամբ է ձեռնամուխ եղել նրա լեզվաբանական գլուխգործոցների խմբագրմանն ու հրատարակմանը:

Խիստ այժմեական խորհուրդ ունի այս մի պատմությունը: 1946-ին Ադայանին հրավիրում են Լուսավորության մինիստրություն՝ որպես բուհերի բաժնի վարիչի: Նա այդ ժամանակ արդեն արժանացել էր պրոֆեսորի կոչման, և խնդրեմ. այսպիսի կտրուկ շրջադարձ: Մեկ ուրիշը լիներ նրա փոխարեն, հավանաբար մեծ խանդավառությամբ ընդառաջ կգնար բարեհաճ ճակատագրին: Բայց Ադայանը մինիստրությունում վարչական աշխատանքին «դիմանում է» ընդամենը մեկ տարի, ապա կտրուկ հրաժարվում պաշտոնից՝ շարունակելով իրեն ի վերուստ տված առաքելությունը: Ի դեպ, բանաստեղծ Վահագն Դավթյանը նրա առաքելությունը հենց այդպես է բնորոշել. «Նա գիտնական է ծնվել վերին շնորհիվ»:

32 տարեկանում Էդուարդ Ադայանին շնորհվում է դոկտորի գիտական աստիճան: Այդ պատվին այդ տարիներին եզակիներն էին արժանանում: «Այն ժամանակ դա հրաշքի նման բան էր», - այդ փաստը հիշելով՝ գրել է գրականագետ Էդուարդ Ջրբաշյանը: Միրելի՛ գործընկերներ, կարծում եմ՝ շատերս ենք հիշում ուղղագրության հարցի շուրջ Ռաֆայել

Իշխանյանի և Էդուարդ Աղայանի վեճը: Իշխանյանն Աղայանի ուսանողն էր, հետագայում՝ գործընկերը: Եվ ահա թե ինչպես է հետագայում Աղայանին հիշել Իշխանյանը՝ գրելով. «Նա ուներ գիտնականի երկու կարևոր ու էական հատկանիշ՝ հանդուրժողականություն և անհիշաչարություն»: Բարեկամներ, մեր սիրելի ուսուցիչը որքան էլ հետևողական ու սկզբունքային էր գիտական վեճերում և իր երկաթյա տրամաբանությամբ ու ամուր փաստարկներով զինաթափում էր ընդդիմախոսին, նույնքան էլ օժտված էր հոգու ասպետականությամբ և ուժեղ, ինքնաբավ անհատականությամբ բնորոշ տիեզերական մեծահոգությամբ: Երբ Ռաֆայել Իշխանյանը ներկայացրեց իր դոկտորական ատենախոսությունը, Աղայանը անաչառ մասնագետի կեցվածքով բարձր գնահատեց այն: Վերջերս կարդացի մեր լուսահոգի գործընկերոջ, նույնպես Աղայանի երբեմնի ուսանող Խաչիկ Բաղիկյանի գիրքն իր ուսուցչի կյանքի ու գործի մասին: Այդտեղ կա մի դրվագ. Աղայանը նկատում է մի շնորհալի ուսանողի և իր տանն անձնական հսկա գրադարանից սիրահոժար նրան հանձնում երկու կարևոր գիրք: Հանկարծ նկատում է տղայի մաշված կոշիկները: Չի փորձում վիրավորել մարդուն և աննկատ նրա գրպանն է դնում մի հինգորբիլանոց: Աղայանի ուսանողները պատմում են նաև, որ նա իր աշխատավարձի մի մասը հատկացնում էր գյուղերից եկած և թոշակ չստացող ուշիմ ուսանողներին, իսկ հաճախ էլ պարզապես իր գրպանից փող էր տալիս նրանց:

Իսկ այժմ ինձ համար՝ անմոռանալի օրվա մասին:

Ակադեմիկոս Էդուարդ Աղայանի ասպիրանտն եմ եղել՝ «Հնդեվրոպական լեզուների համեմատական քերականություն» մասնագիտությամբ: Բախտն է լավ գիտական ղեկավար տալիս... Երախտագիտությունս ցանկանում եմ հնչի ներկայով:

Մի րելի՛ ընկեր Աղայան, աշխարհին աշխարհի չափ շնորհակալ եմ, որ Դուք իմ գիտական ղեկավարն եք: Ակնածանքը Ձեր հանդեպ գալիս է Ձեր անցած տարիների վաստակի գիտակցումից:

Գիտություն թե մանկավարժություն տասնամյակներ շարունակ մեկտեղվեց Ձեր ամենօրյա աշխատանքում:

Անմոռանալի օր... ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնում «Աճականը հայերենում» իմ ատենախոսության քննարկումն էր: Քննարկումը բուռն անցավ, բայց... ինձ համար կարևորը Ձեր կարծիքն էր. Դուք գոհ էիք քննարկումից: Իսկ պաշտպանությունից հետո առաջարկեցիք ատենախոսությունս գիրք դարձնել. Այդպես էլ արեցի: Դուք խմբագրեցիք գիրքս: Ինձ ընծայագրով նվիրեցիք լեզվաբանական մեծարժեք բառարանների կողքին իր հաստատուն տեղը ունեցող Ձեր բառարանը՝ «Արդի հայերենի բացատրական բառարանը»: Մեծագույն արժեք՝ ամենաթանկը...

Տարիների հեռվից հիմա եմ հասկանում, որքան ակնածանք ունեմ Ձեր հանդեպ: Երախտագիտությունս՝ Ձեր վաստակին: Խոնարհումս...

Բարեկամներ, ուզում եմ խոսել նաև ընկեր Աղայանի հումորի զգացումի մասին: Ուներ մի ասպիրանտ՝ Չաղայան ազգանունով: Փաստորեն ստացվում էր՝ Աղայան-Չաղայան: Երբ Խաչիկ Բաղիկյանն իր գյուրեցի համերկրացուն ծանոթացնում է նրա ղեկավարի հետ, Աղայանն ասում է. «Չաղայան, ա՛յ տղա, դու իմ ազգանվան բացասո՞ւմն ես»:

Հաջորդ պատմությունը: Աղայանն ընունելության քննությունների ընդունման հանձնաժողովի նախագահ էր: Մոտենում է դարձյալ գյուրեցի մի սիրունիկ աղջնակ և հարցատոմս վերցնում: Աղայանը հարցնում է՝ ինչ է գրականության հարցը: Մա թե՛ Պոռոշյանի «Հացի խնդիր» վեպն է, բայց ես Պոռոշյանին չեմ սիրե, ըղիգ ի՞նչ գրող է, որ հարց եք դրել: «Լավ,-ասում է Աղայանը,-Ավարայրի ճակատամարտը ե՞րբ է տեղի ունեցել»: «Խոմ ես էնտեղ չեի», -բացականչում է աղջիկը: Աղայանը լիաթոք ծիծաղում է և քննողներին ասում. «Լավ աղջիկ է. սովորելու հնարավորություն տանք»: Բայց այս երկխոսությունը դրանով չի ավարտվում: Բարձրակետը դառնում է աղջկա արձագանքը: Ասում է. «Ես ողորմություն չեմ խնդրե: Էկոդ տարի լավ կպարապեմ ու կընդունվեմ»: Ճիշտն ասած, չգիտեմ՝ ընդունվել է այդ աղջիկը, թե ոչ, բայց որ արժանացել է Էդուարդ Աղայանի հետ զվարճալի, բայց մարդկային շփման երջանիկ պատեհությանը, պետք է, որ հիշի ամբողջ կյանքում:

Միրելի՛ գործընկերներ, շատերը կհիշեն, թե նաև ինչ լեգենդներ էին հյուսվում մեր մեծ ուսուցչի մասին: Այդ մեծ մարդու տղամարդկային հմայքը, շոայլ բնավորությունն ու բնատուր կնամեծարությունը երբեմնայլ կերպ ընկալվում ու մեկնաբանվում: Այդ դիտանկյունից Աղայանին լավագույնս բնութագրել է գրականագետ Հրանտ Թամրազյանը. «Նա հարուստ հոգի էր, հազվագյուտ մարդ՝ բանաստեղծական շոայլ տարերքով: Միրում էր մարդկանց, աշխարհը, կյանքը, գիտեր ջերմ սիրել և տառապել»: Հետաքրքիր է նաև ակադեմիկոս Էդուարդ Աթայանի կարծիքը նրա մասին. «Նա ինքնատիպությամբ աղա և աղայությամբ ինքնատիպ մարդ էր...»: Իսկ ինչպե՞ս էին Աղայանի տղամարդկային վարքագիծը ընկալում նրան շրջապատող կանայք: Դա, թերևս, ավելի կարևոր է: Այս առումով, ինչպես ասում են, ամեն ինչ տեղն է գցում նրա ամբիոնում աշխատած գեղեցկատես լեզվաբան Էմմա Մկրտչյանի ահա այս գնահատականը. «Շատ բան կարելի էր սովորել նաև Աղայան մարդուց: Վայելուչ պահելաձև, չափի զգացում, նրբավարվեցողություն, լսելու, դիմացինի դրության մեջ մտնելու պատրաստակամություն: Նրա մեջ ամեն ինչ բնական էր. ոչ մի նշույլ իրեն, իր իմացածը ցուցադրելու, իր կարծիքը պարտադրելու, թեև գիտեր անհրաժեշտության դեպքում անառարկելիորեն ապացուցել իր կարծիքի ճշտությունը, խոսքը հասցնել մինչև վերջ, սակայն առանց ձայնը բարձրացնելու, առանց մարդու անձը վիրավորելու...»:

Միրելի՛ գործընկերներ, մեկ ուրիշ դրվագ: Մեր բաժնում նշում էինք ընկեր Աղայանի ծննդյան տարեդարձը: Մեծ էր ընկեր Աղայանի սերը գրականության և հատկապես պոեզիայի հանդեպ: Այդ օրը բաժնի նիստից հետո ընկեր Աղայանը ասումնքեց

Իսահակյանի «Հէ՛յ, դու ջահել, հպարտ հասակ» բանաստեղծությունը և խոսքը եզրափակեց հետևյալ տողերով. «Միրունները պարտեզների Քնքուշ բացված վարդն են սիրում. Ես հուր – վարդն եմ ժեռ սարերի՝ Մերս հասած արևներում»:

Այժմ, տարիների հեռվից իմաստավորելով այդ գողտրիկ դրվագը՝ մի անբացատրելի տրամոթյամբ եմ լցվում, թե արդյոք մենք՝ նրա երբեմնի ժամանակակիցները, համարժեքորեն՝ էինք գիտակցում նրա ներկայությունը մեր կողքին, արդյոք խորությամբ ընկալում էինք մեծ գիտնականի ու մեծ մարդու բանաստեղծական էությունը, չգիտեմ ...

Միրելի՛ ներկաներ, ձեր թույլտվությամբ ես մեր գիտաժողովում զեկուցումս կառուցեցի փոքր-ինչ ազատ պատումով և հուզական երանգներով: Եթե ինչ-որ բան այն չէր կամ ավելին էր, քան պետք էր, նորողամիտ եղեք: Բայց մեկ միտք էլ. մենք արդյոք կարողանում ենք ի խորոց սրտի, ամենայն սիրով ու զվարթ անկեղծությամբ մեծարել մեր մեծերին: Ամբողջովին գիտակցում ենք արդյոք, որ մեծերին մեծարելը պետք է հենց մե՛զ՝ մեծարողներին, որպեսզի պահպանվեն հաստատուն չափանիշները, որպեսզի չկորցնենք դեպի լույսը տանող ճամփան, որպեսզի մեր հոգևոր լիցքերը չպարպվեն օրվա տաղտուկի մեջ կամ աղմուկների ունայնում... Բարեկամներ, մենք վստահ ենք, որ մեր համատեղ աշխատանքը անցնելու է Էդուարդ Աղայանի անվանը պատշաճ մթնոլորտում, և արձանագրվելու են գերազանց արդյունքներ՝ ի փառս մեծ գիտնականի պաշտած հայերենի:

Շնորհավորում եմ բոլորիս գիտաժողովի մեկնարկի առթիվ և իմ մեծ ուսուցչի՝ Էդուարդ Աղայանի անմահ կերպարի մասին երախտագիտության իմ հետաձգված խոսքն ուզում եմ ամփոփել հանձարեղ Թումանյանի հայտնի տողերով.«Գործն է անմահ, լա՛վ իմացեք, Որ խոսվում է դարեդար, Երնե՛կ նրան, որ իր գործով Կապրի անվերջ, անդադար»:

РЕЗЮМЕ
ОТЛОЖЕННАЯ РЕЧЬ УЧИТЕЛЮ
Сукиасян Генриетта

В статье мы представили Эдуарда Агаяна как человека и как специалиста. Мы представили интересные подробности из его жизненного и профессионального пути, подчеркнув высшие человеческие ценности, которые он продемонстрировал на своем жизненном пути. Особое внимание мы уделили чувству юмора Агаяна, когда он был председателем вступительной комиссии, его мужскому обаянию, экстравагантному характеру и его уважительному отношению к женщине. Он умел беспрекословно доказать правоту своего мнения, когда это необходимо, довести речь до конца, но не повышая голоса, не оскорбляя личность человека. Способны ли мы чтить наших, ценить их, чтобы не потерять пути ведущие к свету.

Ключевые слова: благодарность, специалист, научный руководитель, рассказы, воспоминания.

SUMMARY
DELAYED SPEECH TO MY TEACHER
Suqiasyan Henrieta

In the article, Eduard Aghayan is introduced as a person and as a specialist. We highlighted interesting details from his life and professional career, emphasizing the highest human values he demonstrated along the way. Special attention is paid to Aghayan's sense of humor when he served as the chairman of the commission for the entrance exams, as well as his charm, extravagant character, and innate dedication to celebrating femininity. He displayed the ability to unquestionably prove the correctness of his opinion when necessary, to conclude speeches, without raising his voice, or insulting other's personality. It is important for us to honor and appreciate those, who have contributed to our lives, so that we do not lose our path to enlightenment and insure that our spiritual well-being is not absorbed by the noise and emptiness of the daily grind.

Key words: gratitude, expert, scientific leader, stories, memories.

**ԻՆՖՈՐՄԱՏԻՎԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ
ՈՒՍՈՒՑԱՆԵԼԻՍ**

Աթաբեկյան Մանե

ԵՊԲՀ հայոց լեզվի ամբիոն

դասախոս

atabekyanmane@yahoo.com

Բաբայան Միլենա

ԵՊԲՀ հայոց լեզվի ամբիոն

դասախոս

milenababayan@yahoo.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-9

Բանալի բառեր. իմացական գործառույթ, հաղորդակցական հմտություն, ինֆոգրաֆիկ պատկեր, աշխատանքային գործիք, տեսողական պատկեր, տեսողական ենթատեքստ, կենդանի հաղորդակցում:

Անտառացիա

Թվային տեխնոլոգիաների նորարարությունները մարդկային կյանքի գրեթե բոլոր ոլորտների անբաժանելի մասն են: Մրցունակ ու փոփոխվող աշխարհում կենսական մարտահրավերները հաղթահարելը պահանջում է նոր մոտեցումներ, յուրօրինակ լուծումներ՝ ժամանակին համընթաց քայլելու համար: Տեղեկատվության հասանելության մերօրյա իրականությունում շատ կարևոր է հենց այդ նույն տեղեկատվության մշակումը՝ ստանալու նպատակային, պիտանի, մատչելի, ընկալելի տեղեկույթ: Որպես տեղեկատվական հաղորդակցության արդյունավետ ձև՝ լայն տարածում ունի ինֆոգրաֆիկան, որը տարաբնույթ թեմաներն ամփոփ հանրայնացնելու միջոց է: Տեղեկատվական գրաֆիկան կամ ինֆոգրաֆիկան տվյալների և հաղորդվող տեղեկույթի պատկերավորման, գրատպության և գույնի համադրության բազմաշերտ, տրամաբանական ամբողջությունն է: Այս տեսողական տեղեկույթը հաճախ օգտագործվում է պետական մարմինների կողմից որպես առողջության, սննդի անվտանգության, քաղաքականության, բիզնեսի և շրջակա միջավայրի հետ կապված բարդ թեմաների հանրայնացման միջոց: Կրթական ոլորտը նույնպես անմասն չէ. այս ոլորտի նոր մարտահրավերները ևս պահանջում են գիտելիքի մատուցման յուրօրինակ մոտեցումներ: Անհրաժեշտ է կիրառել պատմված աշխարհից դեպի ցուցադրված աշխարհ մոդելը, քանի որ պատկերները թվային տեղեկատվության տարածման հենքն են:

Գրականության ակնարկ

Որպես կրթական տեխնոլոգիայի հիմնական գործիք՝ ինֆոգրաֆիկան առավելապես լայն տարածում է գտել վերջին տարիներին: Բազմաթիվ հետազոտողներ ապացուցել են, որ

ուսուցման գործընթացում այն կարելի է օգտագործել որպես տեղեկության, տվյալների կամ գիտելիքի ներկայացման միջոց: Կենսաբանական տեսանկյունից ուղեղը արագ և արդյունավետ մշակում, ընկալում և պահպանում է տեսողական ենթատեքստը՝ ի տարբերություն տեքստայինի: Այսինքն՝ տեղեկույթի տեսողական ներկայացման՝ ինֆոգրաֆիկայի միջոցով մարդն ավելի արդյունավետ է օգտագործում իր ուղեղի բնական կարողությունը: Գիտնականները պնդում են, որ ինֆոգրաֆիկան իր տեսողական բնույթի շնորհիվ բարելավում է ուսումնական գործընթացը. մտավոր ջանքերի քանակը, որը պահանջվում է տեղեկույթը մշակելու համար, կտրուկ նվազում է[1]: Ըստ այլ հետազոտողների՝ ինֆոգրաֆիկա կիրառելով հաղորդվող նյութը հնարավոր է «մանրացնել» բարդ տվյալները բաժանել ավելի փոքր, մատչելի, ընկալելի մասերի[2]: Այն խթանում է նաև սովորողների ստեղծագործական և քննադատական մտածողությունը. տեսողական տվյալների շնորհիվ նրանք ստիպված են լինում ներգրավվել տեղեկույթի վերլուծության և մեկնաբանման գործընթացում՝ դրանով իսկ բարելավելով իրենց ճանաչողական կարողությունները[3]: Այսպիսով՝ տեխնոլոգիական այս գործիքով գիտելիքը մատուցվում է հետաքրքիր ձևաչափով, յուրացվում է դյուրին, ընկալվում՝ ամբողջապես:

Ինֆոգրաֆիկայի պատմական ակնարկ

Ինֆոգրաֆիկան ունի վաղ պատմություն. այն տեխնիկապես նոր չէ: Գոյություն են ունեցել պատկերների միջոցով տեղեկույթը ներկայացնելու, արտադրելու և փոխանցելու հնագույն ավանդույթներ: Դեռևս քարե դարում ժայռապատկերների շնորհիվ մարդիկ միմյանց հետ հաղորդակցվել են ու փոխանցել տեսնողին զգացածն ու տեսածը: Հենց այդ պատկերների ու նշանագրերի բացահայտման շնորհիվ է, որ այժմ գիտնականներն ու պատմաբանները կարողանում են նկարագրել հազարամյակներ առաջ տեղի ունեցած երևույթները ու մարդկանց: Ավելի ուշ՝ միջնադարում, տեսողական պատկերները դարձան բարդ տեղեկությունները փոխանցելու կարևոր




Նկար 1 - Ուսի, ձեռքի մկաններն ու երևույթները, Լեոնարդո դա Վինչի, 1510-1511 թ.

միջոցներ: Միջնադարյան քարտեզագրական աղյուսակներն ու անատոմիական ատլասները, Վերածննդի տիեզերական տեսությունները և երաժշտական ծանոթագրությունները մատուցվել են հենց գրաֆիկայի միջոցով:

Տեքստերից պատասխան գտնելու սահմանափակումները դեռ վաղուց նկատել էր Լեոնարդո դա Վինչին՝ գիտական նկարագրողումների հիմնադիրը: Նկար 1-ում Լեոնարդոյի՝ 1510 թվականի ուսումնասիրությունների արդյունքում պատկերած ձեռքն է,


որը մանրամասն նկարագրում է մկանների շարժումները[9]: Նրա գիտական պատկերազարդումներն առ այսօր կիրառվում են բժշկական գիտելիքներ հաղորդելու ընթացքում:

19-րդ դարում թվային տեղեկատվությունն արդեն սկսեցին ներկայացնել պատկերների միջոցով: Շոտլանդացիինժեներ Փլեյֆեյրը փորձում էր գծագրել Շոտլանդիայի առևտրի ծավալն ըստ տարեթվերի, սակայն որոշ տվյալների բացակայության պատճառով չկարողացավ[8]:




The Bottom line is divided into Years, the Right hand line into £10000 each.

Նկար 2 – առևտրային տվյալների գծապատկեր՝ հրապարակված Առևտրային և քաղաքական ատլասում, 1786թ.



Նկար 3 - Շոտլանդիայի արտահանման և ներմուծման տվյալները 1760-1780 թվականի Սուրբ Ծնունդից մինչև 1781 թ.



Նկար 4 - Ֆլորենս Նայթինգեյլի «Բանակի մահացության պատճառները ընդհանրապես», 1858 թ.

Նա որոշեց գծի փոխարեն տվյալները պատկերել պյունաձև (Նկար 3): Արդեն 19-րդ դարի վերջին վիճակագրական տվյալները ևս ներկայացվում էին ինֆորաֆիկայի միջոցով, օրինակ՝ Ֆլորենս Նայթինգեյլի՝ զինվորների մահացության պատճառների դիագրամը (Նկար 4): Վերջինս արտահայտել է Ղրիմի պատերազմի հետևանքով առաջացած մահերի տվյալների վիճակագրությունը բրիտանական հիվանդանոցներում: Հարյուրամյակների ընթացքում տվյալների մատչելի մատուցումը զարգացավ, ինչպես և հասարակության պահանջը դրա նկատմամբ: Գծավոր, տողային և շրջանաձև գծապատկերները սկսեցին հայտնվել թերթերի և դասագրքերի էջերում: Թվային հեղաշրջման մեթոդաբանականությունում կրթական գործընթացը գրեթե անհնար է պատկերացնել առանց տվյալների պատկերավորման:

Ինֆոգրաֆիկայիդերը հայերենըորպեսօտարլեզուուսուցանելիս


21-րդ դարում՝ գիտության և տեխնիկայի զարգացման ներկա փուլում, առավել քան երբևէ տարածված է առցանց հաղորդակցությունը: Բոլորովին վերջերս համավարակի հետևանքով մենք ականատես եղանք կրթական համակարգի առջև ծառայած լրջագույն խնդիրների: Հարկավոր էր ընդունել կրթության նոր մարտահրավերները, մշակել կրթական նոր ռազմավարություն, կազմակերպել կրթության նոր քաղաքականություն: Կրթության շարունակական իրականացման նոր ձևաչափ ընտրվեց հեռավար ուսուցումը, որն իրականացվում էր թվային և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների զուգակցումով: Կրթության նոր ձևաչափը առավել արդյունավետ ապահովելու համար գործարկվում էին առցանց հնարավոր բոլոր գործիքները՝ այդ թվում նաև գիտական ինֆոգրաֆիկայի բոլոր տեսակները՝ նկար, գծանկար, գծապատկեր, դիագրամ, ատլաս և այլն:

Տեսողական պատկերներ կիրառելը ուսուցանելու ընթացքում ավելի կարևորվեց: Պատկերացնենք դաս, որի ընթացքում բացակայում են ուսուցման տեսողական միջոցները՝ տեսահոլովակ, գծապատկեր, նկար, սահիկաշար: Ուսումնական նման միջավայրը անբարենպաստ կլինի ինչպես սովորողների, այնպես էլ սովորեցնողների համար: Ուսուցման գործընթացը կդառնա ձանձրալի, կնվազի սովորողների հետաքրքրությունն առարկայի նկատմամբ: Միապադադ ու անգույն դասերը կկենտրոնանան ոչ թե սովորողների, այլ սովորեցնողի (տվյալ դեպքում դասախոսի կամ ուսուցչի) շուրջ: Մինչդեռ կրթական միջավայրը պետք է լինի ուսանողակենտրոն: Տեսողական օժանդակ միջոցների շնորհիվ դասը դառնում է կենդանի, ու ուսուցումը դուրս է գալիս դասագրքային կադապարված սահմաններից՝ խթանելով ավելի որակյալ ուսուցում: Ուսուցման գործընթացը, ինչպես գիտենք, ունի մի շարք գործառույթներ՝ իմացական, ճանաչողական, հաղորդակցական: Հայերենը որպես օտար լեզու ուսուցանելիս կարևոր է հնարավորինս արագ զարգացնել հաղորդակցական կարողություններ: Մա ենթադրում է հնչյունաբանական, բառապաշարային և քերականական գիտելիքների յուրօրինակ հաղորդում:


Խոսքային գործունեություն իրականացնելու կարողությունն ընդգրկում է մի շարք գործընթացներ՝ նոր տեղեկույթի ընկալում, մտապահում, ճանաչում, ինչպես նաև մշակում և փոխանցում: Հայոց լեզվի և լեզվական միավորների յուրացումը տվյալ դեպքում պահանջում է արդյունավետ մեթոդներ՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածում զարգացնելու օտար լեզվակրի խոսքային ինքնուրույն գործունեությունը: Այսպիսով՝ ոչ միայն ցանկալի, այլև որոշ դեպքերում պարտադիր է տեսողական ենթատեքստը՝ ինֆոգրաֆիկան՝ մատուցվող լեզվական տեղեկույթի բացատրական պատկերը:




Սկար 5 – մակրայ




Սկար 6 – նախադասության կառուցվածք



Սկար 7 - դերանուններ



Սկար 8 - բառապաշար



Սկար 9 - կապեր

Հայերեն չիմացողի համար բառի և դրա նշանակած բովանդակության ընկալումը, ճանաչումն ավելի դյուրին է հենց ցուցադրման եղանակով. կարևոր է առարկայի, դրա հասկացական ու զգայական պատկերների առկայությունը: Այս մեթոդով սովորողն ավելի հեշտ է ըմբռնում լեզվի կառուցվածքն ու ավելի լավ մտաբերում նոր, անծանոթ բառերի նշանակությունը[5]: Բառերը ճիշտ կապակցելու համար, հաղորդակցական հմտությունները հնարավորինս արագ զարգացնելու նպատակով անհրաժեշտ է զուգահեռաբար զարգացնել քերականական գիտելիքներ. կարևոր է այդ յուրացրած բառերը միավորել սկզբում բառակապակցություններում, այնուհետև նախադասություններում: Բառ – բառակապակցություն – նախադասություն – կենդանի հաղորդակցում աստիճանական անցումը ավելի արագ և դյուրին է հենց այդ գործիքներով: Քերականական նյութը յուրացնելու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ևս հաճախ է կիրառվում գիտական գրաֆիկան: Վերջինս ուսուցանվող քերականական նյութը նպատակային ու մատչելի է դարձնում: Ցանկացած օտար լեզվի տիրապետելու համար հարկավոր է իմանալ և կիրառել տարբեր քերականական կառույցներ: Սովորաբար այս կամ այն լեզվի քերականական կանոններ սովորելը, դրանք մտապահելը բարդ, ինչու չէ նաև ձանձրալի են, ուստի անհրաժեշտ է ուսումնական գործընթացում կիրառել ժամանակակից մեթոդներ, դրանք մտապահելու

արդյունավետ ձևեր: Բառապաշարի և քերականության ուսուցման տեսողական մեթոդը հնարավորինս արագ կարող է ձևավորել ու զարգացնել հաղորդակցական կարողություններ:

Տեսողական մեթոդի արդյունավետությունը պայմանավորված է մարդու կենսաբանական էությամբ: Բժշկագիտության, հոգեբանության ոլորտում շատ են ուղեղի կազմաբանական տարբեր հետազոտությունները տեսողական պատկերի ընկալման շուրջ: Բժիշկ Լայնել Բուրմարկը պնդում է, որ բառերը գրեթե միշտ անցնում են ուղեղով՝ չթողնելով մնայուն հետ[10]: Ի տարբերության այդ պնդման՝ պատկերի ազդեցությունն անցողիկ չէ, քանի որ այն պահպանվում է ուղեղի երկարաժամկետ հիշողության մեջ՝ հնարավորություն տալով սովորողին շրջանցելու կարճաժամկետ հիշողության՝ տեղեկությունը պահպանելու սահմանափակումները: Մարդու ուղեղին փոխանցվող տեղեկության 90%-ը տեսողական է, քանի որ ուղեղը պատկերները մշակում է 13 միլիվայրկյանում (MIT), իսկ տեքստը՝ 60,000 անգամ ավելի դանդաղ[6]: Այս յուրահատկությունը կրկին պայմանավորված է ուղեղի կառուցվածքով. ուղեղի մոտ 50%-ը ունի տեսողական գործառույթ, հետևաբար տեսողական տեղեկությունը ճանաչողական գործընթացների համար լավագույն միջոցն է [7]:

Տեսողական ընկալման համար որոշիչ է նաև գույների ճիշտ ընտրությունը: Գույնը սկզբում ընկալում է աչքը, հետո ուղեղը:


Յուրաքանչյուր գույն ունի ալիքի որոշակի երկարություն, որը տարակերպ է ազդում ինչպես մարմնի, այնպես էլ ուղեղի վրա: Հետևաբար, գույների ընտրությունն ու դրանց գրագետ համադրումը կարող են դրական ազդեցություն ունենալ նաև լեզվի ուսուցման գործընթացում՝ ազդելով սովորողների հույզերի, ուշադրության և ներգրավվածության վրա: Թեև գույներն ու պատկերները արդյունավետ գործիքներ են, դրանք չափից ավելի օգտագործելը կարող է բացասաբար ազդել: Ուսուցման գործընթացում կիրառվող պատկերները ցանկալի է ունենան չեզոք ֆոն, որը կարելի է լրացնել վառ գունային լուծումներով՝ ընդգծելու կարևոր տեղեկությունը: Սա կնվազեցնի զգայական ծանրաբեռնվածությունը ուսուցման գործընթացում: Երբ օտարին հայերեն սովորեցնելիս ցուցադրում ես առարկայի գունավոր պատկերը, դրանով իսկ համադրվում է բառը տվյալ առարկային: Ակտիվանում է ընկալողի տեսողական զգայությունը, կապ է ստեղծվում բառ-պատկեր-գույնհասկացության միջև, ուղեղը վերարտադրում է պատկերը՝ մտապահելով այն: Արդյունքում վերացական լեզվական տարրերը վերածվում են հստակ ու հեշտ մտապահվող գունավոր պատկերների: Ինչպես պարզաբանում են գիտնականները, տաք գույները՝ դեղինը, կարմիրը և նարնջագույնը, ավելի արդյունավետ են կենտրոնացնում ուշադրությունը, քան սառը երանգները, ինչպիսիք են՝ շագանակագույնը և մոխրագույնը[4]: Այսպիսով՝ գունային գրագետ համադրությունը հաղորդվող նյութը դարձնում է առավել տեսանելի, իսկ ուսումնական միջավայրը՝ նպաստավոր:

Ամփոփում

Ամփոփելով նյութը՝ նշենք, որ «մեկ պատկերն ավելին է, քան հազար բառը»^[11]: Արդի կրթության պահանջները ենթադրում են տեքստային և տեսողական տեղեկության համաժամանակյա կիրառում: Տեսողական օժանդակ միջոցները, ինֆոգրաֆիկան լեզվական բարդ հասկացությունների փոխանցման արդյունավետ գործիք են. առավելագույնս նպաստում են լեզվական, հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Այդ արդյունավետությունը պայմանավորված է մարդու կենսաբանական առանձնահատկություններով. ուղեղը վերարտադրում ու մտապահում է բառ - պատկեր - գույն համադրական ընկալումը տեսողական զգայությամբ:

Այսպիսով՝ դասավանդման գործընթացում ինֆոգրաֆիկ պատկերները որպես աշխատանքային գործիք կիրառելը ոչ միայն ցանկալի, այլև պարտադիր է. կարճ ժամանակահատվածում ձևավորվում են հաղորդակցական հմտություններ, լեզվանյութը յուրացվում է հնարավորինս արագ ու դյուրին, իսկ յուրացման ընթացքը դառնում է առավել նպաստավոր, գրավիչ ու հետաքրքիր:

«Մեկ պատկերն ավելին է, քան հազար բառը»:



Երևան, լուսեր,
երեկո,
մայրամուտ, ձյուն,
ձմեռ, երկինք,
կապույտ, դեղին,
շենքեր,
տեսարան...

Օգտագործված գրականության ցանկ

1. Jason Lankow, Josh Ritchie, and Ross Crooks. 2012. *Infographics: The power of visual storytelling*. John Wiley & Sons.

2. Smiciklas, M. (2012). *The Power of Infographics: Using Pictures to Communicate and Connect with Your Audience. The power of infographics.* <https://doi.org/10.4324/9780203075609>
3. Mattingly, K. D., Rice, M. C., & Berge, Z. L. (2012). Learning analytics as a tool for closing the assessment loop in higher education. *Knowledge Management & E-Learning: An International Journal*, 4(3), 236-247.
4. Greene, T.C., Bell, P.A. & Boyer, W.N. Coloring the environment: Hue, arousal, and boredom. *Bull. Psychon. Soc.* 21, 253–254 (1983). <https://doi.org/10.3758/BF03334701>
5. Clark, R., & Lyons, C. (2004). *Graphics for learning.* New York: Wiley & Sons
6. *In the blink of an eye.* (2014, January 16). MIT News | Massachusetts Institute of Technology. <https://news.mit.edu/2014/in-the-blink-of-an-eye-0116>
7. *Research sheds light on visual processing.* (1997, January 8). MIT News | Massachusetts Institute of Technology. <https://news.mit.edu/1997/visual-0108>
8. Giaimo, C. (2017, May 12). The Scottish Scoundrel who changed how we see data. *Atlas Obscura.* <https://www.atlasobscura.com/articles/the-scottish-scoundrel-who-changed-how-we-see-data>
9. *Leonardo da Vinci (1452-1519) - The muscles of the shoulder and arm (recto); The muscles of the shoulder and arm, and the bones of the foot (verso).* (n.d.). <https://www.rct.uk/collection/919013/the-muscles-of-the-shoulder-and-arm-recto-the-muscles-of-the-shoulder-and-arm-and>
10. Parsons, N. (2018, April 3). Scientific reasons why you should present your data visually. *Medium.* <https://medium.com/lighting-out/scientific-reasons-why-you-should-present-your-data-visually-7f57dcf6110f>
11. Smith, J. (2019, March 12). Meaning is in the eyes, ears of the beholder - Los Angeles Times. *Los Angeles Times.* <https://www.latimes.com/archives/la-xpm-1987-12-30-vw-21503-story.html>

РЕЗЮМЕ
РОЛЬ ИНФОГРАФИКИ В ПРЕПОДАВАНИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА
КАК ИНОСТРАННОГО
Мане Атабекян, Милена Бабаян

В статье представлены современные методы обучения, в частности необходимость использования инфографики как преподавательского инструмента. Последнее способствует усвоению языкового материала, максимально быстро развивает коммуникативные навыки, делая процесс обучения привлекательным, продуктивным и интересным.

Ключевые слова: когнитивная функция, коммуникативная способность, инфографическое изображение, обучающий преподавательский инструмент, визуальное понятие, визуальный контекст, живое общение.

SUMMARY
THE ROLE OF INFOGRAPHICS IN TEACHING ARMENIAN
AS A FOREIGN LANGUAGE

Mane Atabekyan, Milena Babayan

The article presents modern methods of instruction, specifically emphasizing the importance of incorporating infographics as a tool for teaching. The latter contributes to the assimilation of language material, develops communication skills, making the teaching process attractive, more favorable and interesting.

Key words: cognitive function, communication skill, infographic image, work tool, visual image, visual context, live communication.

ԼԵԶՎԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ
ՈՒ ՕՐԻՆԱԶՍՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԷՂՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աղաջանյան Ջարիկ

ԵՊՀ Հայոց լեզվի ամբիոն

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

aghajanyan59@list.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-18

Բանալի բառեր. նորմ, կանոնարկում, նորմավորում, լեզվականոն, սկզբունք, լեզվաշինություն, լեզվաքաղաքականություն:

Դասական և ժամանակակից համադրական լեզվաբանությունների զուգահեռներում Է. Աղայանը հետազոտության պատմական և համաժամանակյա հայեցակետերով ուսումնասիրեց հայերենն իր տարբեր դրսևորումների, իր տարբեր գոյաձևերի համապարփակ տիրույթում: Նույն դիտանկյունից քննեց և լեզվի կանոնարկման, լեզվաքաղաքականության ու լեզվաշինության բազմաթիվ հարցեր, օրինաչափեց հայերենի շատ իրողություններ, մատնանշեց նրա կատարելագործման ճանապարհի նշաձողերը:

Մեծանուն լեզվաբանի աշխատություններում առանձնացված են լեզվական նորմին (նորմային)¹, լեզվի կանոնարկմանը, կիրարկությանը, կանոնական տարբեր համակարգերի ուսումնասիրությանը վերաբերող առանձին բաժիններ, ենթաբաժիններ, սակայն կանոնարկման սկզբունքներին և օրինաչափություններին վերաբերող առանձնացումներ չկան: Ուստի և այս աշխատանքը աղայանական հետազոտություններից, եզրակացություններից, հետևություններից բաղադրված քաղոց է՝ երբեմն նաև՝ ենթատեքստային կոառնումների տեսքով: Բնարկե, Է. Աղայանը չի խորանում **նորմա** հասկացության իմաստաբանական դաշտի միավորների քննության մեջ, սակայն իր տեսական և գործնական քննությունը ծավալում է նորմավորման հետևյալ 3 դիտակետերի համաձուլվածքում՝ **1. ավանդական կամ հետահայաց. 2. համաժամանակյա. 3. հեռանկարային**²:

Լեզուն դիտելով և՛ որպես հասարակական երևույթ, և՛ որպես բնախոսական-հոգեբանական երևույթ, և՛ թե մտածելու-խոսելու բնածին և **ներունակ կարողության՝ ներունակության** գործադրություն՝ լեզվաբանն այն ուսումնասիրում է իր բազմագործառույ-

¹ Աղայանը զուգահեռաբար գործածում է **նորմա-կանոն, նորմավորում-կանոնարկում, նորմավորել-կանոնավորել** գիտարաները, քիչ դեպքերում՝ **ստանդարտացում, ստանդարտացնել** (Տե՛ս՝ Աղայան Է., Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003, էջ 280- 281):

² Տե՛ս՝ **Աղաջանյան Զ. Խ.**, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հիմունքներ, Երևան, 2007, էջ 34-35:

թային տիրույթում (հաղորդակցական, արտահայտչական, կուտակչական, իմացաբանական և այլն...)՝ որպես՝

ա) մտածողության ձևավորման ու հասարակական հաղորդակցման միջոցի ընդհանուր ու միասնական համակարգ.

բ) գոյաձևային տարբերակների (տարածական, հասարակական, գործառական) գոյության մասնավոր իրական ձևերի համակարգ.

գ) նյութական միավորների համակարգ կամ որոշակի օրինաչափություններով կարգաբերված բազմություն (վերջավոր և անվերջ, լի և դաստարկ).

դ) համակարգերի (ենթահամակարգների, մանրահամակարգերի կամ միկրոհամակարգերի) և հակահամակարգերի (ավանդական, կողմնակի և սաղմնավորվող) համակարգ:

ե) նշանային համակարգ (առարկայական, հատկանշանային, ազդանշանային, խորհրդանշանային և այլն)՝ իր արտահայտության և բովանդակության պլաններով.

զ) միմյանց ստորակարգվող մակարդակների կառուցվածք՝ դրանց միավորների բաղադրական (ինտեգրատիվ) բնույթով ու հողավորման կամ կառուցողական դերով³.

է) սերող մոդելների համակարգ.

ը) ստեղծագործություն:

Լեզվի զարգացման ցանկացած ժամանակահատվածում լեզվի կանոնարկումը, օրինաչափ երևույթների արտածումը և օրինաչափությունների հաստատումը, դրանք գիտականորեն կարգաբերելու սկզբունքներ իմշակումը, կանոնների բանաձևումը բարդ ու դժվարին գործընթաց է: Բարդությունն էլ ավելի է խորանում անհրաժեշտ լրացուցիչների կարգաբերման առումով, ինչպես օրինակ՝ խոսքային և լեզվական միավորների տարբերակում և դրանց փոխադարձ կապերի ու հարաբերությունների լուսաբանում, կառուցվածքային միավորների (հնչույթ, ձևույթ, բառույթ, շարահուսույթ...) և դրանց իմաստաբերականական տարբերակիչ հատկանիշների, իմաստագատիչ ու գործառական հակադրությունների չեզոքացման, աստիճանակարգության, հարացուցայնության (միավորների համակցության հարաբերություն) և շարակարգայնության (միավորների հակադրության հարաբերություն) հստակեցում, լեզվամիավորների փոփոխայնության, տարբերակարդակներին հատուկ երևույթների խաչավորման կամ ներթափանցման, ներմարմնավորման կամ ներակայման, հողավորիչների, հողավորիչ բաղադրույթների ճշտորոշում ու սահմազատում և այլն:

Լեզվաբանը նորման (նորմը, կանոնը) կամ կանոնական մակարդակը այսպե՛ս է սահմանում. «Նորման լեզվի կառուցվածքի իրացումն է այդ լեզվի զարգացման տվյալ փուլում, նրա գործող արտահայտությունը կամ դրսևորումը: Մյուս կողմից նա տվյալ փուլի լեզվական վիճակի և դրա խոսքային արտացոլման կամ իրացման ընդհանուր համակարգն է»:

³ Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 11-12:

Եվ մանրամասնում է. «Նորմայի մակարդակը կամ պարզապես նորման խոսքային միավորների այն ընդհանուր և վերացական լեզվական համակարգն է, որ գոյություն ունի տվյալ լեզվով խոսող հանրության անդամների գիտակցության մեջ: Դա լեզուն է որպես տվյալ հանրության հաղորդակցման միջոց: Այս մակարդակում բնականաբար լեզվական միավորները զուրկ են նյութականությունից այն իմաստով, որ նրանք ինչ-որ ֆիզիոլոգիական միավորներ չեն, այլ դրանց արտացոլումը... Սրանից էլ բխում է այն, որ նորմայի մակարդակի միավորները, ինքնին զուրկ լինելով նյութականությունից, կարող են, այնուամենայնիվ, նկարագրվել թե՛ նյութական և թե՛ վերացական հայեցակետով: Նրանք կարող են նյութական հայեցակետով նկարագրվել, որովհետև անմիջականորեն հարաբերակից են միավորներին՝ խոսքի հնչյուններին, բառերին, դրանց կապակցություններին, ելևէջավորմանը և այլն: Վերացական հայեցակետով նրանք կարող են նկարագրվել այն չափով, որչափով որ լեզվի տարրերի ու կանոնների տվյալ վիճակը ավանդական է, պատմականորեն ձևավորված ու պայմանական... Մի կողմից՝ նորման իր մեջ ներառում է այն ամենը, ինչ որ կա լեզվի մեջ, նույնիսկ առանձին փաստերը, ընդհանուր կանոնից շեղվող առանձին ձևերը, մյուս կողմից՝ այն ընդգրկում է կառուցվածքը՝ իր՝ տվյալ վիճակի իրացումով: Այն, ինչ որ կա նորմայի մեջ, կա նաև կառուցվածքի մեջ, բայց ոչ հակառակը»⁴: Աղայանական տարողունակ բնորոշում, որից իսկ կարող ենք արտածել նորմավորման գործընթացի մի շարք սկզբունքներ՝ **համակարգայնություն, ընդհանրականություն, վերացականություն և վերացարկվածություն, ավանդականություն և ավանդախախտություն, պատմականություն, պայմանականություն, միջանկյալություն (խոսքի, լեզվի և կառուցվածքի):**

Է. Աղայանը նորմավորման գործընթացի «նորմավորման» նախապայմաններ է առանձնացնում: Այսպես՝

Ա. Անկյունաքարային է այն իրողությունը, որ **ոչ մի լեզու միատարր չէ և կազմված չէ բացառապես կատարյալ տարրերից.** Յուրաքանչյուր լեզու իր մեջ կրում է ն՝ դրական, և՛ բացասական կողմեր, յուրաքանչյուր լեզվի մեջ գոյություն ունեն թե՛ հնացած, մեռնող երևույթների և թե՛ առաջացող ու զարգացող երևույթների տարրեր:

Բ. «Պետք է սկզբից նեթ՝ իբրև սկզբունք ընդունել այն, որ մենք չպետք է համոզված լինենք, թե այն լեզվում, որի ուսումնասիրությանը ձեռնամուխ ենք լինում, գոյություն ունեն բոլոր այն տարբերակումները, բոլոր այն հնչյունաբանական ու քերականական կարգերը, որոնք մեզ լավ ծանոթ են մեր նախկին լեզվական փորձից: Դրա փոխարեն մենք կարող ենք սպասել, որ կգտնենք այդ լեզվում ձևական արտահայտություն ունեցող այնպիսի տարբերակումներ, որոնց մասին մենք պատկերացում անգամ չունենք: Մեզ չպետք է զարմացնի ո՛չ քերականական ժամանակի բացակայությունը, ո՛չ անտարբերությունը ներգործականության կամ կրավորականության արտահայտման նկատմամբ, ո՛չ սեռի

⁴ Նույն տեղում, էջ 33-34:

կարգի բացակայությունը, ո՛չ 2 տեսակ **մենք**-երի տարբերությունը, որոնցից մեկը ներառում է խոսողին, մյուսը բացառում, ո՛չ տարբերությունը բայական այն ձևերի, որոնք ցույց են տալիս տեսանելի և անտեսանելի երևույթներ, և այն ձևերի, որոնք ցույց են տալիս տեսողության դաշտից դուրս գտնվող երևույթներ: Չպետք է մտածել, որ ամեն մի լեզվում նախադասությունը բնորոշվում է ենթակայի առկայությամբ, անպայման գոյություն ունեն ածականներ և տարբերակված են բայն ու գոյականը»⁵:

Գ. Հայերենի կառուցվածքի, կանոնի ու կիրակության զանազան միավորների բնութագրության մեջ ճիշտ եզրակացությունների հանգելու համար անհրաժեշտ է հաշվի առնել՝ մի կողմից՝ մերօրյա գրական հայերենի երկփեղկվածության իրողությունը, մյուս կողմից՝ հասարակական հաղորդակցմանը ծառայող ընդհանուր լեզվի գոյաձևային տարբերակվածությունը (իրարից առավել կամ պակաս չափով տարբեր տեղային բարբառներ ու խոսվածքներ, դասակարգային բարբառներ կամ ժարգոններ, մասնագիտական «լեզուներ», գրական և խոսակցական իրարից առավել կամ պակաս չափով տարբերվող դրսևորումներ և այլն՝ իրենց գործառական և համակարգային առանձնահատկություններով):

Դ. Արդի լեզվականոնը պետք է օրինականացնել պատմական տարբեր դարաշրջաններում և տարբեր լեզվական հանրությունների տարաստիճան լեզվագործածության կանոնահամակարգերի համեմատությամբ:

Ի՞նչն է առանձնահատուկը աղայանական դիտարկումներում:

1) Լեզվաբանական տարբեր աղբյուրներում մշտապես կարևորվել են լեզվի նորմավորման սկզբունքների առաջադրման ու մշակման, դրանց գիտական և գործնական հիմնավորման հարցերը: Եվ ակնհայտ մի ճշմարտություն է բանաձևվել. **դժվար է նորմավորման կողմնորոշիչ ու ընդհանուր սկզբունքներ սահմանել, տեսականորեն հիմնավորել, սակայն է՛լ ավելի դժվար է դրանց շրջանակներում գործնականորեն առաջնորդվել:** Ըստ Է. Աղայանի՝ **նորմայի մակարդակի միավորները, ինքնին գուրկ լինելով նյութականությունից, կարող են, այնուամենայնիվ, նկարագրվել թե՛ նյութական և թե՛ վերացական հայեցակետով.** եղած որոշումները, ամրագրված կանոնները, սահմանումները, բանաձևումները տալիս են միայն ընդհանուր ուղղությունը, բայց ոչ՝ գործնական սկզբունքը, մինչդեռ ամենօրյա խոսքային գործունեության ընթացքում լեզվագործածության զանազան խնդիրներ են առաջանում: Դեռևս գիտական լուրջ ուսումնասիրության նյութ չի դարձել գործնականորեն առաջնորդվելու միասնական գործնական սկզբունքների մշակումը, և այսպիսի վիճակը դուռ է բացում կամայականությունների, տարերային և քմահաճ լեզվագործածությունների առջև՝ մեծ մասամբ անհատների ճաշակին ու գիտելիքներին համապատասխան: Մասնավորապես տերմինաբանության հարցերին անդրադառնալիս հիշեցնում է, որ օրենքը մեր լեզվի բառային կազմի, քերականության, տերմինամշակման

⁵ Տե՛ս՝ **Աղայան Է. Բ.**, Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967, էջ 165-167:

հարցում միայն ընդհանուր ուղղությունն է սահմանում: Ելնելով այդ օրենքից՝ յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է որոշել, թե ինչպե՛ս վարվել: Բայց գործնականորեն այս էլ անհնարին է, որովհետև անկարելի է ամեն բառի համար նիստ գումարել կամ մասնագետների ինչ-որ խմբի զբաղեցնել: «...Գործնականորեն առաջնորդվելու միասնական գործնական սկզբունքներ չունենք... Ցավալի է, բայց անժխտելի փաստ է, որ մինչև այժմ մեզանում չեն զբաղվել այն հարցով, թե գործնական ինչ սկզբունքներով պետք է առաջնորդվել յուրաքանչյուր տերմինի հայացման կամ փոխառության հարցում. Այսպիսի սկզբունքներ մշակելը պահանջում է գիտական լուրջ ուսումնասիրություն՝ տարբեր բնագավառների ու տերմինաբանության նյութի հիման վրա»⁶: Սա նշանակում է, որ իր ժամանակի տիրություն առաջինն Աղայանն է, որ սկզբունքային է համարում **լեզվական նորմի գործնականացման** խնդիրը՝ կատարելով **տեսական նորմավորում** և **գործնական նորմավորում** տարբերակումը: Այսինքն՝ կարևորում է և «արդյունաբերական» լեզվի գործնականացման սկզբունքների մշակման խնդիրը, ինչը, կարելի է ասել, մերօրյա լեզվաբանության հիմնահարցերից մեկն է:

2) Առանձնացնելով **գործառականության** սկզբունքը՝ Է. Աղայանը գործնական նորմավորման առաջին քայլում լեզվական բոլոր միավորները բնութագրում է **ընդհանուր** (բոլորն էլ ծառայում են իմաստների ձևավորմանն ու հաղորդակցմանը, որով և բնորոշվում են լեզվի, որպես համակարգի, երկու հիմնական գործառույթները՝ արտահայտության գործառությունը և հաղորդակցման գործառությունը) և **մասնավոր** գործառույթներով:

3) Այլևայլ վերլուծություններից ելնելով՝ նա նորմավորման մի կարևոր առանձնահատկություն էլ է ընդգծում՝ իբրև ընդհանուրի՝ լեզվական նորմի համակարգայնության և միասնականության սկզբունքի լրացուցիչ՝ **նորմի** (նորմայի, կանոնի, կանոնական մակարդակի) **կանոնահամակարգի ներսում ենթականոնների համակարգայնության և միասնականության** սկզբունքը: Այս մասին շատ լեզվաբաններ խոսել են: Այսպես՝ Հ. Կուսիկյանն իր շարահյուսական մեկնաբանություններում, օրինակ, հոլովական խնդրառությունը բնորոշում է իր նորմաների միասնականությամբ և այլն: Բայց Աղայանը նորմավորման գործընթացում այս հարցին սկզբունքային նշանակություն է տալիս՝ համակարգայնությունը տարածելով թե՛ բառերի և քերականական ձևերի կազմության եղանակների, թե՛ դրանց ծառայող միջոցների (ածանցներ, վերջավորություններ, ներքին թեքում, բառերի բաղադրություններ, նախադասության կառուցվածքային տիպեր և այլն) վրա: Քանի որ լեզուն պատմական փոփոխություններով ձգտում է հասնել ձևերի, կառուցվածքների ու դրանց համակցությունների միասնության և ընդհանրության, իր պատմական զարգացման ամեն մի տվյալ փուլում այն, որպես համակարգ, ունի իր ենթահամակարգերին, մանրահամակարգերին, հակահամակարգերին բնորոշ որոշակի հատկանիշներ կամ հատկանիշների ամբողջություն՝ իբրև կանոն: Օրինակ՝ գրաբարի

⁶ **Աղայան Է.**, Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003, էջ 172-173:

հոլովման և խոնարհման ձևերի կազմությունը բնութագրվում էր հիմնականում բազմիմաստ վերջավորությունների առկայությամբ և դրան զուգակցող՝ ներքին թեքումով, որով ստացվում էր մի կողմից՝ հոլովման և խոնարհման թեքականությունը, մյուս կողմից՝ ձևերի համադրականությունը (բառի քերականական ձևերը հանդես են գալիս որպես մեկ բառի ձևափոխություններ): Ժամանակակից հայերենի համակարգին ավելի բնորոշ են մենիմաստ քերականական ձևերը, օրինակ՝ **հայրեր-ի** ձևում՝ **-եր**-ը հոգնակիի վերջավորությունն է, **ի**-ն՝ հոլովի, մինչդեռ գրաբարյան **հարց** («հայրերի») ձևի **ց**-ն և՛ հոգակիության, և՛ հոլովի իմաստներ է արտահայտում և այլն:

4) Լեզվի կանոնարկման հարցերում շատ լեզվաբաններ առանձնացնում են **հիմնային կանոններ և երկրորդական կանոններ** կամ **ընդհանուր կանոններ և այդ ընդհանուր մասնավորեցնող կանոններ** և այլն: Աղայանը ևս՝ բայց մի առանձնահատկությամբ. Նա խոսում է նաև երկրորդական կամ մասնավորեցնող կանոնների, այսպես ասած, «լուծարման» մասին, նրանց **գործառական արգելակման** մասին՝ նշելով, որ երկրորդական կանոնները կորցնում են իրենց արժեքը, երբ անցնում ենք ավելի բարձր մակարդակի՝ այսինքն՝ տարբերակում է և **լուծարվող կանոններ**: Այսպես օրինակ՝ բացառական հոլովի կազմության **-ից**-ով և **-ուց**-ով ձևերը նկատի առնելով՝ գրում է. «Բայց այդ երկու կանոնները կորցնում են իրենց կարևորությունը, երբ մենք ավելի բարձր մակարդակի ենք անցնում և դիմում ենք ավելի բարձր վերացարկման: Այսպես, օրինակ, եթե վերլուծենք դարձյալ բացառականի կազմությունը ոչ թե առանձին բառերի ու բառախմբերի բացառականը կազմելու կանոնները որոշելու, այլ առհասարակ այդ հոլովի կառուցվածքը բացահայտելու համար, այդ դեպքում կունենայինք մեկ ընդհանուր բանաձև, այն է՝ «հիմք +բացառականի վերջավորություն»: Ինչպես տեսնում ենք, այստեղ առանձին կանոնները կորցնում են իրենց արժեքը, և կարևորություն է ստանում լոկ այդ կանոնների միջոցով դրսևորվող ընդհանուր կառուցվածքը: Այս բոլորը նկատի ունենալով էլ ժամանակակից լեզվաբանությունը լեզուն, որպես ուսումնասիրության առարկա, դիտում է 3 մակարդակով՝ խոսքային, կանոնական և կառուցվածքային»⁷: Կարծում ենք՝ եթե է. Աղայանն ավելի առաջ գնար, երևի թե ընդհանարակա նկանոնահամակարգի այսպիսի ենթաբաժանում կատարեր՝ **կառուցվածքային կանոնահամակարգ, խոսքային կանոնահամակարգ և ամրակայված նորմատիվ կանոնահամակարգ**. ենթաբաժանում, որը նույնպես արդի լեզվաբանության նորմավորման (կանոնարկման) գործընթացի հիմնախնդիրներից մեկն է:

5) Աղայանը, լեզուն և խոսքը որպես ընդհանուրի և առանձինի հակադրամիասնություն դիտարկելու տեսանկյունից անուղղակիորեն առաջ է քաշում և խոսքի (խոսքը կամ կիրակությունը (ուզուսը) լեզվի իրական դրսևորումն է, լեզվի նորմայի կիրարկությունը) նորմավորման հարցը, այսինքն՝ այն **հավելյալի** կանոնակարգումը, որը չկա գրական լեզվի մեջ՝ ընդգծելով՝ **խոսքի մեջ կա նաև այն հավելականը, այն առանձնահատուկը, որով նա**

⁷ Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967, էջ 12:

տարբերվում է ուրիշ խոսքերից՝ չխախտելով դրանց ընդհանրականությունն ու միասնությունը թե՛ միմյանց և թե՛ լեզվի հետ: Ըստ նրա՝ լեզվական կանոնները մեզ թելադրում են ճիշտ խոսք կազմել և խուսափել սխալներից: Նա գրում է. «Խոսքը մասնավոր դրսևորումն է բառերի, բառաձևերի, բառակապակցությունների ու նախադասությունների, դրանց կազմության ու գործածության կանոնների այն ամբողջ հարստության, որ ներկայացնում է տվյալ լեզուն տվյալ վիճակում, իբր և պատմական զարգացումով ձևավորված և խոսողներից յուրաքանչյուրի գիտակցության մեջ որպես լեզվական ներուճակ կարողության հաստատված վիճակ: Յուրաքանչյուր բառ, քերականական ձև, բառերի կապակցության կանոններ և այլն խոսքից դուրս վերացական միավոր է, կանոն է և այլն: ...Այն, ինչ որ խոսքի մեջ մասնավոր է և կոնկրետ, խոսքից դուրս, մեր գիտակցության մեջ ընդհանուր է, վերացարկված. նրանք վերացական միավորներ են, կանոններ ու կադապարներ, որոնք մասնավորվում, իրական դրսևորում են ստանում հաղորդակցման ժամանակ, խոսքի մեջ: Լեզվի տվյալ վիճակի բառային հարստությունը, նոր բառեր կազմելու միջոցներն ու եղանակները, քերականական կանոնները որոշակի նորմա են հանդիսանում խոսքի կառուցման համար»⁸: Աղայանը մատնանշում է նաև խոսքային մակարդակի առանձնահատկությունները՝ եզրակացնելով՝ **խոսքային մակարդակում գործող կանոններն ավելի շատ են, ավելի բազմազան և չեն կարող ամբողջությամբ ընդգրկվել կանոնական, առավել ևս կառուցվածքային մակարդակներում:**

6) Է. Աղայանը կանոնական մակարդակի նորմավորման գործընթացում կարևորում է **լեզվական հողավորող միավորների համասեռությունը** այն հաշվով, որ տարբեր մակարդակի միավորները բնորոշվում են որոշ կարգի ընդհանուր հատկանիշներով: Սրանից էլ արտածվում է տարբեր մակարդակների ուսումնասիրության մեջ վերլուծության նույն եղանակների ու մեթոդների, միավորների բնութագրման նույն չափանիշների կիրառելիության կանոնակարգիչ սկզբունքը, այսինքն՝ **համասեռության սկզբունքը**: Համասեռության սկզբունքով է պայմանավորված նաև մակարդակների միավորների անվանումների զուգահեռությունը (հմմտ.՝ **հնչույթներ-ձևույթներ, ենթահնչույթներ-ենթաձևույթներ, գերհնչույթներ-գերձևույթներ, շարահուսույթներ** և այլն): Որպես օրինակ առանձնացնում է **փոփոխայնության սկզբունքը**. «Այսպես՝ ընդունված փաստ է, որ բոլոր մակարդակների միավորներին էլ առավել կամ պակաս չափով հատուկ է **փոփոխայնությունը (վարիատիվնոստ)**, այսինքն՝ այն, որ այս կամ այն միավորը տարբեր պայմաններում կարող է ունենալ իր զանազան տարբերակները: Այս ցույց է տալիս, որ տարբեր մակարդակի միավորները համասեռ բնույթ ունեն, և նրանց միջև եղած հարաբերություններն էլ միատեսակ են»⁹: Սա չի նշանակում, իհարկե, թե տարբեր մակարդակների միավորները նույնացվում են իրար, կամբոլոր մակարդակները կարող են ուսումնասիրվել բացարձակ

⁸ Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 32-33:

⁹ Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967, էջ 47-48:

միննույն մեթոդով ու մոտեցումով: Ամեն մի մակարդակ ընդհանուր բնույթի հարաբերությունների հետ կարող է ունենալ նաև մասնավոր, միայն իրեն հատուկ հարաբերություններ, որոնք և կպահանջեն յուրահատուկ մեթոդ և մոտեցում: Այսպես օրինակ՝ տարրությային մակարդակի վերլուծության մեջ կարելի է կիրառել **փոխարկման** ենթասկզբունքը, բայց ոչ՝ **հաստությավորման**, շարահյուսական մակարդակում կարելի է կիրառել **փոխակերպումը**, ձևությային կամ հնչությային մակարդակում՝ ոչ և այլն:

7) Լեզվագիտական հետազոտությունների և նորմավորման գործընթացում անկյունաքարային համարեց նպատակասլաց, լեզվի զարգացման օրենքներից բխող լեզվաշինությունն ու ազգային շահերից բխող լեզվաքաղաքականությունը: Գործնականում կարևորեց հայերենի զարգացման անկաշկանդ քաղաքականության կենսագործման պայմաններում լեզվաշինարությամբ և լեզվաքաղաքականությամբ զբաղվողների, անհարկի օտարագործածությամբ լի հայերենը մաքրողների, լեզվական նորմի խախտման կամայական դրսևորումների դեմն առնողների դերը: Այս ճանապարհին միանգամայն օրինաչափ համարեց միջազգային տերմինաբանական գիտաժողովների կազմակերպումը, վիճահարույց դրույթների կարգավորմանը և կարգաբերմանը, ընդհանուր-տեսական և մասնավոր-գործնական լուծումներ գտնելուն նպատակաուղղված բանավեճերն ու մտքի բախումները: Ավելին՝ գնահատեց վերոնշյալ հարցերով զբաղվող հատուկ մարմինների (Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, գիտական հաստատություններ, Տերմինաբանական կոմիտե, մասնագիտական խորհուրդներ, նաև՝ հրատարակչական մարմիններ, հեռագրական գործակալություն, պարբերական մամուլի խմբագրություններ...) գործունեությունը՝ միայն թե՛ հասարակության հսկողության ենթակայությամբ:

Աղայանական սկզբունքների սկզբունքն է՝ **նորմավորման գործընթացում լեզուն դիտարկել և կանոնարկել իր գործադրության՝ իրական դրսևորման մեջ՝ որպես խոսք**: Նա առաջնային համարեց նաև ճիշտ մեթոդաբանության՝ կանոնարկման գործընթացի նպատակային ուղղորդման բանալիների՝ մեթոդների (պատմահամեմատական, կառուցվածքային վերլուծության, ներքին վերականգնումների, բաշխումային, հաստությավորման, փոխարկման, արժույթայնության և այլն) ընտրության սկզբունքը: Այսպես՝ **համեմատության մեթոդի** կիրառությունը Աղայանի քննության մեջ սկզբունքային արժեք է ձեռք բերում. տարբեր լեզուներում նույն իրողության վերաբերյալ լուծումների, սահմանումների համեմատության միջոցով կարելի է կարգաբերել կանոնավորման գործընթացը: Օրինակ՝ հոլովի քերականական կարգը սահմանելիս նա ի մի է հավաքում Մ. Աբեղյանի, Հր. Աճառյանի, Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի, Վ. Վինոգրադովի, Վ. Ադոնի, Վ. Յունդի, Վ. Շմիդտի սահմանումները, որոնք ընդհանուր հիմունքներ ունենալով հանդերձ, հաճախ արտահայտում են և մասնավոր տարբերություններ, և դրանց օգնությամբ կողմնորոշվում է սահմանումը բանձնելիս. «Հոլովը հոլովվող բառի մի բառաձև է, որ արտահայտում է առարկայի և հատկանիշի կամ առարկայի և մի այլ առարկայի հարաբերությունների քերականական իմաստ: Սրան համապատասխան էլ՝ հոլովումը բառերի բոլոր հոլովաձևերի կազմության

համակարգն է»¹⁰: Նույն սկզբունքով է հիմնավորում իր՝ 6 հոլովի տեսության մեջ հայցական-ուղղական հոլովների հարցը¹¹: Համեմատության սկզբունքի տեսակային մի գործառույթ էլ կա, որը առավելապես կապվում է լեզվական նորմի փոփոխության և վիճակագրության սկզբունքների հետ: Մեր գրական լեզվի տարբեր փուլերը ներկայացնող քերականագիտական աշխատությունների համեմատությամբ (1-ին փուլի համար՝ ավագագույն սերնդի ներկայացուցիչներից Հ. Աճառյանի և Մ. Աբեղյանի քերականագիտական աշխատությունները, 2-րդ փուլի համար՝ Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի տեսությունը» (գրված 1939 թ.) և իր ու Հ. Բարսեղյանի կազմած միջնակարգ դպրոցի 5-7-րդ դասարանների հայոց լեզվի դասագիրքը (1965թ.) ի ցույց են դրվում ոչ միայն հին ու նոր նորմերի համակարգերը, այլև թե՛ լեզվական, թե՛ խոսքային, թե՛ կառուցվածքային նորմերի փոփոխությունը և այն, թե ո՞ր նոր տարրերի աստիճանական՝ քանակային կուտակումով ո՞ր հին տարրերն են մահանում, և այդ մահացումով որակական ինչպիսի՛ անցումներ են արձանագրվում հայոց լեզվի զարգացման պատմության մեջ:

Ձանազան մեթոդների ուսումնասիրության շրջանակներում Աղայանը խորաթափանց դիտողականությամբ առաջնակարգ նշանակություն է տվել **միջավայր** կամ **շրջապատ**, իր անվանմամբ՝ **ոլորտ** հասկացությանը և ձգտել է պարզել, նաև՝ նորմավորել **խոսքային շղթայում կամ իրական ասույթում** յուրաքանչյուր միավորի (հատույթի) գործառույթան ոլորտները, նրա հարաբերությունները մյուս՝ նույն կարգի միավորների (հատույթների) հետ: Ըստ նրա՝ **ոլորտը մինևույն մակարդակի միավորների հնարավոր համակցությունն է**, կամ այլ կերպ՝ **ոլորտը տվյալ միավորին նախորդող ու հաջորդող նույն կարգի միավորների ամբողջությունն է**¹²: Այս դեպքում մեզ թույլ ենք տալիս արտածել **հասկացությունների, դաստոգությունների գուգորդելիության (համակցության) սկզբունքը**, որը սոսկ ուրվագծային բնութագրում ունի:

Վերոնշյալ առանձնահատկություններով հանդերձ Աղայանն ուղղորդվում է դասական լեզվաբանության մեջ առաջադրված սկզբունքներով և դրանք մանրամասնում է տեսական և գործնական կանոնարկման հավելումներով:

Ա. ԽՈՍՔ-ՆՈՐՄԱ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՓՈՒԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈՒՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ – Միջուկային է նորմա-ն՝ որպես կառուցվածքի պատմականորեն հաստատված դրսևորում, որպես կառուցվածքի իրացում լեզվի պատմական զարգացման տվյալ փուլում և տվյալ հանրության հաղորդակցման գործունեության մեջ: Վերոնշյալ սկզբունքից է բխեցնում հետևյալ ենթասկզբունքը. Նշյալ եռամիասնության անընդհատական շղթայի փոխկապակցվածության, փոխայամանավորվածության և փոխհարաբերությունների կողքին նորմավորման հիմքում պետք է դնել նաև, այսօրվա տերմինագործածությամբ, **եսադարձ կապերի ողջ փոխներգործուն**

¹⁰ Նույն տեղում, էջ 183:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 197-198:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 50:

համակարգի հաշվառման կարևորությունը (խոսք-նորմա-կառուցվածք և կառուցվածք-նորմա-խոսք, նորմա- խոսք և խոսք-նորմա, նաև՝ նյութականացում-վերացարկում-նյութականացում...):

Բ. ԱՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԸ – Վերացական հայեցակետով կանոնական մակարդակի միավորները կարող են նկարագրվել այն չափով, որչափով որ լեզվի տարրերի ու կանոնների տվյալ վիճակը ավանդական է, պատմականորեն ձևավորված և պայմանական: Այն, որ արդի գրական հայերենի կանոնական համակարգում ճիշտ է **մարդու** և ոչ թե **մարդի**, որ է հնչյունն ունի գերազանցապես բաց արտասանություն և ոչ՝ փակ, ուստի այդ արտասանությունն է ճիշտ, արդարանում է միայն լեզվի ավանդականությամբ: Այսինքն՝ հեղինակը առաջ է քաշում լեզվականոնական հիշյալ սկզբունքի եռահատկանշության իրողությունը՝ **1. ավանդականության, 2. պատմականորեն ձևավորված լինելու 3. պայմանականության:**

Գ. ԼԵԶՎԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲԱՐԵՇՐՁՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԸ - Է. Աղայանն այս սկզբունքն առավելապես բացատրում է բառապաշարային, հատկապես տերմինաբանության իրողությունների հետ կապված, սակայն եզրահանգումը համընդհանրական է. **լեզվի որակական զարգացման և կատարելագործման ընդհանուր գործընթացը միագումար ամբողջությունն է լեզվում տեղի ունեցող այն փոփոխությունների, որոնք ուղղված են լեզվի տարբեր մակարդակների արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը՝ մի կողմից՝ հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից՝ լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին:** Ըստ Աղայանի՝ լեզվի կատարելագործման ընդհանուր գործընթացի դրսևորում են դառնում ոչ այնքան նորամուտ լեզվատարբերի առկայությունը, դրանց թվաքանակը, որքան արդեն գոյություն ունեցող բառերի ու կայուն կապակցությունների զանազան փոփոխությունները՝ լինեն դրանք հնչյունական, ձևական-ձևաբանական, գործառական, իմաստային-իմաստարաժեքային թե բառակազմական իրողություն, բառափոխարինում թե փոխարկում և այլն: Դրանք ուղղված են լեզվի համակարգայնության ու միօրինակության ծավալմանը, բառագործածությունների ու բառիմաստների ճշգրտմանը, իմաստային անորոշությունների, բառերի, բառաձևերի իմաստային անհարկի ծանրաբեռնության, շփոթություն առաջ բերող բազմիմաստությունների և անհարկի համանիշության (մանավանդ տերմինահամակարգերի մեջ) վերացմանը և բառակազմական կաղապարների ու տիպերի միասնականացմանը, բառաքերականական հոմանիշների գործառական, իմաստային ու ոճական տարբերակմանը, բառապաշարի որակական արդիականացմանը, բառագործածության սահմանների ու ոլորտների ճշգրտմանը և այլն¹³: Աղայանը մատնանշում է հատկապես բառային կազմի մեջ տեղի ունեցող ներքին տեղաշարժերը (փոխանցումներն ու ներթափանցումները), այսինքն՝

¹³ Տե՛ս՝ **Աղայան Է.**, Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003, էջ 268:

գործառական ու լեզվառճական տարբեր շերտերի պատկանող բառերի փոխանցումը մի շերտից մյուսին, բառապաշարի կատարելագործման ուղիները՝ կանոնարկման ուրույն ենթասկզբունքներով՝ բառերի գոտում, փոխառյալ բառերի հայերեն համարժեքների ստեղծում, չգործուն շերտի գործունացում, բառակապակցությունների բառացում, բառերի տերմինացում, տերմինների բառացում և այլն: Նորմավորման գործընթացում ցանկալի արդյունավետության հասնելու համար պետք է հաշվի առնել կատարելագործման դրսևորումների դերն ու կշիռը, նաև՝ դրանց ներքին զարգացման ընդհանուր միտումը. **արդիականացում՝ լեզվի մեջ գործող զարգացման ներքին (ներլեվական) օրինաչափությունների ծավալմամբ և դրանց իրականացմամբ իմաստաբանական, բառակազմական, հնչյունաբանական, ձևաբանական, գործառական և այլ իրողությունների համակարգայնացմամբ ու միասնականացմամբ**¹⁴: Սակայն այս սկզբունքը աղայանական սահմանափակում ունի՝ եթե դրանք որևէ տեսանկյունով կարելի է դիտել որպես **ժամանակակից հայերենի զարգացման ընդհանուր տենդեցի (միտումի) իրացում**:

Դ. ՀԱՄԱԿԱՐԳԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ - Ինչքանով է կանոնի փոփոխությունը ենթարկվում համակարգային փոխարինման, ի՞նչ չափով՝ ոչ. ա՛յդ չափով էլ ապահովվում են արգասավորությունն ու համակարգայնությունը (ասվածը մանրամասնում է **ինֆորմացիա** (իրազեկում, տեղեկատվություն), **պերֆորարտ** (սոր, անցք) բառերի օրինակով)¹⁵:

Ե. ՄԻԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ - Այս դեպքում միասնականությունը պետք է հասկանալ նեղ և լայն առումներով: Ընդհանուր առմամբ լեզվի գոյության նախապայմանն այն է, որ այն իր կանոնական համակարգով, մասնավորապես բառապաշարի հիմնական մասով ու քերականությամբ ընդհանուր ու միասնական լինի նրանով խոսող հանրության համար: Միասնականությունը նեղ առումով վերաբերում է հենց լեզվի կանոնարկման ներքին կյանքին՝ յուրաքանչյուր կանոն պետք է ներակայվի այլ կանոնների համատեքստում: Թեպետև հետազոտության նպատակով լեզվական իրողությունները ներկայացվում են որպես միմյանցից առանձնացված երևույթներ և քննության են առնվում իրարից անկախ, սակայն լեզվի մեջ դրանք միասնաբար հանդես եկող, շատ հաճախ միմյանց հետ խաչավորվող կամ միևնույն երևույթի տարբեր կողմերը ներկայացնող իրողություններ են: Այսպես օրինակ՝ հակադրությունների պայքարը ներլեզվական տարբերակների միջև պսակվում է մեկի հաղթանակով, բայց սա ինքնին նշանակում է, թե պայքարի մյուս հետևանքն էլ բառերի հնացումն է: Ստացվում է այնպես, որ հակադրությունների պայքարը նաև բառերի հնացման, գործածությունից դուրս մղվելու, նաև՝ իմաստաբանորեն կամ գործառապես տարբերակված բառերի և քերականական ձևերի առաջացման գործընթաց է: Աղայանը **աստղ-**, **աղբյուր-** բաղադրիչներով (որպես նորատիպ բաղադրական հիմքեր՝ ի հակադրություն **աստեղ-**, **աղբեր-** հնատիպ բաղադրական հիմքերի)

¹⁴ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 280:

¹⁵ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 181-182:

կազմված բարդությունների հաղթանակն ու կանոնականացումը դիտում է որպես աշխարհաբարի բառակազմական օրինաչափությունների դրսևորում: Սակայն այս օրինաչափության կողքին կարևորում է և մասնավորը՝ կապված մեր լեզվի մեջ պատմականորեն գործած ու գործող ներքին օրինաչափության՝ հոլովների ու հոլովման համակարգի պատմական զարգացման ընդհանուր գործընթացի հետ: Աղայանի եզրահանգումը հետևյալն է. **Քննության առնելով լեզվի (մասնավորապես բառապաշարի) կատարելագործման զանազան իրողություններն ու դրանց ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնակի բնույթ կրող դրսևորումները, անհրաժեշտ է դրանք դիտարկել իրենց փոխադարձ կապերի ու պայմանավորվածությունների մեջ, իսկ մյուս կողմից՝ դրանց և լեզվի տարբեր բաղադրիչների համակարգերում գործող զարգացման ընդհանուր օրինաչափությունների կապի ու պայմանավորվածության մեջ**¹⁶:

Ձ. ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ – Լեզուն քարացած, մեկընդմիջտ տրված ու անփոփոխ երևույթ չէ, այլ հասարակական գիտակցության զարգացման, հասարակական գործադրության ընթացքում պատմականորեն փոփոխվող ու զարգացող երևույթ է. **լեզվի կյանքը անընդհատ շարժում է, և այդ շարժումն էլ դադար չունի. լեզվի զարգացումը անընդհատական է:**

Բնականաբար, Աղայանը նորմը ևս համարում է փոփոխական երևույթ՝ մի հստակ ընդգծումով՝ **լեզվի քերականական կանոնահամակարգը համեմատաբար շատ դանդաղ է փոփոխվում, որակական անցումները աննկատելի են:** Նա գրում է. «Իր ամբողջության մեջ, իր անխախտելի միասնությամբ հանդերձ լեզուն, այնուամենայնիվ, մեկընդմիջտ տրված պատրաստի գործ չէ. նա քարացած երևույթ չէ: Ընդհակառակը, լեզուն հարաշարժ ու հարափոխ վիճակում է գտնվում, մշտապես կրկնվում ու անդադար վերարտադրվում է խոսողության պրոցեսում: Լեզուն անընդհատ պրոցես է: Եթե այդպես է, ապա չի կարելի լեզուն ուսումնասիրել որպես պատրաստի, ավարտված գործ, որպես մեկընդմիջտ կայուն վիճակ: ...Լեզվական յուրաքանչյուր նոր որակի արմատները թաղված են նույն լեզվի պատմության խորքերում, նորի սաղմերը աճում ու զարգանում են հնի մեջ, նրա հետ գիրկընդխառն, մինչև որ նորի սաղմերի աստիճանական կուտակմամբ ու հնի մահացմամբ տեղի է ունենում անցումը նոր վիճակի: Նշանակում է՝ լեզուն ճիշտ ըմբռնելու համար, նրա զարգացումը ճիշտ հասկանալու և լուսաբանելու համար պետք է ուսումնասիրել լեզվի զարգացման պրոցեսը, գտնել լեզվի մեջ մեռնողը, հինը, ցույց տալ նորը, զարգացողը: Այսպես, ուրեմն, վերն ասվածները ցույց են տալիս, որ լեզվաբանության մեթոդն է՝ ուսումնասիրել լեզուն իր մասնակիությունների փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ, ուսումնասիրել լեզուն իր անընդհատ փոփոխման ու զարգացման պրոցեսում, իր մի որակից դեպի նորը անցնելու պրոցեսում»¹⁷:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 280-282:

¹⁷ Նույն տեղում, էջ 10-11:

Աղայանը նորմի փոփոխության հիմքում դնում է **լեզվամտածողությունը** և այն էլ՝ **նոր լեզվամտածողությունը**: Հին ու նոր կանոնների տարբերությունը նոր լեզվամտածողության արդյունք է: Այսպես՝ գրաբարի հոլովման համակարգում ոչնչով չի արտահայտվում **անձի և իրի առումների** տարբերությունը, որը, բնականաբար, լեզվամտածողության մեջ էլ գոյություն չի ունեցել: Մինչդեռ ժամանակակից հայերենում անձի և իրի առումները հոլովական համակարգի մի կարևոր հատկանիշն են կազմում: Ուրեմն՝ աշխարհաբար հայերենը հոլովման մեջ առաջացրել է ձևեր, որոնք արդյունք են նոր լեզվամտածողության: Կամ՝ ըստ Աղայանի՝ լեզվամտածողության նույնպիսի տարբերություն դրսևորվել է հոգնակիի կազմության մեջ՝ առաջ բերելով առաջին հայացքից մինևույն կարգի թվացող բարդ բառերի հոգնակիի կազմության միջև գոյություն ունեցող տարբերությունը:

Է. ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ (ՀԱՄԱԳՈՅԱԿՑՈՒԹՅԱՆ) ՄԿՁԲՈՒՆՔԸ – Ժամանակակից հայերենը համաձուլվածքն է համահայկական, գրաբարյան, ժողովրդախոսակցական, բարբառային շերտերի: Արդյունքը մեր լեզվում համագոյակցող, մինևույն ժամանակ լեզվական նորմայի տեսակետից տարբեր բնութագրություններ և գնահատականներ ստացածներ լեզվական տարբերակների բազմատեսակ խմբեր են (բառային զույգեր, փոփոխակներ, բառերի ձևական տարբերակներ, զուգաձևություններ, բառակազմական տարբեր կաղապարների զուգահեռություններ և այլն): «Այս դասակարգումների համար որպես ելակետ ու չափանիշ է ընդունվում մեր լեզվի զարգացման արդի փուլի նորման ու կառուցվածքը, այսինքն՝ բառերը գնահատվում են ըստ այն բանի, թե ի՛նչ հարաբերության մեջ են գտնվում նրանք մեր լեզվի բառակազմական միջոցների ու կաղապարների, հնչյունական-հնչյունափոխական կանոնների, ձևաբանական կառուցվածքի հետ, գործառական ի՛նչ բնութագիր, գործածականության ինչ վիճակ ունեն և այլն»¹⁸ : **Համագոյակիցները**, Աղայանն այսպես է անվանում, հաճախ չեն խանգարում փոխըմբռնմանը, բայց հաճախ անսովոր են և խանգարում են. և հատկապես՝ քերականության մեջ. Այստեղ քերականական զուգահեռները ավելորդ կերպով ծանրաբեռնում են լեզուն. խախտվում է «Խնայողության սկզբունքը»: «**Լեզուն իր զարգացման յուրաքանչյուր փուլում ներկայացնում է մի որոշակի համակարգ. Կառուցվածքով իրար բացասող կամ հակասող զուգաձևերը առաջ են բերում ներքին հակասություն համակարգի մեջ, ուստի և անհրաժեշտորեն այդ հակասությունը աստիճանաբար վերանում է հոգուտ միասնական համակարգի**»¹⁹ : Նա, լեզվի ամբողջ բառապաշարը բաժանելով 2 շերտի՝ արժույթային բառերի շերտ և տարբերակային բառերի կամ բառատարբերակների շերտ, առանձնացնում է գոյակցության և զուգահեռ գործածության վրա հիմնված տարբերակային տարբեր խմբեր (ազատ և ստորակարգային տարբերակներ, կանոնական և պարականոն արբերակներ, աննշույթ և նշույթավորված տարբերակներ, փոխատեղական բաղադրյալ

¹⁸ Աղայան Էդ., Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան 1984, էջ 134-135:

¹⁹ Աղայան Է. Բ., Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967, էջ 31:

տարբերակներ, հողակապային, հնչյունափոխական, տարահիմք, ուղղագրական-ուղղախոսական, ձևաբանական տարբերակներ և այլն)²⁰:

Տարբերակայնության հարցերը առավել մանրամասնությամբ բառապաշարի քննությամբ է տրվում: Լեզվի զարգացման ընդհանուր գործընթացում տեղի է ունենում բաղադրական, բառակազմական և ձևական-ձևակազմական, բառային-բառաձևային տարբերակների մրցակցություն կամ այլ կերպ ասած՝ հակադրությունների ներքին պայքար՝ տևական ու անընդհատական պայքար հնի, մահացողի և նորի, կենսունակի, զարգացողի, կամ էլ՝ գրականի և ոչ գրականի պայքար: Այն տանում է դեպի տարբերակներից մեկի կամ մյուսի հաղթանակը, բայց, իբրև ընդհանուր երևույթ, մեծ մասամբ՝ նորի, կենսունակի օգտին: Ամենակարևորը՝ Աղայանը նշում է, որ այս գործընթացը, սակայն, ինքն էլ ներքին հակասություններ ունի. Տարբերակների պայքարը սովորաբար հանգեցնում է միայն առանձին բառային-բառաձևային տարբերակների հաղթանակի. (Աղայանը բերում է **աստղ- - աստեղ-, աղավնի-աղավնե, կայսր-կայսեր, հայր-հոր** բաղադրական հիմքերի օրինակները): Այս դեպքում լեզվաբանը կրկին առաջ է քաշում լեզվի գործնական նորմավորման հարցը և պահանջում է ուշադրություն դարձնել կատարելագործման թե՛ առանձնակի և թե՛ ընդհանրական դրսևորումներին²¹:

Տարբերակային ձևերի կանոնարկման չափանիշներն էլ են տարբեր: Մեկը **ճիշտ է, թույլատրելի է, պատշաճ է** և այլն, մյուսը **սխալ է, ճիշտ չէ, մերժելի է**: Մեկն **օրինական է, կանոնական**, մյուսը, Աղայանի տերմինագործությամբ, **«սպօրինի» է՝ ոչ օրինական**: Լավագույն դեպքում՝ երկուսի կիրառությունն էլ կարելի է ճիշտ համարել: «Տարբերակային բառաձևերի միջև եղած պայքարի հետևանքով այս կամ այն տարբերակի հաղթանակը բառապաշարի կատարելագործումն է այն տեսակետից, որ դա հանգեցնում է ավելորդ բառազույգերի վերացմանը, երկու տարբեր, բայց զուգահեռաբար գործածվող ձևերից մեկի ընդհանրացմանը, մյուսի մերժմանը և ընդհանուր առմամբ, բաղադրական հիմքերի, բառակազմության հետ կապված հնչյունափոխական իրողությունների միասնականացմանը և այլն: Այս պրոցեսի հիմնական օրինաչափությունը ժամանակակից հայերենում գործող օրինաչափությունների ընդհանրացումն է, որից և բխում է հնատիպ ձևերի փոխարինումը նորով (օրինակ՝ **աստեղային-աստղային, պատանենալ-պատանիանալ**): Հենց այս տեսակետից էլ բառատարբերակների խմբերում նոր ձևերի հաղթանակը ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործումն է: Բայց կա նաև հակառակ երևույթը. բառային հնատիպ տարբերակները սովորաբար գրաբարյան կազմություններ են, և դրանք գործածության ավելի քան մեկուկես հազարամյակի պատմություն ունեն, գրական ժառանգորդությամբ հասնելով մինչև մեր օրերը. նրանցից շատերը դեռևս լիովին կենսունակ են մնացել, և հաճախ այդ տարբերակներն են հաղթող դուրս գալիս... Այս բոլոր

²⁰ Տե՛ս **Աղայան Է.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան 1984, էջ 132-167:

²¹ Տե՛ս **Աղայան Է.**, Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003, էջ 263-265:

դեպքերում իբրև կատարելագործում պետք է դիտել հենց այդ հնատիպ ձևերի հաղթանակը ոչ կենսունակ, «ապօրինի» նորատիպ տարբերակների նկատմամբ, ըստ որում դրանց կենսունակությունն ու կայունությունը ամրապնդվում է մեր գրական լեզվի ավանդակա- նությամբ»²²:

Ը. ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ - Լեզվի հասարակական գործառույթան ու պատմական զարգացման յուրահատուկ ներքին հակասություն է նորմայի փոփոխականության և միաժամանակ նրա հարաբերական կայունության հակադրամիաս- նությունը լեզվի պատմության ամեն մի առանձին փուլում: Նշանակում է, որ որպես պատմանակորեն զարգացող երևույթ՝ լեզուն միշտ էլ գտնվում է փոփոխությունների շարժման ընթացքում, իսկ որպես հասարակության հաղորդակցման միջոց՝ տվյալ պատմական ժամանակահատվածում հանդես է գալիս իբրև հարաբերականորեն կայուն, ընդհանուր առմամբ միասնական ու ընդհանրական համակարգ: Էական՝ սկզբունքային նշանակություն ունի լեզուն նորմավորել հիմնային հակադրության՝ **զարգացման անընդհատականությանն լեզվական համակարգի կայունության կամ հարաբերական «անշարժության» միասնության** դաշտում. մի եզրում այն քննել որպես բարեշրջական զարգացման անընդհատական գործընթաց՝ վերհանելով լեզվում կատարվող-կատարված փոփոխությունները, դրանց հետևանքները, պատճառներն ու օրինաչափությունները՝ որպես լեզվի ներքին զարգացման և «ինքնազարգացման» օրինաչափություններ: Մյուս եզրում լեզուն դիտել որպես կայուն համակարգ՝ նկարագրելով լեզվամիավորներն իրենց գործառույթան ամբողջության ու միասնության մեջ:

Աղայանը նշում է մի կարևոր հանգամանք՝ նորման տվյալ փուլի լեզվական վիճակի (լեզվավիճակի) և դրա խոսքային արտացոլման կամ իրացման ընդհանուր համակարգն է ժամանակային սահմանափակ հատվածի համար, և լեզվի համաժամանակյա ուսումնասիրությունը, ժամանակային սահմանափակ հատվածի համար լեզուն դիտելով որպես կայուն վիճակ, **պետք է անտես առնել նրա փոփոխականությունը, քանի որ այն չի փոխում գործող կանոնահամակարգը:**

Թ. ԱՆԸՆԴՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿՉԲՈՒՆՔԸ - Լեզուն անընդհատ շարժման ու փոփոխությունների գործընթացի մեջ է, և, ըստ Աղայանի, անընդհատականությունը փոփոխությունների աննկատելի գործընթացն է²³: Բնականաբար, անընդհատականությունը նաև նորմավորման հիմքում է դրվում. լեզվի նորմավորման գործընթացը հարաշարժ ու հարափոփոխ, ոչ ավարտուն վիճակ է. այն, ինչ որ այսօր ժամանակի տվյալ կտրվածքում հանդես է գալիս որպես կատարելագործման իրացում՝ կանոնի տեսքով, վաղը կարող է իր դարն ապրած լինել և փոխարինվել ավելի կատարյալով՝ լեզվի զարգացման վաղվա փուլին համապատասխան:

²² Նույն տեղում, 267-268:

²³ Տե՛ս **Աղայան Է.**, Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 16:

Ժ. ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ - Վերոնշյալ սկզբունքի ածանցյալն է: Եթե լեզվի զարգացումը սոսկ քանակական աճ չէ և ոչ էլ հանկարծակի պայթյուններով կատարվող որակական անցում (լեզվի զարգացումը պայթյուններ չունի) և եթե «լեզվական փոփոխությունները ներկայացնում են ոչ թե հանկարծական ուստյուններ, այլ աննկատելի աստիճանականություն», նշանակում է՝ այդպիսի աստիճանականությամբ հատկանշվում է և նորմավորման գործընթացը:

ԺԱ. ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔԸ - Լեզվի ընդհանրականության, միօրինակության և միասնականացման սկզբունքների գործառությունը անհրաժեշտաբար հանգեցնում է համագործակցող սերունդների միջև տեղի ունեցող լեզվական երևույթներն ի ցույց դնող կանոնահամակարգերի միջև եղած տարբերությունների համահարթեցմանը, ինչը Աղայանը կոչում է **լեզվական համակերպություն**: Խոր դիտողականությամբ Աղայանը նշում է այս սկզբունքի մի կարևոր առանձնահատկություն, որը լեզվական գործունեության առաջընթաց շարժման գրավականն է. **լեզվական համակերպումը առավել շատ կատարվում է ավագ սերնդի համակերպությամբ**²⁴:

Այս նույն սկզբունքը մեկ այլ աշխատության մեջ հոմանշային այլ եզրույթակապակցությամբ է անվանում՝ **լեզվական հարմարակում** (ադապտացիա): Աղայանը գրում է. «Նկատենք, որ սերունդները իրարից մեկուսացած չեն: Նրանք ապրում են համատեղ հասարակական գործունեությամբ, նույն հասարակական կյանքով և նույն հանրության մեջ: Լեզվական տեսակետից սա կարևոր է նրանով, որ ամենօրյա հաղորդակցման գործընթացում սերունդները փոխադարձաբար սովորում են միմյանց լեզվական առանձնահատկությունները, վարժվում դրանց. նրանց մշտական հաղորդակցման ընթացքում փոխադարձ ազդեցությամբ տեղի է ունենում, այսպես ասած, **լեզվական հարմարակում (ադապտացիա)** (ընդգծումը՝ **Ջ. Ա.**): **Լեզվական հարմարակում** ասելով հասկանում ենք տարբեր սերունդների միջև եղած լեզվական տարբերությունների, առանձնահատկությունների յուրացումը և լեզվական փոխադարձ կողմնորոշումը: ...Ամեն մի հանրության, ինչպես և նրա ավագագույն, այնպես էլ կրտսերագույն սերնդի համար լեզուն հանդես է գալիս իբրև մի կայուն համակարգ, և առանձին տարբերություններն առանձնապես չեն խախտում այդ միասնությունն ու ընդհանրությունը»²⁵:

Այս սկզբունքի տրամաբանական արտածումն է նորմի (կանոնի)՝ հաջորդ սերնդին ավանդելու, այսինքն՝ **ԿԱՆՈՆԻ ՓՈԽԱՆՑԵԼԻՈՒԹՅԱՆ** օրինաչափական իրողությունը:

Աղայանը լեզվի նորմավորման գործընթացում կարևորում է այլևայլ գործոններ, որոնք, կարելի է ասել, սկզբունքային արժեք ունեն: Դրացից են՝

²⁴ Տե՛ս **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967, էջ 33-34:

²⁵ **Աղայան Է.**, Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 16:

- Լեզվական միավորների (կամ հոդավորիչների) **արգասավորության, բառակազմական, ձևակազմական, գուգորդելիական (հարակցական) կարողականության** հատկանիշների կարևորումը:

- **Վիճակագրական տվյալների հաշվառումը.** վիճակագրային հաշվումները վստահելի կովաններ են, եթե հիմնվում են գիտական վերլուծությունների վրա:

- Շատ կարևոր է ժամանակագրորեն որոշել ոչ միայն հին ու նոր կանոնագործածությունների մոտավոր սահմանը, այլև լեզվական նորմայի ժամանակային և տարածական այն սահմանները, որը իբրև վերլուծությունների հիմք պետք է ընդունեն լեզվաշինարարները և լեզվաբանները: (Օրինակ՝ Աղայանը ուղղախոսության կանոնարկման համար հիմք է ընդունում, իբրև կանոն է դիտում 1920-ական թվականներից հետո գոյություն ունեցող համակարգը):

- Է. Աղայանը լեզվամտածողությանն առնչակից կարևորեց **լեզվական զգացողության** խնդիրը, նաև՝ այդ զգացողության համընկնումը ժամանակի որևէ հատվածի հետ:

- Աղայանն անուղղակիորեն նորմավորման քննակետ դարձրեց հոդավորող միավորների՝ հոդավորիչների քանակի գործոնը՝ նշելով, որ մակարդակից մակարդակ աճում է հոդավորող միավորների քանակը: Հնչյունական և տարրային մակարդակներում դրանք սահմանափակ են այբուբենով տրված հնչյունների քանակով, սակայն ո՛չ բառիմաստները, ո՛չ էլ նախադասությունների արտահայտած մտքերը քանակային սահմանափակման չեն ենթարկվում: Իսկ ինչ վերաբերում է բառերին, դրանք գոնե մոտավորապես կարելի է գրանցել ու հաշվել, բայց այստեղ էլ այդ սահմանափակումը ստույգ չէ: Ըստ Աղայանի՝ յուրաքանչյուր լեզվի բառարան մոտավորապես ընդգրկում է տվյալ լեզվի բառերը իբրև սահմանափակ, վերջավոր քանակ, բայց բառարանային մեկ բառը հաճախ ունենում է բազմաթիվ, երբեմն նույնիսկ տասնյակների հասնող իմաստներ, ուստի և այդ բառն ունի իր իմաստների քանակին հավասար բառերի արժեք²⁶:

- Աղայանը պակաս կարևոր չի համարում նաև այն հարցը, թե ժամանակակից լեզվի կանոնական համակարգը կրողներից ո՛ր սերնդի լեզուն պետք է դնել կանոնարկման վերլուծությունների հիմքում: Ըստ Աղայանի՝ միջին դիրքում գտնվողներն են արդի լեզվի կանոնական համակարգը կրողները (ավագ սերնդի լեզվագործածությունը շատ առումներով կղիտարվի որպես հնաբանություններ, նոր սերնդինը՝ նորաբանություններ): Մրա հետ անմիջականորեն կապվում է կանոնների յուրացման տարիքային առանձնահատկությունների, դրանց պահպանման ժամկետի հարցերը: Այսպես՝ արտասանական–ուղղախոսական երևույթները յուրացվում և ամրանում են խոսողների մոտ մանուկ հասակում և սովորաբար պահպանվում են մինչև կյանքի վերջը: Այդպես չէ քերականությունը: Խոսողները, մանավանդ մշակույթի գործիչները, յուրացնում են այն

²⁶ Տե՛ս **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967, էջ 41:

կանոնական վիճակը, որ գոյություն ունի նրանց գրական կամ գիտական գործունեությունն սկսելու ժամանակ:

- Կանոնարկման հարցում Աղայանը կարևորեց նաև **ավելորդության** (ավելորդ ցուցիչները, եթե հակասության մեջ են համակարգի հետ, վերանում են), **հակասության**, **լեզվական հակազդեցության** գործոնները:

- **Աղայանը նշեց նաև ազատ բանավիճելու արդյունավետությունը կանոնաստեղծման-կանոնակառուցման աշխատանքներում:** Աճառյանի «Հայոց լեզվաբանության պատմության» երկրորդ հատորի մասին իր խոսքում նշում է, որ լեզվաբանական ազատ բանավեճը արմատական հեղաշրջում առաջացրեց լեզվաբանության մեջ, հանեց լեզվաբանությունը լճացման վիճակից և զարգացման լայն հնարավորություններ ստեղծեց նրան համար:

- Աղայանը նորմավորողների ուշադրությունը նաև մի այլ կողմի վրա է սևեռում՝ նորմավորման գործընթացում «իզուր աշխատանք» չկատարելու վրա՝ մի վերապահությամբ՝ ընդհանուր առմամբ ելակետային սկզբունք է, սակայն՝ ոչ բացարձակ. այստեղ էլ ինչ-որ չափով ընտրություն պետք է կատարել: Օրինակ՝ նորաձևության եկող ու գնացող տերմինների հայացումը իզուր աշխատանք է համարում: Իր իսկ խոսքով՝ այդ կարգի բառերը, եթե արդեն մեր ունեցածների վերականգնումը չեն (իսկ մոդան այդպիսի քմահաճույքներ ունի), հարկավոր էլ չէ հայացնել, որովհետև դա միայն անօգուտ աշխատանք է. այդ կարգի առարկաների անվանումները մտնում են խոսակցական լեզվի մեջ՝ հենց որ դրանք կյանքում երևան են գալիս, և դուրս են գալիս մոդայի փոխվելու հետ միաժամանակ:

- Կանոնարկման հիմքում դնում է նաև **հասկանալիության** պահանջը՝ մի զգուշացումով. հասկանալիությունը միշտ չէ, որ կարող է լեզվի ընդհանրության ու միասնության չափանիշ լինել:

- Նորմավորման գործնականացման առաջին քայլի՝ միօինականացման կողքին մատնանշում է **խստապահանջության** և **հասարակության հսկողության** կարևորությունը:

Է. Աղայանը լեզվի կանոնարկման գործընթացում անուշադրության չի մատնում անհատին՝ թե՛ իբրև լեզվակիր և թե՛ իբրև ստեղծագործող: Մի կողմից՝ յուրաքանչյուր սուբյեկտ անհատական ներունակությամբ յուրացնում, իր գիտակցության մեջ ամբարում է հասարակայնորեն ընդհանուր և օբյեկտիվորեն գոյություն ունեցող լեզվական համակարգն իր ողջ տարրերով, այդ տարրերի հարաբերակցության, զուգորդելիության վերացարկված և ընդհանրացված կադապարներով, իր կառուցվածքով: Մյուս կողմից՝ ամեն մի խոսող սուբյեկտ հնարավորություն ունի հասարակայնորեն ընդհանուր համակարգը գործադրելու յուրովի՝ առանց այդ համակարգի էությունն ու ընդհանրությունը խախտելու. «Լեզուն, այսպիսով, խոսող անհատի մեջ դառնալով ներունակություն՝ հաղորդակցման գործընթացում աստիճանաբար ստանում է յուրահատուկ ինքնավարություն ու մեքենականություն: Լեզվական համակարգը վերածվում է **սերող մոդելների համակարգի**, (ընդգծումը՝ **Ջ. Ա.**) և խոսքի մեջ այնպիսի մեքենականությամբ է կատարվում խոսքի

սերումը, որ ամեն մի հաղորդված խոսք կարծես հենց սկզբից ի վեր, պատրաստի վիճակում կար արդեն արդեն խոսողի գիտակցության մեջ»²⁷:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքի առանձնահատկություններից մի քանիսը կապվում են խոսողի անհատականության՝ նրա մտագործունեության, զգացմունքների, հոգեվիճակի, վերաբերմունքի հետ, Աղայանը կարևորում էլուրաքանչյուր սուբյեկտի՝ այդ համակարգը որոշ չափով ստեղծագործաբար օգտագործելու հնարավորությունը. «Մնալով լեզվի հասարակայնորեն ընդհանուր (և պարտադիր) համակարգի շրջանակներում՝ խոսող սուբյեկտը ազատ է այդ համակարգի միավորների ու քերականական կանոնների ընտրության ու դրանց որոշակի գործադրության մեջ այն չափով, որչափով որ այդ որոշակի գործածությունը չի խախտում համակարգը... Այսպիսով՝ լեզուն հանդես է գալիս նաև որպես ստեղծագործություն՝ իր յուրահատուկ գործադրության ոլորտում, իհարկե միշտ էլ պահպանելով իր ընդհանրությունը թե՛ խոսակցական և թե՛ գրական-մտածական տարբերակների հետ և փոխադարձաբար ազդելով նրանց վրա ու ինքն էլ ազդվելով նրանցից»²⁸:

Հատկապես գեղարվեստական դաշտը լեզվի մշակման, կատարելագործման ու կանոնականացման բովն է, բայց, ըստ նրա, մի կողմից՝ անհրաժեշտորեն, մյուս կողմից՝ կամայականորեն զրկված է միօրինակությունից՝ գրողի լեզվակերտական (բառակերտական, դարձվածակերտական, ձևակերտական ...) ազատության պատճառով: Իսկ ինչի՞ն ուղղորդեց իր աշակերտների, իր հետևորդների ուշադրությունը՝ ի ծավալումն լեզվի նորմավորման գործընթացի անընդհատականության և կատարելագործման սկզբունքների՝

ա. ամենաթույլ օղակներից մեկի՝ հոգելեզվաբանական հետազոտությունների զարգացմանը.

բ. ժամանակակից բառարանագրության և բառարանակազմության նոր խնդիրների լուծման առաջնահերթությանը՝ առաջարկելով ձեռնարկել նոր գրական հայերենի լիակատար բառարանի կազմությունը, կազմել հայերենի 2 տարբերակների լիակատար բառարանը՝ գիտական պահանջներին բավարարող մակարդակով.

գ. բարբառային աշխարհագրության արմատավորմանը, պատմական բարբառագիտության զարգացմանը.

դ. լեզվի ուսումնասիրության խնդիրների ծավալմանը՝ արդի հանրալեզվաբանության պահանջներին ու մարտահրավերներին համապատասխան.

ե. բառապաշարի կատարելագործման գործընթացի բազմակողմանի լուսաբանմանը:

Մեծանուն լեզվաբաններին վերաբերող «Երախտագիտականներ»-ն արդեն իսկ հավաստիացումներ են այն բանի, որ Աղայանը կարևորում է լեզվաբան անհատի,

²⁷ Աղայան Է., Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003, էջ 212:

²⁸ Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 14-15:

լեզվաշինարար-լեզվանորոգիչ անհատի դերը հայերենի նորմավորման գործընթացում: Նույն ձևով մերօրյա սերունդն է արժևորում, գնահատում **Աղայան անհատին՝ իբրև լեզվաքննիչ, իբրև լեզվականոնարկող և լեզվամշակ, լեզվի զարգացման միտումները տեսնող կանխասաց, իբրև** դպրոցներում հայոց լեզվի ուսուցման դրվածքով մշտապես մտահոգված **գիտնական-մանկավարժ**²⁹:

Մեծանուն լեզվաբանը, ժամանակակից լեզվաբանության պահանջներին համաքայլ, չկառչեց ավանդական պատկերացումներից, «ինքնագոհաբար չննջեց ավանդամոլության գրկում»: Իր ուսուցիչների օրինակով՝ յուրացրեց և նորի՝ առաջավորի լույսով քննեց ու քննադատաբար զարգացրեց ավանդականը՝ հայերենագիտության մեջ համարձակորեն արմատավորելով **աղայանականը**:

Աղայանական լեզվական մշակույթն այսօր արժևորվում է (արժևորվելու է) ոչ միայն ուրույն լեզվաքաղաքականությամբ և լեզվի գործնականացմանն ուղղված լեզվաշինարարությամբ, այլ նաև ավելի նեղ անհատական բնույթի հատկանիշների համաձուլվածքով՝ տեսական բարձր պատրաստականությամբ, արդի լեզվաբանության տեսական դրույթների ու մեթոդների լիակատար տիրատիրապետման ու գործադրման կարողունակությամբ, բարձրաճաշակ լեզվամտածողությամբ և ուսուցանելու իր վարպետությամբ: **«Քանի կապրի հայագիտությունը, Աղայանն իր պատվավոր տեղը կունենանրա հաջողությունների տարեգրքում» (Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆ)**:

Օգտագործված գրականության ցանկ

Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1967:

Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան 1984:

Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:

Աղայան Է., Լեզվաբանության ներածություն(Լ. Հովսեփյանի խմբագրությամբ), Երևան, 2008:

Աղայան Է., Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003:

Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն(սկզբից մինչև մեր օրերը), Հ. 1, Երևան, 1958:

Աղաջանյան Ջ., Չնաբանական նորմ և խոսքի մշակույթի հիմունքներ, Երևան, 2007:

Բաղիկյան Խ., Էդուարդ Աղայան, Երևան, 2010:

²⁹ Իր հեղինակած դասագրքերով տեսական լեզվաբանությունը գործնականացրեց՝ իր դրույթները նախապես ստուգելով, գործնականորեն հաստատելով: Այսպես, օրինակ՝ դպրոցական դասագրքի ուղղախոսության կանոնները խոսքային տվյալներով ստուգելու, ճշտելու և արդի գրական լեզվի ուղղախոսության կանոնական համակարգը պարզելու նպատակով 2 տարվա ընթացքում գրի է առել տարբեր հասակի և տարբեր մասնագիտության տեր մարդկանց արտասանության տվյալները 20 բառի վերաբերյալ: (Տե՛ս **Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը**, Երևան, 1967, էջ 24-34):

РЕЗЮМЕ
ПРИНЦИПЫ И ЗАКОНОМЕРНОСТИ НОРМИРОВАНИЯ ЯЗЫКА
В ТВОРЧЕСТВЕ ЭДУАРДА АГАЯНА
Агаджанян Зарик

На основе традиционного классического и современного языкознания Эдуард Агаян изучал армянский язык во всей его форме. Великий лингвист также рассмотрел многие вопросы языкового регулирования, языкового строительства и языковой политики, наряду с традиционными принципами выдвинул новые принципы и модели нормирования, в частности принципы практической реализации грамматики языка и роспуска (атмена) правила. Он также особо отметил деятельность отделов, занимающихся армянским языком (Институт языка им. Гр. Ачаряна, Терминологический комитет и др.). Арменовед критически развил армянскую лингвистику и занял достойное место в арменоведении.

Ключевые слова: норма, регулирование, нормализация, языковое правило, принцип, языковая конструкция, языковая политика.

SUMMARY
THE PRINCIPLES AND PATTERNS OF LANGUAGE NORMING
IN EDUARD AGHAYAN'S WORKS
Aghajanyan Zarik

On the basis of classical and modern linguistics, Eduard Aghayan studied the Armenian language in its entirety. The great linguist examined many issues of language regularization, language construction and language policy, alongside the traditional principles, he put forward new principles and patterns of norming, in particular, the principles of the practicalization of the grammar of the language and the dissolution of the rule. The Armenologist also emphasized the activities of departments dealing with Armenian (Language institute named after Hr. Acharyan, Terminological Committee, ets). He critically developed traditional Armenian linguistic science and took his rightful place in Armenian studies.

Key words: norm, regulation, standardization, linguistic rules, language construction, language policy.

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տաթևիկ Աշյան

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի
հայոց լեզվի ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
tatev-ashchyan@yandex.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-39

Բանալի բառեր. հաղորդակցական հմտություններ, մասնագիտական խոսք, նեղ մասնագիտական բառապաշար, հունալատինական տերմիններ, ոճական կիրառություն, գիտահանրամատչելի բառապաշար, խոսքի հոգեբանական կողմ, գիտական լեզու, գործառական ոճ, կրճատումներ և հապավումներ:

Մասնագիտական խոր գիտելիքներ և կարողություններ, անհատականության զարգացում, ինքնագիտակցության դերի և նշանակության բարձրացում. սրանք են ժամանակակից բարձրագույն կրթության առջև դրված հիմնահարցերը: Ներկայիս համաշխարհային գլոբալիզացիայի, սոցիալ-քաղաքական և տնտեսական զարգացումների, կյանքի գրեթե բոլոր բնագավառներում անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման պայմաններում նոր մարտահրավերներ են առաջադրվում կրթության համակարգի առջև, որոնց ի պատասխան՝ անհրաժեշտ է արդիականացնել գիտելիքի ուսուցումը՝ արդեն իսկ ձեռք բերածը դեպի մտածողության նոր հուն ուղղորդելով, մշակելով որակապես նոր մոտեցումներ և մեթոդներ:

Բնագիտական կրթություն ստացող ուսանողների շրջանում հայերենի ուսուցումը միտված է արհեստավարժ մասնագետներ պատրաստելու, նրանց կարիերային առաջընթացը ապահովելու արդիական խնդրին: Գաղտնիք չէ, որ պահանջարկված մասնագետ դառնալու համար, բացի բուն մասնագիտական գիտելիքներից, անհրաժեշտ է ունենալ նաև հաղորդակցական կոմպետենցիաներ՝ կապակցված մասնագիտական խոսք, համապատասխան բառապաշար, ինչպես նաև ճանաչողական կարողություններ՝ տեղային և միջազգային հարթակներում մրցակցությանը դիմակայելու, աշխատանքի ներկայացուցչական կողմը ապահովելու նպատակով: Հետևաբար լեզվի գործնական ուսուցման նպատակադրումը պահանջ է ներկայացնում առանձնահատուկ տեղ տալու մասնագիտական խոսքին, ճանաչելու վերջինիս առանձնահատկությունները, գրագետ բառընտրություն կատարելու, բառերի իմաստային և քերականական կապակցելությանը տիրապետելուն, իհարկե, մտքի տրամաբանական զարգացմանը հետևելու ունակություններին:

Հայտնի է, որ արդի հայերենը գտնվում է լեզվի գրական և ժողովրդախոսակցական դրսևորումների խաչմերուկում, ինչի արդյունքում անգամ գրավոր խոսքում հաճախ հանդիպադրվում են բազմաթիվ շեղումներ հնչյունական, բառագիտական, քերականական

և ոճական-տրամաբանական մակարդակներում: Մայրենի լեզվի դասավանդման նպատակն է ուղղորդել ապագա մասնագետին՝ ինքնադրսևորվելու ոչ միայն սեփական մասնագիտության պարագծում, այլև հասարակական կյանքում ընդհանրապես: Այս առումով կարևորվում է խոսքը, որն էլ նախևառաջ հաղորդակցում ապահովող գլխավոր միջոցն է, այլ կերպ ասած՝ աշխատանքային գործիքը:

Վերջին շրջանում լեզվաբանության մեջ ավելի ու ավելի է մեծանում հետաքրքրությունը գիտական լեզվի՝ որպես գործառական հատուկ ոճի առանձնահատկությունների ուսումնասիրման նկատմամբ, ինչը առանձնապես պայմանավորված է գիտատեխնիկական առաջընթացի, հետևաբար նաև գիտական նոր, ինքնուրույն ուղղությունների զարգացմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բժշկությունը գիտության ամենաարագ աճող և զարգացող ճյուղերից մեկն է՝ բժշկագիտական խոսքի պարբերական կանոնակարգման և նորմավորման անհրաժեշտությունը դարձել է լեզվաբանության առաջնահերթ խնդիրներից մեկը:

Գիտական լեզվի համայնապատկերում լեզվաոճական բազմազանությամբ առանձնացող բժշկագիտական խոսքը հաղորդակցության մասնագիտացված ձև է, որն օգտագործվում է հիվանդությունների, դրանցից բխող իրավիճակների, բուժման ընթացակարգերի և առողջության տարբեր բնագավառների վերաբերյալ տեղեկատվություն փոխանցելու նպատակով: Այն բնութագրվում է մի շարք տարբերակիչ գծերով, որոնցում առանձնահատուկ ուշադրություն է գրավում բառապաշարը:

Հայտնի է, որ գիտական խոսքը առհասարակ հատուկ և համագործածական բառերի յուրահատուկ ամբողջություն է, որ գործում է լեզվական տարբեր ենթահամակարգերում¹: Համապատասխանաբար բժշկագիտական խոսքը՝ որպես գիտական լեզվի տարատեսակ, նույնպես ներառում է տարբեր բառաշերտեր, որոնք առանձնանում են հետևյալ հիմնական խմբերի՝

1) **ոչ տերմինաբանական բառապաշար** (գրական լեզվի համագործածական կամ միջոճական բառեր),

2) **գիտահանրամատչելի բառապաշար** (ընդհանրապես գիտական ոճին հատուկ բառեր և լեզվական կադապարներ),

3) **նեղ մասնագիտական բառապաշար**՝ տերմիններ²:

Քանի որ գործառական ոճերի հիմնական մասը միննույն գրական լեզվի կիրառական տարբերակներն են, ոճական տարբերություններով հանդերձ, դրանց միջև առկա են նաև էական ընդհանրություններ: Այս տեսանկյունից բնորոշվում են տարբեր ոճերում հավասարապես կիրառվող **համագործածական** կամ **միջոճական** բառերը, ինչպես օրինակ՝ *ընթացք, մաս, համակարգ, անխափան, խարկանք, կարգ, կմախք, մանրէ, ստեղծել, կարևոր, ժառանգել, ընձեռել, մեծ մասամբ*ն այլն, որոնք ցանկացած խոսքում (անկախ այդ խոսքի

¹ Աբրահամյան Ս., Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները, էջ 14:

² Гущина Л., «Особенности медицинского языка», журнал ГГМУ 2005, N 1:

գործառույթից) տեսակարար կշիռ կազմող հիմնական բառաշերտն են: Դրանք հավասարապես կիրառվում են բոլոր ոճերում. այլ կերպ ասած՝ առանց այդ միջոճական բառերի՝ մայրենի լեզվով հաղորդակցումն ապահովելը անհնար կլինի: Բերված բոլոր օրինակները առանձնացված են բժշկական նյութերից, սակայն դժվար չէ դրանց գործածությունը պատկերացնել նաև այլ ենթատեքստերում: Այս բառերի հետ աշխատանքում կարևորվում է բառիմաստը, ուղղագրությունը, ուղղախոսությունը, բառագործածական սխալների բացառումը, ինչպես նաև ոճական առումով՝ բառի ճիշտ կիրառությունը:

Առանձնացված երկրորդ խումբը, ինչպես նշեցինք, պայմանականորեն **«գիտահանրամատչելի բառապաշար»** կոչվող շերտն է: Անշուշտ լեզվում կան համապատասխան բառեր կամ բառակապակցություններ, որոնք հատուկ են գիտական ոճին ընդհանրապես և գործածվում են այդ ոճի տարբեր ենթաոճերում (գիտության տարբեր բնագավառներում): Դրանք մասնագիտական առումով ոչ շատ նեղ, բայց միևնույն ժամանակ որոշակի ուղղվածություն ունեցող բառերն են, ինչպես՝ *մեթոդ, տարր, կադասյար, ենթատեսակ, հղում, տեղեկույթ, կծկումներ, հյուսվածք, բաղադրություն, մազաձածկույթ, կծվածք, ածխաթթու գազ, գիտատեխնիկական առաջընթաց, դատաբժշկական փորձաքննություն, փորձագիտական հետազոտություն* և այլն: Բացի վերոնշյալներից՝ այս շարքին են պատկանում նաև մեկնական, ընդհանրացնող, նույնականացնող, դատողական, տրամաբանական և պատճառահետևանքային կապեր արտահայտող բառերը, լեզվական կադասյարները և բառագույգերը, ինչպես՝ *այսինքն, այսպիսով, համապատասխանաբար, դիցուք, օրինակ, բացի դրանից, ի տարբերություն, ըստ այդմ, մի կողմից..., մյուս կողմից, ոչ թե..., այլ, ոչ միայն..., այլև, եթե..., ապա, և՛..., և՛, ոչ..., ոչ և այլն*: Բերված օրինակների հետ աշխատանքում հատկորոշվում է վերջիններիս ստույգ տեղը նախադասության մեջ, ինչպես նաև կետադրությունը: Օրինակ՝ *Բարակ պատերով խորանիստ երակները չունեն սեփական ձև, այսինքն՝ տրանսմուրալ ճնշման իջեցման պայմաններում չեն պահպանում լայնական կլորավուն ձևը*: Կոլագենային թելիկները չեն մասնակցում **ոչ** հիմնական տոնուսի, **ոչ** էլ անթաշարժական ռեակցիաների ձևավորմանը: Վարիկոզ հիվանդության ժամանակ ստորին վերջույթների երակների մանրադիտակային հյուսվածաբանական քննությունը հայտնաբերում է **ոչ միայն** միջին, **այլև** ներքին թաղանթների այս կամ այն աստիճանի կազմալուծման երևույթներ³:

Վերջին խումբը՝ **նեղ մասնագիտական բառապաշարը**, թերևս մասնագիտական խոսքի քննության առումով ամենահետաքրքրականն է: Այն իր հերթին բաժանվում է մի քանի ենթաշերտերի, որոնցից յուրաքանչյուրը առանձին ուսումնասիրման կարիք ունի:

1) **Հունալատինական բուն տերմիններ**: Մրանք քանակական առումով ամենամեծ ենթախումբն են կազմում և օգտագործվում են անատոմիական կառուցվածքները,

³ Միրիջանյան Մ., Բարսեղյան Հ., Ստեփանյան Ս., Վիրաբուժություն, Երևան 2014, էջ 264-267:

Ֆիզիոլոգիական գործընթացները, հիվանդությունները, ախտանիշները, համախտանիշները, ախտորոշումները և բուժումները նկարագրելու համար: Ստանդարտացված տերմինաբանության օգտագործումը ապահովում է ասելիքի հստակությունը, ճշգրտությունը և հետևողականությունը բժշկական հաղորդակցության ընթացքում՝ նվազեցնելով սխալ մեկնաբանման հավանականությունը: Այս համատեքստում՝ լեզվի դասավանդման ծրագրում, նախևառաջ հատուկ ուշադրություն է դարձվում տերմինների՝ հայերեն համարժեքների ճանաչմանն ու կիրառմանը, դրանց տառադարձմանը, ինչպես նաև երբեմն խրթին թվացող հունալատինական տարբերակների ընկալմանը: Կարևորվում են տերմինների կառուցվածքային, տառադարձման առանձնահատկություններին, թարգմանությանն ու կապակցելիությանն առնչվող խնդիրները, որտեղ որպես առաջնահերթություն առանձնացվում են տերմինի՝ թարգմանված տարբերակի առջև դրված պահանջները, մասնավորապես՝ համապատասխանությունը լեզվի հնչյունական, քերականական և ոճական նորմերին, հակիրճությունն ու բարեհնչյունությունը, տերմինի համապատասխանությունը նրա կողմից արտացոլված իմաստին (համընդգրկունությունը): Օրինակ՝ թվարկված հատկանիշների առկայության տեսանկյունից հաջողված համարժեքներ կարելի է համարել *արթրիտ* տերմինի հայերեն *հողաբորբ* տարբերակը, *բլեֆարիտի* համարժեք *կոպաբորբ*, *տոնզիլիտ-նշիկաբորբ* բառազույգը և այլն: Մակայն երբեմն հունալատինական տերմինի հայերեն համարժեքը իմաստային և բառակազմական առումներով վիճահարույց է լինում, ինչը շփոթի պատճառ է դառնում. օրինակ՝ *խոլանգիտ* բառի համար ընտրված *լեղաբորբ* հայերեն եզրույթը: Բժշկական հանրագիտարաններում խոլանգիտը նկարագրվում է որպես լեղուղիների բորբոքում՝ լեղապարկից, աղիքներից, արյան անոթներից ավշային ուղիներով դրանց մեջ վարակի ներթափանցման պատճառով: Այնինչ ուսանողը, *լեղաբորբ* բառին հանդիպելով, տարակուսանքի մեջ է ընկնում՝ կարծելով, թե լեղին կարող է բորբոքվել: Նման դեպքում, կարծում ենք, նպատակահարմար է *լեղուղիների բորբոքում* տարբերակը կիրառել: Համընդգրկունության տեսանկյունից կարծում ենք անհաջող թարգմանություն է *ուրոլոգիա* տերմինի *միզաբանություն* հայերեն տարբերակը, քանի որ այն սահմանափակում է տվյալ մասնագիտության տիրույթը: Որոլոգիան սահմանվում է որպես բժշկության ոլորտ, որը հավասարապես զբաղվում է ոչ միայն արական և իգական սեռի ներկայացուցիչների միզուղիների հիվանդությունների ուսումնասիրությամբ և բուժմամբ, այլև տղամարդկանց վերարտադրողական համակարգի խնդիրներով: **Գինեկելոգ** բառի *կնաբույժ* կամ *կնախտաբան* հայերեն տարբերակները նույնպես անբարեհունչ են⁴: Մեկ այլ դեպքում *թրոմբ* հակիրճ և ընդգրկուն տերմինը թարգմանվել է իբրև *արենախիցք*⁵ կամ *արյունամակարդուկ*: Այստեղ նույնպես գործ ունենք բառի անբարեհնչյուն լինելու հատկանիշի հետ:

⁴ **Բարսեղյան Հովհ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, «Լույս» հրատ., Երևան, 1973, էջ 927, 223:

⁵ **Ղարիբյան Ա.**, Ռուս-հայերեն բառարան, 1977թ. էջ 1251:

2) **Կրճատումներ և հապավումներ:** Ինչպես գիտական այլ ճյուղերում, այնպես էլ բժշկագիտական ոլորտում արդյունավետ հաղորդակցությունը և փաստաթղթավորումը հեշտացնելու համար լայնորեն կիրառվում են կրճատումներ և հապավումներ բժշկական կազմակերպությունների, դեղերի անվանումների, լաբորատոր հետազոտությունների, բժշկական իրավիճակների և անատոմիական նկարագրությունների համար: Դրանք հաճախադեպ են մասնագիտական խոսքում և ապահովում են արագ և ստույգ հաղորդակցություն: Օրինակ՝ *ՄՈՒԿ* նշանակում է մանկական ուղեղային կաթված, *ՈւԱՀ*՝ ուղեղի անոթային հիվանդություն, *ԶԻԱՀ*՝ ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ, *ՄԻՀ*՝ սրտի իշեմիկ հիվանդություն, *ԷՍԳ*՝ էլեկտրասրտագրություն, *ԱՀԿ*՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն այլն: Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն հոլոված և անհնչված հապավումների ուղղագրությանը (գծիկով, անջատ և կցական բարդ բառերի ուղղագրության տեսանկյունից) այլև ուղղագրական առումով դժվարություն ներկայացնող վանկային հապավումներով բարդ բառերին, ինչպես օրինակ՝ *սանէպիդիայան, շտապօգնություն, բուժօգնություն* և այլն:

3) Բժշկական խոսքը ներառում է բազմաթիվ *անձնանուն* ախտանիշներ և համախտանիշներ, մեթոդներ և սարքավորումներ, որոնք կոչվում են այն անհատների անուններով, ովքեր հայտնաբերել են հիվանդությունը, մշակել են բուժման եղանակներ կամ զգալի ներդրում են ունեցել բժշկագիտության զարգացման գործում: Օրինակ՝ *Պարկինսոնի հիվանդությունը* կոչվում է դոկտոր Ջեյմս Պարկինսոնի անունով, իսկ *Հեյմլիխի մեթոդը* անվանակոչվել է դոկտոր Հենրի Հեյմլիխի անունով, նույնպես և *ռենտգենյան ճառագայթները, դալտոնիզմը, եփսոսիայան փողը, Ալցհայմերի հիվանդություն* և այլն: Չնայած սրանք կարող են օգտակար լինել հիվանդության կամ երևույթի պատմական ճանաչման տեսանկյունից, այնուամենայնիվ խառնաշփոթությունից խուսափելու համար միտում կա օգտագործել ավելի նկարագրական և ստանդարտացված բժշկական տերմիններ, քան անձնանուն նկարագրություններ: Այս խմբի բառերի հետ աշխատանքում հատկապես կարևորվում է բաղադրյալ հատուկ գոյականների և դրանցից կազմված բառերի ուղղագրությունը:

4) **Ախտորոշիչ ծածկագրեր:** Բժշկական խոսքում (հատկապես պաշտոնական փաստաթղթաշրջանառության մեջ) հաճախ օգտագործվում են ախտորոշիչ ծածկագրեր՝ հիվանդությունները և առողջական իրավիճակները դասակարգելու նպատակով: Լայնորեն կիրառվում է Հիվանդությունների միջազգային դասակարգման համակարգը (International Classification of Diseases - ICD), որը մշակվել է հիմնականում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից, ներդրվել է նաև Հայաստանի Հանրապետությունում և կիրառվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմված ձևաթղթերում: Այս ծածկագրերը հնարավորություն են տալիս ստանդարտացված մոտեցում ցուցաբերելու հիվանդությունների փաստաթղթավորման և հետազոտման հարցում՝ նպաստելով ճշգրիտ վիճակագրական վերլուծություններ, հետազոտություններ և ապահովագրական

հատուցումներ իրականացնելուն: Օրինակ՝ *H60.391՝ վարակիչ արտաքին ականջաբորբ (otitis), աջ ականջ, CPT 84443՝ վահանագեղձի խթանող հորմոն* և այլն:

Ընդհանուր առմամբ բժշկակագիտական խոսքի քննությանն անդրադառնալիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նասվերջինիս հոգեբանական կողմին, մասնավորապես՝ հայտնած տեղեկության թողած ազդեցությանն ու առհասարակ հիվանդի հետ շփման հոգեբանությանը: Բանն այն է, որ բժիշկները իրենց արհեստավարժությունն ընդգծելու նպատակով լայնորեն օգտագործում են հատուկ տերմիններից և արտահայտություններից կազմված մասնագիտական ժարգոն, ինչը կարող է անձանոթ լինել բուժառուին և խոչընդոտ ստեղծել հաղորդակցության ընթացքում: Օրինակ՝ «Այսօր հիվանդի որովայնը կտրվածք արեցինք 12:30-ի շրջանում» միտքը լսողներին անհարմար դրության մեջ էր գցել այն, որ այդ օրը դեռ ժամը 12:00 չկար: Հետևաբար հարց էր ծագել, թե այդ որ ժամանակով են հիվանդին կտրվածք արել: Հետագայում պարզվել էր, որ բժիշկների շրջանում կտրվածքների դիրքերը նշվում են ժամացույցի սլաքների դիրքերին համապատասխան:

Թեև բժշկական ժարգոնը թույլ է տալիս արդյունավետ հաղորդակցություն բուժաշխատողների շրջանակում և ծառայում է որպես բարդ բժշկական հասկացությունների հակիրճ փոխանցման միջոց, այնուամենայնիվ դրա օգտագործումը պետք է սահմանափակվի հիվանդների հետ շփվելիս՝ հիվանդի և բժշկի միջև արդյունավետ փոխըմբռնում ապահովելու նպատակով: Հոգեբանական տեսանկյունից այն կարող է անհանգստության և սթրեսի պատճառ դառնալ, քանի որ հիվանդները կարող են իրենց անպաշտպան զգալ հաղորդվող խրթին և անձանոթ խոսքի պատճառով: Ուստի բժշկական ոլորտի մասնագետները պետք է ձգտեն բացատրել տեղեկությունը հասանելի լեզվով՝ ուշադրություն դարձնելով նաև հաղորդվող ախտորոշման թողած հետևանքներին, քանի որ կարևոր հարց է նաև այն, թե ինչպես է մասնագետը հաղորդում ախտորոշումը: Ախտորոշման չափազանց անմիջական և սառը հայտարարությունը կարող է ցնցում առաջացնել, իսկ կարեկցող հաղորդակցությունը կարող է օգնել հիվանդին հաղթահարել հուզական բեռը: Խոսքը, որը կենտրոնացած է բուժման հնարավորությունների և հաջողությունների վրա, կարող է խրախուսել հիվանդին մասնակցել բուժման ծրագրին և հետևել առաջարկություններին:

Եզրափակելով նշենք, որ բժշկական խոսքը բնութագրվում է մայրենի լեզվով արդյունավետ հաղորդակցման, ստանդարտ և ոչ ստանդարտ իրավիճակներում որոշումներ կայացնելու և դրանք արտահայտելու հմտություններով, որն ուղեկցվում է նախ մասնագիտական գործունեությամբ, ապա նաև պատշաճ բարեվարքությամբ: Հաշվի առնելով խոսքային վերոնշյալ հանգամանքները՝ հնարավոր կլինի ապահովել արդյունավետ հաղորդակցում բուժառուների, առողջապահության ոլորտի այլ մասնագետների հետ, ինչը կնպաստի որակյալ բուժական օգնություն ստանալուն:

Օգտագործված գրականության ցանկ

- Ս. Աբրահամյան, Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները: Հովհ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1973թ.:
- Ա. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, 1977թ.:
- Ս. Միրիջանյան, Հ. Բարսեղյան, Ս. Ստեփանյան, Վիրաբուժություն, Երևան 2014թ.:
- Л. Гущина, «Особенности медицинского языка», журнал ГГМУ 2005, N 1.

РЕЗЮМЕ ОСОБЕННОСТИ МЕДИЦИНСКОЙ РЕЧИ Ашчян Татевик

В статье представлены особенности построения медицинской речи как специализированной формы общения. В центре внимания автора-словарный запас медицинского текста: рассматриваются основные аспекты медицинской лексики, а именно: 1) знаменательные и служебные слова общелитературного языка, 2) общенаучная лексика, 3) узкопрофессиональная, терминологическая лексика. Изучена медицинская терминология с точки зрения признания и применения армянских эквивалентов. Подчеркивается важность вопросов, связанных со структурными особенностями, транскрипцией и переводом терминов. Особое внимание уделено особенностям психологической стороны медико-научной речи.

Ключевые слова: коммуникативные навыки, профессиональная речь, узкопрофессиональная лексика, греко-латинские термины, стилистическое применение, общенаучная лексика, психологический аспект речи, научный язык, функциональный стиль речи, сокращения и аббревиатуры.

SUMMARY FEATURES OF MEDICAL SPEECH Ashchyan Tatevik

The article presents the features of construction of medical speech as a specialized form of communication. The author's observation is based on the vocabulary of the medical text with its main sub-layers: 1) significant and official words of the general literary language, 2) general scientific vocabulary, 3) highly professional, terminological vocabulary. Medical terminology is examined from the point of view of recognition and application of Armenian equivalents. Questions related to the structural, transliteration, translation and connectivity of terms are emphasized. Special attention is paid to the psychological manifestations of medical speech.

Key words: communication skills, professional speech, highly professional vocabulary, Greek-Latin terms, stylistic application, popular science vocabulary, psychological aspect of speech, scientific language, functional style, abbreviations and abbreviations.

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԸ

Ասոյան Թաթուլ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Գավառի պետական համալսարան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
asoyan.60@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-47

Բանալի բառեր. հոլով, բանավեճ, քերականություն, ժամանակակից հայերեն, հին հայերեն, վերլուծություն:

Արևելահայերենի հոլովի քերականական կարգի շուրջ բանավեճերը շարունակվում են արդեն մեկ դարից ավելի: Հոլովական ձևի և իմաստի, դրանց շարահյուսական հարաբերությունների հետ կապված հարցերը միանշանակ լուծումներ չեն ստացել և տարակարծությունների տեղիք են տվել: Առանց խորանալու հարցի պատմական արծարծումների մեջ՝ ուղղակի ձևակերպենք հիմնախնդիրը. ի վերջո, հայերենում քանի՞ հոլով կա՝ հի՞նգ, վե՞ց, յո՞թ: Այս հարցին պատասխանելու համար բազմաթիվ հոդվածներ, մենագրություններ, ուսումնասիրություններ են հրապարակվել, հրապարակվում են և կհրապարակվեն, եթե լեզուն ինքը հարցը չլուծի:

Բանավեճը սկիզբ է առնում այն ժամանակ, երբ 1906թ. Մ. Աբեղյանը հրատարակում է իր «Աշխարհաբարի քերականութիւն»-ը: Մինչ այդ հրապարակի վրա էր Մտ.Պալասանյանի «Քերականութիւն մայրենի լեզուի» դասագիրքը: Չի կարելի ասել, թե հոլովների շուրջ տարակարծությունները վերաբերում են միայն այս շրջանին: Դա վերաբերում է նաև գրաբարին և միջին հայերենին այն տարբերությամբ միայն, որ քննարկումները նման հրապարակային բնույթ չեն կրել, այլ արտացոլվել են գրաբարի քերականական կառուցվածքին նվիրված աշխատություններում: Ներկայացնենք մի փոքրիկ թվաբանություն: Գրաբարի հոլովների քանակը տատանվում է 5-10-ի միջակայքում: Այսպես, **5 հոլով** – Գր.Մագիստրոս Պահլավունի (հունարենի հետևությամբ), Ռիվոլա (հանում է կոչականը), **6 հոլով**-Սյունեցի, Ավետիքյան, Հ. Ավգերյան, Պետերման, Բագրատունի, Ս. Ղազարյան, Ա. Աբրահամյան և այլք (մոտ 11 լեզվաբան), **7 հոլով**-Մեյե, Ղափանցյան, Աճառյան(նաև՝ 6, առանց ներգոյականի), **8 հոլով**-Ոսկան Երևանցի (միակը), **9 հոլով**-Սալլանթյան (միակը), **10 հոլով**- Գալանոս, Հովհ. Հոլով, Շրյոդեր, Սեբաստացի, Դպիր, Չամչյան, Չալրիսյան, Պալասանյան և այլք: Միջին հայերենի պարագայում թվային այդ բազմազանությունը կարծես թե վերանում է և տատանվում է 6-7-ի սահմաններում¹:

¹Հաշվարկը կատարել ենք ըստ Ա.Աբաջյանի «Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ» աշխատության, Երևան, 2006:

Գիտության մեջ տեսական արժարժումները, տեսակետների բախումները, տարակարծությունները, մոտեցումների ու գնահատականների տարբերությունները անխուսափելի են, նույնիսկ անհրաժեշտություն և առաջընթացի նախապայման: Մակայն կա հարցի նաև երկրորդ՝ գործնական կողմը, որը շատ է կարևորվում հատկապես կրթական համակարգում: Այսօր գրաբարի հոլովների շուրջ բանավեճ չի ծավալվի, որովհետև դրա կարիքը չկա թեկուզ միայն այն առումով, որ նման ուսումնասիրությունները ավելի շատ կարող են արժևորվել հայոց լեզվի պատմության տեսակետից, և ապա ժամանակակից հայ լեզվաբանության մեջ գրաբարի հոլովների շուրջ միասնական կարծիք է ձևավորվել, այն է՝ գրաբարում կա 6 հոլով, մինչդեռ արդի հայերենի պարագայում այդ բանավիճային իրավիճակն ուղղակիորեն «ներխուժում է» հանրակրթություն: Այս ուսումնական տարում, օրինակ, 7-րդ դասարանի հայոց լեզվի դասընթացի համար առաջարկվեցին երկու դասագիրք՝ մեկում 7 հոլով, մյուսում՝ 5 հոլով: Հնարավոր է՝ տարբեր դպրոցներ ընտրեն տարբեր դասագրքեր: Մենք չենք ցանկանում՝ այն տպավորությունն ստեղծվի, թե ուզում ենք, որ գիտությունը, տվյալ դեպքում՝ լեզվաբանությունը, կախված լինի կրթական համակարգից, դառնա նրա սպասավորը: Ճիշտ հակառակը, գիտության նվաճումները պետք է արտացոլվեն, ներառվեն կրթական ոլորտ՝ հասարակական առաջընթացն ապահովելու նպատակով: Ինքնանպատակությունը ցանկացած դեպքում ինքնակործանում է: Բայց այդպե՞ս:

Հոլովական համակարգի շուրջ քննարկումներում շոշափվում է միայն 5 թե 7 հոլով հարցադրումը և չի դիտարկվում 6 հոլովի տեսությունը, որի հեղինակը Էդ.Աղայանն է, մինչդեռ Աղայանի տեսակետը լավ փաստարկված է և ընդունելի կարող է լինել երկու կողմերի համար էլ:

Ընդհանրապես ձևաբանական քերականական կարգն ունի երկու կողմ՝ քերականական իմաստ և ձև, որոնք միաձույլ են, պայմանավորված են միմյանցով և չեն կարող առանձին հանդես գալ: Այս քերականական կարգը իր գործառական դրսևորումներն ունի լեզվի շարահյուսական մակարդակում: Բանավեճի առաջին փուլում հոլովը դիտարկվում էր որպես ձևի և իմաստի հասարակ միասնություն, իսկ 1930-ական թվականներին՝ հակադրամիասնություն: «Աբեղյանի տեսության դեմ,-գրում է Հովհ.Բարսեղյանը,- մենք նոր փաստեր ու վերլուծություններ չենք գտնում: ...Միակ բանը, որ այս շրջանում Աբեղյանի այդ տեսության քննադատության մեջ ավելանում է, այդ այն է, որ սկսում են հոլովները համարել ոչ թե ձևի և բովանդակության հասարակ միասնության, այլ «հակադրամիասնություն»²: Մի ուրիշ հանգամանք ևս. հնի ու նորի գաղափարական պայքար, «մտքի ազատ թռիչքին խանգարող լեզվական ձևեր», որին «իմաստը՝ ֆունկցիան

² Բարսեղյան Հովհ., Մ.Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Երևան, 1967, էջ 35:

միշտ գոհ է գնում» (Գ. Սևակ): Այսպես «Մ.Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը հայտարարվում է ֆորմալիզմի տիպիկ օրինակ»³:

Ահա Էդ.Աղայանի՝ հոլովների մասին առաջին գնահատականը վերաբերում է 30-ականների հենց այս իրավիճակին: 1962 թ. լույս տեսած «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության 2-րդ գրքում, նկատի ունենալով Գ.Սևակի «Մերունդների կռիվը քերականության բնագավառում» հոդվածը⁴, նա բառացիորեն գրում է հետևյալը. «Այդ հոդվածի մեջ Սևակը ցույց տվեց Ղարիբյանի քերականության սկզբունքների ճշտությունը և մերկացրեց հակառակորդների ֆորմալիստական ուղղությունը:... Նրա այդ հոդվածը սպառիչ քննադատությունն էր ֆորմալիստական ուղղության , դրանով Սևակը վերջնականապես մերկացրեց ֆորմալիզմի տեսական հիմունքները»⁵: Կարելի է ենթադրել, որ Աղայանը այդ տեսակետն արտահայտելիս հակված է եղել յոթհոլովականության կողմը, և նրա քննադատության թիրախը հիմնականում Աբեղյանն էր, սակայն պետք է ասենք, որ Աղայանը բանավեճի 3-րդ փուլում վերանայեց իր տեսակետը հոլովական համակարգի վերաբերյալ՝ առաջադրելով նոր տեսություն, իսկ «Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը» աշխատության մեջ (1967) բոլորովին այլ մոտեցմամբ է գնահատում Աբեղյանի աշխատությունները՝ դրանք համարելով «կոթողային»:

Մինչ աշխատության լույս տեսնելը Էդ. Աղայանը հանդես է գալիս հոդվածով⁶, որը հետագայում տեղ գտավ նշված աշխատության մեջ: Այստեղ Աղայանն իր դիրքորոշումը բացատրում է նրանով, որ «շուրջ 50 տարի (աշխատության մեջ՝ 30 տարի-Թ. Ասոյան) մեր արդի լեզվին նվիրված քերականագիտական ուսումնասիրությունների մեջ և դասագրքերում միակ ճանաչված տեսությունն է եղել այն, որ ժամանակակից հայերենում կա յոթ հոլով», իսկ ինքը հետևել է այդ տեսությանը, նախ որ մինչև 1963 թ. չի զբաղվել ժամանակակից հայերենի հարցերով և ապա Մ. Աբեղյանի տեսության ներքին հակասությունների պատճառով⁷:

Իր դիրքորոշումը ներկայացնելուց առաջ Էդ. Աղայանը անդրադառնում է Աբեղյանի և նրա ընդդիմախոսների հիմնական դրույթներին: Աղայանը սկզբունքային սխալ է համարում այն, որ Աբեղյանը նույնացնում է հոլովական ձևերի նշանակությունները և նրանց շարահյուսական հարաբերություններն ու կիրառությունները (կախման հարաբերությունները): Այս մոտեցումը խզում է առաջացնում հոլովի ձևի և նրա նշանակության միջև, իսկ դա հանգեցնում է նրան, որ տարբերակվում են հոլովներ ըստ ձևի և հոլովներ ըստ նշանակության: Ըստ Աբեղյանի առաջ քաշած դրույթի՝ Աղայանը կատարում է հաշվարկ և հանգում է հետևյալ եզրակացությանը. «Այսպես, ահա, անջատելով հոլովական իմաստը

³ **Բարսեղյան Հովի.**, նշված աշխ., էջ 35-36:

⁴ **Սևակ Գ.**, Մերունդների կռիվը քերականության մեջ, «Կուլտուրական ֆրոնտ», Եր., 1934, հհ. 33, 34:

⁵ **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 2, Եր., 1962, էջ 340:

⁶ Տե՛ս Ժամանակակից հայերենի հոլովները, «Պատմաբանասիրական հանդես», 1966, թիվ 4:

⁷ Տե՛ս նշված հոդվածը և «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատությունը:

հոլովական ձևից և այն նույնացնելով շարահյուսական պաշտոնի հետ, Մ.Աբեղյանը ընդունում է 8 հոլով ըստ նշանակության, 5 հոլով ըստ ձևի»⁸:

Ներկայացնելով Գ.Սևակի վերլուծությունները՝ Աղայանը «անհանդուրժելիորեն թերի է» համարում նրա այն եզրակացությունը, թե «Յուրաքանչյուր հոլով անպայման պետք է ունենա յուր ձևը, բայց այս չի նշանակում, թե յուրաքանչյուր հոլով անպայման յուր **տարբեր** (Սևակի ընդգծումն է-Թ. Ա.) ձևը պետք է ունենա»⁹: Կատարելով մի շարք վերլուծություններ՝ Աղայանը ցույց է տալիս, որ «ա) ամեն մի ձևաբանական կարգ իր ձևը պետք է ունենա, բ) երկու կամ ավելի քերականական կարգեր կարող են միևնույն ձևով արտահայտվել, գ) եթե այդ կարգերը որևէ հորձառական, համակցելիության կամ այլ հատկանիշով շարահյուսական մակարդակում հակադրվում են իրար և դրանով բացահայտում իրենց իմաստային ինքնուրույնությունը, ապա դրանք տարբեր միավորներ՝ տարբեր բառաձևեր են, դ) եթե այդ կարգի տարբերակում չկա և տվյալ ձևը կարող է հավասարապես հանդես գալ այդ երկու կարգերի ոլորտներում, ապա ունենք մեկ միավոր, մեկ բառաձև,....հետևաբար չկա այդ կարգերի հակադրություն»¹⁰:

Աղայանի արած այս եզրակացություններն էլ դառնում են հիմք՝ հոլովների հարցը քննելու համար: Նա նախ քննում է ուղղականի և հայցականի հարցը: Ըստ Աբեղյանի՝ հայցական հոլով չկա, քանի որ այն առանձին ձև չունի, իսկ ըստ հակառակ կողմի՝ հայցական հոլով կա, և կարևոր չէ, որառանձին ձև չունի, բավական է և այն, որ նախադասության մեջ ենթական և ուղիղ խնդիրը հակադիր իմաստներ են արտահայտում: Աբեղյանի տեսությունը նա քննադատում է՝ ասելով, թե այն իր մեջ կրում է իր բացասումը՝ նկատի ունենալով Աբեղյանի հոլով ըստ ձևի և հոլով ըստ նշանակության տեսակետը: Գ.Սևակի և նրա հետևորդների պարագայում Աղայանը ճիշտ չի համարում հոլովի իմաստի և հոլովի շարահյուսական պաշտոնի(շարահյուսական հարաբերության) նույնացումը: Երևույթը քննելով նաև այլ լեզուների փաստերով՝ Աղայանը հանգում է հետևյալ եզրակացության.

«1 . Հայցական հոլովը ուղիղ խնդրի արտահայտման միակ հոլովը չէ:

2. Պարտադիր չէ , որ ուղիղ խնդիրը տվյալ լեզվում միայն մեկ հոլովով արտահայտվի, նա կարող է արտահայտվել նաև տարբեր հոլովներով:

3 . Պարտադիր չէ, որ ենթական և ուղիղ խնդիրը արտահայտվեն տարբեր հոլովներով , նրանք կարող են արտահայտվել նաև միևնույն հոլովով»¹¹:

Այս դրույթները ելակետ ընդունելով՝ Աղայանն անցնում է հայերենին՝ միանգամից նշելով, որ հայերենի ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացումը հեշտ է լուծվում: Նա ցույց է տալիս, որ մեր լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի է

⁸ **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 189:

⁹ Նշված աշխ., էջ 190:

¹⁰ Նշված աշխ., էջ 192-193:

¹¹ Նշված աշխ., էջ 197-198:

ունեցել ուղղականի և հայցականի լիակատար ձևական նույնացում, այն, ինչ տեղի է ունեցել այլ հնդեվրոպական լեզուներում: Արևելահայերենում հարցը քննելիս բերում է օրինակներ ուղիղ բառաձևերով, և դրանց պաշտոնները պայմանավորում է ստորոգյալի սեռով և իմաստով: Քննելով բազմաթիվ օրինակներ՝ նա ասում է, որ «գոյականի ուղիղ ձևը հանդես է գալիս բոլորովին տարբեր ոլորտներում, կատարում է նախադասության տարբեր անդամների պաշտոն և տարբեր հարաբերությունների մեջ մտնում նախադասության մյուս անդամների հետ»¹²: Ի վերջո, եզրակացնում է, որ մեր լեզվի օբյեկտիվ տվյալները ցույց են տալիս, որ **«մեր գրական լեզվում հայցական հոլով չկա»**:

Այնուհետև, անդրադառնալով տրական հոլովին, Աղայանը Աբեղյանի նման ընդունում է նրա գոյությունը հայերենում: Սակայն չի ընդունում սեռականը մերժելու արեղյանական մոտեցումը: Բանն այն է, որ Մ.Աբեղյանը անձնական և ցուցական դերանունների իմ, քո, մեր, ձեր, սրա դրա ձևերը չի ընդունում որպես սեռականի ձևեր, այլ անվանում է ստացական ածականներ: Մեր լեզվի պատմական զարգացումը հանգեցրեց նրան, որ անձնական դերանվան սեռականը և ստացական դերանունները նույնացան: Պատճառը ածականների և ստացականների՝ հոլովվելու հատկության կորուստն էր: Արևելահայերենում սեռական և տրական հոլովների առկայությունը ցույց տալու համար քննում է դրանց հոդավոր և անհոդավոր ձևերի՝ տարբեր հոլովներ լինելու հարցը գոյականների պարագայում: Սակայն իր միտքը հաստատելու համար գոյականներով բերված օրինակների գոյականները փոխարկում է համապատասխան անձնական դերանուններով: Եվ ստացվում է, որ հոդավոր ձևերին փոխարինում են ինձ, քեզ, նրան ձևերը, իսկ անհոդավոր ձևերին՝ իմ, քո, նրա: Շարունակելով վերլուծությունները՝ Աղայանը անում է հետևյալ եզրահանգումը. **«մեր գրական լեզուն ունի սեռական և տրական՝ իբրև առանձին հոլովներ:...**Այսպիսով, ունենք սեռական և տրական հոլովների միատեսակ վերջավորություն գոյականների համար. այն բանի հետևանքով, որ սեռականը հոդ չի ստանում, տրականի վրա որոշիչ հոդը հանդես է գալիս իբրև տարբերակիչ հատկանիշ»¹³:

Բնական է, որ հինգ հոլովի տեսության կողմնակիցները չէին ընդունի այս՝ հոդի հոլովակերտ արժեքը, մի բան, որ ժամանակին ընդունում էին նաև Գ.Սևակը և Ա.Ղարիբյանը: Աղայանն էլ այդ գաղափարն օգտագործել է իր տեսությունը հիմնավորելու համար: Ա.Աբաջյանը, քննելով Աղայանի դրույթը, գրում է, «որ դարձյալ և կրկին իրավացի էր Մ.Աբեղյանը, որ անվան հոլովական հարացույցը պետք է ներկայացնել առանց որոշիչ հոդի: Հոդը ունի ոչ թե հոլովակերտ արժեք, այլ գործառական դեր»¹⁴

Այնուամենայնիվ, նաև այսպես է Էդ. Աղայանը հիմնավորում ժամանակակից 1.ուղղական, 2.սեռական, 3.տրական, 4. բացառական, 5. գործիական, 6. ներգոյական:

¹² Նշված աշխ., էջ 203:

¹³ Նշված աշխ., էջ 218-219:

¹⁴ **Աբաջյան Ա.**, Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Երևան, 2006, էջ 334:

Այսպիսով,

1. Հայերենի հոլովական համակարգը միշտ էլ եղել է քերականների ուշադրության կենտրոնում գրաբարից սկսած և արժանացել է տարբեր գնահատականների:

2. Արևելահայերենի առաջին քերականության հեղինակ Ստ. Պալասանյանը չի խախտում ավանդույթը և աշխարհաբարի համար դնում է 7 հոլով:

3. Մ. Աբեղյանը առաջին հայերենագետն է, որը աշխարհաբարը քննում է ինքնին, գերծնախկին կաղապարներից: Մասնավորապես հանգամանորեն քննվում են աշխարհաբարի հոլովական և խոնարհման համակարգերը:

4. Հայերենի հոլովական համակարգի ներկայացման անսովորությունը պատճառ է դառնում բանավեճերի, որոնք շարունակվում են մինչ օրս: Հարցն առայժմ որոշակի լուծում չի ստացել:

5. 5 և 7 հոլովների տեսությունների առկայությամբ 1960-ական թվականներին Էդ. Աղայանը առաջարկում է 6 հոլովի իր տեսությունը, որն այսօր կարծես թե բանավեճերում չի շոշափվում, մինչդեռ այն գիտականորեն լավ փաստարկված է:

6. Այդ տեսությունների հիմքում ընկած է ձևի և բովանդակության (իմաստի) միասնության գաղափարը, որն հատուկ է քերականական կարգերին: Տարակարծություններն առաջանում են այն դրույթից, ըստ որի՝ այդ միասնության մեջ առաջնությունը տրվում է բովանդակությանը (իմաստին): Պետք է ասել, որ բովանդակության դերը շատ է բացարձակացվում:

7. Հինգ հոլովի տեսության հետևողները ընդունում են աբեղյանական բնորոշումը՝ հոլովը նախ և առաջ ձև է, իսկ յոթ հոլովի կողմնակիցները կարևորում են հոլովական նշանակությունը: Մի դեպքում հոլովը ձևաբանական կարգ է, մյուս դեպքում՝ շարահյուսական:

8. Հոդառությունը հոլովի որոշման հիմք չի կարելի համարել, սակայն չի կարելի անտեսել 8 դերանունների փաստը, ուստի այդպես կարելի է արդարացնել սեռականի և տրականի գոյությունը: Հայցականը կորցրել է իր սեփական ձևը:

9. Ուսուցողական նպատակով շատ հարմար է 5 հոլովի համակարգը, սակայն վերը նշված դերանունների պատճառով կարելի է ուուցանել 6 հոլովի համակարգով, չնայած անվանական հոլովման դեպքում սեռականի և տրականի տարբերակումը խնդիրներ կարող է առաջացնել:

Օգտագործված գրականության ցանկ

Աբաջյան Ա., Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Երևան, 2006:

Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967:

Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 2, Եր., 1962:

Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովները, «Պատմաբանասիրական հանդես», 1966, թիվ 4:

Բարսեղյան Հովհ., Մ.Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Երևան, 1967:

Սևակ Գ., Սերունդների կոիվը քերականության մեջ, «Կուլտուրական ֆրոնտ», Եր., 1934, հհ. 33, 34:

РЕЗЮМЕ
ЭДУАРД АГАЯН И ВОПРОСЫ СИСТЕМЫ
АРМЯНСКИХ ПАДЕЖЕЙ

Асоян Татул

Споры о количестве слогов в современном армянском языке начались в 1906 году, когда была опубликована работа М. Абеяна «Грамматика современного армянского языка». Дебаты были также в 1930-х и 1960-х годах и продолжаются по сей день. Эд.Агаян выдвинул отдельную теорию, провел оригинальные анализы, наблюдения, предложил новое решение проблемы. В статье рассматриваются вышеуказанные проблемы, связанные с новой системой армянского спряжения.

Ключевые слова: голов, дискуссия, грамматика, современный армянский язык, древний армянский язык, анализ.

SUMMARY
EDUARD AGHAYAN AND ARMENIAN CASE-FORMATION
SYSTEM QUESTIONS

AsoyanTatul

The debates about the number of syllables in modern Armenian began in 1906, when M. Abehyan's work "Modern Armenian Grammar" was published. There were also debates in the 1930s and 1960s and continue to this day. Ed.Aghayan came up with a separate theory, making original analyses, observations, proposing a new solution to the problem. The article examines the above problems related to the new Armenian conjugation system.

Key words: case, debate, grammar, modern Armenian, ancient Armenian, analysis.

ԴԱՍԱԳԻՐՔԸ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ասոյան Իրինա

Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի
հայոց լեզվի և գրականության մեթոդախորհրդի նախագահ
irina.asoyan@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-54

Բանալի բառեր. կրթություն, դասագիրք, ուսուցիչ, աշակերտ, խնդիրներ, քննարկում:

Դասագրքերը տարբեր պատճառներով միշտ էլ եղել են խնդրահարույց, սակայն վերջերս մեծ աղմուկ բարձրացրած նոր հրատարակված դպրոցական դասագրքերը, որոնք կազմված են հանրակրթության ոլորտում ներդրված նոր չափորոշիչներին համապատասխան, առաջացնում են խիստ մտահոգություններ նախևառաջ բովանդակային առումով, ապա հաշվի չեն առնվում դպրոցների ու աշակերտների տեխնիկական հնարավորությունները, առարկայի առանձնահատկությունները, ուսուցիչների աշխատանքային ծանրաբեռնվածության ծավալները, օրումեջ փոփոխվող ու նոր ցուցումները և այլն: Այսօրվա դասագրքաստեղծները, ըստ էության, հաշվի չեն առնում հայ մանկավարժության նախորդ փորձը, տեղի չեն ունենում բաց ու թափանցիկ հանրային քննարկումներ գիտության ներկայացուցիչների և ուսուցիչների մասնակցությամբ: Նշված խնդիրների քննարկումները սոցիալական հարթակներում դեռևս շարունակվում են, սակայն ԿԳՄՍ նախարարությունը ամուր կանգնած է իր դիրքերում:

Այսօր մեր զեկուցման շրջանակից դուրս է այդ վերոնշյալ հարցերի քննարկումը: Կապված մեր հայտնի հայագետ լեզվաբան Էդ. Աղայանի ծննդյան 110-ամյակի հետ՝ այստեղ կփորձենք ներկայացնել նրան որպես դպրոցական դասագրքի հեղինակ, որի՝ Հովհ. Բարսեղյանի հեղինակակցությամբ ստեղծված «Հայոց լեզու. դասագիրք 5-7 դասարանների համար» դասագիրքը երկար տարիներ գտնվել է գործածության մեջ և պարբերական մամուլում բազմաթիվ տարբեր՝ դրական թե բացասական, կարծիքներ են արտահայտվել այդ դասագրքի վերաբերյալ՝ այն կատարելագործված տեսնելու մտահոգությամբ:

Մեր ինքնուրույն և անկախ գոյությունն աչքի է ընկնում անկանխատեսելի փոփոխություններով: Շատ բան է փոխվել հասարակության գործունեության ոլորտներում, սակայն մեր ուշադրության առարկան այսօր դասագրքերն են: Ինչքան էլ գիտությունը զարգանա, դպրոցը տեխնիկական հագեցվածությամբ աչքի ընկնի, ուսուցիչները տիրապետեն բազմաթիվ և բազմապիսի մեթոդների, միևնույնն է, մեր խորին համոզմամբ ուսուցչի անդավաճան ու վստահելի գործընկերները կավիճը, գրատախտակն ու դասագրքերն են: Ինչքան կատարյալ ու անթերի լինեն դասագրքերը, այնքան կատարյալ,

անթերի ու արդյունավետ կլինի ուսուցչի աշխատանքը, հակառակ դեպքում ուսուցչի համար ստեղծվում է հավելյալ լարվածություն, ընդ որում դասագրքային թերությունները հաղթահարելուց հետո պետք է հաղթահարվի տպագիր խոսքի նկատմամբ աշակերտության (և ոչ միայն աշակերտության) հավատի պատենշը, որն ավելի դժվար է:

Հանրագիտարանային ճշմարտություն է, որ դասագիրքը պետք է ունենա հետևյալ հատկանիշները. ա/ շարադրանքի մատչելիություն, բ/ շարադրանքի համակարգայնություն, գ/ ձևակերպումների հստակություն, դ/ գիտականություն, ե/ քննություն անցած և արդարացված առաջնակարգ գիտնականների, մեթոդիստների և ուսուցիչների կողմից: Այսօրվա դասագրքերն արդյո՞ք ունեն այս հատկանիշները: Ցավոք, թերություններ կան, այն էլ բավականին, ոչ միայն այլ առարկաների դասագրքերում, այլ նաև մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասագրքերում:

Հապճեպ կազմված, փորձարկում հիմնավորապես չանցած, հանրորեն չընդունված նոր դասագրքերն այսօր բազմաթիվ քննարկումների, դժգոհությունների տեղիք են տվել, քանի որ բավականին շատ, անհարկի, խճողումներ առաջացնող կամ թերի մեկնաբանված դասանյութերն ու առաջադրանքները հոգնեցնում և շփոթեցնում են սովորողներին, սակայն դրանք ներկայացվում են որպես միջոց աշակերտների՝ գիտելիքները գործնականորեն կիրառելու կարողությունների զարգացման համար:

Ինչպես հայտնի է՝ լեզուն կուռ և զարգացող համակարգ է, այն պետք է ուսուցանել համակարգված: Ուստի, օրինակ, միջին դպրոցում հայոց լեզվի ուսուցումը «Մայրենի» դասագրքով, որը հայոց լեզվի և գրականության միասնականացված (ինտեգրված) դասընթաց է, իմ կարծիքով, չի նպաստում «Հնչյունաբանություն» և «Բառագիտություն» բաժինների լիովին ուսումնասիրմանը, մանավանդ որ հաջորդ դասարանում կտրուկ անցում է կատարվում «Ձևաբանություն» բաժնի՝ բավականին խրթին ուսումնասիրմանը՝ չհաշված QR ծածկագրերի հույսին մատնված դասանյութի կեսը (օրինակ՝ 7-րդ դասարանի հայոց լեզվի նոր դասագրքում դերանունների հոլովումը, և ոչ միայն, տրված է QR ծածկագրով): Իհարկե, դասագրքերը պետք է ստեղծվեն ժամանակի գիտատեխնիկական պահանջներին համապատասխան, բայց նախօրոք պետք է ապահովել բոլոր ռեսուրսներն ու պայմանները, որոնք պետք են դասագրքերի գործարկման համար:

Մեր բոլոր դիտարկումները, բնականաբար, մի հողվածի սահմաններում դժվար է ներկայացնել, սակայն քննության առարկան այսօր հայոց լեզվի մի դասագիրք է, որի հեղինակներն են Էդ. Աղայանը և Հովհ. Բարսեղյանը: Դասագրքի վերաբերյալ գրվել են բազմաթիվ կարծիքներ, քննադատություններ, սակայն այն դիմացել է ժամանակի փորձությանը, ունի վերը նշված բոլոր հատկանիշները, երեսուն տարի շարունակ կրթել է հազարավոր սերունդների՝ դառնալով հայոց լեզվի լավագույն ուղեցույցներից մեկը: Այդ դիտարկումները նպաստել են դասագրքի բյուրեղացմանը, բազմաթիվ անգամներ վերահրատարակվելուն, իր առաքելությանը ծառայելուն:

Երբ հետադարձ ուսումնասիրում ենք հայոց լեզվի այդ դասագրքի ստեղծման ընթացքը, տեսնում ենք քննարկումների (ի դեպ, դրանք տևել են մեկ տարուց ավելի) մի ամբողջ ինստիտուտ, որոնք կատարվել են ն՝ գիտնականների, ն՝ ուսուցիչների, ն՝ մեթոդիստների կողմից՝ քննադատությունը ծավալելով հիմնականում իրենց պրակտիկայի հիման վրա: Յուրաքանչյուր հողված օբյեկտիվորեն նշում է գրքի ն՝ առավելությունները, ն՝ թերությունները՝ նպատակ ունենալով օգնել դասագիրք գրողներին:

Հողվածագիրներն ամենից առաջ քննադատում են մանկավարժական- մեթոդական թերությունները: Օրինակ՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Ռ. Փիլիպոսյանը իր՝ «Բարեփոխությունից դպրոցը կշահի» հողվածում գրում է. «Դասագրքի հեղինակները ծրագրային նյութերի դասակարգման, պարզաբանման, ինչպես նաև վարժությունների առաջադրման հարցում հիմնականում պահպանել են քերականության ուսուցման նորմատիվ պահանջները, թեև չափից ավելի գիտական բնույթ են տվել նյութերին...»¹: Ուսուցիչ Վ. Աբրահամյանը գրում է . «Հայոց լեզվի նոր դասագիրքը, իրոք, լավ նվեր է մեր աշակերտության համար: Նախորդ դասագրքի համեմատությամբ այս գիրքն ունի դրական շատ կողմեր: Սակայն այն զերծ չէ նաև թերություններից..., և նրա առանձին բաժինները մատչելի չեն 11-14 տարեկան երեխաների համար...»²: «Չայնարկություն» թեման շատ է ծավալուն և ընդարձակ: Տրված մանրամասնություններն այդ դասարանների երեխաներին պետք չեն և ավելորդ ծանրաբեռնվածություն են ստեղծում...» (Դարբինյան Հ., Սարոյան Մ.)³:

Ռ. Փիլիպոսյանը մեթոդական թերությունների հետ մեկտեղ նշում է նաև լեզվական թերությունները. «Պետք է խոստովանել, հոլովների մասին պարզաբանումները շատ լավ են տրված, բայց նրանց կիրառության վերաբերյալ նախադասությունները չեն վերլուծված ըստ նախադասության անդամների...»⁴: Ուսուցիչ Ս. Խաչատրյանը ևս գրում է. «Պետք է ասել, որ 5-7-րդ դասարանների հայոց լեզվի նոր դասագիրքը զերծ չէ թերություններից: Ամենահիմնական և լուրջ թերություններից մեկն այն է, որ ողջ դասագրքում ոչ մի խոսք չկա հայերենի կետադրության մասին...»⁵:

Եվ այսպես, քննադատությունները հաջորդում են միմյանց: Ուսուցիչ-քննադատները դժգոհում են նաև սահմանումներից և կանոններից. Ա. Հարությունյանը գրում է. «Դասագրքում կան սահմանումներ, որոնք մշուշապատ են, բարդ, երեխայի համար գրեթե անհասկանալի»⁶:

¹ Փիլիպոսյան Ռ., Հայոցլեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 5, էջ 54-55:

² Աբրահամյան Վ., Հայոցլեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 4, էջ 54-55:

³ Դարբինյան Հ., Սարոյան Մ., Դիտողություններ հայոց լեզվի դասագրքի վերաբերյալ, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 2, էջ 52-54:

⁴ Փիլիպոսյան Ռ., Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 5, էջ 54-55:

⁵ Խաչատրյան Ս., Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 4, էջ 53:

⁶ Հարությունյան Ա., Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 1, էջ 46-48:

Քննադատվում է նաև դասագրքի լեզուն և ոճը, օրինակ, «գրքում շատ կան ծանրաբեռնող, խճողված, ճապաղ և ավելորդ արտահայտություններ...» (Դարբինյան Հ., Սարոյան Մ.)⁷ և այլն:

Ինչպես նշեցինք, քննարկումների ընթացքում նշվել են նաև դասագրքի առավելությունները մեթոդական-մանկավարժական, լեզվական, լեզվաոճական տեսանկյունից: Այսպես՝ «հայոց լեզվի նոր դասագիրքը 5-7-րդ դասարանների աշակերտների և մայրենի լեզվի ուսուցիչների համար լավ նվեր է: Գիտական բարեխղճությունն ու տքնաջան աշխատանքը հեղինակներին հնարավորություն են ընձեռել կատարելագործելու նյութի մատուցման մեթոդները, որոնք օգտակար են, ընդունելի և մանկավարժական տեսակետից նպատակահարմար: Լավ են մատուցվում գոյականների տեսակները (հատուկ, հասարակ), հնչյունափոխության, իսկական և անիսկական բարդությունների, դերանունների մի քանի տեսակների, մակբայի և այլ հասկացությունների սահմանումները...», «նոր դասագրքում, միանգամայն իրավացի կերպով, հեղինակները մտցրել են այնպիսի թեմաներ, որոնց անհրաժեշտությունը խիստ զգացվում էր, որոնք շատ բան են տալիս աշակերտությանը»,- գրում է Ա. Հարությունյանը⁸ և ապա ավելացնում, որ նոր դասագրքի արժանիքներից է նաև այն, որ յուրաքանչյուր բաժնից ու թեմայից հետո տրված են կրկնողական վարժությունների տեքստեր:

Կամ՝ ուսուցիչ Վ. Ավագյանն էլ գրում է. «Հենց սկզբից ասենք, որ Է. Աղայանի և Հովհ. Բարսեղյանի ստեղծած «Հայոց լեզու» դասագիրքը ընդհանրապես հաջողված է: Հատկապես դյուրընկալ են «Ուղղախոսություն», «Բառագիտություն», «Ածական», «Մակբայ», «Կապ», «Ձայնարկություն» բաժինները, ...տեղին են զետեղված «Պակասավոր բայերը», որոնք հիմնովին ու սպառիչ կերպով պարզաբանված են»⁹: «Դասագրքում տեղ գտած լեզվական նոր իրողություններն ու հասկացությունները ոչ թե ծանրաբեռնել, այլ նոր հնարավորություններ են տվել՝ մայրենի լեզվի ուսուցումը բարելավելու տեսակետից: Քերականական ամեն մի հասկացություն բացատրելիս հեղինակները առիթը բաց չեն թողել կանգ առնելու նաև դրանց գործնական, կիրառական կողմի վրա: Քերականական միևնույն նյութին վերաբերող մեկից ավելի վարժությունների հերթադրության մեջ պահպանված է հեշտից դժվարին անցնելու սկզբունքը»¹⁰:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է ենթադրել, որ ցանկացած նոր բան գիտության և կրթության ասպարեզում, հատկապես սեփական լեզվի դասագիրքը, որը լեզվապահպանության և լեզվափոխանցման մեծ խնդիր է լուծում, որով սերունդներ են

⁷ Դարբինյան Հ., Սարոյան Մ., Դիտողություններ հայոց լեզվի դասագրքի վերաբերյալ, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 2, էջ 52-54:

⁸ Հարությունյան Ա., Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 1, էջ 46-48:

⁹ Ավագյան Վ. Հանուն անթերի դասագրքի, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1966, թիվ 3, էջ 56-57:

¹⁰ Սարուխանյան Բ., Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1967, թիվ 1, էջ 51-53:

կրթվում, ազգային արժեքների հիմնաքարն է դրվում, ճաշակ է ձևավորվում, որը ազգապահպանման նեցուկ է դառնում, պետք է լուրջ քննություն անցնի, փորձարկվի, հիմնվի արտահայտած կարծիքների վրա և ունենա հետևյալ հատկանիշները.

1.Դպրոցական դասագրքի ծրագիրն ու նյութը պետք է հիմնվեն գիտության վերջին նորությունների վրա, սակայն մեթոդական- մանկավարժական տեսանկյունից պետք է հասկանալի և մատչելի լինեն սովորողին:

2.Ծրագրի և դասագրքի մեջ պետք է ներառվեն «գիտականորեն հիմնավորված, մանկավարժական հասարակայնության կողմից ընդունված և պրակտիկայում ստուգված գիտելիքներ»¹¹:

3.Դասագիրքը պետք է գրվի մատչելի, շարադրանքը պետք է լինի դյուրհասկանալի, սահմանումներն ու կանոնները՝ կարճ ու հեշտ ըմբռնելի:

4.Զննական- դիդակտիկայի տեսանկյունից դասանյութը, վարժությունները պետք է դասավորվեն հեշտից դեպի դժվարը, պարզից դեպի բարդը, քննականից դեպի գործնականը սկզբունքի հիման վրա:

5. Քայլելով արդի գիտատեխնիկական պահանջներին համապատասխան՝ պետք է խուսափել գերծանրաբեռնված գիտականությունից՝ հաշվի առնելով եղած ռեսուրսներն ու հնարավորությունները:

Օգտագործված գրականության ցանկ

Աբրահամյան Վ., Անհրաժեշտ է բարեփոխել, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1966, թիվ 4, էջ 54-55:

Ավագյան Վ. Հանուն անթերի դասագրքի, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1966, թիվ 3, էջ 56-57:

Դարբինյան Հ., Սարոյան Մ., Դիտողություններ հայոց լեզվի դասագրքի վերաբերյալ, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1966, թիվ 2, էջ 52-54:

Խաչատրյան Ս., Հայոց լեզվի նոր դասագրքի մասին, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1966, թիվ 4, էջ 53:

Հանուն կատարյալ դասագրքի, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1967, թիվ 2, էջ 60-63:

Հարությունյան Ա., Հայոց լեզվի նոր դասագիրքը, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1966, թիվ 1, էջ 46-48:

Սարուխանյան Բ., Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1967, թիվ 1, էջ 51-53:

Փիլիպոսյան Ռ., Բարեփոխությունից դպրոցը կշահի, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1966, թիվ 5, էջ 57-59:

¹¹Հանուն կատարյալ դասագրքի, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1967, թիվ 2, էջ 60-63:

РЕЗЮМЕ
УЧЕБНИК – ПРЕДПОСЫЛКА ЭФФЕКТИВНОГО ОБУЧЕНИЯ
Ирина Асоян

Очень важно в сфере общего образования иметь такие учебники, которые смогут помочь учителю и удовлетворить образовательные потребности ученика. В статье рассматриваются современные проблемы в области создания учебников, некоторые вопросы, связанные с деятельностью учителя. Тема статьи в основном относится к учебнику «Армянский язык» авторов Эд. Агаяна и Ов. Барсегиана. Показано, что обсуждение этого учебника проходило длительное время, в котором также участвовали многие преподаватели.

Ключевые слова: образование, учебник, учитель, ученик, проблемы, обсуждение.

SUMMARY
THE TEXTBOOK IS A PREREQUISITE FOR EFFECTIVE TEACHING
Irina Asoyan

It is very important in the field of general education to have such textbooks that can help the teacher and meet the educational requirements of the student. The article examines current problems in the field of textbook creation, some issues related to the teacher's activity. The topic of the article mainly concerns to the textbook "Armenian Language" authored by Ed. Aghayan and Hovh. Barseghyan. It is shown that the discussion of that textbook took place for a long time, in which many teachers also participated.

Key words: education, textbook, teacher, student, problems, discussion.

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԺԵՔ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒՄԸ ԼԵԶՎՈՒՄ

Բաղոյան Արփինե

ԳՊՀ հայոց լեզու և գրականություն բաժնի շրջանավարտ, մագիստրոս

badoyan.arpine@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-60

Արդի շրջանում լեզուն զարգանում և շարունակում է զարգանալ՝ պայմանավորված մի շարք գործոններով, որոնցից գլխավորը կարող ենք համարել հաղորդակցումը: Գիտական հաղորդակցումը խստիվ տարբերվում է սովորական, կենցաղային հաղորդակցումից, առաջին հերթին տերմինների գործածման մեծ քանակով: Հետևաբար, գիտության զարգացումը տրամաբանորեն հանգեցնում է վերջիններիս ավելացմանն ու տերմինաբանությանը վերաբերող բոլոր խնդիրների լուրջ վերանայման անհրաժեշտությանը: Լեզվի տերմինահամակարգի զարգացումը կամ նոր գիտաբառերով համալրումը պայմանավորված է նաև սլոյալ գիտական համակարգում ենթահամակարգերի առաջացմամբ, ձևավորմամբ կամ առանձնացմամբ, ինչի արդյունքում ստեղծվում են տերմիններ կամ էլ եղած տերմինները կիրառվում են նոր ենթահամակարգերում: Հոդվածում նպատակ ունենք քննել տերմիններին առանչվող որոշ հարցեր, ցույց տալ դրանց և վերջիններիս համարժեք ձևերի ճիշտ և սխալ գործածումը լեզվում:

Բանալի բառեր. տերմիններ, թարգմանություն, օտարամուտ բառեր, փոխառություններ, տերմինահամակարգ:

Մեր օրերում, գիտության զարգացմանը զուգահեռ, զարգանում, փոփոխման են ենթարկվում և ավելանում գիտությանը առնչվող բազմաթիվ տերմիններ, որոնք վերանայման կարիք են զգում:

Հատկապես վերանայման անհրաժեշտություն է զգացվում տերմինների թարգմանության հետ կապված որոշ հարցերում: «Ժամանակակից լեզվաբանության մեջ տերմինը ընկալվում է որպես լեզվի յուրահատուկ նշան, որն իր մեջ ներառում է իմացության երեք տեսակ՝ 1/ լեզվական, 2/ռացիոնալ և 3/բուն մասնագիտական: Եթե լեզվական իմաստն առօրյա ճանաչման արդյունք է, իսկ ռացիոնալը գիտական, հանրագիտարանային, ապա բուն մասնագիտական բաղադրիչը հիմնված է փորձի մասնագիտական ճանաչման վրա»¹:

Կազմելով անքակտելի միասնություն՝ երեք բաղադրիչներն էլ սերտորեն կապված են իրար հետ: Այստեղից հետևում է տերմինի կարևորագույն դերը ցանկացած մասնագիտա-

¹ Голованова Е.И., Конгнитивно-историческое терминоведение: предмет, проблематика, инструментарий. Вопросы когнитивной лингвистики, N2 (015), 2008, էջ 53.

կան ոլորտի ընկալման, զարգացման և փոփոխման գործընթացում: Այս ամենի հետ կապված՝ չափազանց կարևոր է դառնում ոչ միայն տերմինների ճիշտ գործածումը, այլև օտարալեզու տերմինների թարգմանելիության, ինչպես նաև թարգմանության խնդիրը: Նշված խնդիրը համընդհանուր է բոլոր ոլորտների և լեզուների համար և ունի երկարատև պատմություն: Այն բավականին խրթին է, բարդ լուծելի, քանի որ կապված է ոչ միայն ոլորտային յուրահատկությունների, այլև մի շարք հարակից և ոչ հարակից խնդիրների հետ:

Սովորաբար տերմիններն ունեն այլ լեզուներում իրենց համարժեքները, օրինակ՝ *թթվածին* – *oxygen* – *кислород*, *հնչույթ* – *phoneme* – *фонема*, ինչն ունի տարրական բացատրություն՝ տերմինների գերակշռող մեծամասնությունը մենիմաստ բառեր են:

Խնդիրը բարդանում է բազմիմաստ տերմինների դեպքում, երբ գիտության տարբեր ոլորտներում դրանք ունեն տարբեր համարժեքներ, օրինակ՝ *translator* – *թարգմանիչ և translator* – *փոխակերպիչ (преобразователь)*: Այսպիսի դեպքերում թարգմանիչը հանդիպում է մի շարք դժվարությունների: Հետևաբար նա պետք է ունենա ոչ միայն մեկ, այլ մի քանի հարակից և նույնիսկ ոչ հարակից ոլորտների գիտելիք, քանի որ տերմինի թարգմանությունը ամեն անգամ կախված է կոնկրետ համատեքստից, իրադրությունից:

«Ըստ Ա. Օ. Իվանովի՝ տերմինները կազմում են անհամարժեք բառապաշարի մաս, իսկ նրանց թարգմանությունը՝ անհամարժեք բառապաշարի ամենախնդրահարույց շերտ: Եթե տերմինը նշանակում է իրակություն, որը բացակայում է երկրորդ լեզվում կամ պարունակում է դրանում գոյություն չունեցող հավելաիմաստ, ապա թարգմանիչը պետք է դժվար որոշում կայացնի՝ օգտագործել թարգմանական հնարներից մեկը տերմինի իմաստը ճշգրիտ փոխանցելու համար (նկարագրական թարգմանություն, տառադարձություն, հնչյունադարձություն, բառապատճենում, մոտավոր թարգմանություն) կամ փոխառնի այն»²:

Տերմինները քննելիս՝ պետք է հաշվի առնել նաև, որ «մեր հասարակարգում ազգային լեզուները փոխադարձաբար օժանդակում և ազատորեն հարստացնում են միմյանց, որ հայերենի բառային կազմի հարստանալու և բազմակողմանի դառնալու միջոցներից մեկն էլ նոր փոխառություններն են»³: Այս համատեքստում ևս կարելի է քննության ենթարկել տերմիններ, որոնք հայերենում ունեն համարժեք ձևեր, սակայն, մեծամասամբ կամ զուգահեռ, գործածվում են փոխառյալ ձևերով:

Փոխառությունները փոխատու լեզվից փոխառու լեզվին անցած օտար բառերն են. դրանք իրենց համարժեքները չունեն փոխառու լեզվում, բացատրվում են այդ լեզվով, մեր դեպքում՝ հայերենով, ինչպես՝ *գոմբի- կենդանի էակ, որն ամբողջությամբ կորցրել է*

² Աբրահամյան Կ., Տերմինաբանության արդի խնդիրների շուրջ, Երևան, 2020, էջ 20:
<https://aspu.am/website/images/website/lezvabanakan.pdf>

³ Աղայան Էդ., Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին, էջ 85:
https://arar.sci.am/Content/34222/file_0.pdf

ինքնատիրապետումը կամ լիովին ղեկավարվում է այլ անձանց թելադրանքով, պոլիգրաֆիա - տեխնիկայի ճյուղ, որն ընդգրկում է տպագիր արտադրության և տպագրական գործի բոլոր ոլորտները, վայրեր - համակարգչի և բջջային հեռախոսների համար նախատեսված հատուկ ծրագիր անվճար զանգի, տեսազանգի, հաղորդագրությունների համար և այլն:

Օտարաբանությունները, այսինքն՝ այն օտար բառերը, որոնք փոխառու լեզվում ունեն համարժեքներ, անհարկի փոխառություններ են, ինչպես՝ *տատու(աժ) - դաջվածք, սինդրոմ – համախտանիշ, ռեյտինգ – վարկանիշ, սայթ – կայք* և այլն:

Այլ օրինակ է *կոլաժ* օտար բառը, որը նշանակում է տեխնիկական հնարք կերպարվեստում. հիմնաշերտի վրա տարբեր գույն և ֆակտուրա ունեցող նյութեր փակցնելը, ունի հայերեն տարբերակներ՝ *կցոնք, կցապատկեր, կցակերտվածք*, որոնք, սակայն, գործածական չեն:

Այսպիսով՝ տերմինաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տերմինների թարգմանության, առավել ևս փոխառման վերաբերյալ անհրաժեշտ է ցուցաբերել կշռադատված և տարբերակված մոտեցում, որի հիմքում պետք է լինեն մի շարք գործոններ, անհրաժեշտ է մշակել հստակ սկզբունքներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի ձևավորել տերմինաբանության թարգմանության յուրահատուկ համակարգ նախ լեզվաբանության, հետագայում այլ ոլորտների համար, և գլխավորը համարել հետևյալը՝ հայերենի բառապաշարի հարստացման աղբյուրը հիմնականում համարել ժամանակակից հայերենի բառային հիմնական ֆոնդը և բառային կազմը:

Գրականության ցանկ

1. Աբրահամյան Կ., «Տերմինաբանության արդի խնդիրների շուրջ», Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, Երևան, 2020:
2. Աղայան Էդ., «Տերմինաբանության մի քանին խնդիրների մասին», Երևան, 1978:
3. Ավագյան Ա., «Տեքստաբանական տերմիններ. Նորաստեղծ ձևեր և հավելյալ տարբերակներ», Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա, Երևան, 2020:
4. Ավետիսյան Յ., «Փոխառությունները որպես հայոց լեզվի բառային կազմի հարստացման միջոց», ՎԷԻ համահայկական հանդես, թիվ 1 (73), հունվար-մարտ, 2021:
5. Голованова Е.И., Когнитивно-историческое терминоведение: предмет, проблематика, инструментарий. Вопросы когнитивной лингвистики, N2 (015), 2008.
6. <https://vemjournal.org/wp-content/uploads/2021/04/06-%D4%BC%D5%A5%D5%A6%D5%BE%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-2021-1.pdf>
7. <https://aspu.am/website/images/website/lezvabanakan.pdf>
8. https://arar.sci.am/Content/34222/file_0.pdf

РЕЗЮМЕ
ИСПОЛЬЗОВАНИЕ ТЕРМИНОВ И ЭКВИВАЛЕНТНЫХ ФОРМ В ЯЗЫКЕ
Арпине Бадоян

В современное время язык развивается и продолжает развиваться благодаря ряду факторов, главным из которых можно считать общение. Научное общение сильно отличается от обычного, повседневного общения, прежде всего, большим количеством используемых терминов. Поэтому развитие науки логически приводит к дополнению последней и необходимости серьезного пересмотра всех вопросов, связанных с терминологией. Развитие терминосистемы языка или добавление новых научных слов происходит также за счет возникновения, формирования или выделения подсистем в данной научной системе, в результате чего создаются термины или существующие термины используются в новых подсистемах. . В статье мы стремимся рассмотреть некоторые вопросы, связанные с терминами, показать правильное и неправильное употребление их и эквивалентных им форм в языке.

Ключевые слова термины, перевод, иностранные слова, заимствования, терминосистема.

SUMMARY
USE OF TERMS AND EQUIVALENT FORMS IN LANGUAGE
Arpine Badoyan

In modern times, language develops and continues to develop due to a number of factors, the main of which we can consider communication. Scientific communication differs strongly from ordinary, everyday communication, primarily in the large number of terms used. Therefore, the development of science logically leads to the addition of the latter and the need for a serious revision of all issues related to terminology. The development of the term system of the language or the addition of new scientific words is also due to the emergence, formation or separation of subsystems in the given scientific system, as a result of which terms are created or existing terms are used in new subsystems. In the article, we aim to examine some issues related to the terms, to show the correct and incorrect use of them and their equivalent forms in the language.

Key words: terms, translation, foreign words, borrowings, term system.

ԷԴ. ԱՂԱՅԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԱՄՄԱՆՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Ջեմմա Բառնասյան

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ գիտաշխատող, դոցենտ
barnasyanjemma@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-64

Բանալի բառեր. ստուգաբանություն, տարի, բառիմաստ, կովկասյան լեզուներ, բարբառ, փոխառություն, լույս և խավար:

Հայոց տոմարը հնագույն ժամանակներից է գալիս: Հայկական օրացույցն իրենից ներկայացնում է երկարատև ժամանակահատվածների հաշվարկի համակարգ, որի հիմքում ընկած են երկնային լուսատուների շարժումը, բնության մեջ պարբերաբար կրկնվող երևույթները: Լույսի և խավարի (ցերեկվա և գիշերվա), տարվա եղանակների հերթափոխության և լուսնի փուլերի փոփոխության հիման վրա էլ սահմանվել են ժամանակի միավորները:

Պատմաբանների ու տոմարագետների ունեցած տեղեկությունները հայկական տոմարի ծագման շրջանի մասին կցկտուր են, քանի որ քրիստոնեության ընդունման շրջանում ամբողջովին ոչնչացվել են մեհենական արձանագրությունները, իսկ միջնադարյան մատյաններից այդ մասին հատուկենտ վկայություններ միայն կարելի է քաղել:

Հնագույն շրջանում հայոց տոմար ունենալու մասին վկայել է Անանիա Շիրակացին իր «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության մեջ: Հայոց տոմարի և հատկապես ամսանունների հնության վերաբերյալ Հովհաննես Սարկավազն իր «Մեկնութիւն տոմարիս հայկազնէայ» աշխատության մեջ այն միտքն է հայտնում, որ հայոց ամիսների անունները գոյություն են ունեցել նույնիսկ Մովսեսի ժամանակներից էլ առաջ և դրանք, ըստ ավանդության, Հայկի զավակների անուններն էին. «Հայկն առաջին Նահապետն Հայոց, զամիսքդ կարգեաց և զանուանս ուստերաց և դստերաց իւրոց ամտոցդ կոչեաց»: Ըստ ավանդության, որի մասին գրում է Ղևոնդ Ալիշանը, հայոց բուն տոմարն սկսվում է Հայկ Նահապետի՝ Բելին հաղթելու օրից՝ Քրիստոսից 2492 տարի առաջ: Հայկ նախահոր անվան հետ կապված առասպելական թվականն էլ ընդունված է կոչել «Հայկայ թուական»: Հայոց հին շարժական տոմարի տարին ունեցել է 12 ամիս՝ 30-ական օրով և 13-րդ լրացուցիչ ամիս, որ կոչվել է Ավելեաց՝ 5 օրով:

Հայոց հին ամսանունները՝ *Նալասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկի, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից* և *Ավելեաց*, բանագիտական վեճերի առարկա են եղել: Հայոց ամսանունների գիտական ստուգաբանությամբ զբաղվել են Հ.Աճառյանը,

Ստ.Մալխասյանցը, Էդ.Աղայանը, Լ.Հովհաննիսյանը, որոնց հայտնած տեսակետները որոշ դեպքերում համընկնում են, իսկ մի քանի ամսանունների ծագման հարցում առկա են տարակարծություններ: Հարցի քննությանն անդրադառնում ենք այն նկատառումով, որ այդ ստուգաբանությունների հավաստիության հարցում կողմնորոշվելիս բերված լեզվական փաստերին կարող ենք ավելացնել կամ հակադրել մեր ձեռքի տակ եղած բարբառային տվյալները: Իզուր չէ, որ նշանավոր գիտնական Էդ.Աղայանը հայոց ամսանունները ստուգաբանելիս աղբյուրագիտական արժեք է վերագրում հայերենի բարբառների մատուցած փաստերին:

Մի հարցում բոլոր ուսումնասիրողներն էլ համակարծիք են, որ հայոց ամսանունները հիմնականում իրանական փոխառություններ են: Կասկած չի հարուցում հայոց հին տոմարի առաջին՝ *Նավասարդ* ամսանունը, որի երկու բաղադրիչներն էլ իրանական են՝ *նաւ*(նոր) և *սարդ* (տարի)կազմությամբ: Անշարժ տոմարով նրա սկիզբը համընկնում է օգոստոսի 11-ին: Նոր տարին նշանավորվել է մեծաշուք տոնախմբություններով, նավասարդյան խաղերով, որոնց մասին տեղեկություններ կան մատենագրություններում:

Նավասարդ ամսանվան ծագման մասին Էդ. Աղայանը կարծիք է հայտնում, թե դա նախապես ամսանուն չի եղել, այլ իր արտահայտած բառիմաստի շնորհիվ կարողացել է դուրս մղել տարվա առաջին ամսանունը և զբաղեցնել նրա տեղը՝ մատնացուցելով նոր տարվա սկիզբը:

Հայկական տոմարի բոլոր ուսումնասիրողներն էլ համակարծիք են այն հարցում, որ ամսանունները հիմնականում սեռական հոլովաձևով են հանդես գալիս, ինչն առկա է նաև երկրորդ և երրորդ՝ *Հոռի* և *Սահմի* ամսանունների պարագայում: Սակայն լեզվաբանները հակադրվում են հատկապես այս ամսանունների ստուգաբանության հարցում: Հ.Աճառյանն իր Արմատական բառարանի համապատասխան բառահոդվածի դիմաց գրում է. «*Հոռի* ամսանունն առնված է իբրև *երկրորդ ամիս*, ինչպես *Սահմի՝ երրորդ ամիս՝* կովկասյան երկու և երեք բառերից»¹:

Այս ստուգաբանությունը մերժել է Ստ.Մալխասյանց ² և հայերենի համար միանգամայն անընդունելի է համարել *օրի* (երկու) և *սամի* (երեք) թվերի փոխառությունն այն դեպքում, երբ հայերենում հնուց ի վեր եղել են այդ թվերը: Այլ խոսքով՝ տրամաբանական չէ այդ թվականներն ունենալու պարագայում փոխառություն կատարել այլ լեզուներից: Իսկ իբրև պատրաստի ամսանուն չէին կարող վերցվել այն պարզ պատճառով, որ կովկասյան լեզուներում այդպիսի ամսանուններ չկան: Իր ասածն ապացուցելու համար Մալխասյանցը կարևորում է նաև ամսանունների՝ սեռական հոլովաձև ունենալու հանգամանքը, իսկ *օրի*, *սամի* թվականները ուղղական հոլովով են (օր՝ վրացերեն էրթի, օրի, սամի): Հակադրվելով Աճառյանին՝ Մալխասյանցը առաջ է քաշում մի

¹ Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, հ.3, էջ 114-115 :

² Տե՛ս **Մալխասյանց Ստ.**, Հայերենի բացատրական բառարան, հ.4, Ե., 1945, էջ 63, 176:

վարկած, թե **հոռին** հայերեն **ուռ** արմատից է (ուռի, որթատունկի ամիս) և *սահմի*-ն էլ (ի հոլովակազմիչն անջատելով) *սահմ* բառն է և կապվում է «սերմ, սաղմ, տոհմ» իմաստների հետ:

Այս երկու ամսանունների ծագման հարցում հակադրվելով և՛ Աճառյանին, և՛ Մալխասյանցին՝ Էդ. Աղայանը գրում է. «Մենք ընդունելի չենք համարում *հոռին ուռ*-ի հետ, իսկ *սահմի*-ն սերմ, սաղմ, տոհմ բառերի հետ կապելը: Արդի բառարաններում, իհարկե, գոյություն ունի *ուռաբառի հոռ* ձևը, բայց հենց դա էլ բացառում է մ.թ.ա. 5-րդ դարում այդ ձևի գոյությունը, որովհետև *հոռ* ձևն է, անշուշտ, առաջացել *ուռ*-ից և ոչ թե հակառակը»: Ապա անդրադառնալով Մալխասյանցի կողմից *սահմի* ձևը *սաղմ* բառից բխեցնելուն՝ Աղայանը դարձյալ անընդունելի է համարում նման ստուգաբանությունը, քանզի բնիկ հայերեն արմատների բառամիջում կամ բառավերջում *հմ* հնչյունակապակցություն չի լինում, որը, սակայն, սովորական է իրանական փոխառություններում: Էդ. Աղայանը գտնում է, որ սեռական հոլովաձևով հանդես եկել *Սահմի* ամսանվան արմատը *սահմ*-ն է, որ գործառում է Մեղրիի, Գորիսի, Կապանի, Ղարաբաղի բարբառներում և ունի «վախ, երկյուղ» իմաստը: Իր ասածը հաստատելու համար բերում է Մեղրիի բարբառում առկա օրինակներ.

Մին սահմը բէն ա (մի սարսափելի բան է):

Սահմը նուս ի (վախը գալիս է, վախենում է)³:

Կան օրինակներ՝ Վանի բարբառում *սահմ* բառի գործառույթը վկայող, ինչպես՝

Քյէ կը պախեմ սահում-Էրէրում,

Չում կյա լիսին առավուտուն:

(Քեզ կպահեմ ահ ու սարսափի մեջ մինչև առավոտ):

Էդ. Աղայանը առաջ է քաշում *Սահմի* ամսանվան առաջացման մասին իր վարկածը, թե *սահմ* (վախ) արմատը հին իրանական փոխառություն է: Իսկ թե ինչպես է «ահ», «վախ» իմաստով բառը դարձել ամսանուն, գիտնականը հետաքրքիր բացատրություն է տալիս: Պարզվում է, որ հույները Մարս մոլորակի երկու արբանյակներին տվել են *Տոբուս* (ահ) և *Դեյմուս* (սարսափ) անունները: Համարժեք անուններ են ստացել դրանք նաև հայերիս մոտ: Այդ սարսափագրու արբանյակները լավ են երևում սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին, որոնք էլ անվանվել են այդ արբանյակների անուններով՝ *Հոռի* և *Սահմի*⁴:

Էդ. Աղայանը *Տրէ* ամսանվան ստուգաբանության հարցում նույնպես հակադրվում է Հ.Աճառյանին: Թեև բոլոր հայագետներն էլ այս ամսանունը կապում են Տիր աստծո անվան հետ, սակայն այն իրանական համարելը, ըստ Աղայանի, անիմաստ է, քանզի բնիկ հայկական բառ է և բխում է հնդեվրոպական *dei արմատի *diur-dir ձևերից (առաջինից՝ *Տիր*, երկրորդից՝ *Տիր*): Այն սկզբնապես նշանակել է ընդհանրապես աստված (ինչպես այլ հնդեվրոպական լեզուներում), իսկ հետագայում դարձել է միայն գիտության ու

³ Տե՛ս Աղայան Է., Հին հայկական ամսանունները և օրանունները, ԲԵՀ., հ. 2, Ե., 1984, էջ 63:

⁴ Տե՛ս Աղայան Է., Հին հայկական ամսանունները և օրանունները, ԲԵՀ., հ. 2, Ե., 1984, էջ 65:

ճարտարապետության աստված: Ըստ Ադայանի՝ հնդեվրոպական նախալեզվից սերող ձևը իրանական փոխառություն համարելը տրամաբանական չէ: Հ. Աճառյանը *Տրէ* ամսանվան բառավերջի *է*-ն դիտում է իրանական մի գավառականի ուղղական հոլովի վերջավորություն, իսկ Ադայանը տալիս է բառի նոր մեկնություն. այդ *է*-ն համարում է հին հայերենի *է* հոլովակազմիչով սեռական հոլովաձև: Այսինքն՝ *Տրէ* ամսանունը հայերեն է, և այն փոխառություն համարելը «նախաշարմունք է»՝ ըստ Էդ. Ադայանի: Այդ հոլովակազմիչն առկա է նաև Մշո բարբառում՝ Մըռդէ Մուշո, Մըլկէ ախճիգ, Գըրկէ թօռ (Մուրադի որդի Մուշո, Մելքոնի աղջիկ, Գրիգորի թոռ) և այլն:

Քաղոց ամսանունը, որ Հ.Աճառյանը ստուգաբանել է՝ կապելով *քաղ* «արու այծ» բառի հետ և բացատրել որպես «քաղերի ամիս», այսինքն՝ արու այծերն էգերի հոտին խառնելու ամիս, Էդ. Ադայանը միանգամայն ընդունելի է համարում այդ ստուգաբանությունը:

Ժողովրդական բանավեպտում հայոց հնագույն ամսանունները գտնելու նպատակով մեր փնտրտուքի արդյունքում մի հետաքրքիր հիշատակություն ենք գտել ներքին Բասենի բանահյուսության մեջ: Ժողովրդական պարերգերից մեկում, ուր հիշատակվում են Բասենի գյուղերի անունները, գյուղին ու գյուղացիներին բնորոշ գծերն ու հատկությունները, Արտոս գյուղի մասին ասվում է.

Արտոս՝ *քաղօցին*վառեն կը բարդօց:

Բասենցի ծերունագարդ բարբառախոսը թյուրըմբռնողությամբ *քաղօց* ձևին վերագրում էր «հացքաղի ամիս» իմաստը, մինչ իրականում խոսքը վերաբերում է *դեկտեմբեր* ամսվան: Հակված ենք կարծելու, թե դա հին հայկական *քաղոց* ամսանվան հիշատակությունն է, թեև բարբառը կրողներն այդ չեն գիտակցում:

Արսոց ամսանունը Աճառյանն ու Մալխասյանցը չեն ստուգաբանել, բայց բերել են դեռ միջնադարում Վանականի և Գրիգոր Տաթևացու ներկայացրած ժողովրդական ստուգաբանությունը, որով այս ամսանունը բացատրվում է իբրև *այրերի, տղամարդկանց* ամիս. «*Եւ արանց ի յունել ձեան զլերնիս և զբլուրս, ասեն՝ արանց է այս ճանապարհ և ոչ կանանց*»:

Էդ.Ադայանը հնագույն ամսանունները ստուգաբանելիս *Արսոց-ըայր* բառի *արք* հոգնակիի սեռական հոլովաձևն է համարում՝ *արք>արսոց* և ավելացնում, որ ամսանվան մեջ չպետք է «տղամարդ» իմաստը տեսնել, այլ առհասարակ՝ «արու»: Ըստ նրա՝ այս ամսանունը նույնն է, ինչ նախորդը՝ *Քաղոց*-ը: Այսպիսով՝ այծերի և ոչխարների խառնքի համար ունեցել ենք երկու ամիս՝ *Քաղոց* և *Արսոց*:

Ամսանունների սեռականաձև լինելու հանգամանքը շատ դեպքերում բանալի է դառնում դրանք ստուգաբանելիս: Նույնիսկ այնպիսի բացահայտ փոխառյալ ձևեր, ինչպես *Հրոտից, Մարգաց* ամսանունները, վաղնջական ժամանակներից դիտվել են իբրև հայերեն բառեր: Հայերենի իրանական փոխառություններին նվիրված իր աշխատության մեջ ճանաչված լեզվաբան Լ. Հովհաննիսյանը գտնում է, որ դրանք պետք չէ իրանական փոխառությունների շարքում դասել, որովհետև «յուրացնելով *մարգ* (մարգագետին) բառը և ընդունելով որպես սեփական, հայերենը կերտել է նոր բառ, նոր ամսանուն, որն այդ ձևով

չկա իրանական լեզուներում»⁵: Եթե էդ. Աղայանը *Նավասարդ, Մահմի, Մեհեկան, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից* ամսանունները համարել է իրանական, ապա Լ. Հովհաննիսյանը *Մարգաց* և *Հրոտից* բառանունները հայակազմություններ է համարում և չի ընդգրկում իրանական փոխառությունների շարքում: Բոլոր ուսումնասիրողներն ընդգծում են ամսանուններում առկա արմատների արտահայտած բառիմաստի և տարվա այդ շրջանին հատուկ երևույթների միջև եղած իմաստային համապատասխանությունը: Այսպես՝ *Մարգաց*-ն ունի «մարգագետինը հնձելու ժամանակ» կամ «հնձի ժամանակ» իմաստը: *Հրոտից*-ը գուգորդվում է *հուր* իմաստի հետ, քանզի այն համապատասխանում է տարվա ամենաշոգ ամիսներից մեկին: *Ահեկան* ամսանունը իրանական փոխառություն է՝ պահլավերեն *ahrakan* բառն է, որն օրինաչափորեն կորցրել է *ր*-ն: *Մեհեկան*-ը՝ *Միհր* աստծո անունից: Հայտնի է, որ պահլավերենի *հր* հնչյունակապակցությունը հայերենում *հ* է դառնում, ինչպես՝ *գոհր* > *գոհ*:

Տրէ ամսանունը, հավանաբար, *Տիր* աստծո անունից է սերում, իսկ *Արեգը* գարնան առաջին ամիսն է, արևի ամիսը: Բոլոր ուսումնասիրություններն էլ այն բխեցնում են հնդեվրոպական **rev* արմատից: Ակներևաբար, այս ամսանունը գալիս է արևապաշտության շրջանից:

Մարերի ամսանունը դարձյալ իրանական է՝ ըստ վերոնշյալ աղբյուրների: *Ավելեացը* ներառում է 30-օրյա ամիսների հինգ ավելացած օրերը:

Էդ. Աղայանը համոզմունք է հայտնում, որ հին հայկական ամսանունների կարգը պահպանվել է այնպես, ինչպես եղել է անվանակոչության ժամանակ՝ մ.թ.ա. 7-րդ դարում: Հավանաբար, հայոց ամսանունները ժողովրդի լեզվից դուրս են մղվել Հուլյան տոմարի տարածումից հետո:

Կարող ենք եզրակացնել, որ հայոց ամսանունների ծագման հարցի շուրջ ծավալված բանագիտական տարակարծությունների բնալին շատ դեպքերում կարելի է գտնել հայերենի բարբառներում:

SUMMARY
OBSERVATIONS OF ED. AGHAYAN ON THE ISSUE OF OLD
ARMENIAN NAMES OF MONTHS
Barnasyan Jemma

The scientific etymology of the ancient Armenian names of the months was studied by Hr. Acharyan, St. Malkhasyants, Ed. Aghayan, L. Hovhannisyanyan, whose points of view in some cases coincide, but there are disagreements on the issue of the origin of the names of some months. We apply to the the consideration of the issue with the intention that to the brought linguistic facts, taken into account when orienting to the question of the reliability of this etymology, we can add or compare the

⁵Տե՛ս **Հովհաննիսյան Լ.**, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 98:

dialect data we have. It is not in vain that the famous scholar Ed. Aghayan, while analyzing the etymology of Armenian names, assigns sourceological value to the facts presented by the Armenian dialects.

Key words: etymology, year, word meaning, Caucasian languages, dialect, borrowing, light and darkness.

РЕЗЮМЕ
НАБЛЮДЕНИЯ ЭД. АГАЯНА ПО ВОПРОСУ СТАРЫХ
АРМЯНСКИХ НАЗВАНИЙ МЕСЯЦЕВ

Барнасян Джемма

Научной этимологией древнеармянских названий месяцев занимались Г. Ачарян, Ст. Малхасянц, Эд. Агаян, Л. Оганнисян, точки зрения которых в некоторых случаях совпадают, а в вопросе происхождения названия некоторых месяцев имеются разногласия.

К рассмотрению вопроса возвращаемся с тем намерением, что к приведенным лингвистическим фактам, учтенным при ориентации в вопросе достоверности данной этимологии мы можем добавить или сопоставить имеющиеся у нас диалектные данные.

Не зря выдающийся ученый Эд. Агаян, анализируя этимологию армянских названий месяцев, источниковологическую ценность придает фактам, преподнесенным диалектами армянского.

Ключевые слова: этимология, год, значение слова, кавказские языки, диалект, заимствование, свет и тьма.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ
ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Գալստյան Անահիտ

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ գիտաշխատող

DOI: 10.54412/2953822X-2023.1-70

Բանալի բառեր. նորակազմ բառ, թեմատիկ խումբ, գունանվանումներ, սերող հիմք, բաղադրող հիմք, ածանց, բառակազմական կաղապար, բաղադրիչների շարահյուսական հարաբերություն:

Բոլոր կենդանի լեզուներում անհրաժեշտաբար առաջանում են նոր բառեր՝ անվանելու համար հասարակական կյանքի փոփոխություններով, գիտության և տեխնիկայի զարգացմամբ պայմանավորված նոր իրոյթներն ու հասկացությունները:

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտը ձեռնարկել է արդի հայերենի նորակազմ բառերի հավաքման և բառարանագրման աշխատանքները: Մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից (ինքնուրույն և թարգմանական), համացանցից, հեռուստատեսությունից, տարբեր գովազդային հոլովակներից և ցուցանակներից, բանկերի, նախարարությունների հրատարակած բուկլետներից, ձևաթղթերից հավաքվել են բացատրական, ինչպես նաև նորաբանությունների ցայժմ հրատարակված բառարաններում չվկայված, չբառարանագրված բառերը: «Նոր բառերում» ընդգրկված բառապաշարը՝ մոտավորապես տասներկու հազար բառ, կարող է դիտարկվել մի շարք դասակարգումներով: Դրանք ներկայացվում են ըստ բառաքաղման աղբյուրների, ըստ նորաստեղծ բառերի կազմության, ըստ դրանց կիրառության ոլորտների: Բառերը մեր կողմից խմբավորվել են մի շարք հիմքերով՝ ա) ըստ նորաստեղծ բառի խոսքիմասային պատկանելության, բ) ըստ բառիբաղադրիչների խոսքիմասային պատկանելության, գ) ըստ բառաստեղծման, բառակերտման տեխնիկայի, դ) ըստ կազմության, ե) ըստ առավել հաճախ հանդիպող սերող և բաղադրող հիմքերի, զ) ըստ բաղադրատարրերի ծագման (օտարալեզու կամ հայերեն), է) ըստ նորակազմ բառի բաղադրիչների շարահյուսական հարաբերության, ը) ըստ նորակազմ բառերի թեմատիկ խմբերի և ենթախմբերի:

Հարկ է արձանագրել, որ բառերի նշված դասակարգումները ուսումնասիրություններում հստակ չեն առանձնացվում: Դրանք քննության ընթացքում միահյուսվում, միատեղ են հանդես գալիս: Այսպես, վերլուծելով նորակազմ բառերի խմբերն ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ նշում են նաև նորաստեղծ բառի խոսքիմասային պատկանելությունը, նաև այն ոլորտը, որտեղ առավել հաճախ գործածվում է նորակերտ բառը:

«Նոր բառերում» հավաքված նյութի քննությունն այս առումով բերում է մի շարք եզրահանգումների: Այսպես, բառակազմությանն առավել հաճախ մասնակցում են *հուշ(ա)-, մշտ(ա), գոյ(ա)-, հուս(ա)-, հուզ(ա)-, սիր(ա)-, թմր(ա)-, հոգե-, գուն(ա)-, կենս(ա)-* սերող հիմքերը (*հուշապնակ, հուզաշունչ, մշտակորով, հոգեզննում, կենսաժամանակ, գունաբիծ, գոյամաքառում, թմրասրճարան, սիրաթրթիռ* և այլն):

Որպես բաղադրող հիմք հաճախ են գործածվում *-աշխարհ, -պատում, -գիծ, -դարան, -ոլորտ, -կենտրոն, -մետ, -ընթաց, -բուժում, -հենք, -վաճառ, -բույր, -տեր, -գույն, -գիր, -շարք), -վար, -նման, -ձև, -համ, -հոտ, -սեր, -բնակ, -հաճ(ո), -հայաց, -հարույց, -առատ* բաղադրիչները: *-Ընթաց* բաղադրող հիմքով կազմված են՝ *ծուլընթաց, ծիրընթաց, հաստատընթաց, համառընթաց, շեղընթաց, ցածրընթաց, զվարճընթաց, մահընթաց, -պատում* բաղադրիչով՝ *պատերազմապատում, նկարապատում, սփյուռքապատում, խրթինապատում, հանգապատում, վավերապատում, ցեղասպանապատում, կինոէդեռնապատում, քառապատում* բառերը, *կենտրոն* -ը որպես բաղադրող հիմք առկա է *երեխայակենտրոն, անհատակենտրոն, հասարակակենտրոն, հայակենտրոն, հայաստանակենտրոն* և այլ նորակազմ բառերում:

Գիտադարան, ժամանակադարան, մտադարան, հայադարան, ընտրադարան, գինեդարան նորակազմություններում առկա է *-դարան, հայրենահայաց, կիրճահայաց, մասսահայաց, վախահայաց, մեղմահայաց, քննահայաց* կազմություններում՝ *-հայաց, բերկրահարույց, խղճահարույց, վթարահարույց, սթրեսահարույց, թունահարույց* բառերում՝ *-հարույց* բաղադրիչը:

Նորաստեղծ բառերը դիտարկվում են նաև որոշակի թեմատիկ բաժանումներով: Նախ նշենք, որ *թեմատիկ խումբ* տերմինը լեզվաբանական գրականության մեջ գործածվել է մի շարք տարբերակներով՝ առարկայաթեմատիկ խումբ, իմաստաթեմատիկ խումբ և այլն: Մեր նախորդ աշխատանքներում այս սկզբունքով առանձնացրել ենք գունանվանումներ, ժամանականիշ բառեր, մասնագիտություն, զբաղմունք նշանակող բառեր և այլն:

Թեմատիկ խմբերում կարող են առանձնացվել մի շարք ենթախմբեր: Այսպես, թեմատիկ խմբերը և ենթախմբերը ներկայացնում ենք ըստ մարդ-շրջապատող աշխարհ առանցքի: Նորաստեղծ բառապաշարի՝ մարդուն վերաբերող շերտի մեջ առանձնացնում ենք երկու ենթախումբ՝ մարդու հոգեկան աշխարհին վերաբերող և արտաքինին ու գործունեությանը առնչվող նորաստեղծ բառեր: Նշում ենք հուզանիշ, զգացմունքանիշ, ժամանականիշ բառախմբեր, մասնագիտություն, զբաղմունք, հագուստ նշանակող բառեր: Մարդու գործունեության տարբեր բնագավառներին (արվեստ, արհեստ, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, գիտություն, ՏՏ ոլորտ, մարզաշխարհ, աշխատանքի գործիքներ, փոխադրամիջոց, սնունդ) վերաբերող բառապաշարի քննությամբ ևս ի հայտ են գալիս բազմաթիվ նորակազմություններ:

Շրջապատող աշխարհին վերաբերող ենթախմբում դիտարկվում են՝ տարածանիշ բառեր, առտնին առարկաներ նշանակող բառեր և այլն:

Բնություն թեմատիկ խմբում կարող են առանձնացվել բուսանուններ, կենդանանուններ, բնության երևույթներ նշող և հարակից այլ բառեր: *Բուսանուններ* թեմատիկ ենթախմբում առանձնացվում են ծառանուններ, թփանվանումներ, խոտաբույսերի անվանումներ և դրանց առնչվող բազմաթիվ բառեր:

Նորակազմ բառերի համալրման գործընթացում դիտարկվում է լեզվի ներունակ (պոտենցիալ) բառապաշարի ակտիվացում: Լեզվի զարգացման ժամանակակից փուլում հաճախ են հանդիպում հատվածական բաղադրությունները (բժշկատնտեսագիտական, գիտանախագծային, բնագիտամաթեմատիկական, երկրաբանատնտեսական և այլն):

Արձանագրել ենք մի շարք ածանցների և ածանցակերպների գործածության ակտիվացում (-*ե*, -*իկ*, -*յան*, -*ում*, -*գետ*, -*բան*, -*ուհի*, -*ուկ*, -*ենի* և այլն): Նշենք -*իկ* ածանցով կազմված մի շարք նորակազմ բառեր՝ *չարագիկ* (խանութի անվանում), *տարոսիկ*, *գյումրիկ*, *հացիկ* (*хлебцы*), *մառանիկ*, *Նժդեհիկ*: -*ենի* ածանցով գործածվում են *կաթենի*, *չրենի*, *մրգենի* նորակազմությունները: Այս կազմություններում -*ենի* վերջածանցը իմաստով համարժեք է -*եղեն* ածանցին:

-*Ե* ածանցով նորակազմություններից են՝ *մանրախճե*, *ծովախոտե*, *նրբատախտակե*, *նրբաթիթեղե*, *մեղեսիկե*, *խաղաթղթե*, *ածխե*, *վարսակե*, *եղնջե*, *ջրիմուռե*, *շամանդաղե*, *բամբուկե* և այլն:

Ինչ վերաբերում է նորակազմ բառի բաղադրիչների շարահյուսական հարաբերությանը, ապա այստեղ գործում են բառակազմական կաղապարներին հատուկ շարահյուսական տարատեսակ հարաբերություններ, իսկ որոշ դեպքերում առկա են լինում միևնույն բաղադրող հիմքի տարբեր շարահյուսական առնչություններ սերող հիմքի հետ: Այսպես, -*նկար* վերջնաբաղադրիչով բազմաթիվ նորաստեղծ բառերի (*հողանկար*, *ավազանկար*, *բրնձանկար*, *կավճանկար*, *էջանկար*, *սոսնձանկար*, *ծվենանկար*, *խարանկար* և այլն) քննությունից ակնհայտ է դառնում մի քանի ներքին խմբավորում. հիմնականում առկա է բաղադրիչների հատկացուցիչ-հատկացյալ հարաբերություն, որոշ դեպքերում՝ միջոցի անուղղակի խնդիր-լրացյալ կամ ձևի պարագա-լրացյալ հարաբերություններ:

Բժշկական տերմինաբանության ոլորտում նկատելի է -*բուժում*, -*բուժություն* բաղադրիչներով կազմությունների գործունացման երևույթը: Սկզբնական շրջանում գործածվում է օտարալեզու տարբերակը՝ *թերապիա*, այնուհետև նկատվում է -*բուժում* և -*բուժություն* տարբերակների զուգահեռ կամ խառը (և՛ օտար բաղադրիչով, և՛ հայերեն կազմություններ) կիրառություն: Հմնտ. *երաժշտաթերապիա-երաժշտաբուժում*, *անտառաթերապիա-անտառաբուժում* (*անտառաբուժություն*), *գունաթերապիա-գունաբուժում*, *ցողունաթերապիա*, *ճիչաթերապիա*, *բղավելաթերապիա*, *ծիծաղաբուժություն*: Բժշկական ոլորտում նախկինում գործածված *հիվանդության պատմություն* բառակապակցությունը այսօր իր տեղը զիջել է *պատմագիր* բառին (իմաստային նորաբանություն է. հոգնակի թիվը՝ *պատմագրեր*: Կարծում ենք՝ ավելի հաջող կլինե՞ր *բուժագիր* կազմությունը):

Բժշկական տերմինաբանության մեջ նորամուտ *կորոնավիրուս*-ը ամենահաճախ գործածվող բառերից է (և ոչ միայն հայերենում). դրա հայերեն տարբերակներից արձանագրված են՝ *թագավարակ, թագածահր, պսակածահր*: Այս բառերից որևէ մեկի տերմինացման ընթացքը ևս ուսումնասիրության արժանի իրողություն է:

Առավել մանրամասն անդրադառնանք նորաստեղծ գունանվանումների կազմությանը:

Նորաստեղծ գունանվանումները հիմնականում կազմվում են *-գույն* բաղադրիչի միջոցով: Կան նաև *-երանգ* և *-թույր* բաղադրիչներով կազմված գունանվանումներ (*կեռասերանգ, կավճերանգ, գինեթույր*): Բավականին շատ են նաև *-ավուն* ածանցով նորակազմ բառերը, ինչպես՝ *մոխրագորշավուն, մոխրակապտավուն, մոխրասպիտակավուն, կիտրոնականաչավուն, կաթնագորշավուն, կանաչասևավուն* և այլն:

-Գույն բաղադրիչով նորակազմությունները բաժանվում են երկու խմբի. 1. գոյական+գույն (*նարդոսագույն, մամռագույն, կաղամբագույն, փշահաղարջագույն, սոճեգույն, սերուցքագույն, սոխագույն, վուշագույն* և այլն), 2. Երկու գույների համադրություն ներկայացնող բառեր (*կապտասուկեգույն, կարմրասրճագույն, սպիտակամոխրագույն, սևադարչնագույն, սևաշագանակագույն, դեղնաերկնագույն, կարմրամանուշակագույն, ճերմակավարդագույն, դարչնամանուշակագույն, դարչնաշագանակագույն* և այլն):

Առանձնահատուկ են գունանուն նշանակող բարդ բառերի հետևյալ կաղապարները. ա) առարկայի անվանում+գունանվանում (առանց ածանցի)՝ *երկաթագորշ, կապարագորշ, ծխագորշ, մարգարտագորշ, էլակակարմիր, դարչնակարմիր, ծղոտականաչ, կավճասպիտակ, շուշանաճերմակ, փրփրաճերմակ, ծովակապույտ, ճահճադեղին, մեղրադեղին, ժանգադեղին, ցորնադեղին*, բ) գունանվանում+գունանվանում (առանց ածանցի)՝ *ճերմակադեղին, ճերմակակապույտ, գորշակապույտ, կապտափիրուզ, ճերմակականաչ* և այլն: Այս կառուցվածքի նորակազմությունները ածական են՝ կազմված երկու ածական բաղադրիչներից, և միջանկյալ գույն են նշում: Երբեմն լինում են նաև երեք գույն նշող կազմություններ՝ *կարմրադեղնագորշ, գորշադեղնակարմիր, դեղնագորշակարմիր* և այլն:

ԼԵԶՎԻ ԿԵՐՊՈՐՆԿԱԼՄԱՆ ԱՂԱՅԱՆԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓՍՑՈՒԹՅՈՒՆԸ

(հայեցակարգերի պատմատիպաբանական ուրվագիծ)

Գյուլզատյան Դավիթ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ

davitgiulzadyan@gmail.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-74

Բանալի բառեր. հնչուրդ, հնչյուն, հնչույթ, լեզվական գործունեություն, խոսքային գործունեություն, խոսողական գործունեություն, լեզվական եռաչափ և հնգաչափ գոյամակարդակներ:

Մարդկային լեզվի գիտության զարգացման ընթացքը մեկնելի է չափաբանորեն, այսինքն՝ նրանով, թե գիտությունն ինչով է «չափում» լեզվական հորինվածքը կամ ինչն է համարում նրա առանցքը: Մեկնելու համար Էդուարդ Աղայանի տեսությունը հարկ է ըմբռնել լեզվաբանության պատմության ներքին տրամաբանությունը և այդ ծիրում բացահայտել լեզվաբանի հայեցակարգը: Ընդ որում չափաբանության բացահայտման անհրաժեշտություն է առաջանում լեզվի՝ իբրև ինքնուրույն գիտության, կազմավորման շրջանին ոչ թե նախորդող, այլ նրանից սկսած և հաջորդող ժամանակահատվածում, որովհետև XIX դարին նախորդող անտարրորշ լեզվաբանության տևական շրջանում չկա չափման հնարավորություն միասնական սկզբունքի բացակայության պատճառով: Եթե երևակայենք մի վերացական սոնի, որի շուրջն անընդհատ պտտվում է չբեկեռացված լեզվախոսական գործունեության (էներգեյա)¹ վերացական անիվը (հմտ. մարզական մենանիվը կրկեսում), ապա այդ գործունեության անտրոհ անընդհատությունը պիտի ճանաչվի միաչափության սկզբունք: Այդ սկզբունքով է «չափվում» Վիլիելմ ֆոն Հումբոլդտի ուսմունքը, որի տրամախոսության (դիալեկտիկա) մեջ լեզուն և՛ համակարգն է, և՛ խոսքը, և՛ դրանք միավորող գործունեությունը: Սա լեզվաբանության պատմության **համադրական շրջանն** է, որը բնորոշվում է հենց **տրամախոսական միաչափության** սկզբունքով: Սրանով է բացատրվում Հումբոլդտի՝ լեզվական հորինվածքը փեղեկմամբ չբեկեռացնելու իրողությունը: Պարզապես նա դրա կարիքը չուներ, որովհետև Հումբոլդտի համար լեզուն արտահայտված և արտահայտվելիք ողջ խոսքային զանգվածն է, դրանով իսկ անընդհատ գործունեություն է, և լեզվաբանի խնդիրն էր լեզվին ու լեզվական բոլոր իրակություններին բնուստ հատուկ ներքին հակասությունների վերհանումը (հմտ. ա. «բառը լեզվի կայուն տարրն է» և բ. «բառի ամեն մի գործածությունն նոր բառ է» տրամախոսական հակադրամիասնությունը)²:

¹ Sté u B. фон Гумбольдт, Избранные труды по языкознанию, Москва, «Прогресс», 1984, էջք 67-68, 100, 108, 143, 206, 2028:

² Sté u B. фон Гумбольдт, անդ, էջք 77, 90, 103, 126, 129, 240, 306, 317:

Լեզվաբանության պատմության նոր փուլն սկսվում է Ֆ. դը Սոսյուրի հայեցակարգի ի հայտ գալով: Գ. Ջահուկյանի՝ լեզվաբանության պատմության պարբերացման լավագույն անվանադրումը հենց այս շրջանին է վերաբերում: Այս փուլը Գ. Ջահուկյանն անվանում է **համակարգային-վերլուծական լեզվաբանության շրջան**³: Վերլուծական է լեզու-խոսք երկատմամբ, համակարգային է այդ երկատումը լեզվախոսությունից արտածելու իրողությամբ⁴: Սոսյուրի հայեցակարգում առկա բոլոր մյուս երկատումները բխում են այս ելակետային երկատումից և հանգում դրան (հմմտ. լեզվաբանություն և խոսքաբանություն⁵, կայական լեզվաբանություն և պատմական լեզվաբանություն, համաժամանակություն և տարաժամանակություն, համաժամանակյա լեզվաբանություն և տարաժամանակյա լեզվաբանություն, շարակարգային հարաբերություններ և զուգորդային հարաբերություններ, նշանի նշանակյալ և նշանի նշանակիչ): Սոսյուրի՝ լեզու-խոսք հակադրությանը դեռ կանդրադառնանք: Այստեղ ընդգծել ենք ուզում լեզվական իրողությունների զուգորդային և շարակարգային հարաբերության ինքնատիպությունը, որը միանգամայն տարբերվում է Սոսյուրի վերագրվող, բայց տևական մի շրջան նրա տեսությանն ամբողջությամբ հակասող հետսոսյուրյան լեզվաբանության մեկնություններում: Բանն այն է, որ Սոսյուրի տարբերակած զուգորդային և շարակարգային գոյամակարդակները նշանային բեկում ունեն և անմիջականորեն աղերսվում են նշանակյալին և նշանակչին, իսկ նշանի մեջ միավորված են «... ոչ թե իրը և անունը, այլ հասկացությունը և լսողական պատկերը: Վերջինս նյութական հնչյունը չէ, որը գուտ ֆիզիկական էություն է, այլ այդ հնչյունի հոգեկան դրոշմվածքը, նրա մասին մեր զգայարանների կողմից մեզ հաղորդված պատկերացումը: Դա զգայական պատկեր է, և եթե մենք այն երբեմն նյութական ենք անվանում, ապա միայն այդ իմաստով և հակադրվելով զուգորդման մյուս եզրին՝ հասկացությանը, որն ընդհանուր առմամբ ավելի վերացական է»⁶: Հասկացության (նշանակյալի) ավելի վերացական լինելը բնավ չի հուշում, թե լսողական պատկերը (նշանակիչը) թանձրացական է: Ահա այս նուրբ վերացականության պահն է անտեսված շարագարգի գծայնության հետսոսյուրյան գնահատումներում, որոնցում շարակարգ-նշանակչի գծային բնույթը նույնացված է գծային բնույթ ունեցող բացառապես նյութական հնչաշղթայի հետ: Հարկ է նախ և առաջ ուշադրության առնել այն հանգամանքը, որ Սոսյուրի տեսության մեջ հոգեբանական մեկնություն ունեն թե՛

³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, հատոր I, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1960, էջ XXIX:

⁴ Տե՛ս Ֆ. դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց (թարգմանությունը՝ Ամալյա Մուրադյանի), Երևան, «Սարգիս Խաչենց» . «Փրինթ ինֆո», 2008, էջք 35-38: Տե՛ս նաև Դ. Գյուլգատյան, Վարկած լեզվաբանության պատմության նորագույն պարբերացման // «Նշան, համակարգ, հաղորդակցում: Հոդվածների ժողովածու՝ նվիրված է. Աթայանի հիշատակին», Երևան, ԵՊՀ հրատ., էջք 63-73:

⁵ Թե՛ն Սոսյուրը տալիս է «լեզվի լեզվաբանություն» և «խոսքի լեզվաբանություն» անվանումները, այնուամենայնիվ, ելնելով հայերենի բառակազմության ընձեռած հնարավորությունից՝ նախապատվությունը տվեցինք «լեզվաբանություն» և «խոսքաբանություն» հակադրմանը, որը, ի դեպ, ավելի է համապատասխանում Սոսյուրի հայեցակարգի ոգուն:

⁶ Ֆ. դը Սոսյուր, անդ, էջք104-105:

գուգորդումը, թե՛ շարակարգը: Գլոսեմատիկայի դպրոցի հիմնադիր ներկայացուցիչ Լուի Ելմսլեր հոգեբանական «գուգորդում» (association) տերմինը փոխարինեց «հարացույց» (paradigm) լեզվաբանական տերմինով, որը ողջունելի է միայն այդքանով: Հանելով, սակայն, հոգեբանական տերմինը՝ նա լեզվաբանությունից արտամղեց լեզվի հոգեկան շերտը ևս⁷, որի արդյունքը եղավ ոչ միայն գլոսեմատիկայի, այլև հետագա մի քանի տասնամյակի՝ այլ դպրոցների լեզվաբանության ջանքերով նուրբ վերացականության անտեղի թանձրացումը՝ նկատելի պարզունակացմամբ և կոպտացմամբ: Թեև կարելի է համակերպվել հարացույցի և լեզվի միջև հավասարության նշան դնելու հետ, սակայն անթույլատրելի է շարակարգի և խոսքի նույնացումն այն էլ Սոսյուրի այն զգուշացումից հետո, որ խոսքը ներքին լեզվաբանության ուսումնասիրության նյութ չէ, մինչդեռ լեզվաբանը հետազոտական լուրջ մեկնություններ է տալիս շարակարգի վերաբերյալ ներքին՝ կայական, համաժամանակյա լեզվաբանության տիրույթում: Սրանով է գնահատելի Գ. Ջահուկյանի այն նկատումը, որով նա, չխախտելով հանդերձ հարացուցային և շարակարգային գոյամակարդակների երկչափության սահմանները, շարակարգը բնավ խոսքի մենաշնորհ չի համարում, այլ շարակարգային կադապարը վերագրում է լեզվին, կադապարի իրացումները՝ խոսքին⁸: Այսպիսով՝ Ֆ. դը Սոսյուրի լեզվաբանական հայեցակարգը իրացված է **տրամաբանական երկչափության** սկզբունքով, որը լեզվաբանական հանրության մեջ իշխող մնաց մինչև անցյալ դարի 80-ականները: Այս նույն երկչափության գնահատումներով է, որ կարողացանք վեր հանել Սոսյուրին նախորդած հումբոլդտյան դիալեկտիկական միաչափությունը, և այս գույգ չափումների հիմքով է բացատրելի նաև նորագույն լեզվաբանության չափաբանությունը, որն այլ սկզբունքներով է առաջնորդվում, և որին զգալապես աղերսվում են Է. Ադայանի հայեցակերպերը ևս:

Եվ այսպես՝ կառուցվածքային լեզվաբանության ուղղությունից սկսած՝ մինչև անցյալ դարի 80-ական թվականները լեզվաբանության մեջ տիրում էր տարօրինակ կացություն: Մի կողմից՝ կառուցվածքաբանները և հետագա շրջանի՝ այդ ուղղության ուշ հետևորդներից շատերը փորձում էին վերացնել սոսյուրյան տեսության հակասությունները, որոնք, իրոք, գյություն ունեն (թեև միշտ պետք է զգուշությամբ խոսել սրա մասին, որովհետև Սոսյուրն անձամբ անմասն է եղել իր անունով հրապարակված հետազոտության կազմության ու խմբագրության աշխատանքներին, քանի որ հետմահու է լույս տեսել այն, որը բովանդակում է հեղինակի՝ հիմնականում տարբեր տարիների դասախոսություններում արտահայտած մտքերը), մյուս կողմից՝ հաճախ այս կամ այն լեզվաբանի հայացքներով պայմանավորված՝ թվացյալ հակասություններ էին մատնանշվում՝ ահա այդ հայացքների հակասականությունը վերագրելով Սոսյուրին: Այսպես թե այնպես՝ լեզվի գիտության մեջ

⁷ Տե՛ս Լինգվիստիկա, I, «Новое в лингвистике». Избранное. Перевод с английского, Москва, Издательская группа «Прогресс», 1999, էջ 156:

⁸ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը (համառոտ ուրվագիծ), Երևան, «Միտք» հրատ., 1969, էջ 101:

հատկապես Սոսյուրի բերած հայեցակարգերի վերաբերյալ հակասությունների հսկայական բազմություն էր կուտակվել, որոնցից իր արտառոցությամբ աչքի էր ընկնում միևնույն syntagm տերմինով անվանված շարակարգի և շարույթի, այսինքն՝ գոյամակարդակի և շարահյուսական միավորի շփոթի շուրջ տիրող քաոսը: Հասունացել էր պահը քաոսի ցրման և լեզվի տարբեր իրակությունների համակարգման, որոնք ճշգրիտ տեղորոշելու և սահմանագատելու համար առաջնահերթ էր առաջարկված գոյամակարդակների վերանայումը, ասել է՝ չափաբանական նոր հայեցակարգի առաջադրումը՝ նոր աշխարհայացքի հիմամբ:

Նոր աշխարհայացքի հռչակումը վիճակված էր անցյալ դարի վերջին քառորդի հայ լեզվափիլիսոփայությանը: Բացի Է. Աղայանից և Գ. Ջահուկյանից, որ քաջիրազեկ էին ընդհանուր լեզվաբանության մեթոդաբանությանը և հետևում ու ստեղծագործաբար յուրացնում էին նորագույն լեզվաբանության նորարարական պրպտումները, հաճախ իրենք էլ նոր մեթոդներ էին առաջադրում և թարմ շունչ ապահովում տեղում՝ մրցունակ դարձնելով հայ լեզվաբանությունը համաշխարհային լեզվաբանության նկատմամբ, հայոց լեզուն՝ իր բոլոր գոյաձևերով ու մակարդակներով, քննում ժամանակի պահանջներին ներդաշնակ՝ Հայաստանում կար փիլիսոփաների և փիլիսոփա-լեզվաբանների մի սերունդ, որ նման նորարություն էր ապահովում լեզվի նկատմամբ իմաստասիրական և նշանագիտական բեկումներով: Բավական է հիշատակել փաստը, որ հետստալինյան շրջանում Խորհրդային Միության մեջ նշանագիտական հետազոտության հիմքը Հայաստանում ամրակայվեց (Ստալինի արգելած գիտություններից էր նշանագիտությունը), ընդ որում ոչ միայն առաջին ուսումնասիրություններն այստեղ հրապարակվեցին, այլև հարցերի ու խնդիրների շրջանակն այնպիսի մեծ շառավղով կազմավորվեց ու թափ ստացավ, որ ցարդ գերազանցված չէ համաշխարհային ընդգրկմամբ: Այդ սերնդի գիտնականներն էին (նշում ենք՝ ըստ ուսումնասիրության ժամանակագրական հաջորդականության) Լևոն Հ.Աբրահամյանը, Սերգեյ Վարդապարյանը, Էդմոնդ Ավետյանը, Էդուարդ Աթայանը, ապա ավելի ուշ՝ Աշոտ Ս. Աբրահամյանը: Հաճախ իրարից խիստ տարբեր էին այս հետազոտողների հայացքները, սակայն այնքան բուռն էր այստեղ այդ ոլորտում պրպտումների և հրապարակումների ընթացքը, որ համաշխարհային նշանագիտության մեջ խոսում էին նշանագիտության հայկական դպրոցի մասին:

1981 թ. լույս տեսավ Է. Աթայանի «Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը» խորագրով քննախոսությունը: Բնական է, որ խորհրդային գրաքննությունը, մեղմ ասած, գրկաբաց չէր ընդունելու «մարքս-լենինյան դիալեկտիկային» խորթ այս՝ հենց միայն վերնագրով մարտահրավեր հիշեցնող աշխատությունը, և գիրքը լույս է տեսել անասելի պայքարի գնով, իսկ գլխավոր պայքարողը ԵՊՀ ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնի վարիչ Էդուարդ Աղայանն էր (Է. Աթայանն այդ ամբիոնի դասախոսներից էր). նրա՝ անտեղիտալի հետևողական համառության շնորհիվ արևաշխարհ եկավ բոլոր առումներով՝ մտքի անսանձ ճախրով, նորարարական շնչով, նոր չափումների հաստատման անառարկելի համոզությամբ և, որ բնավ երկրորդական չէ,

հայերենաստեղծ գիտության մեջ բառիս բուն իմաստով բանաստեղծական ոճ շոայլելու անօրինակ գեղագիտությամբ (որը հենց միայն դրանով՝ մեր լեզվի ներքին հնարավորությունների լիասիրտ բացահայտմամբ, ինքնին հայոց լեզվարարչության վսեմ կոթող է), իսկապես, յուրօրինակ մարտահրավեր էր, միայն թե ո՛չ նեղ քաղաքական, ինչպես կարծում էին ժամանակի գրաքննիչները, այլ գիտության մեջ նոր թռիչքների լայնահուն ասպարեզ բացող ստեղծարարությա՛ն իմաստով: Է. Աթայանի նորարարությունը՝ լեզվաբանության մեջ նոր փուլ բանալու առումով, մի քանի հարաչափով է մեկնելի:

Ա) Հիշյալ աշխատության խորագիրը հուշում է, որ հեղինակն արտաքին աշխարհին մի այլ՝ «լեզվական աշխարհ» է հակադրում:

Բ) Շարադրանքի առաջին իսկ էջերից պարզ է դառնում, որ հակադրությունը նպատակային է, քանի որ «երկու աշխարհի» գոյությունը բխեցվում է **Ոլորտների ոլորտ** առավել ընդգրկուն վերացական աշխարհից՝ **լեզվական ոլորտ** և **ոչ լեզվական ոլորտ** երկփեղկմամբ, և այդ «աշխարհոլորտներից» նշութակիրը լեզվական ոլորտն է՝

Գ) Դա այդպես է, որովհետև առաջին իսկ նախադասությամբ արձանագրվում է հեզելյան ակունքներին ներդաշնակ բանաձևումը. «Գոյություն ունեցողն ինքնին միասնական է, բայց և տարրորոշված...»¹⁰: Այս միտքը տարբեր ձևերով երևում է Է. Աթայանի տարբեր ուսումնասիրություններում, որոնցից մեկում նա առավել պարզորոշ է արտահայտվում՝ տեղեկացնելով, որ լեզվական կամայական իրողություն հատուկ է նաև արտալեզվական ոլորտին և «միայն այդ պատճառով՝ նաև լեզվին»¹¹:

Դ) Նույնացնելով լեզուն արտաքին աշխարհի հետ և հակադրելով նրան՝ Է. Աթայանն իրեն հատուկ նորարական հայեցակերպով սասանում է նաև մինչ այդ եղած նշանագիտական պատկերացումները՝ արտաքին իրականությունն ու լեզուն դիտելով մի նշան, որի նշանակյալն արտալեզվական ոլորտն է, նշանակիչը՝ լեզվական ոլորտը ճիշտ այնպես, ինչպես լեզուն է խոսքի հարաբերությամբ նշանակյալ, իսկ խոսքը լեզվի նշանակիչն է (ի դեպ, Է. Աթայանի սաներից մեկը՝ Աշոտ Ս. Աբրահամյանը, մի կարևոր քայլ է կատարում արտաքին և լեզվական իրականությունների սահմանագծում՝ բացորոշելով արտաքին աշխարհից լեզվական աշխարհ կատարվող անցումային պահերը: Ըստ Ա. Ս. Աբրահամյանի դիտարկման՝ արտալեզվական իրականությունից առ լեզվական արտահայտություն կտրած ուղին միջնորդվում է վերաբերական նշանակությամբ և ներլեզվական նշանակությամբ)¹²:

Ե) Է. Աթայանի կարևոր ներդրումներից մեկը իրեն նախորդած առանցքային հայեցակարգերի վերանայումն ու վերաբժնորումն է: Նա լեզվական ոլորտ է վերադարձնում

⁹ Տե՛ս Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 3:

¹⁰ Է. Աթայան, անդ:

¹¹ Է. Աթայան, Լեզունների ձևաբանական տիպաբանության առարկան և «անհատական լեզվական ձևի» բացահայտման խնդիրը // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1988, հմ. 2 (65), էջ 44:

¹² Տե՛ս Ա. Ս. Աբրահամյան, Իրականություն, լեզվագիտակցություն, նշան, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, էջ 169:

Սոսյուրից հետո Ելմսլի և հաջորդների՝ լեզվից վանած հոգեկան շերտը, ինչպես նաև Սոսյուրի վանած խոսքը՝ լեզվաբանության առարկա համարելով լեզվին առնչվող և լեզվի մեկնաբանությանն այս կամ այն կերպ օժանդակող յուրաքանչյուր իրողություն: Վերադարձնելով խոսքը և հոգեկանությունը՝ որպես լեզվական հորինվածքի բաղադրիչներ՝ չեր կարող այդ հորինվածքից դուրս թողնել այն համընդհանուր ներունակը, որի շնորհիվ ապահովված է մարդկային հաղորդակցությունը՝ լեզվի տրամաբանական համակարգը: Լեզվական շինվածքը, այսպիսով, ըստ Է. Աթայանի, տրամաբանության, հոգեբանության և խոսքի ներանցված բաղկացություն է: Այդ եռաշերտությանը տերմինաբանական հարկավոր հանդերձավորում է տալիս Է. Աթայանը՝ տրամաբանական կողմն անվանելով **լեզվական համակարգ**, նյութական-հնչյունական արդյունացված կողմը՝ **խոսքային գծակարգ**, հոգեբանական կողմը՝ **լեզվախոսքային շարակարգ**¹³: Համակարգը պարտադրային, անհրաժեշտական տիրույթն է, շարակարգն ընտրության ակնթարթային տիրույթն է՝ ոճական ազատության աղբյուրը, որի բովով հնարավորության՝ հոգեկան պատկերացմաբ բեկված պարտադրայնությունը իրացվում է գծակարգում: Գծակարգը, ըստ այդմ, իրացման տիրույթն է: Եթե ընթերցողն ուշադրություն դարձրեց, իչպես նշել էինք վերը, Ֆ. դը Սոսյուրի թե՛ զուգորդային, թե՛ շարակարգային հարաբերությունները հոգեկան տիրույթում էին: Է. Աթայանն ահա այդ երկուսը՝ հենց որպես հոգեկան երևույթներ, միավորում է լեզու-խոսք բևեռների միջնամասում, իսկ Ելմսլյան հարցույցը՝ որպես տրամաբանական հնարավորություն, հատկացնում է լեզվական համակարգին: Բաղդատելով Է. Աթայանի ուսմունքը Վ. Ֆոն Հումբոլդտի միաչափ և Ֆ. դը Սոսյուրի երկչափ հայեցակարգերի հետ՝ դժվար չէ նկատել, որ Է. Աթայանով եռափաշառության սկզբունքն է գործում: Սակայն սա չի նշանակում, թե լեզվին վերագրվող չափումների կամայականությամբ հնարավոր է նորանոր փուլերի հանգել: Այդ չափումները առարկաների մեխանիկական գումարներ չեն, այլ հստակ հայացքներ՝ ուղղված լեզվական հորինվածքին: Դա այդպես է նաև նրանով, որ Է. Աթայանի եռաչափությունը թե՛ իր, թե՛, ինչպես կտեսնենք, Է. Ադայանի ուսմունքներում վերաճում է քառաչափության և հնգաչափության:

Չ) Այս ամենով Է. Աթայանի տեսությունը մեկտեղում է լեզվաբանությունը, փիլիսոփայությունն ու նշանագիտությունը, և նորագույն լեզվաբանությունը հենց այս եռամիասնության արտահայտությունն է: Լեզվաբանության մեջ վերականգնում է Վ. Ֆոն Հումբոլդտի դիալեկտիկան, որը բառիս բուն իմաստով ընդհանուր լեզվաբանությունը հենց որպես փիլիսոփայություն հիմնեց, փիլիսոփայություն՝ լեզվի տարածքում: Չենք կարող ավելի ծավալել շարադրանքը՝ ներկայացնելու Է. Աթայանի նշանագիտական ու իմաստասիրական այլ դրույթներ ևս, մանավանդ տարբեր առիթներով նրա ուսմունքին լայնորեն անդրադառնալու առիթներ եղել են¹⁴: Ի մի բերելով այս հատվածի դիտարկումները՝ պետք է ասենք, որ

¹³ Տե՛ս Է. Աթայան, Լեզուներիձևաբանական տիպաբանության առարկան..., էջ 41:

¹⁴ Տե՛ս Ա. Ս. Աբրահամյան, անդ, էջք 198-221: Դ. Գյուլգատյան, Էդուարդ Աթայանը, նրա ժամանակը, գործունեությունը և տրամախոսությունը (նախաբան) // Միջազգային գիտաժողով. «Լեզու, խոսք, իրականություն

այսօր լեզվաբանության պատմության մի նոր փուլում ենք, որի սզբունքն է **տրամախոսական բազմաչափությունը**, որով առաջնորդվում է մերօրյա **գերհամադրական լեզվաբանությունը**:

Թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ եռաչափության սկզբունքը ժամանակի պահանջն էր, և սա՝ ոչ միայն այդ սկզբունքի և նորագույն լեզվաբանության հիմնադիր Է. Աթայանի շնորհիվ: Ճիշտ է, Է. Աթայանից հետո, բայց նրա ներկայությամբ և՛ Է. Աղայանը, և՛ Գ. Ջահուկյանը տարբեր երևույթների նկատմամբ կիրառել են եռաչափության սկզբունքը: Այսպես՝ Գ. Ջահուկյանը, իր բառակազմական հետազոտության մեջ քննելով բառի բաղադրման իրողությունը, ածանցման և բարդության համար գուգահեռ եռաշերտություն է սահմանում հետևյալ կերպ՝ **ածանցելի – ածանցում – ածանցյալ, բարդելի – բարդում – բարդյալ**¹⁵: Ակնհայտորեն՝ ա) ածանցելին և բարդելին լեզվական կամ **համակարգային** հասկացություններ են, բ) ածանցումը և բարդումը՝ սերման ընթացքը ներկայացնող լեզվախոսքային կամ **շարակարգային** պատկերացումներ. շարակարգային է նաև ածանցման և բարդման ընթացքը եկուստեք ներկայացնող ընդհանուր գործընթացը՝ բառաբաղադրումը, գ) ածանցյալն ու բարդյալը՝ խոսքային կամ **գծակարգային** միավորներ: Հենց սրա համար ենք ասում, որ եռաչափությունը ժամանակի պահանջն էր: Ըստ երևույթին եթե Է. Աթայանը ստեղծած էլ չլիներ իր քննախոսությունը, միևնույնն է, եռաչափության գաղափարը ծագելու էր այս և այլ կարգի բացահայտումներով: Բարեբախտաբար, Է. Աթայանի արածն արդե՛ն փաստացի հոգևոր արտադրանք է՝ փիլիսոփայական ծանրակշիռ հիմքերով: Ինչպես ասացինք, եռաչափության գնահատելի բացահայտումներ ունի նաև Է. Աղայանը, որի քնությանն էլ պատրաստվում ենք անցնելու հիմա:

Է. Աղայանը լեզու-խոսք հարաբերությունը քննում է ոչ միայն ընդհանուր փիլիսոփայական հայեցակետով, այլև այդ փիլոսոփայության իսկությունը բացահայտում է բոլոր լեզվական միավորները դիտարկելիս: Ջարմանալիորեն լեզվի բազմաչափության քննախոսությունը ամենից ամբողջականորեն ցուցադրում է լեզվի նվազագույն հնչական կազմիչների հարաբերակցությամբ: Տեղի սղության պատճառով չենք անդրադառնում հնչույթ-հնչյուն գույգի տարաբնույթ մեկնություններին: Նշենք միայն, որ հնչույթ-հնչյուն հակադրության փոխարեն Է. Աղայանն առաջարկում է եռաչափ համամասնություն: Դա երևում է հնչական միավորների՝ լեզվաբանի բացահայտած հարաբերություններով, որոնցում կառուցվածքային վերացարկված տիրույթի հնչութային հնարավորությունն իրացվում է լեզվահոգեբանական հնչական պատկերացման՝ հնչյունի, և սրա միջնորդությամբ՝ խոսքային-նյութական միավորի՝ հնչուրդի (կարծում ենք՝ սրա հունալատինական

(գոյաբանական և իմացաբանական հայեցակերպեր)»՝ նվիրված ակադեմիկոս, լեզվաբան-փիլիսոփա Էդուարդ Աթայանի ծննդյան 85-ամյակին: Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԱԶ «Արման Ասմանգուլյան», 2017, էջ 7-21:

¹⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1989, էջ 162-163:

համարժեքը պիտի համարել fonemant տերմինը) արդյունացմամբ: Այս եռաստիճանության մեջ հնչյուններն ավելի քիչ մասնավոր հատկանիշներ ունեն, քան հնչուրդները. հնչյունները հնչուրդներից առնում են նրանց միայն ընդհանուր և էական (ռելևանտ) հատկանիշները, իսկ հնչյուններից հնչույթներին են անցնում նրանց միայն տարբերակիչ հատկանիշները¹⁶ (ի դեպ, տողերիս հեղինակն այդ տեսությանը ծանոթ էր «Լեզվաբանության հիմունքներ» գրքի լույսընծայումից հինգ տարի առաջ՝ 1982-ին, քանի որ բախտ է ունեցել աշակերտելու նույն Է. Աղայանին, և ուսանողներիս աչքի առաջ այդ գյուտի փայլատակումն ունեցավ լեզվաբանը, իսկ տարավերջի քննությանը «Հնչուրդ, հնչյուն, հնչույթ» հարցը ներառված էր քննական հարցաշար): Ըստ այդմ՝ հնչուրդը խոսքում ամեն անգամ արտասանվող **գծակարգային** միավոր է, հնչյունը հնչուրդի պատկերացումն է, ուստի հոգեբանական կամ լեզվախոսքային և կամ **շարակարգային** պատկերացում է, հնչույթը, ինչպես նշում է Է. Աղայանը, «լեզվական կառուցվածքի վերացարկված միավոր է իմաստագատիչ հակադրությունների համակարգում»¹⁷, ասել է՝ **համակարգային** հասկացություն է: Աշոտ Ս. Աբրահամյանը տեղին է նկատում, որ Տրուբեցկոյը, հնչական կազմավորումների մեջ նշելով հնչույթը, լեզվի հնչյունը և խոսքի հնչյունը¹⁸, զարմանալիորեն երկչափ բնութագրերում է մնում՝ ի տարբերություն Է. Աղայանի¹⁹: Քանի որ հնչաբանական իրողությունների մասին ենք խոսում, արժե, որ ներկայացնենք հնչույթին ու հնչութաբանական վերլուծությանը տված Է. Աղայանի այլ բնորոշումները ևս: Վերը տեսանք, որ Է. Աղայանը հնչույթը սահմանում է իմաստագատիչ հակադրությունների համակարգում: Չնայած դրան՝ նա արդարացիորեն հնչույթի առաջնային դերն է համարում իմաստակիր միավորների ձևեր կազմելը, իսկ իմաստագատիչ դերն ածանցյալ է, որ բխում է նախորդից²⁰: Բացի դրանից, ինչպես տեղեկացնում է Է. Աղայանը, փախադարձաբար իրար բացառող և փոխադարձաբար իրար փոխարինող հնչույթները, որոնց գործառությունները հարաբերակցվում են բաշխումային հարաբերություններին, լրիվ չեն սպառում հնչութաբանական քննությունը: Ամբողջացնելու համար այդ քննությունը Է. Աղայանն առաջ է քաշում ոլորտային դիտարկում՝ հնչույթն ու նրա տեսակները բացահայտելով ոլորտում, գերոլորտում, կիսոլորտում, մեծոլորտում և մանրոլորտում: Ըստ այդմ՝ ոլորտային ծավալի ընդգրկման և հնչութաբանական միավորների հարաբերությունները հետևյալ պատկերն են ունենում.

Ա) Ոլորտում հնչույթի գործառման լիաժամակ հնարավորությունն է՝ կապակցությունների և պայմանների ընդգրկմամբ:

Բ) Գերոլորտում հնչույթն է՝ բացառվող դիրքով կամ պայմանով:

Գ) Կիսոլորտը ներկայացնում է մեկ հնչույթ՝ իր ենթահնչույթներով:

¹⁶ Տե՛ս Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 235-240, 247:

¹⁷ Է. Աղայան, անդ, 247 էջ:

¹⁸ Տե՛ս Н. Трубецкой, Основы фонологии, М., 1960, էջ 43:

¹⁹ Տե՛ս Ա. Ս. Աբրահամյան, անդ, էջ 193: Ա. Ս. Աբրահամյանն առհասարակ արժևորման գնահատում է տվել Է. Աղայանի տեսությանը: Տե՛ս նույն տեղում, էջ 190-197:

²⁰ Տե՛ս Աղայան, անդ, 248-251:

Դ) Մեծոլորտում հնչույթն է՝ իր փոփոխականներով:

Ե) Մանրոլորտը դիրքային, փոխազդեցական կամ ազատ տարբերակների տիրույթն է, հնչական միավորներից հնչուրդի գործառության ոլորտն է²¹:

Ոլորտային այս քննությունը, կարծում ենք, իրոք, համընդգրկուն է և կարող է սպառել հնչական նվազագույն միավորների դրսևորման պայմանների ու հարաբերությունների գործառության բնութագրությունը, մանավանդ որ հեղինակը դրանք լրացնում է մենոլորտ և տարոլորտ հնչույթների հասկացություններով, որոնցից առաջինները կարող են հանդես գալ միայն ձայնավորների կամ միայն բաղաձայնների ոլորտում, իսկ տարոլորտները՝ տարբեր ոլորտներում՝ իրենց ենթահնչույթներով:

Հնչական միավորների եռաչափությունն ինքնին ներդաշնակ է առավել տարողունակ լեզվախոսքային բաղադրիչների փոխհարաբերությանը: Կառուցվածքաբաններից վերցնելով կառուցվածքի, կանոնի (նորմա) և կիրարկության (ուզուս) գաղափարները՝ Է. Աղայանը հակադարձ տարողունակություն է հաղորդում դրանց, այն է՝ ամենաընդգրկուն համարված խոսքը, անկախ իր հնարավոր հսկայական ծավալից ու գծային երկայնությունից, համարում է լեզվի մի մասնիկը և, հակառակը, ամենից նեղ ընդգրկման դատապարտված լեզուն, իրավամբ, համարում է ամենից ընդգրկունն ու տարողունակը: Կառուցվածքը ամենաբարձր մակարդակն է, որում միավորները բնորոշվում են իրենց փոխհարաբերություններով ու գործառույթներով: Ինքնուրույն է համարվում այն միավորը, որը տվյալ մակարդակում մակարդակին ներհատուկ տարբերակիչ հատկանիշներից գոնե մեկով հակադրվում է մյուսներին: Կանոնը պատմականորեն հաստատված դրսևոտման է «տվյալ փուլում և տվյալ հանրության հաղորդակցական գործունեության մեջ»²²: Կիրարկությունը կանոնի մասնավոր գործադրությունն է հաղորդակցման ընթացքում²³:

Հիմնվելով Է. Բենվենիստի ստորակարգային մակարդակների տեսության²⁴ վրա՝ Է. Աղայանը քննադատաբար է յուրացնում այն՝ տալով հայերենի կառուցվածքին համապատասխան յոթ մակարդակ՝ համաձայն իր պատկերացումների: Հետևելով Է. Բենվենիստին՝ Է. Աղայանը ստորին եզրային մակարդակ է համարում տարրությայինը՝ տարրույթ միավորով (նշենք, որ Է. Աղայանը ոչ թե թարգմանել է հունարեն «մերիզմա» բառը, որ նշանակում է «սահմանագատում», այլ ստեղծել է հայերեն համարժեքը, որն ավելի է համապատասխանում երևույթին: Միայն թե, կարծում ենք, մակարդակային միավորի հաստատման համար հարկ չկար հետևելու Բենվենիստին՝ տարրույթը բնորոշելով իբրև հնչույթի տարբերակիչ հատկանիշ, որովհետև այդ դեպքում ճիշտ են այն քննադատները, որոնք հիշեցնում են, թե բոլոր միավորներն էլ ունեն տարբերակիչ հատկանիշներ, բայց ոչ մեկի

²¹ Տե՛ս Է. Աղայան, անդ, էջք 256-262:

²² Է. Աղայան, անդ, էջ 123:

²³ Տե՛ս Է. Աղայան, անդ:

²⁴ Տե՛ս Է. Բենվենիստ, Ընդհանուր լեզվաբանության խնդիրներ (Ֆրանսերենից թարգմանությունը՝ Ամալյա Մուրադյանի), հատոր I, Երևան, «Սարգիս Խաչենց» . «Փրինթ ինֆո», 2023, էջք 168-185:

այդ հատկանիշները չեն դառնում ստորին մակարդակի միավորներ: Նշանակում է տարրային համար պետք է այլ սահմանում գտնել, ասենք՝ կարելի է տալ «անգն ականջի համար անորսալի հնչական նվազագույն միավոր» ձևակերպումը, և այդ դեպքում կարդարացվի նվազագույն միավորներից մեծ միավորներ բաղադրելու մակարդակային սկզբունքը): Է. Աղայանը քննադատում է Բենվենիստին և այն լեզվաբաններին, որոնք բառը դուրս էին թողնում ստորակարգային մակարդակների տիրույթից կամ ներառում այն այսպես կոչված նշանի տիրույթ, ուստի հայերենի համար պահպանում է բառային մակարդակը՝ բառային միավորով: Իսկ Է. Բենվենիստը ձևայիններն ու բառերը միավորում է նշանային մակարդակի մեջ: Այսօր հատկապես զգույն է այդպիսի մոտեցման հակասականությունը, որովհետև չենք կարող անտեսել նախադասության նշանային բնույթը: Եթե նշանն առաջնայնորեն տեղակալման հատկությամբ է բնորոշվում, ապա պետք է ընդունել, որ նախադասությունն էլ մտքի տեղակալման նշանն է:

Եկավ պահը՝ գնահատելու լեզվական ողջ հորինվածքի աղայանական իմաստասիրությունը: Ասենք միանգամից, որ Է. Աղայանի՝ այդ հորինվածքի գնահատման սկզբունքը հնգաչափ է: Կարևորն այստեղ այն է, որ Է. Աղայանը բյուրեղային պարզության է հասցրել լեզվից խոսքին անցման ակնթարթային պահը, և հակառակ այդ պահի ակնթարթայնությանը՝ նա լեզվի և խոսքի միջնօղակում եռաշերտություն է սահմանում, որը, անցումայնությամբ պայմանավորված, գործունեությունն է բնույթ ունի: Լեզվի «արթնացման» ամենամեծ չափումը լեզվական գործունեությունն է, որը հասարակության հաղորդակցական գործունեությունն է ամբողջությամբ, սակայն այն ամբողջական լեզուն չէ: Հաջորդ աստիճաններն են խոսքային գործունեությունը և խոսողական գործունեությունը: Երկուսն էլ և՛ անհատական են՝ իրենց մոտավորապես նրբաբաշխված իրենց իրացվող անհատի խոսք, և՛ հասարակական, քանի որ լեզվական գործունեության «դրկիցներն» են և նրա միջնորդավորմամբ լեզվական հնարավորությանն են աղերսվում: Խոսքային գործունեությունը ներքին խոսքի կազմավորման կայծակնային ընթացքն է, խոսողական գործունեությունը՝ ներքին խոսքի օտարման կայծակնային ընթացքը: Այս երեք շերտը գործում է լեզվական հորինվածքի երկու բևեռի՝ լեզվի և խոսքի միջև, որոնցից առաջինը՝ լեզուն, հանդարտ կացության մեջ է, քանի դեռ չի ազդանշվել խոսքին անցնելու պատրաստվածությունը, իսկ խոսքը հանդարտ է իր դրսևորվածությամբ՝ իբրև օտարյալ ներքին խոսքի արտաքինացված իրացում՝ լեզվական փաստ՝ լեզվական հուշադարանի միավոր: Ակնհայտ է այս տեսության հումբոլդտյան հայեցակարգի հետ եղած ներդաշնակությունը: Չէ՞ որ Հումբոլդտը ևս լեզուն համարում է և՛ պատրաստի գործ (երգոն), և՛ գործունեություն (էներգեյա), ըստ որում երգոնը մի կողմից անցյալին է պատկանում, մյուս կողմից՝ ապագային: Նա ննջած է բառարաններում և քերականության մեջ: Էներգեյան հենց այն է, ինչը կապում է անցյալն ապագային²⁵: Ահա Է. Աղայանի՝ լեզվից խոսքին անցման այս հայեցակարգը՝ լեզվական,

²⁵ Տե՛ս 1-ին հղումը:

խոսքային և խոսողական գործունեությունների փոխապայմանավորված եռաշերտությամբ, անվանում ենք **գործունեության տեսություն**: Մեծ հաշվով կարող ենք ասել, որ Մոսյուրի լեզու-խոսք երկատման աղբյուրը ևս Հումբոլդտի փիլիսոփայությունն է: Այժմ համեմատելով Մոսյուրի և Է. Ադայանի՝ լեզու և խոսք բնեռներին տված բնութագրումները, կարող ենք ասել հետևյալը: Մոսյուրի դրույթը, որ մեծապես է ազդել նրան հաջորդած լեզվաբանական մտքի վրա, այն է, որ «... լեզուն ու խոսքը փոխկապակցված են. լեզուն խոսքի գործիքն է և, միաժամանակ, արդյունքը: Բայց չնայած այդ ամենին՝ նրանք միանգամայն տարբեր բաներ են»: Մինչև վերջին նախադասությունը առարկելու բան չունենք: Իսկ վերջինի համար առարկողը Է. Ադայանն է՝ իր հակադրամիասնությունների տեսությամբ: Է. Ադայանն ընդգծում է, որ «օտարված, օբյեկտիվացված խոսքը հենց ինքը՝ լեզուն է, բայց ոչ թե լեզուն իր ողջ համակարգով ու կառուցվածքով, այլ նրա մի մասնակի, առանձին իրացումը, այսինքն՝ լեզվի մի մասնիկը կամ օղակը»²⁶: Մեջբերումից երևում է, որ Է. Ադայանը չի ընդունում Ֆ. դը Մոսյուրի ձևակերպումը, թե լեզուն և խոսքը «միանգամայն տարբեր բաներ են»: Է. Ադայանը խոսքը դիտում է իբրև լեզվի իրացված մի մասնիկը, հատվածը՝ դրանով իսկ նույնացնելով խոսքն ու լեզուն: «Բայց նույնացնելով լեզուն խոսքի հետ, մենք պետք է հիշենք, որ դա առանձինի նույնությունն է ընդհանուրի հետ...»²⁷:

Լեզվի կերպընկալման ադայանական փիլիսոփայության բացահայտման ընթացքը եզրափակենք՝ հանդիպադրելով Է. Ադայանի և Է. Աթայանի հայեցակարգերը: Արտաքին նկարագրությամբ Է. Աթայանի գոյամակարդակները երեքն են, Է. Ադայանինը՝ հինգը: Սակայն վերը նկատեցինք, որ Է. Աթայանի առանձնացրած շարակարգային գոյամակարդակը համակարգից շարակարգին անցումն ապահովող միջնօղակն է: Ակներև է, որ իր ընգրկունությամբ այն ներառում է Է. Ադայանի տարբերակած երեք գործունեությունը: Այսինքն՝ որքան էլ տարօրինակ հնչի տրամաբանորեն, տրամախոսաբար պիտի ասենք, որ 3 = 5... Այս տարօրինակ տրամախոսական թվաբանությունը բացորոշելու համար ներկայացնենք այն աղյուսակով:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Է. Աթայանի և Է. Ադայանի գոյամակարդակների հանդիպադրություն

Է. Աթայանի եռաչափ գոյամակարդակները	Է. Ադայանի հնգաչափ գոյամակարդակները
լեզվական համակարգ	լեզու
լեզվախոսքային շարակարգ	լեզվական գործունեություն

	խոսքային գործունեություն
խոսքային գծակարգ
	խոսողական գործունեություն
խոսքային գծակարգ	խոսք

²⁶ Է. Ադայան, անդ, էջ 115:

²⁷ Է. Ադայան, անդ:

Փորձենք ամփոփել և ի մի բերել է. Աղայանի գիտական ստեղծագործության արժանիքները:

Ա) Էդուարդ Աղայանը, երիտասարդ տարիներից լինելով համբավավոր լեզվաբան, հանձն է առնում գրել նաև դպրոցական դասագրքեր: Մեր նպատակն այս ոլորտում մեթոդական խնդիրներ ներկայացնելը չէ, ոչ իսկ նրա և Ն. Բարսեղյանի դասագրքերի գնահատական տալը, թեև դժվար չէ հատկապես մեր օրերում փառաբանել դրանք՝ աչքի առաջ ունենալով «շուկայական հարաբերություններով» պայմանավորված իրարահաջորդ՝ դասագիրք անվանմամբ խոտանների ի հայտ գալը: Այստեղ ընդգծել ենք ուզում այն պատասխանատվությունը, որով առաջնորդվելով՝ Է. Աղայանը նախքան դասագիրք շարադրելը հայերենի ուղղախոսական կանոններ սահմանելու համար ընտրանքային հարցում է կատարել գրողներին, բանասերներին, ուսուցիչներին, ուսանողներին և այլ ոլորտների՝ հայերենին լավ տիրապետող մասնագետներին: Ըստ էության նա կատարել է հանրալեզվաբանական և վիճակագրական հետազոտություն և դրա հիման վրա շարադրել գրական արևելահայերենի ուղղախոսությունը:

Բ) Քաջ տիրապետելով ընդհանուր լեզվաբանության մեթոդաբանությանը՝ ոչ միայն ընդհանուր լեզվաբանության, այլև գուտ հայերենին վերաբերող ուսումնասիրությունները կատարել է նշված մեթոդաբանությամբ՝ հայ լեզվաբանության մակարդակը մրցակցելի դարձնելով այլալեզու մասնավոր լեզվաբանության մակարդակների նկատմամբ: Անպայման հիշատակության են արժանի լեզվաբանի՝ 1) «Գրաբարի քերականությունը», որն ասես լեզվաբանական թեորեմների ժողովածու լինի, 2) «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը», որի առաջին գլուխն իր ժամանակի համար նորագույն լեզվաբանության հայեցակարգերի մատուցումն էր հայ լեզվաբանին արտասահմանյան նորագույն տեսություններին կարոտ չթողնելու մտադրությամբ՝ մի կողմից, և իր փորձով հայ լեզվաբաններին ցույց տալու, թե ինչպես կարելի է հայերենն առավել ամբողջականորեն ու շահեկանորեն ուսումնասիրել նորագույն մեթոդների օգնությամբ՝ մյուս կողմից, 3) «Ընդհանուր և հայկական բառագիտությունը», որն արժեքավոր է իր բոլոր բաժիններով: Նորարարական շունչ կա նրա բառակազմության մեջ՝ բառերն ըստ կազմության նորովի խմբավորելու և բաղադրական հիմքերի տեսությունը հայ լեզվաբանությունն բերելու ու բառակազմության ժամանակ հնչունական փոփոխությունների խոր ու մանրակրկիտ լուսաբանությամբ: Միանգամայն նորություն էր Է. Աղայանի ուսմունքը աշխարհաբարի բառապաշարի վերաբերյալ, որին մեծապես նպաստել է բառարանագրության սեփական փորձը, որը հենց արժեքավոր բառարանի ստեղծմամբ մղեց հեղինակին՝ վեր հանելու հայերենի տարաբնույթ բառաշերտերը, որոնց խմբավորման մակարդակը ևս հավասարը չունի մեր լեզվաբանության մեջ: Թարմություն բերեց նաև իմաստափոխության կամ պատմական իմաստաբանության ասպարեզում:

Գ) Է. Աղայանի բերած կարևոր նորություններից է չեզոք առման, չեզոք թվի, լեզվի մեջ հսկայական խնայողությունն ապահովող կրկնաստացական ձևերի քնությունն ու դրանց

կարևորումը: Հոլովաքանակի վերաբերյալ ևս համոզիչ է նրա տեսությունը, որը հիմնավորվում է նաև նշանագիտորեն: Լեզվական նշանի հարթաչափական մեկնակետով գոյականը հիզ հոլով ունի, դերանունը՝ վեց: Սակայն տարածաչափական մեկնակետը պարտադրում է համաբնույթ հարացույցների համաչափություն, ուստի վստահեցնում ենք, որ Է. Աղայանն այն լեզվաբանը չէ, որի մասին կարելի է, ասենք, այսպես արտահայտվել. «Աղայանը միջին տեղ է զբաղեցնում հոլովների քանակի հարցում»... Պահը եկել է, և պետք է ասել՝ հինգ հոլով ընդունող հայտնի լեզվաբաններից (բացառությամբ Գ. Ջահուկյանի) ոչ մեկն էլ Մ. Աբեղյանի հետևորդը չէ, որ դերանունների մեջ վեց հոլով է ընդունում, գոյականների մեջ՝ հինգ հոլով: Աբեղյանի միակ հետևորդը Է. Աղայանն է, որը, ի տարբերություն նրա, ոչ թե հինգ, այլ վեց հոլով է ընդունում, սակայն առաջնորդվում է նույն սկզբունքով, ինչ որ Մ. Աբեղյանը:

Դ) Միանգամայն ինքնատիպ շարադրանք է խոնարհման համակարգին վերաբերող հետազոտությունը, որ ներկայացնում է բայակազմության, հիմքակազմության և ձևակազմության բաժիններով, իսկ հայերենի սեռերի վեց տեսակի առանձնացումն ինքնանպատակ չէ, այլ ցուցադրված է ընդհանուր լեզվաբանության մեջ արձանագրված՝ լեզուներում վեց հնարավոր բայասեռի՝ հայերենում այս կամ այն չափով դրանց գոյության փաստարկմամբ, որն իր հերթին ապացուցում է ընդհանուր լեզվաբանության արձանագրության ճշգրտությունը:

Ե) Իր ուսումնասիրություններում նոր հասկացություններ սահմանելիս հաճախ է առնչվել հայերեն տերմինաբանական խնդիրներին: Է. Աղայանը լեզվաբանական բազմաթիվ ճաշակավոր տերմինների հեղինակ է, ըստ որում այստեղ գովելին այն է, որ նա բնավ չի մնացել օտար լեզուների բառերի ազդեցության տակ: Նրա տերմինաստեղծումն աչքի է ընկնում ոչ այնքան թարգմանություններով, որքան այս կամ այն հասկացության հայերեն համարժեքների ստեղծմամբ, որոնք իրենց ճշգրտությամբ հաճախ գերազանցում են օտար տերմիններին:

Զ) Անկախ վիճարկելիության հանգամանքից՝ չափազանց ուշագրավ է նրա՝ կյանքի վերջին շրջանում նախադասության և ասության թարմ տեսության մշակումը:

Է) Ներկայացված և դեռ ապագայում ներկայացվելիք արժանիքների բազմությամբ Է. Աղայանը միայն մեր մեծերի հետ չափվող գիտնական է:

РЕЗЮМЕ
ВОСПРИЯТИЕ ЯЗЫКОВОГО ОБРАЗА В ФИЛОСОФИИ Э. АГАЯНА
(историко-типологический контур концепций)

Гюлзатян Давит

Лингвистическая концепция Э. Агаяна представляет собой оригинальную систему в науке о человеческом языке, обеспечивающую своеобразный подход автора к разным

лингвистическим явлениям. Этому способствовала его диалектическая методика оценки языковых фактов, особенно при выявлении полюсов лингвистической композиции и переходных пластов в логико-психологическом пространстве, которые простираются от языка к речи. Полюсами упомянутой композиции являются язык и речь, которые проявляются в диалектическом единстве противоположностей, а между ними располагаются пласты языковой деятельности, речевой деятельности и вербальной деятельности, которыми дополняется коммуникация. Таким образом, Э. Агаян выделил пять онтических уровней, и его лингвистическая философия по своей сути носит действительностный характер. Примечательно, что упомянутые пять онтических уровней гармонируют с трехслойной теорией языковой композиции Э. Атаяна. В этом можно убедиться на примере анализа фонетических единиц, выявленных Э. Агаяном, в которых фонематическая возможность структурно-абстрактной области реализуется лингвопсихологическим фонетическим представлением – звуком, а материально-речевая единица – фонемантом. В этой триаде звуки имеют меньше частных признаков, чем фонеманты. Звуки перенимают от фонемантов только свои общие и релевантные признаки, а от звуков к фонемам переходят только их отличительные черты. Эдуард Агаян при исследовании языка не связывает себя никакими методологическими ограничениями и по мере необходимости использует как традиционные, так и структурно-инновационные методы, которые находят философское обоснование в системе диалектической методологии. Именно в этом направлении он исследует язык и как лингворечевое целое и как аутентичность всех единиц его иерархических уровней. Все это позволяет говорить об Эдуарде Агаяне как об одном из крупнейших ученых в области как армянского языкознания, так и общей лингвистики.

Ключевые слова: фонемант, звук, фонема, языковая деятельность, речевая деятельность, вербальная деятельность, трёхмерные и пятимерные лингво-онтические уровни.

SUMMARY
AGHAYAN'S PHILOSOPHY OF LANGUAGE ASPECT PERCEPTION
(Historico-Typological Outline of Concepts)
Gyulzatyan Davit

Aghayan's standpoint is an original system of human language knowledge that provides the author's distinctive writing approach to linguistics. E. Aghayan's dialectical methodology for evaluating linguistic phenomena contributed to that view especially when revealing the poles of linguistic composition and the transition layers stretching from one language to speech within

logical and psychological space. The poles of the mentioned composition are the language and speech manifested by the dialectical opposite unity and the levels of linguistic activity, speech activity are among them, through which communication is carried out. Thus, there exist five ontic levels identified by E. Aghayan and his linguistic philosophy is essentially functional in nature. It is noteworthy that the mentioned five ontic levels are quite in harmony with the Three-layered theory of language composition suggested by linguist E. Atayan. It can be seen by the relations of phonetic units revealed by E. Aghayan, in which the phonematic possibility of the structural abstract domain is realized in psycholinguistic phonetic visualization, that is, with the production of the phoneme and the verbal-material unit. In this triad, the sounds have less private features than those which receive only general and relevant features from any real manifestation of the sound in speech – «fonemant» (հնչույրդ), whereas phonemes receive only distinctive features from the sounds. When examining the language, E. Aghayan had no methodological constraints, he used both traditional and structural-innovative methods in his research, which he summarized from a philosophical perspective, that is, dialectical methodology. This is how, he examined the subject matter as a linguistic whole and revealed the authenticity of all the units at its hierarchical levels.

With all this, E. Aghayan is considered to be one of the leading scholars in the sphere of General Linguistics.

Keywords: phonemant, sound, phoneme, language activity, verbal activity, speech act (activity), three-dimensional and five-dimensional linguo-ontic levels.

**ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴ ԱՆԳԼԱԽՈՍ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Գրիգորյան Ամալյա

Ավանդական բժշկության համալսարան
ավագ դասախոս
grigoryan-amalya@mail.ru

Լալայան Սեդա

ԵՊԲՀ, հայոց լեզվի ամբիոնի դասախոս
lalayan.seda@mail.ru

Լալայան Լիա

ԵՊԲՀ, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
lialalayan5@gmail.com

Մարդիյան Մերի

ԵՊԲՀ, հայոց լեզվի ամբիոնի ասիստենտ
mardian_21@hotmail.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-89

Բանալի բառեր. բայի եղանակներ, մատչելի ուսուցում, գծագրեր, աղյուսակներ, բանալի նախադասություններ:

Այս հոդվածում ցանկանում ենք ներկայացնել բայի եղանակների ուսուցման մեր հաջողված փորձը, որը կիրառում ենք անգլախոս ուսանողներին հայերեն սովորեցնելու ժամանակ: Բայի եղանակների ճիշտ և մատչելի ուսուցումը հնարավորություն է ընձեռում օտարազգի ուսանողներին կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ տիրապետել հայերեն բանավոր խոսքին:

Հայտնի բան է, որ բայի եղանակների օգնությամբ արտահայտվում է խոսողի տարբեր վերաբերմունքը գործողության և եղելության նկատմամբ: Միննույն գործողությունը խոսողը կարող է ներկայացնել իրական, ցանկալի, ենթադրական, հարկադրական և հրամայական ձևերով: Ըստ այդմ էլ՝ հայերենի բայական համակարգում լեզվաբաններն առանձնացրել են հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, ենթադրական կամ պայմանական, հարկադրական և հրամայական:

Բայի եղանակային ձևերի համակարգված, մատչելի ուսուցումն է այն գլխավոր առանցքը, որը նպաստում է օտարալեզու ուսանողներին հեշտ և արագ տիրապետել հայերենի բանավոր խոսքի հմտություններին:

Պարզ նախադասությունների չիմացությունն է առաջին դժվարությունը, որին առնչվում են օտարազգի ուսանողները Հայաստան գալուն պես: Դրանով էլ պայմանավոր-

ված՝ հայոց լեզվի ուսուցումը սկսում ենք ողջույնի ձևերի ուսուցմամբ, որից հետո սովորեցնում ենք խիստ անհրաժեշտ հինգ **բանալի նախադասությունները**. դրանք են՝

1. *Ես սիրում եմ*
2. *Ես ուզում եմ*
3. *Ես կարող եմ*
4. *Ես ունեմ....*
5. *Ես գիտեմ ...*

Այս նախադասությունները հետագայում համալրում ենք համագործաձական բայերով և գոյականներով:

Օրինակ՝ «Ես սիրում եմ:» նախադասությունը այն սկիզբն է, որին կարող ենք ավելացնել մի շարք բայեր՝ նվազել, երգել, խոսել, պարել և այլն: Վերոբերյալ բայերը, անհրաժեշտության դեպքում, ուսանողը կարող է օգտագործել «Ես ուզում եմ»՝ 2-րդ բանալի նախադասության մեջ:

Օր. *Ես ուզում եմ նվազել երգել, խոսել, պարել* և այլն: Միննույն բայերը կարող են գործածվել «Ես կարող եմ:»՝ 3-րդ բանալի նախադասության մեջ:

Օր. *Ես կարող եմ նվազել երգել, խոսել, պարել* և այլն:

«Ես գիտեմ:»՝ 5-րդ բանալի նախադասության մեջ նույնպես կարող ենք օգտագործել վերոբերյալ բայերը՝ նվազել, երգել, խոսել, պարել և այլն:

Արդյունքում ստացվում է, որ նույն բայերը կարող են օտագործվել 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ բանալի նախադասություններում:

1. Ես սիրում եմ երգել:

2. Ես ուզում եմ երգել: 3. Ես կարող եմ երգել: 5. Ես գիտեմ երգել: (Ես երգել գիտեմ)

1-ին, 2-րդ, 4-րդ բանալի նախադասություններում կարող ենք օգտագործել համագործաձական բառապաշարից միննույն գոյականը, որը հնարավորություն կընձեռի սովորողին, անհրաժեշտության դեպքում, կազմել երեք տիպի նախադասություն՝ կիրառելով միննույն գոյականը:

Օրինակ՝ 1. *Ես սիրում եմ մեքենա:*

2. *Ես ուզում եմ մեքենա: (Ես մեքենա եմ ուզում)*

4. *Ես ունեմ մեքենա: (Ես մեքենա ունեմ)*

Նախքան բայի եղանակային ձևերի ուսուցումը, նպատակահարմար ենք գտնում սովորողներին հիշեցնել օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերը անձնական դերանունների հետ միասին:

Ներկա ժամանակ	Անցյալ ժամանակ
<i>Ես եմ</i>	<i>Ես էի</i>
<i>Դու ես</i>	<i>Դու էիր</i>
<i>Նա է</i>	<i>Նա էր</i>
<i>Մենք ենք</i>	<i>Մենք էինք</i>
<i>Դուք եք</i>	<i>Դուք էիք</i>
<i>Նրանք են</i>	<i>Նրանք էին</i>

Բայի եղանակային ձևերի ուսուցման համար ունենք նախօրոք մշակված գծապատկեր, որը ցուցադրում ենք էկրանին: Ուզում ենք ձեզ ներկայացնել այդ գծապատկերը:



Փորձը ցույց է տվել, որ ուսուցումը գծապատկերով կազմակերպելը շատ մեծ արդյունք է ապահովում:

Հետո էկրանին առանձնացնում ենք ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ՝ ընգծելով այն փաստը, որ հայերենում ներկա և անցյալ անկատար ժամանակներն ունեն միևնույն վերջավորությունը (-ում): Տարբերությունը միայն օժանդակ բայերի կիրառության մեջ է, իրենց դրական և ժխտական ձևերով:

Օրինակ՝

Դրական ձև	Ժխտական ձև
<i>խոսում եմ</i> (ներկա անկատար)	<i>չեմ խոսում</i> (ներկա անկատար)
<i>խոսում էի</i> (անցյալ անկատար)	<i>չէի խոսում</i> (անցյալ անկատար)

Ուսանողներին տեղեկացնում ենք, որ հայերենի ներկա անկատարը համապատասխանում է անգլերենի ներկա շարունակականին կամ ներկա անորոշին: Դրանց իմաստային տարբերությունը ենթադրվում է համատեքստից:

Օրինակ՝ *Խոսում եմ անգլերեն: (հիմա)*

Խոսում եմ անգլերեն: (ընդհանրապես)

Անցյալ անկատարի ուսուցման ժամանակ սովորեցնում ենք նաև անցյալ ժամանակաձևերը ընդգծող մակբայներ՝ երեկ, նախորդ շաբաթ, անցյալում և այլն:

Այնուհետև էկրանին ցուցադրում ենք բայի ապառնի ժամանակի երկու ձևերը՝ ապառնին և անցյալի ապառնին՝ նշելով նրանց միակ տարբերությունը՝ կախված օժանդակ բայի համապատասխան ձևի գործածությունից: Այս դեպքում էլ տալիս ենք ապագան մատնանշող մակբայների տեսակներ՝ վաղը, հաջորդ շաբաթ, մյուս տարի և այլն:

Օրինակ՝

Դրական ձև	Ժխտական ձև
<i>Խոսելու եմ</i> (ապառնի)	<i>չեմ խոսելու</i> (ապառնի)
<i>Խոսելու էի</i> (անցյալ ապառնի)	<i>Չէի խոսելու</i> (անցյալ ապառնի)

Բայի վաղակատար ժամանակի ձևերը ուսուցանելու համար էկրանին ցուցադրում ենք վաղակատարի և անցյալ վաղակատարի ձևերը: Այստեղ ուսանողների ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ -ել-ով վերջացող բայերը վաղակատարում պահպանում են իրենց -ել վերջավորությունը, իսկ ալ-ով վերջացող բայերը ստանում են

-*ացել* վերջավորություն: Վաղակատար ձևերի ներկայի և անցյալի տարբերությունը պայմանավորվում է միայն օժանդակ բայի համապատասխան ձևերով (դրական և ժխտական):

Օրինակ՝

Դրական ձև	Ժխտական ձև
<i>Խոսելեմ</i> (վաղակատար)	<i>Չեմ խոսել</i> (վաղակատար)
<i>Կարդացել եմ</i> (վաղակատար)	<i>Չեմ կարդացել</i> (վաղակատար)
<i>Խոսել էի</i> (անցյալ վաղակատար)	<i>Չէի խոսել</i> (անցյալ վաղակատար)
<i>Կարդացել էի</i> (անցյալ վաղակատար)	<i>Չէի կարդացել</i> (անցյալ վաղակատար)

Բայի անցյալ կատարյալի ձևը ուսուցանելու ժամանակ բացատրվում է կառուցվածքային այն տարբերությունը, որ այստեղ դեմքի և թվի փոփոխությունը կատարվում է վերջավորությունների միջոցով: Բացատրվում է նաև, որ բայի անցյալ կատարյալ ժամանակն ունի վերջավորությունների երկու խումբ:

Օրինակ՝ Էկրանին ցուցադրվում է նախօրոք պատրաստված օրինակը:

հասկանալ, երգել:

1-ին խումբ		2-րդ խումբ	
<i>Երգեցի</i>	<i>Երգեցինք</i>	<i>Հասկացա</i>	<i>Հասկացանք</i>
<i>Երգեցիր</i>	<i>Երգեցիք</i>	<i>Հասկացար</i>	<i>Հասկացարք</i>
<i>Երգեց</i>	<i>Երգեցին</i>	<i>Հասկացավ</i>	<i>Հասկացան</i>

Ուսուցանվիս բացատրում ենք նաև, որ անցյալ կատարյալ ժամանակի ժխտական ձևը կազմվում է բայի առջևից չ ժխտական մասնիկի ավելացումով, քանի որ օժանդակ բայի ձևերը հանդես են գալիս որպես վերջավորություններ:

Օրինակ՝

Մահմանական եղանակի ժխտական ժամանակաձևերը

Ներկա	<i>չեմ խոսում</i>	<i>չեմ կարդում</i>
Անցյալ անկատար	<i>չէի խոսում</i>	<i>չէի կարդում</i>
Ապառնի	<i>չեմ խոսելու</i>	<i>չեմ կարդալու</i>
Անցյալ ապառնի	<i>չէի խոսելու</i>	<i>չէի կարդալու</i>
Վաղակատար	<i>չեմ խոսել</i>	<i>չեմ կարդացել</i>
Անցյալ վաղակատար	<i>չէի խոսել</i>	<i>չէի կարդացել</i>
Անցյալ կատարյալ	<i>չխոսեցի</i>	<i>չկարդացի</i>

Սովորողներին ուսուցանում ենք, որ անցյալ կատարյալի ժխտական ձևը կազմվում է անմիջապես բայի սկզբից չ մասնիկի ավելացումով՝ հիմնավորելով, որ դեմքի և թվի փոփոխությունները կատարվում են վերջավորությունների միջոցով:

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ

Սովորողներին բացատրում ենք, որ բայի ըղձական եղանակը ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, տենչանք, փափագ և ունի երկու ժամանակաձև՝ ապառնի և անցյալ:

Էկրանին ցուցադրում ենք բայի ըղձական եղանակի ձևերը՝ ընդգծելով վերջավորությունները, որոնք ըստ էության, օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերն են՝ բացառությամբ եզակի թվի 3-րդ դեքի -ի վերջավորության:

Օրինակ՝

<u>-ել</u> վերջավորություն		<u>-ալ</u> վերջավորություն	
Ապառնի	Անցյալ ապառնի	Ապառնի	Անցյալ ապառնի
<i>Խոսեմ</i>	<i>Խոսեի</i>	<i>Կարդամ</i>	<i>Կարդայի</i>
<i>Խոսես</i>	<i>Խոսեիր</i>	<i>Կարդաս</i>	<i>Կարդայիր</i>
<i>Խոսի</i>	<i>Խոսեր</i>	<i>Կարդա</i>	<i>Կարդար</i>
<i>Խոսենք</i>	<i>Խոսեինք</i>	<i>Կարդանք</i>	<i>Կարդայինք</i>
<i>Խոսեք</i>	<i>Խոսեիք</i>	<i>Կարդաք</i>	<i>Կարդայիք</i>
<i>Խոսեն</i>	<i>Խոսեին</i>	<i>Կարդան</i>	<i>Կարդային</i>

Այստեղ սովորողների ուշադրությունը հրավիրում ենք այն փաստին, որ օժանդակ բայերը այս եղանակաձևերում հանդես են գալիս վերջավորությունների ձևով, փոխվում է միայն նրանց գրությունը (*է* → *ե*):

Բացատրում ենք նաև, որ այս եղանակի ժխտական ձևերի դեպքում էլ նույնպես բայի սկզբից ավելանում է չ ժխտական մասնիկը:

Էկրանին ցուցադրում ենք նախօրոք պատրաստված օրինակը:

Օրինակ՝

ԷԼ վերջավորություն		ԱՎ վերջավորություն	
Ապառնի	Անցյալ ապառնի	Ապառնի	Անցյալ ապառնի
<i>ՉիտսենՉիտսեի</i>		<i>Չկարդամ Չկարդայի</i>	
<i>ՉիտսեսՉիտսեիր</i>		<i>Չկարդաս Չկարդայիր</i>	
<i>Չիտսի</i>	<i>Չիտսեր</i>	<i>Չկարդա</i>	<i>Չկարդար</i>
<i>Չիտսենք</i>	<i>Չիտսեինք</i>	<i>Չկարդանք</i>	<i>Չկարդայինք</i>
<i>Չիտսեք</i>	<i>Չիտսեիք</i>	<i>Չկարդաք</i>	<i>Չկարդայիք</i>
<i>Չիտսեն</i>	<i>Չիտսեին</i>	<i>Չկարդան</i>	<i>Չկարդային</i>

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ (ԵՆԹԱԴՐԱԿԱՆ) ԵՂԱՆԱԿԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ուսանողներին բացատրում ենք, որ ենթադրական եղանակը ցույց է տալիս պայմանով կամ ենթադրաբար կատարվող գործողություն, և որ այն ունի երկու ժամանակաձև՝ ենթադրական ապառնի, ենթադրական անցյալ:

Բացատրում ենք նաև, որ ենթադրական ապառնին ցույց է տալիս խոսելու պահից հետո պայմանով, կատարվող գործողություն, իսկ ենթադրական անցյալը՝ մի անցյալ ժամանակում պայմանով, կատարվող գործողություն:

Այստեղ ընդգծում ենք, որ ենթադրական եղանակի հիմքում ընկած է նույն ըղձական եղանակը իր ժամանակաձևերով միայն այն տարբերությամբ, որ դրանց սկզբից ավելանում է *կ* մասնիկը (եղանակիչը):

Էկրանին ցուցադրում ենք նախօրոք կազմված օրինակը:

Օրինակ՝

ԷԼ վերջավորություն		ԱՎ վերջավորություն	
Ապառնի	Անցյալ	Ապառնի	Անցյալ
<i>Կիտսեն</i>	<i>Կիտսեի</i>	<i>Կկարդամ</i>	<i>Կկարդայի</i>
<i>Կիտսես</i>	<i>Կիտսեիր</i>	<i>Կկարդաս</i>	<i>Կկարդայիր</i>
<i>Կիտսի</i>	<i>Կիտսեր</i>	<i>Կկարդա</i>	<i>Կկարդար</i>
<i>Կիտսենք</i>	<i>Կիտսեինք</i>	<i>Կկարդանք</i>	<i>Կկարդայինք</i>
<i>Կիտսեք</i>	<i>Կիտսեիք</i>	<i>Կկարդաք</i>	<i>Կկարդայիք</i>
<i>Կիտսեն</i>	<i>Կիտսեին</i>	<i>Կկարդան</i>	<i>Կկարդային</i>

Այս եղանակի ժխտական ձևի ուսուցումը մի փոքր դժվար է: Նախ էկրանին, հիշեցման կարգով, ցուցադրում ենք օժանդակ բայի հատկապես ներկայի ժխտական ձևերը (*չեմ, չես, չէ, չենք, չեք, չեն*): Այստեղ ընդգծում ենք, որ եզակի թվի 3-րդ դեմքի *չէ* ձևը, ժխտականում փոխարինվում է *չի*-ով: Ապա ցուցադրում ենք պայմանական եղանակի ժխտական ձևերը (ապառնի և անցյալ):

Օրինակ՝

էլ վերջավորություն		ալ վերջավորություն	
Ապառնի	Անցյալ ապառնի	Ապառնի	Անցյալ ապառնի
<i>Չեմ խոսի</i>	<i>Չէի խոսի</i>	<i>Չեմ կարդա</i>	<i>Չէի կարդա</i>
<i>Չես խոսի</i>	<i>Չէիր խոսի</i>	<i>Չես կարդա</i>	<i>Չէիր կարդա</i>
<i>Չի խոսի</i>	<i>Չէր խոսի</i>	<i>Չի կարդա</i>	<i>Չէր կարդա</i>
<i>Չենք խոսի</i>	<i>Չէինք խոսի</i>	<i>Չենք կարդա</i>	<i>Չէինք կարդա</i>
<i>Չեք խոսի</i>	<i>Չէիք խոսի</i>	<i>Չեք կարդա</i>	<i>Չէիք կարդա</i>
<i>Չեն խոսի</i>	<i>Չէին խոսի</i>	<i>Չեն կարդա</i>	<i>Չէին կարդա</i>

Սովորողների ուշադրությունը հրավիրում ենք նաև այն հանգամանքի վրա, որ ժխտական ապառնին և ժխտական անցյալ ապառնին տարբերվում են միայն օժանդակ բայի ներկայի և անցյալի ժխտական ձևերով, իսկ բայի եզակի թվի 3-րդ դեմքը երկու խոնարհման դեպքում էլ միշտ մնում է անփոփոխ (*խոսի, կարդա*):

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ

Այս եղանակի ուսուցումը սկսում ենք հարկադրական եղանակի իմաստի բացատրությամբ: Նշում ենք, որ այն ցույց է տալիս հարկադրաբար կատարվող գործողություն:

Նշում ենք, որ այս եղանակի հիմքում նույնպես, ինչպես եթադրականում, ընկած են ըղձական եղանակի ժամանակաձևերը, միայն այն տարբերությամբ, որ այստեղ գործածվում են *պիտի* կամ *պետք է* բառերը (եղանակիչները), որոնք դրվում են բայից առաջ և համարվում են այս եղանակի իմաստային ցուցիչները:

Օրինակ՝ *Պիտի՛ խոսեմ / կարդամ*

Պիտի՛ խոսեի / կարդայի

Ժխտական իմաստն արտահայտելու համար նշում ենք, որ այն կազմվում է «ցուցիչ» բառերի սկզբից չ մասնիկի ավելացմամբ:

Օրինակ՝

<u>ել</u> վերջավորություն			<u>ալ</u> վերջավորություն		
	Ապառնի	Անցյալ ապառնի		Ապառնի	Անցյալ ապառնի
Չպետք է (չպիտի)	խոսեմ	խոսեի	Չպետք է (չպիտի)	կարդամ	կարդայի
Չպետք է (չպիտի)	խոսես	խոսեիր	Չպետք է (չպիտի)	կարդաս	կարդայիր
Չպետք է (չպիտի)	խոսի	խոսեր	Չպետք է (չպիտի)	կարդա	կարդար
Չպետք է (չպիտի)	խոսենք	խոսեինք	Չպետք է (չպիտի)	կարդանք	կարդայինք
Չպետք է (չպիտի)	խոսեք	խոսեիք	Չպետք է (չպիտի)	կարդաք	կարդայիք
Չպետք է (չպիտի)	խոսեն	խոսեին	Չպետք է (չպիտի)	կարդան	կարդային

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ

Հրամայական եղանակի ուսուցումը սկսում ենք հրամայական եղանակի իմաստի բացատրությամբ, նշելով որ հրամայական եղանակը ցույց է տալիս խոսակցին ուղղված հրաման, կարգադրություն, խնդրանք, որի պատճառով էլ այն ունի միայն երկրորդ դեմք և ապառնի ժամանակ (քանի որ գործողությունը կատարվելու է հետո, ապագայում), երկու թիվ (եզակի, հոգնակի):

Այս հանգամանքը հիմնավորում ենք նրանով, որ մենք սովորաբար հրամայում ենք 2-րդ դեմքին, որը պետք է կատարի գործողությունը մեր հրամանից հետո՝ մի ապառնի ժամանակում:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ սովորաբար -ել վերջավորության բայերը հրամայական եղանակի եզակի թվում ստանում են են -իր վերջավորություն, իսկ հոգնակիում՝ -եք վերջավորություն, որոնք միշտ շեշտվում են: Իսկ -ալ վերջավորություն ունեցող բայերը եզակիում ստանում են ալ վերջավորություն, իսկ հոգնակիում՝ -ացեք վերջավորություն, որոնք նույնպես շեշտվում են:

Օրինակ՝

ԷԼ վերջավորություն			ԱԼ վերջավորություն		
Խոսել	խոսի՛ր	խոսե՛ք	կարդալ	կարդա՛	կարդացե՛ք
Երգել	Երգի՛ր	Երգե՛ք	խաղալ	Խաղա՛	Խաղացե՛ք

Ժխտականի ձևի կազմության համար նշում ենք, որ այն միշտ կազմվում է վի՛ արգելականով, որը միշտ շեշտվում է:

Օրինակ՝

ԷԼ վերջավորություն			ԱԼ վերջավորություն		
Խոսել	վի՛ խոսիր	վի՛ խոսեք	Կարդալ	վի՛ կարդա	վի՛ կարդացեք
Երգել	վի՛ երգիր	վի՛ երգեք	խաղալ	վի՛ խաղա	վի՛ խաղացեք

Հարկ ենք համարում նշել, որ վերոբերյալ շարադրանքում խոսքը միայն կանոնավոր բայերի ուսուցման մասին է:

Վերը նշված քերականական նյութի ուսուցման ողջ գործընթացին ակտիվ մասնակցում են նաև ուսանողները:

Եզրակացություն

Որպես եզրակացություն՝ նշենք, որ այս մեթոդը կիրառել ենք երկար տարիներ, այն ապացուցել է իր արդյունավետությունը, որով կարճ ժամանակահատվածում անգլախոս մարդկանց կարողանում ենք սովորեցնել ճիշտ և գրագետ խոսել:

Օգտագործված գրականություն

Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Հայոց լեզու: Ձևաբանություն, Երևան, 2008:

РЕЗЮМЕ
МЕТОДИКА ОБУЧЕНИЯ ВРЕМЕН АРМЯНСКИХ ГЛАГОЛОВ
ДЛЯ АНГЛОЯЗЫЧНЫХ СТУДЕНТОВ

Григорян Амалия,
Лалаян Седа, Лалаян Лия, Мардяян Мери

В этой статье мы хотели поделиться нашим успешным опытом преподавания времен глаголов, который мы используем при обучении англоязычных студентов армянскому языку. Правильное, систематическое и доступное обучение времен глаголов позволяет иностранным студентам легко освоить армянскую устную речь за короткий период времени.

Первая сложность, с которой сталкиваются иностранные студенты по прибытии в Армению, – это неумение строить простые предложения.

Благодаря этому, обучив приветственным выражениям, мы учим их пяти важным ключевым фразам.

Это:

1. Я люблю...
2. Я хочу...
3. Я могу...
4. У меня есть...
5. Я знаю...

В результате обучения по этому методу мы можем использовать одни и те же глаголы в 1-м, 2-м, 3-м и 5-м ключевых предложениях, а также одно и то же существительное в 1-м, 2-м и 4-м предложениях.

При изучении времен глаголов мы используем схемы и готовые таблицы. В процессе обучения мы сравниваем времена глаголов в армянском и английском языках.

Эффективность этого метода доказана годами.

Ключевые слова: времена глаголов, доступное обучение, диаграммы, таблицы, ключевые предложения.

SUMMARY
METHOD OF TEACHING ARMENIAN VERB MOODS FOR
ENGLISH SPEAKING STUDENTS

Grigoryan Amalya,
Lalayan Seda, Lalayan Lia, Mardiyan Mary

In the article, we aim to present our successful experience of teaching verb tenses to English speaking students, who are interested in learning Armenian. Our methodical and systematic approach to teaching verb tenses allows foreign students to easily master oral speech in Armenian in a short period of time.

The first difficulty foreign students often face upon arriving in Armenia is their inability to make simple sentences.

To overcome this, we start by teaching them five essential key phrases, which are as follows:

1. I love ...
2. I want to ...
3. I can ...
4. I have ...
5. I know ...

By applying this method, we can use the same verbs in the 1st, 2nd, 3rd and 5th key sentences, and we can use the same noun in the 1st, 2nd and 4th sentences.

While learning verb tenses, we use diagrams and tables, we also make comparison between the tenses of Armenian and English is also made.

The effectiveness of this method has been proven over the years.

Key words: moods of the verb, accessible learning, diagrams, tables, key sentences.

ԲԵՐԿՐԱՆՔ ԲԱՌԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Զաքարյան Հովհաննես

«Տաթև» գիտակրթական համալիր,
լեզվաբանության բաժանմունքի ղեկավար,
բանասիրական գիտությունների թեկնածու
hovzakaryan@yahoo.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-101

Բանալի բառեր. հնդեվրոպական նախալեզու, տեղանուն, արմատային տարբերակներ, ձայնդարձ, ածանց, աճական, ժողովրդական ստուգաբանություն

Նախաբան

Հոդվածը նվիրված է դեռևս ոսկեդարյան գրաբարից հայտնի և այժմ էլ գործածական, սակայն առ այսօր հավաստի մեկնություն չստացած **բերկրանք** բառի, այլև **Բերկրի** տեղանվան ստուգաբանությանը: Սրանք թվում են արտաքուստ թափանցիկ բաղադրյալ կազմություններ, որ կարծես ինքնրստինքյան վերլուծվում են հայտնի և հասկանալի բաղադրիչների: Այնուամենայնիվ դրանց մեկնաբանության փորձերը համոզիչ ու սպառիչ չեն և խիստ կասկածելի ու անընդունելի են համարվել Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի ստուգաբանական բառարաններում: Ստորև առաջարկվում է դրանց նոր մեկնություն, որը հիմնավորված է հունարանի զուգահեռով:

Հետազոտության ընթացքը և արդյունքները

Բերկրանք «բավականություն, ուրախություն, խինդ, հրճվանք, ցնծություն, հոգեկան մեծ հաճույք» բառը ածանցյալ է **բերկրել (բերկրիլ)** բայից, որ նշանակում է «ուրախանալ, հրճվել, ցնծալ, զվարճանալ, հոգեկան մեծ բավականություն ստանալ»: Վերջինս Հ. Աճառյանը համարել է հավաստի ստուգաբանություն չունեցող: Սակայն նկատել է, որ միայն առերևույթ («ըստ երևույթի») նման է **բարեկրիլ** «բարեկեցիկ լինել» բառին (որից՝ **բարեկիր** «ընտանի, բարեբարո»)՝ դա էլ ծագած համարելով (որպես պատճենում) *բարի-կրել*, «իբր թարգմ. յն. *εὖ-πρό-έω* ձևից»¹: Գ. Ջահուկյանը մերժել է Դյումեզիլի (հ.-ե. *bheru-, *bhru- «հուզվել, շարժվել» > **բարկ** արմատից) և Պոկոռնու (հ.-ե. *bhad-a- «լավ» արմատից) առաջարկները, բայց նոր բացատրություն չի տվել³: **Բերկրել (բերկրիլ)** բառը բացակայում է

¹ Ստ. Մալխասյանցի բառարանում այդ բառերի կապակցությամբ կարդում ենք. «**Բարեկիր**, ած. 1. Լավ տրամադրված, զվարթ: 2. Բարեբարո: 3. Ընտանի, հավատարիմ: **Բարեկրանք**, գ. բարեկեցություն, բարեհաջողություն: **Բարեկրել**, չբ. 1. Լավ դրության մեջ լինել, բարեկեցիկ՝ առողջ լինել: 2. կբ. Ուրիշից բարիք գտնել, բարեբարվել»: (Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945 [այսուհետ՝ Մալխ.], հ. 1, էջ 340):

² **Աճառյան Հր.**, *Հայերեն արմատական բառարան*, հ. 1-4, Ե., 1971-1979 (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 1, էջ 443:

³ **Ջահուկյան Գ.**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010 (այսուհետ՝ ՀՍԲ), էջ 126:

Հ. Մարտիրոսյանի ստուգաբանական բառարանում ⁴ և անգլերեն վիքիբառարանում (Wiktionary):

Կարծում ենք՝ ճշմարտությանը ամենից մոտ է Հ. Աճառյանը՝ առերևույթ նմանություն տեսնելով հունարեն εὐπαθέω ձևի հետ: Զարմանալի է, որ նա չի նկատել ոչ միայն առերևույթ, այլև բովանդակային նմանությունը հունարեն մեկ այլ՝ εὐφορέω «1. բարեհաջող վարվել, 2. լավ բերք տալ» բառի հետ: Դրա բաղադրիչներն են εὖ «լավ, բարի, բարիք» + φορέω «կրում եմ» (φέρω նույնարժեք բայի սաստկականը): Սրանց բառ առ բառ կրկնում են բերկրել բառի բաղադրիչները՝ բեր-/բար- «1. լավ, բարի, 2. պտուղ, բարիք»⁵ (=εὖ) + կր-/կիր- «տանել, կրել» (=φορέω):

Հուն. εὐφορέω-ի ածանցյալն է εὐφορία «1. բարեվարքություն, 2. բերրիություն, 3. հրճվանք» բառը: Սա՝ որպես տարածված փոխառություն, հայտնի է *էջֆորիա* ձևով, որը նաև հայերենում կիրառվում է «ցնծություն, լիակատար երջանկության զգացողություն» իմաստով՝ որպես *բերկրանք* բառի հոմանիշ: Լիակատար համապատասխանություն է առկա փաստորեն նաև *բերկրանք* և εὐφορία բառերի բաղադրիչների միջև:⁶

Բերկրել, բերկրանք և նույն հիմքով այլ կազմությունների բառակազմական կաղապարների կիրառումները կարելի է տեսնել *կիր* արմատով մի շարք բառերում՝ *համակրանք, հակակրանք, կարկրանք* «կարոտ», *բեռնակրություն, տաժանակրություն, շղթայակրություն, վարակակրություն, շեշտակրություն*, առանց ածանցի՝ *լուսակիր*⁷, *ջրկիր, ջահակիր, խաչակիր, դրոշակակիր, ականակիր, զինակիր, բեռնակիր, թվակիր, ախտակիր, վշտակիր, գաղափարակիր, իմաստակիր, դյուրակիր, ծանրակիր* և այլն: Այս կաղապարների կենսունակությունը և դրանցով սերված բառերի առատությունը հուշում են, որ *բերկրել* բայը հնագույն ծագում ունի, և չպետք է ենթադրել, թե դա պատճենում է հունարենից: Պարզապես հայերեն և հունարեն համարժեքների ինչպես բաղադրիչները, այնպես էլ բառակազմական կաղապարը հնդեվրոպական ծագում ունեն և երկու լեզուներում էլ բնիկ են:

Հայերենի դեպքում այդ բառերի և դրանց կաղապարի բնիկ լինելու վկայությունը պետք է համարել նաև նույնահիմք *Բերկրի (Բարկրի)* տեղանունը, որտեղ *-ի*-ն տեղանվանակերտ ածանց է (հմմտ. *Ողջի, Արածանի, Արգիճի, Վեղի, Քղի, Մեղրի, Գառնի, Անի, Փարպի, Կարբի, Մուղնի, Ակոռի, Արենի, Բջնի, Արգնի, Գեղի, Արդվի, Պտղնի* ևն): Արևմտյան Հայաստանում՝ Վանա լճից հյուսիս, այս անունով եղել են գավառ, դաշտավայր, գետ, ջրվեժ, քաղաք, լեռ, ձոր: Նաև համանուն գյուղեր են եղել տարբեր վայրերում: Ըստ ավանդության՝ դաշտավայրն այդ անունն է ստացել, քանի որ աչքի է ընկել իր արտակարգ

⁴ **Hrach K. Martirosyan**, Etymological dictionary of the Armenian inherited lexicon, «[Leiden Indo-European Etymological Dictionary Series](#), Volume: 8», Brill, 2008.

⁵ Հմմտ. εὐφορία-ի «բերրի» իմաստը:

⁶ Ի դեպ, թե՛ πάθεω, թե՛ φορέω հավասարապես ունեն «կրել, կիր» իմաստը (հմմտ. πάθος > պաթոս «կիրք»): Սակայն *բարեկրանք* և *բերկրանք* բառերը հայերենում տարբեր իմաստներ ունեն:

⁷ Այս լուսակիր բառը նորագույն պատճենում է ռուսերենում ստեղծված светофор բառից, որի երկրորդ բաղադրիչը հունարենից փոխառյալ φορ- «կիր» արմատն է (տե՛ս Викисловарь, светофор):

բերրիությամբ՝ բարեբերությամբ⁸: Նույն տեղում նաև նշված է, որ այդ անունն ըստ ավանդության՝ կապված է **բերրի** և **բերկրել** բառերի հետ: Ըստ Գ. Ջահուկյանի՝ նույն հիմքից է նաև **բերկրիճ** բուսանունը՝ *բերկր+իճ* (որտեղ *իճ*-ը վերջածանց է⁹) (ՀՄԲ, 126):

Ինչ վերաբերում է քննարկվող հիմքի **բեր** և **կ(ի)ր** բաղադրիչներին, ապա **բար-** «բարիք, պտուղ, բնավորություն, վարք, սովորություն» արմատը Հ. Աճառյանը չի ստուգաբանել: Գ. Ջահուկյանը կասկածով բխեցրել է *bhriio- (𐎠)՝ *bhr- հ.-ե. արմատից՝ առանց ճշտելու դրա իմաստը: Սակայն նա մի առիթով նշել է, որ *բարի, բարևք, բարք* բառերը *բերել* բայի հետ միասին սովորաբար հատկացվում են հ.-ե. *bher- «բերել, կրել» արմատին¹⁰, թեև Հ. Աճառյանը դրանք տարբերակել է: Կարծում ենք՝ սրանց նույնացումը ավելի համոզիչ մեկնաբանություն է, մանավանդ որ **բեր-** և **բար-** հիմքերով կազմությունները հաճախ հոմանիշներ են (*բերք – բար, բերք ու բարիք, բերրի – բարահիր, բերունակ – բարունակ, բերքառատ – բարելից, բերքաշատ – բարեպտուղ, բերքավետ – բարևետ, բերքատու – բարատու, բերքաթափ – բարաթափ*): Վերջապես, *Բերկրի* տեղանունն ունի նաև *Բարկրի* տարբերակը: **Բերկրել, բերկրանք** բառերում ևս երևում է **բար/բեր** կապը (նույնությունը): Այդ կապը փաստորեն ակամա ընդունել է նաև Հ. Աճառյանը՝ նմանեցնելով **բերկրանք**-ն ու **բարեկրանք**-ը, որոնց **բեր-** և **բար-** արմատների դիմաց հունարենում առկա է միևնույն *εὖ-* «լավ, բարի, բարիք» արմատը: Հետևաբար այս **բեր-**ը և **բար-**ը արմատային տարբերակներ են՝ ձայնդարձի տարբեր աստիճաններով:

Կիր «տանել, գործածել, ներգործվել, տոկալ» արմատը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀՄԲ, 2, 594): Գ. Ջահուկյանը, հետևելով Է. Աղայանին, բխեցրել է հ.-ե. *g^uēr-՝ *g^uer- «տանել, կրել; ծանր» նախաձևից, որից են նաև *կռիւ, երկան, կրոն, կիրք* բառերը (ՀՄԲ, 407): Նույն նախաձևի ձայնդարձային այլ տարբերակից են նաև *կարիք, կարօտ, կարևոր, կարշն «ուժ»* բառերը (Է.Աղայան, Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 84-85):¹¹

Ի դեպ, եվրոպական ազդեցության ոլորտի գրեթե բոլոր լեզուներում կիրառվում են հունարեն բառի փոխառությունները: Մի քանի լեզուներում կան սեփական կազմություններ, սակայն այլ իմաստային կառուցվածքով՝ զերմ. Glücksgefühl «երջանկության զգացում» կամ Hochgefühl «բարձր զգացում», անգլ. exhilarate «զերուրախություն», պարսկ. *սարխունջի* «զուլխը լավ վիճակ» և այլն (Wiktionary, euphoria):

⁸ **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 675:

⁹ Այս ածանցի համար հմմտ. *պատ-իճ, ուտ-իճ, լվ-իճ, կայ-իճ, կոպ-իճ, կավ-իճ, առ-իճ, Հառ-իճ, կտր-իճ, խառն-իճ «մանր մորեխ», հատ-իճ «հատ, կորիզ, բշտիկ»* և այլն:

¹⁰ **Ջահուկյան Գ.**, Հայերենի անհայտ ծագման բառարմատները, – «Պատմա-բանասիրական հանդես», 1990, հմ. 2, էջ 65:

¹¹ **Ջահուկյանը Գ.**, հետևելով Հ. Աճառյանին, իրանական փոխառություն է համարել **կար-** «ուժ, սաստկություն, զորություն» արմատը (ՀՄԲ, 390): Է. Աղայանը, սակայն, հիմնավորել է, որ դա համանուն մյուս արմատների իմաստային զարգացումներից մեկն է ընդամենը (**Աղայան Է.**, նույն տեղում):

Անդրադառնալով *Բերկրի* տեղանվանը՝ նշենք, որ այդ գավառում հայտնաբերված բիայնական սեպագիր արձանագրություններում՝ պատվիրված Մենուա արքայի կողմից, կա *Էրկուա* տեղանունը: Դա Հ. Կարագոզյանը ստուգաբանել է որպես *էր-կուա* «երջանիկ լեռ»¹², որտեղ **էր**-ը *էր-ջ-ան-իկ* բառի պարզական արմատն է (*էր-ջ-ան-իկ* բառում **ջ**-ն աճական է, **-ան**-ը և **-իկ**-ը՝ վերջածանցներ): Եթե *Էրկուա*-ն ճիշտ է ընթերցված և ստուգաբանված, ապա դա կարելի է նույնացնել *Բերկրի* տեղանվան հետ հետևյալ տրամաբանությամբ: Ինչպես տեսանք, *Բերկրի*-ի մեջ կարելի է տեսնել «երջանիկ» իմաստային բաղադրիչը: Կա նաև ձևային նմանություն *Էրկուա* և *Բերկրի* բառերի միջև: Այս իմաստային և ձևային մասնակի նմանությունները կարող էին հիմք դառնալ ինչ-որ ժամանակ արդեն մթագնած *Էրկուա* անունը ժողովրդական ստուգաբանությամբ *Բերկրի*-ով փոխարինելու համար, մանավանդ որ Էրկուա լեռան ստորոտում տարածված դաշտավայրը արտակարգ բերրի էր:

Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ **բերկրանք** բառը բարդ ածանցավոր է, և նրա ստուգաբանությունն է՝ **բեր-կ(ի)ր**-անք <*bher- «բերել; բարիք» + *gʷēr- «տանել, կրել; ծանր», որտեղ **-անք**-ը հետնախալեզվյան բնիկ հայերեն բաղադրյալ ածանց է՝ **-ան**- (բայափոխային կազմիչ) + **ք** (հոգնակերտ) կառուցվածքով¹³: **Բերկրանք** բառի հին հունարեն համարժեքն է՝ *εὐφορία* < *εὐ*- «լավ, բարի; պտուղ, բարիք» + *φορ* «կիր» + *-ία* «անք»: Այս հայերեն և հունարեն հոմանիշ բառերի ինչպես բաղադրիչները, այնպես էլ բառակազմական կաղապարը հնդեվրոպական ծագում ունեն և երկու լեզուներում էլ բնիկ են:

Այս ստուգաբանությունը հիմք է տալիս նաև ճշտելու հայերենում որպես հոգեբանական եզրույթ կիրառվող *էջորիա* «գերագույն հաճույք, ուրախության հուզական վիճակ» օտարաբանության հայերեն համարժեքը, որ փաստորեն *բերկրանք*-ն է:

Օգտագործված գրականության ցանկ

Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Ե., 1971- 1979:

Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հհ. 1-4, Ե., 1944-1945:

Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010:

Ջահուկյան Գ., Հայերենի անհայտ ծագման բառարմատները, – «Պատմա-բանասիրական հանդես», 1990, հմ. 2, էջ 62-77:

Ջահուկյան Գ., Հին հայերենի վերջածանցների ծագումը. – «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Ե., 1998, էջ 5-48:

¹² Կարագոզյան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. 1, գ. 1, Ե., «Մագաղաթ» հրատ., 1998, էջ 265:

¹³ Ջահուկյան Գ., Հին հայերենի վերջածանցների ծագումը. – «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ 2, Ե., 1998, էջ 14-15:

Աղայան Է., Բառարձանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974:
Հակոբյան Թ., Մելիք-Բախչյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների
տեղանունների բառարան, հ. 1-5, Ե., 1986-2001:
Շարագոյոզյան Հ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. 1, Ե., 1998:
Martirosyan H., Etymological dictionary of the Armenian inherited lexicon, «Leiden Indo-European
Etymological Dictionary Series, Volume: 8», Brill, 2008.
Wiktionary / <https://en.wiktionary.org/wiki>
Викисловарь / <https://ru.wiktionary.org/wiki>

РЕЗЮМЕ
ЭТИМОЛОГИЯ АРМЯНСКОГО СЛОВА ԲԵՐԿՐԱՆՔ.
Закарян Оганес

Армянское слово **բերկրանք**, обозначающее «эйфория», до сих пор не имеет достоверной этимологии. В настоящей статье на основе фонетического, словообразовательного и семантического анализов предлагается его новая этимология, согласно которой данное слово является исконно армянским словом индоевропейского происхождения. Эта этимология: **բեր-կ(հ)ր-անք** <*bher- «принести; благо» + *g^uēr- «нести; тяжелый»: Его древнегреческий эквивалент – εὐφορία < εὐ- «хороший, добрый; фрукты; благо» + φορ «нести» + -ία «-ание»: Как компоненты, так и словообразовательная модель этих армянских и греческих синонимов имеют индоевропейское происхождение.

Ключевые слова: праиндоевропейский язык, топоним, корневые варианты, чередование, аффикс, детерминатив, народная этимология.

SUMMARY
ETYMOLOGY OF THE ARMENIAN WORD ԲԵՐԿՐԱՆՔ.
Zakaryan Hovhannes

The word **բերկրանք** meaning «*euphoria*» still has not a reliable etymology. The article, dwelling upon phonetic, morphemic and semantic analyses, puts forward new etymology for it as native Armenian word of I. E. origin. This etymology is: **բեր-կ(հ)ր-անք** <*bher- «to bring; good» + *g^uēr- «carry; heavy»: Its ancient Greek equivalent is: εὐφορία < εὐ- «kind; fruit; good» + φορ «carry» + -ία «-ia»: Both the components and the word-formation pattern of these Armenian and Greek synonyms are of Indo-European origin.

Key words: Proto-Indo-European, toponym, root variants, vowel gradation, affix, determinative, folk etymology.

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԸ Է.ԱՂԱՅԱՆԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Թելյան Լեոնիդ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ գիտաշխատող
telyanleonid@ysu.am

DOI: 10.54412/2953822X-2023.1-106

Բանալի բառեր. նախադասություն, ասություն, հնչերանգ, ստորոգում, միակազմ նախադասություն, հաղորդակցային իրադրություն, ներառյալ ենթակա, արտաձյալ ենթակա:

Արդի հայերենի շարահյուսության հիմնական միավորը՝ նախադասությունը, Է. Աղայանի գիտական ժառանգության մեջ չէր կարող տեսական պատշաճ մեկնաբանության ու գնահատության չարժանանալ: Դրանք առկա են նախ և առաջ «Լեզվաբանության ներածություն» (հետագայում՝ «Լեզվաբանության հիմունքներ») կոթողային աշխատության համապատասխան բաժնում: Նախադասության՝ որպես լեզվական միավորի սահմանման և տեսական գնահատության հարցերին, սակայն, Է. Աղայանն անդրադարձել է նաև այլ առիթներով, մասնավորապես բանավիճային բնույթի հրապարակումներում:

Սույն հոդվածի նպատակն է, նշված աշխատանքների վրա հիմնվելով, ներկայացնել մեծանուն գիտնականի տեսական ըմբռնումները շարահյուսության այդ առանցքային խնդրի վերաբերյալ:

Նախադասության քննության տեսական հարցերի վերաբերյալ այս կամ այն դիրքորոշումը անհրաժեշտաբար պետք է հիմնված լինի դրանց առնչվող լեզվաբանական որոշ կարգերի ու հասկացությունների նկատմամբ ուսումնասիրողի սկզբունքային պատկերացումների վրա: Դրանցից հիմնականներն են **ստորոգումը, հնչերանգը, շարահյուսությունը, նախադասության անդամների կազմը, նախադասության տեսակների առանձնացումը և այլն:** Այս հասկացությունների բնութագրումներն էլ կարող են ամբողջական պատկերացում տալ նախադասության աղայանական մեկնաբանության վերաբերյալ:

«Լեզվաբանության հիմունքներում» Է. Աղայանը բերում է նախադասության՝ լեզվաբանության մեջ առավել ընդունված բնորոշումներ, և, ըստ էության, դրանցից առավել արժանահավատ է համարվում այն, ըստ որի նախադասության էությունն է համարվում

ստորոգումը¹⁴: Սկզբունքային այս արձանագրումից հետո անմիջապես մատնանշվում է նախադասության և տրամաբանական դատողության տարբերությունը. տրամաբանության համար ամեն կարգի նախադասություն (ստորոգում ունեցող միավոր) դատողություն չէ, մինչդեռ լեզվաբանության համար ստորոգումով օժտված ամեն կարգի միավոր նախադասություն է¹⁵: Տարբերակվում է տրամաբանական ստորոգումը քերականականից. վերջինս «հատկանիշի վերագրումն է առարկային, որ իրացվում է քերականական արտահայտության միջոցներով՝ արտահայտելով նաև ժամանակային և վերաբերմունքային հարաբերությունները»¹⁶: Այդ հարաբերությունների արտահայտման ամենից ընդհանրական միջոցները բայական եղանակի և ժամանակի քերականական կարգերն են, սակայն քերականական արտահայտության մյուս միջոցները ևս կարող են ստանձնել ստորոգման դրսևորման, այսինքն՝ նախադասության ձևավորման գործառույթը (ինչպես, օրինակ, շարահատությունն ու հնչերանգը ռուսերենում): Լեզվաբանության դասագրքում Աղայանն իհարկե ներկայացնում է նախադասության ըմբռնման, դրա տեսակների առանձնացման ընդհանուր լեզվաբանական հայեցակետերը: Ինչ վերաբերում է հայերենի նախադասությանը, Աղայանը նրա ձևավորման պարտադիր բաղադրիչ է համարում ժամանակի և եղանակի քերականական կարգերով օժտված միավորը՝ դիմավոր բայը: Այս մոտեցումը, ինչպես հայտնի է, մեր շարահյուսագիտության մեջ հստակորեն ձևակերպել է դեռևս Մ. Աբեղյանը. «Ստորոգումն արտահայտվում է միայն մի առանձին խմբի կամ տեսակի բառերով, որոնք կոչվում են բայ: Խոսք (իմա՝ նախադասություն-Լ.Թ.) կազմում են ուրեմն միայն բայերը»¹⁷:

Եթե նկատի առնենք, որ Աբեղյանի համակարգում բայ կոչվում են միայն դիմավոր բայերը, ապա բնական պետք է համարել, որ նրա տեսադաշտից դուրս են մնում (որպես առանձին «խոսքեր» չեն քննվում) շարահյուսական այն միավորները, որոնք իրենց կազմում դիմավոր բայ չունեն, բայց իրենց հաղորդակցային արժեքով հավասարվում են նախադասությանը. հետագա շարահյուսական աշխատանքներում դրանք հիմնականում այդ տերմինով էլ կոչվում են՝ միակազմ **անդեմ նախադասություններ**: Սակայն շարահյուսագիտության մեջ այս կարգի միավորների համար կիրառվող **նախադասություն** տերմինն արդեն իսկ իր մեջ հակասություն է պարունակում, քանի որ սրանք զուրկ են դիմավոր բայից, հետևաբար և ստորոգումից, ինչն էլ նախադասության տարբերակիչ հատկանիշն է: Այս հակասությունն ինչ-որ կերպ լուծելու համար նախադասության սահմանման մեջ ներմուծվում է ևս մի հասկացություն՝ ավարտական **հնչերանգը**, որը վերևում նշված կարգի շարահյուսական միավորների դեպքում, ըստ Մ. Աբրահամյանի, օրինակ, «պայմանավորում

¹⁴ Հարկ է նշել, որ «Լեզվաբանության ներածության» առաջին հրատարակություններում որպես նախադասության բովանդակային հիմնական հատկանիշ նշվում էր նաև «ամփոփ միտք արտահայտելը»: (Տե՛ս «Լեզվաբանության ներածություն», Ե., Հայպետուսմանկհրատ, 1963, էջ 420:

¹⁵ Տե՛ս է. **Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 546:

¹⁶ Նույն տեղում, էջ 547:

¹⁷ **Մ. Աբեղյան**, Երկեր, 2, Ե., 2016, էջ 294:

է ոչ միայն մտքի ավարտվածություն, այլև անուղղակի կերպով՝ ստորոգում»¹⁸: Հնչերանգին ստորոգման գործառույթ հատկացնելու տեսակետն արտահայտվել է նաև շարահյուսագիտական այլ աշխատանքներում¹⁹:

Հարցի այսպիսի լուծումը Է. Աղայանը չի ընդունում և հարկ է համարում «Լեզվաբանության հիմունքներում» արտահայտած իր սկզբունքային մոտեցումներն առավել հանգամանորեն ներկայացնել «Նախադասություն և ասություն» վերնագրով բանավիճային հոդվածում²⁰: Առիթն, ըստ երևույթին, ստորոգման՝ որպես նախադասության սահմանման համար հանգուցային հասկացության, և հնչերանգի՝ որպես ստորոգման արտահայտման քերականական միջոցի գնահատության շուրջ շարահյուսագիտության մեջ արտահայտված տարամիտվող տեսակետներն էին: Եթե այլ լեզուներում հնչերանգը, բառերի դասավորությունը կամ քերականական արտահայտության մյուս միջոցները կարող են ստորոգում իրականացնել և նախադասություն ձևավորել, ապա հայերենում այդ դերը վերապահված է միայն և միայն դիմավոր բային. «Հայերենում հնչերանգը և շարահյուսությունը ո՛չ առանձին-առանձին, ո՛չ էլ միասնաբար ստորոգում չեն արտահայտում. միակ դեպքը, երբ հնչերանգը կարծես թե փոխարինում է ստորոգմանը, կրճատման ժամանակ օգտագործվող կրճատական հնչերանգն է (գրավոր կերպով արտահայտվում է բութ նշանով), որը իրականում ոչ թե փոխարինում է ստորոգյալին կամ ստորոգում կատարում, այլ միայն ցույց է տալիս, որ ստորոգյալը կամ նրա մի մասը կրճատվել է (բաց է թողնվել՝ նախընթաց հաստատված գործածված լինելու պատճառով, ուստի և կրկնությունից խուսափելու նպատակով)»²¹:

Նշված հոդվածում բավական ընդարձակ հատված է նվիրված հնչերանգին՝ որպես լեզվի բանավոր դրսևորումը բնութագրող կարևորագույն հատկանիշի: «Հնչերանգը բարդ համալիրն է առոգանական տարրերի, որոնց թվին են պատկանում մեղեդիականությունը, ռիթմը, արագությունը, տեմբրը և տրամաբանական շեշտը, որոնք նախադասության կազմում ծառայում են ինչպես տարբեր շարահյուսական իմաստների և կարգերի, այնպես էլ արտահայտչական ու զգացական երանգավորումների արտահայտությանը»²²: Նախադասություններն ու նրանց տարբեր տեսակներն արտաբերվում են տարբեր հնչերանգներով՝ միջարկային, ավարտական, երկանդամ, հարցական, հրամայական, բացականչական, հորդորական (հրավիրական), եղանակավորող, անավարտ, չեզոք, թվարկման, մեկնական, կրճատական: Բոլոր կարգի նախադասություններն էլ արտաբերվում են որոշակի առոգանությամբ կամ հնչերանգով. պատմողական նախադասություններն օժտված են չեզոք կամ աննշույթ հնչերանգով՝ ի տարբերություն նշույթավոր՝ հարցական, հրամայական, հորդորական, բացականչական հնչերանգներով արտաբերվող նախադասությունների: Այստեղ,

¹⁸ Մ. Գ. Աբրահամյան և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Ե, 1976, էջ 128:

¹⁹ Տե՛ս, օրինակ, Մ. Գյուլբուրդյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե. 1988, էջ 60, Ա. Պասյոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 2003, էջ 24 և այլն:

²⁰ Է՛ Աղայան, Նախադասություն և ասություն, Բանբեր Երևանի համալսարանի, 1987, հ.1, էջ 121-138.

²¹ Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, էջ 547-548:

²² Է. Աղայան, Նախադասություն և ասություն, էջ 125:

սակայն, Է.Ադայանն իր համար սկզբունքային արձանագրում է անում. հնչերանգը, ըստ նրա, հատուկ է ոչ միայն նախադասությանը, այլև լեզվական ցանկացած միավորի, որոնցից ոչ մեկը (ներառյալ առանձին հնչյունները) «չի կարող մյուսներից անկախ, առանձին արտասանվել առանց հնչերանգային ավարտվածության և դադարի»²³: (Իբրև օրինակ են բերվում, ասենք, գրատախտակին գրված երկու հնչյունաշարքեր՝ Ա: Բ: Գ: Դ: Ե: Չ: Է: Ը: Թ: Ժ: և Ա, Բ, Գ, Դ, Ե, Չ, Է, Ը, Թ, Ժ, որոնցից առաջինի յուրաքանչյուր տառն աշակերտը կկարդա իր առանձին ավարտական հնչերանգով, իսկ երկրորդի տառերը՝ միավորիչ հնչերանգով՝ միայն վերջում տալով ավարտական հնչերանգ և դադար): Եզրակացությունը պարզ է. «Քանի որ լեզվական յուրաքանչյուր միավորի առանձին, ավարտված արտասանությունը իրենից ներկայացնում է հնչերանգային մեկ ամբողջություն, որին անմիջապես հաջորդում է ավարտական դադարը, այսինքն՝ արտասանության ավարտումն ու ձայնի դադարումը, ապա բոլորովին էլ տեղին չէ նախադասության սահմանման մեջ մտցնել հնչերանգային ավարտվածությունը և դա համարել նախադասության հատկանիշ, որպեսզի դրանից հետո նախադասություն համարենք հետևյալը՝ **Երևան: Աստաֆյան փողոց: Գրո՛հ դեպի թշնամու դիրքերը**»²⁴:

Այս առումով հետաքրքիր է Ադայանի անդրադարձը հնչերանգի շարահյուսական գործառույթի գնահատման հարցում իր և Գ. Ջահուկյանի մոտեցումների որոշակի հակադրությանը: «Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները» հոդվածում Ջահուկյանը խնդրո առարկան քննում է ավելի լայն՝ ընդհանուր լեզվաբանական դիտանկյունով և ստորոգման կարգը, ի վերջո, հատուկ է համարում նախադասության ավանդաբար ընդունվող բոլոր տեսակներին՝ երկկազմ, միակազմ, դիմավոր և անդեմ: Ջահուկյանն այս հոդվածում ավանդական մոտեցման թերությունների շարքում նշում է արտահայտության և բովանդակության պլանները հստակորեն չտարբերակելու հանգամանքը, մասնավորապես այն, որ «ստորոգման կողքին որպես գրեթե հավասարազոր հատկանիշ դրվում է հնչերանգը, որը բառիս բուն իմաստով պատկանում է արտահայտության պլանին»²⁵: Հնչերանգն ըստ էության որպես առոգանական ֆոն ուղեկցում է բոլոր կարգի նախադասություններին: Այնուհետև նա առաջարկում է ստորոգման ուրույն մեկնաբանություն: Ստորոգումն, ըստ Ջահուկյանի, քերականական (շարահյուսական) կարգ է՝ իմաստով և արտահայտության միջոցներով միմյանց հակադրվող երեք եզրերով (քերականություններով)՝ «1) ընկալլական կամ կրական, որ ներկայացված է գրո ձևությամբ և արտահայտվում է հնչերանգով՝ «Հրդե՛հ», «Երևան: Աստաֆյան փողոց» և այլն. 2) վերագրական, որ արտահայտվում է էական բայով՝ «Խավար է», «Մարդը մահկանացու է», «Հակոբն ուսանող է». 3) եղելական, որ արտահայտ-

²³ Նույն տեղում, էջ 128:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Գ. Ջահուկյան, Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները, Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1985, հ. 1, էջ 30:

վում է բայական վերջավորություններով և սրանց փոխարինող վերլուծական ձևերով՝ «Մթնեց», «Լուսանում է», «Մարդը քնեց», «Հակոբը սովորում է»²⁶:

Ըստ արժանվույն գնահատելով վերլուծության՝ ավանդականից տարբերվող մեթոդը՝ Աղայանն այնուամենայնիվ նշում է, թե Ջահուկյանը որոշակիորեն հակասում է իր իսկ բնորոշմանը, երբ հնչերանգը օժանդակ բայի և բայական վերջավորությունների հետ միասին համարում է ստորոգման արտահայտման միջոց: (Ի սեր ճշմարտության, կարծում ենք, անհրաժեշտ է նշել, որ Ջահուկյանը հնչերանգը ներկայացնում է ոչ թե որպես ստորոգմանը համարժեք և լիովին նրան փոխարինող, այլ ընդամենը այդ քերականական կարգի եզրերից մեկի արտահայտության պլանը ձևավորող միջոց):

Նախադասության՝ որպես քերականական միավորի սահմանման հարցում Աղայանը հավատարիմ է մնում ստորոգման այսպես կոչված նեղ ըմբռնմանը: Իսկ ինչպե՞ս են բնութագրվում ավանդաբար միակազմ նախադասություն անվանվող միավորները: Դիմավոր (անենթակա) միակազմ նախադասությունները (Աղայանը կոչում է «բայական միադիմի անենթակա»), Աղայանի կարծիքով, «ստորոգում ունեցող կամ ավելի ճիշտ, միայն ստորոգումով ներկայացված» **նախադասություններ** են, որոնց «ստորոգյալի բայական իմաստի մեջ ներառված է նաև ենթական՝ **լուսանալ=լույսը բացվել** կամ **լույս դառնալ, երեկոյանալ =երեկո դառնալ, առավոտանալ=առավոտ դառնալ, առավոտը բացվել** և այլն»²⁷: (Ի դեպ, այս տիպի նախադասություններն իրենց ենթատեսակներով հանգամանորեն ներկայացված են նաև Աբեղյանի կողմից ²⁸): Ինչ վերաբերում է ավանդաբար անդեմ անվանական և անդեմ բայական միակազմ անվանվող միավորներին, ապա, ինչպես նշում է Է.Աղայանը, դրանք նախադասություն անվանելու միակ հիմնավորումն այն է, որ ունեն հնչերանգ, ինչն էլ իբր ստորոգման դեր է կատարում: «Նշանակում է,-գրում է նա,-եթե մենք կարդում ենք, ասենք, գրատախտակին գրված՝ **Մարդ, Անտառ, Գետակ, Աշտարակ, Լռություն** բառերը, դրանք նախադասություններ չեն, իսկ եթե խոսքային իրադրության մեջ ասում ենք **Մա՛րդ, Անտա՛ռ, Գետա՛կ, Աշտարա՛կ, Լռություն՛ն**», դրանք նախադասություններ են, որովհետև հնչերանգ ունեն, և այդ հնչերանգն էլ հենց կատարում է ստորոգման դեր: Բայց սա լեզվաբանական բնութագրություն չէ: Թե՛ առաջինները, և թե՛ երկրորդները **ունեն հնչերանգ**, առաջինները՝ չեզոք, երկրորդները՝ բացականչական: Ուրեմն պետք է առաջինները ևս նախադասություններ համարենք»²⁹: Պարզ է, որ երկրորդները նախադասություններ համարելու իրական պատճառը ոչ թե հնչերանգն է, այլ այն, որ դրանք հանդես են գալիս **հաղորդակցական իրադրության** մեջ: «Այս էլ իր հերթին նշանակում է, թե հնչերանգից ավելի կարևոր է հաղորդակցական իրադրությունը, որը նույն հնչերանգով բառը դարձնում է նախադասություն: Բայց հաղորդակցական իրադրության մեջ կարող է որպես նախադա-

²⁶ Նույն տեղում, էջ 32:

²⁷ Է.Աղայան, նշված հոդվածը, էջ 132:

²⁸ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ. էջ 302-303:

²⁹ Է. Աղայան, նշվ. հոդվ., էջ 130:

սություն հանդես գալ, այսինքն՝ միտք արտահայտել ոչ միայն բառը կամ բառակապակցությունը, այլև գլխի տարուբերումը, ձեռքի մի շարժումը, մեկ աչքի ճպումը և այլն, և այլն: Սրանք էլ են նախադասություններ: Բնականաբար՝ ո՛չ»³⁰: Եթե լեզվաբանի նպատակը նախադասությունն իբրև քերականության միավոր սահմանելն է, ապա նա չպետք է շփոթի քերականագիտությունը ո՛չ հաղորդակցման տեսության, ո՛չ իրազեկման տեսության և ո՛չ էլ տեքստի լեզվաբանության հետ: Այս ելակետով էլ անդեմ (անվանական և բայական) հաղորդակցային միավորների համար **նախադասություն** տերմինը չպիտի գործածել, քանի որ դրանք չունեն նախադասությունը քերականական այլ միավորներից տարբերող հատկանիշը՝ ստորոգումը: Աղայանն այս դեպքում կարևոր է համարում լեզվական տերմինի և նրա բովանդակության ճշգրիտ համապատասխանության հանգամանքը և այդ միավորներն անվանելու համար նոր տերմին է առաջարկում՝ **ասություն**: Այստեղ կարևոր է արձանագրել, որ Աղայանի նպատակը ոչ թե պարզ անվանափոխությունն է, այլ շարահյուսական միավորը տրամաբանորեն անհակասական, խաչվող հասկացությունների ստեղծած հակասությունից զերծ սահմանումով և համապատասխան տերմինով ներկայացնելը: Ասությունը նա սահմանում է հետևյալ ձևով. «**Խոսքային (հաղորդակցական) իրադրության մեջ հանդես եկող ամեն մի բառ, բառակապակցություն, բառակապակցությունների միավորում ասություն է, եթե չունի ստորոգյալ: Օրինակ՝ Երևան: Աստաֆյան փողոց:**»³¹:

«Ասություն» տերմինով անվանվող այս միավորները թեև քերականական տեսակետից դուրս են նախադասության սահմաններից, հաղորդակցային առումով երբեմն նույնիսկ ավելի հարուստ բովանդակություն կարող են արտահայտել, քան նախադասությունը:

Նախադասության այսպիսի ըմբռնումը բնականաբար ենթադրում է հայերենի բոլոր նախադասությունների համար երկկազմ կառուցվածք, և այս հարցում Է. Աղայանի և Մ. Աբեղյանի մոտեցումները գրեթե չեն տարբերվում: Աղայանը համաձայն չէ այն լեզվաբաններին, որոնք Աբեղյանի այսպես կոչված բայակենտրոն տեսությունն այնպես են ներկայացնում, որ իբր Աբեղյանը նախադասության միակ գլխավոր անդամը համարում է բայը (իմա՛ դիմավոր բայը), մնացած անդամները, այդ թվում ենթական, համարում է բայի լրացումներ (կամ լրացման լրացումներ): Է. Աղայանի մեկնաբանությամբ՝ Աբեղյանը ենթական բայի լրացում չի համարում: Քանի որ, ըստ Աբեղյանի, բայը մենակ խոսք է կազմում, ուստի բայի դիմավոր (եղանակային) ձևն արդեն իսկ արտահայտում է ն՛ ստորոգյալը, և՛ ենթական, այսինքն՝ բայի դեմքի մեջ արտահայտված է ենթական, և միայն առանձին բառով (դերանվամբ, գոյականով կամ գոյականաբար գործածված բառով) արտահայտված ենթական է, որ Աբեղյանը համարում է բայական դեմքի (և թվի) լրացումը: Տեսական այս դրույթի վրա հիմնվելով՝ Է. Աղայանը առաջարկում է նախադասություններն ըստ գլխավոր անդամների կազմի բաժանել երկու խմբի՝ **ներառյալ ենթակայով** և **արտառյալ**

³⁰ Ն. տ., էջ 131:

³¹ Ն. տ., էջ 132:

(կամ **բացահայտող**) **ենթակայով** նախադասությունների: Ներառյալ ենթակայով են առաջին և երկրորդ դեմքի ստորոգյալներով արտահայտված նախադասությունները (օր.՝ Եկա, տեսա, հաղթեցի), իսկ եթե դրանց ենթական խոսքում առկա է, ապա այն պետք է համարվի **հավելուրդական**՝ պայմանավորված ոճական որևէ նպատակադրումով՝ տրամաբանական ընդգծում, զորացում, հակադրություն այլ դեմքի հետ և այլն: Երրորդ դեմքի ստորոգյալով նախադասության ենթական նույնպես կարող է լինել հավելուրդական, եթե արտահայտված է անձնական դերանվամբ, իսկ այլ խոսքի մասով արտահայտված լինելու դեպքում կկոչվի արտաձյալ կամ բացահայտող:

Լեզվաբանը հավատարիմ է վերևում ներկայացված տեսական հիմնադրույթների վրա կառուցված համակարգին և այն առավել մանրամասն հիմնավորումներով ներկայացրել է ևս մեկ բանավիճային հոդվածում, որն ուղղված է Ռ. Իշխանյանի «Դիմավոր բայը որպես շարահյուսական միավոր»³² հոդվածի դեմ և կրում է «Նախադասության մասին»³³ վերնագիրը: Չխորանալով այս բավական ուշագրավ լեզվաբանական բանավեճի մանրամասների մեջ և կրկնություններից խուսափելու նպատակով նշենք միայն, որ Իշխանյանի հոդվածում զարգացվում է նախադասության միայն մեկ՝ դիմավոր բայով արտահայտված քերականական կենտրոն ունենալու գաղափարը, որով հեղինակը, յուրովի մեկնաբանելով Աբեղյանի տեսությունը, մի շարք հարցերում հակադրվում է ոչ միայն մեր շարահյուսագիտության մեջ ընդունված ավանդույթին, այլև իր սեփական՝ անցյալում արտահայտած տեսակետներին: Բնական է, որ մեր շարահյուսության ուսմունքի արմատական վերափոխմանը միտված այս մոտեցումը անմիջապես արժանացել է Աղայանի բավականաչափ (տեղ-տեղ էլ՝ չափազանց) կոշտ արձագանքին:

Վերադառնալով նախադասությունների և ասությունների տարբերակման խնդրին, հարկ ենք համարում կրկին ընդգծել, որ Է.Աղայանը բնավ չի նսեմացնում վերջինների դերը հաղորդակցման գործընթացում, ընդհակառակը, նշում է, որ դրանք երբեմն էլ կարող են ավելի հարուստ բովանդակություն արտահայտել, քան նույն հաղորդակցային իրադրության մեջ գործածված նախադասությունները: Վերևում քննված հոդվածում նա կատարում է նաև ասությունների հանգամանալից դասակարգում երեք սկզբունքներով՝ **ըստ հաղորդակցական խոսքային իրադրության** (տեղեկատվական, երկխոսական, բանաստեղծական, հանդիսական ասություններ), **ըստ կազմության** (պարզ և բարդ, նաև՝ միավորյալ) և **ըստ բնույթի**: Բաժանման այս վերջին ելակետը հետաքրքիր է նրանով, որ եթե նախադասություններն ըստ բնույթի ընդունված է բաժանել չորս՝ պատմողական, հարցական, հրամայական և բացականչական տեսակների, ապա ասությունների «տեսականին», ըստ Աղայանի, ավելի բազմազան է. դրանք կարող են լինել 1) **նկարագրական** (Երևան: Աստաֆյան փողոց: Առավոտյան վեր կենալ, լվացվել.... և այլն), 2) **հուզական** կամ **զգացական** (Մոռանա՛լ,

³² Ռ. Իշխանյան, Դիմավոր բայը որպես շարահյուսական միավոր, Բանբեր Երևանի համալսարանի, 1988, հ.1, էջ 45-54:

³³ Է. Աղայան, Նախադասության մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1988, հ.1, էջ55-71:

մոռանալ ամեն ինչ), 3) **իրագեկային** (Հ.Թումանյան, «Երկեր», Լոռայում: և այլն), 4) **բացականչական** (Մասիսնեփր:), 5) **հրամայական-հորդորական** (Զծխե՛լ:), 6) **հարցական** (Ու՞ր գնալ սովորելու:), 7) **պատասխանական** (Ու՞ր ես գնում: *Տուն:*)

Այսպիսով, փորձեցինք հիմնական զծերով ներկայացնել հայերենի շարահյուսության հիմնական միավորի՝ նախադասության աղայանական մեկնաբանությունը, որն իր բնույթով որոշակիորեն առանձնանում է և կրում է մեծ լեզվաբանի ինքնահատուկ մտածողության կնիքը:

РЕЗЮМЕ
ОСНОВНАЯ ЕДИНИЦА СИНТАКСИСА В ИНТЕРПРЕТАЦИИ Э. АГАЯНА
Телян Леонид

Вопросы теории предложения армянского языка освещаются в книге «Основы языкознания» и в некоторых статьях полемического характера академика Э. Агаяна.

Различительным признаком предложения Э. Агаян считает предикацию, которая в армянском языке выражается исключительно личными формами глагола. Другие способы предикации /интонация, порядок слов и др./ в армянском языке /в отличии, например, от русского/ не могут выполнять функцию оформления предложения. Коммуникативные единицы, не имеющие в своем составе личные формы глагола и в традиционном синтаксисе считающиеся предложениями, Э. Агаяном выделяются как особые, отличные от предложений единицы и называются специальным термином-**высказ**. Особый интерес представляют определения главных членов предложения, а также подробная классификация высказов в армянской речи.

Ключевые слова- Предложение, высказ, интонация, предикация, сказуемое, подлежащее, односоставное предложение.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Խաչատրյան Անահիտ

կապիտան, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԳՀԿ պատասխանատու քարտուղար,

բանասիրության մագիստրոս

Anahitkhachatryan1988@gmail.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-114

Բանալի բառեր. ռազմագիտական բառապաշար, տերմինաբանություն, տերմինա-
համակարգ, բառապաշարի կատարելագործում:

Ժամանակակից ռազմագիտական ոլորտի հայոց լեզուն, պատմաքաղաքական իրադարձություններով ու դասավորումներով պայմանավորված, մշակելու և կատարելագործելու անհրաժեշտություն է առաջացել: Ռազմագիտական հայերենի բառապաշարում ի թիվս մի շարք խնդիրների՝ կարող ենք նշել թարգմանական սխալները, երկակի բացատրություններով տերմինների գործածությունը, փոխառյալ բառերը մասնագիտական որոշ շրջանակներում ընդունել-չընդունելու փաստը և այլն: Լեզվի՝ որպես պատմականորեն զարգացող երևույթի մասին խոսելիս լեզվաբանները երեք փոխկապված հասկացություններ են առանձնացնում, որոնք կոչված են ըստ հնարավորության արտացոլելու լեզվի պատմական էվոլյուցիայի հստակ և ամբողջական գործընթացը: Դրանք են՝ լեզվի փոփոխումը, զարգացումը և կատարելագործումը: Փոփոխությունները բնութագրվում են որպես որևէ լեզվական միավորի նույնականության խաթարում, ինչը արտահայտվում է կամ այդ լեզվական միավորի հիմքի վրա ձևավորվող նույնագործ տարրի ձևավորմամբ, կամ ձևավորվող նոր միավորի նոր գործառույթներով: Մինչդեռ կատարելագործումը, ըստ էության մոտ լինելով լեզվի զարգացման հասկացությանը¹, կարծես տեղի ունեցող լեզվական երևույթների փոփոխությունների գնահատումն է, դրանց զարգացումը:

Էդ. Աղայանը այս հասկացությունը սահմանում է հետևյալ կերպ. «Բառապաշարի կատարելագործում ասելով հասկանում ենք լեզվի բառային կազմի մեջ տեղի ունեցող այնպիսի փոփոխությունների ամբողջությունը, որոնք կարող են բնութագրվել որպես բառապաշարի որակական զարգացում»²: Այս բնութագրմամբ Աղայանը նկատի ունի ոչ այնքան նոր բառերի մուտքը տվյալ լեզվի բառային կազմի մեջ, որքան արդեն

¹ Լեզվի զարգացումը այն օրենքի կիրառումն է, որը բխում է խիստ սահմանված լեզվաբանական պայմաններից և ունի ամբողջացնող, ընդհանրացնող բնույթ: Զարգացումը (հարաբերական կամ բացարձակ) նշանավորվում է լեզվական երևույթների՝ որակական մի վիճակից մյուսին անցմամբ:

² Աղայան Է., «Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործումը», «Բանբեր», 1978 թ.

գոյություն ունեցող բառերի և կայուն բառակապակցությունների զանազան կարգի փոփոխությունները, բարեփոխումները և այլն:

Լեզվական այս իրողության համատեքստում ենք ցանկանում դիտարկել ժամանակակից հայերենի ռազմագիտական բնագավառի բառապաշարի կատարելագործման արդիականությունը և կարևորությունը:

Լեզվի յուրաքանչյուր զարգացող գիտաճյուղում կարևոր հարց է տվյալ բնագավառի **տերմինային համակարգը**: Տերմինների էությունն ու գործառույթները ներկայացվում են որոշակի ենթատեքստերում, տեսություններում, գիտության այս կամ այն ոլորտում:

Ռազմագիտական բառապաշարը բառապաշարային միջոցների համակարգ է, որը արտացոլում է ռազմագիտական հասկացությունների զանազանությունը՝ մասնագիտական և ժողովրդախոսակցական լեզվում³: Ռազմագիտական բառապաշար հասկացությունը ներառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսին են ռազմագիտական տերմինաբանությունը, ռազմագիտական տերմինահամակարգը:

Այն փաստի հաշվառմամբ, որ ռազմական գործունեության ոլորտը շատ ընդարձակ է և ճյուղավորվում է ըստ տարատեսակ ինքնուրույն գիտասպեկտների, գոյություն ունեն բազմաթիվ տերմիններ տակտիկական, կազմակերպական, ռազմատեխնիկական բնագավառներ, ինչպես նաև տերմիններ տարբեր զորատեսակների և զիված ուժերի տեսակներին վերաբերող: Նշված ուղղություններից յուրաքանչյուրին բնութագրական է իր տերմինաբանությունը:

Ռազմագիտական հայոց լեզվի զարգացման առաջնայնությունը բխում է ոչ միայն պետա-քաղաքական անհրաժեշտությունից, այլ նաև պետք է օբյեկտիվորեն հաշվի առնել վերջին շրջանի իրադարձությունները և ըստ այդմ լեզվի գրեթե բոլոր շերտերում ակտիվորեն շրջանառվող ռազմական ոլորտի լեզուն ու բառապաշարը: Բառապաշարի կատարելագործման կարևորագույն իրողություններից են բառային կազմի մեջ տեղի ունեցող ներքին տեղաշարժերը, այսինքն՝ գործառական և լեզվաոճական տարբեր շերտերի պատկանող բառերի փոխանցումը մեկ շերտից մյուսին: Այդ փոխանցումներն ու ներթափանցումները տեղի են ունենում հետևյալ ուղղություններով.

* Տերմինը բառ կամ բառակապակցություն է, որի խնդիրն է ճշգրիտ, տրամաբանված և հնարավորինս միանշանակ կերպով սահմանել շրջապատող իրականությունը արտացոլող առարկաները, հասկացությունները, երևույթները:

³ Сафаров Р.Т.. Казань, 2015. 196 с. 4.

* ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտահրատարակչական կենտրոնը, ռազմական ոլորտի գիտական հոդվածների, դասախոսությունների, մենագրությունների և այլ նմանատիպ աշխատությունների ժամանակ առնչվելով ռազմական ոլորտի բառապաշարի զարգացման ու կատարելագործման խնդրին, առաջարկում է տերմիններ ու հասկացություններ, որոնք տեղ են գտել նույն համալսարանի հրատարակած բառարաններում (բառարանները տես Գրականության ցանկում)

Բառերի տերմինացում: Լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և բառապաշարի գործառնական կամ պատմական շերտերի պատկանող բառերի օգտագործումը որևէ տերմինահամակարգի մեջ՝ համապատասխան տերմինային իմաստով.

պատերազմի **խուլթեր**– Կառլ ֆոն Կլաուզիցի «Трениенавойне» արտահայտության իմաստային թարգմանությունը, որը հասկացության արժեք ունի

հոծ(զանգվածեղ) կրակ– *массированный огонь*

հատուկ **ընթացաշրջան** – *особый период* – war economy transition period

Հնացաբառերի գործածում: Բառապաշարի զարգացման ընթացքում զանազան լեզվական և արտալեզվական պատճառներով որոշ քանակով բառեր դադարում են գործածվելուց և գործուն շերտից անցնում են բառապաշարի չգործուն շերտին:

Թե գեղարվեստական գրականության մեջ, թե տերմինաբանության պահանջով հաճախ հնացած բառերը սկսում են գործածվել, և վերակենդանանալով, անցնում են լեզվի զարգացման տվյալ փուլի գործուն շերտի այս կամ այն մասնաշերտին: Որպես օրինակ կցանկանայինք դիտարկել **ասպատակում (հրետանային ասպատակում)** բառը: Սրա հետ կապված մասնագիտական շրջանակներում ընկալումը միանշանակ չէր. բառը զինվորականները միանշանակորեն կապում էին ձիերով կատարվող գործողության հետ, ինչպես որ ի սկզբանե նշանակել է: Մակայն այս բնույթի զանազան բառեր, ինչպես խթանել, ասպարեզ, ասպետ ժամանակի ընթացքում հեռացել են իրենց նախնական իմաստից և երբեմն իմաստի ընդլայնմամբ, երբեմն փոխաբերական կիրառմամբ նոր իմաստներով են կիրառվել: Այսպես. առաջարկվում է. *огневой налет* – հրետանային **ասպատակում**

Տարբերակային բառաձևերի միջև եղած պայքարի հետևանքով այս կամ այն տարբերակի հաղթանակը բառապաշարի կատարելագործումն է այն տեսակետից, որ դա հանգեցնում է ավելորդ բառազույգերի վերացմանը: Այսպես, օրինակ, ռազմագիտական բառապաշարում տեղ է գտել ծածկապաշտպանություն – պատսպարում հոմանիշային զույգը, սակայն նկարագրվող երևույթի նրբիմաստների հաշվառմամբ, առաջարկվում է գործածել «ծածկապաշտպանություն» -ը:

Բառապաշարի կատարելագործում է դիտարկվում նաև.

- Իմաստային անորոշությունների, շփոթությունների առաջ բերող բազմիմաստությունների վերացումը.

«թիկնանցում» և ոչ թե «շրջանցում», «տարաշարժ» և ոչ թե «խուսանավում» կամ «մանևր»

- Այն հասկացությունների առանձնացում, որոնք նման են կազմությամբ, սակայն ունեն նրբիմաստներ.

կառավարման առաջադիր կետ – կառավարման առաջնային կետ, պատրաստում-պատրաստություն,

հատիչ դիրքեր-զատիչ դիրքեր,

պատրաստականություն - պատրաստականություն

- Մրան հակառակ՝ հոմանիշային թվացող գույգերից յուրաքանչյուրը առանձին տերմինի արժեք ունենալու փաստը.

գոյունակություն (սարքերի) – կենսունակություն (մարդկանց), աշխատակարգ (մարդկանց)-
բանելակարգ (սարքերի)

ցուցում- ցուցմունք

Բազմիմաստությունն ու դրա հետևանքով բառի որոշակիորեն տարբեր իմաստների
շփոթության վերացումը, ինչպես՝

նսոխազերծել – чистка

սորակորուստ – утечка

ինչպես նաև՝ բառերի իմաստային արտակարգ ծանրաբեռնվածությունը վերացնելու համար
հաճախ նոր բառերի սերմանը դիմելը.

նպատակ – բազմաթիվ նպատակներից գլխավորը առանձնացնելու ցանկությամբ
առաջարկվել է «**համանպատակ**» բառը:

Ժամանակակից հայերենի բառապաշարի կատարելագործման ուղիներից մեկն էլ
փախառյալ բառերը հայերեն բառերով փոխարինելն է.

աղոտարկել (*աղոտարկված (օբֆուսկացված obfuscated) ծրագրային սպահովման
ուսումնասիրության խնդիրները*), ցուցումնագիր-դիրեկտիվա:

Իհարկե, կարող են գուգահեռաբար գործածվել հայեցի և փոխառյալ բառերը: Որոշ
լեզվաբաններ կարծում են, որ այսկերպ ժամանակյին քննություն բռնած, լեզվի բնականոն
ընթացքին հարմարված տերմինը կմնա, իսկ գուգահեռ տարբերակը դուրս կմղվի. այդպես՝
ռեզերվ – պահեստուժ, դեսանտ – իջագոր, սարում – մոնտաժ են:

Վերջին երկու տասնամյակում հայերենը անհարկի օտար բառերից մաքրելու
դրական միտմանը գուգահեռ նկատվեց ծայրահեղական մի ձգտում՝ բոլոր փոխառյալ, այդ
թվում՝ վաղուց լայնորեն գործածվող, մեր բառապաշարին արդեն մերված բառերը
անպայման փոխարինել հայերեն տարբերակներով: Սակայն նկատենք, որ օտար բառերից
շատերը ոչ միայն չեն հակասում մեր ազգային լեզվի օրինաչափություններին, այլև
հեշտությամբ ենթարկվում են քերականական կանոններին և լիարժեք արտահայտում են
իրենց անվանած հասկացության իմաստը: Անհրաժեշտ է նկատել, որ բառարանում
արձանագրված օտար բառերից շատերը աստիճանաբար փոխարինվում են հայերեն
համարժեք տարբերակներով:

Օտար բառի հայերեն համարժեքի ստեղծումը իհարկե նպաստում է ոչ միայն լեզվի
մաքրության պահպանմանը, այլև բառապաշարի հարստացմանը: Սակայն պետք է նկատել,
որ երբեմն հայերեն համարժեքները կա՛մ բառակազմական առումով ճկուն չեն, կա՛մ
իմաստային առումով լիովին չեն համապատասխանում իրենց անվանած հասկացության
բուն նշանակությանը⁴:

⁴ Մելքոնյան Լ., ժ. հ. Լ., Եր. 2019 (http://publishing.yasu.am/files/Ardi_hayereni_barapashar.pdf):

Այսպիսով՝ ուսումնասիրությունները վկայում են ամբողջ աշխարհում ռազմական ոլորտում լեզվի դերի և նշանակության մեծացման մասին: Այս համատեքստում Ժամանակակից փուլում իբրև հայոց լեզվի երիտասարդ գիտաճյուղ ռազմագիտական հայերենի կատարելագործումը ունի առաջնային նշանակություն: Մեծ լեզվաբան Էդ. Ադայանի առաջարկած լեզվի կատարելագործման ուղիների դիտարկման և ըստ այդմ ռազմական ոլորտի հայերենի հետ կատարվող աշխատանքների արդյունքներ համակարգմամբ առանձնացրել ենք որոշ ուղիներ և ըստ այդմ՝ տարբերակներ: Իհարկե ինքնին հասկանալի է, որ առաջարկվող տարբերակների որակակն ու լեզվահարազատության քննությունը ցույց կտա ժամանակը՝ համապատասխան միջավայրում դրանք կիրառելու պարագայում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայկական բանակ» ՌԳՀ 2021թ., հմ 4
2. Դ. Չիլինգարյան, Ե. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն – ռուսերեն – անգլերեն, ռուսերեն – հայերեն, անգլերեն – հայերեն, մեծ բառարան, Եր., 2015
3. Էդ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976
4. Ա. Ղարիբյան, Ռուս – հայերեն բառարան, Եր., 1977
5. Р. А. Будагов, Что такое развитие и совершенствование языка, М., 2004
6. Р. А. Будагов, Слово и его значение, М., 2003
7. В. А. Гречко, Теория языкознания, М. 2003
8. R. Bowyer, Military English, Great Britain, Peter Collin Publishing Ltd, 2001.
9. H. Alexander, Words and the War, American Speech, Vol. 19, No. 4, pp. 276-280, 1944.

РЕЗЮМЕ ПУТИ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ ВОЕННО-НАУЧНОЙ ЛЕКСИКИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Хачатрян Анаит

Лексика любого живого языка быстро увеличивается количественно: новые понятия и новые предметы «требуют» новых слов. Довольно интересный из научных сфер – сфера военно-научного языка. Мы исследовали в нынешнем мире пути усовершенствования военно-научной армянской лексики. В данном докладе показаны премеры новых языковых понятий и терминов. Не исключено, что некоторые из них войдут и в повседневный лексикон армянского языка.

Ключевые слова: военная лексика, терминология, терминосистема, усовершенствование лексиски.

SUMMARY
WAYS OF IMPROVING THE MILITARY
VOCABULARY OF MODERN ARMENIAN LANGUAGE
Khachatryan Anahit

The vocabulary of any living language is rapidly increasing in quantity: new concepts and new objects “require” new words. A rather interesting scientific field is the field of military language. In modern world, we have explored ways to improve the Armenian military vocabulary. The report herein presents examples of new linguistic concepts and terms. Some of them might find their proper place in the everyday vocabulary of the Armenian language.

Key words: military vocabulary, terminology, term-system, improving vocabulary.

ԳՐԱԲԱՐԻ ՀԱՄԱՂՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹԸ

Խաչատրյան Գուրգեն

«Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան» հիմնադրամ
հայոց լեզվի և հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր
gxachatryan@yahoo.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-120

Բանալի բառեր. գրաբար, պատճառական բայ, անցողականություն, անանցողականություն, արժույթ, միարժույթ, երկարժույթ և եռարժույթ բայեր:

Ամփոփում

Բայակազմության և, նրանով պայմանավորված, բառապաշարի հարստացման գործընթացում գրաբարում էական դեր է կատարել *- ուցան-* բայածանցը, որով նոր բայեր են կազմվել ավելի հաճախ սկզբնատիպ չեզոքներից՝ հնարավորություն ստեղծելով նրանցով արտահայտվող անանցողականությունն արտահայտելու նաև անցողական իմաստով, ավելի սակավ՝ սկզբնատիպ ներգործականներից՝ նրանցով արտահայտված գործողություններին հաղորդելով միջնորդավորվածության իմաստ: Սկզբնատիպ չեզոք և սկզբնատիպ ներգործական բայերից կազմված պատճառականներն իրարից տարբերվում են ոչ միայն կազմությամբ, այլև կապակցելիության հնարավորություններով:

Գրաբարի համադրական պատճառական բայերն օժտված են արժույթի բոլոր արտահայտություններով (ենթակաառություն, կոչականառություն, ստորոգառություն, խնդրառություն և պարագաառություն), սակայն, կախված իրենց բառիմաստից, նրանք առանձնանում են արժույթային տարբեր դրսևորումներով¹:

Հոդվածում ուսումնասիրել ենք գրաբարի համադրական պատճառական բայերի կապակցելիության դրսևորումներից մեկը՝ խնդրառական արժույթը, սահմանել ենք խնդրո առարկա հարցում նկատվող օրինաչափությունները, վեր հանել որոշ շեղումներ և հանգել հոդվածի նպատակից ու խնդիրներից բխող եզրակացությունների:

Ներածություն

Գրաբարի համադրական պատճառական բայերը քննության առարկա են 19-րդ դարակեսից առ այսօր: Գերազանցապես ուսումնասիրվել են դրանց առաջացմանը, կազմությանն ու խոնարհմանն առնչվող հարցեր²: Նշված բայերին բնորոշ են արժույթի բոլոր հնարավոր արտահայտությունները, սակայն դրանց նվիրված համալիր ուսումնասիրություն դեռևս չի կատարվել³ (քննվել է նրանց միայն ենթակաառության արժույթը⁴):

¹ Խաչատրյան Գ. Կ., 2002, թիվ 2, 184:

² Մյորնենս U., 1866, 457-458: Չայրիսենս Վ., 1885, 79-81: Տողերիս հեղինակը անդրադարձել է գրաբարի՝ վերլուծական պատճառական բայերի առաջացմանն առնչվող հարցին (Խաչատրյան Գ. Կ., 1997, 34-36: Խաչատրյան Գ. Կ., 2000, 242-247):

³ Տողերիս հեղինակն ավելի վաղ քննել է գրաբարի վերլուծական պատճառական բայերի խնդրառական արժույթը (Խաչատրյան Գ. Կ. 1999, թիվ 2, 169-180: Խաչատրյան Գ. Կ., 2000, 254-262):

⁴ Խաչատրյան Գ. Կ., 2002, թիվ 2, 178:

Հողվածում նպատակ է հետապնդվում բացահայտելու գրաբարի համադրական պատճառական բայերի կապակցելիության արտահայտություններից մեկին՝ խնդրառական արժույթին առնչվող օրինաչափությունները: Նշված նպատակին հասնելու համար լուծել ենք մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ ա) հետազոտել ենք գրաբարյան շուրջ 500 համադրական պատճառական բայ, բ) սահմանել դրանց՝ խնդրառական արժույթի հարցում առկա օրինաչափությունները, գ) համեմատել համադրական պատճառականների և նրանց չեզոք կամ ներգործական սեռի սկզբնատիպ բայերի խնդրառական հնարավորությունները:

Քննությունը գերազանցապես կատարել ենք համեմատության մեթոդով՝ կիրառելով նաև նկարագրական, վերլուծության, վիճակագրական և այլ մեթոդներ:

Քանի որ բազմիմաստության դեպքում ի հայտ են գալիս կապակցելիության տարբեր հնարավորություններ, ուստի քննել ենք համադրական պատճառական բայերի՝ միայն հիմնական իմաստով պայմանավորված արժույթայնությունը:

1. Գրաբարի համադրական պատճառական բայերը

Գրաբարում միջնորդավորված գործողության գաղափարն արտահայտվում է երկու եղանակով՝ ածանցմամբ և բառաբարդմամբ, որոնք երկուսն էլ համարվում են ձևակազմական անցողականություն⁵: Առաջին դեպքում այն կատարվում է *-ուցան-*բայաձանցի⁶, երկրորդ դեպքում՝ *տամ* բայի մասնակցությամբ: *-Ուցան-* ածանցով բացառապես կազմվում են անցողական (տվյալ դեպքում՝ պատճառական անցողականություն) սեռի բայեր⁷:

-Ուցան- պատճառական ածանցը էապես տարբերվում է սոսկաձանցներից ու բազմապատկականներից, սոսկաձանցներն ունեն բառակազմական արժեք, և չհաշված որոշ բացառություններ⁸՝ նրանցով կազմվում են բոլորովին նոր բառային միավորներ, բազմապատկականները բառային նոր միավորներ են կազմում արդեն իսկ շրջանառվող բայերից, սակայն նրանց օժտում են բազմակատարության կերպային իմաստով, մինչդեռ *-ուցան-*ը գրաբարում միակ բայաձանցն է, որը, ավելանալով արդեն իսկ շրջանառվող

⁵ Աբրահամյան Ս. Ս., 1962, 512:

⁶ Սոսկաձանցավոր բացառիկ բայերի (*ելանել, կորնչիմ, փլանիմ*) պատճառականները կազմվում են *ուցան-* ածանցի *-ուսան-* կամ *-ուզան-* տարբերակներով՝ *կորուսանել, ելուզանել, փլուզանել*, ինչպես՝ Ոչ կարացին զերկնաւոր շինուածսն *փլուզանել* (ՆՀԲ): Չայնաւորք ասին, վասն զի ձայնս յինքեանս անպակաս *եղուզանեն* (ՆՀԲ) և այլն:

⁷ Ժամանակակից հայերենի *-վ-* ածանցով, օրինակ, որը նույնպես քերականական իմաստակիր միավոր է, կազմվում են ոչ միայն կրավորական սեռի բայեր (*արգելվել, գնվել, դատարկվել, կրթվել, ծածանվել, հանձնվել, ճանաչվել* և այլն), այլև մի շարք չեզոք սեռի բայեր, որոնցում այն սոսկաձանցի դեր է կատարում, այսինքն՝ ունի միայն բայակազմական գործառույթ, ինչպես՝ *բնակվել, սիրահարվել, զբաղվել, խելագարվել, հարձակվել, համարձակվել* և այլն:

⁸ Նմանօրինակ բացառություններից են *ազահանամ, գիտանամ, ունենամ* և այլ բայեր, որոնք սերվել են նախապես գրաբարի բառապաշարի մաս կազմող, համապատասխանաբար, *ազահիւմ, գիտեմ, ունիմ* բայերից: *Կամիւմ-կամենամ, լողամ-լողանամ, արժեմ-արժենամ* և այլ գոյգերի ածանցավոր միավորները (դրանց թվում է նաև *ուզեմ-ուզենամ*-ը) ուշ շրջանի կազմություններ են:

բայերին, նրանցից սերվածներին օժտում է քերականական նոր՝ միջնորդավորմամբ կատարվող գործողության իմաստով⁹:

Գրաբարում նշված ածանցով նոր բայեր են կազմվում և՛ սկզբնատիպ չեզոքներից, և՛ սկզբնատիպ ներգործականներից:

Շնորհիվ *-ուցան-* ածանցի՝ սկզբնատիպ չեզոք բայերից սերված համադրական պատճառականներն օժտվում են անցողականությամբ, ուժեղ կառավարմամբ և սեռի խնդրառական արժույթով: Այլ կերպ ասած՝ հնարավորություն է ստեղծվում չեզոք բայերով արտահայտված վիճակայնություն¹⁰ անցում կատարելու ներգործական սեռի բայերին հատուկ գործողայնության¹¹, ինչպես՝ *արժանանամ-արժանացուցանեմ, դատարկանամ-դատարկացուցանեմ, պարծիմ-պարծեցուցանեմ, տկարանամ-տկարացուցանեմ* և այլն¹²: Հմմտ. *Առ* սուրբ երկնային *խորհուրդն արժանացեալք* (ՆՀԲ) և *Ես* ոչ սովորեալ *զանձն* իմ *արժանացուցանել* ոչ և միոյ *չարի* (պատժոյ) (ՆՀԲ): Սատանայ՝ որ *ինն* խրոխտացեալ *պարծեր*, ինն կորացեալ ամաչեցել (ԵՂ) և *Պարծեցուցանես ի պայծառութիւն* քումդ տեսակի *զքո պանծացեալսն* (ԳՆ) և այլն:

Երբ *-ուցան-* ածանցն ավելանում է սկզբնատիպ ներգործական բայերին, ապա նրանցից սերված համադրական պատճառականներն օժտվում են միջնորդավորված անցողականությամբ և բնության խնդրառական արժույթով, ինչպես՝ *ասեմ-ասեցուցանեմ, գողանամ-գողացուցանեմ, դասեմ-դասեցուցանեմ, կարծեմ-կարծեցուցանեմ, մոռանամ-մոռացուցանեմ, յիշեմ-յիշեցուցանեմ* և այլն: Հմմտ. Տե՛ս, խոնարհեցո զունկն քո և *մոռա՛ զժողովուրդ քո* և *զտուն* հօր քո (Սաղմ., ԽԴ, 11) և *Մոռացոյց ինձ* Աստուած զամենայն *վիշտս* (Ծննդ., ԽԱ, 51)¹³:

Գրաբարում (ի դեպ, նաև մեր օրերում¹⁴) *-ուցան-* բուն քերականական ածանցը գործածության առումով ուներ որոշակի սահմանափակություն. ոչ բոլոր սկզբնատիպ չեզոք, առավել ևս ոչ բոլոր սկզբնատիպ ներգործական սեռի բայերից կարող էին կազմվել համադրական պատճառականներ¹⁵: Հետաքրքրական է, որ այդ շարքում են ոչ միայն սակավ գործածական բայեր (*դրոշմեմ, դրուագիմ, դրուատիմ, ըմբոստանամ, նեղասրտեմ//նեղասրտիմ, ներամտեմ//ներսամտեմ//ներքսամտեմ*), այլև բայեր ակտիվ բառապաշարից (վերջիններիս թվում, ինչը հետաքրքրական է, անկանոն բայերի մեծ մասը՝ *ածեմ, առնեմ, ասեմ, բերեմ, գիտեմ, դնեմ, կարեմ, հանեմ, ուտեմ//կերայ, տամ* և այլն), ինչպես՝ *գրեմ, նկատեմ, նկարեմ, նուիրեմ, սիրեմ* և այլն: Ասվածին հակառակ՝ գրաբարն ուներ միջնորդավորված գործողության արտահայտման մեկ այլ միջոց՝ «որևէ

⁹ Վերջինս արտահայտվում է «եղելության մեջ ընդգրկված առարկաների քանակի ավելացմամբ» (*Ջահուկյան Գ. Բ.*, 1974, 256):

¹⁰ *Ջահուկյան Գ. Բ.*, 1974, 260:

¹¹ Ն.տ.:

¹² Հմմտ. *Այտընեան Ա.*, նշվ. աշխ., 90-91:

¹³ Գտնելով հանդերձ, որ «Անցողական (այն է՝ պատճառական - Գ.Խ.) կ'ըլտուի բայ մ' որ ուրիշին բան մ' ընել տալ կը նշանակէ» Ա. Այտընյանը նշում է, որ այդպիսիք են համարվում միայն ներգործական սեռի բայերից սերված պատճառականները (*Այտընեան Ա.*, 1866, 89): «Բուն անցողական անոնք են,- գրում է նա,- որ ներգործականէ յառաջ կու գան» (նշվ. աշխ., 90-91):

¹⁴ *Թեյլան Լ. Գ.*, 2023, 4-5:

¹⁵ *Խաչատրյան Գ. Կ.*, 2002, 178-179:

բայի անորոշ դեբայ-տամ (հազվադեպ՝ *ամեն*) բայի խոնահված ձև» կադապարով արտահայտվող վերլուծական բարդությունը, որով անհրաժեշտության դեպքում տեսականորեն կարող էին կազմվել բոլոր բայերի (թե՛ չեզոք, ներգործական ու հասարակ և թե՛ կանոնավոր ու անկանոն) պատճառականները¹⁶: Ահավասիկ՝ Եւ *ես կապել* զնա ձեռս յետս, եւ *արկանել* գայլ ի բերան նորա (ԱԳ): Եւ *ոչ էտ* նմա Աստուած *ամեն* ինձ չար (Ծննդ., ԼԱ, 7): Երդմնի եղև նոցա. եթե *ոչինչ տաց մեղանչել* ձեզ և ոչ բարեկամաց ձերոց (Ա. Մակ, Է, 15): Չոսկերսն ի գերեզմանէն *հանել տային* և ի գետ արկանել (ՓԲ): Քանզի սին կճեայ *կանգնել տայր* յԵդեսիայ ի վերնատունս ապարանից իւրոց (ՄԽ)¹⁷:

Ըստ մեր հաշվարկի՝ ՆՀԲ-ում *-ուցան-* բայածանցով կազմված համադրական պատճառականների թիվն անցնում է 1000-ից, ինչպես՝ *երևակայացուցանեն, երևեցուցանեն, զնստուցանեն, ընծայեցուցանեն, լուսացուցանեն, խրախացուցանեն, կացուցանեն* և այլն: Օրինակ՝ Չուտուցեալ զմիտս նոցա *զնստուցանէ* (ՆՀԲ¹⁸): Չառ ի նոցանէ զընծայութիւնսն *ընծայեցուցանել* (ՆՀԲ): *Կացուցի* զնոսա յաւուր յայնմիկ փայտակոտորս (Յես., Թ, 27)¹⁹ և այլն: Սակայն խնդրառական արժույթի ուսումնասիրության առումով ոչ բոլոր բայերն են հետաքրքրություն ներկայացնում: Ասվածը պայմանավորված է նրանով, որ գրաբարի համադրական պատճառականների շուրջ մեկ քառորդը բառապաշարի ոչ գործուն շերտի միավորներ են կամ էլ թարգմանություններ՝ մեկ կամ երկու վկայությամբ, որոնք ամբողջական պատկերացում չեն տալիս այդ բայերի խնդրառական արժույթի մասին²⁰:

Գրաբար բնագրերում համադրական պատճառական կազմությունների քանակից և գործածության հաճախականությունից հետևում է, որ թե՛ սկզբնատիպ չեզոք և թե՛ սկզբնատիպ ներգործական բայերից *-ուցան-* ածանցով կազմություններ գրական հայերենին, մասնավորապես գրաբարին են անցել նախագրային հայերենից²¹:

2. Գրաբարի համադրական պատճառական բայերի խնդրառական արժույթը

Գրաբարի համադրական պատճառական բայերի կապակցական հնարավորությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկզբնատիպ չեզոք սեռի բայերին հաղորդելով անցողականության և միջնորդավորված գործողության քերականական իմաստ, իսկ սկզբնատիպ ներգործական սեռի բայերին՝ միջնորդավորված գործողության քերականական իմաստ՝ *-ուցան-* պատճառական ածանցը, որպես կանոն, փոխում

¹⁶ Առավել մանրամասնորեն տե՛ս *Խաչատրյան Գ. Գ.*, 2000, 248-253:

¹⁷ Բացի վերն ասվածից՝ նշված փաստի առկայությունը կարելի է հիմնավորել նաև այս կամ այն սկզբնատիպ չեզոք կամ ներգործական սեռի բայի կազմությամբ, բառիմաստով ու բարեհնչունությամբ, այլև նրանով, որ մի շարք պատճառականներ կարող էին պարզապես չկազմվել կամ, բանավոր խոսքում առկա լինելով հանդերձ, լեզվական աղբյուներում, պայմանավորված պատմիչների, թարգմանիչների և այլոց հետաքրքրությունից դուրս լինելու հանգամանքով, չվկայվել:

¹⁸ (ՆՀԲ) հղումով լեզվական փաստերը քաղել ենք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանի՝ համապատասխան բայերի բառահոդվածներից:

¹⁹ Աստվածաշնչյան այս և հետագա օրինակները բերում ենք ընդունված համառոտագրությամբ:

²⁰ *Խաչատրյան Գ. Գ.*, 2002, 178-179:

²¹ Ահավասիկ օրինակներ վիպասանական հայերենից ավանդված պատառիկներից՝ «... եւ շատ *ցուեցոյց* զմեջք փափուկ օրիորդին, արագ *հասուցանելով* ի բանակն իւր» (ՄԽ):

է բայերի արժութային համակարգը: Մասնավորապես խնդրառության տեսանկյունից նկատելի, որ՝

1. ավելանալով սկզբնատիպ չեզոք սեռի բայերին՝ *-ուցան-* ածանցը կազմում է նոր բայեր՝ որոնք օժտված են ուժեղ կառավարմամբ: Դրանից բացի՝ նկատելի են հետևյալ օրինաչափությունները.

1.1. Եթե սկզբնատիպ չեզոք սեռի բայերը խնդրառությամբ արժութագուրկ են (չեն կարողանում ուժեղ կառավարմամբ պարտադիր կերպով ենթադրել և պահանջել գոնե մեկ բնության խնդիր), ապա ավելանալով այդ բայերին՝ *-ուցան-* ածանցը նրանցից սերված բայերին օժտում է ուժեղ կառավարմամբ, որով նրանք պարտադիր կերպով ենթադրում և պահանջում են մեկ սեռի խնդիր, այսինքն՝ վերածվում են խնդրառությամբ միարժույթ անցողական բայերի: Այսպես՝ *յաննեմ* բայը խնդրառությամբ արժութագուրկ է, մինչդեռ *յարուցանեմ*-ը՝ միարժույթ (ենթադրում և ստանում է մեկ սեռի խնդիր): Հմմտ. *Յարեալ* Աբրահամ և երկիր եպագ ժողովրդեան (Օննդ., ԻԳ, 7) և Այր բարկացող *յարուցանե՛ղ հակառակութիւն* (Դան., Դ, 14): Այսպես նաև՝ Ես *կեամ* մարմնով, հաւատովք Որդւոյն Աստուծոյ *կեամ*, որ սիրեացն զիս (Գաղ. Բ, 20) և Ես խոնարհ եղէ և Տէր *կեցոյց զիս* (Սաղմ. ԸԺԴ, 6) և այլն:

1.2. Եթե սկզբնատիպ չեզոք սեռի բայերը խնդրառությամբ միարժույթ են (կարողանում են ենթադրել և պահանջել մեկ բնության խնդիր), ապա նրանցից սերված պատճառականների խնդրառական արժույթը կրկնապատկվում է (կազմվում են նոր՝ խնդրառությամբ երկարժույթ բայեր, որոնք ձեռք են բերում սեռի խնդիր պահանջելու հատկանիշ՝ զուգահեռաբար պահպանելով բնության խնդիր առնելու հատկանիշը նույնպես): Այդ բայերից են՝ *դիպիմ, հասանեմ, յագիմ//յագենամ* և այլն, որոնք, պայմանավորված իրենց իմաստով, ենթադրում և պահանջում են քերականական տարբեր իմաստներ արտահայտող բնության խնդիրներ (հանգման, անջատման, միջոցի և այլն): Հմմտ. Ես գուժկան *գուժկանի դիպեցի*, գոյժ առնել թագաւորին Բաբելացոց (Եզեկ., Ե, 26) և *Դիպեցուցանե՛ղ զերեքթելեանն* կրծից *տախտակին* (ՄԽ): *Ոչ յագեցան* սաստիկ *հարուածովքն* ամենայն թշնամիք նորա (ԵՂ) և [Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա. Ուստի՞ կարես յագեցուցանել գոռսա հացի յանապատի սաս](#) (Մարկ., Ը, 4) և այլն:

Նկատելի է, որ միևնույն բայի սկզբնատիպ չեզոք և պատճառական տարբերակներով կառույցներում բնության խնդիրը ոչ միշտ է պահպանում միևնույն քերականական իմաստը: Այսպես՝ *տկարանամ* չեզոք բայը պահանջում է անջատման կամ սահմանափակման բնության խնդիր, որը պատճառական կառույցներում սովորաբար փոխվում է միջոցի խնդրի: Հմմտ. Տկարացան *ի* յօրինաց *ճանապարհէն* (ՆՀԲ) և Տկարացուցեք զբազումս *օրինօքն* (ՆՀԲ) :

Եթե խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայը (օրինակ՝ *յենում* – «հենվել, կռթնել») հանդես է բերում կրկնասեռություն (տվյալ դեպքում գործածվում է ներգործական իմաստով), ապա օժտվում է երկարժույթ խնդրառությամբ («հենել որևէ

առարկա որևէ առարկայի») և դառնում տվյալ չեզոք սեռի միարժույթ սկզբնատիպից սերված երկարժույթ պատճառական (*յեցուցանեն*) համանիշը²²: Հմմտ.

ա) *յենում* (չեզոք սեռի իմաստով) - միարժույթ՝ [յոք թէ](#) *յենուցու* [ոք՝](#) [խորտակի](#) (Ես., ԼԶ, 6),

բ) *յենում* (ներգործական սեռի իմաստով) - երկարժույթ՝ *Բ սոյն յենոյր* առաքեալ *զաշակերտսն* (ՆՀԲ) և

գ) *յեցուցանեն* – երկարժույթ՝ *Յեցուցէ* [մարդ] *զձեռն* իւր *յորմն* (Ամովս, Ե, 19):

1.3. Ելնելով առաջին երկու ենթակետերի դրույթների տրամաբանությունից՝ կարելի է ենթադրել, որ խնդրառությամբ երկարժույթ սկզբնատիպ չեզոք սեռի բայերից - *ուցան-* ածանցով կկազմվեն եռարժույթ պատճառականներ՝ երկու բնության խնդրից բացի՝ պահանջելով նաև մեկ սեռի խնդիր, սակայն նմանօրինակ լեզվական փաստեր առայժմ չունենք:

2. Ավելանալով սկզբնատիպ ներգործական սեռի բայերին, որոնց բնորոշ են անցողականությունն ու ուժեղ կառավարմամբ խնդրառությունը՝ -*ուցան-* ածանցը նրանց օժտում է միջնորդավորված գործողության իմաստով և ուժեղ կառավարմամբ խնդրառության ևս մեկ արժույթով: Մասնավորապես նկատելի են հետևյալ օրինակափոխությունները.

2.1. Եթե սկզբնատիպ ներգործականը խնդրառությամբ միարժույթ բայ է, ապա - *ուցան-* ածանցի հավելումով նրանից կազմվում է ուժեղ կառավարմամբ երկարժույթ պատճառական, որը ենթադրում և պահանջում է մեկ սեռի և մեկ բնության խնդիր²³: Այդ բայերից են՝ *ազանիմ* – *ագուցանեն*, *ըմպեն/արբի* – *արբուցանեն*, *յիշեն* – *յիշեցուցանեն* և այլն: Հմմտ. Եւ *զգայլենիս ազաներ* և աղուեսենիս զանձամբ արկեալ նստէին (ՓԲ) և Զամենեսեան զմերկս զգեցուցին յաւարէն և *ագուցին նոցա կօշիկս* (Բ Մնաց., ԻԸ, 15): Եւ *զքացաիս* գինոյ և *զքացաիս* ցբոյ *մի՛ արբցէ* (Թիւ., Զ, 3)²⁴ և Եւ *արբուցին հօրն* իւրեանց *գինի* ի գիշերի (Մննդ., ԺԹ, 33): Եւ *յիշեսջիք զճանապահսն* ձեր չարս և գնացս (Եզեկ., ԼԶ, 31) և առ *յիշեցուցանել նոցա զմարտ պատերազմաց* (Բ Մակ., ԺԵ, 9)²⁵:

2.2. Եթե սկզբնատիպ ներգործական սեռի բայը խնդրառությամբ երկարժույթ է, ապա նրանից -*ուցան-* ածանցով կազմված պատճառականն օժտվում է խնդրառական մի նոր արժույթով. ենթադրում և պահանջում է մի նոր բնության խնդիր, որն ունի արտահայտության տարբեր լուծումներ, քանի որ սկզբնատիպ երկարժույթ ներգործական սեռի բայերը, կախված իրենց բառիմաստից և պահանջվող խնդիրների բովանդակության ու արտահայտության պլաններից, միմյանցից տարբեր են: Մասնավորապես՝

2.2.1. կան խնդրառությամբ երկարժույթ սկզբնատիպ ներգործական սեռի բայեր, որոնք ենթադրում և պահանջում են ուժեղ կառավարմամբ կապակցվող մեկ սեռի և մեկ

²² ՆՀԲ, 2, 355:

²³ Ա. Աբրահամյանն առաջարկում է այդ բնության խնդիրը, որն արտահայտվում է տրական հոլովով, անվանել միջնորդական խնդիր (Աբրահամյան Ա. Ա., 1962, 558):

²⁴ Հարկ եղած դեպքում այդ բայերը կարող են պահանջել բացառականով արտահայտված մասնական ուղիղ խնդիր՝ Եւ [Նոյ] *արբի գինոյն* և արբեցաւ, և մերկացաւ ի տան իւրում (Մննդ., Թ, 21):

²⁵ Խոսքային այլ իրավիճակներում սեռի խնդիրը կարող է փոխարինվել բնության խնդրով, ինչպես՝ *յիշեցուցանելով ձեզ վասն շնորհացն*, որ տուեալ է (Հռովմ., ԺԵ, 15):

բնության խնդիր: Այս շարքից են, օրինակ, ասացական, անջատման, այսպես կոչված, տրական և այլ բայեր, ինչպես՝ *ազդեմ, ասեմ, գողանամ, ընծայեմ, կորզեմ, հանեմ, հրամայեմ, նուիրեմ, պատասխանեմ, պատուիրեմ, պարզեմ, տամ* և այլն, ինչպես՝ *Ազդէր նմա* և *գտրտունջ* զԱրեաց աշխարհին (ԵՂ): [Վասն այդորիկ ահա էս ի վերայ մարգարէիցդ, ասէ Տէր, որք գողանան գրանս իմ իւրաքանչիւր յընկերէ իւրմէ](#) (Երեմ., ԻԳ, 30): [Եւ զամենայն ճարպ գուարակին մեղաց կորզեսցէ ի նմանէ](#) (Ղևտ., Դ, 8): [Եւ զչարեցաւ Սաուղ վասն բանին այնորիկ, էւ ասէ. Դաւթի էտուն գրելոս, էւ ինձ էտուն զհազարս](#) (Ա Թագ., ԺԸ, 8): *Ընծայեցի քումդ եկեղեցեաց զայս նուէր* բարեաց բանից ցանկալեաց (ԳՆ) և այլն: Նշված կարգի բայերից սերված համադրական պատճառականները խնդրառությամբ եռարժույթ են, բնագրերում հազվադեպ են հանդիպում, և նրանց բոլոր գործորդները (ակտանտ) չէ, որ խոսքի մեջ միաժամանակ ունեն բառային արտահայտություն: Այսպես՝ խնդրառությամբ երկարժույթ *ընծայեմ* բայը պահանջում է մեկ սեռի և մեկ բնության խնդիր՝ [Եւ ոչ կերայ ի նոցանէ](#) [իմա՝ ի սրբութեանց-Գ.Խ.] [էւ ոչ ընծայեցի ի նոցանէ](#) (հմմտ. *զնոսա-Գ.Խ.*)²⁶ [պղծոյն](#) (Բ Օրէն., ԻԶ, 14): Մակայն նրանից սերված *ընծայեցուցանեմ* պատճառականը եռարժույթ է. կարող է ենթադրել և ստանալ մեկ սեռի և երկու բնության խնդիր՝ Ծառայեցոյց [սատանայ-Գ.Խ.] զմարդիկ՝ իւր պաշտօնեայս առնելով, և [մարդկան՝] *ինքեան* զպարտուպատշաճ *պատիւն* Աստուծոյ *ընծայեցուցանելով* (ՆՀԲ): Բերված նախադասության իմաստն առավել բնական արտահայտվում է *տամ* բայի օգնությամբ կազմված *տամ ընծայել* վերլուծական պատճառականի դեպքում՝ *Մարդկան ընծայել տայր ինքեան զպատիւն Աստուծոյ*: Դրանով է պայմանավորված, որ նմանօրինակ եռարժույթ խնդրառությունը գրաբարում սովորաբար արտահայտվում է կազմությամբ վերլուծական պատճառականների պահանջով, որոնց հետևս խնդիրներից մեկը, որպես կանոն, չի արտահայտվում, սակայն տվյալ նախադասության բովանդակության պլանում ենթադրվում է, և անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել՝ ելնելով տվյալ խոսքահատվածի բովանդակությունից, ինչպես՝ [Եւ ասէ. Ես տաց \[հովուի-Գ.Խ.\] ածել քեզ ուլ այծեաց ի խաշանց իմոց](#) (Ծննդ., ԼԸ, 17)²⁷: [Եւ Սոփսէս հորն իւրում](#) ետ [եղբարցն-Գ.Խ.] [տանել տասն իշոյ քեռինս](#) (Ծննդ., ԽԵ, 23)²⁸ և այլն:

Եթե առկա են միևնույն գործողության իմաստը ցույց տվող սկզբնատիպ չեզոք և սկզբնատիպ ներգործական առանձին բայեր, ապա գտնում ենք, որ դրանց համարմատ պատճառականը սերվում է ոչ թե խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ չեզոքից, այլ սկզբնատիպ ներգործականից: Ասվածին հանգել ենք՝ նկատի առնելով, որ սկզբնատիպ չեզոքից սերված լինելու դեպքում համարմատ պատճառականը խնդրառությամբ պետք է լիներ ոչ թե եռարժույթ, այլ երկարժույթ: Այսպես՝ խնդրառությամբ եռարժույթ *զատուցանեմ* պատճառականը սերվել է ոչ թե խնդրառությամբ միարժույթ *զատչիմ* սկզբնատիպ չեզոքից, այլ երկարժույթ *զատեմ//զատանեմ* սկզբնատիպ ներգործա-

²⁶ Սեռի խնդիրն այստեղ արտահայտված է բացառականով (*ի նոցանէ*) և ցույց է տալիս մասնական ներգործություն:

²⁷ Եվ ասում է. «Ես [հովվին] քեզ համար իմ հոտերից բերել կտամ այծի ուլ»:

²⁸ Եվ [Հովսեփը] [եղբայրներին] հոր համար տանել տվեց տասը իշաբեռ [պարեն]:

կանից, և ունենք տվյալ գործողությունը ցույց տվող բայերի խնդրատական արժույթի աճի հետևյալ պատկերը՝

ա) *գատչիմ* «գատվել որևէ իրից կամ անձից» – միարժույթ՝ *Ձատչել յԵրուանդայ* խորհեին (ՄԽ),

բ) *գատեմ//գատանեմ* («գատել որևէ իր կամ անձի – որևէ իրից կամ անձից») – երկարժույթ՝ Փոքր ինչ *գատեր զինքն ի նոցանե* (ՆՀԲ),

գ) *գատուցանեմ* («գատել տալ որևէ անձի – որևէ իր կամ անձի – որևէ իրից կամ անձից») – եռարժույթ՝ *Մի՛ զճնոդսն յորդուցն և մի զորդիսն ի ծնողացն գատուցանել* (ՆՀԲ): *Ձարատաւորն յանարատե ոչ գատուցանեին* (Եգեկ., ԻԲ, 26):

Լեզվական փաստերը վկայում են, որ որոշ դեպքերում խնդրատույթամբ երկարժույթ են և՛ սկզբնատիպ ներգործականը, և՛ նրանից կազմված համադրական պատճառականը: Հմմտ. Ուր եւ շինեալ *եկեղեցի* մեծապայծառ եւ *վկայարան* սրբոց՝ *զարդարեցին* *սպասուք* (ՂՓ) և Մանկունք *հարսունս* առնեն ի կաւոյ, և *զարդարեցուցանեն պաճուճանօք* (ՆՀԲ): Չնայած երկրորդ նախադասության ստորոգյալը տեսականորեն օժտված է եռարժույթ խնդրատույթամբ, սակայն տվյալ դեպքում արտահայտում է ոչ թե միջնորդավորված անցողականություն, որի դեպքում պետք է ենթադրել երեք գործորդ (զարդարել տալ՝ 1. *մեկին* 2. *որևէ առարկա* 3. *որևէ առարկայով*), այլ սովորական ներգործականություն, հետևապես ստացել է երկու գործորդ (զարդարել 1. *որևէ առարկա* 2. *որևէ առարկայով*), ինչպես սկզբնատիպ ներգործականը: Ասվածի մասին վկայում է այդ նախադասության բովանդակությունը. երեխաներն իրենք են զարդարում տիկնիկներին և ոչ թե ուրիշներին են զարդարել տալիս դրանք՝ «Երեխաները կավից տիկնիկներ են պատրաստում և զարդարում պաճուճանքներով»: Քննվող նախադասությունը թարգմանական գրականությունից է (Հովհան Ոսկեբերան), ուստի գտնում ենք, որ *զարդարեցուցանեմ* պատճառականի առկայությունը կարելի է պայմանավորել, ասենք, թարգմանչի գործոնով:

2.2.2. Կան սկզբնատիպ ներգործական, ինչպես նաև կրկնասեռ պարզ և սոսկա-ծանցավոր մի շարք բայեր, որոնք խնդրատույթամբ երկարժույթ են, սակայն պահանջում են ոչ թե մեկ սեռի և մեկ բնության, այլ երկու սեռի խնդիր²⁹, ինչպես՝ *անուանեմ, առնեմ, գիտեմ, դնեմ, ենթադրեմ, իմանամ, կարծեմ*³⁰, *կոչեմ, հաշուիմ, համարիմ, համբաւեմ, հաստատեմ, վարկանեմ* և այլն³¹: Օրինակ՝ Եւ *զօճ* յաղթանդամ կամ *զգազան* ինչ ծովածին կոչեն գիրք *վիշապ*, որպես *զմարդ* յաղթանդամ *հսկայ* անուանեն (ԵԿ): [Ընդ](#)

²⁹ Այս կարգի բայերը Վ. Առաքելյանն անվանում է «մի տեսակ «գերներգործական» բայեր» (*Առաքելյան Վ. Դ., 1958, 290*):

³⁰ *Կարծեմ* բայը, երկու սեռի խնդիր պահանջելուց բացի, այլ կիրառության մեջ կարող է պահանջել նաև մեկ սեռի և մեկ բնության խնդիր (ընդգծվում են)՝ *Կարծեին զմանե՛ թէ ընդ ուղեկիցսն իցէ* (Ղուկ., Բ, 44): [Աղաչեմ զի մի՛ ի մօտոյ եւեթ համարձակիցիմ վստահութեամբ, կամ համարիցիմ յանդգնել ի վերայ ոմանց որ կարծեն զմենջ եթէ քստ մարմնոյ գնայցեմք](#) (Բ Կորնթ., Ժ, 2):

³¹ Այս շարքի որոշ բայեր, պայմանավորված խոսքային իրավիճակով, կարող են հանդես գալ եռարժույթ խնդրատույթամբ՝ պահանջելով երկու սեռի և մեկ բնության խնդիր, ինչպես՝ Եւ *առին իւրեանց կանայս զքորս* թագաւորին (ՓԲ): Եւ *առաջնորդ ունէր ընդ իւր զՎահան* և *զՄերուժանն* (ՓԲ): *Համարիցիս զիս քեզ ոսո՞յս* (Յոբ, ԺԳ, 25) և այլն:

[որոց թե ընդ գեղն գուարճացեայք՝ գնոսա սատուածս](#) կարծիցեն (Իմաստ., ԺԳ, 3): *Ջմեգ* եղիր *պատճառ* աւերածոյ (ԵՂ): *Չայսոսիկ* թեպէտ *առասպելս* ոք թեպէտ *ճմարտութիւն* հաշուեալ համարեցի (ՄԽ) և այլն:

Նշված որոշ բայերից սերված պատճառականները, ինչպէս՝ *իմանամ-իմացուցանեմ*, *կարծեմ-կարծեցուցանեմ*, *կոչեմ-կոչեցուցանեմ* և այլն, խնդրառությամբ ոչ թե երկարժույթ են, այլ արդեն եռարժույթ. խոսքից դուրս ենթադրում և խոսքի մեջ կարող են ստանալ երեք (երկու սեռի և մեկ բնության) խնդիր: Նկատենք, սակայն, որ լեզվական աղբյուրներում այդ բայերի ենթադրյալ երեք խնդիրները խոսքի մեջ միշտ չէ, որ միաժամանակ բառային արտահայտություն ունեն: Մեզ հանդիպած նմանատիպ բայերից է *կարծեցուցանել*-ը, որը վկայվել է երեք խնդիրների հետ միաժամանակ՝ *Չօգտակարսն նմա վնասակարս թելադրեալ կարծեցուցանիցէ* (ԵԿ): Բերված նախադասության *նմա* անդամը վկայում է, որ, ստանալով *-ուցան-* ածանց, սկզբնատիպ ներգործական սեռի բայը պահպանում է բուն և երկրորդական սեռի խնդիրներ առնելու օժտվածությունը՝ միաժամանակ ձեռք բերելով նաև բնության խնդիր պահանջելու նոր հատկանիշ:

Եզրակացություններ

Բայակազմության և, նրանով պայմանավորված, բառապաշարի հարստացման գործընթացում գրաբարում էական դեր է կատարել *-ուցան-* (*-ուզան-*, *-ուսան-*) բայածանցը, որով, ըստ մեր հաշվարկների, կազմվել է ավելի քան 1000 համադրական պատճառական բայ:

Գրաբարում համադրական պատճառականներ կազմվում են և՛ սկզբնատիպ չեզոքներից, և՛ սկզբնատիպ ներգործականներից, որով նրանք փոփոխություն են կրում ոչ միայն ձևով ու բովանդակությամբ, այլև կապակցական հնարավորություններով, որոնք արտացոլվում են այդ բայերի արժույթային համակարգում:

Շնորհիվ *-ուցան-* ածանցի՝ ա) սկզբնատիպ չեզոք բայերից սերված համադրական պատճառականներն օժտվում են անցողականությամբ, ուժեղ կառավարմամբ և սեռի խնդրառական արժույթով, բ) սկզբնատիպ ներգործական բայերից սերված համադրական պատճառականներն օժտվում են միջնորդավորված անցողականությամբ և բնության խնդրառական արժույթով:

Ավելանալով սկզբնատիպ չեզոք սեռի՝ խնդրառությամբ արժույթագուրկ բայերին՝ *-ուցան-* ածանցը նրանց օժտում է խնդրառական արժույթով. խնդրառությամբ արժույթագուրկ բայերը դառնում են խնդրառությամբ միարժույթ: Ավելանալով սկզբնատիպ չեզոք և սկզբնատիպ ներգործական սեռի խնդրառու բայերին՝ *-ուցան-* ածանցը նրանց օժտում է խնդրառական նոր արժույթով. խնդրառությամբ միարժույթ սկզբնատիպ բայերը դառնում են երկարժույթ, իսկ երկարժույթները՝ եռարժույթ:

Սկզբնատիպ չեզոք սեռի բայերից սերված համադրական պատճառականները խնդրառությամբ առնվազը միարժույթ են, առավելագույնը՝ եռարժույթ, կզբնատիպ ներգործական սեռի բայերից սերվածները՝ առնվազը երկարժույթ, առավելագույնը՝ եռարժույթ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, Ե., 1962:
2. Այտընեան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866:
3. Առաքելյան Վ. Դ., Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Ե., 1958:
4. Թեյլան Լ. Գ., Հայերենագիտական ուսումնասիրություններ, Ե., 2023:
4. Խաչատրյան Գ. Կ., Գրաբարի հարադրավոր պատճառական բայերը և նրանց արժույթը // «Բանբեր Երևանի համալսարանի» (հաս. գիտ.), 1999, թիվ 2, էջ 169-180:
5. Խաչատրյան Գ. Կ., Գրաբարի վերլուծական բայերի արժույթը, Ե., 2000:
6. Խաչատրյան Գ. Կ., Գրաբարի համադրական պատճառական բայերի արժույթը // «Պատմա-բանասիրական հանդես», 2002, թիվ 2, էջ 178-190:
7. Չալրիսեան Վ., Քերականություն հակազնեան լեզուի,, Վիեննա, 1885:
8. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:

Օգտագործված աղբյուրների և նրանց համառոտագրությունների ցանկ

- ԱԳ – Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, Տփղիս, 1909:
- ԳՆ – Գրիգոր Նարեկացի, Մատենանոց քերականության, Պուլենու Այրես, 1948:
- Գիրք Աստուածաշունչք հին և նոր կտակարանաց, Վենետիկ, 1860:
- ԵԿ – Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
- ԵՂ – Եղիշէի Վասն Վարադանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1957:
- ՂՓ – Ղազարայ Փարպեցոյ Պատմություն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:
- ՄԽ – Մովսիսի Խորենացոյ Պատմություն Հայոց, Տփղիս, 1913:
- ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:
- ՓԲ – Փաւստոսի Բուզանդացոյ Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

РЕЗЮМЕ

Валентность управления сопоставительных каузативных глаголов

древнеармянского языка

Хачатрян Гурген

В процессе глаголообразования и обусловленного им обогащения словарного запаса значительную роль играл глагольный суффикс *-ույան- (-mghin-)*, с помощью которого новые глаголы образовывались в первую очередь из исходных среднего залога, создавая возможность выразить выражаемую ими непереходность и в переходном смысле. Вышеупомянутым обусловлено то обстоятельство, что с суффиксом *-ույան-* реже образуются глаголы исходного среднего типа, а также глаголы исходного действительного залога, которые отличаются от своих исходных типов не только составом, но и грамматически.

Сопоставительные каузативные глаголы древнеармянского языка обладают всеми проявлениями валентности (субъективность, междометие, предикативность, управление, обстоятельственность), однако в зависимости от своей семантики отличаются разными проявлениями валентности.

В статье рассматривается одно из проявлений конъюнктивности сопоставительных каузативных глаголов древнеармянского языка, валентность управления, определяются закономерности, наблюдаемые в рассматриваемом вопросе, выявляется ряд отступлений и выводов, вытекающих из цели и задач статьи.

Ключевые слова: древнеармянский (грабар), каузативный глагол, переходность, непереходность, валентность, одновалентные, двухвалентные и трехвалентные глаголы.

SUMMARY

The valence of government of conjunctive causative verbs of old Armenian Khachatryan Gurgen

In the process of verb formation, and conditioned with it, the enrichment of the vocabulary, the verbal suffix *-utsan-* (*-mguñ-*) played a significant role, with which new verbs were formed first of all from the original neuter ones, creating an opportunity to express the intransitiveness expressed by them also in the transitive sense. The circumstance that with the suffix *-utsan-*, verbs of the original neuter type, less often as well as the verbs of the original active voice are formed, is conditioned with the aforementioned which differ from their original types not only in composition, but also grammatically.

The conjunctive causative verbs of Old Armenian possess all expressions of valence (subjectivity, interjection, predicativity, government, circumstantiality), however, depending on their semantics, they are distinguished by different manifestations of valence.

The article examines one of the manifestations of the conjunctiveness of the conjunctive causative verbs of Old Armenian, the valence of government, defines the patterns observed in the matter in question, reveals a number of deviations and conclusions arising from the purpose and problems of the article.

Key words: Old Armenian (Grabar), causative verb, transitivity, intransitiveness, valence, monovalent, bivalent and trivalent verbs.

ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Խաչատրյան Վալենտին

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ավագ գիտաշխատակից
valentin.khachatryan@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-131

Բանալի բառեր. հոգնակի, հոգնակիակազմություն, վերջավորություն, մասնիկ, շեղում, գոյական, միավանկ, վերջնաբաղադրիչ, բառաձև, օրինաչափություն, կանոնարկում:

Նախաբան

Արդի գրական արևելահայերենում թեև գործում են գոյականի հոգնակիակազմության որոշակի կանոններ, բայց և մի շարք բառերի դեպքում հոգնակիակազմիչները դեռևս հստակ չեն: Դրանով պայմանավորված՝ համապատասխան բառարաններում և քերականական աշխատություններում նույն գոյականների դեպքում հաճախ նշվում են բոլորովին տարբեր հոգնակիակազմիչներ:

Ս. Մալխասյանցի, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և Է. Աղայանի բացատրական բառարաններում¹ հոլովման հատկանիշներին զուգահեռ տրվում են նաև անունների մի մասի հոգնակիակազմիչները:

Գոյականի թվի քերականական կարգին ըստ էության անդրադարձել է Հրանտ Պետրոսյանը մի համապարփակ մենագրությամբ²: Հետագայում կազմվել են կոնկրետ անուն խոսքի մասերի հոգնակիակազմությանը վերաբերող քերականական բառարան-տեղեկատուներ: Վերջիններիս մեջ ծավալի առումով հատկապես աչքի են ընկնում երկուսը՝ «Անուն խոսքի մասերի թվի կարգն արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու»³, «Հայոց լեզվի միավանկվերջնաբաղադրիչով բաղադրյալ բառերի հոգնակիակազմության բառարան»⁴: Խնդրո առարկայի տեսանկյունից հետաքրքրություն են ներկայաց-

¹Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Ե., 1944 (այսուհետև՝ ՀԲԲ), Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Լեզվի ինստիտուտ, Ե., 1969 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 (այսուհետև՝ ԱՀԲԲ):

²Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987:

³Գյուրջինյան Դ., Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, Ե., 2007 (այսուհետև՝ ԳԲ):

⁴Մարություն Ա., Հայոց լեզվի միավանկ վերջնաբաղադրիչով բաղադրյալ բառերի հոգնակիակազմության բառարան, Ե., 2003:

նում նաև Ա. և Ք. Սուքիասյանների ուղղագրական-ձևակազմական⁵ և Փ. Մեյթիխանյանի ուղղագրական⁶ բառարանները, որոնցում նշված են զգալի թվով անուն խոսքի մասերի հոգնակերտներ:

Շեղումներ են նկատվում հատկապես հետևյալ դեպքերում: Մեկուկեսվանկանի որոշ բառեր – *էր* հոգնակերտի փոխարեն ստանում են – *նէր* մասնիկը, և հակառակը՝ երկվանկանի այն բառերը, որոնց գաղտնավանկն առաջին վանկում է, դրսևորվում են նաև – *էր* մասնիկով: Ավելի հաճախադեպ են գոյականական միավանկ վերջնաբաղադրիչներով բառերի հոգնակիակազմության շեղումները: Մի շարք գոյականների նշված բաղադրիչն արդի լեզվափոխումն առանձին գործածություն չունի, որի հետևանքով էլ չի գիտակցվում, ուստի և այդպիսի բարդությունները սովորական բազմավանկ բառերի նման ստանում են – *նէր* հոգնակերտը: Որոշ դեպքերում այդ միավանկ գոյականական բաղադրիչի իմաստը բառի կազմում մասամբ է գիտակցվում: Սակավ օրինակներում այն կարող է միաժամանակ ընկալվել թե՛ գոյականական և թե՛ բայական արժեքով: Այդպիսի որոշ գոյականներ ավանդաբար են գործածվում այս կամ այն հոգնակերտով՝ չենթարկվելով որևէ կանոնի. հաճախ այն պայմանավորված է արտասանական դժվարությամբ կամ այլ բառերի ու բառաձևերի համաբանությամբ: Նման բառերի – *նէր* հոգնակերտով առկայացումը, ինչպես և կնկատենք ստորև, հաճախ աղերսվում է բաշխական (կամ ստացական) հոգնակիակազմությանը:

Լեզվաբանները բառարաններում կամ քերականական աշխատություններում, ինչպես և նկատվում է, բառերի հոգնակին նշում են կա՛մ ըստ տարածվածության, կա՛մ ըստ ընդունված կանոնի՝ միտում ունենալով կանոնարկում առաջացնել: Կարծում ենք, որ, այնուամենայնիվ, վերջին մոտեցումը տեղին է, քանի որ դրան կարող է հետևել կանոնարկումը:

Որոշ զուգահեռ ձևեր, իհարկե, արտացոլում են բնականոն փոփոխությունների ընթացքը, ինչպես՝ *նորահարսներ* /7/6/ // *նորահարսեր* /3/ /ԳԲ/, *ցուցամատներ* // *ցուցամատեր* /ԳԲ/, ուստի նման իրողություններին չենք անդրադառնում:

Իրողության դրսևորումը կամ տարածվածությունը որոշելու համար նախ ապավինել ենք Արևելահայերենի ազգային կորպուսին⁷: Թեև ԱՐԵՎԱԿ-ում ընդգրկված նյութերում որոշ ձևեր բացակայում են, բայց և կարելի է գտնել համացանցում առկա այլ նյութերում:

⁵ Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002 (այսուհետև՝ ՄԲ):

⁶ Մեյթիխանյան Փ., Հայերենի ուղղագրական նոր բառարան, Ե., 2013 (այսուհետև՝ ՄԲ):

⁷ Արևելահայերենի ազգային կորպուս, http://eanc.net/EANC/search/?interface_language=am, (այսուհետև՝ ԱՐԵՎԱԿ):

Հոգնակիակազմության շեղումներ. կանոնարկման առաջարկներ

Մեկուկեսվանկանի բառերից *անգղ*, *արկղն գամփռ* գոյականների հոգնակին բառաբաններում և քերականական աշխատություններում տրվում է թե' -*եր* և թե'-*ներ* վերջավորությամբ: Քանի որ առաջին դրսևորումը բնորոշ է բոլոր նմանատիպ բառերին, և այդպիսով նաև պահպանվում է բարեհնչությունը, պակասում մեկ հնչյուն, ինչպես նաև՝ գրական հայերենին հետևողները սովորաբար այդ ձևն են նախընտրում, ուստի, կարծում ենք, պետք է իսպառ մերժել երկրորդ դրսևորումը՝ միակ ճիշտ ձևերը համարելով *անգղեր*, *արկղերն գամփռեր*: Ահա և բառարանային նշումները՝ *անգղեր*/ԱՀԲԲ, ՄԲ, ԳԲ, ՄԲ/ /7/5/ ⁸ // *անգղներ*/ՀԲԲ, ԱՀԲԲ, ԳԲ//14/13/, *գիշանգղեր* /ՄԲ, ԳԲ//2/ // *գիշանգղներ* /ԱՀԲԲ//6/3/, *գառնանգղեր* /ՄԲ/ // *գառնանգղներ* /1/, *արկղեր* /133/101/ /ԱՀԲԲ, ՄԲ, ԳԲ, ՄԲ // *արկղներ* /86/70/ /ԱՀԲԲ/, *աղբարկղեր* /ՄԲ, ԳԲ, ՄԲ/ /23/22/ // *աղբարկղներ*/ԱՀԲԲ/ /8/, *գամփռեր* /ՄԲ, ՄԲ, ԳԲ/ /2/ // *գամփռներ*/ԳԲ/ /26/24/: ԱՀԲԲ-ում *գամփռ* բառի հոգնակին տրված չէ: ՀԲԲ-ում և ԺՀԼԲԲ-ում թեև բառի կողքին հոգնակերտը նույնպես նշված չէ, բայց և տրված բնագրային վկայություններումայն-*ներ* մասնիկով է օժտված: ԳԲ-ում խրախուսելի է համարվում -*ներ*-ով ձևը, որը անհամեմատ լայն տարածում ունի:

Պետք է նկատել նաև, որ մեկուկեսվանկանի բառերի մի մասը, հատկապես *դ*-ով վերջավորվողները, հնարավոր է արտասանել նաև օղի մեկ մղումով, այսինքն՝ որպես մեկ վանկ: Հարկ է հիշել, որ հայերենում նկատվում է բաղաձայնների միջև ըստ կարելվույն *ը* չարտասանելու միտում, որը բխում է լեզվի բնականոն զարգացումից՝ խնայողության սկզբունքից: Տվյալ բառերն առհասարակ որպես բաղադրությունների առաջնաբաղադրիչ կորցնում են *ը* գաղտնավանկի արտասանությունը, ինչպես՝ *արկղաձև*, *անգղաբույն*, *գամփռիկ* և այլն: Նշված տեսանկյունից ևս ճիշտ է նման բոլոր բառերի հոգնակին կազմել միմիայն -*եր* մասնիկով:

Բառասկզբում *գ*, *ս*, *շ* և հաջորդող որոշ բաղաձայնների կապակցություններից առաջ համեմատաբար ուժգին կամ թույլ կարող է հնչել *ը* ձայնավորը: Այս դեպքում հետևյալները սովորական երկվանկ բառեր են, և հոգնակին էլ, ի տարբերություն նախորդ տիպի բառերի, պետք է կազմվի -*ներ* վերջավորությամբ՝ *զգեստներ*, *սկիհներ*, *սպաներ*, *սպիներ*, *սպունգներ*, *շտաբներ*, *շտամպներ*, թեև առանձին դեպքերում և հատկապես խոսակցական լեզվում երբեմն ի հայտ են գալիս -*եր* հոգնակերտով սխալաձևությունները, ինչպես՝ *սպիներ* /119/96/ // *սպիեր* /2/, *շտաբներ* /148/114/ // *շտաբեր* /1/ և այլն:

Ֆիդայի և *պատճեն* բառերի հոգնակիներն են՝ *ֆիդայիներ* /73/40/ և *պատճեններ* /137/85/: Մյուս դրսևորումները նշված բառերից առաջինը *ն* վերջնահնչյունով և երկրորդն առանց այդ վերջնահնչյունի սխալ գիտակցման հետևանք են՝ *ֆիդայիներ* /2/, *պատճեներ* /4/:

⁸ Բառերի կողքին տրվում են ԱՐԵՎԱԿ-ի տվյալները. առաջինը բառաձևի գործածության թիվն է, իսկ երկրորդը՝ տեքստերի քանակը, վերջիններիս համընկնման դեպքում տրվում է մեկ թիվ:

Հակազագ բառը չի նշանակում *զազի* տեսակ, այլ՝ ինչ-որ առարկա՝ ի պաշտպանություն գազերից, այսինքն՝ վերջին բաղադրիչը չի կազմում բառի հիմնական իմաստը, ուստի ճիշտ կլինի, ի տարբերություն *նավթազազեր*, *ածխազազեր* բառաձևերի, հոգնակի նկատմամբ հետևյալ կերպ՝ *հակազազներ*, նույն այնպես, ինչպես և՛ *մակբայներ*, թեև բառարաններում նշվում է միայն միակ տարածված ձևը՝ *հակազազեր* /10/9⁹:

Ինչպես գիտենք, բայ խոսքի մասն ունի դիմավոր և անդեմ ձևեր: Վերջինները հայտնի են *դերբայ* և *ձևաբայ* ենթատեսակներով: Երկուսում էլ առկա է *բայ* իմաստը, սակայն հոգնակի թիվը տարբեր ձևերով է կազմվում՝ *դերբայներ* /21/10/ և *ձևաբայեր*՝ երկուսն էլ անդեմ բայերի տեսակներ: Նույն վերջնաբաղադրիչով *մակբայ* գոյականում պահպանված չէ *բայ* իմաստը, այն նշանակում է «բայի վրա դրվող», այսինքն՝ այլ խոսքի մաս, ուստի բնորոշ է *մակբայներ* /41/10/ ձևը: Կարծում ենք, որ ճիշտ կլինի առաջին երկուսի հոգնակի թիվը կազմել *-եր*-ով: Ուշագրավ է, որ ՄԲ-ում *մակբայ* բառի համար նշված է *-եր* մասնիկը:

ԱՀԲԲ-ում ներկայացվել է գոյականների զգալի մասի հոգնակի թվի կազմությունը: Հնարավոր է նկատել, որ մեծ լեզվաբան է. Աղայանը հոգնակիակազմության առումով հաճախ կանոնարկման փորձեր է կատարել՝ ուղենշելով ընդունելի ձևերը: *Հոր* վերջնաբաղադրիչով բոլոր բառերը, բացառությամբ *ջրհոր* բառի, արդի հայերենում *-եր* հոգնակերտն են ստանում, թեև բոլորում էլ հիմնական իմաստի կազմիչը վերջին բաղադրիչն է: Ինչպես նկատվում է, մյուս բոլոր բառերը հողակապով են, որոնցում և ավելի լավ է արտահայտված հատկացուցիչ-հատկացյալ շարահյուսական կապը. առաջին բաղադրիչներն էլ ցույց են տալիս, թե ինչին է վերաբերում կամ առնչվում *հորը*, այսպես՝ *ածխահորեր*, *սկանահորեր*, *աղբահորեր*, *գազահորեր*, *կեղտահորեր*, *կրահորեր*, *հանքահորեր*, *սառցահորեր*, *սիլոսահորեր*: Ինչ վերաբերում է *ջրհոր* բառին, ապա նրանում բաղադրիչներն առավել սերտորեն են կապված, համեմատաբար թույլ է արտահայտված հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը, ուստի ընկալվում է որպես սովորական երկվանկ բառ և դրսևորվում *-ներ* վերջավորությամբ՝ *ջրհորներ*, ինչպես որ տրված է նաև ԳԲ-ում: Ի դեպ, ԱՀԲԲ-ում նշված է *ջրհորեր* ձևով՝ հավանաբար նկատի առնվելով, որ այն ի վերջո նշանակում է «ջրի հոր», այսինքն՝ հիմնական իմաստի կազմիչը վերջին բաղադրիչն է: Նույնպիսի մոտեցում նկատվում է հետևյալ բառարաններում՝ ՄԲ, ՄԲ, չնայած որ, ինչպես գիտենք, լայն տարածում ունի *ջրհորներ* ձևը՝ ըստ ԱՐԵՎԱԿԻ՝ *ջրհորներ* /35/29/ // *ջրհորեր* /2/: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ եթե միակ ճիշտ և ընդունելի ձևը համարվի *-եր*-ով տարբերակը, ապա այն կարող է հետագայում տարածվել՝ դառնալով միակ դրսևորումը:

Երթ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին ԱՀԲԲ-ում տրված է միմիայն *-եր* վերջավորությամբ: Կարծում ենք, որ այն ևս պայմանավորված է մեծ լեզվաբանի՝ հոգնակիա-

⁹ Այս և մի քանի այլ իրողությունների մասամբ անդրադարձել ենք հետևյալ հոդվածում. **Խաչատրյան Վ.**, Գոյականի հոգնակիակազմության որոշ հարցեր արդի հայերենում, ՀԱՊՀ, Լրաբեր. գիտական հոդվածների ժողովածու, մաս 3, Ե., 2020, էջ 651-659:

կազմության հարցում կանոնարկում առաջացնելու տեսլականով: Նույնպիսի մոտեցում առկա է նաև հետևյալ բառարաններում՝ ՄԲ, ՄԲ: Սակայն պետք է նշել, որ Դ. Գյուրջինյանի բառացանկում արտացոլված են ներկայիս փոփոխությունները, ուստի նախորդների համեմատ որոշ բառեր, համաձայն արդի հայերենում գործածության տարածվածության, նաև -ներ հոգնակերտով են տրված՝ *շքերթներ/17/15/ // շքերթեր, չվերթեր/108 / 70/ // չվերթներ /82/62/, ուղերթներ /13/12/*. կարծում ենք, որ ընդունելի պետք է համարել բոլորի -եր-ով ձևերը, քանի որ առաջին բաղադրիչները -երթ բայանուն գոյականի տեսակներն են արտահայտում: Ահա և -երթ վերջնաբաղադրիչով բառերի մեր նկատած ամբողջ ցանկը խրախուսելի հոգնակերտով. դրանցից մի քանիսն արձանագրված է «Նոր բառեր» բառարանում¹⁰՝ *դարձերթեր, գորաերթեր, խաչերթեր, հաղթերթեր, շքերթեր, չվերթեր, ռազմերթեր, սգերթեր, վրաերթեր, քայլերթեր, ուղերթեր /11/*:

Հաճախ դժվար է լինում տարբերակել՝ միավանկ վերջնաբաղադրիչը գոյականակա՞ն, թե՞ բայական բաղադրիչ է, այսպես՝ *գովազդ*՝ գովքի ազդ՝ լուր, հայտարարություն, թե՞ գովքն ազդարարող: Ըստ ՆՀԲ-ի¹¹՝ գրաբարում, բացի *ազդ* «զգացումն, իմացումն» գոյականից, լայնորեն կիրառվել է նաև *ազդել* բայը «ազդ առնել, իրազեկ առնել, յայտ առնել», ասել է թե՛ իրազեկել, տեղեկացնել: ԱՀԲԲ-ում նույնպես արձանագրված է *ազդ* «զ. 1. լուր, 2. հայտարարություն», որից և աղերսվում է հետևյալ բարդությունների հոգնակիակազմությունը՝ *գովազդեր/3/, մահազդեր*: Նշված դրսևորումը ճիշտ է համարված նաև ՄԲ-ում: *Ազդ*-ը հիշատակված բառերում, անկասկած, ծագումնաբանորեն գոյականական բաղադրիչ է, այլապես այդ բառերը նախ և առաջ կլինեին ածականներ: *Գովազդ* չկա ԺՀԼԲԲ-ում և ՀԲԲ-ում, *մահազդ* բառաջինի բնագրային օրինակում *մահազդներ* ձևով է (ԳԶ): ԳԲ-ում և ՄԲ-ում տրված են արդի լեզվափոխում տարածված ձևերը՝ *գովազդներ /97/85/, մահազդներ /11/9/*: *Բնազդ* բառի հոգնակին չի տրվում որևէ բառարանում, սակայն ըստ ԱՐԵՎԱԿԻ տվյալների՝ առկայանում է միայն հետևյալ կերպ՝ *բնազդներ /50/44/*: Այսպիսով, կարելի է արդի լեզվափոխում այդ երեք բառերն էլ ընկալել որպես բայական վերջնաբաղադրիչով կամ էլ -ներ հոգնակերտով առկայացումը բացատրել վերջնաբաղադրիչի՝ արդի լեզվափոխում ինքնուրույն գործածություն չունենալու և իմաստի մթագնման հանգամանքով:

Հետևյալ բառերը թերևս վերջնաբաղադրիչի՝ արդի լեզվափոխում ինքնուրույն գործածություն չունենալու կամ անճանաչելի լինելու հետևանքով ընկալվում են որպես սովորական բազմավանկ բառեր, ուստի և դրսևորվում են -ներ հոգնակերտով՝ *-զեն - հրազեններ /9/7/, - հեն- ծովահեններ, հանքահեններ, տեսահեններ, ցանցահեններ (հաքեր), օդահեններ, -է - մանրէներ, -կաճ-այծենակաճներ /3/3/ // այծենակաճեր (այծենի «այծի մորթի» + կաճ «թաղիք»), -քաղ«արու այծ, նոխազ, քոշ» - այծքաղներ «վիթ, համույր» /ԳԲ, ՄԲ/ /10/6/ // այծքաղեր /ԱՀԲԲ, ՄԲ/, մշկաքաղներ «քաղիկների ցեղին պատկանող մշկահոտ միջատ»*

¹⁰ Նոր բառեր, Ա-Զ պրակներ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2015-2021 թթ.:

¹¹ Աւետիքեան Գ., Միրումէեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:

/ԳԲ/ // *մշկաքաղեր* /ԱՀԲԲ/, -*մորճ* - ԱՀԲԲ՝ 1. ծառի դալար ճյուղ, 2. ոստ - *ծխամորճներ* /ԳԲ,ՄԲ / /8/// *ծխամորճեր*(ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ , ՄԲ) /12/11/, *ջրամորճներ* «նարգիլե» /ՄԲ/: Հարկ է նաև նկատել, որ այդպիսի որոշ բառերի հոգնակիակազմություն կարող է և բացատրվել միավանկ գոյականական վերջնաբաղադրիչների՝ բայական արմատների հետ համանունություն կազմելու և վերջիններիս համաբանությամբ –*ներ* հոգնակերտով օժտվելու հանգամանքով: Կարծում ենք, որ նշված բոլոր բառերի դեպքում ճիշտ կլինի հոգնակին կազմել –*եր* մասնիկով:

Ափ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին բառարաններում հիմնականում տրված է –*եր* վերջավորությամբ՝ *գետափեր*/1/, *լճափեր*, *ծովափեր*/2/, *լողափեր* /12/,*ջրափեր*: ԱՀԲԲ–ում *քարափ* բառը(1. գետի՝ լճի՝ ծովի ևն քարաժայռից բաղկացած ափ, 2. նավահանգիստ, 3. քարաժայռ, ապառաժ, 4. լեռ) ևս տրված է –*եր* հոգնակերտով: ԺՀԼԲԲ-ում թեև հատուկ նշված չէ հոգնակերտը, բայց բնագրային օրինակում դրսևորված է –*ներ* վերջավորությամբ, մյուս բառարաններում ևս նշվում է –*ներ* հոգնակերտը (ԳԲ, ՄԲ, ՄԲ): Ըստ ԱՐԵՎԱԿԻ՝ հիմնականում *քարափներ* /54/42/ է, վկայված է նաև *լողափներ* /2/: Հասկանալի է, որ *քարափ* բառում –*ափ* վերջնաբաղադրիչը չի գիտակցվում իր բուն իմաստով, ուստի և բառը –*ներ* հոգնակերտով է օժտվում: Մնացած բառերի դեպքում –*ներ*-ի առկայությունը, հատկապես ակտիվ գործածությունը բանավոր խոսքում, կարծում ենք, պայմանավորված է բաշխական կամ ստացական հոգնակիակազմությամբ: Եթե –*եր* մասնիկով դրսևորման դեպքում կարելի է հասկանալ մինչևնույն ծովի, լճի և այլն, ապա –*ներ* մասնիկի կիրառությամբ նկատի են առնվում տարբեր լճեր, ծովեր, կամ թե առհասարակ ափեր և ոչ թե կոնկրետ որևէ լճի կամ ծովի ափ:

Ուղտ վերջնաբաղադրիչով հետևյալ կենդանանուններից մեկը –*ներ*՝ *ընձուղտներ*/10/9/, մյուսը՝ –*եր*՝ *այծուղտեր*, ձևով է հայտնի: ԺՀԼԲԲ-ում *ընձուղտ* բառի կողքին թեև նշված է –*եր* հոգնակերտը, բայց և մամուլից բերված բնագրային վկայության մեջ արտահայտված է –*ներ* մասնիկով: ԱՐԵՎԱԿԻ նյութերում *ընձուղտեր* ձևը բացակայում է, չնայած կարծում ենք, որ վերջինս պետք է ընդունելի լինի մյուս բառի նման: Նշվածներին են հարում նաև –*այծ* վերջնաբաղադրիչով հետևյալ բառերը՝ *լեռնայծեր*, *ուղտայծեր* (նույնն է՝ *այծուղտեր*), *քարայծեր*:

Քարայր բառի հոգնակին թեև –*եր* մասնիկով է տրվում բառարաններում, սակայն լայն տարածում ունի նաև –*ներ*-ով դրսևորումը, ըստ ԱՐԵՎԱԿԻ՝ *քարայրեր* /35/17/ //*քարայրներ* /30/28/, բայց և նախընտրելի է առաջինը:

Հոգնակի թվի կազմության շեղումներ են նկատվում նաև հետևյալ բառերում, որոնք թերևս այլ բառ չհասկացվելու կամ այլ բառերի հետ չասոցացվելու հետևանքով են նման կերպ դրսևորվել. ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ՝ *ծովացին* (թռչ.)-*ծովացիներ*, ՄԲ՝ *ծովացիներ*.առաջին դեպքում կարող էնաև հասկացվել *ծովացի*, ապա և՝ *միջնորմեր* /4/2/(ԱՀԲԲ, ՄԲ, ՄԲ) // *միջնորմներ* /11/10/ (ԳԲ, ՄԲ), որ և առաջին դրսևորման դեպքում կարող է ընկալվել *նորմ*

բաղադրիչ, մյուս կողմից էլ առկա է *քարոքումեր* (ՄԲ, ՄԲ): Այնուամենայնիվ, տեղին է նշված բառերը գործածել *-եր* մասնիկով:

ԱՀա և այլ գուգաձևությունների դրսևորումներ. *ջրհոս* «1. ջրի հոսանք՝ հոսք, 2. (աստղգ.) գողիակի 12 կենդանակերպներից մեկը» - *ջրհոսեր* /ԱՀԲԲ, ՄԲ/ // *ջրհոսներ* /ԳԲ/.կարծում ենք, որ նշված իմաստների դեպքում ճիշտ է *-եր* հոգնակերտը, իսկ տվյալ համաստեղության ներքո ծնված մարդկանց նկատի առնելու դեպքում տեղին է *-ներ* հոգնակիակազմիչի գործածությունը: Նույնը նկատվում է նաև հետևյալ դեպքում՝ *խոսափողեր*, *ձայնափողեր*, բայց եթե նկատի է առնվում մարդը՝ *խոսափող* «մեկի կարծիքները կրկնող՝ տարածող մարդ, ձայնափող», ապա ճիշտ են՝ *խոսափողներ*, *ձայնափողներ*:

Հոգնակիակազմության շեղումնկատվում է նաև *սիրամարգ* բառում՝ *սիրամարգեր* /ԱՀԲԲ, ՄԲ , ԳԲ, ՄԲ/ /9/// *սիրամարգներ* (Բաֆֆի /2/, Ա. Իսահակյան /1/) /3/: Թեև բառարաններում նշվում է *-եր* մասնիկը, որի գործածությունը տարածվել է հավանաբար *մարգ*« մարգագետին, ածու» արմատի հետ շփոթելու հետևանքով, սակայն ճիշտ պետք է համարել երկրորդ դրսևորումը, քանի որ տվյալ բառը բաղադրված է *սեր* և պարսկ.*մարգ* «թռչուն» բաղադրիչներից¹²: Քանի որ վերջինս արդի լեզվափոխում չի գիտակցվում, հետևաբար հոգնակին պետք է կազմել *-ներ*-ով:

*Գամ*վերջնաբաղադրիչով բառերի, այդ թվում և *կոճգամ* բառի հոգնակին ԱՀԲԲ-ում, ՄԲ-ում և ՄԲ-ում տրված է *-եր* հոգնակերտով՝ *երկաթագամեր*, *թաքնագամեր*, *պղնձագամեր*, *կոճգամեր*/1/, պետք է ավելացնել նաև՝ *ամրագամեր*: Սակայն *կոճգամ* «մեխ, սևեռակ» բառի հոգնակին ԺՀԼԲԲ-ում և ԳԲ-ում տրված է *-ներ*-ով՝ *կոճգամներ* /1/: Այս բառի դեպքում տեղին է խրախուսելի համարել *-եր* մասնիկը, ինչպես որ բնորոշ է մյուս օրինակներին:

Միավանկ վերջնաբաղադրիչի թե՛ բայական և թե՛ գոյականական իմաստով իրացվելու հանգամանքով պայմանավորված՝ նույնպես կարող են լինել հոգնակիակազմության շփոթություններ՝ ԱՀԲԲ՝ *մայրամուտեր*, *ելումուտեր*, *բնակարանամուտեր*: Սակայն այլ բառարաններում նշված բառերի *-ներ* հոգնակերտն է նշվում.*բնակարանամուտներ* /ԳԲ/, *ելումուտներ* /ԳԲ, ՄԲ/// *ելումուտեր*/ԳԲ/, *մայրամուտներ* /6/ /ԳԲ, ՄԲ, ՄԲ/, *տարեմուտներ* /1//ԳԲ, ՄԲ, ՄԲ/: Նաև՝ *անտառամուտեր*, *դարամուտեր* /ՄԲ/: Նույն վերջնաբաղադրիչով հետևյալ բառերը հայտնի են միմիայն *-ներ* հոգնակերտով, որոնցում որոշակի է բայական իմաստը կամ համապատասխան արմատի իմաստի մթագնումը՝ *եկամուտներ*, *դարանամուտներ*, *լուսամուտներ*: Կարծում ենք, որ նախորդ օրինակների դեպքում ճիշտը *-եր* հոգնակիակազմիչն է:

Կսպ վերջնաբաղադրիչով որոշ բառերում նույնպես շփոթվում են գոյականական և բայական իմաստները, ուստի և հոգնակին դրսևորվում է տարբեր ձևերով՝ *- թնկապեր*

¹² Տե՛ս Աճառեան Հ, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Ե., 1926, էջ 219 (այսուհետև՝ ՀԱԲ):

/ԱՀԲԲ, ԳԲ, ՄԲ/ /3/// թնակապեր /ԱՀԲԲ, ՄԲ/ /2/// թնկապներ/1//ԳԲ/, խաչկապեր/ԳԲ, ՄԲ/ // խաչկապներ /ԳԲ/:

Բայանուն գոյական միավանկ վերջնաբաղադրիչով հետևյալ բառերը, կարծում ենք, ճիշտ կլինի օժտել –եր հոգնակերտով՝ ԱՀԲԲ՝ *վայրէջքեր*, ՀԲԲ, ԳԲ, ՄԲ, ՄԲ՝ *վայրէջքներ* /26/25/, ԱՀԲԲ, ԳԲ, ՄԲ, ՄԲ՝ *վերելքներ* /54/52/, ինչպես և նման այլ դեպքերում է՝ հմմտ. *վարուցանքեր* և այլն:

Շեղումներ են նկատվում նաև -*դարձ* վերջնաբաղադրիչով բառերի հոգնակիակազմության դեպքում: Այդ տեսանկյունից, ըստ բառարանային տվյալների և գործածության տարածվածության, այդպիսի բառերը պետք է խմբավորել հետևյալ կերպ՝ 1. -*դարձ/-եր/ -անցուդարձ, անկյունադարձ, էտդարձ, երթուդարձ, թեքադարձ, կրկնադարձ, ձայնդարձ, ճանապարհադարձ, շրջադարձ, ջրադարձ, տարեդարձ, տողադարձ*. 2.-*դարձ/-ներ/ -անդրադարձ, հայրենադարձ, վերադարձ, քարադարձ* «վտանգի ժամանակ քարի նման անշարժացող թռչուն»: Սակայն որոշ դեպքերում նկատվում են փոխներթափանցումներ, հակառակ հոգնակիակազմության դրսևորումներ: ԱՐԵՎԱԿԻ տվյալների համաձայն՝ *անցուդարձեր* /16/ // *անցուդարձներ* /1/ (արևմտահայերենից է օրինակը), *շրջադարձեր* /32/31/ // *շրջադարձներ* /6/, *անդրադարձներ* /71/65/ // *անդրադարձեր* /9/¹³, *տարեդարձեր* /6/ // *տարեդարձներ* /13/12/, *վերադարձներ* // *վերադարձեր* /2/¹⁴:

Գին գոյականական վերջնաբաղադրիչով բառերը սովորաբար ստանում են –եր հոգնակերտ՝ *արժեզներ, գլխազներ, դասազներ, հացազներ, փրկազներ*: Սակայն *գլխազին* և *փրկազին* բառերը ԳԲ-ում տրված են երկրորդաբար նաև –ներ հոգնակերտով, որը, սակայն, պետք է բացառել: Այդ դրսևորումը ԱՐԵՎԱԿ-ի նյութերում ևս առկա չէ:

Քանի որ արդի լեզվափոխում *կույտ* բառը գրեթե չի ընկալվում «մարդկանց խումբ, բազմություն» իմաստով, ուստի կարծում ենք՝ *ծերակույտ* և *սպայակույտ* բառերի հոգնակին պետք է կազմել –ներ մասնիկով, չնայած որ բառարաններում սովորաբար նշվում է –երը. ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ, ՄԲ – *ծերակույտեր*, ԱՀԲԲ, ՄԲ, ՄԲ – *սպայակույտեր*, սակայն ԳԲ – ում՝ *ծերակույտներ, սպայակույտեր* // *սպայակույտներ*:

Տոն վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին հիմնականում կազմվում է –եր-ով, սակայն արդի հայերենում այդ բառերից մի քանիսը նաև դրսևորվում է –ներ վերջավորությամբ: Այսպես՝ *մրցատոներ, նախատոներ* և այլն, բայց և՛ *փառատոներ* /198/137/ԱՀԲԲ, ԳԲ, ՄԲ, ՄԲ/ // *փառատոներ* /25/19/ /ԳԲ/, *կինոփառատոներ* /23/13/ /ԱՀԲԲ, ՄԲ, ՄԲ/ //

¹³ ԱՐԵՎԱԿ-ում այդ բառաձևի ներքո տրված է /13/12/, որից /4/3/-ը արևմտահայերենին հատուկ *անդրադարձեր* վաղակատար ձևաբայն է:

¹⁴ Նախորդի պես ԱՐԵՎԱԿ-ում /21/18/-ից միայն երկուսն է նշված բառի հոգնակին, մնացյալը *վերադարձեր* վաղակատար ձևաբայն է: *Վերադարձներ* օրինակը շատ է, սակայն նախորդների նման խառն է տրված համանուն բայաձևի հետ, ուստի դժվար է հաշվելը:

կինոփառատոններ /2/ /ԳԲ/: Ինչպես և նկատում է Փ. Մեյթիխանյանը, ճիշտ է, որ բոլորը ստանան –եր¹⁵:

Բառ վերջնաբաղադրիչով բառերը, բացառությամբ *խաչբառ*-ի, միմիայն ստանում են –եր վերջավորությունը՝ *գլխաբառեր, հեզնաբառեր, հիմնաբառեր, նշանաբառեր*: *Խաչբառ*-ը ի հայտ է գալիս երկու ձևով էլ: ԱՀԲԲ-ում նշված է –եր մասնիկը, իսկ ԳԲ-ում և ՄԲ-ում՝ երկու դրսևորումն էլ: Եթե ԳԲ-ում նախապատվությունը տրվում է –եր-ով տարբերակին, ապա ՄԲ-ում հակառակն է: Ըստ ԱՐԵՎԱԿ-ի՝ *խաչբառեր/16/13/ // խաչբառներ/4/3/*: Կարծում ենք՝ նշված բառի դեպքում տեղին է –ներ հոգնակերտը, քանի որ այդ հասկացության մեջ որոշակի չէ բառ իմաստը՝ ԱՀԲԲ՝ *խաչբառ* «ժամանցի խնդիր...»:

Հետևյալ գոյականների դեպքում, անշուշտ, ճիշտ է –ներ հոգնակերտը, քանի որ «մի բան ունեցող» իմաստից են առաջացել այդ բառերը: Սակայն պետք է նկատել, որ ըստ ԱՐԵՎԱԿ-ի՝ *կարմրախայտ* բառի դեպքում միայն վկայված է –եր-ով հոգնակին. *կարմրախայտեր/4/3/ // ԱՀԲԲ, ԳԲ// կարմրախայտներ/ԳԲ, ՄԲ, ԺՀԼԲԲ/*, այսպես և՛ *կարմրամորթներ/4/ // ԱՀԲԲ, ԺՀԼԲԲ, ԳԲ, ՄԲ, ՄԲ/*, *սևամորթներ /20/18/ // ԳԲ, ՄԲ, ՄԲ/*, սակայն հանդիպում են նաև հետևյալ օրինակները՝ *կարմրամորթեր /1/*, *սևամորթեր /1/*:

Բառարաններում *գառիվեր* բառի դեպքում ևս առկա է տարբեր հոգնակիակազմիչների նշում: Կարելի է կարծել, որ *գառիվայր* բառի նմանությամբ պետք է կազմվի նաև *գառիվեր* գոյականի հոգնակին: Սակայն առաջինը միշտ առկայանում է –եր հոգնակերտով, իսկ երկրորդը թեև որոշ բառարաններում նույնպես –եր-ի նշումով է, սակայն սովորաբար դրսևորվում է –ներ-ով: ԺՀԼԲԲ-ում և ՄԲ-ում նշվում է –եր մասնիկը, իսկ ԳԲ-ում միակ ճիշտ ձևը համարվում է *գառիվերներ/2/*: Կարծում ենք, որ տեղին է նշված բառի հոգնակին կազմել –եր մասնիկով, ճիշտ այնպես, ինչպես որ կազմվում է *գառիվայր* բառի հոգնակին:

Ջառիթափ և *հողաթափ* բառերը գրավոր աղբյուրներում վկայված են հոգնակիակազմության զուգաձևությամբ: Ահա և բառարանային նշումները՝ ԱՀԲԲ, ՄԲ՝ *գառիթափեր*, ԺՀԼԲԲ՝ *գառիթափներ*, ԳԲ՝ *գառիթափներ /1/ // գառիթափեր /6/*, ԳԲ, ՄԲ՝ *հողաթափեր/46/35/*, ՄԲ՝ *հողաթափներ/12/9/*. ԺՀԼԲԲ-ում տրված բնագրային աղբյուրներում դրսևորված է երկու ձևով: Առաջարկում ենք ճիշտ համարել –եր հոգնակերտով դրսևորումը, որը թե՛ տարածված կիրառությունն է և թե՛ ճիշտ է *թափ* բաղադրիչի «յատակ, խորք, տակը» (ՀԱԲ) իմաստային առումով:

Տարբեր ձևերով է կազմվում նաև –ոռ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին: ԱՀԲԲ-ում և ՄԲ-ում հատկապես նշվում է –եր վերջավորությունը՝ *ականագորեր, թիկնագորեր, հետևագորեր* և այլն: Փ. Մեյթիխանյանն իր ուղղագրական բառարանի նախաբանում թեև ասում է, որ –ոռ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին պետք է կազմել –ներ-ով¹⁶՝ բերելով հետևյալ օրինակները՝ *աշխարհագորներ /2/*, *գրահագորներ*, *կայագորներ /17/11/*,

¹⁵ Նշվ. աշխ., էջ 30:

¹⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 31:

հեծելագործներ /3/, պահակագործներ, սակայն բառացանկում տալիս է նաև *թիկնագործեր*: ԳԲ-ում ևս հիմնականում – *ներ* մասնիկն է նշված, ինչպես՝ *թիկնագործներ /2/, սպայագործներ*, սակայն կա նաև գուգաձևության նշում՝ *հետևակագործներ // հետևակագործեր*: ԱՐԵՎԱԿ-ում ներբեռնված գրավոր աղբյուրներում առկա են նաև – *եր* մասնիկով օրինակներ, որոնք քանակով թեև զիջում են մյուս տարբերակին՝ *աշխարհագործեր /1/, կայագործեր /2/, հեծելագործեր /1/*, բայց և կարծում ենք, որ ճիշտ է այդ ձևը, քանի որ այդպիսի բոլոր բառերում պահպանված է «գործ» իմաստը, թեկուզ և բացակայում է – *ք* վերջածանցը (հմմտ. – *դեպ/ք/* – միջադեպեր, – *շար/ք/* – ատամնաշարեր):

Հոգնակիակազմության գուգաձևությունն առկա է նաև *սկեսրայր* բառում: Ահա և բառարանային նշումները՝ ԱՀԲԲ, ՄԲ, ՄԲ՝ *սկեսրայրեր*, ԳԲ՝ *սկեսրայրներ // սկեսրայրեր*: Թեև ԱՐԵՎԱԿ-ում նշված առումով որևէ տվյալ չկա, բայց և առօրյայում գործածվում է – *ներ*-ով ձևը, հատկապես՝ *սկեսրարներ* ժողովրդախոսակցական տարբերակը: Համացանցային նյութերում ևս հիմնականում – *ներ*-ով դրսևորումն է, իսկ ստ հազվադեպ՝ մյուս տարբերակը: Նկատենք, որ առկա է նաև *քենայր* «քրոջ ամուսին», որը արևելահայերենի բառարաններում միայն – *եր* հոգնակերտի նշումով է (ԱՀԲԲ, ԳԲ, ՄԲ, ՄԲ): Պետք է հավաստել, որ այդ բառը գործածվում է հատկապես արևմտահայերենում, իսկ հոգնակին սովորաբար կազմվում է – *ներ*-ով¹⁷, ինչպես որ վկայում են նաև համացանցում առկա արևմտահայ աղբյուրները: Կարծում ենք, որ այդ բառերի դեպքում ճիշտ է – *ներ* հոգնակերտը, մանավանդ որ այն ադերսվում է ստացական (նույնն է՝ բաշխական) հոգնակիակազմությանը: Մյուս տարբերակի դեպքում կարելի է կարծել, թե սկեսուրը կամ քույրը մեկից ավելի ամուսին ունեն, իսկ – *ներ*-ով ձևը ցույց է տալիս *այրերի* բաշխումը տարբեր սկեսուրների կամ քույրերի միջև: Այսպիսով, ելնելով իմաստային դրսևորումից՝ կարելի է նաև – *եր*-ը գործածել: Մեկ այլ տեսանկյունից էլ՝ *սկեսուր* բառի հոգնակիակազմության համաբանությամբ կարող էր պայմանավորված լինել *սկեսրայր*-ի – *ներ*-ով դրսևորումը:

Քույր վերջնաբաղադրիչով բառերի հոգնակին, ըստ կանոնի, ևս պետք է կազմվի – *եր*-ով: Այդ են հավաստում նաև բառարաններն ու քերականական աշխատությունները: Սակայն, ըստ Արևակի տվյալների, հաճախադեպ են – *ներ*-ով կիրառությունները՝ *հորաքույրեր /1/ // հորաքույրներ /5/, մորաքույրեր /3// մորաքույրներ /9/*: Նկատենք, որ – *ներ*-ով դրսևորումը, նախորդ օրինակների նման, ևս հարում է ստացական կամ բաշխական հոգնակիակազմությանը: Եթե առհասարակ նկատի է առնվում տարբեր մարդկանց կամ ընդհանրական ձևով *մորաքույր* կամ *հորաքույր*, ապա հոգնակին կազմվում է – *ներ*-ով: Այսպես՝ հարսի և փեսայի *հորաքույրներն* ու *մորաքույրները*, ներկա էին *մորաքույրներ*, *հորաքույրներ*: Սակայն կոնկրետ դեպքերում ճիշտ է հոգնակին կազմել – *եր*-ով՝ հարսի *մորաքույրերը*, փեսայի *հորաքույրերը*:

¹⁷ Տե՛ս **Տիշենկճեան Ա.**, Արևմտահայերենի քերականության պատմություն, Ե., 2018, էջ 23:

Վերոնշյալ հանգամանքներով, ասել է թե՛ բաշխականության իմաստով է պայմանավորված *-կին* վերջնաբաղադրիչով բառերի *-ներ* մասնիկով հոգնակիակազմությունը՝ *երեցկիհներ// իրիցկիհներ, քեռակիհներ/ԳԲ// քեռեկիհներ*: ՄԲ-ում *երեցկիհ* բառի համար տրված է *-եր* հոգնակերտը: Վերջինս հատկապես տարածված է արևմտահայերենում, ինչպես որ վկայված է համացանցում ներբեռնված նյութերում: Հիշենք, որ արևմտահայերենում ընդունված է *կիհներ* բառաձևը: Սակայն քերականական աշխատություններում ճիշտ է համարվում բարդությունների *-ներ*-ով տարբերակը¹⁸:

Տարբեր դրսևորումներ են նկատվում նաև հետևյալ դեպքերում՝ *քարաքոսեր /ԱՀԲԲ, ԳԲ, ՄԲ/ /12/7/ // քարաքոսներ/ԳԲ, ՄԲ/ /3/* (նաև՝ *ԺՀԼԲԲ, ՄԲ - ծովաքոսեր, ԱՀԲԲ, ՄԲ, ՄԲ - մամռաքոսեր*), սակայն ընդունելի պետք է համարել առաջինը՝ *-եր*-ով տարբերակը, իսկ մյուսը կարելի է գործածել առանձին դեպքերում՝ տեսակները և բազմազանությունը նկատի առնելիս, ասել է թե՛ բաշխական իմաստով:

-նիստ – բազմանիստեր /ՄԲ, ԳԲ, ՄԲ/ /4/3/ // բազմանիստներ /ԳԲ/, զուգահեռանիստեր /ԺՀԼԲԲ, ԳԲ/, կիսանիստեր /ԳԲ/, քառանիստեր /ԱՀԲԲ, ԳԲ, ՄԲ/ և այլն: Ըստ ԱՀԲԲ-ի՝ *նիստ* բաղադրիչը նշված բառերում հետևյալ իմաստն ունի՝ «առարկայի հարթ մակերես, որ կազմում է անկյունը մի ուրիշ նույնպիսի հարթության հետ, երեսակ»: Տրված բարդություններից բխում է «համապատասխան ձևով կամ չափով նիստ ունեցող» իմաստը, այսինքն՝ այդ տիպի երկրաչափական պատկեր կամ առարկա: Դա նշանակում է, որ, ըստ օրինաչափության, ճիշտ է *-ներ* մասնիկի կիրառությունը, սակայն թերևս վերջինիս դժվար արտասանության պատճառով տարածվել է *-եր*-ով ձևը, որը կարելի է բացառությամբ ընդունելի համարել:

-տող-երկտողեր /16/13/ /ՄԲ, ԳԲ/ // երկտողներ/5//ԳԲ/ (նաև՝ *քառատողեր/9/ /ՄԲ/*): ԱՀԲԲ-ում նշված չէ բառիս հոգնակին, բայց և հատկապես պետք է ուշադրություն դարձնել հետևյալ իմաստներին՝ 4. գ.համառոտ՝ կարճ գրություն՝ նամակ, 5. երկու տողից բաղկացած բանաստեղծական տուն, որոնցից աղերսվում է *-ներ* հոգնակերտը: Սակայն նախորդող բառերի պես կարելի է ընդունելի համարել *-եր*-ը՝ ելնելով դյուրին արտասանությունից և վերջինով պայմանավորված առավել տարածված գործածությունից:

Գետնանուշեր /ՄԲ/ // գետնանուշներ /ԳԲ/: ԱՀԲԲ-ում և ԺՀԼԲԲ-ում հոգնակին տրված չէ, բացատրությունն է՝ 1. թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող միամյա յուղատու բույս, 2. այդ բույսի պտուղը /արախիս/: Քանի որ ոչ թե *անուշ*, այլ *նուշ* բառով է բաղադրված և վերջինիս տեսակ է նշանակում, ուստի տեղին է *-եր* հոգնակերտը:

Ֆ. Խլղաթյանը աշխատություններից մեկում գրում է, որ *-նիշ* վերջնաբաղադրիչով բոլոր բառերն էլ ստանում են *-ներ* հոգնակերտը¹⁹: Փ. Մեյթիխանյանն իր բառարանի նախաբանում նույնի վերաբերյալ գրում է. «Միօրինակության և ուսուցումը հեշտացնելու համար

¹⁸ Նշվ. աշխ., էջ 30:

¹⁹ Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Բ մաս, Ե., 2010, էջ 25:

բոլոր ձևերը պետք է կազմել –ներ-ով, թեև բարդություններում նիշ-ը ունի թե՛ նիշ, թե՛ նշանակող (նշող) իմաստները»²⁰: Հարցն այն է, որ որոշ բառերից առավելապես աղերսվում է «նիշ, նշան», իսկ ուրիշներից՝ «նշող, նշանակող» իմաստը: Մի շարք բառերում էլ նշված իմաստները համազոր են, ուստի և հոգնակիակազմության շփոթ է առաջանում: Ահա և *ձայնանիշ* «նոտա» բառի վերաբերյալ բառարանային նշումները՝ ԱՀԲԲ՝ *ձայնանիշեր*, ԺՀԼԲԲ՝ *ձայնանշեր // ձայնանիշներ*, ՄԲ՝ *ձայնանիշեր*, ԳԲ՝ *ձայնանիշեր // ձայնանիշներ*, ՄԲ՝ *ձայնանիշներ*: Դատելով բառիմաստից և առկա փաստերից՝ կարծում ենք, որ ճիշտ պետք է համարել *ձայնանիշեր* բառաձևը:

Ելնելով բառարանային տվյալներից, համապատասխան աշխատություններից, տարածված գործածությունից և բառիմաստներից՝ այդպիսի բառերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ.-*նիշ/-ներ/* –ախտանիշ, դրոշմանիշ, եռանիշ, խորհրդանիշ, հականիշ, համանիշ, համարանիշ, հոմանիշ, մակնիշ, նամականիշ, նույնանիշ, չափանիշ, ցուցանիշ, ուղենիշն այլն. -*նիշ /-եր/* - ալիքանիշ, անցումանիշ «անցումային նիշ», գնահատանիշ, գրանիշ, թվանիշ, խարտանիշ, հաշվենիշ, հենանիշ, ձայնանիշ, սղոցանիշ: Ի տարբերություն այլ մասնագետների՝ առաջարկում ենք տվյալ բոլոր բառերի հոգնակին կազմել –*եր-ով*, քանի որ նիշ, նշան, նշող և նշանակող իմաստները հոմանիշներ են:

Պետ վերջնաբաղադրիչով բոլոր բարդությունների հոգնակի թիվը կազմվում է –*ներ* վերջավորությամբ, մեծ մասինը՝ նաև –*եր-ով*, թեև գրեթե բոլորում էլ հիմնական իմաստի կազմիչը վերջնաբաղադրիչն է: Թերևս պատճառն այն է, որ նշված բառարմատով վերջացող *նահապետ* և *կարապետ* բառերի առաջին բաղադրիչներն արդի լեզվափոխում անըմբռնելի են, ուստի և սովորական բազմավանկ բառերի նման վաղուց դրսևորվել են–*ներ* հոգնակերտով, որը հետագայում տարածվել է այլ օրինակների վրա ևս: Բացի դրանից՝ կարող էր տարածման հիմք հանդիսանալ նաև ստացական հոգնակին, որը հատուկ է սովորական միավանկ գոյականներին և դրանց վերջնաբաղադրությամբ բառերին: Նշված վերջնաբաղադրով բառերի մեծ մասի բաղադրիչներից աղերսվում է հատկացուցիչ-հատկացյալ կապը, ինչպես՝ *ագարակապետ*, *բանտապետ*, *գյուղապետ*, *քաղաքապետ* և այլն: Այդ բառերի հոգնակին –*եր* վերջավորությամբ կարող է ընկալվել որպես վայրերից յուրաքանչյուրի *պետեր*, մինչդեռ –*ներ-ով* արտահայտությունը տարբեր վայրերի՝ գյուղերի, քաղաքների և այլն: Այսպես՝ Երևանի բոլոր *քաղաքապետերը*, սակայն՝ Երևանի և Գյումրիի *քաղաքապետները*. ներկա էին *գյուղապետներ* և *քաղաքապետներ*: Թեև գործածական է նաև –*եր-ով* ձևը, սակայն կարծես թե ոչ մի դեպքում չենք ասի՝ *գյուղապետերդ* զբաղեցրեք ձեր տեղերը (կամ ուղղակի՝ *տեղներդ*), այլ կասենք՝ *գյուղապետներդ*: Այսպիսով, –*ներ-ով* դրսևորումը ոչ միայն առնչվում է ստացական հոգնակին, այլև՝ որոշ դեպքերում նաև դիմորոշ հոդին: Ավելորդ դժվարություններից խուսափելու համար –*պետ-ով* վերջացող բոլոր բառերի հոգնակին կարելի է կազմել միմիայն –*ներ* մասնիկով:

²⁰Մեյթիխանյան Փ., նշվ. աշխ., էջ 27-28:

Եզրակացություն

Ինչպես և նկատվեց, արդի հայերենում զգալի թվով գոյականներ, ամենատարբեր գործոններով պայմանավորված, ցուցաբերում են հոգնակիակազմության շեղումներ: Միասնական մոտեցում ցուցաբերելու և ընդհանուր օրինաչափությանը համապատասխանող ձևերը բառարաններում կամ քերականական աշխատություններում նշելու դեպքում կարող ենք հիմք դնել կանոնարկման և միաժամանակ խուսափել այլ շեղումներից:

Օգտագործված գրականության ցանկ

Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հ. Ա-Դ, Ե., 1926:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:

Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

Գյուրջինյան Դ., Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում. քերականական բառարան-տեղեկատու, «Լիմուշ» հրատ., Ե., 2007:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1969:

Խաչատրյան Վ., Գոյականի հոգնակիակազմության որոշ հարցեր արդի հայերենում, ՀԱՊՀ, Լրաբեր. գիտական հոդվածների ժողովածու, մաս 3, Ճարտարագետ, Ե. 2020, էջ 651-659:

Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Բ մաս, Ե., 2010:

Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Ե., 1944:

Մարության Ա., Հայոց լեզվի միավանկ վերջնաբաղադրիչով բաղադրյալ բառերի հոգնակիակազմության բառարան, «Զանգակ-97» հրատ., Ե., 2003:

Մեյթիխանյան Փ., Հայերենի ուղղագրական նոր բառարան, Ե., 2013:

Նոր բառեր, Ա-Զ պրակներ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Ե., 2015-2021 թթ.:

Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Ե., 1987:

Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք., Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Ե., 2002:

Ֆիշենկճեան Ա., Արեւմտահայերէնի քերականութեան պատմութիւն, Ե., 2018:

Արևելահայերենի ազգային կորպուս, [http://eanc.net/EANC/search/? interface language=am](http://eanc.net/EANC/search/?interface%20language=am)

РЕЗЮМЕ
ОТКЛОНЕНИЯ ОБРАЗОВАНИЯ МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА СУЩЕСТВИТЕЛЬНЫХ В
СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ. НОРМАТИВНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ
Хачатрян Валентин

В данной статье были рассмотрены отклонения образования множественного числа имени существительного в современном армянском языке, отмечены соответствующие закономерности формы и сделаны предложения по регулированию.

Ключевые слова: множественное число, образование множественного числа, окончание, частица, отклонение, существительное, односложный, последний компонент, словоформа, регулярность, регулирование.

SUMMARY
DEVIATIONS IN THE FORMATION OF THE PLURAL OF NOUNS IN THE
MODERN ARMENIAN LANGUAGE. REGULATORY PROPOSALS
Khachatryan Valentin

In this article, the deviations of the plural formation of the noun in modern Armenian were examined, the forms corresponding to the regularity were noted and proposals for regulation were made.

Key words: plural, plural formation, ending, particle, deviation, noun, monosyllabic, final component, word form, regularity, regulation.

Է. ԱՂԱՅԱՆԸ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կատվայան Վիկտոր

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

բանասիրական գիտությունների դոկտոր

viktorkatvalyan@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-145

Բանալի բառեր. բարբառ, ըմբռնում, ծագում, դասակարգում, ճյուղ, հատկանիշ, ձայնավորների ներդաշնակություն:

Ներածություն

Հայ բարբառագիտության մեջ տարաբնույթ մեկնաբանություններ են ունեցել տեսական այնպիսի հարցեր, ինչպիսիք են բարբառ իրողության ըմբռնման, բարբառների ծագման, դասակարգման խնդիրները, կիրառվել են բարբառային միավորների ու հատկանիշների հետազոտության տարբեր եղանակներ ու մեթոդներ: Է.Աղայանի՝ հայերենի բարբառներին անդրադարձները կարելի է բաժանել երկու խմբի. ա) տեսական խնդիրների արծարծումներ, բ) բարբառագիտական հետազոտություններ: Երկու դեպքում էլ լեզվաբանը հանդես է բերել երևույթների դիտարկման ու քննարկման գիտական մեծ խորաթափանցություն, համակարգային մոտեցում, սկզբունքայնություն և ժամանակի գիտական պատկերացումների ընկալում:

Բարբառի ըմբռնման հարցը

Բարբառագիտական տեսական շատ պատկերացումներ նախ և առաջ պայմանավորված են բարբառի ըմբռնումով: Հայ իրականության մեջ շարունակում է արդիական մնալ այս հարցի արծարծումը որոշ կարծրատիպերի առկայության պատճառով:

Նախ նկատենք, որ լեզվի այս գոյաձևի մեկնաբանության՝ ուշադրության արժանի մի շարք դիտարկումներ կան հայ բարբառագիտության մեջ: Այսպես, ըստ Բ.Պատկանյանի՝ բարբառները լեզվի գոյության տեսակներ են, դրանք առկա են ցանկացած կենդանի լեզվում¹, Ա.Այտընյանը համարել է, որ բարբառը լեզվի՝ մշակման չենթարկվող, փոփոխությունների առավել ենթակա տարբերակ է², Հ.Աճառյանը լեզուն բնութագրում է իբրև անհամար բազմազանությունների շարք³, Աբեղյանը բարբառը բնորոշում է իբրև նույն լեզվին պատկանող մարդկանց մի մասի տեղական խոսվածք⁴: Մյուս կողմից՝ այսպես կոչված «ստալինյան լեզվաբանական ուսմունքի» լույսի ներքո հայ իրականության մեջ ընդունվել է

¹ Տե՛ս **Պատկանյան Բ.**, Исследование о диалектах армянского языка, էջ 2:

² **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, էջ 48:

³ **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 324-325:

⁴ **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, էջ 47:

բարբառների այնպիսի բնութագրում, համաձայն որի՝ դրանք ընդհանուր լեզվի ճյուղավորումներ են⁵: Ներկայում էլ լեզվի ճյուղավորում լինելը մնում է իբրև բարբառի՝ համընդհանուր ընդունելության արժանացած որակում⁶: Նման ընկալման գործում իր ներդրումն ունի նաև Է.Աղայանը, որը, բարբառը ներկայացնելով իբրև լեզվի տարածական տարբերակ, այն բնորոշում է այսպես. բարբառ է կոչվում ընդհանուր լեզվի ճյուղավորումը հանդիսացող այն համակարգը, որն իր յուրահատկություններով ընդհանուր է հասարակության այս կամ այն հատվածին՝ որոշ տարածքի վրա⁷: Նման մեկնաբանությամբ⁸ երևույթը ներկայացվում է այլ, ավելի ընդհանուր, ինչպես նաև արտալեզվական (տարածություն) իրողությունների նկատմամբ ունեցած հարաբերությամբ: Է.Աղայանը պնդում է. «բարբառները իրենց քերականությամբ, բառապաշարով ու հնչյունական համակարգով ոչ այլ ինչ են, եթե ոչ ընդհանուր լեզվի ձևափոխված վիճակը՝ այս կամ այն տարածքային հատվածում»⁹, որից ենթադրվում է, որ նախնական միասնական և ընդհանուր լեզվավիճակը այս կամ այն տարածքում ենթարկվել է ձևափոխությունների՝ առաջ բերելով բարբառներ: Ասվածը համահունչ է Աճառյանի այն տեսակետին, որ 5-րդ դարում կար միասնական հայերեն, չկային բարբառներ, և բարբառները առաջացան հետագայում՝ գրաբարի քայքայման, տրոհման հետևանքով: Իրականում խոսքը վերաբերում է լեզու-բարբառ փոխհարաբերությունների ընկալմանը: Բարբառները դիտվում են իբրև լեզվից ածանցված, նրա տրոհմամբ առաջացած իրողություններ, մինչդեռ բարբառները լեզվի գոյավիճակներն են, լեզուն հենց տարբերակային դրսևորումների, տվյալ դեպքում՝ բարբառների ամբողջությունն է նախ և առաջ, դրանց միասնությունը: Մենք բարբառը ընկալում ենք իբրև տվյալ լեզվի՝ գիտակցական նորմավորման ու կարգաբերման չենթարկված, բնական գոյաձևը կամ վիճակը ներկայացնող համակարգ, որն իր հատկանիշների յուրահատուկ գուգորդումներով տարբերվում է նույն լեզվի՝ այլ տարածքներում դրսևորվող համանման համակարգային դրսևորումներից: Լինելով նույն լեզվի դրսևորումներ՝ բարբառները իրենց հիմնական հատկանիշներով նույնական են, սակայն յուրաքանչյուր դեպքում ընդհանուր հատկանիշները ուղեկցվում են մասնավոր հատկանիշների յուրահատուկ փնջերով, որոնցով էլ բարբառները դառնում են նույն լեզվի տարբեր գոյաձևեր: Հետևում է, որ բարբառների գոյության բուն պատճառը լեզվի բնական վիճակի անմիօրինակությունն է՝ պայմանավորված լեզուն կրողների և օգտագործողների

⁵Տե՛ս **Ղարիբջան Ա.**, Հայ բարբառագիտություն, էջ 39:

⁶Տե՛ս **Գրիգորյան Ա.**, Հայ բարբառագիտության դասընթաց, էջ 9. **Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ.**, Լեզվաբանական բառարան, էջ 59:

⁷**Աղայան Է.**, Լեզվաբանության հիմունքներ, էջ 92:

⁸Թերևս չբավարարվելով հիշյալ սահմանումով՝ Է.Աղայանը այնուամենայնիվ փորձել է լրացուցիչ բացատրություն տալ՝ գրելով, թե հենց այն, ինչը որ առանձնացնում, տարբերում է բարբառը ընդհանուր լեզվից՝ կազմում է բարբառի էությունը (տե՛ս **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 93)

⁹Նույն տեղում:

բնական անմիօրինակությամբ և ապա նաև՝ բոլոր լեզվակիրների միասնական հաղորդակցման անհնարինությամբ:

Բարբառների ծագման հարցը

Բարբառ իրողության ըմբռնման հետ սերտորեն առնչվում է բարբառների ձևավորման կամ առաջացման հարցը: Այս դեպքում ևս հայ բարբառագիտության մեջ եղել են տարակարծություններ: Հարցը լայն քննարկման առարկա է դարձել «Պատմաբանասիրական» հանդեսի էջերում 1958-1960 թթ.¹⁰: Իր տեսակետն է արտահայտել նաև Է.Աղայանը¹¹: Ընդ որում, եթե բանավիճողների մի կողմը պնդում էր, որ բարբառները առաջացել են գրաբարից հետո և նրա քայքայումով (Գ.Սևակ), իսկ մյուս մասի կարծիքով՝ բարբառները գալիս են ավելի վաղ ժամանակներից (Ղարիբյան, Գ.Զահուկյան, Ս.Ղազարյան), Էդ.Աղայանը, թվում է, առաջարկում էր երրորդ տարբերակ: Միանգամայն ճիշտ ու սպառիչ համարելով Հ.Աճառյանի կարծիքը հինգերորդ դարի հայ բարբառների վերաբերյալ՝ Է.Աղայանը համարում է, որ պետք է տարբերակել հին հայերեն բարբառներ և նոր հայերեն բարբառներ հասկացությունները¹²: Լեզվաբանը իրավացիորեն նկատում է. «Ամեն մի լեզու ունի իր բարբառները: Այդ բարբառները կարող են առավել կամ պակաս տարբերություններ ունենալ, բայց բոլոր դեպքերում էլ նրանք կան: Չկա լեզու, որ բարբառներ չունենա»¹³: Ըստ հայ ժողովրդի և հայերենի կազմավորման վերաբերյալ Է.Աղայանի պատկերացումների¹⁴՝ հայերենը նախ դրսևորվել է իբրև բարբառների ամբողջություն, որոնք համաժողովրդական հայերեն լեզվի կազմավորումից հետո մահացել են, իսկ հետագայում ձևավորվել են նոր բարբառներ. «IV-V դարերը մոտավոր սահմանագիծն են հանդիսանում հին հայերեն բարբառների մահացման և նոր բարբառների սաղմնավորման»¹⁵: Գրաբարը ժամանակի համաժողովրդական, ընդհանուր խոսակցական լեզուն էր և գտնվելով բարբառային ճյուղավորումների գործընթացում՝ հետագայում ենթարկվեց ուժգին փոփոխությունների, որը և հանգեցրեց *նոր հայերեն բարբառների* առաջացմանը¹⁶: Նկատենք, որ որքան էլ Է. Աղայանը դիմում է նաև հունարենի օրինակի օգնությանը, հայ ժողովրդի պատմական զարգացման դրվագներին կամ Հ.Աճառյանի

¹⁰ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1958, 3, էջ 240-266, **Սևակ Գ.**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1959, 1, էջ 224-245, **Զահուկյան Գ.**, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, 1959, 2-3, էջ 282-319, **Ղազարյան Ս.**, Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1960, 3, էջ 172-192:

¹¹ **Աղայան Է.**, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, ՊԲՀ, 1958, թիվ 2, էջ 211-233:

¹² Նշվ. աշխ. էջ 226:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Ըստ Է.Աղայանի՝ քանի որ հայերենը հնդեվրոպական լեզվի ճյուղավորում է, ուրեմն մ.թ.ա. երրորդ հազարամյակից մինչև երկրորդ հազարամյակի սկիզբները, երբ առաջանում էին հնդեվրոպական ցեղակից լեզուները, կային ցեղեր, որոնք խոսում էին *նախահայերեն* լեզվով, և միանգամայն բնական է, որ այդ լեզուն պետք է ունենար իր բարբառները (տե՛ս նշվ. աշխ., էջ 227):

¹⁵ Նշվ. աշխ., էջ 227:

¹⁶ Նշվ. աշխ., էջ 228:

փաստարկներին¹⁷, միննույն է, լեզվաբանի՝ հին հայերեն բարբառների միաձուլումով (հետևաբար՝ վերացումով) համաժողովրդական լեզվի առաջացման, ապա վերջինիս քայքայմամբ նոր բարբառների առաջացման տեսությունը համոզիչ չէ: Ի դեպ, թերևս Է.Աղայանը տեղյակ չի եղել, որ նման կարծիք արդեն հայտնվել էր. Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» թերթը 1913 թ. հոկտեմբերի իր համարներից մեկում տեղեկացնում է, որ Գևորգյան հոգևոր ճեմարանի ցերեկույթի ժամանակ Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը ներկայացրել է իր անձնական ենթադրությունը հայ բարբառների անցյալի վերաբերյալ: Ըստ հայր Մաքսուդյանի՝ «Ե դարում պետք է գոյութիւն ունեցած լինէր մի ընդհանուր հայերէն լեզու նման հունական կոյնէին, ուրիշ խոսքով՝ հնագոյն հայ բարբառները տառերի գիւտի շրջանում պետք է ձուլւած լինէին ի մի»: Ճառախոսը իբրև փաստարկ նշում է, որ մեր արդի բարբառներն ըստ ամենայնի համերաշխ են երևում դասական հայերենի հետ՝ ստացած լինելով միայն հետքեր նախկին անհետացած բարբառներից¹⁸:

Բարբառների դասակարգման հարցը

Հայ իրականության մեջ հայտնի են բարբառների աշխարհագրական, ձևաբանական, հնչյունական դասակարգումներ: «Մեղրու բարբառը» աշխատության վերջում՝ «Հայերեն բարբառների դասակարգումը» հատվածում, խնդիրը քննում է նաև Է.Աղայանը: Հիշատակելով Աճառյանի, Ղարիբյանի, Գրիգորյանի կատարած ձևաբանական դասակարգումները՝ Աղայանը անդրադառնում է Ղարիբյանի ընդունած յոթ ճյուղերին, նշում, որ նման մոտեցմամբ գործ ունենք ոչ թե կազմության եղանակի կամ սկզբունքի, այլ ձևի հետ¹⁹: Լեզվաբանը անհրաժեշտ է համարում գտնել բարբառների դասակարգման նոր հիմունք, և այդ հիմունքը պետք է լինի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակների կազմության եղանակը, սկզբունքը: «Մենք հայերեն բոլոր բարբառները բաժանում ենք երկու ճյուղի՝ դերբայական կազմությամբ ներկայով բարբառներ և գրաբարակերպ-մասնիկավոր կազմությամբ բարբառներ»²⁰: Հետաքրքրական է, որ Աղայանը չի հիշատակում Ղարիբյանի ընդունած երեք ճյուղերը՝ դերբայավոր, մասնիկավոր և գրաբարակերպ: Ինչևէ, այս առիթով դիտարկում ունի նաև Գ.Զահուկյանը. «1953թ. Ա.Ղարիբյանը իր «Հայ բարբառագիտության» մեջ տարբերում է հայ բարբառների 3 խումբ և 7 ճյուղ. թեև հստակորեն չի նշվում, բայց ակնհայտ է, որ խմբերի առանձնացման համար հիմք է ծառայում տիպաբանական, ճյուղերի առանձնացման համար՝ նյութական ընդհանրությունը: Ըստ ներկայի և անցյալի անկատարի կազմության եղանակի տարբերվում են դերբայավոր, մասնիկավոր ու գրաբարակերպ խմբեր.... Իր «Մեղրու բարբառը» մենագրության վերջում (1954 թ.) Է.Աղայանը տալիս է մոտավորապես նույն

¹⁷Տե՛ս նշվ. աշխ., էջ 228-229:

¹⁸Տե՛ս Հայ բարբառների անցեալը, «Հորիզոն» (Թիֆլիս), 25 հոկտեմբերի, թիվ 240, էջ 4:

¹⁹Տե՛ս Աղայան Է., Մեղրու բարբառը, էջ 402:

²⁰Նշվ. աշխ., էջ 403:

դասակարգումը՝ այն տարբերությամբ, որ ա) միացնում է գրաբարակերպ ու մասնիկավոր տիպերը և տարբերում գրաբարակերպ-մասնիկավոր ու դերբայական կազմությամբ ներկայով բարբառներ, բ) Ղարիբյանի առանձնացրած «խմբերը» կոչում է «ճյուղեր», իսկ «ճյուղերը»՝ «ենթաճյուղեր»²¹:

«Մեղրու բարբառը» աշխատությունը

Հայ բարբառագիտության մնայուն աշխատանքներից է Է.Աղայանի «Մեղրու բարբառը» աշխատությունը: Այն բարբառի հանգամանակից և գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է:

Հետազոտության հենց սկզբում Աղայանը նշում է. «Մեղրու բարբառ ասելով պետք է հասկանալ ոչ թե այն բարբառը, որով այժմ խոսում են մեղրեցիները, այլ այն, որը գոյություն է ունեցել մինչև 1900-1920 թվականները, և որն իբրև կենդանի բարբառ այլևս գոյություն չունի: ... Ամբողջ Մեղրու ազգաբնակչությունը 1880-1900 թվականներին կազմել է մոտ 1400 շունչ, որոնք խոսել են Մեղրու բարբառով, իսկ այժմ, ինչպես ասացինք, չափազանց քիչ է այն մարդկանց թիվը, որոնք իրար հետ, այն էլ ոչ միշտ, խոսում են Մեղրու բարբառով. դրանց թիվը առ առավելն կլինի հարյուր»²²: Ինչևէ, ահրաժեշտ նյութեր հավաքելով բարբառակիրներից, ինչպես նաև օգտագործելով արդեն եղած նյութերը՝ Աղայանը հանգամանորեն հետազոտում է բարբառի հնչյունական, ձևաբանական համակարգերը, բառապաշարը և արդյունքները ներկայացնում Աճառյանի մեթոդով ու ժամանակի բարբառագիտական մտքի մակարդակով: Հնչյունական համակարգը նկարագրելիս ներկայացնում է բազմաթիվ օրինաչափություններ, հնչյունների դիրքային պայմանավորվածություններ ու սահմանափակումներ, հնչյունափոխական օրինաչափություններ, բացառություններ: Լեզվաբանը ցույց է տալիս, որ շատ իրողություններ պայմանավորված են բառերի հնչյունական կազմությամբ, վանկակազմությամբ, շեշտի ազդեցությամբ: Տարածաշրջանի այլ բարբառների պես Մեղրու բարբառի ձայնավորական համակարգը, այսպիսով, շատ բարդ պատկեր է ներկայացնում, մանավանդ բավականին գործուն է ձայնավորների ներդաշնակության օրենքը. բազմաթիվ հնչյունական փոփոխություններ կարելի է բացատրել միայն այդ օրենքով: Աղայանին հաջողվել է ամենայն մանրամասնությամբ նկարագրել նաև բաղաձայնական համակարգը: Նա ներկայացնում է հետաքրքրական մի շարք իրողություններ: Օրինակ, բարբառում *ն* ռնգայինից առաջ *ր*-ն դառնում է *ռ* (արիւնել>ըռնէլ, որդն>ռռնը, որը>հուռնը, կանկար>կանգառնը, հայր>հար – հէռն անիծած)²³, կամ՝ բառի ներքում *ջ, ճ, չ*-ից առաջ ավելանում է *ն* (եղիճ>հաղէնջ, ամաչել>հրմանչիլ, կանաչ>կանէնչ, ճանաչել>ճընանչիլ, չամիչ>չօմէնչ, մէջ>մաջ>մանջ)²⁴:

²¹ **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 21-22:

²² **Աղայան Է.**, Մեղրու բարբառը, էջ 7:

²³ **Տե՛ս Աղայան Է.**, Մեղրու բարբառը, էջ 93:

²⁴ **Տե՛ս նշվ. աշխ.**, էջ 97:

Ինչպես հնչունական, այնպես էլ քերականական շատ իրողություններ լեզվաբանը բխեցնում է գրաբարյաններից. օրինակ՝ համարում է, որ հոգնակի ուղղականում և հայցականում –*նէ* մասնիկը ներկայացնում է գրաբարյան –*անի*-ն, իսկ հոգնակի թեք հոլովների –*նէր* մասնիկը ներկայացնում է գրաբարյան –*նէար*-ը (կաքավնե-կաքավներու): Հետաքրքրական է, որ անձներական թվականները հարազատ կերպով պահպանված են Մեղրու բարբառում (ըրկօքէն, իրիքքէ) և շարունակում են իրենց գրաբարաձև հոլովումը (ըրկօցուն)²⁵: Շատ դեպքերում Աղայանը նաև մեկնաբանում է իրողությունները: Այսպես՝ կարծում է, որ վերլուծական բացառականի *էնից*//*հէնից* ձևերը առաջացել են դերանունների բացառական հոլովից (*ինձանից*, *քեզանից* ձևերի *անից* մասի համաբանությամբ՝ *ծառու հէնից*)²⁶ : Այստեղից նա հանգում է կարևոր եզրահանգման. նկատի ունենալով բացառականի, գործիականի և ներգոյականի անջատ մասնիկները (հէնից, հէնավ, հէնամ)՝ պետք է արձանագրել, որ ոչ միայն անկախ բառերը կարող են ժամանակի ընթացքում դառնալ նախադրություններ և ապա վերածվել մասնիկների, ինչպես ընդունված է լեզվաբանության մեջ, այլև մասնիկները կարող են գիտակցվել իբրև անկախ ձևույթներ և վերածվել նախադրությունների, այսինքն՝ օժանդակ բառերի²⁷ : Շատ կարևոր է, որ Աղայանը բարբառի քերականական որևէ իրողություն դիտարկում է ինչպես լեզվի պատմական զարգացման համատեքստում, այնպես էլ մերձավոր բարբառների համանման իրողությունների հետ կապի մեջ: Այսպես, նա Մեղրու բարբառի ներկա ժամանակաձևի կազմությունը բխեցնում է հինհայերենյան նախդրիվ հայցականից՝ *ի խօսելիս եւ* (խոսելու մեջ եւ): Համեմատելով Մեղրու, Կարճևանի և Կաքավաբերդի բարբառների անկատար դերբայները՝ վերականգնում է զարգացման հետևյալ ընթացքը՝ մնալիս (Կքվ)//մնայիս (Կքվ) > մնայս (Կրճ) > մնաս (Մղր)//մնայ (Կրճ)²⁸: Ուշագրավ է, որ Մեղրիում անկատարը ունի նաև անկախ կիրառություն. Քու խընդիս մարդըտ տեղըս չի (Քու ուզած մարդը այստեղ չի)²⁹: Ամփոփելով հետազոտությունը՝ Աղայանը եզրակացնում է, որ Մեղրու բարբառի հոլովական համակարգը խառը պատկեր է ներկայացնում, իսկ բայերի խոնարհումը հոլովման համեմատությամբ մի շատ պարզ վիճակի է հասել. եղանակային ձևերի մեծ մասը կազմվում է *դերբայ - օժանդակ բայ* կաղապարով, սղման ու շեշտադրության կանոնները, որ խառն են հոլովման ժամանակ, խոնարհման ժամանակ կիրառվում են հաստատուն կանոններով: Հոլովումը նույն վիճակին չի հասել բարբառի մահացման պատճառով³⁰:

²⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 179-180:

²⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ 124-125:

²⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 125-126:

²⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 193:

²⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 193:

³⁰ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 237:

Եզրակացություն

Իր աշխատություններում Է.Աղայանը անդրադարձել է բարբառագիտական կարևորագույն տեսական հարցերի: Լեզվի բարբառային տարբերակների ըմբռնման և բնութագրման հարցում նա հետևել է ժամանակի լեզվաբանական ընկալումներին ու պատկերացումներին և բարբառը համարել է ընդհանուր լեզվի ճյուղավորումը հանդիսացող համակարգ, որն իր յուրահատկություններով ընդհանուր է հասարակության այս կամ այն հատվածին՝ որոշ տարածքի վրա: Վիճարկելի է նաև բարբառների ծագման՝ Աղայանի մեկնաբանությունը. նրա կարծիքով՝ հայերենը նախ դրսևորվել է իբրև բարբառների ամբողջություն, որոնք համաժողովրդական հայերեն լեզվի կազմավորումից հետո մահացել են, ապա հետագայում ձևավորվել են հայերենի նոր բարբառները: Բարբառների դասակարգման հարցում Աղայանը տալիս է մոտավորապես նույն դասակարգումը, ինչ իրենից առաջ կատարել էր Ա.Ղարիբյանը: Բարբառագիտական առումով առավել կարևոր է Է.Աղայանի «Մեղրու բարբառը» հետազոտությունը, որի մեջ լեզվաբանը հանգամանորեն ներկայացնում է բարբառի հնչյունական, ձևաբանական համակարգերը, բառապաշարը, մեկնաբանում ու բացատրում է բարբառային լեզվի մի շարք իրողություններ՝ դրանք դիտարկելով ինչպես լեզվի պատմական զարգացման համատեքստում, այնպես էլ մերձավոր բարբառների համանման երևույթների հետ կապի մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 848 էջ:

Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևանի համալս. հրատ., 1987, 736 էջ:

Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1954, 407 էջ:

Աղայան Է., Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, ՊԲՀ, 1958, թիվ 2, էջ 211-233:

Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Մաս 2-րդ, ԵՊՀ հրատ., 2013, 624 էջ:

Այտընյան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1866, 866 էջ:

Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, ԵՊՀ հրատ., 1957, 543 էջ:

Հայ բարբառների անցեալը, «Հորիզոն» (Թիֆլիս), 25 հոկտեմբերի, թիվ 240, էջ 4:

Ղազարյան Ս., Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1960, 3, էջ 172-192:

Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ., 1953, 457 էջ:

Ղարիբյան Ա., Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1958, 3, էջ 240-266:

Պետրոսյան Հ. և այլք, Լեզվաբանական բառարան, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 328 էջ:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, 347 էջ:

Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, ՊԲՀ, 1959, 2-3, էջ 282-319:

Սևակ Գ., Հայ բարբառների ծագման հարցի շուրջը, ՊԲՀ, 1959, 1, էջ 224-245:

Патканов К., Исследование о диалектах армянского языка, СПб, тип. Имп. АН, 1869, 109 с.

РЕЗЮМЕ
Ջ. ԱԳԱՅՆ Օ ԴԻԱԼԵԿՏԱԽ
Կատվալյան Վիկտոր

В своих работах Э. Агаян затронул важнейшие теоретические вопросы диалектологии. Он считал диалект разветвленной системой общего языка, которая своими особенностями является общей для той или иной части общества на определенной территории. По его мнению, армянский язык впервые появился как совокупность диалектов, которые умерли после образования общенародного языка, а позднее образовались новые диалекты армянского языка. Что касается классификации диалектов, то Агаян дает примерно такую же классификацию, как до него А. Гарибян. С точки зрения диалектологии большее значение имеет исследование Э. Агаяна «Диалект Мегру», в котором лингвист интерпретирует диалектные реалии в контексте исторического развития языка, а также в связи с аналогичными явлениями родственных диалектов.

Ключевые слова: диалект, восприятие, происхождение, классификация, ветвь, признак, гармония гласных.

SUMMARY
E. AGHAYAN ABOUT DIALECTS
Katvalyan Viktor

In his works, E. Aghayan addressed the most important theoretical issues of dialectology. He considered the dialect to be a branching system of the common language, which with its peculiarities is common to one or another part of the society in a certain area. In his opinion, the Armenian language first appeared as a set of dialects that died after the formation of a national language, and later new dialects of the Armenian language were formed. Regarding the classification of dialects, Aghayan gives approximately the same classification as A. Gharibyan did before him. In terms of dialectology, E. Aghayan's "Meghru Dialect" research is more important, in which the linguist interprets the dialect realities in the context of the historical development of the language, also in connection with similar phenomena of related dialects.

Key words: dialect, perception, origin, classification, branch, feature, harmony of vowels.

ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Հակոբյան Ֆրիդա

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

բանասիրական գիտությունների թեկնածու

գիտաշխատող

frida.hakobyan@gmail.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-153

Բանալի բառեր. Էլեկտրոնային բառարանագրություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, վեբ տեխնոլոգիաներ, արհեստական բանականություն, էլեկտրոնային բառարան, շտեմարան, մեքենական որոնում:

Ժամանակակից վեբ տեխնոլոգիաները զարգացման միանգամայն նոր մակարդակի են հասցրել լեզվի կիրառական տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքները: Վերջին տարիներին դրանք լայնորեն կիրառվում են նաև էլեկտրոնային բառարանագրության մեջ: Էլեկտրոնային բառարանագրությունը համակարգչային լեզվաբանության ամենաարագ զարգացող ուղղություններից է: Այն զբաղվում է էլեկտրոնային բառարանների ստեղծմամբ, բառարանային հոդվածների կազմմամբ, բառահոդվածների ներկայացման եղանակների մշակմամբ: Ըստ իրենց բնույթի՝ էլեկտրոնային բառարանները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

1. Լեզվական տվյալների մշակման, էլեկտրոնային թարգմանությունների համար մեքենական ձևաչափով կազմված բառարաններ, որոնք նախատեսված չեն առանձին օգտագործման համար:

2. Տարբեր բնույթի և նպատակի ծառայող, լեզվակիր հանրության պահանջները բավարարող էլեկտրոնային բառարաններ, որոնք աչքի են ընկնում բառամիավորների առավել լիակատար նկարագրությամբ, ներկայացնում են բառապաշարային տարբեր խմբերի միջև գործող իմաստային-հասկացական հարաբերությունները:

Համակարգչային բառարանագրության վաղ փուլում համակարգիչներն ու համակարգչային ծրագրերն օգտագործվում էին բառարանագրական աշխատանքների կատարման ժամանակ: Այնուհետև էլեկտրոնային բառարանագրության մեջ սկսեցին լայնորեն կիրառվել վեբ տեխնոլոգիաները, որոնք հնարավոր դարձրին էլեկտրոնային բառարանների ստեղծումը և ապահովեցին դրանց համացանցային հասանելիությունը: Արդի փուլում արհեստական բանականության (ԱԲ) համակարգերը արմատապես վերափոխում են այս բնագավառում կատարվող աշխատանքները, քանի որ դրանք ոչ միայն հանդես են գալիս իբրև բառարանների կազմմանն աջակցող ծրագրեր, այլև շատ դեպքերում փոխարինում են լեզվաբան-բառարանագրին: Եթե բնական լեզվի մշակման գործիքներն օգտագործվում են լեզվաբանի կողմից իբրև օժանդակ միջոց բառարանագրական

աշխատանքների կատարման ժամանակ, արհեստական բանականության համակարգերը կատարում են բառիմաստի բացատրությունը բառարանագրի փոխարեն:

Այժմ տեսնենք, թե որոնք են ԱԲ համակարգերը, ինչպես են դրանք աշխատում: Արհեստական բանականության ծրագրերի հիմքում ընկած են լեզվի մեքենական ուսուցման տեխնոլոգիաներն ու ալգորիթմները: Մեքենայական խորը ուսուցումը (deep learning) համակարգչային գիտության արագ զարգացող հեռանկարային ուղղություններից է: Գիտնականներին մշտապես հետաքրքրել է, թե ինչ է բանականությունը, ինչպես է աշխատում մարդու ուղեղը, ինչպես կարելի է տեխնոլոգիաների օգնությամբ կրկնօրինակել մարդու ուղեղի աշխատանքը և ստեղծել արհեստական բանականություն: Ըստ էության՝ արհեստական բանականության համակարգերն աշխատում են նեյրոնային ցանցերի միջոցով, որոնք կրկնօրինակում են մարդու ուղեղի աշխատանքը: Վերջին տարիներին տեխնոլոգիական ոլորտի առաջատար ընկերությունները հսկայական ջանքեր են գործադրում արհեստական բանականության համակերգեր ստեղծելու և դրանք տարբեր ոլորտներում կիրառելու ուղղությամբ: ԱԲ համակարգերն ունեն տեսական և գործնական բաղադրիչներ ¹: Դրանք աստիճանաբար սկսում են կիրառվել նաև էլեկտրոնային բառարանագրության մեջ: ԱԲ համակարգերը կարող են նկատելիորեն նպաստել բառարանագրական աշխատանքների դյուրացմանը՝ մեքենայացնելով բազմաթիվ գործընթացներ, բառարանները դարձնել հասարակության առավել լայն շերտերի համար հասանելի և կիրառելի տարբեր սարքավորումների համար: Այսպես, ԱԲ համակարգերը կատարում են տվյալների մեքենական հավաքագրում և վերլուծություն, համացանցային աղբյուրներից առանձնացնում, խմբավորում և վերլուծում են մեծածավալ տեքստեր, անում բառիմաստի ինքնուրույն նկարագրություն: Դրանք նաև կարող են համեմատել լեզվական միավորների՝ լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում կրած փոփոխությունները՝ հնարավորություն տալով բառարանագիրներին ստեղծելու լեզվի տարբեր փուլերի բառապաշարը ներկայացնող բառարաններ: ԱԲ համակարգերի միջոցով հնարավոր է հետևել իրական ժամանակում լեզվում կատարվող փոփոխություններին, դրանք կարող են մեքենական եղանակով ավելացնել նոր բառեր եղած բառարաններում կամ բացահայտել բառի նոր իմաստները՝ ներկայացնելով դրա գործածության համատեքստը:

ԱԲ համակարգերը նաև հասանելի են դարձնում բառարանները լեզվակիր հանրության բոլոր շերտերի, այդ թվում՝ սահմափակ հնարավորությունների տեր մարդկանց համար: Բազմաթիվ օժանդակ տեխնոլոգիաների օգնությամբ, օրինակ, տեսողական հնարավորություններից զուրկ մարդիկ հեշտությամբ կարող են գտնել և ծանոթանալ իրենց հետաքրքրող բառի բացատրությանը: ԱԲ համակարգերով աշխատող չաթբոտերը կամ վիրտուալ օգնականներն օգնում են օգտատերերին փնտրել և իրական ժամանակում գտնել

¹ Russell S., Norvig P., Artificial Intelligence: A Modern Approach, 2021, p. 3.

բառիմաստի գործածության օրինակները: Շատ դեպքերում ԱԲ համակարգերը, հաշվի առնելով օգտատիրոջ՝ նախկինում փնտրած բառերը և դրանց գործածության օրինակները, առաջարկում են տվյալ բառի՝ օգտատիրոջն ավելի համապատասխան գործածության օրինակներ: ԱԲ համակարգերը կարող են կատարել նաև սրբագրման և խմբագրման համակարգերի դեր՝ անելով ուղղագրական, քերականական և ոճական ուղղումներ: Այդ համակարգերով աշխատող թարգմանական ծրագրերն էլ, իրենց հերթին, կարող են օգնել բառարանագիրներին թարգմանել բառերն ու արտահայտությունները տարբեր լեզուներով: Այսպիսով՝ ԱԲ համակարգերը հիմնականում կիրառվում են բառարանների և բառային հենքերի կազմման, մշակման և էլեկտրոնային ձևաչափով ներկայացման ժամանակ: Դրանք իրենց հիմքում ունենցող ծրագրերի միջոցով բառարանագրական խմբերը կարող են միասին հեռավար կերպով աշխատել նույն նախագծի վրա: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում ընդգծել, որ ԱԲ համակարգերը կարող են հանդես գալ միայն իբրև օժանդակ միջոց և որևէ դեպքում չեն կարող ամբողջությամբ փոխարինել լեզվաբան-բառարանագիրների կատարած աշխատանքը:

Իհարկե, մեր նպատակներից դուրս է այս բնագավառում կատարվող բոլոր աշխատանքների հանգամանալից ներկայացումը, քանի որ դա միանգամայն այլ բնույթի ուսումնասիրության նյութ կարող է դառնալ: Արդի էլեկտրոնային բառարանագրության ձեռքբերումներին անդրադարձանք միայն այն նպատակով, որպեսզի տեսնենք, թե դրանք ինչ չափով կարող են օգտակար կամ կիրառելի լինել հայ բառարանագրության առաջ ծառայած խնդիրների լուծման համար:

Հայ բառարանագրությունն ունի հարուստ ավանդույթներ: Հայերենագիտության այս բնագավառում տասնամյակներ շարունակ կատարվել են զգալի աշխատանքներ. կազմվել են բացատրական, հոմանիշների, հականիշների, դարձվածաբանական, թարգմանական (երկլեզվյան ու բազմալեզվյան), լեզվաբանական, բարբառային, տերմինաբանական, ուղղագրական, հայոց լեզվի նորաբանությունների, տարբեր հեղինակների լեզվի, հաճախականության, հայկական անձնանունների, ազգանունների, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների և այլ արժեքավոր բառարաններ²:

Հայ բառարանագրության մեջ արհեստական բանականության համակարգերը կարելի է հաջողությամբ օգտագործել հատկապես օտարաբանությունների և նոր բառերի իմաստների ներկայացման, դրանց իմաստային-հասկացական կողմի նկարագրության համար, իսկ վեբ տեխնոլոգիաների կիրառությունը կօգնի լուծել երկու առանցքային խնդիրներ:

1. Բառարանագրական աշխատանքների դյուրացում և արդիականացում (բառացանկի մշակում, բառի գործածության օրինակների առանձնացում, նոր բառերի մեքենական եղանակով դուրսբերում և այլն):

² Տե՛ս <https://bit.ly/3GlrHd>:

2. Ընդհանուր և մասնագիտական բառապաշարի առավել ամբողջական նկարագրություն, բառի՝ լեզվի իմաստային հիմնական միավորի իմաստային-հասկացական կապերի ներկայացում:

Հայ լեզվաբանության մեջ էլեկտրոնային բառարանագրության ոլորտում տարվող աշխատանքները չի կարելի գոհացուցիչ համարել: Վեբ տեխնոլոգիաները գրեթե չեն օգտագործվում բառարանների կազմման ժամանակ, ուստի բառարանագրական աշխատանքներն իրականացվում են ավանդական եղանակով. բառարանագիրներն իրենց կարդացած գրքերից, տպագիր և էլեկտրոնային զանազան աղբյուրներից դուրս են գրում նոր բառերը, դրանք համեմատում տպագիր բառարանների հետ: Տպագիր բառարաններում չվկայված բառերը համարվում են նոր բառեր, ընդգրվում նոր բառերի կամ նորաբանությունների բառարաններում: Ավանդական եղանակով՝ գրքերի ընթերցումով, նոր բառերի դուրսբերումը շատ ժամանակատար է. այսպես կարելի է կատարել աշխատանքի միայն շատ փոքր հատվածը: Ստեղծված նորաբանությունների բառարաններն էլ չեն կարող արտացոլել նորաբանությունների ստեղծման ընդհանուր պատկերը, հիմնական օրինաչափությունները: Հարկ է նկատել, որ վերջին տասնամյակներում ստեղծված նոր բառերի և նորաբանությունների իրական թիվն անհամեմատ ավելի մեծ է, եթե այն համեմատենք նորաբանությունների բոլոր բառարաններում ընդգրկված բառաքանակի հետ: Ուստի բովանդակային առումով առկա նորաբանությունների բառարանների հիմնական թերությունն այն է, որ դրանցում ներկայացված են լեզվում ստեղծված մեծաթիվ նորաբանությունների միայն փոքր մասը: Մեր հոդվածներից մեկում, անդրադառնալով այդ խնդրին, նշել ենք, որ էլեկտրոնային աղբյուրներից նոր բառերի դուրսբերումը հեշտացնելու և մեքենայացնելու լավագույն լուծումը կարող է լինել համացանցային տարբեր աղբյուրներից ինքնահամալրվող տեքստային հենքի և դրա հիման վրա նոր բառերի մեքենական որոնման համակարգի ստեղծումը³: Այս առումով զգալի ձեռքբերում կարելի է համարել մեր կողմից ստեղծված էլեկտրոնային կորպուսը և նոր բառերի մեքենական որոնման համակարգը: Նման համակարգի ստեղծումը պայմանավորված էր էլեկտրոնային տեքստերից նորաբանությունների և նոր բառերի որոնումն առավելագույն չափով լիակատար դարձնելու և մեքենայացնելու կարևորությամբ: Այն զգալիորեն դուրսացնում է էլեկտրոնային աղբյուրներից նոր բառերի դուրսբերման ողջ գործընթացը: Նման համակարգի միայն լեզվական նյութի մշակման համար հարկ է եղել արդի հայերենի բացատրական, հոմանիշներ, հականիշների, նոր բառերի կամ նորաբանությունների բառարանների սկանավորված տարբերակները թվայնացնել, բառահոդվածում առանձնացնել գլխաբառերը, ձևաբանական փոփոխությունների ենթարկվող բառերի

³ Տե՛ս **Հակոբյան Ֆ.**, Նոր բառերի մեքենական որոնման խնդիրները, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 143:

դեպքում կազմել դրանց հոլովման և խոնարհման հարացույցը, այդ կերպ ստանալ արդի հայերենի բառապաշարի բառաձևերի ամբողջական ցանկը: Համակարգն աշխատում է հետևյալ եղանակով.

ա. Ավելացնում ենք այն բոլոր կայքերը, որոնցում եղած տեքստերից ցանկանում ենք դուրս բերել նոր բառերը:

բ. Համակարգը համեմատում է այդ կայքերի տեքստերում գործածված բառաձևերը իր հենքում եղած բառաձևերի հետ:

գ. Համակարգը ներկայացնում է նոր բառերի ամբողջական ցանկը, որոնք համեմատության արդյունքում չեն եղել իր բառային հենքում:

Ինչ խոսք, որևէ համակարգ չի կարող ամբողջությամբ փոխարինել լեզվաբանին և մեքենայացնել էլեկտրոնային տեքստերից նոր բառերի դուրսգրման աշխատանքները: Այս դեպքում էլ նոր բառերի մեքենական որոնման համակարգը առանձնացնում է ոչ միայն նոր բառերը, այլև օտարաբանությունները, անձնանունները, ուղղագրական սխալ ունեցող բառերը և այլն: Մյուս կողմից էլ պետք է նկատի ունենալ, որ լեզվաբանը որևէ պարագայում չի կարող մեխանիկական եղանակով աշխատել տեքստային մեծածավալ հենքերում եղած բոլոր լեզվական օրինակների հետ, կատարել այն ծավալի և ճշգրտության աշխատանք, որը կարող է կատարել ծրագիր: Տվյալ դեպքում կարող ենք փաստել, որ նոր բառերի մեքենական որոնման համակարգը զգալի նշանակություն ունի էլեկտրոնային աղբյուրներից մեքենական եղանակով նոր բառերի որոնման գործընթացում: Ընդ որում՝ համակարգը ոչ միայն տեխնիկապես է դյուրացնում վերոնշյալ գործընթացը, այլև նպաստում լեզվի արդի վիճակն արտացոլող բառարանների կազմմանը: Այսպես, 2015 թվականից ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի լեզվի ինստիտուտում պարբերաբար հրատարակվում են «Նոր բառերի» պրակները: Պրակներում ներկայացված են համացանցից, մամուլից, գիտական և գեղարվեստական գրականությունից, հեռուստատեսությունից, գովազդային հոլովակներից ու ցուցանակներից քաղված մեծաթիվ բառեր, որոնք վկայված չեն եղած բացատրական և նորաբանությունների բառարաններում: Պրակների հեղինակները նպատակ ունեն հավաքված հազարավոր նորակազմություններից, որոշակի սկզբունքով բառընտրություն կատարելով, կազմել «Նոր բառերի ընդարձակ բառարան», որում կարտացոլվեն XXI դարասկզբի հայերենի բառապաշարում տեղի ունեցած տեղաշարժերը⁴: Նախապես պրակներում բոլոր բառարանագրական աշխատանքները կատարվում էին ավանդական եղանակով, իսկ նորաբանությունները քաղվում էին հիմնականում գեղարվեստական գրականությունից, գրականագիտական, լեզվաբանական ուսումնասիրություններից, ամսագրերից և լրագրերից⁵: Այնուհետև բառարանագրական աշխատանքների արդիականացման, դրանցում նոր բառերի մեքենական որոնման համակարգի կիրառման արդյունքում

⁴ Գալստյան Ա., Հովսեփյան Գ., Սահակյան Ա., Մահինյան Լ., Նոր բառեր. Ա պրակ, Ե., 2015, էջ 4:

⁵Տե՛ս նշվ. աշխ., էջ 151-155:

հնարավոր եղավ համացանցային լրատվական ու մեդիա կայքերից դուրս բերել էլեկտրոնային մամուլում լայն և հաճախական գործածություն ունեցող նոր հասկացություններ արտահայտող տասնյակ նոր բառեր, հարյուրավոր նախածանցավոր և վերջածանցավոր նորակազմություններ և դրանք ընդգրկել նոր բառերի պրակներում: Կարող ենք վստահորեն ասել, որ լեզվաբանի համար նոր բառերի պրակները կարող են դառնալ արդի հայերենի բառապաշարի ուսումնասիրության արժեքավոր աղբյուր:

Վեր տեխնոլոգիաները հնարավոր է օգտագործել ոչ միայն բառարանների կազմման ժամանակ, այլև դրանք կարող են նպաստել բառապաշարի առավել ամբողջական, բառի՝ իբրև լեզվի նվազագույն միավորի իմաստային-հասկացական կապերի ներկայացմանը: Հայ լեզվաբանության մեջ էլեկտրոնային բառարանագրության բնագավառում տարվող աշխատանքները սահմանափակվել են միայն տպագիր բառարանների սկանավորված տարբերակների էլեկտրոնային գրադարանի ստեղծումով: Ըստ իրենց ներկայացրած բառարանների բնույթի՝ պայմանականորեն կարելի է առանձնացնել այնպիսի կայքեր, որոնցում ներկայացվում են տպագիր բառարաններն առանց բովանդակային որևէ փոփոխության: Այս կայքերի թվին է պատկանում www.nayiri.com կայքը, որն աշխատում է Համազգային հայ կրթական և մշակութային միության հովանավորությամբ⁶: Կայքում ներկայացված բառարանները որևէ փոփոխության ենթարկված չեն: Որոնման արդյունքում էկրանին հայտնվում է թղթե տպագիր բառարանի սկանավորված տարբերակը: Այլ կերպ են ներկայացված բառերը bararanonline.com կայքում: Ընդգրկված են բացատրական (Է. Բ. Ադայան, «Արդի հայերենի բացատրական բառարան»), հոմանիշների (Ա.Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»), հականիշների (միավորված մի քանի աղբյուրներից), հայ-ռուսերեն (Ե.Հ. Գալստյան, «Հայ-ռուսերեն բառարան»), ռուս-հայերեն (Ա. Ս. Ղարիբյան, «Ռուս-հայերեն բառարան»), հայերեն-անգլերեն բառարանները: Այս կայքում ևս վերոնշյալ բառարանները բովանդակային որևէ փոփոխության ենթարկված չեն: Կայքում բառահոդվածն ունի հետևյալ կառուցվածքը. տրվում է բառի բացատրությունը, ներկայացվում են հոմանիշները, հականիշները, դարձվածքները, ռուսերեն և անգլերեն թարգմանությունները: Թարգմանությունները հիմնականում ներկայացնում են բառի հիմնական իմաստները: Պետք է նշել, որ բառիմաստի բացատրությունից բացի՝ իմաստային մյուս դաշտերը թերի են ներկայացվում, շատ դեպքերում դրանք դատարկ են⁷:

Հայերեն Վիքիբառարանը համագործակցային նախագիծ է, որի շրջանակներում ստեղծվում է ազատ բովանդակությամբ բազմալեզու բառարան: Նպատակն է ներկայացնել բոլոր լեզուների բոլոր բառերի բացատրությունները հայերենով: Վիքիբառարանում ներառված են նաև բառերի ձայնային տվյալները: Նպատակ ունենալով տալ բառի ամբողջական նկարագրությունը՝ ներկայացվում են բառի ստուգաբանությունը,

⁶ www.nayiri.com

⁷ <https://bararanonline.com/>

արտասանությունը, քաղվածքներ տարբեր ստեղծագործություններից, հոմանիշները և թարգմանությունները: Այս բառարանում ևս բառի նկարագրության ոչ բոլոր դաշտերն են լրացված:

Ըստ նախագիծն իրականացնողների՝ հայերեն Վիքիբառարանում կա 303 648 բառ⁸: Վիքիբառարանի ամենամեծ թերությունն այն է, որ բառարանը կարող է խմբագրել յուրաքանչյուր ոք:

Ակնհայտ է, որ էլեկտրոնային բառարանագրության արդի փուլում սպագիր բառարանների սկանավորված տարբերակները որևէ կայքում տեղադրելն այլևս բավարար չէ: Անհրաժեշտ է օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունները՝ լուծելու համար հայ բառարանագրության դեռևս չլուծված այնպիսի առանցքային խնդիրներ, ինչպիսիք են հայերենի ամբողջ բառապաշարը ներկայացնող պատմական, արդի հայերենի նորագույն բացատրական, օտարաբանությունների, տերմինաբանական և այլ կարգի էլեկտրոնային բառարանների ստեղծումը, դրանցում բառապաշարի իմաստային-հասկացական կապերի ներկայացումը և այլն: Վերոնշյալ բառարանների համացանցային ներկայացման ընդհանուր ձևաչափ կարող է լինել հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանը: Դեռևս տարիներ առաջ մեր հոդվածներից մեկում⁹, ըստ էության, ներկայացրել ենք հայերենի բառապաշարի էլեկտրոնային շտեմարանի ստեղծման նախագիծը, մշակել շտեմարանում բառահոդվածի կառուցվածքը, իմաստային-հասկացական հարաբերությունների ներկայացման եղանակը: Էլեկտրոնային շտեմարանում բառամիավորների նկարագրության սկզբունքները մշակելիս նկատի ենք ունեցել համակարգչային բառարանագրության ուսանելի փորձն ու հայերենի լեզվական առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ նախատեսվում է շտեմարանում հայերենի բառապաշարը ներկայացվել իր համաժամանակյա վիճակով, կատարել բառապաշարի հնարավորինս ամբողջական հասկացական դասակարգում, ներկայացնել բառերի հասկացական և իմաստային փոխհարաբերությունները, տալ գլխաբառի հնչյունական, բառագիտական, քերականական սպառիչ բնութագրերը համապատասխան դաշտերով: Կարելի է վստահորեն ասել, որ լեզվաբանական նպատակներով շտեմարանի կիրառությունը զարգացման միանգամայն նոր աստիճանի կհասցնի հայերենի գործածությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում:

Այսպիսով՝ հայերենը համացանցային լեզու դարձնելու, այն տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հաջողությամբ գործածելու համար առաջին հերթին անհրաժեշտ է նկարագրել և ներկայացնել հայերենի բառապաշարը՝ օգտագործելով

⁸ <https://hy.wiktionary.org/>

⁹Տե՛ս **Հակոբյան Ֆ.**, Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կառուցման ուրվագիծ, Բանբեր Երևանի համալսարանի. Ե., 2014, էջ 60-70:

ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների անընդհատ ու շարունակական զարգացումները: Այս դեպքում մեծապես կարևորվում է էլեկտրոնային բառարանագրության ոլորտում տարվող աշխատանքների արդիականացումը, էլեկտրոնային բառարանների, բառային հենքերի կամ շտեմարանների կազմության ժամանակ ժամանակակից վեբ տեխնոլոգիաների և ԱԲ համակարգերի կիրառությունը:

Օգտագործված գրականության ցանկ

- Գալստյան Ա., Հովսեփյան Գ., Սահակյան Ա., Սահինյան Լ., Նոր բառեր. Ա պրակ, Ե., 2015:
Հակոբյան Ֆ., Նոր բառերի մեքենական որոնման խնդիրները, «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 136- 143:
Հակոբյան Ֆ., Հայերենի բառապաշարի համակարգչային շտեմարանի կառուցման ուրվագիծ, Բանբեր Երևանի համալսարանի. Ե., 2014, էջ 60-70:
Granger S., Paquot M., Electronic lexicography, Oxford, 2012.
Russell S., Norvig P., Artificial Intelligence: A Modern Approach, 2021.
<https://bararanonline.com/>
<http://nayiri.com/>
<https://hy.wiktionary.org/>

РЕЗЮМЕ СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЭЛЕКТРОННОЙ ЛЕКСИКОГРАФИИ Акопян Фрида

Статья рассматривает пересечение веб-технологий и искусственного интеллекта в контексте развития армянской электронной лексикографии. Она раскрывает потенциал этих инноваций для составления словарей, особенно в создании современных электронных словарей, выходящих за рамки традиционных определений. Акцент делается на том, как веб-технологии и искусственный интеллект могут улучшить представление слов, включая фонологические, семантические и грамматические аспекты. В статье рассматриваются практические применения этих достижений, демонстрируя, как они способствуют развитию языковых ресурсов, делая их более полными и динамичными. В целом подчеркивается трансформационная роль технологий в формировании будущего лексикографии и представления языка, особенно в армянском контексте.

Ключевые слова: электронная лексикография, информационные технологии, веб-технологии, искусственный интеллект, электронный словарь, база данных, автоматический поиск.

SUMMARY
MODERN PROBLEMS OF ELECTRONIC LEXICOGRAPHY
Hakobyan Frida

The article explores the intersection of web technologies and artificial intelligence in the context of advancing Armenian electronic lexicography. It delves into the potential of these innovations to change the compilation of dictionaries, particularly in creating modern electronic dictionaries that go beyond traditional definitions. The focus is on how web technologies and artificial intelligence can enhance the representation of words by incorporating phonological, semantic, and grammatical aspects. The article discusses the practical applications of these advancements, showcasing how they contribute to the evolution of language resources, making them more comprehensive and dynamic. Overall, it underscores the transformative role of technology in shaping the future of lexicography and language representation, specifically in the Armenian context.

Key words: electronic lexicography, information technology, web technology, artificial intelligence, electronic dictionary, database, automatic search.

**ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ
«ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԵՆ ՓՐՑՎԱԾ ԷՋԵՐ» ԵՐԿՈՒՄ**

Ղարիբյան Ալինա

Երևանի պետական բժշկական համալսարան
Հայոց լեզվի ամբիոն
alinagharibyan@rambler.ru

Մարդիյան Մերի

Երևանի պետական բժշկական համալսարան
Հայոց լեզվի ամբիոն
mardian_21@hotmail.com

Լալայան Լիա

Երևանի պետական բժշկական համալսարան
Հայոց լեզվի ամբիոն
lialalayan5@gmail.com

Մալխասյան Սյուզի

Երևանի պետական բժշկական համալսարան
Հայոց լեզվի ամբիոն
malkhassyuzi@gmail.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-162

Բանալի բառեր. արվեստագետ-բժիշկ, արձակ, պատում, հիվանդություն, արևմտահայերեն, արտահայտչամիջոց, փոխառություն:

Ներածություն

20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծության աստղաբույլում իր մնայուն և անփոխարինելի տեղն ունի Ռուբեն Սևակը (Ռուբեն Չիլինկիրյան): Կրթությունը ստանալով Եվրոպայի սրտում՝ Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետում, նա դարձավ ոչ միայն հայ կյանքի և հայ մարդու կեցության, մտորումների և ապումների քնարական վավերագրի հեղինակ, այլ նաև դարասկզբի մեծ հեղաբեկումների հորձանքում տեսավ և արձանագրեց անձնական ու հասարակական կյանքի մեծ ողբերգությունները, բարոյական ու ֆիզիկական արժեքների անկումներն ու կորուստները: Հիվանդանոցը, բժշկի աշխատանքն ու շփումները դառնում են այն տարածությունը, թատերաբեմը, ուր խաղացվում է կյանքի հավերժական դրաման՝ վեր հանելով մի ամբողջ ժամանակաշրջանի պատկեր: Այս համատեքստում են ծնվում «Բժիշկին գիրքեն փրցված էջերի» պատմությունները՝ թեմաների բազմազանությամբ, զգացմունքների ու ապրումների արտահայտման խտությամբ ու խորությամբ, պատկերավոր մտածողությամբ, ինչն էլ ապահովեց Սևակ գրողի համեստ տեղն արևմտահայ արձակի պատմության մեջ: Ոչ միայն

չափածո էջերում, այլ նաև արձակ գործերում դրսևորվում են մեծ մարդասերի ու հայասերի մտորումները ժամանակի ախտածին ու ախտավոր երևույթների հանդեպ: Արվեստագետ-բժշկի սրատեսությամբ ու խորաթափանցությամբ նա փորձում է այդ երևույթների բուժման կամ դրանցից ազատվելու ուղիներ նշել:

1913-1914 թթ. Պոլսի «Ազատամարտ» օրաթերթում է լույս տեսնում Ռ. Սևակի արձակ ստեղծագործությունների յուրօրինակ շարքը՝ բաղկացած տասը-տասնհինգ պատմվածք-ակնարկներից, և ձևավորվում է մեր գրականության մեջ դեռ չփորձված մի ուրույն ժանր¹: Պետք է նկատել, որ ռուս գրականության մեջ արդեն 1880-ականներից սկսած՝ մեծ գրող, մասնագիտությամբ բժիշկ Ա. Չեխովի կողմից գրվել էին բժշկական թեմաներով մի շարք հաջողված պատմվածքներ, որոնց ստեղծումը, ի դեպ, համընկնում էր գրողի ստեղծագործական ուղու մեկնարկի հետ: Ասել կուզի՝ համաշխարհային, մասնավորապես՝ ռուս գրականության մեջ արձակի այդ ձևը արդեն կար: Ռ. Սևակի առումով պետք է նկատել, որ նա ամենից առաջ բանաստեղծ էր և արձակում առաջին անգամ էր փորձում իր ուժերը, ինչը, սակայն, համընկավ նրա ստեղծագործական կարճատև կյանքի վերելքի հետ, եթե, իհարկե, հաշվի չառնենք 1907թ. գրված և «Արևելյան մամուլում» հրատարակված «Տարի մը վերջ» գեղարվեստական արժեքով աչքի չընկնող պատմվածքը, որի նյութը քաղված էր եվրոպական երիտասարդության կյանքից՝ նեկայացնելով սիրո հովվերգական մի պատմություն²: Հետագայում Սևակի բոլոր արձակ գործերը հրատարակվեցին «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» խորագրի տակ՝ որպես մեկ ամբողջություն, որի մեջ ամփոփված են մոտ երեք տասնյակի հասնող պատմվածք-պատմումները կամ իլյուստրացիաները: Դրանք և՛ հաջողված պատմվածքներ են՝ կերպարների կերտման նուրբ արվեստով, հոգեբանական խորությամբ, հասարակության ցավոտ խնդիրների վերհանմամբ («Անիծած գանձը», «Մանչերուն գերեզմանը», «Տեր ողորմեայ», «Մեղքին պտուղը», «Ստամոքսին զոհը», «Կես խենթը»), և՛, միաժամանակ, բժիշկ-գրողի բժշկական-բարոյագիտական հայացքների, մտքերի, ծանր ապումների արտահայտություններն են: Երիտասարդ գրողի նպատակը չէր հիվանդության կամ հիվանդի վիճակի սարսափելի նկարագրությամբ բնագրական երկյուղ առաջացնել մահվան հանդեպ, նա փորձում էր հոգիների մեջ սերմանել կյանքի նկատմամբ հավատը, ապրելու կամքը, սարսափելի հիվանդությունները հաղթահարելու ձգտումն ու վստահությունը: Այդ ամենը լավագույնս դրսևորվում են «Նաբոլեոնի մահը», «Չմեռնելու համար», «Ապրելու կամքը», «Ապրիլը հաղթիլ է», «Հրաշալի բժշկություն» ակնարկներում և խորհրդածություններում³: Ստեղծագործական այս եղանակը բժիշկ-արվեստագետին հնարավորություն է տալիս ծանր, անգամ ողբերգական պատմությունը ոչ միայն ականատեսի կամ երևույթներին անմիջական մասնակցի տեսանկյունով ներկայացնելու, այլ նաև

¹ **Հատիսյան Գ.**, Ռուբեն Սևակ, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 59: 224 էջ:

² Տե՛ս **Զրբաշյան Է.**, Ռուբեն Սևակ. Ստեղծագործության համառոտ ակնարկ, Երևան, «Միտք» հրատ., 1965, էջ 84:

³ Տե՛ս **Կիրակոսյան Վ.**, Ռուբեն Սևակ կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 202:

ներկայացնելու հզոր անհատականությունների կյանքի պատմությունները, որոնք ֆիզիկական բազում ախտերով հանդերձ, կարելի է ասել, հաղթում են մահին միայն ապրելու կամքով և լավատեսությամբ: Այդպիսի հերոսներից են մի դեպքում՝ արևմտահայ մեծ բանաստեղծ Սիամանթոն («Չմեռնելու համար»), մեկ այլ դեպքում՝ Նապոլեոնը («Նաբոլեոնի մահը»), մյուս դեպքում՝ Վոլտերը («Ապրելու կամքը»): Կան նաև սովորական մահկանացուներ, որոնց վիճակի ներկայացումը կարծես դառնում է տվյալ հիվանդության ախտանիշներն իր վրա կրող անհատի նկարագրություն: Ինչ խոսք, դրանք երբեմն գեղարվեստական պատկերի կամ կերպարի աստիճանի չեն հասնում, փոխարենը «անհանդուրժողականություն» են առաջացնում հիվանդության նկատմամբ՝ միաժամանակ ցուցադրելով տարբեր խավերի մարդկանց տգիտությունը, թուլությունն ու ապականվածությունը («Այլասերում», «Գինովին աղջիկը», «Սաթենիկը», «Ցավի միսը», «Ծարավ մաղը», «Թոքախտավորը»):

Երկու հիմնական գործոններով՝ բժշկի պատասխանատվությամբ և գրող-արվեստագետի դիտողականությամբ պայմանավորված՝ դիտարկվող պատումների հեղինակը կարողանում է խղճի ու կարեկցանքի զգացումներ առաջացնել ընթերցողի հոգում՝ միաժամանակ վեր հանելով հասարակության ցավոտ կողմերի, մարդկանց ճակատագրերի և բարոյական կործանող արժեքների բուն պատճառները: Ամբողջության մեջ այս պատումները կարելի է համարել բժշկի օրագրություն, որտեղ հեղինակը մի դեպքում իր պրակտիկայում հանդիպող դեպքերի ականատեսն է ու մասնակիցը, մեկ այլ դեպքում ներկայացնում է իր բարոյագիտական, մասնագիտական հայացքները մարդու, հանրության, նաև հայի կեցության, արժեքային համակարգի, ժամանակի բարքերի վերաբերյալ: Ինչպես նկատում է Վ.Կիրակոսյանը. «Եվ պատկեր-իլյուստրացիաները, և հողվածներն ու զրույցները, և խորհրդածությունները, էլ չենք խոսում մի քանի իսկական գեղարվեստական ստեղծագործությունների մասին, հավասարապես ողողված են վարակիչ ու անմիջական հույզով, այն հախուռն կրքով, որ հատուկ է նրա բանաստեղծական վաստակին»⁴: Ընդհանուր առմամբ, գրքում տարբեր ակնարկների, խորհրդածությունների ու հերոսների միջոցով բանաստեղծ-գրողը տարբեր խնդիրներ է բարձրացնում, որոնք դիտարկված են հայ գրականգիտության կողմից⁵:

Քննարկում

Սույն աշխատանքում փորձել ենք դիտարկել և ուսումնասիրության նյութ դարձնել Սևակի օրագրություններում առկա լեզվական մի առանձին շերտ՝ բժշկագիտական տերմինները, որոնք բժիշկ-գրողի պատումներում դառնում են ոչ միայն լեզվական և գեղարվեստական արտահայտչամիջոցներ, այլև միաժամանակ պատկերացում են տալիս

⁴Նույն տեղում, էջ 201-202:

⁵Տե՛ս Վիրակոսյան Վ., 197-224, Հատիտյան Գ., 59-86:

գրողի ապրած ժամանակաշրջանում արևմտահայերենում առկա բժշկագիտական տերմինների մասին. դրանք փոխառություններ են, օտարաբանություններ, նաև հայերեն բառեր, որոնք գործածվում էին ինչպես գրական, այնպես էլ առօրյա-խոսակցական խոսքում:

Գրքում բժշկագիտական տերմինները դառնում են գեղարվեստական պատկեր ու միջավայր ստեղծելու միջոց: Պատկերավոր խոսքը հաճախ իր արտահայտությունն է գտնում երկխոսություններում. դրանց միջոցով Սևակ-արվեստագետը մասնագիտական ճշգրտությամբ վեր է հանում իր հերոսների հոգեախտաբանությունը՝ որոշ տեղերում գրեթե հանդես բերելով հիվանդության կլինիկական նկարագրություն.

«-Այո՛, տոբթոր...կոկորդիս մեջ ցավ մը կա, կերակուրս չեմ կրնար ուտել, բայց ցրտութենե ալ չէ...

-Ուրի՞շ տեղ...

-Բերնիս մեջ ալ ճերմակ-ճերմակ տեղեր կան կոճակներու պես...

-Ուրի՞շ, ուրի՞շ...

-Չեմ գիտեր, հիմա ալ մազերս կթափին...»⁶/331/:

Նման վիճակների ու երևույթների պատկերումը հեղինակի համար ինքնանպատակ չի եղել, այն գրողին հնարավորություն է տվել հասնելու գեղարվեստական և սոցիալական ընդհանրացումների, իրականության անբարո, տգեղ երևույթների մերկացմանը՝ ենթատեքստում անպայման օգտակար լինելու ձգտումով:

Պատմվածք-պատումներում բժշկական տերմինները առաջին հերթին կատարում են անվանողական գործառույթ. անվանում են օրգաններ և դրանց մասեր, հիվանդություններ, ախտանիշներ, գործիքներ, դեղամիջոցներ, վիրահատական գործընթացի հանգամանքներ: Այսպես՝

Բուլբոն էլ հազալով ու թքնելով, մեկը մյուսը վարակելով, թոքերնին փսխելով մեռեր էին /279/: Բարալիզի ժեներալ էր այս հիվանդությունը, քույրը այն մյուս սարսափելի հիվանդության, որ թապես կկոչվի և որոնց երկուքին ալ հայրը հինացած սիֆիլիզ մըն է /241/: Այս փոքրիկ մարդը իր վրա կմիացներ բժշկության մեծագույն հիվանդությունները. Իր ուղեղը լուսնոտ էր, իր սիրտը պզդիկ, իր կուրծքը թոքախտ, իր ստամոքսը քաղցկեղ:/Նաբուլեոնի մահը, /291/: Այլ չտեսնվելիք տեղ մը կզատե. Հասուն կնոջ մը ստինքին տակ կպահտվի կամ մոր մը արգանդին գոգը, ուրիշի մը կոկորդին քովը, մյուսի մը ստամոքսին անկյունը ու այս դժբախտ մարդուն ալ աղիքին ճիշդ ծայրը.../Ցավի միսը, /292/: Հրաշալի տա՛րր, ռատիո՛ւմ, ռատիո՛ւմ.../293/: Թեթանոս...- կվճռեր ան /296/:

Սևակի ստեղծագործություններում բժշկական տերմինները ծառայում են նաև իբրև բժշկական մասնագիտական մթնոլորտ ստեղծելու ոճական միջոց: Տերմինային բառապա-

⁶ Սևակ Ռ., Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 331: Այսուհետ կնշվեն գրքից բերվող օրինակների միայն էջերը:

շարը հնարավորություն է տալիս հարազատորեն պատկերելու այն սոցիալական միջավայրը, որի մեջ հանդես են գալիս հերոսները, բնականություն ու ճշմարտացիություն են հաղորդում բժշկի և հիվանդի երկխոսություններին.

-Տեսա՞ճ ես-ըսի-փրթած քիթերով մարդերը:

-Այո՛, տոքթոր:

-Բայց հագուստներու տակ պահված ի՛նչ զզվելի վերքեր կան, որ չես տեսնար...Տեսա՞ճ ես անդամալուծերը, որ փոքրիկ կուռքերու պես հրելով կպտտոցնեն արևուն /Մեղքին տունը, 332/:

Ապաժառանգ, պակասավոր, ցավագար, մելամաղձոտ, այսահար, ախտագին զավակներուն հաշիվը գինեմոլ ու ցոփակյաց հայրերու՛ն հարցուր.../Ապրիլը հաղթել է...336/:

-Իմ բարկացած ատենս դուն ինչու՞ ցավագարի պես կժպտիս, Սաթենիկ...

- Օրեռասիոն...,- կկազեր աղջիկը ժպտելով:/Սաթենիկ, 349/:

Տերմինները, որոնք նաև լատինաբանությունների /օտարաբանություններ/ ձևով են արտահայտվում, ունեն կարևոր բնութագրական գործառույթ. միջոց են հերոսների դիմանկարը և նրանց խոսքային առանձնահատկությունները ընդգծելու համար. Քիչ մը պռոմյուռ /բրոմ/ տվեք, կլմննա կերթա.../351/:

Պատմվածքներում լատիներեն տերմինների օգտագործմամբ ներկայանում է բանաստեղծի սուբյեկտիվ և երևակայական աշխարհայացքը. «Կծխե՞ք, տոքթոր, մեր երկրի թարմ ծխախոտ ունիմ... սա ֆրենկներուն ծխախոտը տան ծակերուն մեջ թխելու է, որ մուկերը սատկին /333/»: «Այն օրեն ի վեր ես հետևեցա սանաթորիումի բոլոր դագաղներուն, բացի մեկեն /340/»:

Պատմություն-պատումներում բժշկական բառապաշարը բավականին լայն ընդգրկում ունի: Բառաշերտի բառերը հիվանդությունների և հիվանդագին վիճակների, անատոմիական երևույթների, դեղորայքի և բժշկական պրակտիկայում օգտագործվող այլ իրողությունների հայերեն ու լատիներեն անվանումներն են: Իբրև տերմին գործածվող բառերի մի մասը արևմտահայերենի և ընդհանրապես՝ հայերենի ընդհանուր համագործածական բառեր են. *մարմնի մասերի անվանումներ՝* գլուխ, ճակատ, քիթ, ոսկոր, աչք, շուրթ, բերան, աղիք, ակոս, կուրծք, փոր, սրունք, բազուկ, մատ, ձեռք, ոտք, ականջ, վիզ, ուս, մաշկ, ռունգ, թոք, կոկորդ, ստամոքս, լեզու, ուղեղ, որովայն, *մարմնին առնչվող այլ բառեր՝* լորձունք, փսխուք, ողնաձուծ, շունչ, թարախ, խուխ, արյուն, մեզ, *մարմնի ֆիզիոլոգիական վիճակին առնչվող բառեր՝* հղի, վիժուկ, հիվանդ, անդամալուծ, հազել, թքել, *հիվանդություններին ու դրանց բուժմանը վերաբերող բառեր՝* հյուծել, մանրե, վարակել, որդնոտած, փտություն, բժիշկ, բուժվել, դարմանվել, հոգեվարք և այլն: Այս և նման բառերը բժշկական միջավայրում, բժշկի և հիվանդի հաղորդակցման ընթացքում ունեն տերմինի նշանակություն: Մյուս կողմից՝ համագործածական նման բառերը կարող են

մասնակցել անձի արտաքինի նկարագրությանը («Դեմքը խոժոռ շարժում մը ըրավ. Կզին երակները կապույտ մատերու պես ուռեցան, երեսը կարմրեցավ, մթնեցավ, անվերջանալի խղղուկ հազ մը սկսավ.../340»), դառնալ հիվանդության կլինիկական պատկերը նկարագրելու միջոց («Աչացավին փոխն ի փոխ հաջորդեցին կոկորդացավը, ձայնարգելությունը, խլությունը: Լինդերը կփտին, ակռաները կթափին բերնին մեջ: Հողացավ մը ընդհատաբար անկողին կգամեր, կհյուծեր, կսպառեր գայն: /Ապրելու կամք, 315/», «Անկարելի, աներևակայելի մորթ մը, որուն ցանցերուն մեջ կաթիլ մը արյուն չէր մնացեր, լեմոնի մաշկի մը պես դեղներ էր...»292/), ներկայացնել բժշկական ախտորոշումը («Զուր կքաջալերեին գայն, թե քանի որ դեռ մեկ թոքը, կոկորդը, աղիքները վարակված չէին, քանի որ դեռ ջերմության աստիճանը բարձր չէր, պետք էր շուտով հակաթոքախտ ներարկումներ սկսիլ /279/»), ստեղծել գործնական բժշկական միջավայր («Ներսը, հականեխված չորս մերկ պատեր, անկողին մը, հիվանդ մը: Մնարին վերև, ձերմակ թուղթի մը վրա անուն մը, անդունդ մը... Ատոմ Յարճանյան /307/»), դառնալ փոխաբերական կառույցներ ստեղծելու միջոց («Եվ սակայն, եթե կյանքը իրո՞ք և միմիա՛յն բջիջներու խաղ մըն էր, ինչպես կարելի է բացատրել, որ այդ բջիջներուն ամենեն պղտոր, ամենեն ախտագին, ամենեն հուսահատ եղած միջոցին կյանքի սերը, ապրելու հավատը, հաղթելու հույսը ծնեին այնքա՛ն գորությանը, այնքա՛ն լավատեսությանը.../275/». Առողջ սեր, առողջ սեռ: /321/:Պահպանեցեք ձեր առողջությունը, ան ավելի ձենե կախում ունի, քան աշխարհի բոլոր բժիշկներեն: Չափավոր եղեք /317/) և այլն:

Կան նաև բժշկական տերմիններ, որոնք կայուն կապակցություններում ու դարձվածքների մեջ ձեռք են բերում համագործածական բառի արժեք և դառնում են միջավայրի ախտավարակության կամ հասարակական ընկալումների ցուցիչ, ինչպես՝ բարոյական առողջություն, մարդակազմական ժպիտ, ախտաբանական ծնունդ, ախտածին մանուկներ, ախտավարակ ծիլեր, ախտագին մտավորականություն, ախտաբանական գինեմոլ, հականեխված պատեր, մարդկային զգայարանք, նաև՝ անասնական բնագո, վեցերորդ զգայարան, կենդանի մեռել, խեղդուկ հազ, չոր հազ, թափանցիկ մորթ, լեմոնի մաշկ, կոկորդը լեցուցել, շունչը կողպել և այլն:

Բնականաբար, պատումներում կան հիվանդությունների շատ անուններ, որոնք գործածվում են նաև արևելահայերենում, այսինքն՝ ընդհանուրհայերենյան բժշկական տերմիններ են, ինչպես՝ շաքարախտ, ժանտախտ, ծաղկախտ, թոքախտ, քաղցկեղ, աչացավ, կոկորդացավ, ձայնարգելություն, հողացավ, միզարգելություն, սպիտակամիզություն, կապույտ հազ, մելամաղձություն, ցավագար (ընկնավոր), հյուծախտավոր, ապաժառանգ, պակասավոր: Հետաքրքրական են այն տերմինները, որոնք միայն արևմտահայերենին են բնորոշ, ինչպես՝ հնդախտ (նկատի ունեն խոլերան), ֆրանկախտ (սիֆիլիս), թեթանոս (կարկամություն), բարալիզի ժեներալ (ընդհանուր անդամալուծություն), կեղծ մաշկ (կեղծամաշկ, դիֆտերիա), պնդերակություն (աթերոսկլերոզ), ուղեղատապ (շառատենդ, կարմրախտ), լուսնոտ (էպիլեպսիա), այսահար (լուսնահար, դիվահար), ջլագարություն

(ջղագարություն), բերանը բանուկ (բուլիմիա), կուրծքին տկարություն, խենթ, մտային անպատասխանատվություն, կնկա հիվանդություն, ախտաբանական գինեմոլ, արենա-խոռում և այլն:

Սևակի գործածած բժշկագիտական տերմինները ոլորտի բառաշերտի բառակազմական օրինաչափություններից չեն շեղվում: Դրանցում կան և՛ պարզ բառեր, և՛ բաղադրություններ: Առավելապես պարզ են տերմինի արժեքով գործածվող համագործածական բառերը (գլուխ, սիրտ, թոք, փոր, ստամոքս, կոկորդ և այլն): Ածանցավոր տերմիններում ավելի հաճախադեպ է *ույթուն* ածանցը (ձայնարգելություն, միզարգելություն, սպիտակամիզություն, պնդերակություն), գործածական են նաև այլ ածանցներ՝ *ալոր, ոտ, ունք, ուք* (հյուծախտավոր, պակասավոր, լուսնոտ, լորձոնք, փսխուք) և այլն: Համադրական բարդությունների երկրորդ բաղադրիչի դերում ավելի շատ հանդես են գալիս *ախտ* և *ցավ* գոյականները, որոնք, կարելի է ասել, նման բառերում գրեթե ածանցի արժեք են ձեռք բերել: Ի դեպ, երբ երկրորդ բաղադրիչը ձայնավորասկիզբ *ախտ*-ն է, բարդությունները անհոդակապ են (շաքարախտ, ժանտախտ, ծաղկախտ, թոքախտ, հնդախտ, ֆրանկախտ), իսկ երբ բաղաձայնասկիզբ *ցավ*-ն է, բարդությունները հոդակապավոր են (աչացավ, կոկորդացավ, հոդացավ): Բժշկագիտության ոլորտի հասկացությունները երբեմն կարիք ունեն նկարագրական բնութագրման, որի պատճառով էլ նաև Սևակի պատումներում քիչ չեն հարադրական բարդությունները, ինչպես՝ կեղծ մաշկ, բերանը բանուկ, բարալիզի ժեներալ, կուրծքին տկարություն, մտային անպատասխանատվություն, կնկա հիվանդություն, ախտաբանական գինեմոլ և այլն:

Եզրակացություն

Ռուբեն Սևակի «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» գրքում ընդգրկված պատումները մասնագիտական ոլորտի գեղարվեստական ընկալման ու պատկերման հետաքրքրական դրսևորումներ են: Դրանցում գեղարվեստական պատկեր ու միջավայր ստեղծելու հիմնական միջոցներից են բժշկագիտական ոլորտի տերմիններն ու մասնագիտական բառերը: Այդպիսիք հաճախադեպ են ինչպես հեղինակային խոսքում, այնպես էլ երկխոսություններում: Պատումների լեզուն թույլ է տալիս դիտարկել տերմինագիտությանը հետաքրքրող այնպիսի իրողություններ, ինչպիսիք են համագործածական բառերի տերմինային գործածությունը և հակառակը՝ տերմինների գործածությունը համագործածական արժեքով, այնուհետև՝ բնիկ ու փոխառյալ տերմինների կիրառական յուրահատկությունները, տերմինների իմաստային ու բառակազմական հատկանիշները և այլն: Երկը հարուստ և հետաքրքիր նյութ է պարունակում ոչ միայն բժշկագիտական տերմինների ընդհանուր հայերենյան դրսևորումների առումով, այլ նաև 20-րդ դարասկզբում արևմտահայերենի բժշկագիտական տերմինաբանության և արևմտահայերեն տերմինային լեզվամտածողության առումով:

Օգտագործված գրականություն

Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, ԵՊՀ հրատ., 1987, 736 էջ:

Ավետիսյան Կ., Օտարաբանությունները և փոխառությունները Ռուբեն Սևակի ստեղծագործություններում //Խ. Արուսյանի անվ. ՀՊՄՀ, Հայագիտական հանդես, N2-3 (26-27), Ե., 2014, էջ 78-86:

Կիրակոսյան Վ., Ռուբեն Սևակ կյանքը և ստեղծագործությունը, Ե., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1972, 224 էջ:

Հատիսյան Գ., Ռուբեն Սևակ, Ե., Հայպետհրատ, 1959, 86 էջ:

Ջրբաշյան Է., Ռուբեն Սևակ. ստեղծագործության համառոտ ակնարկ, Ե., «Միտք» հրատ., 1965, 106 էջ:

Սևակ Ռ., Երկեր, Ե., «Սովետական գրող» հրատ., 1985, 479 էջ:

РЕЗЮМЕ

МЕДИЦИНСКИЕ ТЕРМИНЫ В КНИГЕ РУБЕНА СЕВАКА «СТРАНИЦЫ ИЗ КНИГИ ВРАЧА»

Гарибян Алина

Мардян Мери, Лалаян Лия, Малхасян Сьюзи

В книге «Страницы из книги врача» обобщено около трех десятков рассказов, которые характеризуются тонким искусством создания характеров, психологической глубиной и в то же время являются выражением медико-этических взглядов и мыслей врача-писателя. Они представляют собой интересные проявления художественного восприятия и изображения профессиональной сферы. Медицинские термины и профессиональные слова являются одним из основных средств создания художественного образа и обстановки в рассказах. Книга содержит богатый и интересный материал не только с точки зрения специфической для армянского языка медицинской лексики в целом, но и с точки зрения западноармянской медицинской терминологии и западноармянского терминологического мышления начала XX века.

Ключевые слова: художник-врач, проза, история, болезнь, западноармянский, выразительные средства, заимствование.

SUMMARY
MEDICAL TERMS IN THE BOOK "PAGES TAKEN FROM THE DOCTOR'S BOOK"
BY RUBEN SEVAK
Gharibyan Alina
Mardiyani Meri, Lalayan Liya, Malkhasyan Suzy

The book "Pages taken from the doctor's book" summarizes about three dozen short stories, which are characterized by the fine art of creating characters, psychological depth, and at the same time they are the expressions of the medical-ethical views and thoughts of the doctor-writer. They are interesting manifestations of the artistic perception and depiction of the professional sphere. Medical terms and professional words are one of the main means of creating an artistic image and environment in stories. The book contains rich and interesting material not only in terms of medical vocabulary specific to Armenian in general, but also in terms of Western Armenian medical terminology and Western Armenian term linguistic thinking at the beginning of the 20th century.

Key words: artist-doctor, prose, history, illness, Western Armenian, means of expression, borrowing.

ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԿԱՅՈՎ ԴՐՎԱԾ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ՝ ԱՐԴԵՆ, ԴԵՌԵՎ ՆՈՐ
ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՀԵՏ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Մինասյան Միրանուշ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի
հայոց լեզվի ամբիոնի դասախոս
siranushminasyan74@gmail.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-171

Բանալի բառեր. հաղորդակցական նպատակ, իմաստագործառական առանձնահատկություններ, նյութի ծավալ, բաշխում, բացատրության եղանակներ, վարժությունների համակարգ:

Ժամանակաձևերի կիրառությունների ուսուցման ընթացքում կարևոր է ներմուծել ժամանակ ցույց տվող բառեր և կապակցություններ, որոնց հետ այն առավել հաճախ է կիրառվում: Քանի որ մեր ուսուցման նպատակը հաղորդակցական է, մենք խոսքից կտրված քերականական ձևեր չենք ուսուցանում, խոսքում բոլոր քերականական ձևերը գործածվում են որոշակի իրավիճակներում, կապակցվում են որոշակի բառերի և քերականական ձևերի հետ ու ձևավորում հաղորդակցական միավորներ¹: Քերականական երևույթը ուսուցանելու նպատակն այն է, որ սովորողը կարողանա հնչող խոսքում ընկալել այն և ինքնուրույն գործածել համապատասխան իրավիճակում՝ ճիշտ կապակցելով այլ բառերի և քերականական երևույթների հետ: Այս նպատակին հասնելու համար վաղակատար ներկա ժամանակաձևի կիրառությունների ուսուցման ընթացքում ներմուծվում են *արդեն*, *դեռ* և *ներ* մակբայները, որոնց հետ այն հաճախ է կիրառվում:

Նյութի ներմուծման հաջորդականությունը որոշելիս մեծ նշանակություն ունի կիրառության հաճախականությունը²: Ըստ «ԱՐԵՎԱԿ» կորպուսի՝ *արդեն* մակբայը բանավոր խոսքի 3.290.673 միավոր կազմող բառամթերքում հանդիպում է 7.891 անգամ, իսկ *դեռ* - ը՝ 1.480 անգամ, *ներ*-ի դեպքում դժվար է որոշելը, քանի որ համանունության հետ գործունենք, բերված թվի մեջ մտնում են նաև համագիր նոր ածականի գործածությունները: Այսպիսով՝ ժամանակաձևերի ուսուցման ընթացքում կարևոր է այս մակբայների կիրառությանը ծանոթացնելը, քանի որ *արդեն* բառը բանավոր խոսքի ամենագործածական հարյուր բառերից մեկն է, իսկ *դեռ*-ը երեք հարյուրից:

¹ St' u **Ахишина А.А., Каган О.Е.**, Учимся учить, Для преподавателя русского языка как иностранного._ 2-е изд., испр. и доп.- М.:Рус. яз. Курсы, 2002, 256 с. , ст. 132

² St' u **Гальскова Н.Д.**, Теория обучения иностранным языкам. Лингводидактика и методика: учеб. Пособие для студ. лингв. Ун-тов и фак. ин. яз. Высш. Пед. Учеб. заведений/Н.Д. Гальскова, Н.И.Гез._ 6-е изд., стер.-М.: Издательский центр «Академия», 2009, 336 с., ст. 310

Առաջին հայացքից թվում է, թե որևէ դժվարության չենք հանդիպի այս մակբայների կիրառությունը ուսուցանելիս, քանի որ *արդեն*-ը համապատասխանում է անգլերենի *already*-ին, *դեռ*-ը՝ *yet* -ին, *նոր*-ը՝ *just* -ին, այսքանը կարող ենք բացատրել ուսանողներին և ավարտել ուսուցումը: Սակայն ոչ բոլոր դեպքերում գործ ունենք լիակատար համընկնման հետ և ուսանողները սխալվում են հենց այնտեղ, որտեղ կա մասնակի համընկնում³:

Մեր ուսուցման նպատակը սովորողների առօրյա հաղորդակցումն է, նպատակին համապատասխան՝ դրվել են հետևյալ խնդիրները՝ համեմատել ժամանակաձևերի կիրառությունները համանշանակ մակբայների հետ անգլերենում և հայերենում, առանձնացնել անգլերենից դրական և բացասական փոխադրումների դեպքերը, քանի որ «Զուգադրական գործոնները շատ կարևոր են սովորելու նյութի ծավալը որոշելիս և գնահատելիս»⁴: Կարևոր են նաև հետևյալ խնդիրները՝ վերլուծել հայերենի ուսուցման համար նախատեսված ձեռնարկներում տվյալ քերականական նյութի ուսուցման համար նախատեսված նյութը, ուսումնասիրել անգլերենի համապատասխան քերականական իրակությունների ուսուցման համար նախատեսված նյութերը և մեթոդները, ապա նաև կուտակված սեփական փորձի հիման վրա որոշել նյութի ներմուծման ծավալը, հաջորդականությունը, բաշխումը և ուսուցման ավելի արդյունավետ եղանակները ու հնարները:

Հայերենը անգլիախոսներին դասավանդելու համար նախատեսված ուսումնական ձեռնարկներում վաղակատար ներկա ժամանակաձևի ուսուցման փուլում բավականաչափ ներկայացված չէ այս կիրառությունը. ձեռնարկներում վաղակատարի բոլոր կիրառությունները ներկայացվում են միանգամից, կա՛մ պարզապես թվարկվում են ոչ միայն այս, այլ նաև ուրիշ մակբայներ, որոնք գործածվում են վաղակատարի հետ, և ներկայացվում է ընդամենը մեկ-երկու օրինակ⁵, կա՛մ առհասարակ անդրադարձ չի արվում այս կիրառությանը⁶, բացատրություններ չեն տրվում, կա՛մ բոլոր կիրառությունները յուրացնելու համար տրվում է ընդամենը չորս վարժություն՝ հիմնականում կյանքի փորձ և կենսագրություն ներկայացնելու իմաստով⁷: Դորա Սաքայանի «Eastern Armenian» գրքում այս կիրառությունը չի ներկայացվում և բացատրվում, վաղակատարի վերաբերյալ տրվում է

³Տե՛ս **Գալսկովա Ն.Դ.**, Теория обучения иностранным языкам. Лингводидактика и методика: учеб. Пособие для студ. лингв. Ун-тов и фак. ин. яз. Высш. Пед. Учеб. заведений/Н.Д. Гальскова, Н.И.Гез._ 6-е изд., стер.-М.: Издательский центр «Академия», 2009, 336 с., ст. 309

⁴Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Եվրոպայի Խորհուրդ, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, 2001(ԲՊԼՀ 2005), 6.4.7.5 կետի 2-րդ ենթակետ, էջ 172

⁵Տե՛ս **Hakobyan Mary**, Eastern Armenian. Արևելահայերեն: Եր.: Տիգրան Մեծ, 2018.-236 էջ, 83-88 էջեր:

⁶Տե՛ս **Սուրադյան Լ.Կ.**, Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն. ձեռնարկ անգլախոս արտասահմանցիների համար: Եր., Էդիթ Պրինտ, 2018, էջ 101-104:

⁷Տե՛ս **Gevorgian A.V.**, East Armenian course.-Yerevan: Adana, 2000, 236-240 pp.

ընդամենը երկու վարժություն, որոնցից միայն մեկ փոքրիկ վարժություն վերաբերում է վաղակատարի ժխտականի հետ դեռ մակբայի կիրառությանը:

Հաջորդ խնդիրն այն է, թե վաղակատարի ուսուցման որ փուլում ենք ներմուծում և ինչու: *Արդեն, դեռ* և *նոր* մակբայները ամենից հաճախ կիրառվում են վաղակատար ներկայի հետ, այդ պատճառով սրանք ներմուծվում են վաղակատար ներկայի կիրառությունները ուսուցանելու սկզբնական փուլում, իսկ վաղակատարը ներմուծվում է ներկայից, հրամայականից և ապակատար ներկայից հետո: Սկզբում ուսանողները յուրացնում են վաղակատարի կիրառությունը որպես անցյալում կատարված գործողություն, որը ներկայի հետ կապված է իր հետևանքով: Ապա անցնում ենք կիրառությունը *արդեն, դեռ* և *նոր* մակբայների հետ, և տվյալ փուլում արդեն սովորողների համար դժվարություն չի ներկայացնում նյութը յուրացնելը:

Երրորդ խնդիրն այն է, թե այս մակբայները տվյալ փուլում պետք է ներմուծել՝ ներկայացնելով միայն վաղակատարի՝ հետ կիրառությունը, թե՞ նաև այլ ժամանակաձևերի: Եթե ոչ մի այլ ժամանակաձևի հետ կիրառությունը չներկայացվի, ուսանողը այս մակբայները կընդունի որպես կողմնորոշիչներ, և ամեն անգամ սրանք լսելիս ուսանողին կթվա, թե խոսքը գնում է վաղակատարի մասին, նա նույնիսկ ուշադրություն չի դարձնի, թե ինչ ժամանակաձևով է դրված բայը:

Սրանք հիմնականում կիրառվում են վաղակատար ներկայի հետ, բայց կարող են կիրառվել նաև ներկայի, ապակատար ներկայի, անկատար անցյալի, վաղակատար անցյալի, հրամայականի, երկրորդական վերլուծական ժամանակաձևերի հետ և այլն: Սակայն ժամանակաձևերի ուսուցման այս օղակում նպատակահարմար է ներկայացնել միայն կիրառությունը վաղակատարի, ապա՝ ներկայի հետ: Նախ՝ այս մակբայները բավական հաճախ կիրառվում են նաև ներկայի հետ, ապա՝ սովորողները մինչ այս փուլը արդեն սովորել են վարժ կազմել ներկա ժամանակի ձևերը և յուրացրել են ամենակարևոր կիրառությունները: Իսկ ներկա ժամանակի ներմուծման սկզբնական օղակում մակբայների կիրառությունը ներկայացնելը նպատակահարմար չէ, քանի որ այդ փուլում դեռ ուսանողների խոսքային գործունեության համար այն անհրաժեշտ չէ: Իսկ մյուս նշված ժամանակաձևերին կամ դեռ ծանոթ չեն, կամ այս փուլում սովորողների խոսքային գործունեության համար անհրաժեշտ չեն:

Եվ վերջապես կարևոր հարցեր են՝ ինչ հաջորդականությամբ ենք ներկայացնում խոսքային կադապարները, ինչպես ենք բացատրում և ինչ վարժություններ ենք առաջարկում հմտություններ ձևավորելու համար:

Հետևելով պարզից բարդը, ծանոթից անծանոթը գնալու սկզբունքներին՝ սկզբում սովորողներին ներկայացվում է *արդեն* մակբայի կիրառությունը վաղակատար ներկայի հետ՝ ներմուծելով միայն հաստատական նախադասություններ, քանի որ այս դեպքում

⁸ Տե՛ս **Sakayan Dora**, Eastern Armenian. For the English-speaking World: Եր., ԵՊՀ, 2007, 96-112 էջեր:

անգլերենում և հայերենում լիակատար համընկնման հետ գործ ունենք. այս նախադասությունները անգլերեն թարգմանվում են present perfect-ով , և *արդեն* բառը թարգմանվում է already:

Արդեն+վաղակատարի դրական խոնարհում կաղապարի իմաստը ուսանողներին բացատրում ենք որպես սպասվածից ավելի շուտ կատարված գործողություն՝ նախադասությունների օրինակները համադրելով անգլերեն համանշանակների հետ: Քանի որ այս դեպքում լիակատար համընկնման հետ գործ ունենք, բացատրության թարգմանական մեթոդը և՛ ժամանակ խնայող է, և՛ սովորողներին չենք խճճում երկար բացատրությունների մեջ, փոխարենը ներմուծում ենք կյանքի իրական իրավիճակներ ներկայացնող նախադասություններ ու փոքրիկ երկխոսություններ՝ զուգահեռ ներկայացնելով անգլերեն թարգմանությունները: Օրինակ՝

- *Նա նամա՞կ է գրելու: Is he going to write a letter?*
- *Ոչ, արդեն գրել է: No, he has already written.*
- *Դավիթը Երևան՞ում է: Is David in Yerevan?*
- *Ոչ, արդեն մեկնել է: No, he has already left.*

Այս փուլում դեռ ներկայացվում են միայն *ե* խոնարհման պարզ բայեր, քանի որ վաղակատարի ներմուծման վաղ փուլում սովորողները դեռ ծանոթ են միայն այս խմբի բայերի վաղակատարի կազմությանը, հետո հերթականությամբ կներմուծվեն նաև մյուս խմբերի բայերի վաղակատարի ձևերը, ու առաջադրանքներում կներառվեն նաև այլ խմբի բայեր:

Այսպիսով՝ առանձնապես մանրամասն տեսական բացատրությունների կարիք չկա, կարելի է հայերեն խոսքային օրինակներին զուգադրել անգլերեն համանշանակները և ապա առաջարկել այսպիսի վարժություններ:

Լրացնել նախադասությունները՝ հետևելով օրինակին:

- *Այսօր զանգի՞ր Տարոնին:*
- *Արդեն զանգել էմ:*
- *Դասերը վա՞ղն են սկսվելու:*
- *Ոչ,* :

«Սովորաբար զրուցակիցների միջև հաղորդակցումը տեղի է ունենում կոնկրետ իրավիճակում կոնկրետ պահանջներ բավարարելու նպատակով»⁹: Շատ կարևոր է, որ վարժություններում ներառված լինեն իրական կյանքի իրավիճակներ արտացոլող միկրոտեքստեր:

Լրացնել նախադասությունները՝ հետևելով օրինակին:

- *Ուզո՞ւմ եք սուրճ խմել:*

⁹Լեզուների իմացության / իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Եվրոպայի Խորհուրդ, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, 2001(ԲՊԼՀ 2005), 4.3.1 կետ, էջ 65:

- Չեմ ուզում, արդեն
- Ե՞րբ ես օգնելու Լիլիթին:
- Ես
- Մեքենաները ե՞րբ են կանգնելու շենքի մոտ:
- Մեքենաները
- Խնդրում եմ, հա՛ց գնիր:
- Արդեն
- Թեքվե՛ք ձախ:
- Արդեն
- Խնդրում եմ, մաքրի՛ր քո սենյակը:
- Արդեն
- Վառի՛ր լույսը:
- Արդեն
- Փակի՛ր լսարանի դուռը:
- Արդեն
- Խնդրում եմ, բացե՛ք պատուհանները:
- Արդեն

Դրանք հիմնականում փոքրիկ երկխոսություններ են, քանի որ հենց երկխոսություններում էլ ամենից շատ են գործածվում այս մակբայները:

Սովորողների ուշադրությունը հրավիրելով այն հանգամանքի վրա, որ *արդեն* մակբայը գործածվում է ոչ միայն հաստատական, այլ նաև *հարցական* նախադասություններում վաղակատարի դրական խոնարհման ձևերի հետ՝ ներկայացնում ենք օրինակներ և համադրում անգլերեն համանշանակների հետ՝ ցույց տալով, որ այս դեպքում չեն համընկնում անգլերեն և հայերեն նախադասությունները, հայերենի *արդեն* մակբային անգլերենում համապատասխանում է ոչ թե *already*, այլ *yet* մակբայը:

— *Անին արդեն խոսե՞լ է նրա հետ:*

Has Ani spoken to him yet?

— *Այո, արդեն խոսել է:*

Yes, she has already spoken.

Առաջարկվում է վարժություն՝

Լրացնել նախադասությունները՝ հետևելով օրինակին:

— *Արդեն պանիր գնե՞լ էս:*

— *Այո, արդեն գնել էս:*

— *Արդեն*

— *Այո, արդեն գրել էմ իմ անունը:*

—

— *Այո, ջուր բերել էմ արդեն:*

Ապա անցնում ենք *դեռ* ժամանակի մակբային՝ բացատրելով, որ այն, ի տարբերություն *արդեն*-ի, գործածվում է վաղակատարի միայն ժխտական ձևերի հետ: Խոսքային օրինակների հետ նպատակահարմար է ներկայացնել նաև անգլերեն համանշանակները, քանի որ տվյալ դեպքում մասնակի համընկնման հետ գործ ունենք:

- *Արդեն սկսվե՞լ է ֆիլմը:*
- *Դեռ չի սկսվել:*
- *Ուզո՞ւմ ես սուրճ խմել:*
- *Ուզում եմ, այսօր դեռ սուրճ չեմ խմել:*
- *Դուք արդեն լսե՞լ եք նոր երգը:*
- *Ոչ, մենք դեռ չենք լսել նոր երգը:*

Ուսանողներին բացատրվում է, որ *դեռ+վաղակատար ժխտական* կաղապարը արտահայտում է անցյալում չկատարված գործողություն, որի կատարվելը սպասվում է: *Դեռ* մակբայի կիրառությունը վաղակատարի ժխտական ձևերի հետ հեշտությամբ են հասկանում, քանի որ համընկնող կիրառություն է, մանրակրկիտ տեսական բացատրությունների կարիք չկա, խոսքային օրինակները զուգադրաբար ներկայացնելը տվյալ դեպքում բացատրելու ամենաարդյունավետ միջոցն է:

Ամփոփելով բացատրում ենք, որ հարցում արտահայտող նախադասություններում անհամապատասխանություն կա անգլերենի հետ. վաղակատարի դրական ձևերի հետ հայերենում գործածվում է *արդեն*, իսկ անգլերենում, ի տարբերություն հայերենի, yet: Եթե մենք սովորողներին ընդամենը բացատրենք, որ հայերենի *արդեն*-ին համապատասխանում է անգլերենի already մակբայը, իսկ *դեռ*-ին՝ yet-ը, նրանք հարցական նախադասություններում կգործածեն *դեռ՝ արդեն*-ի փոխարեն: Արդյունքում լսողը կհասկանա զայրույթ արտահայտող նախադասություն, օրինակ՝ *Դու դեռ խոսե՞լ ես:*

Առաջարկվում են այսպիսի վարժություններ՝
Լրացնել նախադասությունները՝ հետևելով օրինակին:

- *Ձարուհին արդեն խոսե՞լ է ընկերոջ հետ:*
- *Ո՛չ, դեռ չի խոսել:*
- *Նրանք արդեն բերե՞լ են բանալիները:*
.....
- *Մեքենան թեքվե՞լ է աջ:*
.....
- *Նրանք փակե՞լ են պատուհանները:*
.....
- *Նա փորձե՞լ է նոր վերարկուն:*
.....
- *Դուք արդեն դասավորե՞լ եք ճամպրուկները:*
.....

Կամ՝ Տեղադրել *դեռ* կամ *արդեն*:

— նստե՞լ էս ավտոբուս:

— Դեռ չե՞ս նստել ավտոբուս:

— խոսե՞լ էս Արամի հետ:

— Ոչ, վաղն եմ խոսելու:

— չե՞ս զանգել նրանց:

— Ոչ, երեկոյան եմ զանգելու:

Նաև այսպիսի խոսքային վարժություններ՝

— Այսօր թե՛յ խմե՞լ էս:

— Այո, արդեն խմել եմ: / Ո՛չ, դեռ չեմ խմել:

— Այսօր գրադարանում պարապե՞լ էս:

.....

— Այսօր զանգե՞լ էս քո ընտանիքին:

.....

Ներկայացնելով վաղակատարի *ժխտականի* ձևերով կազմված *հարցում* արտահայտող նախադասություններ, որոնցում գործածվում է *դեռ* մակբայը, զուգահեռ ներկայացնում ենք անգլերեն թարգմանությունները yet ժամանակ արտահայտող բառով: Օրինակ՝ *Դու դեռ չե՞ս խոսել նրա հետ: Դեռ չի՞ սկսվել դասը:*

Բավական մեծ թվով խոսքային օրինակներ ու վարժություններ են անհրաժեշտ, որպեսզի ուսանողը խոսքում վստահ կիրառի վաղակատարը *արդեն* ու *դեռ* մակբայների հետ: Ավելի ուշ փուլում, երբ սովորողները ծանոթ կլինեն բայերի մյուս խմբերի վաղակատարի ձևերին, նորից կներմուծվեն վարժություններ այս մակբայների կիրառությամբ:

Տեղադրել *դեռ* կամ *արդեն*:

— *Անին արդեն եկե՞լ է:*

— *Ոչ, չի եկել:*

— *Անձրևը կտրվե՞լ է:*

— *Ոչ, չի կտրվել:*

— *եկե՞լ են բժիշկները:*

— *Ոչ, դեռ չեն եկել:*

Նա նոր վերարկու է գնել, բայց չի հագել:

Լրացնել նախադասությունները՝ հետևելով օրինակին:

— *Ուզո՞ւմ էս տեսնել ֆիլմը:*

— *Արդեն տեսել եմ:*

— *Մարիամը ե՞րբ է գնալու:*

— *Նա :*

Հաղորդակացական հմտություններ ձևավորելուն օգնում են ինքնուրույն գործունեություն պահանջող այսպիսի վարժություններ՝ ուսանողներից մեկը ասում է՝ ինքն ինչ է արել արդեն կամ դեռ չի արել, մյուսը շարունակում է իր մասին: Օրինակ՝

I — Ես արդեն սովորել եմ ֆիզիկայի դասը, իսկ դո՞ւ:

II — Իսկ ես դեռ չեմ սովորել ֆիզիկայի դասը, բայց արդեն սովորել եմ քիմիայի դասը:

I — Ես դեռ սուրճ չեմ խմել, իսկ դո՞ւ:

II —

Ժամանակի հաջորդ մակբայը, որ շատ հաճախ է կիրառվում վաղակատարի հետ, *նոր*-ն է, այն ներկայացնում ենք՝ համադրելով անգլերենի just մակբայի հետ և բացատրելով, որ վաղակատարի հետ գործածվելիս արտահայտում են նույն իմաստը՝ ներկա ժամանակակետից քիչ առաջ կատարված գործողություն, որի ժամանակավոր հետևանքը դեռ կա ներկայում, և գործածվում է նույն իրավիճակներում: Նաև նպատակահարմար է ուսանողների ուշադրությունը հրավիրել նրա վրա, որ *նոր*-ին հաջորդում է օժանդակ բայը:

Նոր եմ ներկել նստարանը, չես կարող նստել:

— Ուզո՞ւմ ես թեյ խմել:

— Ոչ, նոր եմ խմել:

— Ինչպե՞ս է քո տատիկը:

— Լավ է, նոր եմ խոսել նրա հետ:

Փոփոխել նախադասությունները ըստ օրինակի:

Ճաշը տաք է, նոր եմ եփել:

Մենյակը մաքուր է, ես նոր / մաքրել/:

Ջուրը սառն է, ես նոր / բերել / սառնարանից:

Ծարավ չեմ, ես նոր / խմել /ջուր:

Ավելի ուշ ներմուծվում են մյուս խմբերի բայերով այսպիսի վարժություններ՝ Տեղադրել *կտրվել*, *գալ*, *գնալ*, *սկսել*, *ուտել* բայերի համապատասխան ձևերը:

Փողոցը թաց է, անձրևը նոր :

Լավ չգիտեմ Երևանի փողոցները, նոր Մոսկվայից:

Ավտոբուսը նոր, մի ժամ սպասելու եք, ավտոբուսները ժամը մեկ են գալիս:

— Թեման դժվա՞ր է:

— Նոր պարապել, չգիտեմ:

— Ուզո՞ւմ ես հաց ուտել:

— Նոր :

Այս թեման ուսուցանելիս շատ արդյունավետ է իրավիճակներ ներկայացնող նկարներով աշխատելը: Սկզբում տրվում են *է* խոնարհման պարզ բայերով վարժություններ՝ Կազմել նախադասություններ՝ գործածելով *նոր* մակբայը:



Գնել մեքենա

Սպասվող պատասխան՝ *Նա նոր է գնել մեքենան:*



Պիցցան տաք է,

.....:

Սպասվող պատասխան՝ *Պիցցան տաք է, նա նոր է եփել:*



Ինքնաթիռը նոր է մեկնել:

Կազմել նախադասություններ՝ գործածելով *արդեն* կամ *դեռ* մակբայները.



Ինքնաթիռը /մեկնել/:

Սպասվող պատասխան՝ *Ինքնաթիռը դեռ չի մեկնել:*



Ինքնաթիռը / մեկնել /:



Նա /Եփել է/ ճաշը:



Նա /Եփել է/ ճաշը:



Բաժակի մեջ ջուր չկա,
նա /Խմել է/ ջուրը:



Նա /Խմել է/ թեյը:



Նա /մաքրել է/ սենյակը: Նա /մաքրել է/ սենյակը:
Նախադասությունները նախընտրելի է ներկայացնել զույգերով:


Ավելի ուշ, երբ ծանոթ կլինեն մյուս խմբերի բայերի վաղակատարի ձևերին, կտրվեն այսպիսի վարժություններ՝
Կազմել նախադասություններ՝ գործածելով նոր մակբայը.



*Գալ տուն
Երեխան նոր է եկել տուն:*



*Արթնանալ
Աղջիկը նոր է արթնացել:*



*Իջնել
Ինքնաթիռը նոր է իջել:*

Կազմել նախադասություններ՝ գործածելով արդեն կամ դեռ մակբայները.



*Ուտել
Սպասվող պատասխան՝ Նա արդեն կերել է:*



*Հասնել
Նա արդեն հասել է:*

Հաղորդակցական հմտություններ զարգացնելու համար նաև շատ շահեկան է դասի ընթացքում ստեղծվող բնական իրավիճակներում ուսանողների հետ հաղորդակցվել հայերեն՝ գործածելով արդեն սովորած ձևերը¹⁰, օրինակ՝

Դասավանդող - *Արդեն գրե՞լ եք:*

Ուսանողներ - *Ոչ, դեռ չենք գրել:*

Դասավանդող - *Դավիթը դեռ չի՞ եկել:*

Արդեն վերջացրե՞լ ես, տո՛ւր քո տեսորը:

Սովորե՞լ ես պատմել տեքստը:

Վաղակատարների կան *արդեն, դեռ* և *նոր* մակբայների հետ գործածել սովորեցնելուց հետո անցնում ենք ներկայի հետ կիրառություններին, որոնց կանոնադրական հաջորդ հոդվածներում:

Այսպիսով՝ A1 մակարդակում անգլիախոս ուսանողներին վաղակատար ներկայի բայաձևերի՝ *արդեն, դեռ* և *նոր* մակբայների հետ կիրառությունը արդյունավետ ուսուցանելու նպատակով համեմատել և վերլուծել ենք հայերենում և անգլերենում համանշանակների իմաստագործառական առանձնահատկությունները՝ դժվարությունները առանձնացնելու և դրանք հաղթահարելու ուղիներ առաջարկելու նպատակով: Առաջարկել ենք ուսուցանվող նյութի գիտականորեն հիմնավորված ծավալ, բաշխում, ներմուծման հաջորդականություն, բացատրության եղանակներ, հաղորդակցական նպատակով կիրառելու հմտություններ ձևավորելուն ուղղված վարժությունների համակարգ:

Օգտագործված գրականության ցանկ

Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Եվրոպայի Խորհուրդ, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Ստրասբուրգ, 2001 (ԲՊԼՀ 2005):

Մուրադյան Լ.Վ., Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն. ձեռնարկ անգլախոս արտասահմանցիների համար: Եր., Էդիթ Պրինտ, 2018:

Gevorkian A.V., East Armenian course, Yerevan, Adana, 2000.

Hakobyan Mary, Eastern Armenian. Արևելահայերեն, Եր., Տիգրան Մեծ, 2018:

Sakayan Dora, Eastern Armenian. For the English-speaking World, Եր., ԵՊՀ, 2007:

Акишина А.А., Каган О.Е., Учимся учить, Для преподавателя русского языка как иностранного. 2-е изд., испр. и доп. М.:Рус. яз. Курсы, 2002.

¹⁰ Տե՛ս **Акишина А.А., Каган О.Е.**, Учимся учить, Для преподавателя русского языка как иностранного, 2-е изд., испр. и доп., М.,Рус. яз. Курсы, 2002, ст. 27.

Гальскова Н.Д., Теория обучения иностранным языкам. Лингводидактика и методика: учеб. Пособие для студ. лингв. Ун-тов и фак. ин. яз. Высш. Пед. Учеб. заведений/Н.Д. Гальскова, Н.И.Гез._ 6-е изд., стер.-М.: Издательский центр «Академия», 2009.

РЕЗЮМЕ

ОБУЧЕНИЕ АНГЛОЯЗЫЧНЫХ СТУДЕНТОВ УПОТРЕБЛЕНИЮ НАСТОЯЩЕГО СОВЕРШЕННОГО ВРЕМЕНИ С НАРЕЧИЯМИ *УЖЕ, ЕЩЕ И ТОЛЬКО ЧТО*

Минасян Сирануш

Статья посвящена обучению англоязычных студентов употреблению настоящего совершенного времени с наречиями *уже, еще и только что* на уровне А1. Семантические особенности эквивалентов в армянском и английском языках были сопоставлены и проанализированы с целью выявления трудностей и предложения путей их преодоления. Предложены научно обоснованный объем преподаваемого материала, его распределение, последовательность введения, методы объяснения, система упражнений, направленных на формирование умений коммуникативных навыков.

Ключевые слова: коммуникативная цель, семантические особенности, объем материала, распределение, методы объяснения, система упражнений.

SUMMARY

TEACHING ENGLISH-SPEAKING STUDENTS THE USE OF THE PRESENT PERFECT TENSE WITH THE ADVERBS *ALREADY, STILL AND JUST*

Minasyan Siranush

The article is about teaching English-speaking students the use of the present perfect tense with the verbs *already, still* and *just* at the A1 level. The semantic features and application of equivalents in Armenian and English were compared and analyzed in order to identify difficulties and suggest ways to surpass them. The article proposes volume, distribution, sequence of introduction, methods of explanation of the taught material, a set of exercises aimed at forming communicative skills, based on the existing scientific literature.

Key words: communicative purpose, semantic features, volume of material, distribution, methods of explanation, set of exercises.

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

(ըստ Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակի)

Մուրադյան Վիկտորյա

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան
կրտսեր գիտաշխատող
viktorya.muradyan@list.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-184

Բանալի բառեր. տրական հոլով, իմաստային առումներ, խնդրային տրական, նրբիմաստներ, համեմատություն, Գ. Մահարի, «Ծաղկած փշալարեր», լրացումներ:

Մուտք

Լեզվի պատմական զարգացման ընթացքում փոխվել են հոլովների կիրառական մի շարք առանձնահատկություններ, ինչի հետևանքով էլ ի հայտ են եկել տրական հոլովի դրսևորման մի շարք նոր ձևեր, իսկ որոշ կիրառություններ էլ դարձել են հնաբանություններ: Տրական հոլովը դառնում է ստորոգյալի լրացում՝ դրսևորելով երկու կարգի հարաբերություն՝ խնդրային և պարագայական: Աշխատանքում քննության ենք ենթարկել խնդրային տրականի դրսևորումները: Սույն աշխատանքը կատարել ենք համեմատական վերլուծության մեթոդով՝ հիմք ընդունելով երեք լեզվաբանների հետևյալ աշխատությունները՝ Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն», Վ. Քոսյանի «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները», Վ. Առաքելյանի «Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները»: Համեմատել և վերլուծել ենք լեզվաբանների առանձնացրած իմաստային առումները տրական հոլովի խնդրային իմաստների առնչությամբ, փորձել ենք այդ իմաստային առումները համեմատական քննության ենթարկել, ուսումնասիրել համաժամանակյա կտրվածքով: Լեզվական նյութի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների հիման վրա կատարել ենք որոշակի ընդհանրացումներ, համակարգումներ: Հարկ ենք համարում նշել նաև, որ երբեմն տրական հոլովով դրված բառի նրբիմաստը որոշելը դժվարություն է ներկայացնում, որովհետև բառը միաժամանակ մի քանի նրբիմաստ կարող է արտահայտել: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ տրական հոլովով դրված բառը փորձել ենք դիտարկել իր առաջնային կամ համեմատաբար գլխավոր իմաստով: Նյութի ուսումնասիրության արդյունքում մեր նկատառումների հիման վրա առանձնացրել ենք նոր իմաստային առումներ, որոնց մասին նշումների չենք հանդիպել վերոնշյալ լեզվաբանների աշխատանքներում: Լեզվական նյութը հիմնավոր ներկայացնելու համար որպես բնագիր ընտրել ենք Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը: Լեզվական նյութին համապատասխան մեջբերվում են բնագրային օրինակներ:

Ներածություն

Տրական հոլովի անվանումը ըստ իմաստի է տրված և կապվում է *տալ* բայի հետ: Հոլովը կազմվում է սեռական հոլովի համանունությամբ. մի դեպքում կազմվում է մասնիկավորմամբ, մյուս դեպքում՝ հնչյունական հերթագայությամբ: Սեռական և տրական հոլովների ձևային նմանության հատկանիշը հիմք ընդունելով՝ քերականագիտության մեջ տարբեր տեսակետներ են առաջ քաշվել սեռականի՝ առանձին հոլով չլինելու առնչությամբ: Հինգհոլովականները սեռականը տարբալուծում են տրականի մեջ. չեն ընդունում նաև հայցական հոլովը՝ հաշվի առնելով միայն ձևային տարբերակման հատկանիշը, այնինչ «հոլովը ձևի և իմաստի սերտ միասնություն է: Չկա հոլով առանց իմաստի և ձևի¹»:

Այդ համանունությունը սեռականի հետ վերանում է որոշյալ առման դեպքում, որովհետև սեռական և տրական հոլովների զանազանման հարցում որոշյալ հոդերը կատարում են հոլովատարբերակիչ դեր: Վ. Առաքելյանը անդրադարձումներ ունի նաև տրական և հայցական հոլովների տարբերակմանը: Նա գրում է, որ ինչպես հայցական հոլովը, այնպես էլ տրականը նախադասության մեջ հիմնականում կապվում են բայի հետ և դառնում նրա համար խնդիր: Բայց հայցականը ուղիղ խնդիր է և ավելի մեծ անհրաժեշտություն է ներկայացնում գործողության համար, քան տրականը: Հայցականը անմիջականորեն է ընկնում բայի գործողության ոլորտը, և գործողությունը ուղղակի կերպով անցնում է նրա վրա: Տրականը, սակայն, հեռավոր ձևով է շոշափվում գործողության կողմից²:

Քերականագիտության մեջ տրական հոլովի հիմնական իմաստը համարվում է հանգումը: Մանուկ Աբեղյանը, որն ընդունում էր հինգ հոլով, տրական հոլովի հիմնական իմաստը հանգումն է համարում, այսինքն՝ տրականը ցույց է տալիս հանգման առարկան՝ այն անձը կամ իրը, որին իբրև մի նպատակի դիմում, մոտենում, մատուցվում է մի բան, կամ որին ուղղվում, անցնում է գործողությունը (մատուցման տրական)³:

Տրական հոլովի նշանակությունն այն է, որ գործողության մասնակից անձին ուղղվում է մի բան, և որը գիտակցաբար ստանում, ընդունում է այն: Տրականն այս նշանակությամբ մեծ մասամբ գործածվում է գրաբարում, օրինակ՝ «...պատգամ յղեր Տիրիթն առ թագաւորն»⁴: Բայց այժմ այս հոլովի նշանակությունն ավելի ընդարձակվել է, և շատ խնդիրներ, որոնք հին հայերենում դրվում էին ի, առ, ընդ և այլ նախդիրներով հայցական հոլովի հետ գործածությամբ իբրև գործողության հանգման նպատակակետ, դրվում են տրական հոլովով⁵:

¹Տե՛ս **Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ.**, Տեսական և գործնական հայոց լեզու (ձևաբանություն), բուհական ձեռնարկ, Երևան, 2018, էջ 51:

²Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 90-91:

³Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 428:

⁴**Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 294:

⁵Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, էջ 442:

Է. Աղայանը, որը վեց հոլովի տեսակետն էր պաշտպանում, գրում է. «Ամենասովորական ու հիմնական իմաստն է հանգման իմաստը. թե՛ մատուցման խնդիրը, թե՛ հանգման խնդիրը և թե՛ հանգման տեղի պարագան ցույց են տալիս այն առարկան կամ անձը, որին հանգում է կա՛մ գործողությունը, կա՛մ մի այլ առարկա», իսկ հատկացումը թողնում է իբրև սեռական հոլովի իմաստ⁶, այնինչ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը սեռականն ու տրականը միավորում է մեկ հոլովի մեջ և նրա ընդհանուր իմաստը համարում է հատկացումը⁷: Սեռականն ու տրականը մի հոլովի մեջ է միավորում նաև Մ. Ասատրյանը. «Եթե ամենարնդհանուր ձևով սահմանվի սեռական-տրականի իմաստը, ապա դա պետք է համարվի հանգման իմաստը, որը սեռական-տրականի՝ վերադրի պաշտոնում հանդես է գալիս որպես առարկայական հանգում (վերաբերություն, ստացականություն), իսկ ոչ վերադրի պաշտոնում՝ որպես գործողության հանգում (ուղղվածություն դեպի առարկան)»⁸:

Խնդրային տրականի դրսևորումները

Տրական հոլովի իմաստային առումները բազմազան են: Խոսքի մեջ տրական հոլովով դրված բառերը կապվում են ստորոցյալի հետ և դառնում դրա լրացումներ, որոնք արտահայտում են երկու կարգի հարաբերություններ՝ խնդրային և պարագայական: Դառնում է նաև գոյականական անդամի լրացում՝ բացահայտիչ: Ստորև ներկայացվում են խնդրային տրականի՝ առավել տարածում գտած և գործածական իմաստային առումները՝ ասվածը հիմնավորելով Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակից քաղաբերված օրինակներով:

Հանգման տրականը հոլովի հիմնական շարահյուսական կիրառություններից է: Բայի լրացումը հանգման իմաստով այն անձն է կամ իրը, որին գործողությունը մոտենում, կաչում, դիպչում, հանգում է և այլն: Այս իմաստով խնդիր են առնում հիմնականում շարժում ցույց տվող բայերը, ինչպես՝ *մոտենալ, դիպչել, քսել, դեմ առնել, հասնել, թիկն տալ, կոթնել, հանդիպել* և այլն: «*Հետո նա մոտեցավ Աշոտ դայու անիվին*» [էջ 15] նախադասության մեջ *անիվին* բառը ցույց է տալիս այն առարկան, որին մոտեցել է ենթական: Սեռային ոչ մի սահմանափակում չկա: Հանգման տրականով լրացումներ կարող են դառնալ ինչպես թանձրացական (մեծ մասամբ), այնպես էլ վերացական գոյականները:

Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում հանգման տրականով օրինակները հաճախադեպ են: Ներկայացնենք դրանցից մի քանիսը: «*Հետո նա մոտեցավ Աշոտ դայու անիվին*» [էջ 15]: «*Մի երկու անգամ մինչև անգամ իմ ականջին հասավ նրանց սուլոցը*» [էջ

⁶Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 226-227:

⁷Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, էջ 90:

⁸Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևան, 1989, էջ 63, 68:

⁹Մահարի Գ., Ծաղկած փշալարեր, Երևան, 1988: Այսուհետ բնագրային մեջբերումները կտրվեն փակագծերի մեջ:

20]: «Հետո նա մոտեցավ **Աշոտ դայուն** և աղբբեջաններն ասաց» [էջ 23]: «Ավելի համարձակները մոտեցան **դարպասին**» [էջ 28]:

Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակը ուսումնասիրելիս նկատել ենք տրական հոլովով գործածված մի շարք օրինակներ, որոնք գործածված են կապակցման իմաստ արտահայտող բայերի կողքին, ինչպես՝ *միանալ, կապվել, կցվել, շաղկապվել, միավոր(վ)ել, միահյուսվել, խառնվել, ձուլվել* և այլն: Ուստի հաշվի առնելով այս հանգամանքը՝ կապակցման իմաստ ունեցող բայերի՝ տրական հոլովով դրված լրացումները անվանել ենք **կապակցման տրական**, որը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին միանում է մեկ այլ անձ կամ իր: Վ. Առաքելյանը *միանալ, հյուսվել, կպչել, ձուլվել, խառնվել, կցվել* բայերի լրացումը անվանում է հանգման տրական¹⁰: Լեզվաբանը հաղորդման տրականով կապակցություններ է համարել *դիպչել քարին* և *ձուլվել երգին*, մինչդեռ առաջինում *քարին* բառաձևը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում է մի բան, բայց *երգին* բառաձևը ցույց է տալիս այն առարկան, որին միանում է մի բան: Կապակցման տրականը իր իմաստով հստակ տարբերվում է հանգման տրականից, թեպետև աղերսներ կան: Այս դիտարկումները նկատի ունենալով՝ այսպիսի բայերի լրացումը համարում ենք կապակցման տրական: Ստորև բնագրային օրինակներ են.

«Լյուդմիլան միանում է **նրանց**» [էջ 63]: «Միայն մի ճանապարհ կա, որ տայգան **աշխարհին** է կապում, և այդ ճանապարհով են գալիս ու գնում էտայները» [էջ 76]: «Ճիշտ ժամանակին միանում են **երգիչներին**» [էջ 79]: «Գնացին, խառնվեցին հազար տարվա **մեռելներին**» [էջ 148]: «Ես ուզալ ըմ Ղարաբաղը պոկեմ Աղբբեջանից ու **Հայաստանին** կցեմ» [էջ 176]:

Մատուցման տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին մատուցվում, տրվում է մի բան: Տրական հոլովի հիմնական կիրառություններից է: Այս իմաստով խնդիր են առնում տալու, մատուցելու, նվիրելու, հանձնելու գաղափար արտահայտող բայերը, ինչպես՝ *մատուցել, տալ, նվիրել, կարկառել, հատկացնել, բաշխել, բաժանել, տրամադրել, փոխանցել, հանձնել* և այլն: Մատուցման տրականի հետ երբեմն համատեղվում են հավելման, շահի, հաղորդման և այլ իմաստներ: Մ. Աբեղյանն իր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ հաղորդման, վերածման, հանգման, պատճառի որոշ իմաստային առումներ դիտարկում է մատուցման տրական: Ինչպես՝ *Այս երկը վերագրվում է Խորենացուն* (ստացական), *Անեծքն անիծողին կղառնա* (ուղղության) և այլն¹¹: Բնագրում հանդիպում ենք բազմաթիվ օրինակների.

«Իրենց օրաբաժին հացը տվին **սափրիչներին**» [էջ 27]: «Հետո նա մի քանի մեծ կտոր խոզի ճարպ է փոխանցում **Աշոտ դայուն**» [էջ 45]: «Շոայլ շերեփով եռացրած ջուրը բաժանում էր **կալանավորներին**» [էջ 67]: «Ծխախոտը նվիրեց խոհարար աղջիկ **Յունուսին**» [էջ 67]:

¹⁰Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 96:

¹¹Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 428-429:

«Այնուհետև Աշոտ դային երկու քառակուսի կտոր շաքար տվեց **Մամոյին** իր ծանրոցի մնացորդից» [էջ 97]:

Հաղորդման տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին ասվում, հաղորդվում է մի բան: Հաղորդման տրականով խնդիր են առնում ասացական բայերը՝ *ասել, պատմել, հաղորդել, զեկուցել, հրամայել, հայտնել, թելադրել* և այլն: Լրացման դերում հիմնականում հանդես են գալիս անձ ցույց տվող բայերը, իսկ իրանիշ բառերի՝ ասացական բայերի լրացում դառնալը Վ. Քոսյանի ձևակերպամբ «հետևանք է նրանց անձնավորման»¹²: Այս միտքը բոլոր դեպքերում չէ, որ ճշմարիտ է: Դիտարկենք հետևյալ նախադասությունը՝ «*Քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին*». տրականով լրացումը (դաշտերին) այս նախադասության մեջ անձնավորված չէ, որովհետև գործողությունը իր հանդեպ է կատարվում, և այն չի դիտարկվում իբրև խոսակից: Ավելի իրատեսական է Վ. Առաքելյանի միտքը, որով այդ լրացումները համարում է փոխաբերական իմաստով առնված¹³: Վիպակում հաղորդման տրականը հաճախված է.

«*Նա, ըստ երևույթին, գերմանուհուն ինչ-որ բան էր բացատրում կամ գուցե պատմում*» [էջ 18]: «*Խորհուրդ տվեց հայտնել պետին*» [էջ 33]: «*Ինչպես Տրախտենբրոտն է հետագայում պատմել Մերպերտին (իսկ Մերպերտն Աշոտ դայուն...), պետը չի խոսել բուժարանի գործերի մասին*» [էջ 34]: «*Նրանք էլ պատմում էին հայրերին*» [էջ 62]:

Ընկալման տրական իմաստային առմանը հանդիպել ենք Վ. Քոսյանի «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» գրքում: Այս տեսակը չեն առանձնացնում Վ. Առաքելյանը և Մ. Աբեղյանը: Ցույց է տալիս այն անձը կամ իրը, որից մի բան է լսում մեկ այլ անձ կամ իր: Այս լրացումը ստանում են սակավաթիվ բայեր՝ *լսել, ունկնդրել, ականջ դնել, անսալ* և նման բայեր: Այս նրբիմաստը առանձնացրել է Վ. Քոսյանը և տվել ընկալման տրական անվանումը՝ ի տարբերություն Վ. Առաքելյանի, որը վերոթվարկյալ բայերը ներառել է հաղորդման իմաստի մեջ: Ընկալման տրականը իր իմաստով նույնիսկ հակադիր է հաղորդման տրականին. համեմատել՝ «*պատմեց ընկերուհուն*» և «*լսեց ընկերուհուն*» կապակցությունները: Առաջինի դեպքում լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին մի բան հաղորդվում է, իսկ երկրորդ կապակցության մեջ լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից մի բան լսվում է:

«*Հիմա ինձ սպասում է մի ուրիշ հաճույք ու բավականություն, լվանալ ոտներս և...լսել Աշոտ դայուն*» [էջ 41-42]: «*Խոր քնած էին, և եթե ես անգամ բարձրաձայն «մնաք բարով» գոռայի, մեկ է, ինձ չէին լսի*» [էջ 83]: «*Աշոտ Դային զգուշացրել էր, որ գոնգը եղել է, բայց մենք նրան չենք լսել*» [էջ 91]: «*Չէր կարելի առանց գեղազիտական բարձր հաճույքի լսել նրան*» [էջ 121]:

¹² Տե՛ս Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 221:

¹³ Տե՛ս Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 98:

Շահի կամ վնասի տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որի օգտին կամ վնասին կատարվում է գործողությունը: Լրացում դառնում են հիմնականում անձ ցույց տվող բառերը, որոնք էլ դառնում են տարբեր սեռերի բայերի լրացում, ինչպես՝ *ծառայել, բերել, գոհել, հաջողել, պատրաստել, գործել, պակասել* և այլն: Ներգործական սեռի բայերի մոտ, ինչպես նշել է Վ. Առաքելյանը, շահի տրականը աստիճանաբար դուրս է մղվում՝ այն տրականաձև հայցականի հետ շփոթելու պատճառով¹⁴:

Վ. Առաքելյանը առանձնացրել է *ձայնարկության տրական*, որը համարել է շահի տրականին մոտ իմաստ այն առումով, որ ձայնարկությունը ուղղվում է անձի կամ առարկայի օգտին (վնասին)¹⁵, բայց Վ. Քոսյանը հերքել է այս տեսակետը՝ այն համարելով ոչ թե առանձին իմաստ, այլ շահի տրական իմաստի վրա հենված գործածություն¹⁶: Ձայնարկության տրականի գործառույթներն է կատարում Մ. Աբեղյանի նշած *բացականչության տրականը*, որը, ի տարբերություն *ձայնարկության տրականի*, առանձին իմաստ համարված չէ¹⁷: Վիպակում հանդիպում ենք բազմաթիվ օրինակների:

«Օրինագանձներին սպառնում էր խիստ պատիժ, մինչև արտոք» [էջ 30]: *«Խնդրեց նրա աջակցությունն իր ընտանեկան կյանքի ապահովության գործին»* [էջ 34]: *«Միրով օգնում էր գրեթե բոլորին»* [էջ 58]: *«Մեսրոպին նշանակեն իրեն օգնական»* [էջ 69]:

Ստացական տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին մի բան պատկանում, վերագրվում, վերապահվում է: Այս իմաստով խնդիր են առնում պատկանելություն, վերագրություն ցույց տվող բայերը, ինչպես՝ *պատկանել, վերաբերել, վիճակվել, վերապահել, վերագրել* և այլն: Ժամանակի ընթացքում ստացական տրականով որոշ կառույցների իմաստը մթազնել է, որի արդյունքում դրանք դադարել են ստացականություն արտահայտելուց: Ստացականության իմաստը կորցրած լրացումները Վ. Առաքելյանը անվանում է *աննշակցության տրական*, օրինակ՝ *վերաբերում է կյանքին* ասելով հասկացվում է կապվածություն, բայց ոչ ֆիզիկական իմաստով: Վ. Քոսյանը առանձնացրել է *վերաբերության տրական* իմաստը, որը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է բայի գործողությունը¹⁸: Վերաբերության տրականը ավելի շատ է համապատասխանում վերոնշյալ երևույթի բացատրությանը: Ստացվում է այնպես, որ ժամանակի ընթացքում ստացականություն ցույց տվող մի շարք կառույցներ փոխարկվել են վերաբերության և լրացրել վերաբերության տրականի շարքերը: Ստորև ներկայացնում ենք բնագրային օրինակներ:

«Կինը կալանավորուհի էր և պատկանում էր Չիտայից եկած նոր էտապին» [էջ 13]: *«Այդ չորս տողը պատկանում է իմ ուսուցչի՝ ընդամենը երկու բարեկամներից մեկի գրչին»*

¹⁴Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 105:

¹⁵Տե՛ս նույն տեղում, էջ 108:

¹⁶Տե՛ս **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 225:

¹⁷Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 434:

¹⁸Տե՛ս **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 228:

[էջ 95]: «Ազոնավները դեղձանիկների **խմբակին** վերագրում էին «Մի վագեր այդչափ արագ» մանկական, միամիտ երգը» [122]: «Այս տեսությունը կրթիս-դաիրմանցի **Սերոբին** էր պատկանում» [էջ 135]:

Ստացական տրականի մեջ իմաստային նուրբ թելով առանձնանում է մի նրբիմաստ՝ **բնութագրման տրականը**, որը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին հատուկ է արտաքին կամ ներքին որևէ հատկանիշ: Այսպիսի լրացում ստանում են *հատուկ, վայել, բնորոշ* և սրանցով կազմված այլ բառեր, երբ հանդես են գալիս որպես ստորոգելի: Վ. Առաքելյանը բերում է հետևյալ օրինակը՝ «*Հատուկ է մարդկանց*», և նշում, որ այս կապակցության մեջ ստացական տրականի իմաստի մթագմման հետևանքով *մարդկանց* բառն արդեն բնութագրման տրական է դառնում¹⁹: Բնութագրման տրականը ցույց է տալիս այն անձը կամ առարկան, որին որևէ հատկանիշ է հատուկ՝ հիմնականում ընդգծելով հատկանիշի յուրահատուկ լինելը, ինչով էլ տարբերվում է ստացական տրականի պատկանելության իմաստից: Բնագրում այս իմաստով լրացումները գործածվել են միայն *հատուկ, բնորոշ* ստորոգելիներիկողմից:

«*Ընդհանրապես դոնրասցի այդ երիտասարդին հատուկ էր երկար լեզուն, և սիրում էր պարծենալ*» [էջ 77]: «*Նրան բնորոշ էր սրամտությունը. կարող էր իրար հետևից անեկդոտներ պատմել գիշեր-ցերեկ և երբեք չկրկնել իրեն*» [էջ 121]: «*Բժշկին հատուկ էին ցից-ցից բեղերը և հալչող, կապույտ աչքերը*» [էջ 134]: «*Այո, Բելուզովը կամերա մտավ հարաբերական այն առողջությամբ, ինչ հատուկ էր ամեն կալանավորի*» [էջ 144]:

Ուղղության տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին ուղղվում է գործողությունը: Այս պարագայում նշվում է հանգման այն առարկան, որը դառնում է գործողության նպատակակետ: Որոշ բայեր իրենց առաջնային իմաստով չեն ստանում այսպիսի լրացում, բայց փոխաբերաբար գործածվելիս ստանում են, երբ արտահայտում են *ուղղել (ուղղվել), նայել* իմաստները: Ուղղության իմաստը կարող է համատեղվել նպատակի, տեղի, պատճառի իմաստների հետ²⁰: Ուղղության տրական լրացում ստացող բառերի մեջ առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք ցույց են տալիս ձգտում, տենչ արտահայտող ներքին հոգեվիճակ, օրինակ՝ *ձգտել, տենչալ, կարոտել, ծարավել, փափագել*, ինչպես նաև սրանց արմատին համարժեք ածականները՝ *կարոտ, ծարավ, պապակ* և այլն: Ստորև բնագրային համապատասխան օրինակներ են.

«*Այդպես նայում է հավատացյալը սրբապատկերին, աղվեսը խաղողին կամ երևի Ռոմեոն՝ Ջուլիետային*» [էջ 15]: «*Հայացքը գցեց Լյուդմիլային*» [էջ 19]: «*Մամոն հայացքը սևեռեց գերմանուհուն*» [էջ 20]:

Հավելման տրականը ցույց է տալիս այն առարկան, որին ավելանում է մի բան: Այսպիսի լրացում սակավաթիվ բայեր են ստանում՝ *ավելանալ, դնել, գումարել*,

¹⁹Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 101:

²⁰Տե՛ս **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 220:

բազմապատկել և այլն: Հավելման իմաստ արտահայտվում է նաև կապային կառույցով, այսինքն՝ տրական հոլովի հավելման իմաստն արտահայտվում է սեռական հոլովի և վրա կապի միջոցով: Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում այս իմաստով օրինակների սակավ ենք հանդիպում:

«Տղամարդկանց **էտապին** գումարվեց կանանց էտապը, որի մուտքը բրուտանոց շատ սպասված էր» [էջ 19]: «-Շտապե՛ք աշխատանքի,- հավելեց իր **խոսքին** Բվան Բիչկոն» [էջ 39]: «Մամոն Լյուդմիլայի համար ևս մի կարտոֆիլ ավելացրեց կիսաեփ **կարտոֆիլներին**» [էջ 48]: «Լյուդմիլա Շարթի **հավաքածուին** ավելացավ ևս մեկ սեխաձև գլուխ» [էջ 164]:

Վերածման տրականը ցույց է տալիս այն առարկան, որին վերածվում, փոխարկվում է մի բան: Այդպիսի լրացում ստանում են փոխակերպման գործողությունն ցույց տվող բայերը, ինչպես՝ *վերածել, փոխարկել, փոխակերպել, փոխել, թարգմանել, ճեղքել (քիմիական ռեակցիա)* և այլն, որոնց համար լրացում կարող են դառնալ բազմաթիվ բառեր՝ առանց իմաստի սահմանափակման: Գրաբարում վերածման իմաստն արտահայտվում է *ի* նախդիրով և հայցական հոլովով, իսկ արդի հայերենում դրա դրսևորման հիմնական ձևը տրականն է, թեև բացառված չեն հայցականով արտահայտված ձևերը: Ներկայացնենք բնագրային մի քանի օրինակ:

«Ինքն ասես վերածվեց բնական մեծության կավե **արձանի**» [էջ 72]: *Նա էլ հիմա բանաստեղծի է վերածվել*» [էջ 94]: «Երբ դյուծինգրադը վերածվեց հիվանդանոցային **պալատի**, բոլորի համար պարզ դարձավ, որ կիրառվում են զանգվածային, դաժան ծեծ ու բռնություն» [էջ 110]: «Ամբողջ աշխարհը վերածված կլիներ մի անձայրածիր **գերեզմանոցի**» [էջ 154]:

Վերածման կամ փոխարկման տրականի մեջ իմաստային փոքր տարբերությամբ առանձնանում են այն լրացումները, որոնք ցույց են տալիս մի բանի բաժանված մասերը, հատվածները: Վ. Առաքելյանը այսպես է ձևակերպել. «Վերածման տրականը կարող է ոչ միայն որակական տարբերություն արտահայտել, այլև մաս, կտոր քանակ²¹», բայց այս միտքը վերածման իմաստի բովանդակությանը ամբողջապես չի համապատասխանում. եթե վերածման իմաստը ցույց է տալիս մի առարկայի փոխարկումը մեկ այլ բանի, ապա վերոհիշյալ միտքը ենթադրում է նույն առարկայի բաժանված մասը, հատվածը: Առաջարկում ենք առանձնացնել **բաժանման, մասնատման տրական** իմաստային առումը, որը ցույց է տալիս մի առարկայի բաժանված մաս, հատված: Այս լրացումը ստանում են մասնատում ցույց տվող բայերը, ինչպես՝ *տրոհել, բաժանել, կիսել, ճեղքել* և այլն: Ինչպես բաժանման տրական, այնպես էլ վերածման կամ փոխարկման տրական լրացումները առանց բացառության գործածվում են անորոշ առումով:

²¹ Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 100:

«Հացի բաժինն ստանալիս պետք է բաժանել երեք հավասար **մասերի**» [էջ 19]: «Հետո չորս հավասար **մասի** բաժանեցին մնացած միսը» [էջ 78]: «Առաջին իսկ ընդհանուր մեր համայնքը բաժանվեց երկու **մասի**» [էջ 122]: «Ապակիները գույնզգույն էին և բաժանված հարյուրավոր **քառակուսիների և եռանկյունների**» [էջ 136]:

Փոխարինության տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին փոխարինում է մեկ այլ անձ կամ իր, կամ որի փոխարեն տրվում է մի բան: Այս տերմինը հանդիպում ենք Վ. Առաքելյանի և Վ. Քոսյանի գրքերում: Փոխարինության տրական իմաստով լրացում ստանում են *փոխարինել, փոխանակել, տալ, հանձնել, հաջորդել, անցնել* և նման բայեր: Այս իմաստի պարագայում սխալ չի լինի կցել *փոխանակման տրական* անունը, որովհետև սովորաբար զգալի քանակ են կազմում մի բանի դիմաց այլ բան ստանալ կադապարով կազմված օրինակները, որոնցում տրական հոլովով դրված բառը կարելի է փոխարինել *սեռական հոլով + դիմաց* կապային կառույցով. «Փող ունենամ՝ կտանեմ **հացի** կտամ, որ մի կտոր ավել ստանամ ճաշին» [էջ 49]: «Ունեցած-չունեցածը կտար **դեղերի**, միայն թե ազատություն մեջ լինեք» [էջ 97]: Ընդ որում երկրորդ օրինակում համատեղվում են փոխարինության և նպատակի իմաստները: Փոխարինության տրականով են դրվում թվականները՝ *մեկին երեք, երկուսին չորս*, ինչպես նաև մի քանի դերանուններ՝ *մեկին, յուրաքանչյուրին, ուրիշին* և այլն:

«Գրասենյակային աշխատողներն ավելի վայելուչ պահեցին իրենց, անցան ընդհատակյա **կենցաղավարության**» [էջ 35]: «Նրանք էլի կանցնեն իրենց **պարտականություններին**» [էջ 56]: «Կուլանի **դեպքին** հաջորդեցին ևս մի քանի **դեպքեր**» [էջ 60]: «Մամոն մերկացրեց ոտքերը և եկավ **ինձ փոխարինելու**» [էջ 65]:

Ներգործող խնդրի տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որի ներգործությամբ ենթական կատարում է գործողությունը: Ժամանակակից հայերենում տրականով արտահայտված ներգործող խնդրի կիրառման շրջանակը նեղանում է, որովհետև բացառական և գործիական հոլովները ավելի ուժեղ են ընկալվում այդ պաշտոնում: Ներգործող խնդիրը բացարձակապես կրավորական սեռի բայերի լրացումն է՝ *գերվել, գոհվել, կախարդվել, հափշտակվել, խաբվել, տարվել* և այլն: Բացի կրավորական սեռի բայերից՝ այսպիսի լրացում ստանում են գրաբարի *-ի*-ով ավարտվող ապառնի դերբայից առառաջած բայական ածականները, ինչպես նշել է Մ. Աբեղյանը²²: Օրինակ՝ *սիրելի, ատելի, ցանկալի, լսելի* և այլն: Գրաբարում ապառնի դերբայը ունի նաև *-ի* վերջավորություն, և ժամանակի ընթացքում միջխոսքիմասային տեղաշարժի հետևանքով *-ի*-ով ապառնի ձևերը դարձել են ածականներ կամ գոյականներ: Այդ ածականների դերբայական իմաստը ամբողջովին մթագնած չէ, և հենց դրա հետևանքով էլ այդ ածականները խնդրատության օրենքով ներգործող խնդրի տրական լրացում են ստանում՝ հմմ. *Սուտը ատելի է բոլորին- Բոլորը ատում են սուտը*:

²²Տե՛ս Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 435:

«Մամոն գերվեց Լյուդմիլայի թախծոտ **աչքերին**» [էջ 40]: «Որքան դժբախտներ են գոհվել **աքառքին**» [էջ 84]: «Մամոյի խաշած կարտոֆիլները սիրելի էր բրուտանոցում **բոլորին**» [էջ 78]:

Կապի տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որի հետ փոխադարձ գործողության և կապի մեջ է գտնվում մեկ այլ առարկա: Այս իմաստով խնդիր են առնում *մասնակցել, գործակցել, աջակցել, ձայնակցել, ուղեկցել, բարեկամանալ, մտերմանալ, ընկերանալ, հաշտվել* և նման բայեր, որոնք արտահայտում են երկու կամ ավելի առարկաների միջև որևէ կապ: Կապի տրականի իմաստ արտահայտվում է նաև *հետ կապով և կապի խնդրով*, ուստի երբեմն բայերը զուգահեռ խնդրառություն են ունենում, օրինակ՝ *գործակցել մեկին և գործակցել մեկի հետ*: Վ. Առաքելյանը այս իմաստին տվել է փոխադարձ գործողության և կապի տրական անվանումը: Վ. Քոսյանը այս իմաստին տվել է փոխադարձ կապի տրական անվանումը, ինչը ավելադրություն է, որովհետև կապ արդեն նշանակում է երկու կամ ավելի առարկաների միջև փոխադարձ առնչություն²³: Կապի տրականի լրացյալ լինում են նաև հարադրական բայերն ու բաղադրյալ ստորոգյալները՝ *ընկեր դառնալ, բարեկամ լինել, թշնամի դառնալ* և այլն: Վիպակում այս իմաստով լրացումները գլխավորապես հանդես են գալիս *մասնակցել, ուղեկցել* բայերի կողքին: Ներկայացնենք վիպակից օրկնակներ:

«Այդպիսիք, սակայն, չէին մասնակցում **վիճարանություններին**» [էջ 25]: «**Հանձնաժողովին ուղեկցում է ճամբարի պետը**» [էջ 64]: «Նա մասնակցել էր այդ **«ապերացիային»**, ինչպես ինքն էր ասում, այսինքն՝ **գործողությանը**» [էջ 107]: «Սովորաբար նա ուղեկցում էր **բժշկին**» [էջ 146]:

Վերաբերության տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին վերաբերում է գործողությունը: Լրացյալի դերում հանդես են գալիս իմացական և ասացական սակավաթիվ բայեր՝ *վերաբերել, տեղեկանալ, կասկածել, անհաղորդ լինել* և այլն: Վերաբերության իմաստը արդի հայերենում հիմնականում արտահայտվում է վերաբերության որոշ կապերով, որոնք դրվում են սեռական հոլովի հետ: Այս իմաստը առանձնացրել է Վ. Քոսյանը և հավելել, որ վերաբերության տրականի գործածությունը գրական լեզվում հնանում է, բայց եթե հաշվի առնենք, որ ստացական տրականի իմաստը որոշ բայերի հետ գործածվելիս մթագնել է և ստացել վերաբերության տրականի իմաստ, հետևաբար վերաբերության տրականի իմաստը որոշ չափով լայնացել է²⁴:

«Այս աղետը, պարզ է, վերաբերում է այն **երկրամասերին**, որոնք գտնվում են փշալարերից ներս» [էջ 21]: «Խնդիրը վերաբերում էր ոչ թե հանցանք **գործելուն** կամ **չգործելուն**, այլ **բռնվելուն** կամ **չբռնվելուն**» [էջ 34]: «-Հարցը վերաբերում է ա՛յս **զենքերին**, - հարցրի ես» [էջ 101]:

²³ Կապ բառի բացատրությունը տե՛ս. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 690:

²⁴ Տե՛ս **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 228-229:

Նմանության կամ համապատասխանության տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որին նմանվում, համապատասխանում է մեկ այլ անձ կամ իր: Այս տրականով խնդիր են առնում մի շարք բայեր, ինչպես՝ *նմանվել, համապատասխանել, սազել, համընկնել, ներդաշնակել* և այլն: Այս բայերից բացի՝ որոշ ածականներ նույնպես ստանում են այս լրացումը, ավելին՝ այս իմաստը ածականների լրացումներին է բնորոշ²⁵: Օրինակ՝ *համապատասխան, պատշաճ, նման, ներդաշնակ*: Վ. Առաքելյանն է այս իմաստին տվել նմանության կամ համապատասխանության տրական անվանումը, Վ. Քոսյանը՝ համապատասխանության տրական անվանումը, իսկ Մ. Աբեղյանը այս իմաստին ընդհանրապես չի անդրադարձել: Վիպակում այս իմաստով լրացումները գերազանցապես գործածվել են որպես *նման* ստորոգելիի լրացում:

«Հիմա հողաբլրի մեր կողմից շահագործվող մասը նման է մի մեծ խորանի» [էջ 22]:
«Պակաս երջանիկ չեն և այն բրիգադները, որոնք ընկնում են կարտոֆիլի ամբարների վրա, որոնք նման են լաբիրինթոսների» [էջ 58]: *«Նա նման է այն տնքացող, անանուն գազանին, որին օրեր առաջ հոշոտեցին ու կերան»* [էջ 82]: *«Իսկապես, քաղխորհրդի նախագահը շատ նման էր ճասպոնացու»* [էջ 109]:

Համեմատության տրականը ցույց է տալիս այն անձը կամ իրը, որից առավել, պակաս կամ որին հավասար է մեկ այլ անձ կամ իր: Սահմանափակ թվով բայերի լրացում է՝ *գերազանցել, զիջել, ստորադասել, գերադասել, հավասարվել* և այլն: Վ. Առաքելյանը *հավասարվել* բայը զետեղել է նմանության կամ համապատասխանության տրականի մեջ՝ ավելացնելով, որ այդ իմաստի մեջ պետք է ներառել նաև *հասնել* բայը (հավասարվել իմաստով)²⁶: Վ. Քոսյանը նույնպես *հավասարվել* բայը ներառել է համապատասխանության տրական իմաստի մեջ, բայց մի նուրբ տարբերությամբ, որ իմաստի սահմանումը տալիս, ի տարբերություն Վ. Առաքելյանի, չի գործածել *հավասարվել* բառը. «Բայի լրացումը ցույց է տալիս այն առարկան, որին համապատասխանում, նմանվում է մի այլ առարկա»²⁷: Ցանկացած բան համեմատելիս հնարավոր է վերջնարդյունքի երեք տարբերակ՝ առավել, պակաս կամ հավասար: Այս մտքից և Վ. Քոսյանի տված սահմանումից արված դիտարկումների հիման վրա հավասարության իմաստ ունեցող բայերի լրացումը համարում ենք **համեմատության տրական**: Վիպակում այս իմաստով օրինակների քիչ ենք հանդիպել: *«Եթե գումարենք դոկտոր Վաթսոնի բոլոր զարմանքներն՝ ի տես Շերլոկ Հոլմսի հրաշագործությունների, դժվար թե հավասարվեին իմ զարմանքին»* [էջ 92]: *«Ներս խոթեցին երկու ճարտարապետներին, երկուսն էլ գրեթե մի բոյի»* [էջ 125]: *«Օրհորդը իր բարոյականը ստորադասում էր բժշկի տված երկու կտոր ավել բանտային հացին»* [132]:

²⁵ Նույն տեղում, տե՛ս «Ածականի բառակապակցություններ» բաժինը, էջ 175:

²⁶ Տե՛ս **Առաքելյան Վ.**, Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 99:

²⁷ **Քոսյան Վ.**, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, էջ 227:

Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակում տրական հոլովի խնդրային և պարագայական իմաստները տարբեր հաճախականությամբ են կիրառված: Առավել շատ հանդիպում են խնդրային իմաստները, որոնցից հաճախադեպ են հանգման, մատուցման, հաղորդման, շահի և վնասի, ուղղության տրականներով օրինակները: Վիպակում տրական հոլովով դրված 1124 կիրառությունների գերակշիռ մասը (814 օրինակ) գործածված է խնդրային իմաստներով: Ընդ որում տրական հոլովի նրբիմաստները քննելիս պետք է նկատի ունենալ, որ նույն բայը կարող է ստանալ մի քանի իմաստներով լրացումներ, և հաճախ լրացման իմաստը որոշելը կարող է դժվարություն ներկայացնել:

Այսպիսով, համեմատելով երեք լեզվաբանների աշխատությունները՝ քննության առանք տրական հոլովի խնդրային իմաստների դրսևորումները: Որպես վերջնարդյունք կարող ենք դիտարկել համեմատական աշխատանքի արդյունքում տրական հոլովի նրբիմաստային նոր դրսևորումներ առանձնացնելու փորձը՝ հավակնություն չունենալով սույն ուսումնասիրությունը համարելուսպառիչ:

Օգտագործված գրականության ցանկ

- Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատ., 1965, 699 էջ:
- Աբրահամյան Ա., Գրաբարի ձևոնարկ, Երևան, «Լույս» հրատ., 1976, 558 էջ:
- Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, 1615 էջ:
- Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ԳԱ հրատ., 1967, 401 էջ:
- Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, ԳԱԱ հրատ., 1957, 298 էջ:
- Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, 432 էջ:
- Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., Տեսական և գործնական հայոց լեզու(ձևաբանություն), բուհական ձեռնարկ, Երևան, 2018, 293 էջ:
- Մահարի Գ., Ծաղկած փշալարեր, Երևան, Սովետական գրող, 1988, 192 էջ:
- Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, «Միտք» հրատ., 1967, 92 էջ:
- Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 487 էջ:

РЕЗЮМЕ
СЕМАНТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ ДАТЕЛЬНОГО ПАДЕЖА (ПО РОМАНУ ГУРГЕНА МААРИ
«ЦВЕТУЩИЕ КОЛЮЧИЕ ПРОВОЛОКИ»)
Мурадян Виктория

В данной статье представлено исследование семантических проявлений дательного падежа, которое было сделано на основе сравнения работ трех лингвистов: М. Абемян, В. Аракелян, В. Косян. В результате сравнительной работы были сделаны определенные обобщения. В качестве оригинального текста был выбран роман Гургена Маари «Цветущие колючие проволоки», и в результате его изучения сделана попытка выявить новые смысловые аспекты.

Ключевые слова: дательный падеж, семантические аспекты, проблемный дательный, тонкий смысл, сравнение, Г. Махари, «Цветущая колючая проволока», дополнения.

SUMMARY
SEMANTIC MANIFESTATIONS OF THE DATIVE CASE (BASED ON THE NOVEL BY GURGEN
MAARI “BLOOMING BARBED WIRES”)
Muradyan Victoria

This article presents a study of the semantic manifestations of the dative case, which was done based on a comparison of the works of three linguists: M. Abeghyan, V. Arakelyan, V. Kosyan. As a result of the comparative work, certain generalizations were made. Gurgен Maari’s novel “Blooming Barbed Wires” was chosen as the original text, and as a result of its study, an attempt was made to identify new semantic aspects.

Key words: dative case, semantic aspects, problematic dative, subtle meaning, comparison, G. Mahari, “Blooming Barbed Wire”, additions.

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ ԷԴՈՒԱՐԴ
ԱՂԱՅԱՆԻ «ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԷԶԵՐՈՒՄ

Ներսիսյան Վարսիկ

բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ավագ գիտաշխատակից

ՀՊՄՀ, ԳՊՀ դասախոս

varsik.nersisyan@mail.ru

Բատիկյան Թեմինե

ԳՊՀ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

tem.batikyan@bk.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-197

Բանալի բառեր. Էդուարդ Աղայան, օտար ազդեցություններ, փոխառյալ բառեր, հայ լեզվաբանության երկրորդ դպրոց, երրորդ դպրոց:

Հայտնի է, որ հայերենում առկա փոխառությունների հարցին անդրադարձել են բազմաթիվ լեզվաբաններ, հայերենագետներ: Արդի հայ լեզվաբանական գրականության մեջ ընդունված է, որ «Ուրբան էլ «փոխառություն» տերմինը (եզրը) ընդհանուր տարողունակ անվանում է և վերաբերում է ուրիշ լեզուներից փոխառված բառերին՝ անկախ ժամանակաշրջանից, կիրառության հաճախականությունից և ոճական նպատակադրումից, այնուամենայնիվ որոշակիորեն տարբերակում և առանձնացնում ենք երկու հիմնական տարատեսակ՝ **փոխառություններ** և **օտարաբանություններ**»¹: «Լեզվաբանական բառարանում» *օտարաբանություն* (варваризм) են համարվում «այն փոխառյալ բառերը, արտահայտությունները (ոճերը), արտասանական յուրահատուկ եղանակները, որոնք չեն արմատավորվել տվյալ լեզվի մեջ և դիտվում են որպես ընդունված և գործուն նորմաներից շեղվող և խորթ լեզվական երևույթներ»²: Մեկ այլ՝ ավելի տարածված ձևակերպմամբ՝ «...եթե *փոխառությունները* ուրիշ լեզուներից վերցրած և փոխառու լեզվում իրենց համարժեքները չունեցած բառերն ու արտահայտություններն են, ապա *օտարաբանությունները* ուրիշ լեզուներից վերցրած և փոխառու լեզվում իրենց համարժեքներն ունեցած բառերն ու արտահայտություններն են»³:

Հայտնի է, որ Էդուարդ Աղայանն իր «Հայ լեզվաբանության պատմություն» երկհատոր աշխատությունը գրելիս հիմք է ընդունել հայերենի ծագման և ցեղակցության վերաբերյալ

¹ Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, էջ 151:

² Պետրոսյան Հ.Զ., Ղարազոյսյան Թ. Ա., Լեզվաբանական բառարան, Ե., 1979, էջ 313:

³ Բաղիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն, Ե., 2012, էջ 59:

տեսությունները⁴: Մակայն խոսելով առանձին լեզվաբանների՝ այդ ոլորտում կատարած աշխատանքների մասին՝ անդրադառնում է հարակից այլ թեմաների ևս: Այդ առումով հետաքրքրական է Ադայանի վերաբերմունքը հայերենի և այլ լեզուների փոխազդեցությանը վերաբերող դիտարկումներին՝ արտացոլված տարբեր հայերենագետների, հայագետների աշխատություններում: Դրանցում ներկայացված կարծիքները, որոնք վերաբերում են փոխառությունների և օտարաբանությունների (թեև «օտարաբանություն» եզրույթը գործածված չէ) գործածությանն ու գնահատմանը, կարծում ենք, արդիական են նաև մեր օրերում, ուստի դրանով էլ պայմանավորված է մեր ուսումնասիրության թեմայի ընտրությունը: Հետազոտության մեջ փորձել ենք ներկայացնել հայ լեզվաբանական մտքի պատմության ընթացքում թեմայի վերաբերյալ ի հայտ եկած մի շարք տեսակետներ Է. Ադայանի գնահատմամբ:

Հայ լեզվաբանության պատմության երեք շրջանների դպրոցներից յուրաքանչյուրը, ինչպես հայտնի է, յուրովի է հիմնավորել հայերենի ցեղակցության և այլ լեզուների հետ փոխհարաբերության հարցերը: *Մեր խնդիրը չէ ուսումնասիրության նյութ դարձնել հայերենի և այլ լեզուների փոխազդեցության հարցերն առհասարակ, որոնք վերաբերում են նրա՝ որպես առանձին լեզու ձևավորվելու գործընթացին, այլ ներկայացնել այն դիտարկումները, որոնք վերաբերում են հետագա ժամանակներին, երբ հայերենն արդեն հազարամյակների պատմություն ուներ, և նրանով հսկայական գրականություն էր ստեղծվել:* Այդ առումով հետաքրքրություն են ներկայացնում հատկապես 18-19-րդ դարերի քերականական աշխատությունները, որոնց էլ կանդրադառնանք ստորև՝ հիմք ընդունելով Ադայանի վերոհիշյալ աշխատությունը:

Փոխառությունները, ինչպես հայտնի է, քննության առարկա են դարձել հայ լեզվաբանության պատմության առաջին շրջանի երկու դպրոցներում էլ: Հետաքրքիր դիտարկումներ կան հատկապես երկրորդ դպրոցում, որի ներկայացուցիչներից **Սքրոդերի (Շրյոդերի)** կարծիքով՝ հայերենը չի մնացել անադարտ. շատ ցեղեր ձուլվել են հայերի մեջ, շատ ցեղեր ներխուժել են Հայաստան, որի պատճառով էլ հայերենի մեջ գտնում ենք բազմաթիվ օտար բառեր. ինչպես՝ «եբրայեցերեն, իսալդա-սիրիական, արաբերեն, պարթևյան պարսկերեն» և այլ բառեր: Այս բոլորը հիշելուց հետո հեղինակը եզրակացնում է, որ որքան էլ շատ լինեն այդ ազդեցությունները, այնուամենայնիվ հայերենը պահպանել է իր ինքնուրույնությունը և մնացել իբրև մայր լեզու, որից առաջացել են բազմաթիվ բարբառներ⁵: **Մխիթար Մեքաստացու** կարծիքով՝ բազմաթիվ հայերեն բառեր իրենց ձևով և իմաստով շատ լեզուների համապատասխան բառերի նման են, ըստ նրա՝ բառերի մի մասը հայերն են փոխառել ուրիշ լեզուներից, իսկ մյուս մասն՝ ընդհակառակը: Է. Ադայանն իրավացիորեն նշում է, որ Մեքաստացու ստուգաբանություններից շատերը, իհարկե, ճիշտ չեն, բայց

⁴ Տե՛ս **Ադայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1-2, Ե., 1958-1962:

⁵ Տե՛ս **Ադայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1958, էջ 116:

կարևոր է հիմնական սկզբունքը, որով նա միանգամից ճիշտ կերպով որոշում է լեզուների փոխազդեցության, իրարից բառեր փոխ առնելու երևույթը⁶: *Գեորգ Դպիրը*, ինչպես հայտնի է, զբաղվել է պարսկերենից կատարված փոխառություններով. ըստ նրա՝ կան բառեր, որոնք պարզապես պարսկերենից են փոխառված, և կան բառեր, որոնց համար դժվար է ասել, թե որ լեզուն է որից վերցրել. հայերեն⁷ը՝ պարսկերենից, թե՞ ընդհակառակը. վերջինների համար բավականացել է սոսկ համեմատությամբ: Հետաքրքիր է Գաբրիել Ավետիքյանի դիտարկումը. նա, խոսելով փոխառյալ բառերը որոշելու մասին, հատուկ կանոնով զգուշացնում է ծայրահեղություններից և ասում. «... որ մեկ բառ մը լեզուաց մեջ կգտնվի նույն կամ նման հնչմունքով, զգուշանալու է չի վճռելու թե մեկը մեկալեն առեր է... Չոր օրինակ, լոյս, լատինը կըսե՝ լուքս, լուչե... Ասոնց նման կան այլ անուանք և բայեր որ զանազան ազգի մեջ կլսենք՝ մարդկային խոսակցության հարկավոր բառեր. և դժուար է հավատալ, թե մեկը մեկալեն առած ըլլա. մանավանդ երբոր հին ժամանակներ կբանեցընեն հեռավոր ազգեր, որ իրարու հետ հաղորդակցություն ունեցած չեն...»⁷:

Փոխառությունների հարցին ավելի ուշ՝ լեզվաբանության պատմության երրորդ դպրոցում, անդրադարձել է նաև Խ. Աբովյանը: Նա կարծում է, որ հայերենի ճակատագիրը՝ «մոլի բռնապետական պետությունների ծանր լծի ճնշման տակ» գտնվելով պայմանավորված, հայտնի է ամեն կրթված մարդու: «Այս հանգամանքն է եղել պատճառը,— գրում է Աբովյանը,— և ոչ թե առևտրական ոգին, *ինչպես ոչ բոլորովին իրավացի կերպով* կարծում էին մի քանի եվրոպացիներ,— որ հայերը վտարվել են իրենց երկրից. իսկ երկրում մնացած իրենց սուրբ հայրերի անունն ու իրենց կրոնը պատմության բեմի վրա պահպանել» (ընդգծումը՝ Վ.Ն.)⁸: Ըստ Խ. Աբովյանի՝ բուն Հայաստանում էլ հայերը ենթարկվել են թուրքերենի վնասակար ազդեցությանը. «Ժողովրդի մեծագույն մասը, որ մնացել է բուն Հայաստանում, դարեր շարունակ թուրքական ժողովուրդների ազդեցության տակ լինելու և արտաքին ճնշման տակ կռացած լինելու, ուրեմն և ամենատարրական իմացություններից զրկված լինելու հետևանքով՝ կենցաղի և տարազի հետ միասին ընդունել է նաև նրանց լեզվի կառուցվածքը»⁹: «Այստեղ,- գրում է Աղայանը,- ճիշտ կերպով նշելով թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա, Աբովյանն, այնուամենայնիվ, չափազանցում է դրա նշանակությունը և սխալ կերպով դրան վերագրում հայերենի կառուցվածքի փոփոխությունը»¹⁰: Ըստ Աղայանի՝ «Այդ նույն քաղաքական հանգամանքներով է Աբովյանը պայմանավորում այն, որ «...հայոց լեզուն օտար լեզուների՝ նվաճողների լեզուների ազդեցության տակ է դրվել, լցվել օտարամուտ, խորթ բառերով ու արտահայտություններով: Բայց հայ ժողովրդի այդ վիճակը

⁶ Տե՛ս **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 128:

⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 149-150:

⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 167:

⁹ Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:

¹⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 168:

իր լեզվի վրա անդրադարձել է նաև մի այլ, ավելի վատթար ձևով՝ մայրենի լեզվի կորստով՝ գաղթականական գանազան հատվածների մոտ»¹¹:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում թերևս ամենից շատ օտար ազդեցությունները քննության առարկա են դարձել Ստեփաննոս Նազարյանցի կողմից: Առհասարակ հայոց լեզվի պատմության վերաբերյալ Նազարյանցի հայտնած կարծիքներից Աղայանը կարևորում է երկուսը, որոնցից մեկը վերաբերում է հայերենի կրած փոփոխություններին: Նկատի ունենալով գրաբարի և աշխարհաբարի քերականական կառուցվածքների միջև եղած տարբերությունը, հատկապես նրանց շարադասության որոշակի գանազանությունը, Նազարյանցը կարծում է, որ հայոց լեզվի փոփոխությունների պատճառը օտար ազդեցություններն են: Այդ ազդեցություններից նա, ինչպես Աբովյանը, առանձնապես շեշտում է թուրքերենինը, բնականաբար այն պատճառով, որ աշխարհաբարի շարադասությունը և քերականական ուրիշ երևույթներ նման են թուրքերենին: *«Հայոց ազգը երկար ժամանակ պարսից, արաբացոց և տաճիկների իշխանության տակ մնալով՝ ոչ թե ներ է առել յուր մեջ բազմաթիվ այլազգի բառեր այնպիսի ըմբռնողությունների համար, որոնց ուներ նա յուր սեփական ազգային բառերը, այլև տաճկի խոսակցության ձև, տաճկային դասավորություն բառերի, այնպես որ մեր ժամանակի հայր, մանավանդ թե օսմանյան տերության մեջ, ոչ թե միայն տաճկի բառեր շատ գործ է ածում յուր խոսակցության մեջ, այլև յուր մտածությունը բացահայտում է տաճկի քերականության ձևերով, ուրեմն և մտածում է տաճկերեն»*¹²: Է. Աղայանի գնահատմամբ՝ այս կարծիքը, թեև արդեն հերքված է հատկապես մեծավաստակ լեզվաբան Հր. Աճառյանի ուսումնասիրություններով, բայց մինչև XX դարի սկիզբները իշխող է եղել հայագիտության մեջ, ուստի և Նազարյանցի կարծիքը, որ մեր ժամանակի համար սխալ է, իր ժամանակի գիտության տվյալներին համապատասխան էր միանգամայն¹³: Աղայանի դիտարկմամբ՝ «Մի կողմից գրաբարն ու բարբառները դիտելով ...աշխարհաբարի հարստացման աղբյուր, մյուս կողմից Նազարյանցը ճիշտ կերպով շեշտում է նաև միջազգային տերմինաբանության դերը, եվրոպական նոր լեզուներում ընդհանրացած տերմիններով մեր լեզուն հարստացնելու անհրաժեշտությունը. «...Հրաժարվելով այն նեղսրտությունից, որ սովոր է միշտ եվրոպական ուսման և գիտության մեջ եղած արվեստական (տեխնիկական) բառերը թարգմանել հայերեն, տվեցինք հայոց ուսումնական լեզվին և մի փոքր եվրոպականություն, և կարծում ենք հաստատապես, որ սորանով շատ եվրոպական գաղափարներ գիտության մեջ ավելի պայծառանալու էին փոքր ի շատե կրթյալ և բանիմաց ընթերցողների համար, քան թե թարգմանելով հայերեն, որ կես մի ավելի անհասկանալի էր նոցա, և կես մի չկարողանալով բացահայտել ամեննին նույն ըմբռնումը, զուր և անօգուտ էր: ...Հայոց հեղինակը թույլ տալով գիտության մեջ ընդհանրապես ընկալյալ բառեր ուսումնական ազգերի գրվածներում, ամեննին չէ մեղանչելու

¹¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 168-169:

¹² Տե՛ս նշվ. աշխ., էջ 202:

¹³ Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:

ընդդեմ յուր հարազատ լեզվի գեղեցկությանը, այլ դորանով պիտո է հայոց գիտնական լեզուն մոտեցնե լուսավոր և կիրթ ազգերի գիտնական լեզվին, և այդպես եվրոպեականություն տա ասիական հային...¹⁴: Աղայանը կարծում է, որ Նազարյանցի այս պնդումը հիմք է դարձել այն ուսումնասիրողների համար, որոնց կարծիքով «իբր թե Նազարյանցը ձգտում էր աշխարհաբարը զարգացնելով մոտեցնել եվրոպական լեզուներին և, այդպիսով, հայոց գրական լեզվին տալ եվրոպական նոր լեզուների կառուցվածքը: Աղայանի կարծիքով՝ այդ եզրակացությունը միանգամայն սխալ է և ոչ մի կապ չունի այն դրույթի հետ, որ պաշտպանում էր Նազարյանցը»¹⁵: Ըստ Նազարյանցի՝ «...գիտական լեզվի մեջ անհրաժեշտորեն պետք է մուտք գործեն եվրոպական լեզուներում ընդհանրացած գիտական տերմինները, որ սխալ է այդ տերմինների անխտիր թարգմանությունը, և դա միանգամայն ճիշտ է: Նույն տեղում նա, իբրև անթարգմանելի փոխառելի տերմիններ, հիշում է հետևյալ օրինակները, **օրգանական, վուկանական, ինկվիզիցիո, պոլարիզացիա, պոլարիյե**¹⁶: «Այս տեսակետից,—գրում է Աղայանը,— Նազարյանցի դիրքը միանգամայն ճշմարիտ էր: Նրա սխալն, ինչպես ցույց է տալիս մեր գրական լեզվի պատմությունը, այն էր, որ նա այդ տերմինները վերցնում էր ֆրանսերենի ձևով, մինչդեռ պետք էր առնել ռուսական ձևով, որովհետև մեզ համար այդ փոխառությունների միջնորդը ռուսաց լեզուն էր: Բայց Նազարյանցի համար այդ չէր գլխավորը, այլ փոխառության հարցը»¹⁷: Իսկ մեզ համար այստեղ կարևոր է Աղայանի վերաբերմունքը՝ Նազարյանցի տեսակետին կողմ լինելը:

Հարցի վերաբերյալ իր դիտարկումներն ունի նաև Միքայել Նալբանդյանը, որը Ստ. Նազարյանցին քննադատում է նրա այն կարծիքի համար, ըստ որի աշխարհաբարի կառուցվածքն առաջացել է թուրքական ազդեցության տակ, և որ դա խորթ է հայկական մտածողությանը: Նալբանդյանը, ըստ Աղայանի, չի հերքում, իհարկե, այն պնդումը, թե աշխարհաբարի կառուցվածքը թուրքական ազդեցության հետևանք է: Բայց այդ կարծիքն ընդունելով՝ նա, հակառակ Նազարյանցին, կարծում է, որ դա պատմական իրողություն է, իբրև այդպիսին՝ իրական, և, հետևաբար, ոչ թե դրա դեմ պետք է բողոքել, ոչ թե ձգտել դրա փոխելուն, այլ ընդունել այն, ինչպես որ կա և ընդունել իբրև մեր լեզվին սեփական դարձած կառուցվածք¹⁸: «Խոստովանենք,—գրում է Նալբանդյանը,— թե նոր լեզվի տրամաբանությունը շատ մոտ է տաճկական լեզվի տրամաբանության, նոր լեզվի բաղդասությունը շատ տեղ գրեթե նույն է տաճիկ լեզվի բաղդասության հետ. բայց ինչ կանես, երբ բոլոր ազգո այդ տրամաբանությամբ է խոսում...: Ինձ հարկավոր է, որ իմ միտքը առջևիս կանգնած մարդը հասկանա. ես գործ դնելով նոր լեզուն, կատարելապես հասնում եմ իմ նպատակին, այն մարդը հասկանում է իմ միտքը: Բայց ձևերը և տրամաբանությունը մոտ է եղած

¹⁴ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 208:

¹⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 208:

¹⁶ Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:

¹⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 208-209:

¹⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 219-220:

տաճկականին, ինձ ինչ փույթ կամ ինչ օգուտ իմ բուն հայկական ձևերով կամ հայկական տրամաբանությամբ խոսելուց, երբ լեզուն այդ ձևերի տակ զրկվում է խորհրդից և չէ կարում վարել իր պաշտոնը, երբ խոսողը չի հասնում իր նպատակին, որովհետև նորա խոսակիցը չէ հասկանում նորա միտքը այն ձևերի տակ»¹⁹: Աղայանը նաև նկատում է, որ ...Նալբանդյանը լեզվի զարգացումը, մշակումն ու կատարելագործությունը պայմանավորված է համարում նրանով խոսող հասարակության զարգացմամբ²⁰:

Լեզուների փոխազդեցությունների վերաբերյալ առհասարակ կցանկանայինք անդրադառնալ նաև Մանուկ Աբեղյանի և Հրաչյա Աճառյանի տեսակետներին: Ըստ Մ. Աբեղյանի՝ «Լեզվի փոփոխության մեծ գործոններից մեկն է նաև ուրիշ լեզուների ազդեցությունը, որին ենթակա է ամեն լեզու, քանի որ ազգերը միմյանցից կտրված չեն ապրում: Այս փոփոխությունը միևնույն եղանակով է առաջ գալիս, ինչ որ ընդհանրապես ամեն փոփոխություն լեզվի մեջ: Դրա սկզբնական աղբյուրն այնպիսի անհատներն են, որոնք խոսում են թե իրենց ազգային լեզվով և թե մի ուրիշ լեզվով, կամ թե հասկանում են մի ուրիշ լեզու և լսում են այլ լեզվով խոսողների: Ուրիշ լեզուների ազդեցությունը երբեմն լինում է գիտակցաբար: Խոսողը բարձր գնահատելով օտար լեզուն, կամ կրթված մի հատկանիշ համարելով ուրիշ լեզվով խոսելը՝ իր համար պարծանք է կարծում այլ լեզվով խոսելը կամ իր ազգային լեզվի մեջ օտար բառեր, դարձվածներ և նույնիսկ ամբողջ ասացվածներ խառնելը»²¹ : Աղայանի դիտարկմամբ՝ Հր.Աճառյանը, քննության ենթարկելով լեզվի մաքրության հարցը, ընդհանուր առմամբ ճիշտ մոտեցում է ցուցաբերում բարբառային և նորամուտ փոխառյալ բառերի դեմ: Մակայն, ըստ Աղայանի, մի կարևոր հարցում նա ոչ ճիշտ տեսակետ է պաշտպանում: Աճառյանի կարծիքով՝ «Եթե մի օտար բառ գործածված է գրաբարի մեջ, նա այլևս օտար չէ. այսպես՝ **պատկեր, սնտուկ** և այլն»²²: Նկատենք, որ Աճառյանի այս տեսակետը հետագայում տեղ է գտել տարբեր լեզվաբանների աշխատություններում, որոնցում ներկայացվում են օտարաբանությունները²³ : Աղայանն այս մոտեցման սխալն այն է համարում, որ ժամանակակից հայերենի համար չափանիշ է դառնում գրաբարը. «...որևէ բառի՝ գրաբարում գործածված լինելը դեռևս չի նշանակում, թե նա մեր ժամանակակից գրական լեզվի համար օտար չէ,—գրում է նա՝ պնդումը հիմնավորելով հետևյալ օրինակներով. «...**ասպաստան, ատր, դեն** և այլ պարսկերեն փոխառություններ գործածված են գրաբարում և այն էլ ոչ սակավ, բայցևայնպես նրանք օտար են մեր արդի գրական լեզվի համար: Ավելին: Նույնիսկ ոչ փոխառյալ «բնիկ» հայերեն բառերը, եթե պատմականորեն դուրս են եկել գործածությունից և չեն պահպանվել մեր լեզվում, դարձյալ օտար են ու խորթ մեր արդի գրական լեզվին (օրինակ՝ **ազանիլ** «գիշերել»,

¹⁹Տե՛ս նշվ. աշխ., նույն տեղում:

²⁰Տե՛ս նշվ. աշխ., էջ 217:

²¹ **Աղայան Է.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ.2, Ե., 1962, էջ 139-140:

²² Տե՛ս նշվ. աշխ., էջ 167:

²³ Հմմտ. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Ե., էջ 74:

ամալ «թափել», *առն* «խոյ» և այլն): Այսպիսով՝ գրաբարում գործածված լինելը չափանիշ չէ տվյալ բառի ոչ օտար, հայերենին հարազատ դարձած լինելու համար: *Ժամանակակից հայերենին հարազատ են, օտար ու խորթ չեն այն բառերը, որոնք հաստատապես մտել են նրա բառային կազմի մեջ, գործածվում են խոսողների և գրողների գոնե մեծամասնության կողմից: Սա չի նշանակում, թե նոր փոխառված օտար բառերը չեն կարող այդպիսին դառնալ, քանի որ նրանք սկզբից գործածվում են դեռևս նեղ շրջանակներում և ընդհանուր ճանաչում չեն գտել: Այդպիսի բառերը, ինչպես գիտենք, նորաբանությունների կարգին են պատկանում և ժամանակի ընթացքում կարող են ընդհանուր ճանաչման արժանանալ և մտնել լեզվի ամենագործածական և ամենակենսունակ բառերի շարքը»²⁴:*

Դժվար չէ նկատել, որ տարբեր լեզվաբանների տեսակետները վերլուծելու ընթացքում Աղայանի համակրանքը օտար բառերի գործածությանը տրված ոչ ծայրահեղ գնահատականների նկատմամբ է (օտարաբանություններից հրաժարվելու առումով): Ուսումնասիրության արդյունքները հետագայում տեղ են գտել բառապաշարի տվյալ շերտի քննությանը նվիրված այլ աշխատություններում, մասնավորապես «Ընդհանուր և հայկական բառագիտություն», «Լեզվաբանության հիմունքներ» աշխատություններում, վերջինում փոխառությունները բաժանում է ներքին և արտաքին տեսակների²⁵: Ներքին փոխառությունների համար աղբյուր են գրաբարը, միջին հայերենը, ժողովրդախոսակցական լեզուն և բարբառները: Դրանց մեջ է ներկայացնում նաև այն բառերը, որոնք ժամանակակից հայոց լեզուն «անմիջականորեն» վերցրել է բարբառներից կամ ժողովրդախոսակցական լեզվից և ոչ թե պարսկերենից կամ թուրքերենից, ուստի և դրանց աղբյուրն են բարբառները կամ ժողովրդախոսակցական լեզուն՝ որպես միջնորդ լեզուներ²⁶: Նկատում է, որ «...պարսկա-թուրքական ծագումով բառերի գործածությունը գրական լեզվի չեզոք, պաշտոնական ու գիտական ոճերում ընդհանուր առմամբ մերժվում է. դրանց գործածությունը, իբրև կանոն, սահմանափակվում է բանաստեղծական խոսքի ոլորտով՝ ստեղծագործական նպատակով»²⁷: Հետաքրքիր է Աղայանի հետևյալ դիտարկումը փոխառությունների վերաբերյալ, որոնց «...առանձնահատկությունն այն է, որ նրանք մեծ մասամբ ժամանակավոր են կրում. փոխառյալ բառերի մեծագույն մասը գործածվում է այնքան ժամանակ, որքան որ տևում է փոխատու լեզվով խոսողների տիրապետությունը: Այդ տիրապետության վերացումից հետո փոխառյալ բառերն աստիճանաբար դուրս են մղվում լեզվից, իբրև խորթ և օտար բառեր, և նրանց չնչին մասն է միայն, որ մնում է նվաճվածների լեզվի՝ փոխատու լեզվի մեջ»²⁸: Նույն տեղում նաև նշում է մշակութային ազդեցությամբ ևս որևէ լեզվից մի այլ լեզվի կամ լեզուների բառեր անցնելու փաստը:

²⁴Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 167-168:

²⁵ Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 172-177:

²⁶ Տե՛ս նշվ. աշխ., էջ էջ 173:

²⁷ նշվ. աշխ., էջ 174:

²⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 624:

Ամփոփելով մեր դիտարկումները խնդրո առարկա լեզվական միավորների վերաբերյալ՝ կարող ենք նշել, որ դրանց քննությունը տարբեր հայերենագետների աշխատություններում հատուկ ուշադրության է արժանացել Է. Աղայանի վերոհիշյալ աշխատության էջերում: Նկատելի է, որ լեզվաբանը, քննելով փոխառությունների, այլ լեզուների՝ հայերենի վրա ունեցած ազդեցությունների պատճառները և դրանց գործածելիության սահմանները, համակարծիք է նրանց հետ, ովքեր դեմ են բոլոր օտար բառերն անխտիր թարգմանելուն: Կարծում ենք՝ Աղայանի մոտեցումը միանգամայն արդարացված և արդիական է նաև մեր օրերում: Միջազգային գործածություն և համընդհանուր տարածում ունեցող բառերը պետք չէ ամեն գնով թարգմանել՝ դրանց հայերեն համարժեքներն ստեղծելով, հատկապես գիտաբառերի դեպքում: Այլապես երբեմն ստեղծվում և գործածության մեջ են դրվում բաղադրյալ բառեր, որոնց բուն նշանակությունը բացահայտելը դժվարություններ է առաջացնում, երբեմն էլ բազմիմաստ բառերի գործածության շփոթ է առաջանում, մինչդեռ ընդունված օտար տարբերակն ավելի հասկանալի և գործածական է լինում:

Օգտագործված գրականության ցանկ

- Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ.1, Ե.,1958:
Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962:
Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
Բաղիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն, Ե., 2012:
Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003:
Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006:
Պետրոսյան Հ., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Ե., 1979:

РЕЗЮМЕ

ВОПРОС ОЦЕНКИ ВАРВАРИЗМОВ И ЗАИМСТВОВАНИЙ В ТРУДЕ ЭДУАРДА АГАЯНА «ИСТОРИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ»

Нерсисян Варсик

Батикян Темине

Известно, что при написании своего двухтомного труда «История армянского языкознания» Эдуард Агаян принимал за основу теории происхождения и генетических связей армянского языка. Однако говоря о трудах отдельных лингвистов, внесших вклад в данную сферу, Агаян затрагивает и другие темы. В этом смысле интерес представляет отношение Агаяна к исследованиям арменистов, посвященных взаимодействию армянского и других языков.

Мнения арменистов, относящихся к оценке и использованию заимствований и варваризмов, актуальны и в настоящее время. Следовательно, в данной статье предпринята попытка представить точки зрения арменистов по теме исследования в оценке Агаяна. Следует отметить, что, исследуя причины воздействия других языков на армянский и рамки употребления заимствований, великий лингвист разделяет точку зрения тех исследователей, которые были против перевода всех без исключения иностранных слов на армянский язык.

Ключевые слова: Эдуард Агаян, иностранные влияния, заимствованные слова, вторая школа армянского языкознания, третья школа.

SUMMARY
EVALUATION OF BARBARISMS AND BORROWINGS IN EDUARD AGHAYAN'S
"HISTORY OF ARMENIAN LINGUISTICS"

Nersisyan Varsik
Batikyan Tehmine

It is well-known that while writing his two-volume work “History of Armenian Linguistics”, Eduard Aghayan took as a basis the theories of the origin and genetic bonds of the Armenian language. However, speaking about the works of particular linguists who have contributed to this field, Aghayan touches on other topics as well. In this sense, Aghayan's attitude to the studies of the Armenian linguists on the interaction of Armenian and other languages is of great interest. The opinions of the Armenian linguists regarding the evaluation and use of borrowings and barbarisms are still relevant today. Therefore, this paper attempts to present the perspectives of the Armenian linguists on the topic of research in Aghayan's assessment. It should be noted that while studying the reasons for the influence of other languages on Armenian and the framework of the use of borrowings (loanwords), the great linguist shared the point of view of those researchers who were against the translation of all foreign words into Armenian.

Key words: Eduard Aghayan, borrowings (loanwords), foreign influence, the second school of Armenian linguistics, the third school.

ԳՈՎԱԶԴԻ ԼԵԶՈՒՆ

Շահրամանյան Վրեժ

Երևանի պետական բժշկական համալսարան
Սեքսոպաթոլոգիայի ամբիոն
Բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ
v.shahramanyan@gmail.com

DOI: 10.54412/2953822X-2023.1-206

Բանալի բառեր. գովազդ, գովազդի լեզու, լեզվասխալներ, լեզվական աղավաղումներ:

Վերջին տասնամյակներում գովազդը մեծ տեղ է զբաղեցնում հասարակության կյանքում: Այն դարձել է լրատվության պարտադիր միջոց, ներթափանցել է մեր կյանքի ու կենցաղի ամենատարբեր ոլորտներ՝ ժամանցավայրեր, գեղեցկության սրահներ, փոխադրամիջոցներ, հիվանդանոցներ, շենքերի ճակատային հատվածներ, կանգառներ, վերելակներ: Գովազդում են զանազան ապրանքատեսակներ, կազմակերպություններ, տարատեսակ ծառայություններ և այլին: Գովազդի այսպիսի զարգացումը, իհարկե, ընդհանրական բնույթ ունի:

Հայկական գովազդի աքիլեյան գարշապարը մայրենի լեզուն է: Եթե լեզվական սխալը ներթափանցում է զանգվածային լրատվամիջոց, դրա դեմն առնելն անհնարին է դառնում, և օդակաթիլային ճանապարհով փոխանցվող վարակի պես այն տարածվում է:

Գովազդային լեզվավթարներն ամենուրեք են՝ համացանցում, հեռուստառադիոլրատում, մամուլում: Սակայն զավեշտն այն է, որ մեկ անգամ հնչելուց հետո դրանք եթերից դուրս մղվելու փոխարեն ավելի են «տեղները տաքացնում»:

Հայկական գովազդում գրական և անադարտ հայերենի հազվադեպ ենք հանդիպում: Գովազդում, օրինակ, *խմիչքը կարող է դառնալ «խմիչքներ»*, մինչդեռ խմիչքը հավաքական գոյական է, որն իր մեջ արդեն հոգնակի իմաստ ունի, *հազուստը՝ «հազուստներ»* և մի շարք այլ ոճական, շարադասական սխալներ, որոնք հեռու են գրական հայերեն կոչվածից, իսկ ժարգոնը մերօրյա գովազդի զինանոցի հիմնական գործիքներից մեկն է:

Որպես օրինակ՝ կարելի է հիշել *«Հզոր չիփսեր»-ի* գովազդը, որը կատարվում է վերոհիշյալ լեզվով (ծանոթ առողջանությանը, ամբողջ մարմնի և հատկապես՝ ուսերի ու գլխի բնութագրական շարժումներով, ծուռ բերանով): Գովազդային հոլովակի հերոսը սրճարանում պատվիրում է *«Հզոր չիփսեր՝ հզոր տղերքի համար»*:

Այս առումով հայկական գովազդային խոսույթում զգալի տարածում ունեն որոշ բառեր, որոնք խոսքային կաղապարի նման փոխանցվում են տեքստից տեքստ՝ հաճախ ձևավորելով ոչ նախընտրելի բառային զուգակցումներ, որից էապես տուժում է գովազդը. այն չի տպավորվում, չի ազդում: *Օր.՝ աննախադեպ, բացառիկ, էլիտար, նուրբ, անկրկնելի, յուրօրինակ, առանձնահատուկ* բառերը, որոնք, անկախ գովազդի առարկայից, գերակայում

են գովազդային խոսույթում, կարծես թե սպառել են իրենց, իսկ որոշ կապակցություններում ուղղակի փոքր-ինչ գավեշտալի կիրառություններ են: Օր.՝ *աննախադեպ/բացառիկ առաջարկ, զեղչեր, պայմաններ, էլիտար թաղամաս, բնակարաններ, սալիկներ, զուգարանի թուղթ, զուգարանակոնք, խորոված, անձեռոցիկներ, նուրբ / յուրօրինակ համ, մաշկ, խնամք, բույր* և այլն: Կամ՝ *«Մենք գիտենք, թե որքան հաճելի է, երբ ամեն օր քեզ առանձնահատուկ ես զգում»:*

Նշված ածականները՝ որպես հատկանիշ ցույց տվող բառեր, չեն կապվում որոշակի մի ապրանքատեսակի անվան հետ, հավասարապես բնութագրական են հարյուրավոր առարկաների ու երևույթների համար և չեն կարող դառնալ ինքնատիպ բնորոշում: Ավելին՝ գովազդներում ընդգծված բառերի «չարաշահումը» ինչ-որ առումով արժեզրկել է խոսքը, դարձրել միօրինակ:

Մեր գովազդային դաշտում այսպես վարվեցին հայտնի հեռուստադեմքերը. նախ՝ իրենց երգիծական հաղորդումները անվանեցին «Կարգին հաղորդում», «Կարգին սերիալ», «Կարգին կինո»: Ապա՝ կարգին բառը պաշտոնապես դարձավ նրանց և՛ տարբերանշանը, և՛ կարգախոսը, իսկ հետո էլ՝ «Կարգին լիմոնադ», «Կարգին օպտիկա», «Կարգին շինանյութ»:

Վերոհիշյալ անվանումներում այս ածականը նշված իմաստներից իր մեջ համատեղում է միանգամից մի քանի իմաստներ և այս առումով էլ դարձել է չափազանց չարաշահված և ծեծված «գովազդային» բառ:


Երևանում և ողջ հանրապետությունում փակցված գովազդային ցուցապաստառները, որպես կանոն, պարունակում են բազմաթիվ քերականական, ոճական, լեզվական սխալներ ու մարդու հոգեբանության վրա բացասական ներգործություն ունեցող ազդակներ:

Վերջին շրջանում հրապարակված ամենաաղաղակող տառասխալը, սակայն, Հայաստան մուտք գործեց ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության օրենքի կիրառմանը զուգահեռ: Հայստանում եւ Երևանում հայտնվեցին հսկայական պաստառներ, որոնց վրա կրկին խոշոր տառերով հայտնվեց «նոր» բառ՝ *«ապպահովագրություն»:*



Այսօրվա գովազդը լեփ-լեցուն է լեզվական աղավաղումներով, սխալ գործածումից «ուշաթափված» բառերով, օրինակ՝ *«իրական շահում»*, *«իրական սուրճ»* և այլն: Գրագետ ունկնդիրն արդեն հոգնել է շարադասական սխալներից, որոնք միայն անհետադարձություն են

ծնում՝ «անհատական գազի կաթսաներ», «բուրավետ աղբի փաթեթներ», «միակ ստամի մածուկը Հայաստանում», «բուժից սեղանի հանքային ջուր», «բուժից սեղանի հանքային գազեցված ջուր», «բուժից սեղանի հանքային գազավորած ջուր», «բուժից սեղանի հանքային գազով ջուր»:



- | |
|--|
| <p>Գրում են՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գազեցված ջուր ✓ Գազավորած ջուր ✓ Գազով ջուր |
| <p>Պետք է լինի՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ Գազավորված ջուր |

Իսկ «Բյուրեղ» ջրի կարգախոսը՝ «Երբ կյանքն այդքան հասանելի է», կարծես իմաստային կապ չունեցող բառերի շարան լինի:

«Ջերմուկ-Գրուպ» հայրենիքիս ջուրը»: Ինչպես տեսնում ենք, հանքային ջրի արդյունահանմամբ զբաղվող այս ընկերությունը փորձում է մեզ համոզել, թե «հայրենիքիս ջուրը» ոչ թե հանքային ջուրն է, այլ հենց իրենց կազմակերպությունը:

«Անհավանական զեղչեր» է խոստանում խանութ-սրահը: Փաստորեն՝ գոյություն չունեցող բաներ են խոստանում:

«Արժանապատիվ ապագա կառուցելու հիմքը կրթությունն է: Հայերենում «արժանապատիվ» է լինում սուբյեկտիվ-անձնային որևէ երևույթ՝ անհատի արարքը, վերաբերմունքը, պատասխանը և այլն, իսկ անհատին առնչվող իրողությունը՝ «արժանավայել» (հագուստ, բնակավայր, ապագա և այլն):


«Հյուրանոցի մեկ գիշերն արժե 200 դոլար»: Տարօրինակ է, որ հյուրանոցը գիշեր է վաճառում: Պիտի ասվեր՝ «Հյուրանոցում գիշերելն արժե 200 դոլար»: Կամ՝ գիշերակացը: Ամեն քայլափոխի կարգում ենք՝ պահանջվում է «բարետես արտաքինով» վաճառողուհի կամ մատուցողուհի: Աշխատանքի հրավիրող կազմակերպության ղեկավարը որևէ բառարանից կարող էր պարզել, որ «բարետես» ածականը հենց մարդու արտաքինին է վերաբերում, այսինքն՝ բառակապակցության մեջ լեզվատրամաբանական սխալ կա: Հրավիրել էր պետք «բարետես» վաճառողուհու (մատուցողուհու):

«Էլիտար» բառն իր բառարանային իմաստից շատ է հեռացել, գովազդներում միշտ լսում ենք՝ «Էլիտար շենք», «Էլիտար խորոված», «Էլիտար հանքային ջուր» և այլն: Մեր պատկերցումներն այդ բառի մասին փոխվել են, եթե անցյալ դարում էլիտար էր Հովհաննես Թումանյանը, ապա այսօր էլիտար է խորովածը»: Ի դեպ, Թումանյանի մասին:

Տևական ժամանակ է՝ Երևանի կենտրոնում գործում է «Թումանյանի շաուրմա» հասարակական սննդի օբյեկտը: Արաբաթուրքական «շաուրմա»-ն, ամենայն հայոց բանաստեղծի անվան ընկերակցությամբ, որպես արագ սննդի օբյեկտի ցուցանակ՝ վաղուց արդեն «գարդարում է» Երևանի սիրտը: Այդ երկու բառերի համակցությունն այն աստիճան անընդունելի է ու անընկալելի, որ թվում էր, թե պատկան մարմինները կանդրադառնան ինքնուրույն մտածողության այս արգասիքին: Բայց, ցավոք սրտի, ժամանակն ի վնաս գործեց այն իմաստով, որ ոմանց ականջին տարօրինակաբար սովորական դարձավ «Թումանյանի շաուրմա» արտահայտությունը, իսկ, ժողովրդի լեզվով ասած՝ շաուրմայանոցը, բարգավաճեց, ընդլայնվեց ու դարձավ ցանց:

Այս ամենին իր մասնակցությունն է բերում նաև հեռուստառադիոեթերը, որը կոչված է նպաստելու գրագետ խոսքի, մշակույթի, հատկապես՝ ազգային մշակույթի նկատմամբ հետաքրքրության ու հարգանքի ձևավորմանը: Եթե մի քանի տարի առաջ ասեին, որ հայկական եթերը գովազդ պիտի հնչեցնի՝ վերջում հանդիսավոր հայտարարելով՝ «Թումանյանի շաուրմա», չէինք հավատա: Մինչդեռ այսօր եթե այդ վնասակար սննդատեսակի սիրահար պատանիներին ու երիտասարդներին թերի ձևակերպված մի հարց տան՝ «Թումանյանի ի՞նչ...», անխտիր բոլորը կպատասխանեն՝ «Շաուրմա»: «Գուգլ» տեղեկատվական կայքի հայկական բաժնում որոնման հրահանգ տվեք «Թումանյանի» բառով: Ամենաորոնվածը «Թումանյանի շաուրմա»-ն է: Դրան հաջորդում է հայոց մեծ բանաստեղծի անունը կրող քյաբաբը, որից հետո միայն Թումանյանի պոեմներն են, քառյակները, բանաստեղծությունները: Դրանից հետո է նաև Թումանյանի կյանքը, որ ամբողջովին ոգենպաստ նվիրում է իր երկրին ու իր ժողովրդին:

Ի դեպ, «Գուգլ»-ի մասին: Տերմինաշինության, ավելի ճիշտ՝ ռուսաբանության հերթական ձախողված փորձը տեսնում ենք գովազդային պաստառին:



Բայց չէ՞ որ բառը, խոսքը մտածողություն են ձևավորում: Դպրոցում մեծ գրողի անունը լսելիս ձևավորվող սերունդը «Գուգլ»-ի նման առաջինը շաուրմա՞ն պիտի հիշի:

Աշխարհում ոչ մի ազգ իր մշակութային սրբության հանդեպ այսպիսի անփառունակ վերաբերմունք չի դրսևորի: Ասենք թե մեր երկրի լեզվական ու վարչական օրենսդրությունը ժամանակին նման արտառոց դեպքերը կանխարգելելու իրավական գործիքներ չի նախատեսել: Բայց օրենսդիրն իրավասու է նախադեպը նկատի ունենալով օրենքներում փոփոխություններ կատարել: Յուզանակի հետ կապված՝ մեր երկրի «Լեզվի մասին» օրենքը բովանդակային խնդիր չի դնում, և տնտեսվարողին ներկայացվող պահանջը սոսկ հայատառ գրության ապահովումն է: Բայց «Թումանյանի շաուրմա»-ն *ցուցանակ դառնալուց առաջ իրավական գրանցում է ստացել*: Որպես առկա փաստ շենքի ճակատային մասում դրսևորվելուց առաջ *Երևանի քաղաքապետարանն իր գրավոր համաձայնությունն է տվել մեր մեծ գրողի հիշատակն այսպես ոտնահարելուն ու պղծելուն*: Իսկ, ասենք, վրացիները, որ լեզվի օրենք ու տեսչություն չունեն էլ, Թբիլիսիի կենտրոնում կգրե՞ն «Ռուսթավելու փիթիանոց»: Նման բան ոչ միայն մեր հարևան երկրում, աշխարհի ոչ մի վայրում չես տեսնի:


Այսօրվա գովազդում հաճախ գործածվում է գրագետ, բայց անհեթեթ բառերի շարք, որոնց մեջ շատ իմաստային սխալներ կան, օրինակ՝ «Մենք արդեն բացվել ենք», «Գտի՛ր քո տունը», «Ապագան մեկնարկում է շուտով»:

«Ընտրիր կյանքի պայծառ կողմը»՝ իր հերթին սովորեցնում է բջջային օպերատորը և առաջարկում. «Անդադար խոսիր»:

Տարածված սխալներից է *վարսավիրանոցը «կանացի»* անվանելը: «Կանացի» **ածականով կարելի է բնորոշել քայլվածքը, ձայնը,բայց ոչ երբեք վարսավիրանոցը**: Այն ընդամենը կանանց համար է:

Ծաղկի սրահի վրա փակցված է. «Պահաջվում է ծաղկի դիզայներ»: Անտեսելով հայերեն **«ձևավորող»** բառը՝ օտար «դիզայներ» բառը գրված է ո-ով:

Հայերենի շեշտի «դաժան բախտի» մասին կարելի է անվերջ խոսել: *Չ՛ծխել, բարձր չ՛խոսել, աղբ չ՛թափել* ձևերը սխալ են, քանզի հայերենում **շեշտ կրում է վերջի վանկի ձայնավորը, ոչ թե ժխտական մասնիկը**: Ծատ հաճախ տարաբախտ շեշտի փոխարեն դնում են բուր, օրինակ՝ *չ՛ աղմկել, դիմացը չ՛ փակել, չ՛ խնդրել*:



Գովազդային խոսույթի տարածված սխալ է ենթակայի և ստորոգյալի անհամաձայնությունը: Օրինակ. «Վաճառվում է բնակարաններ» (փոխ.՝ **վաճառվում են բնակարան**),

«Գործում է մեծ գեղջեր» (փոխ.՝ գործում են մեծ գեղջեր), «Շտապ անհրաժեշտ են վաճառող-խորհրդատու» (փոխ.՝ շտապ անհրաժեշտ է վաճառող-խորհրդատու), «Պահանջվում է մենեջեր, վաճառողուհի, հավաքարար» (փոխ.՝ պահանջվում են մենեջեր, վաճառողուհի, հավաքարար):

Խնդրառության սխալների օրինակներ հաճախ հանդիպում ենք քաղաքում փակցված կամ համացանցում տարածված գովազդներում: Այդպիսի արտահայտությունների օրինակներ են հետևյալները. «*խանութին անհրաժեշտ են վաճառողուհիներ*», «*ավտոկանգառին պահանջվում է պահակ*», մինչդեռ պետք է լինեն՝ «**Խանութում անհրաժեշտ են վաճառողուհիներ**», «**ավտոկանգառում պահանջվում է պահակ**»:

Շատ են հանդիպում շարադասական սխալներ: Հայտնի ապրանքանիշի գովազդային վահանակի վրա գրված է հետևյալ արտահայտությունը. «*Տարածաշրջանի խոշորագույն մսամթերքի գործարան*»: Արտահայտությունից կարելի է ենթադրել, որ խոսքը խոշորագույն մսամթերքի մասին է, սակայն այստեղ խոշորագույնը գործարանի որոշիչն է: Նմանատիպ մեկ այլ օրինակ է համացանցում տարածված հետևյալ գովազդը՝ «*բարձր տաքսու գնե՛ր, գրանցվե՛ք և խնայե՛ք գումար*», որտեղ նկատի են ունեցել ոչ թե բարձր տաքսին, այլ **տաքսու բարձր զինը**:

Խնդրվում է: Ցուցանակներին, պատերին հաճախ կարելի է տեսնել «*Խնդրվում է դուռը ծածկել*», «*Խնդրվում է լռություն պահպանել*», «*Խնդրվում է չծխել*», «*Խնդրվում է ձեռք չտալ*» գրությունները. որոնք խորթ են հայերենին:

Հայերեն հարկ է ասել «**Խնդրում ենք** դուռը ծածկել», «**Խնդրում ենք** լռություն պահպանել», «**Խնդրում ենք** չծխել», «**Խնդրում ենք** ձեռք չտալ» և այլն:

Բժշկական գովազդի «վթարները»: Հաճախ բժշկական գովազդի տիրույթում կարելի հանդիպել զավեշտալի դեպքերի: Օրինակ...

Պացիենտ-բուժառու: Վերջերս լայն տարածում է գտել «*բուժառու*» արհեստածին եզրույթը՝ իբրև «պացիենտի» հայերեն տարբերակ: Իմաստային տարբերություն կա: Պարտադիր չէ, որ պացիենտը հիվանդ լինի: Պացիենտը կարող է դիմել խորհրդատվություն ստանալու նպատակով: Հիվանդը որևէ հիվանդություն ունեցող, նրանով տառապող, վատառողջ մարդն է: «Բուժառու»-ի դեպքում հասկացվում է, որ մարդը միայն բուժում է ստանում:

Ընդհանրապես, ամեննին կարիք չկա բոլոր տերմինները, հատկապես բժշկական, թարգմանել: Հաճախ դրանով ընդամենը արհեստական շունչ ենք տալիս այդ բառին: «**Պացիենտ**»-ը լիովին արտահայտում է **բառի իմաստը** և ավելի գերադասելի է, քան «**հիվանդ**»-ը կամ «**բուժառու**»-ն:


Վտանգավոր գովազդ: Դրանցից են վիճակախաղերի գովազդները, որտեղ բացի լեզվական «վթարներից», առկա են նաև վտանգավոր ազդակներ: Մեր իրականությունում պատկերն այս իմաստով չափազանց մտահոգիչ է: Հեռուստատեսային վիճակախաղերը կամաց-կամաց դուրս մղվեցին եթերից՝ տեղը զիջելով դրանց հեռուստատեսային

համացանցային գովազդներին: Մակայն դրանք արդեն բավական են՝ որպես յուրատեսակ վտանգավոր հուշարարներ, որոնք փորձում են պատասխանել՝ որտե՞ղ կարելի է հեշտու-թյամբ գումարգտնել:



Դեռահասների դեպքում այդ հանգամանքին գումարվում է առաջարկվող դյուրինությամբ դաստիարակվելու վտանգը:

Հայկական գովազդի շուկան ուսումնասիրելիս կարելի է նմանատիպ վնասակար բազմաթիվ այլ օրինակներ գտնել: Արդեն սովորական են դարձել խաղային ներդրումներ գովազդող հոլովակները (օրինակ՝ Վիվառո, Տոտո գեյմինգ ընկերությունների): Զանգվածաբար գովազդվում է, օրինակ, բլոտ խաղալ՝ խաղադրույքներ կատարելով: Գովազդն առաջարկում է նույնիսկ բջջային կազինոյի գաղափարը՝ *շեշտելով խաղալու հասանելիությունը*: Վերջին հանգամանքը վտանգավոր է հատկապես դեռահասների համար, քանի որ նոր տեխնոլոգիաներով ոգևորվածությունը, դրանց նոր հնարավորությունները բացահայտելու խանդավառությունը հատուկ են հատկապես նրանց:



«Դուխով» հայերենը: Խոսակցական հայերենում վաղուց կար «դուխով» բառը, իսկ 2018 թ. իրադարձություններից հետո այն սկսեց լայնորեն կիրառվել՝ տեղ գտնելով ոչ միայն



բանավոր խոսքում:

Հ.Գ. փոխարեն: Ու թեև, ինչ խոսք, Լեզվի տեսչությունն այսօր բավական մեծ և հետևողական գործունեություն է ծավալում՝ լեզվի օրենքը խախտողներին ենթարկում տուգանքների, լեզվական սխալների վերաբերյալ ամփոփագրեր կազմում, միևնույնն է, գովազդատուն ինքն է որոշում ճիշտն ու սխալը՝ ցավոք, առաջնորդվելով «ով վճարում է, նա էլ պատվիրում է երաժշտությունը» հայտնի խոսքերով:

Այնուամենայնիվ, պետք է միշտ հիշել, որ՝

- ✓ *Հայաստանի պետական լեզուն պիտի անմրցակից լինի, այլապես հայերենը կկորցնի իր կարգավիճակը:*
- ✓ *Մրա՛ մասին մտածենք, մեզ պահպանող ու հզորացնող մեր արքայական հայերենի մասին:*
- ✓ *Մենք դեռ պարտք ենք մեր լեզվին:*
- ✓ *Արժանի լինենք հայախոս լինելու պատվին:*
- ✓ *Գիտակցենք հայախոս լինելու երջանկությունը:*

Օգտագործված գրականության ցանկ

Բեդիրյան Պ.Ս., Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան: Սեզամ, 1999

Մարկոսյան Ռ., Բաց նամակ, <https://www.lezu.am/?p=1588>

Միրզոյան Վ.Ա., Հայերենը՝ անաղարտ, Երևան, 2017

Ջահուկյան Գ.Բ., Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, Կանչ, 1992

Սարգսյան Լ., Արդի հայերենի գովազդային խոսույթը. բառընտրություն և բառագործածություն, Երևան, 2019

Սևակ Պ., Պահպանենք և հարստացնենք մայրենին // Պ.Սևակ, Երկ. ժող 6 հատ., հ.5, Երևան, 1974

РЕЗЮМЕ

ЯЗЫК РЕКЛАМЫ

Шахраманян Вреж

Работа посвящена языку рекламы и его влиянию на языковое мышление и здоровье. Реклама занимает большое место в жизни общества. Она стала обязательным средством информации, проникла в различные сферы нашей жизни и быта: места развлечений, салоны красоты, транспорт, больницы, фасады зданий, остановки, лифты и т. д. Язык армянской рекламы вызывает крайнее беспокойство. Языковые ошибки рекламы встречаются повсюду: в эфире, в интернете, на вывесках и т. д. Помимо языковых ошибок, реклама часто порождает нездоровые идеи, тем самым искажая языковое мышление, а также нанося вред здоровью человека.

Ключевые слова: реклама, язык рекламы, языковые ошибки, языковые искажения.

SUMMARY
LANGUAGE OF ADVERTISING
Shahramanyan Vrezh

The work is devoted to the language of advertising and its impact on linguistic thinking and health. Advertising occupies a large place in the life of society. It has become an obligatory means of information and has penetrated into various spheres of our everyday life: places of entertainment, beauty salons, transport, hospitals, building facades, bus stops, elevators, etc. The language of Armenian advertising is extremely disturbing. Language errors in advertising are everywhere: on television, on the Internet, on billboards, etc. In addition to language errors, advertising often gives rise to unhealthy ideas, thereby distorting linguistic thinking, as well as harming human health.

Key words: advertising, advertising language, language errors, language distortions.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ
ԷՂ. ԱՂԱՅԱՆԻ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ

Պապիկյան Միլվա

ՀՀ ԳԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ավագ գիտաշխատակից

papikyansilva@yandex.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-215

Բանալի բառեր. բառագիտություն, բառապաշարի դասակարգություն, համահայկական բառեր, միջինհայերենյան բառեր, նոր բառեր, բարբառային բառեր:

1984 թ. լույս տեսած Էդ.Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատությունը հեղինակի երկար տարիների հետազոտությունների արդյունքների ամփոփումն է: Գրքում ընդհանուր լեզվաբանական տեսական դրույթների հիման վրա քննության են առնվում հայերենի բառագիտական տարբեր հարցերը հիմնականում աշխարհաբար երկու գրական լեզուների նյութի հիման վրա: Հեղինակի նպատակն է եղել ստեղծել ժամանակակից գրական հայերենի բառագիտության ուսմունքը: Մենագրության մեջ քննվում են բառի տեսությանը, բառի իմաստային փոփոխությունների ընդհանուր օրինաչափություններին, իմաստաբանությանը և բառակազմությանը վերաբերող հարցեր: Հատուկ վերլուծության առարկա են դարձել տերմինաբանությունը, նրա մշակման ընդհանուր սկզբունքներն ու օրինաչափությունները: Առանձին գլուխ նվիրված է բառարանագրությանը:

Աշխատանքը բաղկացած է ութ գլխից՝ «Ընդհանուր գիտելիք», «Իմաստաբանություն», «Իմաստափոխություն», «Ժամանակակից հայերենի բառապաշարը», «Ժամանակակից հայերենի բառապաշարի զարգացումը», «Բառակազմություն», «Տերմինագիտություն», «Բառարանագրություն և բառագիտություն»:

Հեղինակը գրքի «Բառակազմություն» գլխում հիմնականում հիմնվել է Մ.Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն» աշխատանքի վրա, «Իմաստաբանություն» և «Իմաստափոխություն» գլուխները հեղինակի «Լեզվաբանության ներածություն» գրքում շարադրված սկզբունքների վերանայումն ու զարգացումն են ներկայացնում:

Նոր են ժամանակակից հայերենի ուսումնասիրության բնագավառում ժամանակակից գրական հայերենի բառապաշարի դասակարգությանը, տերմինագիտությանը, ինչպես նաև բառապաշարի ներքին զարգացմանը, մշակմանը և կատարելագործմանը նվիրված գլուխները:

Աշխատանքի «Ժամանակակից հայերենի բառապաշարը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Համառոտ պատմական ակնարկ», Էդ.Աղայանը ցույց է տալիս, թե ի՞նչ ճանապարհ է անցել աշխարհաբարի բառապաշարն իր

զարգացման ընթացքում, ի՛նչ աղբյուրներից է օգտվել, այլ կերպ ասած, ինչպես է պատմականորեն գոյացել գրական լեզվի բառապաշարը¹:

Մենք դիտարկել ենք այս գլխի երկրորդ ենթագլուխը՝ «Բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը», որում հեղինակը, վերանալով բառապաշարի զարգացման պատմական ընթացքից, այն դիտարկում է որպես մի կայուն ամբողջություն, որը ներառում է բոլոր այն բառերը, որոնք գործածվել կամ գործածվում են աշխարհաբարով գրված ողջ գրականության և մամուլի մեջ՝ անկախ գործածականության աստիճանից, գործառական ոլորտից, տարբերակայնի բնույթից և այլն²: Առանձնացվում են հետևյալ խմբերը՝ *համահայկական բառեր, համագրական բառեր, միջինհայերենյան բառեր, նոր գրական բառեր, մասնավոր գրական բառեր, աշխարհաբարյան բառեր, հին կամ գրաբարյան բառեր, բարբառային բառեր*:

1. Համահայկական են բոլոր այն բառերը, որոնք եղել են հին հայերենում, գործածվել են գրաբարում, միջին հայերենում, պահպանվել են ոչ միայն գրական հայերենում, այլև ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում: Այս խմբին են պատկանում նաև մինչգրաբարյան և գրաբարյան փոխառությունները, որոնք կենսունակ են գրական լեզվում, ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում, ինչպես՝ *թատրոն, եպիսկոպոս, մանուշակ* և այլն: Այս բառերը աշխարհաբարի բառապաշարի միջուկն են կազմում, որոնք աչքի են ընկնում մեծ կենսունակությամբ, բառակազմական մեծ հնարավորություններով: Ընդ որում, դրանք հիմնականում արմատական բառեր են կամ որևէ ածանցով կազմված բառեր. *համտուտ-ել, հան-ել*:

1987 թ. լույս տեսած Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» այս բառաշերտն անվանվում է *ընդհանուրհայերենյան բառաշերտ*³:

2. Համագրական բառեր: Ըստ Աղայանի՝ սրանք այն բառերն են, որոնք գրաբար մատենագրության մեջ գործածվել են որպես գրական բառեր և կա՛մ մուտք չեն գործել ժողովրդախոսակցական լեզվի մեջ, կա՛մ էլ անցել են դրան կամ բարբառներին իբրև գրական փոխառություններ, իսկ նոր գրական լեզվի մեջ (երկու տարբերակներում էլ) գործածվել կամ գործածվում են գրական ժառանգորդությամբ, ինչպես՝ *ճաղկավառ, վարդապետ, գանգրահեր* և այլն: Դրանք հիմնականում բաղադրյալ բառեր են կամ գրական փոխառություններ գրաբարում՝ 5-ից մինչև 10-րդ դարը (*հյուլե, փիլիսոփա, զեփյուռ*) և այլն, որոնք հայերենի բառապաշարի անկապտելի մասն են կազմում:

3. Միջինհայերենյան բառեր: Սրանք այն բառերն են, որ ավանդվել են միջին հայերենով գրված գրականությամբ, որից էլ անցել են աշխարհաբարին: Այս բառերը կա՛մ միջինհայերենյան շրջանում կազմված բառեր են (*աղվեսագիրք, դատաստանագիրք*), կա՛մ միջինհայերենյան շրջանում կատարված փոխառություններ (բեղ, աթաբեկ, խաթուն և այլն):

¹ Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր. համալսարանի հրատ., Եր., 1984, էջ 119:

² Նույն տեղում:

³ Տե՛ս և Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 115:

Հանդիպում են նաև բառեր, որ եղել են հին հայերենում՝ ժողովրդախոսակցական լեզվում, սակայն մուտք չեն գործել գրական լեզվի՝ գրաբարի մեջ, ինչպես՝ *թուշ, կեռ, կարիճ* և այլն:

4. **Նոր գրական բառեր:** Բոլոր նորակերտ բառերը, որոնք ընդհանուր են թե՛ արևելյան, թե՛ արևմտյան գրական լեզուների համար (*բարեխիղճ, մանրադիտակ, դաշնակահար, ծաղկաբույր*), նաև նոր և նորագույն փոխառությունները (*միլիոն, ակադեմիա*) մտնում են այս ենթախմբի մեջ:

5. **Մասնավոր գրական բառեր:** Սրանք կա՛մ միայն արևելահայերենին, կա՛մ միայն արևմտահայերենին հատուկ բառերն են (հեռախոս – հեռաձայն, պաղպաղակ-սառնանույշ), նաև այն նոր փոխառությունները, որոնք տարբեր աղբյուրներից փոխառված լինելով՝ յուրաքանչյուրում տարբեր ձև ունեն (տանկ-հրասայլ, կապիտալիզմ – դրամատիրություն և այլն), այն է՝ կազմվել և գործածվում են երկու գրական լեզուներից մեկում:

6. **Աշխարհաբարյան բառեր:** Բոլոր այն բառերը, որ չեն գործածվել գրաբարում, բայց գործածական են ժողովրդախոսակցական լեզվում և դրանից էլ անցել են գրական լեզվին, ինչպես՝ *մատղաշ, շիվ, պլպլալ*, նաև այն նոր փոխառությունները, որ անցել են ժողովրդախոսակցական լեզվին ու բարբառներին, սրանցից էլ՝ գրական աշխարհաբարին, ինչպես՝ *գոգալ, ջան, չայ* և այլն, մտնում են այս ենթախմբի մեջ:

7. **Հին կամ գրաբարյան բառեր:** Ըստ Աղայանի՝ այն բառերը, որոնք գործածական են եղել գրաբարում, սակայն ժառանգորդաբար չեն անցել մեր գրական լեզվին, այլ գրողների և գիտնականների կողմից վերցվել են գրաբարից և գործածվել ավելի կամ պակաս հաճախականությամբ: Գրաբարյան բառերի և համագրական բառերի տարբերություններն այն են, որ վերջիններս անցել են աշխարհաբար գրական լեզվին պատմականորեն, գրական ժառանգորդությամբ, մինչդեռ գրաբարյան բառերը՝ պարզ փոխառությամբ: Այդ բառերը նա մտցնում է ներքին փոխառությունների մեջ⁴: Եթե արտաքին փոխառությունը միջլեզվական ոլորտ ունի, անցումը կատարվում է մի լեզվից մյուսը, ապա ներքին փոխառությունը կատարվում է տվյալ լեզվի վիճակների կամ փուլերի միջև⁵: Հմմտ. գրաբարից՝ *պարես, պարեկ, ռումբ, ական, հայրատ* «1. վավաշոտ, 2. լիրբ», արևմտահայերենից՝ *ինքնաշարժ, հանրախանութ, սառնաշաքար*, ժողովրդախոսակցական լեզվից՝ *մարմանդ, կզել*, բարբառային՝ *չմուշկ, դահուկ, տհալն* այլն: Ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման գործընթացում շատ կարևոր են գրաբարը, ժողովրդախոսակցական լեզուն և բարբառները:

8. **Բարբառային բառեր:** Այն բառերը, որոնք չեն գործածվել գրաբարում, միջին հայերենում, վաղ աշխարհաբարում, բայց մտել են նոր գրական լեզվի բառապաշար, հատկացվել են բարբառային բառերի շերտին: Հեղինակը նշում է, որ բարբառների մեջ էլ ավելի կենսունակ և կարևոր մասն են կազմում *բարբառային բառերը*՝ բարբառին հատուկ

⁴ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ. էջ 172:

⁵ Տե՛ս Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 613:

հնչյունափոխություններով, և ընդհանուր բառերը, որ անվանվեցին *աշխարհաբարյան* անվանումով: Ի դեպ, բարբառներից բազմաթիվ բառեր են ներթափանցել գրական լեզու, և լեզվակիր հանրույթը շատ դեպքերում գիտակցում է դրանց ծագումը:

Ավարտելով՝ հեղինակը նշում է, որ բառապաշարի ծագումնաբանական դասակարգությունը կատարվում է առաջին անգամ: Ընդ որում, այն չի կարելի վերջնական համարել, կարելի է ավելացնել շերտերի թիվը կամ պակասեցնել ⁶: Հեղինակի կարծիքով՝ դասակարգության մեջ ներկայացված կարգերը վերջնական չի կարելի համարել, կարելի է դրանց բնութագրությունը փոխել, ավելացնել կամ պակասեցնել. այսպես՝ կարելի է միջինհայերենյան կարգը վերացնել՝ բառերի մի խումբը հատկացնելով համագրական, մյուսը՝ աշխարհաբարյան բառաշերտին, կարելի է, ընդհակառակը, այդ շերտը ներկայացնել երկու առանձին՝ բուն միջինհայերենյան գրական բառեր և միջինհայերենյան ժողովրդախոսակցական բառերը, կամ աշխարհաբարյան բառերը բաժանել երկու խմբի՝ 1. համահայկական ժողովրդախոսակցական բառեր (*թուշ, կեռ, բոթել*), 2. Բուն աշխարհաբարյան բառեր, որոնք չէին կարող լինել հին հայերենում (աչբաբաց, ծակաչք, բացգլուխ): Հեղինակի կարծիքով՝ դասակարգությունը ճշգրտելու համար պետք է ունենալ գրաբարի լիակատար պատմական բառարան, աշխարհաբարի (խոսակցական և գրական) լիակատար բառարան, միջին հայերենի, բարբառային լիակատար բառարաններ, և դրանց համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն կտա ներկայացնելու աշխարհաբար գրական լեզվի բառապաշարի սպառիչ ծագումնաբանական դասակարգությունը⁷:

Հետագայում, օգտվելով նաև Աղայանի դասակարգումներից. հայ լեզվաբանները կատարել են այլ դասակարգումներ: Այսպես՝ Հ. Պետրոսյանը «Հայերենագիտական բառարանում» առանձնացնում է *ընդհանուրհայերենյան, գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային, արևմտահայերեն, ժողովրդախոսակցական և փոխառյալ*⁸ բառեր:

Ա. Սուքիասյանը «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ արևելյան գրական հայերենի համար առանձնացնում է *գրաբարյան, միջին հայերեն, բարբառային, արևելյան և արևմտահայերեն գրական լեզուների բառեր*⁹:

Ալ. Մարգարյանը «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ՝ «Հայոց լեզվի բառապաշարի շերտաբանական դասակարգումը» գլխում ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը բաժանում է 5 շերտի՝ **ա.** *ընդհանուր հայերեն բառեր*, **բ.** *գրաբարյան բառեր*, **գ.** *միջին հայերեն բառեր*, **դ.** *բարբառային բառեր* և **ե.** *նոր հայերեն բառեր*: «Բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը» վերնագրված ենթագլխում առանձնացնում է՝ **1. բնիկ հայերեն բառեր**՝ հնդեվրոպական հիմք-լեզվից անցած բառեր, **2. ստացվածքային բառեր**, որոնք ստուգաբանված չեն, և, ենթադրվում է, Փոքր Ասիայի տարածքում ապրող

⁶ Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 132:

⁷ Նույն տեղում:

⁸ Պետրոսյան Հ., նշվ. աշխ., էջ 115:

⁹ Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր. համալսարանի հրատ., Ե., 2004, էջ 143-157:

ժողովուրդների լեզուներից են անցել հայերենին, որ, ըստ Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» տվյալների, 3680 –ն են. դրանք տարբեր իմաստային խմբերի են պատկանում, **3. փոխառյալ բառեր**¹⁰:

Էդ. Աղայանը այս գլխի երրորդ՝ «Բառապաշարի համաժամանակյա ներքին դասակարգություն» ենթագլխում աշխարհաբար գրական լեզվի բառապաշարը դասակարգել է ըստ *գործածականության, ըստ սոցիալական տարբերակների, ըստ գործառության ոլորտների և ըստ ներլեզվական հարաբերությունների*:

Սա արդեն առանձին հետազոտության նյութ է:

Օգտագործված գրականության ցանկ

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1984:

Մարգարյան Ալ., Ժամանակակից հայոց լեզու, Եր. համալսարանի հրատ., Ե., 1993:

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1987:

Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր. համալսարանի հրատ., Ե., 2004:

РЕЗЮМЕ

ИССЛЕДОВАНИЕ ЛЕКСИКИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА НА ОСНОВЕ РАБОТЫ ЭД. АГАЯНА «ОБЩАЯ И АРМЯНСКАЯ ЛЕКСИКОЛОГИЯ»

Папикян Сильва

Работа Эд. Агаяна «Общая и армянская лексикология» (1984) является обобщением результатов многолетних исследований автора. В данном исследовании рассматриваются вопросы, связанные с семантикой, лексикой, развитием словарного запаса, терминологией и лексикографией. В данной статье представлена генеалогическая классификация лексики согласно группам определённым Эд.Агаяном (общеармянские слова, общелитературные слова, среднеармянские слова, частные литературные слова, новоармянские (ашхарабар) слова, древнеармянские (грабар) слова, диалектные слова.

Ключевые слова: лексикология, классификация лексики, общеармянские слова, общелитературные слова, среднеармянские слова, новые слова, диалектные слова.

¹⁰ Մարգարյան Ալ., Ժամանակակից հայոց լեզու, Եր. համալսարանի հրատ., Ե., 1993, էջ 133-137:

SUMMARY
EXAMINATION OF MODERN ARMENIAN VOCABULARY BASED ON ED. AGHAYAN'S
WORK "GENERAL AND ARMENIAN LEXICOLOGY"
Papikyan Silva

Ed. Aghayan's work "General and Armenian lexicology" (1984) is the summary of author's many years of research results. This study discusses issues related to semantics, vocabulary, vocabulary development, terminology and lexicography. In this article the genealogical classification of vocabulary according to selected groups by Ed. Aghayan is presented (common Armenian words, common literary words, Middle Armenian words, private literary words, New Armenian (Ashkharhabar) words, Old Armenian (Grabar) words, dialect words).

Key words: lexicology, vocabulary classification, common Armenian words, common literary words, Middle Armenian words, new words, dialect words.

ADDURUSԵՎ ERITIA ՄԵՊԱԳՐԱՅԻՆ ԼԵՌՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Պետրոսյան Սարգիս

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
առաջատար գիտաշխատող
vahe1996@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-221

Բանալի բառեր. Adduru, Eritia, Սիփան, Մասիս, Նեխ-Մասիք, լեռնանուն, ասոր, երիթ, սեպ, մեխ, հնդեվրոպական:

Նախաբան

Պատմագիտական բնույթի հարցերի քննարկման ժամանակ Հայոց պատմության հնագույն դարաշրջանների մասնագետը, մեր կարծիքով, պետք է կարևոր տեղ հատկացնի համեմատական լեզվաբանության ընձեռած նյութին: Այն վերաբերում է հատկապես տեղանվանաբանությանը: Տեղանվանաբանությունը հարուցում է ոչ միայն լեզվաբանության և աշխարհագրության, այլև պատմության աճող հետաքրքրությունը: Ինչպես ժամանակին խորհրդային հայտնի լեզվաբան Մ. Մուրզան էր նկատել տալիս. «այս գիտությունները դեռևս հարկ եղած չափով չեն օգտվում նրա ընձեռած հնարավորություններից»¹: Հայտնի հնդեվրոպաբան բուլղար գիտնական Վ. Գեորգիևը նշում էր, որ «Աշխարհագրական անվանումների հետազոտության հիման վրա կարելի է թանկարժեք հետևություններ անել տվյալ շրջանի հնագույն բնակչության լեզվական պատկանելության վերաբերյալ»²: Ահա այս սկզբունքների կիրառումով ենք մենք գրել և հրապարակել բազմաթիվ հոդվածներ, որոնցում առանցքային դեր վերապահված է եղել Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական անվանումների ստուգաբանությանը: Դրանցում իրենց տեղն են ունեցել նաև սեպագրությամբ ավանդնված մեր լեռնաշխարհի լեռնանունների ստուգաբանությունները: Սույն հոդվածը գալիս է լրացնելու այդ շարքը:

Լեռնանունների տեղորոշման հարցը

Ուրարտուի դեմ ձեռնարկած իր արշավանքներից մեկը Ասորեստանի Սալմանասար III թագավորը (մ.թ.ա. 859-824 թթ.) նկարագրում է հետևյալ կերպ. «Դայաինիից մեկնեցի և մոտեցա Արգաշկուին՝ Ուրարտացի Արամուի թագավորական քաղաքին: Ուրարտացի Արամուն սարսռաց իմ հզոր զենքերի սարսափից և իմ մարտական թափի ուժից, լքեց իր քաղաքը և բարձրացավ *Աղդուրի լեռը*: Նրա հետևից ես մագլցեցի լեռը: Լեռան վրա ահավոր ճակատամարտ տվի: Իմ զենքերով տապալեցի նրա մարտիկներից 3400 հոգի...Արրամուն իր

¹ Мурзаев Э., Очерки топонимики, изд. “Мысль”, М., 1974, стр. 4.

² Георгиев В., Исследования по сравнительно-историческому языкознанию (Родственные отношения индоевропейских языков), изд. Иностранной литературы, М., 1958, стр. 253.

կյանքը փրկելու համար բարձրացել էր *անմատչելի մի լեռան* վրա...Արգաշկուն իր շրջակա քաղաքների հետ միասին թալանեցի, քանդեցի և բոցերի մատնեցի: Նրա դռան առջև գլուխներից կազմված բուրգեր կանգնեցրի, նրա մարդկանցից ոմանց կենդանի-կենդանի բուրգերի մեջ փակեցի, իսկ մյուսներին բուրգերի շուրջը ցցերի վրա շարեցի: Արգաշկուից մեկնեցի և մագլցեցի *Իրտիա լեռը*³:

Ասորեստանի թագավորների արձանագրությունները լի են իրենց հաղթանակները ներկայացնող չափազանցություններով: Սալմանասար III-ը բացառություն չէ: Այդուհանդերձ, նա չի ստում, երբ ասում է, որ Ուրարտու ներխուժելու ժամանակ Ուրարտուի Արամու (Արամե) թագավորը իր արքայանիստ Արգաշկուում (Արծաշկու) չէր, այլ Ադդուրու լեռան վրա, որն, հավանաբար, Սիփանն էր՝ իր բարձրությամբ Հայկական լեռնաշխարհի երկրորդ լեռը: Կարելի է չկասկածել, որ նա այնտեղ էր գտնվում Սալմանասարի ներխուժումից առաջ: Արամեն երկու տարի է ինչ պատերազմի մեջ էր Սալմանասար III-ի հետ: Ամենայն հավանականությամբ, նա Սիփան էր բարձրացել որպես ուխտավոր իր աստվածներից օգնություն հայցելու նպատակով: Լսելով իր գլխավոր թշնամու ներխուժման մասին, նա շտապել էր իր նստավայրին օգնության:

Բնականաբար, Արամեն մեծ ուժերով չէր բարձրացել Ադդուրու լեռը, ըստ երևույթին, հիմնականում նրա ձեռքի տակ իր թիկնազորն է եղել: Իսկ Սալմանասարը թե՛ թվական և թե՛ որակական առավելություն է ունեցել՝ մանավանդ կառամարտիկ զորամասի հարցում: Ճակատամարտի տեղանքը, հակառակ Սալմանասարի պնդման, դաշտային է եղել⁴ և կառամարտիկների գործողություններին որևէ կերպ չի խոչընդոտել: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ իր լրտեսներից տեղեկանալով Արամեի Արծաշկուից բացակայելու մասին, նրան հանկարծակիի բերելով, Սալմանասարը Ուրարտու ներխուժել էր թիկունքից՝ հյուսիսում գտնվող Դայաենիից (հետագա Տայքը): Այս հանգամանքներով է պայմանավորված եղել ասորեստանցիների հաղթանակը և ուրարտացիների տված զոհերի մեծ թիվը (եթե հավատանք արձանագրության մեջ Սալմանասարի III-ի բերած թվին՝ 3400 զինվոր): Պարտված Արամեն ապաստան էր գտել այն նույն լեռան վրա, որն ուրարտագետներն համարում են Սիփանը⁵:

³ **Дьяконов И. М.**, Ассирио-вавилонские источники об истории Урарту, “Вестник древней истории”, (այսուհետև՝ АВИИУ); 1951, №№ 2,3,4, надп. № 27; Ադոնց Ն., Հայաստանի պատմություն. Ակունքները X-VI դդ. Մ.թ.ա., «Հայաստան» հրատ., Եր., 1972, էջ 83: Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ I, Եր., 1971, էջ 284-285:

⁴ Ամենայն հավանականությամբ դա եղել է Գ. Սրվանձտյանցի ուշադրությանն արժանացած հետևյալ վայրը. «Արծկե ավանի գլուխը՝ Սիփանա աջ թևին տակը, սկավառակաձև հովիտ մը կա *Սուլթեն* անունով, որ ավազան է մշտաբուխ ջրոց և երկրին ձիոց, խաշանց, դվարաց, պարարտ ու զվարթ արոտատեղի է» (**Սրվանձտյանց Գ.**, Երկեր, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978, էջ 406):

⁵ **Арутюнян Н. В.**, Топономика Урарту, Изд. АН Арм ССР, Ер., 1985, стр. 12-13, 261.

Միփան լեռը սրբավայր-արգելանոց է եղել անհիշելի ժամանակներից սկսած: Դրա վերհուշը ժողովուրդը պահում էր անգամ XIX դարում: Գ. Սրվանձոյանցի վկայությամբ, «Միփանը այդ շրջապատող գավառներու բնակչաց Ողիմպոսն է և Պառնաս. իրենց սերն ու դյուցազներուգությունը անոր կը նվիրեն. մուսայից և քաջաց միանգամայն շնորհատու կը դավանեն գայն: Ավագակները անոր մեծ ու ընդարձակ խորշերու և այրերու մեջ կապաստանին. գենքի և ձիու կրթությունը Միփանա լեռնադաշտին (լեռան ստորոտին է՝ հյուսիսում-Ս.Պ.) մեջը կ'ուսանին. գեղերու հոտաղները և դաշտը հաց բերող աղջիկները, երբ իրարու սիրահարին, կ'առնանգեն զիրար և Միփանա կ'ապաստանին... Թեպետ զիտնան ալ փախուցելոց պապն (հայրը-Ս.Պ.) ու մամը (մայրը-Ս.Պ.), բայց չեն երթար ետևեն, պատկառելով կամ պատիվ պահելով Միփանին, ինչպես Լոնտրայեն (իմա՝ Լոնդոն) ետ չեն առնվիր հոն փախչող և ապաստանող քաղաքական հանցավորները»⁶:

Սալմանասար III-ի Բալավաթի պալատի դռների կարճառոտ արձանագրություններից մեկում Արծաշկուի համար մղված ճակատամարտում Ուրարտուի տված զոհերի թիվը 3000 է նշվում ⁷, իսկ պարտված Արամեի ապաստանած լեռը հանվանե չի հիշատակվում: Տուշխանի հայտնի կոթողի արձանագրություններից գիտենք, որ լեռը կոչվել է Eritia: Եթե դա նույն Միփանն է, ապա նա, լինելով կոնաձև գագաթով լեռնազանգված, չէր կարող տարբեր գագաթների անուններով հայտնի դառնալ: Մնում է ենթադրել, որ նրա *Ադդուրու* և *Էրիթիա* անունները եղել են նրա ստորոտներում բնակված տարբեր հանրություններից տրված անուններ կամ ասորեստանցի բանիմաց դպիրներին հայտնի նրա հին և նոր անունները: Առաջին դեպքում ուշադրության է արժանի Գ. Սրվանձոյանի հետևյալ դիտարկումը. «Միփան լեռը վեհափառաբար յուր ձյունոտ գլուխը ամեն բարձր լեռներեն վեր կը ցուցնե Վասպուրականի և Տարոնտ բոլոր կողմերեն գրեթե»⁸: Երկրորդ դեպքում պետք է նկատի առնել, որ ասորեստանցի դպիրները երբեմն դիմում էին հնաբանությունների գործածության: Օրինակ, Վան քաղաքի Կաթա անվան փոխարեն գործածում էին նրա ավելի հին Կաթա անվանաձևը, կամ Ուրարտուի կենտրոնական նահանգի Armarili անվանը զուգահեռ գործածում էին ընդարձակ Armarijali ձևը⁹:

Արծաշկուի համար մղված ճակատամարտի առնչությամբ հիշատակված Ադդուրու և Էրիթիա լեռները, ինչպես վերևում նշվեց, ուրարտագետներն հակված են համարելու նույն

⁶ **Սրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 54-55: Ի հաստատումն բազմավաստակ վարդապետի խոսքերի, բերենք ժողովրդական երգից մի փոքրիկ հատված, որտեղ աղջիկը սիրած տղային խոստանում է. «Մարեր հըմեն խճերով, /Գողտուկ կուգամ բուճերով (գուլպա), /Միփնա սարի քարին տակ, /Քեզ կը գտնեմ գիշերով» (նույն տեղում, էջ 535):

⁷ **Арутюнян Н.**, Биаинили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Изд. АН Арм ССР, Ер., 1970, стр. 109, пр. 46.

⁸ **Սրվանձոյանց Գ.**, նշվ. աշխ., էջ 53:

⁹ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (այսուհետև՝ ՀԺՊՔ), հ. I, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1981, էջ 34 և ծան. 17, էջ 32, 34 ծան. 19:

Միփանը: Ն. Հարությունյանը, ով դրանք նախապես համարում էր տարբեր անձանոթ լեռներ¹⁰, հետո Ադդուրուն Միփանն համարեց¹¹, ապա Ադդուրուն և Էրիթիան նույնացրեց Միփանի հետ, սրան առնչելով նաև «Միերի դռան» ուրարտական արձանագրության մեջ գիշատակված Թեյշեբայի սրբավայր քաղաք Էրիթիան՝ սրա անվան E-ri-di-ahնարավոր ընթերցմամբ¹²: Ս.Հմայակյանի կարծիքով ևս «Էրիդիա քաղաքը տեղադրվում է Վանա լճից հյուսիս, Միփան սարի վրա»¹³: Եթե ճիշտը այս ընթերցումն է, ապա քաղաքի անունը այլ ծագում էր ունենալու, քան Eritia-ն: Նկատի առնենք նաև, որ Eritia անունով մեկ ուրիշ լեռ հիշատակում է նաև Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը: Իսկ դրանում ոչ մի արտառոց բան չկա, որ Ասորեստանի տարբեր թագավորներ նույն անունը կրած տարբեր լեռներ են հիշատակում: Օրինակ, նույն Միփանը Փավստոս Բուզանդի երկում¹⁴, Գրիգոր Նարեկացու «Յարութեան» տաղում¹⁵, ժողովրդական «Դլե յաման» երգում¹⁶ Արարատ լեռան նման *Մասիս* է կոչվում («Աշխարհացոյց»-ում՝ *Նեխ-Մասիք*)¹⁷: Ուրեմն, ոչ միայն որևէ լեռ կարող էր տարբեր անուններով հայտնի լինել, այլև տարբեր լեռները միևնույն անվամբ: Այս հանգամանքի անտեսումն է պատճառ դարձել Էրիթիա լեռան տեղորոշման հարցում իրարամերժ կարծիքների առաջացման: Անուշադրության է մատնվել այն հանգամանքը, որ այս լեռնանունն հիշատակողները տարբեր ժամանակներում ապրած և տարբեր արշավուղիներով Հայաստան թափանցած թագավորներ են եղել, ուստի և նրանց տեսած Էրիթիա անունով լեռները միևնույն լեռը լինել չէր կարող:

Սարգոն II-ը (մ.թ.ա. 721-705 թթ.) Ուրարտուի Սանգիբուտու նահանգից կենտրոնական Արմարիլի նահանգ տանող ճանապարհին է հիշատակում մյուս Էրիթիան, որն այսպիսով գտնվելու էր Արամեի արքայանիստ Արձաշկուից (Aršašku-Arzašku) ոչ թե արևմուտք, ինչպես է Միփանի դեպքում, այլ՝ հյուսիս-արևելք: Իսկ Արամեի արքայանիստը պատմական Արձեշն էր Վանա լճի հյուսիս-արևելյան ափին¹⁸(հմմտ.Aršašku և *Արձեշ* < *Արձեշ*՝ ճ-շ < ծ-շ մասնակի առնմանությամբ): Ն. Ադոնցը ոչ միայն Սալմանասար III-ի հիշատակած Էրիթիան է նույնացնում Սարգոն II-ի հիշատակածի հետ, այլև այստեղ պատմական

¹⁰ **Арутюнян Н.**, Биайнили, էջ 115, ծան. 72.

¹¹ Նույն տեղում, էջ 108, ծան. 45:

¹² Նույն տեղում, էջ 109, ծան. 49:

¹³ **Հմայակյան Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, Հայաստանի ԳԱ հրատ., Եր., 1990, էջ 112, ծան. 92:

¹⁴ Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Բնագիրը Ք. Պատկանյանի, Երևանի համալսարանի հրատ., Եր., 19871, գիրք Գ, գլ. ի:

¹⁵ «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», Երևանի համալսարանի հրատ., Եր., 1979, էջ 40-41:

¹⁶ «Երգարան», կազմեց Վ. Սամվելյան, Հայպետհրատ, Եր., 1949, էջ 176:

¹⁷ **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1963, էջ 72, 107:

¹⁸ **Каргезян О.**, Локализация урартского царского города Арцашкы, «ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1976, թիվ 5, էջ 95-96:

Ծաղկանց (Ալադադ) լեռնաշղթայում էր տեղորոշում նաև Ադդուրուն¹⁹: Վերջինի այսպիսի տեղորոշումը անհավանական էր, բայց ճիշտ էր Ն. Ադունցը, երբ գրում էր. «Իրիտիան կազմում է Ալադադի մի մասը, որտեղից սկիզբ է առնում Եփրատի բազմաթիվ ակունքներից մեկը»²⁰: Բնականաբար, խոսքը Սարգոնի հիշատակած Eritia-Iritia-ի մասին է:

Հ. Մանանդյանը ևս Սարգոն II-ի հիշատակած Էրիթիա/Իրիտիան իրավամբ համարում է Ծաղկանց/Ալադադ լեռնաշղթայի գագաթներից մեկը: Սարգոն II-ի «Լուվրի աղյուսիկի» համաձայն, Ասորեստանի այս արքան Ուրարտուի դեմ ուղղված իր արշավանքի միջնամասում ռազմական ճամբար էր դրել «Արծաբիա և Իրտիա բարձր լեռների» միջև: Հ. Մանանդյանն այս վերջինը համարում է Ալադադի լեռնաշղթան²¹, իսկ առաջինը՝ Արծաբիան լինելու է Հայկական Պարի արևելյան մասը՝ գույգ Մասիսներով²²: Ըստ Սարգոն II-ի, սրանց միջև տարածությունը կազմում էր 12 բերու (1 բերուն հավասար էր մոտ 7-8 կմ)²³: Եթե Սարգոնի Էրիթիայի տեղորոշման հարցում նա իրավացի է, ապա նույնը չի կարելի ասել Սալմանասար III-ի հիշատակած Էրիթիայի և Ադդուրուի դեպքում, որոնցից վերջինը նույնիսկ համարում էր «Ալադադ լեռնաշղթայի արևմտյան կամ հարավ-արևմտյան ճյուղավորումներից մեկը»²⁴: Ինչպես վերևում նշվեց, Ադդուրուի նույնությունը Սիփանի հետ ուրարտագիտության մեջ կասկած չի հարուցում, բայց այնտեղ էլ ընդունված է մեկ Էրիթիայի գոյությունը: Ծաղկանց լեռների հետ նույնացող երկրորդ Էրիթիայի մասին խոսք չկա:

Adduru և Eritia լեռնանունները՝ ստուգաբանորեն

Սիփանի Adduru անվան ստուգաբանության հարցում մեզ համար ուղենիշ է ծառայում ինքը՝ Սիփան բարձր և առանձնակի կանգնած լեռը իր կոնաձև գագաթով: Նկատի առնելով հ.-ե.*d>հայ.տօրինաչափ անցումը (հմմտ. սեպ.Dajaeni/Diauhi և հայ.Suyj), սեպագրության կրկնակի d-երի տակ միայն մեկը տեսնելու հնարավորությունը (հմմտ.Arramu//Արամ-) և Adduru-ի վերջածայն u-ն հայերեն սեռական հոլովի վերջավորության համարելու հավանականությունը (հմմտ. գրաբ. -ոյ), այս լեռնանվան հիմքում կարող ենք տեսնել հայերեն *ատուր/ատոր* բառի *adur/ador նախաձևը: *Ատուր*-ը «Քրիստոսի խաչափայտի առաջին բևեռի անունն» էր, որը «մեխ» նշանակությամբ «այժմ էլ

¹⁹ Ադունց Ն., նշվ. աշխ., էջ 86:

²⁰ Նույն տեղում, էջ 89:

²¹ Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Айпетрат, Ер., 1956, стр. 55.

²² Պետրոսյան Ս., Արարատյան լեռների հին անունների մասին, «Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր», Նվիրվում է Հ. Աճառյանի 135-ամյակին, «Էլդորադո» հրատ., Գյումրի, 2011, էջ 8-10:

²³ Манандян Я., նշվ. աշխ., էջ 56:

²⁴ Նույն տեղում, էջ 32:

պահված է Վանա բարբառում *ատոր* ձևով»-գրում էր Հ. Աճառյանը²⁵: Սրանից գրական ճանապարհով պիտի ստեղծված լինեն Խաչափայտի երկրորդ և երրորդ մեխերի անունները: Երկրորդ մեխի *թատուր* անունը մեզ հասած տեսքով է մտել Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»²⁶ և Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»²⁷: Վերջինում բառահոդվածն ունի հետևյալ լրացումը. «Թերևս երբայական ծագման բառ, բայց բուն աղբյուրը չի հավաստված»²⁸:

Եթե Խաչափայտի առաջին մեխը՝ *ատուր*, մեր այբուբենի առաջին տառով՝ *ա*-ով սկսվող անուն ունի (*ա*-ն հենց «առաջին» է նշանակում), իսկ երրորդ մեխը կոչվել է *գատուր*՝ *գ*-ով սկսվող անուն ունի (*գ*-ն նաև «երրորդ» է նշանակում), ապա բնական է ենթադրելը, որ Խաչափայտի երկրորդ մեխը *բ*-ով սկսվող անուն էր ունենալու, քանի որ *բ*-ն մեր այբուբենի երկրորդ տառն է և «երկրորդ» էլ նշանակում է: Այս դեպքում երկրորդ մեխի անունը լինելու էր ոչ թե *թատուր*, այլ **բատուր*: Կարծում ենք, որ արտագրող գրիչն իր ձեռքի տակ եղած գրչագրի օրինակում *բ*-ն *թ* է ընթերցել և սրա ձեռագիրն է դարձել տպագիր օրինակի հիմքը: Իսկ տպագիր աշխատությունը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ն է (Կ. Պոլիս, 1729 թ.)²⁹: Ամենայն հավանականությամբ, Գ. Տաթևցին է եղել *ատուր*-ի օրինակով **բատուր* (>թատուր) և *գատուր* բառերի հորինողը:

Մարդու գործածած նախնական մեխերը փայտից էին, ուստի *ատուր* բառը նախապես «փայտե մեխ» է նշանակել: Հմմտ. *տարգալ* բառի սկզբնական «փայտե գդալ» նշանակությունը³⁰: Փայտե մեխերի գոյությամբ էլ պայմանավորված է եղել նրանց *ատուր* անունը: Մեր կարծիքով, *ատուր* < **ա-տոր* բառի **տոր* արմատը ծագում է հ.-ե. *doru* «ծառ, փայտ» նախաձևից հ.-ե. *d* > *h* *այ.տ* անցումով և նախահավելվածական *ա* ձայնավորի հավելումով: Բառում *տ* բաղաձայնին նախորդած *ա* նախահավելվածի համար հմմտ. *ատաղձ* (< *ա-տաղ-ձ*) և *ատամն* (< *ա-տամ-ն*) բառերի օրինակը³¹: *Ատուր/ատոր* բառի արմատակիցներից իմաստով նրան ավելի մոտ են *տորգ* «ոստայն», *տորն* (< *տոր-ն*) «սանդի կոթ» և *տարգալ* բառերը³², որոնց նշող իրերը ամուր փայտից էին լինում:

Միփանին տրված և սեպագիր *Adduru* տեսքով հայտնի դարձած հնագույն անունը հետագայում իր տեղը զիջել է նույնաբնույթ այլ անունների: Ըստ երևույթին դա կապված է

²⁵ Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Երևանի համալսարանի հրատարակություն, հ. I, Եր., 1971, էջ 289, Գ. Ջահուկյանը համարում է «փոխառություն, բայց բուն աղբյուրը չի հավաստված» (Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, այսուհետև՝ ՋՍԲ, «Ասողիկ» հրատ., Եր., 2010, էջ 151):

²⁶ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 157:

²⁷ ՋՍԲ, էջ 259:

²⁸ Նույն տեղում:

²⁹ ՀԱԲ, հ. I, էջ 56:

³⁰ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 384:

³¹ ՀԱԲ, հ. I, էջ էջ 284-285, 285-286, ՋՍԲ, էջ 81-82:

³² ՀԱԲ, հ. IV, էջ 384, 426:

եղել նրա հիմքում ընկած և «բևեռ, մեխ, սեպ» նշանակած հայերեն բառի ժողովրդական լեզվից դուրս մղվելու հետ: Պատահական չէ, որ *ատուր*-ը միայն Վանի բարբառում է պահպանվել *ատոր* ձևով և «մեխ» նախնական նշանակությամբ: Միփանի սեպագրային մյուս անվան՝ Eritia-ի հիմքում մենք հակված ենք տեսնելու հայերեն *երիթ* «մեծ սեպ» բառը: Սրա սկզբնական Irtia, Iritia ընթերցումները հետագայում ճշգրտվեցին որպես Eritia հմմտ. Երևանի սեպագրային անվան Irpuni, Irbuni, Er(e)buni³³ ընթերցումները: *Երիթ* բառի հին ստուգաբանությունները բերած Հ. Աճառյանը դրանք ոչ գիտական՝ անհավաստի է համարում³⁴: Գիտական ստուգաբանություններին անդրադարձած Գ. Ջահուկյանը գրում է, որ կամ այն ծագում է հ.-ե. **urit-* նախաձևից (հ.-ե. **uer-* «պատռել, ճեղքել» արմատ), կամ **ret-*ից (հ.-ե. **rei* «պատռել, քերծել» արմատ), որն «ավելի քիչ հավանական է»³⁵:

Մեր կարծիքով, հայերեն *երիթ* և *արդն* բառերը արմատակիցներ են: *Արդն*-ի առթիվ է. Աղայանը գրում է. «նա ամուր փայտի ձող էր՝ սուր ծայրով կամ ազուցված սուր սլաքով (տեգով): Ըստ այսմ *արդն* բառը ծագում է հնդ. **rēt-*, **rōt-*, **rət-* արմատի ստորին ձայնդարձով ձևից (**rət*), t-ն օրինաչափորեն ձայնեղացել է ձայնորդից հետո (rt>րդ) և սկզբից ավելացել է *ա* ձայնավորը *ր*-ից առաջ: Ցեղակից բառերից մերին առավել մոտ են հին բարձր գերմ. *ruota*, գերմ. *Rute* «գավազան, ձող», հին եկեղեցասլավոնական *ratište*, *ratovište* «նիզակաբուն»... Հնդեվրոպական արմատն ունեցել է «ձող, բարակ ծառաբուն» իմաստը, որից և զարգացել են «գավազան, նիզակաբուն» և մեր *արդն*-ի իմաստները»³⁶: Իսկ մեր *երիթ*-ի դեպքում՝ «մեծ սեպ» իմաստը: Սրանից բացի հ.-ե. **ret-*ից ծագած *ա* նախահավելվածով ունեցել ենք մի բառ ևս՝ **արիթ*-ը: Այն առանձին մեզ չի հասել, բայց նրանից ածանցյալ **արթան*-ը (<*արիթ-ան) մեզ հայտնի է դարձել արաբ մատենագրության մեջ ավանդված *al-artan* ձևով³⁷: Արաբներն այդպես էին կոչում հարավային Հայաստանի ասպատակիչ, արաբ զորավար Յուսուֆին սպանած խութեցիներին: Բառի հայերեն բուն իմաստը «աշտեավոր» է՝ **արիթ* «աշտե, կարճ նիզակ» բառից: Սա այն զենքն է, որն ըստ Թովմա Արծրունու, խութեցիները «զենս աշտեայս հանապազ կրելով ընդ ինքեանս՝ ի պատրաստութիւն գազանացն, որք ի լերինն բնակեն»³⁸:

Մեր *երիթ*-ը ծագում է հնդեվրոպայան արմատի վերին՝ **rēt-* ձայնարձից և նախահավելվածական ձայնավոր ունի ոչ թե *ա*-ն, այլ *ե*-ն, որը նույնպես օրինաչափ է: Բնականաբար, *երիթ* հնչումով բառը լեռնանուններում հայտնվել է ոչ թե մ.թ.ա. IX-VIII

³³ Իսրայելյան Մ., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական և հնագիտական տվյալների), «Հայաստան» հրատ., Եր., 1971, էջ 10-11:

³⁴ ՀԱԲ, հ II, էջ 55:

³⁵ ՋՍԲ, էջ 225:

³⁶ Աղայան Է., Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1974, էջ 32:

³⁷ Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, изд. АН АрмССР, Ер., 1977, стр. 142, пр. 101, стр. 175, 194, пр. 73.

³⁸ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Բնագիրը հրատ. պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1985, դպ. Բ, գլ. է:

դարերում, երբ դրանք տեղ են գտել Հայկական լեռնաշխարհին վերաբերող ասորեստանյան արձանագրություններում, այլ շատ ավելի վաղ: Դրա մասին է վկայում նաև բերված լեռնանունների *-ia* վերջնամասը, որը ծագում է *h.-ե.*-iio/*-iā* վերջածանցից և հայերենում *-ի* ձևով հանդես է գալիս թե՛ որպես վերջածանց և թե՛ որպես տեղանվանակերտ: Հիշենք ինչպես հայերեն *արի, ամայի, գերի, կոզի, ձրի* բառերը³⁹, այնպես էլ իսթական արձանագրությունների *Alzija, Arnija, Arzija*⁴⁰, ուրարատական արձանագրությունների *Alqania, Alia, Alluria*⁴¹ և *Լօռի, Կարբի, Կումայրի, Ուշի, Փարպի* տեղանունները Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերից:

Միփան լեռան հետին անունների ստուգաբանությունները

Միփան լեռը վաղ միջնադարում հայտնի է եղել *Նեխ-Մասիք* անունով, որով էլ տեղ է գտել «Աշխարհացոյց»-ում⁴²: Ի՞նչ է նշանակում *Մասիք//Մասիս* անվանը նախորդած այս *նեխ*-ը: Մեր կարծիքով, նրա իմաստը բացահայտելու բանալին տալիս է ինքը՝ Միփան լեռը իր առանձնակի կանգնած տեսքով և *Նեխ-Մասիք* անվանը նախորդած և հաջորդած իր անունների բնույթով: Ըստ այսմ, այս լեռնանվան սկզբնական **Մեխ-Մասիք* ձևն է, որ *Մ-Մ>Ն-Մ* տարնմանությամբ դարձել է *Նեխ-Մասիք*: *Մեխ* «մեխ, բևեռ» բառը միջին պարսկերենից (պահլավերեն) փոխառյալ բառ է և մինչև լեռնանվան մեջ արտացոլվելը լայնորեն տարածված էր լինելու հայոց լեզվում: Դրա մասին է խոսում *մեխակ* ծաղկանունը, որի հիմքում նույնպես միջին պարսկերենից փոխառյալ նույն «մեխ» արմատն է⁴³:

Ինչպես Միփանի *Eritia* անվան հիմքում մենք տեսնում ենք *երիթ* «մեծ սեպ» բառը, այնպես էլ Գ. Ջահուկյանը, կարծես թե, նրա *Միփան* (<*սեպ-ան?) անվան մեջ փորձել է տեսնել *սեպ* արմատական բառը: Ընդ որում, նա բերում է բառի պարունակած բոլոր իմաստները՝ «սեպ, երիթ, ցցվածք, ժայռ, լեռնագագաթ», ապա գրում. «Թերևս փոխառություն իրանական աղբյուրից» և եզրակացնում. «Թերևս, հավանաբար, այստեղից է *Միփան* լեռնանունը»⁴⁴: Հայտնի է, որ հայոց հին տոմարի օրանուններում ընդգրկված են նաև հայոց ամենապաշտելի լեռների անունները: Դրանցում են լեռնաշխարհի ամենաբարձր լեռան *Մասիս*, իր բարձրությամբ երրորդ լեռան *Արագած* և վերջինիս իրենց բարձրությամբ զիջող այլ լեռների անուններ: Տարօրինակ է, որ դրանց շարքում բացակայում է իր բարձրությամբ լեռնաշխարհի երկրորդ լեռան՝ Միփանի անունը:

³⁹ ՋՄԲ, էջ 806:

⁴⁰ **Քոսյան Ա.**, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ իսթական աղբյուրների), ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2004, էջ 33, 41, 42:

⁴¹ **Арутюнян Н.**, Топономика, էջ 20, 21, 23.

⁴² **Երևմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 72, 107:

⁴³ ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 294:

⁴⁴ ՋՄԲ, էջ 676: *Միփան*-ի երկրորդ բաղադրիչ *-ան*-ը հայտնի վերջածանցն ու տեղանվանակերտն է: Տեղանուններից հմտ. *Դերջան, Երեւան, Թորդան, Նկան, Շաւարշան, Սեւան*:

՝Լեռնանուն/օրանունների շարքում կա մի աղավաղված անուն՝ *Սեփն*-ը: Այն մեր մեջ կասկած է առաջացնում, որ դրա տակ կարող է թաքնված լինել *Սիփան* անվան ավելի հին մի ձև: Սովորաբար, այդ աղավաղյալ լեռնանունը վերականգնում են *Սիմ* տեսքով⁴⁵: Բայց Սասնա լեռների (Հայկական Տավրոսի կենտրոնական մասը) Սիմ գագաթի բարձրությունը չի հասնում 3.000 մետրի, երբ Սիփանինը անցնում է 4.400 մետրից: Բացի դրանից, Սիփանը, ի տարբերություն Սիմի, համահայկական պաշտամունքի արժանացած լեռ էր, որի մասին է խոսում ուրարտական դարաշրջանում ամպրոպային Թեյշեբա աստծու երկու գլխավոր սրբավայրերից մեկի՝ այնտեղ գտնվելու փաստը: Ընդ որում, *Սիմ* լեռնանունն իր դյուրին արտասանությամբ և V դարից հայտնի իր պարզ գրությամբ անհնար էր, որ աղավաղվեր և բանավոր խոսքում կամ գրչագրերում վերածվեր *Սեփն*-ի:

Հակառակ Սիմ լեռան, Սիփանը իր *Սիփան* անվանը որպես նախորդ ունեցել է արտասանության և գրության մեջ որոշակի անհարթություն դրսևորող մի անուն: Վերևում բերված ժողովրդական մի երգում և Գ. Սրվանձտյանցի հիշատակած բարբառային բառերի շարքում հանդիպում ենք *Սիփնա սար//Սիփանա սար* բառակապակցությանը⁴⁶: Երկու դեպքում էլ լեռնանունը (որպես *սար* գոյականի որոշիչ) գործածված է սեռական հոլովով, որի ուղղական հոլովը ունենալու էր **Սեփն* տեսքը: **Սեփն*>սեռ. հոլ.*Սիփան*. հմմտ.*բուռն*>*բռան*, *գառն*>*գառան*, *դուռն*>*դռան*, *եզն*>*եզան* և այլն:*Սիփան*-ը սրա սեռական հոլովի **սիփան* ձևից է, որից էլ նոր սեռական հոլովի ստեղծումով՝ *Սիփանա(յ)*⁴⁷:*Սեփն* աղավաղյալ օրանունը *Սիմ*-ի հետ համադրելով հանդերձ, Է. Աղայանը այն համարում էր «հավանաբար գրչական աղավաղում»⁴⁸: Կարծում ենք, որ աղավաղումն առաջացել է **Սեփն*-ի *փ* տառի ձախ մասնիկի՝ նախորդ *է* տառի աջ մասնիկին միանալով, որով *փ*-ն ընկալվել է *ի*, այսինքն՝ **Սեփն*>*Սեփն*>*Սեփն*: *Սիփան* լեռնանվան **Սեփն* նախաձևը նույնական չլինելով ենթադրյալ իրանական ծագումով *սեպ* բառի հետ, վերջինից տարբեր, բայց նրան արմատակից ու նույնիմաստ հիմք է բացահայտում: Չենք բացառում, որ հնչյունական տարբերությունը կարող էր առաջացած լինել թաբուի կիրառման պատճառով.⁴⁹ չէ՞ որ Սիփանը սրբազան լեռ էր:

Ինչպես տեսնում ենք, Սիփան լեռան այս անունը ևս իր նախորդների նման նույնաբնույթ է: Դրանք բոլորը մեր նախնիների առասպելաբանական պատկերացումների և լեզվամտածողության արգասիքն են, թեև ստեղծվել են տարբեր դարաշրջաններում:

⁴⁵ **Բաղայան Հ.**, Օրացույցի պատմություն, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1970, էջ 100 և ծան. 12: Աղայան Է. Ակնարկներ հայոց տոմարների պատմության, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1986, էջ 77:

⁴⁶ **Սրվանձտյանց Գ.**, նշվ. աշխ., հ. I, էջ 570, 578:

⁴⁷ *Սիփանա* ձևից էլ քրդ. *Սարե Սիփանե* (տե՛ս **Սրվանձտյանց Գ.**, նշվ. աշխ., հ. I, էջ 55):

⁴⁸ **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 79:

⁴⁹ Թաբուի պատճառով *էարջ*, *գայլ*, *օձ* բառերում հնդեվրոպական նախաձևերից եղած ոչ օրինաչափ հնչյունական փոփոխությունները (տե՛ս ՀԱԲ, հ. I, էջ 334, 512, հ. IV, էջ 611-612):

Եզրահանգումներ

1. Adduru և Eritia սեպագիր անուններով լեռների տեղորոշման հարցում գիտության մեջ գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Պատճառը եղել է անտեսումը այն հանգամանքի, որ Eritia անվամբ Ասորեստանի տարբեր թագավորներ հիշատակել են տարբեր լեռներ՝ ոչ թե նույն լեռը, այլ Սիփան լեռնազանգվածը և Ծաղկանց լեռնաշղթան:

2. Adduru լեռնանվան հիմքում հայերեն *ատուր* «Խաչափայտի առաջին մեխը» (բրբ. *ատոր* «մեխ») բառի նախաձև **adur-/*ador-*ն է: Քանի որ նախնական մեխերը ոչ թե մետաղից, այլ փայտից էին լինում, ուստի այս նախաձևի մեջ մենք տեսնում ենք հ.-ե. **doru-* «փայտ, ծառ» արմատը (հմմտ. հայ. *տորգ, տռոն, տարգալ*) և նախահավելվածական *ա* ձայնավորը (հմմտ. *ատաղձ, ատամն*):

3. Միջնադարում *ատուր*-ի հենքի վրա ստեղծվել են **բատուր* «Խաչափայտի երկրորդ մեխը» (մեր կարծիքով, գրչագրական վրիպակով վերածված *թատուր*-ի՝ *թ>թ*) և *գատուր* «Խաչափայտի երրորդ մեխը» բառերը՝ *ա, բ, գ* այբբենական հերթականությամբ և «առաջին, երկրորդ, երրորդ (մեխ)» իմաստներով:

4. Eritia լեռնանվան հիմքում հայերեն *երիթ* «սեպ, մեծ սեպ» բառն է՝ արմատակիցը հնդեվրոպական ծագումով *արդն* «սրածայր, ձող» (ըստ Է. Աղայանի հ.-ե. **rēt-/*rət-* արմատից) բառի: *Երիթ*-ում *ե*-ն նախահավելվածական ձայնավոր է:

5. «Մեխ» և «սեպ» նշանակող արմատական բառերն իրենց հիմքում ունեն նաև Սիփան սարի մեզ հայտնի մյուս անուններից վաղմիջնադարյան *Նեխ-Մասիք*-ը և հետին *Սիփան*-ը: *Նեխ-Մասիք* < *մեխ-Մասիք*՝ իրանական ծագումով *մեխ* «մեխ, գամ» (*մ-մ>ն-մ*) տարնմանություն և *Սիփան* < *սեփն* (ըստ Գ. Ջահուկյանի, հավանաբար իրանական փոխառություն համարվող *սեպ* «սեպ, երիթ» բառն է):

6. Սիփան լեռանը տրված այս անունների նույնաբնույթ լինելը պայմանավորված է եղել ինչպես իր տեսքով՝ կոնաձև ձյունապատ գագաթով երկինք հասած վեհապանձ լեռ, այնպես էլ իրեն շրջապատած նստակյաց բնակչության հայախոս լինելու հանգամանքով:

Օգտագործված գրականության ցանկ

Ադոնց Ն., Հայաստանի պատմություն. Ակունքները X-VI դդ. մ.թ.ա., «Հայաստան» հրատ., Եր., 1972:

Աղայան Է. Ակնարկներ հայոց տոմարների պատմության, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1986:

Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1974:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Երևանի համալսարանի հրատարակություն, հ. I, Եր., 1971:

Բաղայան Հ., Օրացույցի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1970:

«Երգարան», կազմեց Վ. Սամվելյան, Հայպետհրատ, Եր., 1949:

- Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1963:
- Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Բնագիրը հրատ. պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1985:
- Իսրայելյան Ս., Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական և հնագիտական տվյալների), «Հայաստան» հրատ., Եր., 1971:
- «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. I, Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1981:
- «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. I, Եր., 1971:
- «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», Երևանի համալսարանի հրատ., Եր., 1979:
- Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Հայաստանի ԳԱ հրատ., Եր., 1990:
- Պետրոսյան Ս., Արարատյան լեռների հին անունների մասին, «Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր». Նվիրվում է Հ. Աճառյանի 135-ամյակին, «Էլդորադո» հրատ., Գյումրի, 2011:
- Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Եր., 2010:
- Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1978:
- Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Բնագիրը Բ. Պատկանյանի, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1987:
- Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ իւեթական աղբյուրների), ՀՀ ԳԱԱ հրատ., Եր., 2004:
- Арутюнян Н., Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Изд. АН Арм ССР, Ер., 1970.
- Арутюнян Н. В., Топонимика Урарту, Изд. АН Арм ССР, Ер., 1985.
- Георгиев В., Исследования по сравнительно-историческому языкознанию (Родственные отношения индоевропейских языков), изд. Иностранной литературы, М., 1958.
- Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники об истории Урарту, “Вестник древней истории”, 1951, №№ 2, 3, 4, надп. № 27.
- Карагезян О., Локализация урартского царского города Арцашку, «ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1976:
- Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Айпетрат, Ер., 1956.
- Мурзаев Э., Очерки топонимики, изд. “Мысль”, М., 1974.
- Тер-Гевондян А., Армения и Арабский халифат, изд. АН АрмССР, Ер.,

РЕЗЮМЕ
О КЛИНОПИСЬНЫХ ОРЕНИМАХ ADDURU И ERITIA
Петросян Саргис

Согласно надписи на монолите из Тушхана, царь Ассирии Салманасар III (859-824 гг. до н. э.), когда он подошел к Арзашку – царскому городу Араму урартского, последний бежал и поднялся на гору Аддуру. Предполагают, что это гора Сипан (Сюпхан-даг), которая находится к северу от озера Ван. Сражение между войсками Салманасара и Араму закончилось поражением армии Араму. После победы ассирийские войска поднялись на гору Эритиа, которая как предполагают урартоведы, тот же горный массив Сипан. В Урарту существовали две разные горы под одним и тем же названием Эритиа: одна на севере, северо-восточнее Арзашку, на горном хребте Цахканц (Аладаг), а другая западнее того же Арзашку, на горном массиве Сипан. Известно, что относительно языковой принадлежности населения древних стран важное значение имеют исследования географических названий, особенно названия больших рек и гор. В рассматриваемой статье все оронимы (названия гор) имеют индоевропейско-армянское происхождение. 1. Adduru ср. арм. ւանք/ւանքր “гвоздь” (и.-е. *doru- “дерево, дрва”), 2. Eritia ср. арм. երիթ. “кол, клин” (< и.-е. *rēt-, суфф. *-ija> арм. -ի), 3. Երիթ-Մանիք<*Մեթ-Մանիք (иранизм, частичная диссимиляция), где *Մեթ<մեթ “гвоздь”, 4. Միփան ср. арм. մեփ “кол”/*մեփն (род.падеж * միփան>ороним Միփան).

Ключевые слова: Adduru, Eritia, Сипан, Масис, Нех-Масик, *атор/атур* “гвоздь”, *ерит* “кол, клин”, *сел* “клин”, *мех* “гвоздь”, индоевропейский, ороним.

SUMMARY
ON THE CUNEIFORM ORONYMS ADDURU AND ERITIA
Petrosyan Sargis

According to an inscription on a monolith from Tushkhan, when Assyrian king Salmanasar III (859-824 B.C.) approached Arzashku, the royal city of Aramu of Urartu, the latter fled and climbed mountain Adduru. This is presumed to be mountain Siphon (Syuphan-dagh), which lies north of Lake Van. The battle between the armies of Salmanasar and Aramu ended with the defeat of Aramu's army. After the victory, the Assyrian troops climbed mountain Erythia, which as urartologists suggest, was the same mountain Siphon. In Urartu there were two different mountains with the same name Erythia: one in the north, northeast of Arzashku, on the Tsakhkants (Aladag) mountain range, and the other west of the same Arzashku, on the Siphon mountain range.

It is known that regarding the linguistic affiliation belonging of the population of ancient countries, studies of geographical names, especially the names of large rivers and mountains, are particularly important. The subject matter of the article is the oronyms. It is noteworthy that the mentioned oronyms (names of mountains) are of Indo-European-Armenian origin. 1. Adduru cf. Armenian սսոոր/սսոուր “nail” (<i.-e. *doru- “tree, wood”), 2. Eritia cf. Armenian երիթ. “stake, wedge” (< i.-e. *rēt-, suff. *-iia > Armenian -ի), 3. Նեխ-Մասիք < *Մեխ-Մասիք (Iranianism, partial dissimilation), where *Մեխ<մեխ “nail”, 4. Սիփան cf. Armenian սեպ “stake”/*սէփն (genitive case *սիփան>oronym Սիփան).

Key words: Adduru, Eritia, Sipan, Masis, Nekh-Masik, *ator/atur*“nail”, *erit* “stake, wedg”, *sep*“wedge”, *mekh* “nail”, Indoeuropean, oronym.

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ «S + V + S» (ՅՈՅ, ԻԱԻ, ԻՈԻ) ԿԱՂԱՊԱՐՈՎ
ԵՌԱԲԱՐԲԱՌԱԿԵՐՊԵՐԻ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Վարդան Պետրոսյան

Երևանի պետական համալսարան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության

ամբիոնի դոցենտ

vz.petrosyan@ysu.am

DOI: 10.54412/2953822X-2023.1-234

Բանալի բառեր – եռաբարբառակերպ, հին հայերեն, սկզբնային վաղնջահայերեն, ուշ վաղնջահայերեն, եբրայերեն, միջին պարսկերեն, փոխառություն

«S + V + S» տիպի կաղապարով եռաբարբառակերպերը՝ *յոյ, լաւ, լու*, մեկն են հին հայերենի՝ հինգ կաղապարային տիպերի մեջ բաշխվող տասնինը եռաբարբառակերպերից (հմմտ. 1. «V₁+V₂+S»՝ *եայ, եաւ, էայ, էու, իայ, իու*, 2. «S + V + S»՝ *յոյ, լաւ, լու*, 3. «S₁+V+S₂»՝ *յաւ, յեւ, յիւ, յու, լոյ*, 4. «V + S + V»՝ *ուո*, 5. «V₁+S+V₂»՝ *ուա, ուե, ուէ, ուի*):

«S + V + S» տիպի կաղապարով եռաբարբառակերպերի տարածամանակյա քննությունը բացահայտում է հետևյալ պատկերը:-

1. *Յոյ* (յօյ) եռաբարբառակերպը հանդիպում է *յոյգ* «վեգ, խաղալու կոճ», *յոյգ* «որոնում, խուզարկություն», *յոյժ* «խիստ, սաստիկ», *յոյլ* «ծույլ, դանդաղկոտ», *յոյս* «ակնկալություն», *յոյր* «գեր, գիրուկ» բառերի կազմում: Նշվածներից *յոյգ-ը* և *յոյժ-ը* իրանական փոխառություններ են. *յոյգ-ը* փոխառություն է մպրսկ. «*yōzδևից, որ ավանդուած չէ», իսկ *յոյժ-ը* նախորդվոր կազմություն է՝ «յ + ոյժ» կառուցվածքով, որի *ոյժ-ը* «գորություն, կարողություն» պագ. (մպրսկ.) *ōž, ōj* «ուժ, զորութիւն» բառից է¹: Գ. Ջահուկյանը վերապահումով («թերևս») հ.-ե. ծագում է վերագրել *յոյլ, յոյս* և *յոյր* բառերին, իսկ *յոյգ-ի* համար հնարավոր է համարել *վէգ-ի* «I. վեգ, կոճ, ճան» տարբերակ լինելը²: Ըստ այդմ. 1) *յոյլ-ը* սերում է **solio-*՝ **sel-* «սողալ, սողոսկել» արմատից» (հմմտ. հինդկ. *sarati*, հիոլնդ. *selid* «սողում է, սողոսկում է», լիտվ. *seleti* «սողոսկել, դանդաղ շարժվել»), 2) *յոյս-ը*՝ «**peuk-*՝ **peu-* «հուսալ» արմատից», որն էլ կապ ունի **peu-* «հետազոտել, հասկանալ» արմատի հետ (հմմտ. հսլավ. *upovati* «հուսալ, հույս դնել», լատ. *puto* «խորհրդածել, հաշիվ անել», ռուս. *numamь* «չարչարել, փորձել»), 3) *յոյր-ը*՝ **pei-ro-*՝ **pei-* «պարարտ լինել, լիքը լինել» արմատից (հմմտ. հինդկ. *pivan-* «պարարտ, ուռած, լիքը») ³: Ըստ այդմ, հյ. *յոյ* եռաբարբառակերպի հ.-ե. համապատասխաններն են՝

¹ Տե՛ս Հյուբշման Հ., Հայերենի քերականություն (այսուհետև՝ ՀՔ), Եր., 2003, էջ 199, 215, Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. III, Եր., 1977, էջ 403-405, 560, Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՍԲ), Եր., 2010, էջ 554, 602:

² Տե՛ս Ջահուկյան Գ., ՀՍԲ, էջ 554:

³ Տե՛ս Ջահուկյան Գ., ՀՍԲ, էջ 554:

**so(l)i-*, **peu-*, **pei-*: Վերջին երկուսի՝ **peu-*, **pei-*, անցումը հյ. *յոյ*-ի պիտի օրինաչափ համարել, քանզի օրինաչափ են հ.-ե. **p*> հյ. *h/j* (հմմտ. **pətḗr* «հայր»>*հայր*, **penkʰe*>*հինգ*, **pau-*>*յաւ* «վերջ, ծայր» և այլն), հ.-ե. **eu-*> հյ. *ոյ* (հմմտ. **bʰeu-li-*>*բոյլ* «խումբ, հոտ», **leuk-*>*լոյս* «լույս» և այլն) անցումները: Ինչ վերաբերում է հ.-ե. **soli-*> հյ. *յոյլ* անցումին, ապա հ.-ե. **s*> հյ. *j* անցման համար հնարավոր է ենթադրել միջանկյալ *h* (հ) աստիճան, ըստ այդմ՝ հ.-ե. **s*> (նխհյ. **h*>) հիյ. *j*, իսկ հ.-ե. **li*> հյ. *լլ* անցման համար՝ դրափոխություն նախագրային հայերենում: *S*> *h* անցումը տիպաբանական տեսանկյունից հավաստված է ինչպես հ.-ե. (հմմտ. հուն. *ἔρπω* (*hérpō*) «սողում եմ», լատ.*serpo, serpens* «օձ», հինդկ. *sarpami* «սողալ», -հ.-ե. **sed-s* «նստել» > հյ. *հեծաւ* «նա նստեց (ձիու վրա)», - հ.-ե. **selk-*>*հեղգ* «ձույլ, դանդաղկոտ», - հ.-ե. **seno-*> հյ. *հին*, հինդկ. *sána-*, ավ. *hana-*, հուն. *ἔνος* (*hénos*) «ծեր» և այլն)⁴, այնպես էլ այլ՝ ոչ հ.-ե. լեզուների (հմմտ. ընդհ. մոնղ. *s>h*. գր. մոնղ. *sara* «լուսին», խորի-բուրյաթ. *hara*, գր. մոնղ. *usun* «ջուր», բուրյաթ. *uhan* և այլն)⁵ դեպքում:

Յոյլ, յոյս և *յոյր* բառերի հ.-ե. ծագումն ընդունելը (իսկ չընդունելու հիմքեր կարծես թե չկան) ինքնաբերաբար հիմք է տալիս ընդունելու նաև, որ *յոյ* եռաբարբառակերպը ևս կազմավորվել է նախագրային հայերենի վաղ փուլերում, թերևս՝ հենց վաղնջահայերենում: Որքան էլ *յոյ*-ի առաջացումն իրանական փոխառություններում կրի ինքնուրույն բնույթ, միևնույնն է, կրկնում է հայերենում արդեն իսկ եղածը:

2. *Իաւ* (յաւ) եռաբարբառակերպը հանդիպում է *աւաւաւ* «ժամանակ, ցերեկ (°)», սրանից *աւ-* նախածանցով կազմված *աւաւաւաւ* «առավոտ», ինչպես նաև՝ *կամաւաւաւ* «գիշերվա ժամը հինգը», *շաղաւաւաւ* «գիշերվա ժամը չորսը» բառերի կազմում: Բառակազմական տեսանկյունից առկա է «գրո բաղադրիչ (/նախածանց / արմատ/) + արմատ + վերջածանց» կառուցվածքային կաղապարը: Այդ բառակազմական կաղապարը, ըստ իս, ընդհանուր առմամբ հնարավոր է դարձնում *աւ* եռաբարբառակերպի տարածամանակյա քննությունը նշված բառերից մեկի, ասենք՝ *աւաւաւաւ*-ի օրինակով:

Հ. Աճառյանն *աւաւաւաւ* բառը թողել է չստուգաբանված⁶: Է. Աղայանն *աւաւաւաւ*-ի արմատը՝ *աւ-* (*աւ-աւ-աւաւ*), բխեցնում է հ.-ե. **sau-* «արեգակ» արմատից՝ նախահունչ **s-*ի անկումով⁷, իսկ Գ. Ջահուկյանը՝ հ.-ե. **aus-* «լուսավորել» արմատից⁸: Մեր կարծիքով՝ *աւաւաւաւ*-ի *աւ-* արմատը կապ ունի *աւր* (*aur*) «օր» (< հ.-ե. **āmōr*)⁹ նշանակող բառի հետ՝

⁴ Տե՛ս *Джаукян Г.*, Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 39, *Серебренников Б.*, Вероятностные обоснования в компаративистике, М., 1974, էջ 140:

⁵ Տե՛ս *Серебренников Б.*, նշվ. աշխ., էջ 140:

⁶ Տե՛ս *Աճառյան Հ.*, ՀԱԲ, I, էջ 256:

⁷ Տե՛ս *Աղայան Է.*, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Եր., 1974, էջ 24-27:

⁸ Տե՛ս *Ջահուկյան Գ.*, ՀԱԲ, էջ 73:

⁹ Ստուգաբանությունն առաջարկել է Ա. Մեյեն, ընդունել են Հ. Հյուբշմանը, Հ. Աճառյանը, Է. Բենվենիստը և Գ. Ջահուկյանը (տե՛ս *Meillet A.*, Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique, Vienne, 1936, էջ 55, *Հյուբշման Հ.*, ՀԲ, էջ 426, *Աճառյան Հ.*, ՀԱԲ, IV, էջ 616, *Бенвенист Э.*, Индоевропейское именное словообразование, М., 1955, էջ 37, 51, *Ջահուկյան Գ.*, ՀԱԲ, էջ 104): Հ.-ե. **āmōr*> հյ. *աւր* «օր» անցման համար

արմատի *-p-*ի անկումով (հայերենի հնչարտաբերությանը խորթ էր երկու ձայնորդի (բաղաձայնի) անմիջական հարևանությունը հնչաշղթայում, առավել ևս՝ միննույն վանկի կազմում, առանց գաղտնավանկի *p-*ով ընդմիջվելու): Ըստ ամենայնի՝ *աւր* և *լոյս* նշանակող բառերի նախահնդեվրոպական (իմա՝ վաղ հնդեվրոպական) նախաձևերը ստուգաբանորեն հարաբերակից էին՝ **aur-* // **aus-*, ինչպես որ հարաբերակից են *լուր* և *լ(ը)ս-*(ել) արմատները՝ *p* // *u* հերթագայվող բաղադրիչներով: Նախահնդեվրոպական փուլում այդ արմատները կարող էին ծագումնային ընդհանուր կապ ունենալ նաև **sau* «արեգակ» նշանակող ձևի հետ¹⁰: Մեզ հետաքրքրող տեսանկյունից կարևոր է, որ՝ 1) առաջարկված ստուգաբանական բոլոր տարբերակներն էլ հակվում են դեպի *h.-ե.* նախաձև(եր), 2) ստուգաբանական բոլոր փորձերում էլ տարբերակվում են բառակազմական միննույն բաղադրիչները, այն է՝ «**առ-** (նախաձանց) + **աւ** (արմատ) + **-աւտ** (վերջածանց)»: Տարբեր են, սակայն, բուն արմատի ստուգաբանական մեկնությունները, այն է՝ *h.-ե.* ո՛ր արմատից է սերում *աւ-*ը, բայց բոլոր երեք տարբերակներում էլ արմատի *z* (յ)բաղադրիչը, որը եռաբարբառակերպ է կազմավորում վերջածանցի *-աւ-* մասի հետ, սերում է *h.-ե.* **u//**ձայնավորաձայնորդական լծորդ տարբերակներից:

Իաւ եռաբարբառակերպի կազմավորման ժամանակը պարզելու համար կարևոր է պարզել նաև *-աւտ* վերջածանցի ծագումը: *-աւտ*-ը հարաբերակից է համարվում *-ուտ* ածանցին¹¹, իսկ վերջինը, վարկածներից մեկի համաձայն, ծագումնաբանորեն կապվում է հուն. *-ώδης* ածանցի հետ (*ἀμαθώδης* «ավազուտ»՝ *ἄμαθος* «ավազ» բառից)¹²: Այս վարկածով առաջնորդվելու դեպքում կարելի է կարծել, որ *աւտ*-ի համար ևս կվերականգնվի *h.-ե.* միննույն նախաձևը, ինչ որ *hյ.* *-ուտ*-ի և հուն. *ώδης*-ի համար, այն է՝ **-ōd-ēs*, որի **-ēs* վերջը հայերենում ընկել է: Ըստ այդմ՝ *աւտ* եռաբարբառակերպի համար կարող է վերականգնվել **uōd-*ը կինչույթնախաձևը, իսկ ամբողջ բառի համար՝ առնվազն նախահայերենի վաղ փուլերում՝ **arauōt* (< **ar-aur-ōt*): Չայնորդին նախորդող դիրքում *h.-ե.* երկար **ō*՝ *hյ.* *ու* անցումը նկատված իրողություն է (հմմտ. **d^hōm-os*՝ *hյ.* *ունն*, **dōr-o* «նվեր, պարզ» > *hյ.* *տուր-ք*, **g^hōlū-k^h-o* «գլուխ» > *hյ.* *գլուխ* (–ոյ)¹³ և այլն): Սակայն *h.-ե.* երկար **ō*-ն տալիս է նաև *hյ.* *ա* (*a*) (հմմտ. **dō->tau-uf* «տալիս եմ»): Հյ. *ա* (*a*) է տալիս նաև *h.-ե.* կարճ **o*-ն (հմմտ. **onomn* > *hյ.* *անուն*, **ok^h-n->ակն* «աչք»): Հետևաբար չպիտի բացառել նաև *h.-ե.* **-ōd->* *hյ.* *-աւտ* անցումը, հնարավոր է՝ *-ուտ*-ի միջանկյալ աստիճանով, այսինքն՝ **-ōd->* *hյ.* (**-ուտ*) *-աւտ*,

ենթադրվել են **amur* > **aumr* > *aur/աւր/* միջանկյալ օղակները: Հյ. բառի գուգահեռը, ըստ Ա. Մեյերի, ունի միայն *հոմերեյան հունարենը*, այն է՝ *ἄμαρ* (սեռ. *ἡμαρος*), նաև *ἀμέρα* և այլն (ն.տ.):

¹⁰ Տե՛ս **Պետրոսյան Վ.**, Ստուգաբանական դիտարկումներ // Հայկազեան հայագիտական հանդես, հ. ԼԳ, Պէրոյթ, 2013, էջ 153-156, նույնի՝ Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015, էջ 313-319:

¹¹ **Աճառյան Հ.**, ՀԱԲ, I, էջ 138:

¹² **Աճառյան Հ.**, ՀԱԲ, I, էջ 138, **Ջահուկյան Գ.**, Հին հայերենի վերջածանցների ծագումը // Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պր. 2, Եր., 1998, էջ 35:

¹³ Տե՛ս **Պեղեքսյան Հ.**, Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 79, **Ջահուկյան Գ.**, ՀԱԲ, էջ 163:

հատկապես որ հյ. *ու* (օս)-ն երկբարբառակերպ էր, այլ ոչ թե պարզ ձայնավոր, և նրա բաղադրիչներն առանձնաբար կարող էին հնչյունափոխվել:

Եթե *շաղալալտ*-ի *շաղ*-ը «ցող, խոնավություն, կաթիլ» արմատական բառ է¹⁴ և ինչպես կառուցվածքային, այնպես էլ իմաստային տեսանկյունից լիովին բացատրելի է *առալալտ*-ի ստուգաբանական քննության կաղապարով, որովհետև նրա կազմում ևս նույն *ալալտ* բառն է, ինչ որ *առալալտ*-ի կազմում, ապա *կամալալտ*-ի բառակազմական, հետևաբար նաև ստուգաբանական քննությունը խնդրահարույց է: Այն է՝ այս բարդության առաջին բաղադրիչն է **կամ** I. «կամք, կամեցողություն» բա՞ռը, թե՞ **կամ** II. «կամ թե, և կամ, և կամ թե» շաղկապը: Ըստ ամենայնի՝ առաջինը, թեպետև իմաստային տեսանկյունից դժվար բացատրելի է նրա առնչությունը *կամալալտ*-ի «գիշերվա ժամը հինգը» նշանակության հետ: Այս վարկածով առաջնորդվելու դեպքում *կամալալտ*-ը կլինի ծագումնաբանորեն տարասեռ բաղադրիչների միացություն: Այն է՝ «**կամ** (<մաբսկ.kām)¹⁵ + **ալ** (< հ.-ե. *ōx) + **-ալտ** (< հ.-ե. *-ōd-))»: Հավանական չենք համարում, որ *կամալալտ*-ի առաջին *ալ*-ը լինի ոչ թե *ալր* «օր» բառի սկզբնաբաղադրիչը՝ *ր* (r)-ի անկումով, այլ *կամ*-ի եզ. գործ. *-ալ* վերջավորությունը՝ *կամալ* «կամքով»: Այս երկրորդ վարկածն իմաստաբանորեն համադրելի չէ նախորդ՝ *ալալտ*, *առալալտ*, *շաղալալտ* բառերի հետ, այն դեպքում, երբ *կամալալտ*-ը՝ որպես ամբողջություն, համադրելի է:

Վերոշարադրյալն ընդհանուր առմամբ հիմք է տալիս ասելու, որ *ալալ* եռաբարբառակերպը. 1) բնիկ հայկական է, 2) կարող էր կազմավորվել հայերենի ձևավորման ամենից վաղ՝ վաղնջահայերենի փուլում: 3. **Իու** (սօս) հանդիպում է մի քանի փոխառյալ հատուկ անուններում (հմմտ. *Բալուրիս*, *Եսթալուլ*, *Յեմալուրթ*, *Շալուրդ*)¹⁶ և *ու* արտաքին հոլովման ենթարկվող *-ալ* վերջով գոյականների և ածականների եզ. թ. սեռ.-տր. հոլովածում (հմմտ. *դալ* «խարդախություն, որոգայթ» - *դալու* (հետևաբար. նախապես ենթարկվել է *n* արտաքին հոլովման), *համբալ* «լուր. հոչակ. համբավ» - *համբալու*, *նալ* «նավ» - *նալու*, *սակալ* «քիչ. նվազ. սուղ» - *սակալու* և այլն)¹⁷:

Նշված հատուկ անուններից և ոչ մեկը Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» չկա: Դրանք չկան նաև Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» եբրայական և հունական, Գ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմության» հունական փոխառությունների ցանկերում¹⁸: Բնական է, որ նշված ձևերը փոխատու լեզվի համապատասխան ձևերի

¹⁴ *Շաղ*-ը դասվում է չստուգաբանվածների մեջ (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀՄԲ, III, էջ 487, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 579): Մեր կարծիքով, պրսկ. *žāl, žāla* «ցող», ավ. *sarəda, szaliti* «սառել», *szalna, szarma* «շաղ, եղյամ» ձևերը հուշում են, որ դրանք պիտի կապ ունենան հիմք-լեզվի *sar- (/ʃar-) «սառել» արմատի հետ և, եթե չունեն ընդհանուրհնդեվրոպական ծագում, առնվազն ընդհանուր են *satəm* խմբի համար:

¹⁵ Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 163, **Աճառյան Հ.**, ՀՄԲ, II, էջ 498, **Ջահուկյան Գ.**, ՀՄԲ, էջ 378:

¹⁶ Անուններն ըստ **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957, էջ 470-486:

¹⁷ *Համբալ*-ը ենթարկվում է նաև *n* արտաքին հոլովման՝ *համբալ-ոյ*, *համբալ-ոց*:

¹⁸ Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1953, էջ 50-51, 63-64, **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 621-624:

գրադարձության (/ տառադարձության) արտահայտություն են, սակայն փոխաստու լեզվի ձևերի և փոխառության ժամանակի պարզաբանման հարցերը վերը նշված պատճառներով կապված են որոշակի դժվարությունների հետ: Դատելով անունների բնույթից՝ կարելի է ենթադրել, որ բոլորն էլ ունեն եբրայական կամ լայն առումով՝ սեմական ծագում: Այն, որ դրանք չկան Գ. Ջահուկյանի հիշյալ ցանկում, հիմք է տալիս մտածելու, որ հայերենին անցել են 5-րդ դ. հետո՝ գրավոր շրջանում: Սակայն ինչպես փոխառության ժամանակի, այնպես էլ փոխաստու լեզվի մասին դատողություններն այս դեպքում ունեն խիստ վարկածային բնույթ: Պարզ է մի բան. այդ հատուկ անունները փոխառություններ են և ըստ ամենայնի՝ ունեն եբրայական ծագում:

Վերոհիշյալ հասարակ անուններից մեկը՝ *նաւ*, բնիկ հայկական է (հմմտ. *նաւ* < հ.-ե. **nāu*- «նավ». սնսկ. *nāu*- «նավ, մակույկ», ավ. *nava*- , հպրսկ. *nāviyā* «նավատորմիդ», մպրսկ. *nāv*, հուն. *ναός*, լատ. *nāvis*, հիբլ. *nau* և այլն)¹⁹, երկուսն իրանական փոխառություններ են (հմմտ. *համբաւ* < իրան. **ham-bav*. *bav*. իստ.-սակ. *pra-vā*- «գրույց» (հ.-ե. **b^ha*- «խոսել», հյ. *բաւ*)²⁰, **սակաւ**. *սակ* «տուրք, հարկ» արմատի եզ. թ. գործ. հլ. ձևն է (<մպրսկ. *sāk* «տուրք». պրսկ. *sān* կամ *sā* «հարկ, տուրք»)²¹):

Դաւ բառի ստուգաբանության հարցում կարծիքները միանշանակ չեն. եթե Հ. Հյուբշմանը և Հ. Աճառյանը հավասարապես հնարավոր են համարել թե՛ բնիկ հնդեվրոպական, թե՛ իրանական փոխառություն լինելու վարկածները²², ապա, ըստ Գ. Ջահուկյանի՝ *դաւ* արմատի առկայությունը *դաւաճան* ձևում վկայում է հոգուտ իրանական փոխառության վարկածի²³:

Սույն քննությունը հիմք է տալիս ասելու հետևյալը. 1) ճիշտ է՝ *ւու* (ուօ) եռաբարբառակերպը վստահելի կերպով հանդիպում է միայն մեկ բառի սեռ-տր. հոլովաձևում՝ *նաւ-ու*, իսկ մյուս բառերն իրանական (կամ ավելի շուտ իրանական) փոխառություններ են, բայց այդ մեկ ձևն էլ բավարար է ասելու, որ նրա առաջին դրսևորումը վերաբերում է հայերենի քերականական կառուցվածքի ձևավորման փուլին՝ մ.թ.ա. 2-րդ հազարամյակին, սակայն կայունացել է հատկապես իրանական փոխառությունների շրջանում, այսինքն՝ նախքան 5-րդ դարը:

Ըստ էության, վերը դիտարկված բոլոր երեք եռաբարբառակերպերն էլ (հմմտ. *յոյ*, *ւաւ*, *ւու*) հայկական իրողություններ են: Նրանցից երկուսի՝ *յոյ*, *ւաւ*, կազմավորումը, պիտի կարծել, վերաբերում է *սկզբնական վաղնջահայերենի* փուլին, իսկ *ւու*-ի կազմավորումը՝ *ուշ վաղնջահայերենի*, որովհետև վերջինը հանդիպում է ոչ միայն փոխառյալ (եբրայական²⁴)

¹⁹ Տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, III, էջ 433, **Գ. Ջահուկյան**, ՀԱԲ, էջ 563: Ըստ Հ. Հյուբշմանի՝ իրանական փոխառություն է (տե՛ս **Հ. Հյուբշման**, ՀՔ, էջ 201):

²⁰ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, ՀԼՊՆԺ, էջ 530, նույնի՝ ՀԱԲ, էջ 442: Հ. Աճառյանը չի ստուգաբանել (տե՛ս **Աճառյան Հ.**, ՀԱԲ, III, էջ 24):

²¹ Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 234, **Հ. Աճառյան**, ՀԱԲ, IV, էջ 158: Գ. Ջահուկյանի ՀԱԲ-ն այս բառը չունի:

²² Տե՛ս **Հյուբշման Հ.**, ՀՔ, էջ 138, 438, **Աճառյան Հ.**, ՀԱԲ, I, էջ 641:

²³ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, ՀԱԲ, էջ 189-190:

հատուկ անուններում և հասարակ անունների քերականական ձևերում, այլն բնիկ հնդեվրոպական *նաւ* բառի սեռ.-տր. հոլովում՝ *նաւու*: Որքան էլ եռաբարբառակերպերի առկայությունը փոխառյալ հատուկ և հասարակ անուններում ինքնուրույն երևույթ է, միևնույնն է, այն կրկնում է հայերենում արդեն իսկ եղածը: Թեպետև *ու*-ի առաջացման ժամանակի հարցն ունի որոշ յուրահատկություն այն առումով, որ այս եռաբարբառակերպը հանդիպում է հնդեվրոպական ծագման միայն մեկ բառի հոլովական ձևում՝ *նաւ-ու*, բայց և այնպես, պիտի կարծել, որ հենց այդ բառի հոլովական հարացույցի համաբանական ազդեցությամբ է ձևավորվել նշված իրանական փոխառությունների հոլովական հարացույցը:

Օգտագործված գրականության ցանկ

- Աղայան Է., Բառաքնական և ստուգաբանական հեագոտություններ, Եր., 1974,
 Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, Եր., 1973, հ. III, Եր., 1977, հ. IV, Եր., 1979,
 Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Եր., 1953,
 Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Եր., 1957,
 Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Եր., 2003,
 Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987,
 Ջահուկյան Գ., Հին հայերենի վերջածանցների ծագումը // Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պր. 2, Եր., 1998,
 Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010,
 Պեդերսըն Հ., Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907,
 Պետրոսյան Վ., Ստուգաբանական դիտարկումներ // Հայկազեան հայագիտական հանդես, հ. ԼԳ, Պեյրուֆ, 2013, էջ 153-156,
 Պետրոսյան Վ., Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Եր., 2015,
 Бенвенист Э., Индоевропейское именное словообразование, М., 1955,
 Джаукян Г., Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982,
 Meillet A., Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique, Vienne, 1936,
 Серебrenников Б., Вероятностные обоснования в компаративистике, М., 1974:

РЕЗЮМЕ
ДИАХРОНИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ДРЕВНЕАРМЯНСКИХ
ТРИФТОНГОИДОВ (jnj, lwl, lnl) ПО МОДЕЛИ «S + V + S»
Петросян Вардан

Трифтонгоиды древнеармянского языка *jnj* (յոյ), *lwl* (լաւ), *lnl* (լոլ) встречаются как в древнееврейских и иранских заимствованиях, так и в составе исконно индоевропейских слов. Правда, *lnl* (լոլ) встречается в грамматической форме только одного слова, имеющего индоевропейское происхождение - *lwl* (լաւ) (в ед.ч. Р.-Т. п. слова *lwl* (<и.-е. **nāu-* «լաւ»)). Отмеченная реалия дает основание говорить о том, что все три трифтонгоиды имеют армянское происхождение, а их наличие в заимствованиях лишь способствовало их укоренению в древнеармянском в качестве особых фонематических реалий. По всей видимости, *jnj* (յոյ) и *lwl* (լաւ) сформировались в период начального раннеармянского языка (III тысячелетие до н.э.), когда в целом армянский язык формировался как самостоятельный язык, а третий трифтонгоид - в позднем раннеармянском (с начала II тысячелетия до XIII в. до н.э.), когда формировались особенности грамматического строя армянского языка по сравнению с индоевропейским.

Ключевые слова: трифтонгоиды, древнеармянский, начальный раннеармянский язык, поздний раннеармянский, древнееврейский, среднеперсидский, заимствования.

SUMMARY
DIACHRONIC CHARACTERISTICS OF OLD ARMENIAN TRIPHTONGOIDS
WITH «S + V + S» (jnj, lwl, lnl) PATTERN
Petrosyan Vardan

Old Armenian triphthongoids *jnj* (յոյ), *lwl* (լաւ), *lnl* (լոլ) are found not only in Hebrew and Iranian borrowings, but also in the composition of native IE words. It is true that *lnl* (լոլ) is found in the grammatical form of only one word of IE origin - *lwl* (IE **nāu-* «լաւ») singular, genitive-dative cases words *lwl*). This provides grounds to claim that all three triphthongoids are Armenian forms and their presence in the borrowings further enhanced their role in Old Armenian as unique phonemic phenomena. The triphthongoids *jnj* (յոյ) and *lwl* (լաւ) were apparently formed in the initial period of Early Armenian (the 3rd millennium BC) when the Armenian Language was being formed as an independent language, and *lnl* (լոլ) – in the later stage of Early Armenian (from the 2nd millennium to the XIII century BC) when the specific features of the grammatical structure of the Armenian Language were developing in comparison with general IE.

Key Words: triphthongoids, Old Armenian, initial Early Armenian, Late Early Armenian, Hebrew, middle Persian, borrowing.

**ՖԻԹՆԵՍԱՅԻՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒՄ.
ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Սաղաթելյան Ռիտա

ԵՊՀ Ժամանակակից հայոց լեզվի ամբիոն
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
rita.saghatelyan@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-241

Բանալի բառեր. ֆիթնես, ֆիթնեսային տերմիններ, փոխառություն, միջազգայնացված բառեր, օտարաբանություններ, հայերեն համարժեք:

Ժամանակակից աշխարհում մարդիկ օրեցօր ավելի են գիտակցում ֆիզիկական պատրաստվածության և ֆիթնեսի առավելությունները: Պատահական չէ, որ հատկապես մայրաքաղաքում գրեթե ամեն օր բացվում են նորանոր ֆիթնես ակումբներ, որոնք, չնայած տարբեր գործելակերպին, ունեն մեկ ուղղվածություն՝ ապահովել մարդկանց առողջ ապրելակերպը:

Սպորտի զարգացման ներկա փուլում, երբ ստեղծվում են նոր մարզաձևեր, կատարելագործվում են մարզաձևերի տեխնիկական հնարքները, բնականաբար, ստեղծվում են մարզական նոր տերմիններ, բառակապակցություններ ու արտահայտություններ: «Մարդու շարժողական գործունեության զարգացման ողջ ընթացքում անհրաժեշտ են եղել այնպիսի տերմիններ, որոնք համառոտ և սպառիչ կերպով կարող են իմաստավորել նրա շարժաբնույթը», - իրավացիորեն նկատում է Կ. Բաբայանը:¹

Սակայն որքան էլ Հայաստանում զարգանում է մարմնամարզական կուլտուրան, այնուամենայնիվ մեր մարզական ակումբներում լեզվական տեսանկյունից կան բազմաթիվ չլուծված հարցեր, որոնք ինչ-որ առումով դժվարացնում են մարզիչների և մարզվողների գործը: Խնդիրն այն է, որ ֆիթնեսային տերմինները հիմնականում փոխառված են անգլերենից և շատ հաճախ անհասկանալի մանավանդ մարզվողների համար:

Հատկապես կարևորվում է երկու խնդիր՝ թարգմանել կամ հնարավորինս ստեղծել ֆիթնեսային տերմինների ազգային համարժեքները՝ հայերենի հնչյունական օրենքներով տառադարձելով և հանրաճանաչելի դարձնելով չթարգմանվողները: Այսինքն՝ ոչ միայն խնդրահարույց է այդ տերմինների թարգմանությունը, այլև տառադարձումը: Շատ դեպքերում չկա միօրինակ արտասանություն, ինչպես՝ *ABS (էքս)-աբս², body band (բադի բենդ)-բոդի բանդ, triceps pushdown(թրայսեկիս փուշդաուն)- թրիսեպս փուշդաուն, plate (փլեյթ)-պլետ, plank (փլենք)-պլանկա, step (սթեփ)-ստեպ, shaping (շեյփինգ)-շեպինգ, attack (ըթեք)-ատակ, bodycombat*

¹ Բաբայան Կ., Մարմնամարզական տերմինների տեղեկատու բառարան, Երևան, 1985, էջ 8:

(*բառիկամբաստ*)-*բոդիֆլեքս*, *bodyflex* (*բառիֆլեքս*)-*բոդիֆլեքս*, *body correction* (*բառի քրրեքշըն*)- *բոդի կարեկշն*, *bodypump* (*բառի փասնի*)-*բոդի փասնի* և այլն:

Ուստի անհրաժեշտ է նախ այս տերմինները ճիշտ տառադարձել՝ դրանց տալով <<հայերենի արտասանական ու ուղղագրական ձև>> և <<բառի հայերեն ձևավորումը>> հնարավորինս մոտեցնելով փոխատու լեզվի արտասանությանը³, այսինքն՝ արտասանությամբ համապատասխանեցնել հայերենի հնչյունական օրենքներին, փոխառյալ ձևով դնել գործածության մեջ, ապա մտածել նաև հնարավորինս դրանց հայերեն համարժեքները ստեղծելու մասին⁴:

Սակայն պետք է ասենք, որ ֆիթնեսային օտար տերմինների հայերենացումը մեծ մասամբ գրեթե անհնար է: Նախ այն պատճառով, որ բառարանային բառացի թարգմանությամբ տվյալ բառերը բոլորովին այլ նշանակություն ունեն և մարզաշխարհում ձեռք են բերել նոր իմաստներ, ուստի այդ բառերի բառացի թարգմանությունը ճիշտ չի արտացոլում տվյալ տերմինի ամբողջ բովանդակությունը, օրինակ՝ *փլեյթ- ափսե* (ծառայում է որպես ծանրաքար), *վի սթեյփ- վի քայլ* (հրահանգի ժամանակ մարզվողը բարձրանում է սթեյփ կոչվող հատուկ հարմարանքի վրա՝ ոտքերը անգլերեն *v* տառի նման բացած), *պլանկա-տախտակ* (վարժության ժամանակ մարզվողը ձեռքերով ու ոտքերով հենվում է հատակին՝ մարմինը ուղիղ գծով պահած): Եթե անգամ ընդունենք *տախտակ*-ը, այդ դեպքում ինչպե՞ս վարվենք այն տասնյակ բաղադրյալ տերմինների հետ, որոնց բաղկացուցիչ մաս է կազմում պլանկա-ն, ինչպես՝ *elbow plank* (*էլբոու փլենք*), *plank to push up* (*փլենք թը փուշ ափ*), *plank on knees* (*փլեք օն նիզ*), *plank and tap both knees* (*փլենք ընդ թեփ բոութ նիզ*), *plank with hip dips* (*փլենք վիդ հիփ դիփս*), *plank crunches* (*փլենք քրանչիզ*) և այլն⁵:

Սրանք այն դեպքերից են, երբ օտար բառերը ունեն նրբիմաստներ <<որոնք կարևոր են տեքստի, խոսքի ճշտության համար: Այս դեպքում օտար բառի ընտրությունն արդարացվում է>>:⁶

Օտար բառերի գործածության հիմնավոր պատճառներից մեկն էլ, ի տարբերություն հայերեն համարժեքների, դրանց ավելի կարճ ու բարեհունչ լինելն է. հաճախ եթե անգամ կա տվյալ տերմինի հայերեն համարժեքը, այնուամենայնիվ մարզական ակումբներում կիրառվում են օտար տարբերակները, խնդիրը բարդանում է նաև նրանով, որ այդ տերմինները հիմնականում բառակապակցություններ են և մեկ բառով գրեթե անհնար է հայերենացնել, օրինակ՝ *AB bench* (*էբի բենչ*) – *էբի (այբբեն) նստարան*, *biceps curl* (*բայսեփսքրոլ*) – *երկզվիսանի մկանի զարգացում*, *russian twist* (*ռաշն թվիսթ*) – *ռուսական ոլորան*, *spine twist* (*սփայն թվիսթ*)- *նղնաշարի պտույտ*, *chest press* (*չեսթ պրեսս*) –

³Տե՛ս **Բարսեղյան Ն.**, Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006թ., էջ 23:

⁴ Մույն հոդվածում մեր հիմնական նպատակը ֆիթնեսային տերմինների համակարգումն է ու հանրայնացումը, ուստի դրանց տառադարձման խնդիրները խորությամբ չենք քննելու:

⁵Այս տերմինների թարգմանությանը կանդրադառնանք մեր հաջորդ հոդվածում:

⁶Տե՛ս **Ավետիսյան Յու.**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Բ, Երևան, 2015, էջ 52:

կրծքավանդակի սեղմում, triceps extension (թրայսեփս իքսթենշն) – եռազուխ մկանի ձգում և այլն:

Մարզիչները այս դեպքերում նախապատվությունը տալիս են անզլերեն տարբերակին, քանի որ դրանք ավելի բարեհունչ են և արդեն ընդունված: Ինչպես նկատել է Յու. Ավետիսյանը. «Բառի տարածվելու և համագործածական դառնալու տեսակետից չափազանց կարևոր են բառի նաև ձևային-արտասանական հատկանիշները: Նոր կազմված կամ փոխառյալ նորաբանությունը նախընտրելի է, որ լինի կարճ և բարեհունչ»:⁷

Ակնհայտ է, որ լուրջ խնդիրներ կան հարցի կարգավորման, այսինքն՝ ֆիթնեսային նորագույն տերմինների ճիշտ տառադարձման, ապա դրանց թարգմանության ուղղությամբ:

Իհարկե, մենք այն կարծիքին չենք, որ խնդրո առարկա տերմինների ձուլումը մեր բառապաշարին պարտադիր պայման է. ինչպես որ այլ բնագավառի շատ տերմիններ, սրանք ևս կարող են ընդամենը մեր լեզվի տերմինային համակարգի մաս կազմել և յուրացվել գուտ ոլորտի ներկայացուցիչներին դրանցով հետաքրքրվողների կողմից:

Ուստի սույն հոդվածում մեր նպատակը ոչ թե ֆիթնեսային օտար տերմինների բառացի թարգմանությունն է, այլ դրանց համակարգումն ու հանրայնացումը: Այս անվանումները նախ և առաջ լեզվում հաստատվելու կարիք ունեն: Եվ քանի որ օտար տերմինների գոյությունը հայերենում արդեն փաստ է, ուստի մեր՝ մասնագետներիս խնդիրն է դրանք հավաքելը, մշակելն ու համակարգելը, հնարավորության դեպքում նաև հայերենացնելը և իրազեկման տարբեր միջոցներով (տեղեկատուներ, ուսումնական ձեռնարկներ, բառարաններ) հանրության մեծ մասին հասանելի դարձնելը: Վերջին հաշվով մեր գերխնդիրը պետք է լինի ֆիթնեսային տերմինային համակարգի նորմավորումը:

Մենք ուսումնասիրել ենք նաև ռուսերենի փորձը: Պարզվեց, որ չնայած ֆիթնեսի ավելի լավ լուսաբանմանն ու ֆիթնեսային տերմինների բազմաթիվ առցանց բառարանների ու տեղեկատուների առկայությանը՝ ռուսերենում ևս ոլորտը վերջնականապես կարգավորված չէ: Այնտեղ նույնպես շատ տարածված են արդի ֆիթնեսային տերմինների փոխառյալ տարբերակները, և ռուսները խնդիրը փորձել են լուծել տարբեր ճանապարհներով: Ակնհայտ է, որ ռուսերենը օտար բառերի նկատմամբ ավելի հանդուրժող է, բայց և այնպես երբեմն չի խուսափում դրանց բառացի թարգմանությունից, որքան էլ դրանք երկար ու անբարեհունչ ստացվեն:

Արդի հայերենի ֆիթնեսային բառապաշարի ընդհանուր պատկերը ուրվագծելու և ամբողջացնելու համար նպատակահարմար ենք գտել այստեղ բերել նաև այն տերմինների ռուսերեն տարբերակները, որոնք մեզ հաջողվել է գտնել:

Ժամանակակից ֆիթնեսային տերմինները կարելի է համակարգել հետևյալ խմբերով.

1. **Փոխառյալ բառեր**, որոնք արդեն գրեթե ձուլվել են մեր բառապաշարին և լայնորեն գործածվում են մարզական ակումբներում: Սրանք հիմնականում մարզաձևերի, ինչպես

⁷ Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014թ., էջ 24:

նան մարզական սարքավորումների և մարզագույքի անվանումներ են, որոնց բառացի թարգմանությունը այնքան էլ չի արդարացվում, քանի որ ամբողջությամբ չի նկարագրում տվյալ սարքավորումների գործառույթը, այսինքն՝ հայերեն համարժեքները չեն ծածկում <<օտար բառի իմաստային և գործառական ամբողջ դաշտը>>⁸

Այս անվանումները՝ որպես նորագույն մարզաձևերի և ուղղությունների առաջացման արդյունք, դեռևս լայն <<գործածականության, հասարակական ճանաչման ու ընկալման>>⁹ կարիք ունեն, ուստի անհրաժեշտ է նախ դրանք փոխառյալ տարբերակով շրջանառել, ապա ժամանակի ընթացքում հնարավորինս ստեղծել դրանց հայերեն համարժեքները: Այս դեպքերի համար մենք լիովին համամիտ ենք Լ. Մարգարյանի հետևյալ դիտարկմանը. <<Տերմինների թարգմանության գործում պետք է առաջնորդվել առավել խիստ չափանիշներով, դիմել համապատասխան մասնագետների խորհրդին: Այն բոլոր դեպքերում, երբ իմաստային որոշ անճշտություն և կամ մասնակի ճշտություն կա, պետք է զերծ մնալ համարժեքը պարտադրելու մտայնությունից՝ կրկին հոգուտ ի շահ լեզվի. լեզվին պետք չեն անճիշտ կամ մոտավոր իմաստներ արտահայտող բառեր: Այս և նման դեպքերում օտար բառը, իր բոլոր <<թերություններով>> հանդերձ, հենց միայն իր անվանողական գործառույթով պետք է լինի միակ գործառվող տարբերակը >>¹⁰

Այսինքն՝ այս փուլում առաջին հերթին կարևորվում է ֆիթնեսային տերմինները ճանաչելի դարձնելն ու գոնե ֆիթնեսով զբաղվողների, ապա նաև հանրության ավելի լայն շրջանակների կողմից դրանց յուրացումը:¹¹

Սկսենք նրանից, որ *ֆիթնես* տերմինը դեռևս չունի իր հայերեն համարժեքը: Այն կազմված է անգլերեն *to fit*՝ *համապատասխանել* բայից և *ness* գոյականակերտ ածանցից և բացատրական բառարաններում թարգմանվում է *պիտանություն, համապատասխանություն*¹², *բաջառողջություն*¹³:

Ա. Հայրապետյանը իր «Օտար բառերի բառարան»-ում ֆիթնեսը բացատրում է որպես <<սպորտային վարժությունների համալիր, որ նպատակաուղղված է մարմնի բարեձևությանն ու զարգացմանը>>¹⁴

Ռուսերենում նույնպես *fitness*-ը թարգմանել են *пригодность, соответствие*, բայց նախապատվությունը տվել են *фитнес* -ին:¹⁵

⁸Տե՛ս Ավետիսյան Յու., Թեյյան Լ., Մարգարյան Լ., Արդի հայերենի բառապաշարը, Երևան, 2020, էջ 99:

⁹Տե՛ս Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014, էջ 21:

Նշվ. աշխ., էջ 21:

¹⁰Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներ (հոդվածների ժողովածու), Երևան, 2020, էջ 167:

¹¹Ճանաչման առումով նպատակահարմար ենք գտել ավելի հանգամանորեն ներկայացնել տվյալ տերմինի բացատրությունը:

¹²Տե՛ս Ն. Բարաթյան, Անգլերեն-հայերեն բառարան, Երևան, 2011, էջ 327:

¹³Տե՛ս Մ. Գույումճեան, Լ. Թորոսեան, Գրպանի նոր բառարան անգլերեն-հայերեն, Պեյրուք, 2002, էջ 123:

¹⁴Տե՛ս Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Երևան, 2011, էջ 622:

¹⁵Տե՛ս niv.ru, Словарь бодибилдинга, фитнеса и спортивной медицины:

Այս կարգի տերմիններից է նաև *aerobics*-ը (*աերոբիքս*): Ա. Հայրապետյանի բառարանում այն մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Առողջարարական ռիթմիկ մարմնամարզություն, որը կատարվում է երաժշտության ուղեկցությամբ համեմատաբար բարձր արագությամբ»:¹⁶

Աերոբիկան արագ քայլքի, վազքի, լողի, հեծանվազբուսանքի և այլ մարզաձևերի ու վարժությունների հատուկ համակարգ է, որը նպաստում է մարդու առողջության ամրապնդմանն ու պահպանմանը: Ռուսերենում ևս տերմինը գործածվում է փոխառյալ տարբերակով՝ аэробика: *Bosu (բոսու)*- *bosu*-ն անգլերեն *both sides up*-հիամառոտված տարբերակն է: Ամերիկացի մարզիչ Դեվիդ Վեգն է 2000 թվականին թողարկել առաջին բոսուն, որը կիսագնդակ հիշեցնող հարմարանք է: Այն օգտագործվում է ինչպես պիլատեսի, այնպես էլ աերոբիկ և ուժային պարապմունքների ժամանակ: Հանդիպում է նաև *bosu ball* տարբերակը: Մշակվել է նաև վարժությունների մի ամբողջ համակարգ՝ բոսունների կիրառմամբ, որը նույնպես կոչվում է *բոսու*: Տերմինի հայերեն հնարավոր *կիսագնդակ* տարբերակը չի արտահայտում նրա ծավալն ամբողջությամբ, մանավանդ որ այն հանդես է գալիս նաև որպես բոսույով խմբակային պարապմունքի անվանում: *Cardio stepper/ սթեյպեր-кардио*-ն անգլերենում ընդամենը ձևույթի (սրտա) արժեք ունի և հանդես է գալիս տարբեր բարդություններում՝ իբրև բաղկացուցիչ մաս, ինչպես՝ *cardiodemia- սրտաճարպություն*, *cardogram- սրտագիր* և այն, իսկ *stepper* նշանակում է *քայլող, քայլառու*, նաև՝ *բարձրաքայլ ձի*:

Cardio stepper-ը *մարզական հատուկ սարքավորում է, որի վրա քայլելով մարզում են սիրտը*:

Cardio-ն մարզական աշխարհում գնալով ձեռք է բերել նաև ինքնուրույն իմաստ. *cardio* նշանակում է նաև ռիթմիկ վարժությունների համակարգ, որը կատարվում է կա՛մ հատուկ մշակված մարզական պարապմունքների միջոցով, ինչպես *step cardio class*-ը, կա՛մ մարզասարքերի օգնությամբ:

Մարզասրահներում կան հատուկ սրահներ, որոնք հենց այդպես էլ կոչվում են՝ կարդիո սրահներ (*cardio class*, ռուսերենում՝ *кардио зал*), որտեղ տեղադրված են մարզական սարքավորումները (*тренажер*), որոնց օգնությամբ էլ մարդիկ մարզվում են՝ կատարելով կարդիո աշխատանք (*кардиотренировка*): Ուստի *cardio*-ի թարգմանությունը այս առումով տեղին չէ ու աննպաստակահարմար: *Crossfight/կրոսսֆիտ(քրոսսֆայթ)*- բառացի *cross* նշանակում է *խաչ, fight՝ մարտ*: Քրոսսֆայթը ներառում է ն՛ աերոբիկ, և՛ ուժային վարժություններ (վազք, թռիչք, հրում, սեղմում, պլանկա, կքանիստ ու լանջիս բարերով, բարձրացում կցագնդերով և այլն), որոնք հենված են արագության վրա: Բառի հայերենացման հնարավոր *խաչաձև մարտ* տարբերակը, կարծում ենք, քննություն չի բռնի,

¹⁶Տե՛ս Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 15:

քանի որ բոլորովին չի արտահայտում տերմինի բովանդակությունը, մանավանդ որ փոխառյալ տարբերակը արդեն լայն գործածություն և ճանաչում ունի: Ռուսերենը ևս տերմինը չի թարգմանել՝ նախապատվությունը տալով փոխառյալ *кроссфит*-ին՝ այն դիտարկելով որպես <<комплекс фитнес –упражнений>>:¹⁷

Сueenax/куенакс тренировка (քուինիքս)-*сueenax*-ը ֆիթնես վարժությունների համակարգ է, որը կատարվում է *сueenax* սարքավորման միջոցով: Սարքավորումը ներառում է զուգափայտ, բոքսի տանձիկ, նստարան, գոտիներ, բոսու, գնդակն այլն: Պարապմունքը թեև խմբակային է, բայց անդամները, իրար հերթափոխելով, կատարում են տարբեր վարժություններ մարզչի հրահանգով: Շրջանի ավարտից հետո տրվում է կարճատև դադար, որից հետո այն սկսվում է սկզբից: Տերմինի հայերեն թարգմանությունը գրեթե անհնար է: *Synergy(սինըջի)*- *synergy*-ն մարզական բազմագործառույթ հատուկ սարքավորում է, որը հնարավորություն է տալիս մոտ 360 վարժություն կատարելու: *Synergy* է կոչվում նաև մարզման ամբողջ ընթացքը՝ տարբեր վարժությունների համակցումով: Հասկանալի պատճառով տերմինի հայերեն համարժեքի ստեղծումը ոչ միայն անհնար է, այլև աննպատակահարմար: *Shaping/шейпинг(շեյփինգ)*- ծագել է անգլերեն *shap՝ ձև, ձևավորել* բառից: Շեյփինգը երաժշտության ներքո կատարվող մարմնամարզական վարժությունների համալիր է՝ մարմնին նրբագեղություն հաղորդելու համար¹⁸: Այն ներառում է ռիթմիկ վարժություններ, որոնք կատարվում են մարզաքարերի և հատուկ մեծ գնդակների միջոցով: *Շեյփինգը* արդեն լիովին ձուլված է մեր բառապաշարին: Ռուսերենը ևս նախապատվությունը տվել է *шейпинг*-ին: *TRX/TRX тренировка (total-body resistance exercise-թոթրլ բադի ռեզիզթրենս էքսըրսայզ)*- *ԹԻԱՌԷՔՍ (ամբողջ մարմնի դիմադրողականության վարժություններ)*- *TRX* հապավում է, որը բացելով բառացի թարգմանությամբ նշանակում է *ամբողջ մարմնի դիմադրողականության վարժություններ*: Այն ամբողջ մարմնի ֆիթնես ծրագիր է, որի ընթացքում օգտագործում են երկրի ձգողականությունը սեփական մարմնի քաշը՝ զարգացնելով ուժը, հավասարակշռությունը, ճկունությունը և առանցքային մկանների կայունությունը: *TRX*-ը նաև ժամանակակից մարզասրահների անփոխարինելի սարքավորում է, որի միջոցով էլ կատարում են մարզումը: Տերմինը լավագույն դեպքում հայացվում է կիսապատճենամամբ՝ *TRX պարապմունքներ*:

2. Միջազգայնացված տերմիններ. Ֆիթնեսային տերմինների մեծ մասն արդեն ամբողջ աշխարհում է հայտնի, և այս առումով նրանց թարգմանությունը չի արդարացվում, մանավանդ հայերեն հնարավոր տարբերակները այնքան էլ հաջող չեն: Սա այն դեպքերից է, երբ <<հայերեն համարժեքը երբեմն երկրորդական պլան է մղվում՝ պայմանավորված օտար բառի, այսպես կոչված, միջազգայնացված լինելու հանգամանքով>>:¹⁹ Սրանք հիմնականում

¹⁷Տե՛ս Goodlooker.ru, Групповые тренировки: все виды направления. Самыиподробный обзор:

¹⁸Տե՛ս Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 398:

¹⁹ Ավետիսյան Յու., Թեյլան Լ., Մարգարյան Լ., Արդի հայերենի բառապաշարը, Երևան, 2020, էջ 91:

Ֆիթնեսի նոր տեսակների և վարժության ձևերի անվանումներ են, ինչպես՝ **ABS, back and stretch** (*բեք րնչ սթրեչ*)- *back and stretch*-ը անգլերենից թարգմանվում է *մեջք և ձգել, ձգում*, *ABS*-ը՝ որպես տերմին, չի թարգմանվում. այն անգլերեն abdominals (*որովայնային*) բառի համառոտաձ տարբերակն է և կոչվում է համապատասխան տառերի անվանումներով՝ *էջ, բի, էս (էբս)*: *ABS, back and stretch*-ը վարժությունների համակարգ է, որը մարզում և ամրացնում է հիմնականում որովայնի ու մեջքի մկանները՝ զարգացնելով մարմնի ճկունությունը: *էբս*-ին համարժեք է ռուսերեն *пресс(պրեսս)*-ը, որը հայացվում է *ճնշամկան*, իսկ վարժությունների համակարգը՝ *ճնշամկանի մարզում* բառակապակցությամբ: Մարզման այս ձևը մարզաշխարհում արդեն գտել է իր կարճ անվանումը՝ *էբս*, և *ճնշամկանի մարզում*-ը դժվար թե լայն կիրառության մեջ մտնի:

ABL, BUMS+ABS()- *ABL*-ը անգլերեն *abdominal՝ որովայնային, buttocks՝ հետույք, նստատեղ, legs՝ ոտք*, բառերի հապավումն է: Ռուսերենում այն բացվում է հետևյալ կերպ՝ *пресс, ягодицы, ноги*, իսկ *Bums+Abs*-ը՝ *ягодицы и пресс*:

Վարժությունների համակարգ է, որը դարձյալ նպաստում է գոտկատեղի և նստատեղի մկանների մարզմանը, ինչպես նաև ձգում է *ճնշամկանը (պրեսս)*՝ *հնարավորինս հարթեցնելով որովայնը*: *ABL* պարապմունքները անցկացվում են կա՛մ սեփական մարմնի քաշով, կա՛մ լրացուցիչ ծանրության միջոցներով: Տերմինի հայացումը գրեթե անհնար է: **Bodycombat/ бодн комбат (բադիկոմբատ)**-կազմված է անգլերեն *body՝ մարմին, և combat՝ պայքար, կռիվ*, բառերից, որի հայերեն հնարավոր *մարմնապայքար* տարբերակը չի արտահայտում տերմինի բովանդակությունը. սա վարժությունների մի ամբողջ համակցություն է, որ մարզաշխարհում հայտնի է որպես կարդիոպարապմունք՝ ռիթմիկ երաժշտության ուղեկցությամբ: Մարզումը տարբեր մարտարվեստների համակցություն է, որի ընթացքում մարզվողները արագ և ռիթմիկ շարժումներով կատարում են հարվածներ ձեռքերով և ոտքերով՝ կոփելով մարմնի տարբեր մասերը: Ավելի շատ գործածվում է կարճ՝ կամբատ տարբերակով: Ռուսերենը նույնպես պահել է *бодн комбат*-ը: **Bodyflex / бодифлекс (բադիֆլեքս)** - *bodyflex*-ը անգլերենից կարելի է թարգմանել *մարմնի թեքում, ճկում, կորացում*: *Բադիֆլեքսը* հատուկ շնչառական և ֆիզիկական վարժությունների ամբողջություն է, և հայերեն հնարավոր *մարմնաճկում* տարբերակը չի արդարացվում տերմինի բուն էությունից չբխելու պատճառով: Ռուսերենը նույնպես նախապատվությունը տվել է փոխառյալին՝ *бодифлекс*: **Bodybuilding (բադիբիլդինգ)** - կազմված է անգլերեն *body՝ մարմին, և building՝ կառուցում*, բառերից: *Բադիբիլդինգը* մարմնամարզության տեսակ է, որը հիմնված է հատուկ վարժությունների վրա՝ մկանային մասն ավելացնելու և համաչափորեն զարգացնելու համար: Ա. Հայրապետյանը առաջարկում է *մարմնակերտություն*²⁰ տարբերակը, որը ընդհանրապես չի գործածվում: **Bodypump/бодипамп(բադիփամփ)**-*to pump* անգլերենում նշանակում է *ջրհան, նաև՝ քաշել, հանել*, այսինքն՝ **bodypump** անգլերենից

²⁰ Տե՛ս Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 102:

կարելի է թարգմանել *մարմնի քաշում*, որը բոլորովին չի արտահայտում տերմինի էությունը. այն մարմնի դիմացկունության զարգացմանը նպաստող ուժային բնույթի վարժությունների ամբողջություն է, որը հաշվարկված է վարժությունների կրկնությունների վրա: Մարզումը ուղեկցվում է հատուկ մշակված երգացանկով այնպես, որ շարժումները համապատասխանացվեն երաժշտության ռիթմին: Մարզաշխարհում հայտնի է *փամփանվամբ* և որպես միջազգայնացված տերմին՝ վաղուց արդեն ձուլվել է մեր բառապաշարին: *Interval/HIIT/ВИИТ* - *interval*-ը անգլերենից թարգմանվում է *ընդմիջում*, իսկ *HIIT*-ը հապավում է (*high*՝ բարձր, *interval*՝ ընդմիջում, *intensive*՝ բարձր, ուժգին, *training*՝ մարզում, պարապմունք): Բարձր արդյունավետությամբ կարդիո պարապմունք է, որը իրականացվում է բարձր և ցածր ինտենսիվության վարժություններով, որոնք ընդմիջվում են որոշակի դադարներով: Տերմինը արդեն լայն ճանաչում ունի և գրեթե ձուլվել է մեր բառապաշարին: Ռուսերենում ավելի գործածական է տերմինի հապավված տարբերակը՝ *HIIT-ВИИТ* (*высокоинтенсивный интервальный тренинг*):²¹

3. Ֆիթնեսում առանձին խումբ են կազմում, այսպես կոչված, *անվանակոչ տերմինները*. սրանք այն մարզաձևերն ու վարժություններն են, ինչպես նաև մարզական սարքավորումները, որոնք իրենց անվանումը ստացել են ի պատիվ դրանք ստեղծողի: Ընդ որում, այս երևույթը մարզաշխարհում բոլորովին էլ նոր չէ. «Սպորտային մարմնամարզության և ակրոբատիկայի, ինչպես նաև գեղարվեստական մարմնամարզության կարևորագույն առանձնահատկություններից մեկը նոր վարժություններին տիրապետելու մշտական ձգտումն է, որի անհրաժեշտությունը բխում է մարզիկի և մարզիչի համատեղ գործունեությունը խթանող <<նորության գործոնից>>: Նոր տարրերի և միացությունների երևան գալը սպորտային պրակտիկային բերում է նորանոր անուններ», - գրում է Կ. Բաբայանը:²²

Ֆիթնեսային բառապաշարը ևս համալրվել է այս կարգի տերմիններով, ինչպես՝ *Smith machine* (*Սմիթ մրշին*)- սարքավորման միջոցով մարզում են տարբեր մկաններ: Այն իր անվանումը ստացել է ի պատիվ ստեղծողի: Լավագույն դեպքում կարող ենք անվանել *Սմիթի մարզասարք/մեքենա*: *Scott machine* / *скамья Скотта* (*Սքոթ մրշին*)- մարզասարքի միջոցով մարզում են ձեռքի երկգլխանի մկանը (բայսեփս): Հայերեն համարժեքը կլինի *Սքոթի մարզասարք/մեքենա*: *Pilates* (*պիլատես*)-պիլատեսը ֆիզիկական ֆիթնեսի համակարգ է, որը ստեղծվել է 20-րդ դարի սկզբին Ժոզեֆ Պիլատեսի կողմից, որի անունով էլ այն անվանվել է: Պիլատեսը իր մեթոդը կոչել է «վերահսկողություն»: Այն անընդհատ կրկնվող վարժությունների շարք է, որն ամրացնում է մկանները, զարգացնում է ճկունությունը, ուժը, դիմադրողականությունը և հավասարակշռությունը՝ առանց մկանային մասսայի ավելացման: *Booty barre* (*բուտի բեբրե*)-*booty barre*-ն մարզական ակումբներում հայտնի վարժությունների համակարգ է, որը 2014 թվականին մշակել է ֆիթնես-էքսպերտ Բուտի

²¹Տե՛ս Goodlooker.ru, Групповые тренировки: все виды направления. Самыиподробный обзор:

²²Տե՛ս Բաբայան Կ., Մարմնամարզական տերմինների տեղեկատու բառարան, Երևան, 1985, էջ 169:

Բերրե Թրեյսին: Այն պիլատեսի, յոգայի, պարի համակցումով կարդիոպարապմունք է: *Tabata /табата) (թրբեթր)*-սա ռիթմիկ երաժշտության ներքո կարդիո-ուժային պարապմունք է: Մեթոդը մտածել է ճապոնացի դոկտոր Տաբատը: Այն դասվում է interval (ընդմիջումային) պարապմունքների շարքին և ներառում է 20 վայրկյան վարժություն՝ առավելագույն ծանրաբեռնվածությամբ և երեք մոտեցումով, 10 վայրկյան հանգիստ՝ ցիկլի ութանգամյա կրկնումով: Տաբատան ենթադրում է առավելագույն շարժումների քանակ նվազագույն ժամանակահատվածում:

Թրբեթր ռուսերենի ազդեցությամբ *տաբատա* տարբերակով (ռուսերենում՝ *табата*) վաղուց լայն ճանաչում ունի մարզասերների շրջանում և իբրև փոխառություն լայնորեն կիրառվում է մարզական ակումբներում:

Բնականաբար, անվանակոչ տերմինները չեն թարգմանվում և փոխառյալ տարբերակով են հայտնի մարզաշխարհին:

4. Մրցորդ տերմիններ. այս խմբում ներառվում են մի շարք մարզաձևերի և վարժությունների անվանումներ, որոնք մարզաշխարհում ավելի նոր են, բնականաբար նոր են նաև դրանք արտահայտող տերմինները: Եվ չնայած այս տերմինները հիմնականում փոխառված են անգլերենից և հայերեն բառարաններում գրեթե արձանագրված չեն, բայց սրանց հայերեն համարժեքները արդեն ստեղծվել են և գտնվում են, այսպես կոչված, «մրցման» փուլում, այսինքն՝ «մրցորդ» բառեր են, որոնք «եթե հաղթում են, անցնում են հիմնական բառազանձ»:²³

Օրինակ՝ *Aerial yoga (երիդլ յոգա) aerial*-ը անգլերենից թարգմանվում է *օդային*: Սա յոգայի միտեսակ է, երբ բոլոր վարժությունները կատարվում են հատուկ գամակներով օդում կախված դիրքով: Քանի որ *yoga*-ն չի թարգմանվում, տերմինը հայացվում է *օդային յոգա* տարբերակով, որը գնալով ավելի է հաստատում իր տեղը: *Aquafitness аквафитнесс / акваэробика (ակվա ֆիթնես)* - *ակվաֆիթնես*-ը ջրային ֆիթնեսն է, որն իրականացվում է լողավազաններում ռիթմիկ երաժշտության ուղեկցությամբ: Եթե *ֆիթնես*-ը դիտարկենք որպես փոխառություն, ապա մրցակցության մեջ կմնան *ակվա և ջրային ֆիթնես* տարբերակները: *Body correction/боди коррекшн (բադի քրրեքշն)*- անգլերենից կարելի է թարգմանել *մարմնի ուղղում, շտկում*: Սա վարժությունների այնպիսի համակցում է, որի ընթացքում մարզվում են մարմնի գրեթե բոլոր մկանները, այսինքն՝ ամբողջ մարմինը ուղղման, հարթեցման է ենթարկվում: Մարզական որոշ ակումբներում փորձում են շրջանառել *մարմնի մարզում* տարբերակը՝ ի հակակշիռ *բադի քրրեքշնի*: *Crunch (քրանչ)*- անգլերենից բառացի թարգմանությամբ *crunch* նշանակում է *ճոճոց*: *Քրանչը* որովայնի հատվածի մկանախումբը ձգող հիանալի վարժություն է և ոչ մի ընդհանուր կապ չունի բառի ուղիղ իմաստի հետ: Տերմինը հայացվել է *եղորում, թեքում, կծկում* տարբերակներով, և բացառված չէ, որ սրանցից մեկը մոտ ապագայում լիովին կփոխարինի քրանչին:

²³Տե՛ս Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014, էջ 44:

Ռուսերենում վարժությունը կոչվում է *классические скручивания*: Չուգահեռ գործածվում է նաև *кранч*-ը: *Lunges / выпад (լանջիս)* - անգլերեն *lunge*՝ հարված, հրում, թափով շարժում, նաև՝ խճճում, բառի հոգնակին է: Վարժության միջոցով հիմնականում կատարվում է ոտքերի մկանների մարզում, ձգում: Տերմինը հայացվել է *արտանկ* տարբերակով, որը, սակայն, դեռևս չի հանրայնացվել: Ռուսերենը ևս նախապատվությունը տալիս է փոխառյալ տարբերակին, չնայած տերմինը նաև թարգմանել է *выпад* կամ *шаг выпадом* տարբերակներով: *Pulse/ (փալս/պուլս)* - սա մի հնար է, որը օգտագործվում է տարբեր վարժությունների կատարման ժամանակ՝ որպես լրացուցիչ բարդացում: Անգլերենից բառացի թարգմանվում է *թրթռում, թրթռո*, որը լրիվ արտահայտում է հասկացության բովանդակությունը, բայց երբեք չի կիրառվում: Մարզաշխարհում նման վարժությունների համար վաղուց ընդունված է *գսպանակ* բառը, այսինքն՝ մրցակցության մեջ են *պուլս և գսպանակ* տարբերակները: *Fitball aerobics- (ֆիթբոլ աերոբիքս)* - բառացի *fit* նշանակում է *համապատասխան, պիտանի, ball՝ գնդակ*: *Ֆիթբոլը* աերոբիկայի տեսակներից է, որը կատարվում է հատուկ մեծ, փափուկ գնդակներով: Քանի որ աերոբիկան ևս մինչև օրս մեկ բառով չի գտել իր հայերեն համարժեքը և վաղուց արդեն փոխառությունների շարքում է, ուստի *գնդակով աերոբիկան ֆիթբոլը* դիտարկվում են մրցորդ բառեր:

5.Իմաստային նորաբանություններ: Ֆիթնեսային նորագույն տերմինների մեջ առանձին խումբ են կազմում իմաստային նորաբանությունները. սրանք այն բառերն են, որոնք նոր տերմինային արժեք են ձեռք բերել և հիմնականում բառացի թարգմանությամբ էլ կարելի է հայերենացնել, ինչպես՝ *corkscrew (քորքսքրու)* - խցանահան, *scissors (սիզորս)* - մկրատ, *swimming (սվիմինգ)* - լող, *saw - (սո)* - սողոց, *hundred- (հանդրիդ)* - հարյուր / հարյուրյակ, *mountain climbers (մաունթին քլայմբերս)* - լեռնագնաց, *jack knife - (ջեք նայֆ)* - ծալովի դանակ, *bridge (բրիջ)* - կամուրջ, *body band (բադի բենդ)* - օղագոտի, *ժապավեն, butterfly weight- թիթեռնիկ, bunny hops(բանի հոփս)* - ճազարացատկ, *donkey kick (դանքի քիք)* - իշաքացի, *frog leap (ֆրոգ լիփ)* - գորտացատկ և այլն²⁴:

6.Օտարաբանություններ. մարզական ակումբներում հաճախ շատ հաջող հայացված մարզանունների փոխարեն գործածվում են դրանց օտար տարբերակները, մինչդեռ չպետք է մոռանանք, որ «օտարաբանությունների գործածությունը պետք է նպատակային լինի, այսինքն՝ անհրաժեշտությամբ պայմանավորված»²⁵:

Պետք է ասենք, որ մարզական ակումբներում մարզվում են ոչ միայն տեղացիներ, այլև այլազգիներ, և մարզիչները երբեմն մարզումները անցկացնում են երկու լեզվով՝ հայերեն, անգլերեն, երբեմն էլ՝ նաև ռուսերեն: Թերևս այս հանգամանքն էլ է նպաստում, որ նույնիսկ վաղուց արդեն հայացված մարզանունները այդպես էլ լայն գործածություն չեն

²⁴Տե՛ս **Սաղաթեյան Ռ.**, Բառիմաստի ընդլայնումը որպես ֆիթնեսային տերմինների առաջացման աղբյուր 2021/2, Բանբեր ԵՊՀ, 72-79 էջեր:

²⁵Տե՛ս **Ավետիսյան Յու.**, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014, էջ 45:

ստանում՝ իրենց տեղը զիջելով օտար տարբերակին: Սակայն եթե օտար բառի դիմաց արդեն ունենք հայերեն համարժեք, ոչ մի դեպքում դրանց օտար տարբերակները չպետք է խրախուսվեն՝ ոլորտը քիչ թե շատ կայունացնելու նկատառումից ելնելով: Դիտարկենք մի քանի օրինակներ. *balance - (բելընս)* - թարգմանաբար նշանակում է *հավասարակշռություն*, որը մարդու հավասարակշռությունը զարգացնող տարբեր դիրքեր է նախատեսում: Թերևս երկարահունչ լինելու պատճառով շատ չի գործածվում: Ռուսերենի միջնորդությամբ պայմանավորված՝ հիմնականում շրջանառվում է *բալանս* տարբերակով: *Squat (սքուոթ)*- անգլերենից բառացի թարգմանությամբ նշանակում է *պագած նստել, կույզ գալ*: Ըստ էության՝ *սքուոթ*-ը սովորական *կքանխստն* է, բայց ֆիթնեսային ակումբներում գերազանցապես գործածվում է անգլերեն տարբերակը, որը չպետք է խրախուսվի: *Bar (բար)* - բառացի թարգմանվում է *ձող*: Այն ձողանման հատուկ հարմարանք է, որի վրա տարբեր քաշի ծանրություններ ավելացնելով կամ պակասեցնելով՝ հեշտացնում կամ բարդացնում են տվյալ վարժությունը: *Մարզաձող*-ը տերմինի հայերեն համարժեքն է, չնայած մարզասրահներում նախապատվությունը տալիս են փոխառյալ տարբերակին: *Stretching-սթրեթչինգ*- անգլերեն *stretch* բառից, որ բառացի թարգմանությամբ նշանակում է *ձգում*: Սթրեթչինգը վարժությունների ամբողջություն է, որը նպաստում է մարմնի բոլոր մկանների ձգվելուն, երկարացվելուն, որի հետևանքով մարմինը ավելի ճկուն է դառնում: Չնայած հայերեն *ձգում* տարբերակը վաղուց արդեն գործածության մեջ է դրված, բայց սթրեթչինգ-ը համառոտ են իր տեղը չի զիջում: *Singl- (սինգլ)*- տվյալ վարժությունը մեկ անգամ կատարելու հրահանգ է, որը բառացի թարգմանվում է *մի, միակ, մեկական*: Կարելի է պարզապես հրահանգել *մեկ անգամ*, բայց մարզասրահներում ընդունված է *սինգլ* տարբերակը, որը ոչ մի կերպ չի արդարացվում, իսկ *double-ն (դաբլ) կրկնակի-ն է*, որը դարձյալ մնում է հետին պլանում: *Easy run (իզի ռան)*- բառացի *easy* նշանակում է *հանգիստ, հեշտ, պարզ, run վազք*, այսինքն՝ *թեթև, ոչ արագ, վազք*: Չնայած բառակապակցության հայերեն համարժեքը՝ *թեթև վազք*, վաղուց շրջանառության մեջ է, բայց ֆիթնեսային ակումբներում գերազանցապես գործածվում է անգլերեն տարբերակը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ժամանակակից ֆիթնեսային տերմինների ամենատարածված աղբյուրներից մեկը անգլերենն է: Ֆիթնեսային օտար տերմինների մեծ մասը բառարանային բառացի թարգմանությամբ բոլորովին այլ նշանակություն ունի և չի արտահայտում դրանց տերմինային արժեքը:

Ֆիթնեսային բառապաշարում շատ են նաև բառակապակցական տերմինները: Եվ ինչքան էլ մենք փորձենք ստեղծել փոխառված ֆիթնեսային տերմինների հայերեն համարժեքները, այնուամենայնիվ դրանց մեծ մասի օտար տարբերակը ավելի բարեհունչ է,

կարճ և ամբողջությամբ է արտահայտում տվյալ հասկացության իմաստը: Ուստի այս փուլում ավելի կարևոր է դրանց համակարգումն ու հանրայնացումը²⁶:

Օգտագործված գրականության ցանկ

ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներ(հոդվածների ժողովածու), Երևան, 2020:

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:

Ավետիսյան Յու. և այլք., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014:

Ավետիսյան Յու. և այլք., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Բ, Երևան, 2015:

Ավետիսյան Յու., Թեյլան Լ., Սարգսյան Լ., Արդի հայերենի բառապաշարը, Երևան, 2020:

Բարսեղյան Հ., Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 2006:

Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, 1982:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

Աղայան Էդ., Արդիհայերենիբացատրականբառարան,Երևան, 1976:

Ասմանզուլյան Ա. և Հովհաննիսյան Մ.,Անգլերեն-հայերենբառարան,Երևան, 1984:

Բաբայան Կ.,Մարմնամարզականտերմիններիտեղեկատուբառարան, Երևան, 1985:

Բարաթյան Ն.,Անգլերեն-հայերենբառարան,Երևան, 2011:

Էլոյան Ս., Արդիհայերենինորաբանություններիբառարան, Երևան, 2002:

Հայրապետյան Ա., Օտարբառերիբառարան, Երևան, 2011:

Ղարիբյան Ա., Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1977:

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

<https://sport.news.am/arm>

Goodlooker.ru, Групповые тренировки: все виды направления. Самые подробные

обзор:<https://ru.wikipedia.org/wiki/%D0%A4%D0%B8%D1%82%D0%BD%D0%B5%D1%81#%D0%9D%D0%B0%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F>

<http://www.pravilnoe-pokhudenie.ru/populyarnye-vidy-fitnessa.shtml>

<https://www.webmd.com/fitness-exercise/features/fitness-programs-that-fit#1>

<http://www.englishdom.com>

<http://langformula.ru> fitness>

²⁶Մեր հաջորդ հոդվածում կանդրադառնանք նաև ժամանակակից ֆիթնեսային տերմինների հայերենացման հնարավոր ուղիներին:

<http://m.workout.su>

niv.ru, Словарь бодибилдинга, фитнеса и спортивной медицины

РЕЗЮМЕ
ПРИМЕНЕНИЕ ФИТНЕС - ТЕРМИНОВ В СПОРТИВНЫХ КЛУБАХ:
ПРОБЛЕМЫ ИХ АРМЕНИФИКАЦИИ
Сагателян Рита

В данной статье рассмотрены иностранные обозначения фитнес упражнений, которые употребляются в современном тренажерном зале. В результате нашего анализа выяснилось, что большинство современных фитнес-терминов практически не переводится, однако необходимо предпринять усилия для их распространения с целью регулировки данной сферы в той или иной степени.

Ключевые слова: Фитнес, фитнес-терминология, заимствования, интернационализмы, варваризмы, эквиваленты армянских слов.

SUMMARY
APPLICATION OF FITNESS TERMS IN SPORTS CLUBS: PROBLEMS
OF THEIR ARMENIFICATION
Saghatelyan Rita

This article explores the foreign terms commonly used to label fitness exercises in modern gyms. Our analysis reveals that the majority of contemporary fitness terms are rarely translated. Nevertheless, there is a need to promote their widespread use, aiming to regulate this area to some extent.

Key words: Fitness, fitness terms, loanwords, internationalisms, barbarism, armenian equivalent.

ԼԱՉԻՆ ՏԵՂԱՆՎԱՆ ՄՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վարդանյան Արտակ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
բանասիրական գիտությունների թեկնածու,
ավագ գիտաշխատող.

artva@list.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-254

Բանալի բառեր. Արցախ-Սյունիքի բարբառ, Սյունիք աշխարհ, Աղահեճ գավառ, հնչյունափոխություն, հնչյունափոխության շղթա, միտումնավոր թուրքականացում, հայկական ավանդական տեղանուն:

Նախաբան

Մեծ Հայքի Սյունիք աշխարհի գավառներից մեկը հայոց հնագույն աշխարհագրական-տիեզերագիտական երկասիրություն «Աշխարհացույցը» հիշատակում է *Աղահեճք* անվանմամբ, որը հետագայում, ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով բաժանվել է երկու գավառակների՝ Քաշաթաղի և Խոժոռաբերդի¹:

Իր տարածքով Աղահեճք գավառին համապատասխանող *Լաչինի* շրջանի և համանուն շրջկենտրոնի անունը մեր իրականության մեջ առանց որևէ հիմնավորման համարվել է օտար տեղանուն, թեև ժամանակին հնչել է նաև հակառակ կարծիք²: Ուստի, համոզվենք՝ արժանահավա՞տ է այն օտար համարելու վարկածը:

Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության վերջում բերված՝ Սյունիքի 12 գավառների եկեղեցական հարկացուցակում Աղահեճ գավառի 43 բնակավայրերի մեջ չկա Լաչին անունը կրող կամ հնչողությամբ նման որևէ բնակավայրի անուն: Միակ պատմական բնականունը, որի հետ կարող է կապ ունենալ այսօրվա Լաչինը, հենց Աղահեճ կամ Աղահեճք գավառանունն է:

Այս ենթադրությունը հիմնավորելու համար պարզենք, թե Սյունիքի բարբառի օրենքներով ինչպիսի հնչյունափոխության կարող էր դարերի ընթացքում ենթարկվել Աղահեճ տեղանունը:

Դիտարկումներ

Արցախ-Սյունիքի բարբառի խոսվածքներին բնորոշ է բազմավանկ բառերի անշեշտ վանկերի ձայնավորների *ը*-ի հնչյունափոխվելը կամ անկումը, ինչպես՝ *ածելի > ծիլի*, *աղաչանք > դանչա(ն)ք*, *ճախարակ > չըխարակ*, *ազատել > ըզաղէլ*, *անոթի > նօթէ*, *աղաման > ըղաման*, *անալի > նալի* և այլն:

¹ Ս. Օրբելյան, *Սյունիքի պատմություն*, Ե., 1986, էջ 70-71:

² Ա. Վարդանյան, *Հայկական և արդյոք Լաչին տեղանունը*, Անկախություն, 01.09.1994:

Հայերենին և նրա տարածքային տարբերակներին բնորոշ է նաև լ հնչյունի դիմաց *ղ*-ի առկայությունը, ինչպես՝ *տիղմ-տիլ, ջիղ-ջիլ, բոլոճ-բղոճ, լինել-եղնել, աղի-անալի, մատախուղ-մատախլապատ*, անձնանուններից՝ *Լազար-Ղազար, Ալեքսանդր-Աղեքսանդր, Լևոն-Ղևոնդ* և այլն:

Հաշվի առնելով տեղական բարբառի հնչյունափոխության վերոհիշյալ կանոնները՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ Աղահեճը Արցախ-Սյունիքի բարբառում ունեցել է Լահեճ ձևը: Օրինակ՝ «Գնում է *Աղահեճի* ձորը» նախադասությունը բարբառում կարող էր հնչել. «Քինամ ա *Լահեճին* դիրն»: Սեռական հոլովի հենց այս՝ *Լահեճին* ձևից էլ դժվար չէ բխեցնել օտար-աղավաղված Լաչին ձևը (*Լահեճին* > *Լահճին* > *Լաճին* > *Լաչին*): Հնչյունափոխության այս վերջին աստիճանին, կարծում ենք, նպաստել է նաև ժողովրդական ստուգաբանությունը՝ թուրքերեն *laçın* («բազե») բառի նմանությամբ³: Եվ քանի որ Արցախ-Սյունիքի բարբառին խորթ չէ նաև այդ բառի *լաչին* («բարձրահասակ, սլացիկ») համանունը⁴, այն ընդունվել է նաև տեղաբնիկների կողմից:

Հիշենք, որ հայկական տեղանունների թուրքականացման ամենատարածված ձևերից մեկը, թերևս, տեղանունների այնպիսի միտումնավոր խեղաթյուրումն է, որը, անկախ նրա արտահայտած իմաստից, ինչ-որ նշանակություն է ունենում թուրքերենում կամ ադրբեջաներենում, ուստի, խեղաթյուրողների կարծիքով, դա «ապահովում է» տվյալ տեղանվան «թուրքական ծագում» ունենալու տպավորությունը:

Խոսքը, իհարկե, մի լեզվից մյուսին անցնելիս տեղանունների՝ տվյալ լեզվի օրենքներին համապատասխան կրած հնչյունափոխությունների մասին չէ, ինչպես Ագուլիսը թուրքերենում դառնում է *Əylis*, Չազաձորը՝ պարսկերենում՝ *زنگزور* *Zangazur* և այլն, այլ մեր պատմական տեղանունները միտումնավոր օտարահունչ դարձնելու և յուրացնելու մասին, որի շատ ակնհայտ ձգտում և փորձ ունեն թե՛ թուրքերը և թե՛ մանավանդ ադրբեջանցիները: Հենց այս «սկզբունքով» է ադրբեջանցիների կողմից ընտրվել տեղանվան *Լաչին* տարբերակը:

Ի դեպ, աղավաղված տեղանվան որևէ տրամաբանական բովանդակություն ունենալը բոլորովին պարտադիր չէ աղավաղիչների համար: Դրանում կարելի է համոզվել՝ ծանոթանալով ընդամենը հետևյալ մի քանի օրինակներին:

Նախիջևանի *Շահապոնք* կամ *Շահապոնս* բերդավանը, որը հազարամյակներ շարունակ Շահապոնի տոհմի ամրոցն է եղել⁵, դարձրել են *Շահբուզ* (*Şahbuz*) (պարսկերեն՝ *շահ* («թագավոր») և թուրքերեն *բուզ* («սառույց») բառերից, բառացիորեն ստացվում է իմաստագուրկ և անհեթեթ մի բառակապակցություն՝ «թագավորի սառույց»), *Խաղխաղ*

³ *Ադրբեջաներեն-հայերեն բառարան* (խմբ.՝ Ի. Մամեդով), Ե., 1987, էջ 434:

⁴ **Ա. Սարգսյան**, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 237:

⁵ **Ս. Օրբելեան**, *Պատմություն նահանգին Միսական, հ. Ա*, Փարիզ, 1859, էջ 52: **Ա. Այվազյան**, *Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. 2, Ճահուկ-Շահապոնք գավառ*, Ե., 2010, էջ 18:

գավառանունը⁶ դարձրել են *Ղազախ (Qazax)* («բխեցնելով» *ղազախ* թյուրքական ցեղանունից), *Տավուշը*⁷ դարձրել են *Թովուզ (Tovuz)* («կապելով» քրդերեն *թավուս* («սիրամարգ» բառի հետ):

Բնիկ հայկական տեղանվան խեղաթյուրման ամենաաղաղակող օրինակներից է նաև Նախիջևանի տարածքի վերջին հանաբնակ մեծ բնակավայրի՝ *Ազնաբերդի* (ստուգաբանվում է հին հայերենի *ազն* («տոհմ, սերունդ, զարմ, ազգ») և *բերդ* արմատներով) անունը խորհրդային շրջանում պաշտոնապես *Ազնաբյուրդ (Əznəbyurd)* դարձնելը և որպես *Əziz Nəbinin yurdu*՝ «Ազիզ Նաբինի ամառանոց» «ստուգաբանելը»⁸: Սակայն, թե ով էր եղել այդ «արժանավոր» Ազիզ Նաբին, այդպես էլ չիմացան ո՛չ տեղաբնիկ հայերը, ո՛չ էլ եկվոր ադրբեջանցիները: Իսկ հետագայում՝ անկախությունից հետո, ադրբեջանցի կեղծարարները, իրենք էլ չհավատալով սեփական հորինվածքին, կրկին վերափոխեցին գյուղանունը՝ այս անգամ արդեն *Չալխանղալա (Calxanqala)*: Չավեշտալին, սակայն, այն է, որ սա էլ իրականում ոչ այլ ինչ է, քան գյուղից ոչ հեռու գտնվող նշանավոր *Ճահուկ բերդի* (Ճահկաբերդի) պարսկերեն چالخانقلعه *Čalxānqale* անվանումը⁹:

Նման ճակատագրի արժանացած հայկական բազմաթիվ այլ աշխարհագրական անունների շարքում է նաև *Շուշի* տեղանունը¹⁰: Մեր պատմության ու մշակույթի նշանավոր կենտրոն *Շուշի* բերդաքաղաքի անվան ստուգաբանության թերևս ամենաարժանահավատ տարբերակը տեղանունը Արցախի բարբառի *շոշ* («ծառի ընձյուղ», «բարձր տեղ», «բարձունք») բառից բխեցնելն է: Այս բառը հայերենի բարբառներում դրսևորվում է նաև *շուշ* («ուղիղ բարձրացած, ուղղաբերձ»)՝ և *շիշ* («ծառի կատար») ձևերով: Քանի որ Արցախի բարբառում միավանկ բառերի *ու* ձայնավորը հնչյունափոխվում և դառնում է *օ* (կուժ-կոժ, սուտ-սուտ, տուն-տոն, փուշ-փոշ և այլն), հավանաբար բառի նախնական *շուշ* տարբերակից է բարբառում առաջացել *շոշ* ձևը: Վերջինից է ակնհայտորեն բխում նաև *Շուշի*ից ոչ հեռու գտնվող *Շոշ* գյուղի անունը: Անցյալում ամրոցի կրած *Շուշի բերդ* կամ *Շոշի բերդ*, *Շոշի դալա*, *Շոշի սղնախ*, ինչպես նաև *Քարագլխի բերդ* անունները¹² հավասարազոր են, քանզի բոլորն էլ ունեն «բարձունքի ամրոց» իմաստը, և դրանցում ակնհայտորեն նկատի է առնված հենց *Շուշի*ի աշխարհագրական դիրքը: Սակայն, տեղանունների սեռական հոլովը և՛

⁶ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Հ. 2, Ե., 1986, էջ 631:

⁷ Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Հ. 5, Ե., 1986, էջ 48:

⁸ Ա. Վարդանյան, *Նախիջևանի որոշ տեղանունների ստուգաբանության շուրջ*, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2018, էջ 260-261:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Ա. Վարդանյան, «*Շուշի*» տեղանունի ստուգաբանությունը, Հանդես ամսօրեայ, թիվ 1-12, Վիեննա, 2020, էջ 479-484:

¹¹ Ս. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 3, Ե., 1944, էջ 535:

¹² Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Հ. 4, Ե., 1998, էջ 161:

գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ հայերենի բարբառների մեծ մասում կազմվում է առավելապես *w* հոլովիչով (Երևան-*Երևանա*, Վան-*Վանա*, Ճահուկ-*Ճահկա*, Գարդման-*Գարդմանա* և այլն), ուստի, անկասկած, Շուշին ունեցած պետք է լինի նաև *Շուշա* սեռականաձև տարբերակը, որի վկայությունն է այսօր էլ Արցախի բարբառում կիրառական *Շուշվա* ձևը: Ըստ հոլովիչների տարբերվող՝ սեռականաձև այս մի քանի ձևերից ադրբեջանցիները, փաստորեն, «հավանել են» *Շուշա (Տuշa)* տարբերակը, նմանեցնելով ադրբեջաներեն *şüşə* («ապակի») բառին և մոռանալով, որ պարսկերեն شیشه *šišē* ձևից փոխառյալ այս բառի երկու ձայնավորներն էլ իրենց լեզվում քմային են, իսկ քաղաքի՝ իրենց նախընտրած *Şuşa* անվանման ձայնավորներից... ոչ մեկը քմային չէ:

Փաստորեն, հենց այս դավադիր միտումով էլ *Աղահեճը* դարձել է *Լաչին*: Եվ այս տեղանվան աղավաղումն էլ ակնհայտորեն կարելի է դասել հայկական տեղանունների՝ ադրբեջանցիների կողմից միտումնավոր խեղաթյուրման և շարունակական «ազգայնացման» հանցավոր շարքին:

Ի դեպ, այս *Աղահեճ-Լաչին* անցման հավաստիության մասին են խոսում նաև միևնույն կաղապարով հնչյունափոխված՝ հայկական տեղանունների մի ամբողջ շարք կազմող համանման նախադեպերը՝ *Եղեգիս-Ալայազ*, *Ողոհի (Աղահեցիկ)-Ալահի*, *Ուղտիք (Որադե)-Օլթի* և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, *Լաչին* տեղանունը ուղիղ կապ ունի նույն տարածքի պատմական *Աղահեճ* կամ *Աղահեճք* գավառանվան հետ: Վերջինս հնչյունափոխվել է Արցախ-Սյունիքի բարբառի հնչյունափոխության օրենքներով՝ հնչյունափոխությունների հետևյալ շղթայով՝ *Աղահեճ > Ալահեճ > Լահեճ > Լահեճ(ին) > Լահճ(ին) > Լաճ(ին) > Լաչին*: Հնչյունափոխության վերջին աստիճանը թեև պայմանավորված կարող է լինել նաև ժողովրդական ստուգաբանությամբ՝ թուրքերեն *laçın* («բազե») բառի և Արցախ-Սյունիքի բարբառում առկա համանուն *լաչին* («բարձրահասակ, սլացիկ») բառերի նմանությամբ, այնուամենայնիվ առկա է հայկական ավանդական տեղանվան միտումնավոր աղավաղման և թուրքականացման երևույթ:

Օգտագործված գրականության ցանկ

Ադրբեջաներեն-հայերեն բառարան (խմբ.՝ Ի. Մամեդով), Ե., 1987:

Այվազյան Ա., Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. 2, Ճահուկ-Շահապոնք գավառ, Ե., 2010:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 2, Ե., 1988:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հ. 4, Ե., 1998:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, շ. 5, Ե., 2001:

Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 3, Ե., 1944:

Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Ե., 2013:

Վարդանեան Ա., «Շուշի» տեղանունի ստուգաբանությունը, Հանդես ամսօրեայ, թիվ 1-12, Վիեննա, 2020:

Վարդանյան Ա., Հայկական է արդյոք Լաչին տեղանունը, Անկախություն, 01.09.1994:

Վարդանյան Ա., Նախիջևանի որոշ տեղանունների ստուգաբանության շուրջ, «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2018:

Օրբեյան Ս., Սյունիքի պատմություն, Ե., 1986:

Օրբելեան Ս., Պատմություն նահանգին Սիսական, հ. Ա, Փարիզ, 1859:

РЕЗЮМЕ ЭТИМОЛОГИЯ ТОПОНИМА ЛАЧИН Варданын Артак

В статье фонетическим и семантическим анализом доказывается, что топоним *Лачин* имеет прямую связь с названием провинции *Աղսիկն Ալաիս* или *Աղսիկնք Ալաիսկ'* Сюникской губернии исторической Армении. Топоним был фонетически изменен согласно законам чередований звуков Арцах-сюникского диалекта следующей цепочкой фонетических изменений: *Ալաիս > Ալաիս > Լաիս > Լաիս(ին) > Լահ(ին) > Լաչ(ին) > Լաչ'ին*.

Хотя последняя степень изменения может быть обусловлена и народной этимологией – сходством с тюркским словом *laçın* ("сокол") и одноимённым словом *լաչին laç'in* ("высокий, стройный") Арцах-сюникского диалекта, тем не менее, наблюдается явление намеренного искажения и тюркизации традиционного армянского топонима.

Ключевые слова: Арцах-сюникский диалект, Сюникская губерния, провинция Агаиц, чередование звуков, цепочка фонетических изменений, преднамеренная тюркизация, традиционный армянский топоним.

SUMMARY ETYMOLOGY OF THE TOPONYM LACHIN Vardanyan Artak

The article proves by phonetic and semantic analysis that the toponym Lachin has a direct connection with the name of the province *Աղսիկն Ալաիս* or *Աղսիկնք Ալաիսկ'* of the Syunik ashkharh of historical Armenia. The toponym was phonetically changed according to the laws of alternation of sounds of the Artsakh-Syunik dialect by the following chain of phonetic changes: *Ալաիս > Ալաիս > Լաիս > Լաիս(ին) > Լահ(ին) > Լաչ(ին) > Լաչ'ին*.

Although the latter degree of change may also be due to folk etymology - similarity with the Turkic word *laçın* ("falcon") and the word of the same name *լաշին* *laç'in* ("tall, slender") of the Artsakh-Syunik dialect, nevertheless, the phenomenon is observed deliberate distortion and Turkization of the traditional Armenian toponym.

Key words: Artsakh-Syunik dialect, Syunik ashkharh, Aghahech province, alternation of sounds, chain of phonetic changes, deliberate Turkization, traditional Armenian toponym.

ОБУЧЕНИЕ ПОЛЯКОВ ФОНЕТИКЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА: НА ОСНОВЕ «АРМЯНСКОЙ ГРАММАТИКИ» АНДЖЕЯ ПИСОВИЧА (ИЗБРАННЫЕ ВОПРОСЫ)¹

Тшецяк Лукаш (Trzeciak Łukasz)

Поморский университет в Слупске (Польша)

кандидат наук

адъюнкт

lukasz.trzeciak@upsl.edu.pl

<https://orcid.org/0000-0003-1999-5004>

DOI: 10.54412/2953822X-2023.1-260

Ключевые слова: армянский язык как иностранный, фонетика армянского языка, фонетика польского языка, сопоставительная фонетика, обучение фонетике, польскоязычная аудитория.

Фонетика имеет важное значение при обучении иностранному языку. Общеизвестно, что владеть языком значит владеть также правильным произношением (стоит при этом заметить, что фонетика играет большую роль в речевой коммуникации) — поэтому фонетика является значимым аспектом лингвистической компетенции учащихся, требующим особого внимания, начиная с начального этапа обучения (необходимо иметь в виду, что процесс обучения фонетике — особенно работа над совершенствованием произношения — должен проводиться на всех этапах обучения иностранному языку).

Обучение фонетике тесно связано с овладением учащимися как теоретическими знаниями, так и практическими навыками, необходимыми в дальнейшем при обучении всяким видам речевой деятельности.

Курс армянской фонетики занимает особое место в системе обучения армянскому языку как иностранному.

Данная работа посвящается тематике обучения поляков фонетике армянского языка².

Нет польских учебников по армянскому языку и поэтому в Польше при обучении армянскому языку как иностранному используются авторские материалы преподавателей (можно также использовать учебники на других языках, напр.: на русском³ и английском⁴).

1 Автор благодарит профессора Анджея Писовича и магистра Анжелу Каюмову за замечания и помощь.

2 Об армянской фонетике и фонологии см. подробнее: **Առաքելյան Վ.**, *Ճամանակակից հայերենի հնչյունաբանություն*, Երևան 1955; **Խաչատրյան Ա.**, *Ճամանակակից հայերենի հնչյունաբանություն*, Երևան 1988; **Vaux B.**, *The Phonology of Armenian*, Oxford 1998; **J. Dum-Tragut**, *Armenian. Modern Eastern Armenian*, Amsterdam – Philadelphia 2009, с. 12–59; **Սուրիաշյան Ա., Սուրիաշյան Զ., Ֆելքրյան Ս.**, *Ճամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառազուգականություն): Դասագիրք բանասիր. ֆակուլտետների ուսանողների համար*, Երևան 2017, с. 23–114; об древнеармянской фонетике подробно см.: **Джаукян Г. Б.**, *Сравнительная грамматика армянского языка*, Ереван 1982, с. 23–76.

3 **Гарибян А. С., Гарибян Дж. А.**, *Краткий курс армянского языка. Пособие для самостоятельного изучения*, Ереван 1980; **Парнасян Н. А., Манукян Ж. К.**, *Самоучитель армянского языка*, Ереван 1990; **Մարտիրոսյան Լ., Չրախչյան Ս.**, *Հայերենի ինքնուսուցիչ = Самоучитель армянского языка*, Երևան 1999; **Тюнян С., Григорян О., Урутян Р.**, *Самоучитель армянского языка*, Ереван 2007; **Маркосян А. С.**, *Крунк Айастани = Հովնիկ Հայաստանի. Учебник армянского языка*, ч. I–IV, Москва 2022.

Основное внимание уделяется работам выдающегося польского лингвиста, армениста — Анджея Писовича. Ученый изучал армянский язык в университетах в Ереване (армянская филология), Кракове (курс армянского языка) и Париже (древнеармянский язык, западноармянский язык); он занимается изучением армянского языка и культуры, является автором многочисленных трудов.

А. Писович в «Бюллетене Армянского культурного общества» опубликовал 10 уроков армянского письма⁵ — № 24/25 (2001) — № 40/41 (2005) — и 25 уроков армянского языка⁶ — № 42/43 (2005) — № 98/99 (2019). «Краткий словарь армянско-польский польско-армянский» содержит краткий очерк армянского языка, в том числе армянской фонетики⁷.

Самой важной работой А. Писовича, посвященной армянской грамматике, является «Армянская грамматика (грабар — ашхарабар)»⁸. Исследователь описывает как древнеармянскую и среднеармянскую, так и современную армянскую фонетику и фонологию⁹. По мнению ученого, национальных литературных языков у армян два: восточноармянский и западноармянский — автор представляет сопоставительную фонетику восточноармянского и западноармянского языков.

Цель данного исследования — представить очерк сопоставительной фонетики восточноармянского и польского языков. Рассмотрим фонетические трудности, характерные для польскоязычной аудитории (эти трудности связаны как с различиями, так и со схожестью фонетических систем польского и армянского языков).

Общеизвестно, что в структуре фонетического курса необходимо учитывать фонетические особенности родного — в этом случае польского — языка и проявление их в речи учащихся. Уже на начальном этапе обучения (вводно-фонетический курс) следует учитывать изучение характеристик армянских звуков в их противопоставлении со звуками польского языка.

Мы остановимся, в основном, на артикуляционных трудностях, поскольку такие аспекты, как, например, ударение или интонация, требуют отдельного рассмотрения. Цель исследования определяет использование методов — общенаучных методов анализа и синтеза, анализа научной литературы и сравнительного метода.

Наше основное внимание направлено на презентацию сопоставительной фонетики восточноармянского¹⁰ и польского языков¹¹ — с учетом разниц; описанием фонетических

4 **Sakayan D.**, *Eastern Armenian for the English-speaking World*, Yerevan 2007; А. С. Avetisyan, *Eastern Armenian Comprehensive Self-Study Language Course*, Yerevan 2008.

5 Все уроки: **Pisowicz A.**, *Nauka pisma ormiańskiego*, „Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturalnego = Հայ մշակութային ընկերության Տեղեկագիր» 2021, № 106/107, с. 36–50 (https://otk.org.pl/wp-content/uploads/Biuletyn-106_107.pdf).

6 Все уроки: **Pisowicz A.**, *Nauka języka ormiańskiego*, „Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturalnego = Հայ մշակութային ընկերության Տեղեկագիր» 2021, № 106/107, с. 51–96 (https://otk.org.pl/wp-content/uploads/Biuletyn-106_107.pdf).

7 **Pisowicz A., Sedoian Sz., Ter-Grigorian N.**, *Mały słownik ormiańsko-polski polsko-ormiański = Փոքր բառարան հայ-լեհերեն և հայ-լեհերեն*, Kraków 2012, с. 19–23.

8 **Pisowicz A.**, *Gramatyka ormiańska (grabar — aszcharabar)*, Kraków 2014.

9 Там же, с. 38–54, 193–201, 206–227.

10 По мнению многих армянских ученых, существует один национальный литературный армянский язык с учетом двух его живых проявлений (вариантов); см. об этом: **Սարգսյան Ա.**, *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ: Չուզողական-տիպարական ընդունում*, Երևան 1985, с. 310; **Pisowicz A.**, *Gramatyka ormiańska...*, с. 204.

трудностей, возникающих при обучении армянского языка как иностранного (стоит при этом заметить, что явления будут рассматриваться на основе «Армянской грамматики» А. Писовича).

Гласные армянского языка незначительно отличаются от гласных польского языка. Гласные *h* [i], *t/k* [ɛ], *u* [a]¹², *n/o* [ɔ], *ni* [u] произносятся как аналогичные польские звуки¹³, напр.: арм. *hul* [im] ‘мой’ — польск. *igła* [‘ig.wa] ‘игла’; арм. *tz* [ɛj] ‘осел’ — польск. *echo* [‘ɛ.xɔ] ‘эхо’; арм. *uqun* [a‘zat] ‘свободный’ — польск. *agrest* [‘a.grest] ‘крыжовник’; арм. *ouhi* [ɔs‘la] ‘крахмал’ — польск. *osa* [‘ɔ.sa] ‘оса’; арм. *mi* [us] ‘плечо’ — польск. *usta* [‘us.ta] ‘рот, губы’.

Следует отметить, что гласный звук среднего ряда среднего подъема *h* [ə] (напр.: *huin* [əst] ‘согласно; в соответствии с’) вызывает особые трудности в произношении, так как в польском языке нет соответствующего эквивалента. А. Писович замечает, что произношение армянского [ə] похоже на произношение польского гласного *u* [i] (напр.: *mu* [‘mi] ‘мы’), но разница заключается в том, что язык немного отодвигается назад¹⁴.

Система согласных звуков армянского языка значительно больше отличается от польской.

Звонкие спиранты — *ç* [v], *q* [z], *ç* [ʒ]¹⁵, *η* [ɸ]¹⁶ — похожи на соответствующие польские звуки¹⁷, напр.: арм. *çurçiq* [va‘raʒ] ‘кабан’ — польск. *warga* [‘var.ga] ‘губа’; арм. *qurçiqur* [zɔra‘vaɹ] ‘генерал’ — польск. *zero* [‘zɛ.rɔ] ‘нуль, ноль’; арм. *çuw* [ʒam] ‘час’ — польск. *żona* [‘zɔ.na] ‘жена, супруга’; арм. *ηnlyuu* [ku‘kas] ‘Лука’ — польск. *Bohdan* [‘bɔɯ.dan] ‘Богдан’. Стоит при этом заметить, что армянские звонкие спиранты в исходе слова (ауслайте) не оглушаются, напр.: *uq* [maz] ‘волос’¹⁸ (ср. польск. *obraz* [‘ɔb.ras] ‘картина; образ; изображение’).

Парные глухие спиранты — *ç* [f], *u* [s], *ç* [ʃ]¹⁹, *hu* [x]²⁰ — произносятся как аналогичные польские согласные²¹, напр.: арм. *çhçhlyu* [fizi‘ka] ‘физика’ — польск. *fizyka* [‘fi.zi.ka] ‘физика’; арм. *ul* [sev] ‘черный’ — польск. *sowa* [‘sɔ.va] ‘сова’; арм. *ηnly* [ʃun] ‘собака’ — польск. *szum* [ʃum] ‘шум’; арм. *hupr* [xɔɹ] ‘глубокий’ — польск. *chory* [‘xɔ.ri] ‘больной’.

К армянским спирантам относится тоже глухой глоттальный щелевой согласный *h* [h] (напр.: *hu* [haj] ‘армянин’), который в польском языке отсутствует. По мнению А. Писовича по

11 См. подробнее: **Тихомирова Т. С.**, *Польский язык*, Москва 1978, с. 10–25; **Dukiewicz L., Sawicka I.**, *Gramatyka współczesnego języka polskiego. Składnia, morfologia, fonetyka i fonologia*, т. 3: *Fonetyka i fonologia*, Kraków 1995; **Киклевич А. К., Кожина А. А.**, *Польский язык*, Минск 2001, с. 27–43; **Gussmann E.**, *The Phonology of Polish*, Oxford – New York 2007; **Ostaszewska D., Tambor J.**, *Fonetyka i fonologia współczesnego języka polskiego*, Warszawa 2011; **Wiśniewski M.**, *Zarys fonetyki i fonologii współczesnego języka polskiego*, Toruń 2011; **Karczmarski B.**, *Wymowa polska z ćwiczeniami*, Lublin 2012.

12 Неогубленные гласные нижнего подъема: произношение армянского [a] похоже на произношение польского гласного [a]; разница заключается в том, что при произношении польского звука язык немного отодвигается вперед.

13 **Pisowicz A.**, *Gramatyka ormiańska...*, с. 219.

14 Там же, с. 219.

15 Звонкие сибиланты: армянский звук [ʒ] — постальвеолярный; польский согласный [z] — ретрофлексный.

16 Звонкие спиранты: армянский согласный *η* [ɸ] — увулярный; польский звук *h/ch* [x] (образуется только перед звонкими согласными) — велярный (заднеязычный). Об оглушении звонкого согласного (напр.: *hupr* [jɛx‘raɹ] ‘брат’) см. подробнее: **Pisowicz A.**, *Gramatyka ormiańska...*, с. 215.

17 **Pisowicz A.**, *Gramatyka ormiańska...*, с. 216.

18 Там же, с. 216.

19 Глухие сибиланты: армянский звук [ʃ] — постальвеолярный; польский согласный [ʃ] — ретрофлексный.

20 Глухие спиранты: армянский согласный *hu* [x] — увулярный; польский звук *h/ch* [x] — велярный (заднеязычный).

21 **Pisowicz A.**, *Gramatyka ormiańska...*, с. 216.

звучанию этот звук похож на соответствующий [h] в английском (напр.: *hot* [hɒt] ‘горячий, жаркий’) и немецком (напр.: *Haus* [haʊs] ‘дом’) языках; исследователь подчеркивает, что в исходе слова согласный [h] ослабляется, а после *л* [r] звук не произносится (напр.: *աշխարհաբար* [ɑʃxɑrɑ'baɾ] ‘ашхарабар; «мирской» — современный армянский язык») ²².

Носовые согласные — *ւ* [m], *ւ* [n] — произносятся как аналогичные польские звуки, напр.: арм. *ւնկ* [muk] ‘мышь’ — польск. *motyl* ['mɔ.tɨl] ‘бабочка’; арм. *ւերկ* [nɛrk] ‘краска’ — польск. *perka* ['nɛr.ka] ‘почка’. А. Писович замечает, что эти звуки — в отличие от польских (напр.: *niski* ['nis.ki] ‘низкий’) — никогда не смягчаются ²³, напр.: *ւիշ* [niʃ] ‘знак’. Ученый подчеркивает, что в случае, если [n] находится перед взрывными заднеязычными согласными ([g], [k], [k^h]), происходит ассимиляция, т.е. произносится велярный носовой согласный [ŋ] ²⁴, напр.: *հիւղ* [hiŋg] ‘пять’; *ընկեր* [ɛŋ'kɛr] ‘друг’; *ւտւր* [mɛŋk^h] ‘мы’ (ср. польск. *Kongo* ['kɔŋ.gɔ] ‘Конго’; *bank* [banɕk] ‘банк’).

Боковой согласный [l] ²⁵ похож на соответствующий польский звук, напр.: арм. *լուսին* [lu'sin] ‘луна’; польск. *lot* [lɔt] ‘полет’.

Полугласный [j] ²⁶ произносится как аналогичный польский звук, напр.: арм. *յասաման* [jasɑ'mɑn] ‘сирень’ — польск. *jaskółka* [jas'kuw.ka] ‘ласточка’.

В армянском языке два согласных похожих на польский звук *л* [r] (напр.: *րան* ['ra.nɑ] ‘рана’): *ռ* [r] (похож на польский согласный [r] в начале слова, напр.: *robak* ['rɔ.bak] ‘червь, червяк’, или двойной [rr], напр.: *kontrrɛwolucja* [kɔntr.rɛ.vɔ'lu.tʃɑ] ‘контрреволюция’) ²⁷ и *ր* [r], напр.: *րազմիկ* [raz'mik] ‘воин’; *րոպե* [rɔ'pɛ] ‘минута’. Разница между армянскими звуками заключается в том, что при произношении звука [r] происходит многократная вибрация языка (многоударный согласный), в то время как при произношении звука [r] кончик языка лишь слегка касается верхнего неба, и — без вибрации — происходит однократное размыкание речевых органов (одноударный согласный). В исходе слова звук палатализуется [r] > [rʲ], а — по мнению А. Писовича — немного оглушается, акустически напоминая звук [ʃ] ²⁸.

Звонкие взрывные согласные — *բ* [b] ²⁹, *դ* [d] ³⁰, *գ* [g] ³¹ — произносятся как соответствующие польские эквиваленты, напр.: арм. *բարաբար* [bara'raɱ] ‘словарь’ — польск.

22 Там же, с. 216.

23 Там же, с. 217.

24 Там же, с. 217.

25 Там же, с. 217.

26 Там же, с. 217.

27 Там же, с. 217.

28 Там же, с. 217.

29 В некоторых традиционно-исторически сложившихся случаях звонкий согласный в середине или исходе слова оглушается (либо произносится с придыханием), напр.: *խիտրել* [xɑ'p^hɛl] ‘хитрить, обманывать’, *եղբայր* [jɛx'paɾɟ] ‘брат’; см. об этом: А. Pisowicz, *Gramatyka ormiańska...*, с. 214–215.

30 В некоторых традиционно-исторически сложившихся случаях звонкий согласный в середине или исходе слова оглушается (либо произносится с придыханием), напр.: *կարդալ* [kaɾ't^hɑl] ‘читать’; о чем см.: А. Pisowicz, *Gramatyka ormiańska...*, с. 214–215.

baran ['ba.ran] 'баран'; арм. *ղանակ* [da'nak] 'нож' — польск. *dach* [dax] 'крыша; кровля'; арм. *գոլշկան* [gɔʒa'kan] 'имя существительное' — польск. *gołąb* ['gɔ.wɔmp] 'голубь'.

Глухие взрывные согласные — *ц* [p], *т* [t], *к* [k]³² — похожи на соответствующие польские звуки (но произносятся сильнее, чем они³³), напр.: арм. *պար* [paɾ] 'танец' — польск. *rajak* ['ra.jɔŋk] 'паук'; арм. *տարի* [ta'ri] 'год' — польск. *talerz* ['ta.lɛʂ] 'тарелка'; арм. *կով* [kɔv] 'корова' — польск. *krowa* ['krɔ.va] 'корова'.

К трудностям произношения можно отнести отсутствие в польском языке глухих придыхательных взрывных — *ч* [p^h], *т* [t^h], *к* [k^h]^{34,35}, напр.: *փետուր* [p^hɛ'tur] 'перо'; *թուր* [t^hur] 'меч'; *քար* [k^haɾ] 'камень'; эти согласные произносятся как глухие [p], [t], [k], но с придыханием³⁶.

Звонкие аффрикаты — *д* [dʒ]³⁷, *ж* [dʒ̣]³⁸ — произносятся как соответствующие польские звуки, напр.: арм. *ճուկ* [dʒuk] 'рыба' — польск. *dzwon* [dʒvɔn] 'колокол'; арм. *ջուր* [dʒur] 'вода' — польск. *dżdżownica* [dʒdʒɔv'ni.tsa] 'дождевой червь'.

А. Писович подчеркивает, что глухие аффрикаты — *δ* [tʃ̣]³⁹, *ճ* [tʃ̣]³⁹ — произносятся сильнее, чем польские звуки⁴⁰; напр.: арм. *ծով* [tʃɔv] 'море' — польск. *cebula* [tʃɛ'bu.la] 'лук; луковица'; арм. *ճուճ* [tʃantʃ] 'муха' — польск. *czas* [tʃas] 'время'.

По мнению ученого, придыхательные⁴¹ аффрикаты — *г* [tʃ^h], *з* [tʃ^h]⁴² — похожи на соответствующие польские звуки, напр.: арм. *ցորեն* [tʃ^hɛ'ɾɛn] 'пшеница' — польск. *cebula* [tʃɛ'bu.la] 'лук; луковица'; арм. *չամիչ* [tʃ^ha'mitʃ^h] 'изюм' — польск. *czas* [tʃas] 'время'.

31 В некоторых традиционно-исторически сложившихся случаях звонкий согласный в середине или исходе слова оглушается и произносится с придыханием, напр.: *կրկել* [jɛɾ'k^hɛl] 'петь'; см. об этом: **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 214–215. А. Писович подчеркивает, что в случае, если [g] находится перед гласным [i] (перед гласным [ɛ] — опционально), звук смягчается, напр.: *գիշեր* [gi'ʃɛɾ] 'ночь' (ср. польск. *gitara* [gi'ta.ra] 'гитара'); см. об этом: **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 214.

32 А. Писович подчеркивает, что в случае, если [k] находится перед гласным [i] (перед гласным [ɛ] — опционально), звук смягчается, напр.: *կես* [kɛs] 'половина' (ср. польск. *kiesza* ['kje.sa] 'мошна; кошель'); см. об этом: **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 214.

33 Там же, с. 215.

34 Согласные [p^h], [t^h], [k^h] по звучанию (по придыхательности) похожи на соответствующие английские звуки, напр.: *բլթ* [p^hɛm] 'булавка'; *թե* [t^hi:] 'чай'; *կիս* [k^his] 'целовать; поцелуй'.

35 А. Писович подчеркивает, что в случае, если [k^h] находится перед гласным [i] (перед гласным [ɛ] — опционально), звук смягчается, напр.: *քիթ* [k^hit^h] 'нос'; см. об этом: **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 214.

36 **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 215.

37 В некоторых традиционно-исторически сложившихся случаях звонкий согласный в середине или исходе слова оглушается, напр.: *դերձակ* [dɛɾ'tʃak] 'портной', *դեղձ* [dɛɾtʃ^h] 'персик'; см. об этом: **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 214–215.

38 Звонкие аффрикаты: армянский звук [dʒ̣] — постальвеолярный; польский согласный [dʒ̣] — ретрофлексный. Армянский согласный несколько смягченный, по звучанию похож на соответствующий английский звук, напр.: *ճնոց* ['dʒɪŋɡl] 'звон'. В некоторых традиционно-исторически сложившихся случаях звонкий согласный в середине или исходе слова оглушается (либо произносится с придыханием), напр.: *մրջյուն* [mɛɾtʃ^hjun] 'муравей', *նղունի* [vɔɾ'tʃ^hujn] 'приветствие; привет'; о чем см.: **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 214–215.

39 Глухие аффрикаты: армянский звук [tʃ̣] — постальвеолярный; польский согласный [tʃ̣] — ретрофлексный.

40 **A. Pisowicz**, *Gramatyka ormiańska...*, с. 215.

Очерк сопоставительной фонетики (восточно)армянского и польского языков выявляет как различия, так и схожесть фонетических систем исследуемых языков.

Необходимо иметь в виду, что при усвоении звуковой стороны армянского языка выступает на передний план интерференция со стороны родного — в этом случае польского — языка учащихся.

При овладении армянской фонетикой поляками может наблюдаться интерференция; отметим следующие наиболее типичные интерференционные явления, к которым относятся: произношение польского [i] на месте армянского [ə]; оглушение согласных (звонких спирантов) в исходе слова; замена армянских [b], [χ], [h] польским [x]; произношение польских [p], [t], [k] на месте армянских [p^h], [t^h], [k^h]; произношение польского [ɲ] на месте армянского [ni].

Библиография

- Гарибян А. С., Гарибян Дж. А., *Краткий курс армянского языка. Пособие для самостоятельного изучения*, Ереван 1980.
- Джаукян Г. Б., *Сравнительная грамматика армянского языка*, Ереван 1982.
- Киклевич А. К., Кожина А. А., *Польский язык*, Минск 2001.
- Маркосян А. С., *Крунк Айастані = Հոռնկ Հայաստանի. Учебник армянского языка*, ч. I–IV, Москва 2022.
- Парнасян Н. А., Манукян Ж. К., *Самоучитель армянского языка*, Ереван 1990.
- Тиоян С., Григорян О., Урутян Р., *Самоучитель армянского языка*, Ереван 2007.
- Тихомирова Т. С., *Польский язык*, Москва 1978.
- Առաքելյան Վ., *Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն*, Երևան 1955.
- Խաչատրյան Ա., *Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն*, Երևան 1988.
- Մարտիրոսյան Լ., Կիրակոսյան Մ., *Հայերենի ինքնուսույց = Самоучитель армянского языка*, Երևան 1999.
- Մարգարյան Ա., *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ: Չուգաղարական-տիպարական քննություն*, Երևան 1985.
- Սուրբապյան Ա., Սուրբապյան Բ., Ֆելեքյան Մ., *Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն): Դասագիրք բանասիր. ֆակուլտետների ուսանողների համար*, Երևան 2017.
- Avetisyan A. S., *Eastern Armenian Comprehensive Self-Study Language Course*, Yerevan 2008.
- Dukiewicz L., Sawicka I., *Gramatyka współczesnego języka polskiego. Składnia, morfologia, fonetyka i fonologia*, т. 3: *Fonetyka i fonologia*, Kraków 1995.
- Dum-Tragut J., *Armenian. Modern Eastern Armenian*, Amsterdam – Philadelphia 2009.
- Gussmann E., *The Phonology of Polish*, Oxford – New York 2007.

41 По мнению А. Писовича при произношении этих звуков аспирация не замечается; см.: А. Pisowicz, *Gramatyka ormiańska...*, с. 215.

42 Глухие аффрикаты: армянский (придыхательный) звук [t^h] — постальвеолярный; польский согласный [tʂ] — ретрофлексный. Армянский согласный несколько смягченный, по звучанию похож на соответствующий английский звук, напр.: *chicken* [ˈtʃɪkɪn] ‘цыпленок; курица’.

- Karczmarczyk B., *Wymowa polska z ćwiczeniami*, Lublin 2012.
- Ostaszewska D., Tambor J., *Fonetyka i fonologia współczesnego języka polskiego*, Warszawa 2011.
- Pisowicz A., *Gramatyka ormiańska (grabar — aszcharabar)*, Kraków 2014.
- Pisowicz A., *Nauka języka ormiańskiego*, „Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturalnego = Հայ մշակութային ընկերության Տեղեկագիր” 2021, № 106/107, с. 51–96 (https://otk.org.pl/wp-content/uploads/Biuletyn-106_107.pdf).
- Pisowicz A., *Nauka pisma ormiańskiego*, „Biuletyn Ormiańskiego Towarzystwa Kulturalnego = Հայ մշակութային ընկերության Տեղեկագիր” 2021, № 106/107, с. 36–50 (https://otk.org.pl/wp-content/uploads/Biuletyn-106_107.pdf).
- Pisowicz A., Sedojan Sz., Ter-Grigorian N., *Mały słownik ormiańsko-polski polsko-ormiański = Փոքր բառարան հայ-լեհերեն և լեհ-հայերեն*, Kraków 2012.
- Sakayan D., *Eastern Armenian for the English-speaking World*, Yerevan 2007.
- Vaux B., *The Phonology of Armenian*, Oxford 1998.
- Wiśniewski M., *Zarys fonetyki i fonologii współczesnego języka polskiego*, Toruń 2011.

РЕЗЮМЕ

ОБУЧЕНИЕ ПОЛЯКОВ ФОНЕТИКЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА: НА ОСНОВЕ «АРМЯНСКОЙ ГРАММАТИКИ» АНДЖЕЯ ПИСОВИЧА (ИЗБРАННЫЕ ВОПРОСЫ)

Тшецяк Лукаш (Trzeciak Łukasz)

Данная статья посвящена проблеме обучения поляков фонетике армянского языка. Цель данного исследования — представить очерк сопоставительной фонетики (восточно)армянского и польского языков. Рассматриваются фонетические трудности, характерные для польскоязычной аудитории (эти трудности связаны как с различиями, так и со схожестью фонетических систем польского и армянского языков). Фонетические трудности рассматриваются на основе «Армянской грамматики» выдающегося польского лингвиста, армениста — Анджея Писовича. При овладении армянской фонетикой поляками наблюдается интерференция (отмечаются наиболее типичные интерференционные явления).

Ключевые слова: армянский язык как иностранный, фонетика армянского языка, фонетика польского языка, сопоставительная фонетика, обучение фонетике, польскоязычная аудитория.

**ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ
ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ**

Քոշատաշյան Միլվա

Հայկական բժշկական ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու
ավագ դասախոս
silva.koshatashyan@mail.ru

Մալխասյան Սյուզաննա

Երևանի պետական բժշկական համալսարան
դասախոս
malkhassyuzi@gmail.com

Մարդիյան Մերի

Երևանի պետական բժշկական համալսարան
Ասիստենտ
mardian_21@hotmail.com

Լալայան Մեդա

Երևանի պետական բժշկական համալսարան
դասախոս
lalayan.seda@mail.ru

DOI: 10.54412/2953822X-2023.1-267

Բանալի բառեր. բանավեճի արվեստ, երիստիկա, սոփեստ, կոնֆլիկտ, փաստարկ:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում ու քաղաքակրթություններում կարիք է եղել խոսքով համոզելու, մարդկանց դիմելու, քարոզելու ձևը:

Քանզի արտաքին աշխարհի ճանաչողության ու իմացության գործընթացում մարդն ի սկզբանե ստիպված էր հաղթահարել բազմաթիվ դժվարություններ, վեճերի ու քննարկումների ճանապարհով լուծել զանազան բարդ խնդիրներ:¹

Դեռևս Հին Հունաստանից, Հռոմից մինչև մեր օրեր, հռետորական արվեստը մեծ դեր է ունեցել ժողովուրդների, պետությունների ներքին և արտաքին խնդիրները լուծելու հարցում: «Դասակարգային պայքարի սրումը, լայն մասսաների դերի ուժեղացումը պետական, հասարակական, մշակութային կյանքում պահանջում էին պերճախոսություն՝ կենդանի, գեղեցիկ, հուզիչ ու համոզիչ խոսքի հմտություն՝ իրենց քաղաքական հակառակորդների դեմ հաղթանակ տանելու, ինչպես և գիտության, փիլիսոփայության, գրականության և այլ բազմաթիվ բնագավառներում իրենց տեսակետները հիմնավորելու և տարածելու համար»:² Բանավեճի երևույթի հետազոտման հիմքերը սկիզբ են առել դեռևս

¹ **Հովհաննիսյան Հ.**, Բանավեճի տեսություն և արվեստ. փիլիսոփայական քննախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ. 2019, էջ 12:

² **Արեշատյան Ս.**, Հռետորական արվեստի հիմունքները, Հայպետուսմանկհրատ, Երևան 1961, էջ 6:

մարդկային քաղաքակրթության նախաշեմին, երբ դեռ նոր էր ձևավորվում վիճելի հարցերի շուրջ մտքերի փոխանակության այդ գործընթացի նկատմամբ հետաքրքրությունը: Մարդկության քաղաքակրթության մեջ միշտ էլ եղել են տարակարծություններ, կոնֆլիկտներ, սկզբունքային բախումներ և քննարկումներ: Բանավեճի արվեստը՝ էրիստիկան, ձևավորվել և իր ծաղկման գագաթնակետին է հասել Հին Հունաստանում, թեև այս կամ այն չափով ուսումնասիրվել է նաև Հին աշխարհի տարբեր երկրներում: Հին Հունաստանում բանավեճի արվեստի սկզբնավորման ու կատարելագործման մեջ էական դերը սոփեստներինն է, որոնք կարծում էին, թե կյանքի պայքարում հաղթելու միջոցներից մեկն էլ բանավեճն է: Մեր ժամանակներում էլ այն չի կորցրել իր արդիականությունը. բանավեճը լայնորեն կիրառվում է առօրյա խոսքից մինչև դիվանագիտական տարբեր հանդիպումներում³:

Ըստ Սոփեստների՝ յուրաքանչյուր կարծիք կարելի է համոզիչ դարձնել դիալեկտիկայի և հռետորական արվեստի միջոցով: «Դիալեկտիկան սովորեցնում էր՝ ինչպես ճիշտ մտածել, ինչպես ճիշտ շարադրել մտքերը և ինչպես դա անել տպավորիչ ու ազդեցիկ»⁴ : Ուշագրավն այն է, որ սոփեստների խոսքում կարևորվել է ոչ թե թեմայի արամաբանությունը, ճշտությունը, այլ խոսքի կառուցվածքը, լեզվի տեխնիկական միջոցները, հիացմունք առաջացնելու հմտությունները: Ուստի «Ձայնի ելևէջումները, տոներ, տեմբրը, արտասանության տևողությունը ոչ միայն կապված են խոսքի բովանդակության հետ, այլև արտացոլում են խոսողի հուզական աշխարհը, ունկնդրին տոգորում համանման հույզերով ու ապրումներով»⁵:

Հին աշխարհի ընկալումը բանավեճի մասին կարևորվում էր վեճերի օրինաչափ բնույթով մարդկային հաղորդակցման շրջանակներում, հիմնվելով և ըմբռնելով վեճի դերն ու նշանակությունը, վեճերին փոխշահավետ և օգտակար եղանակներ և լուծումներ փնտրելու հետազոտությամբ: Բոլոր ժամանակներում ցանկացած ոլորտի զարգացումն ու արդիականությունը կախված է և կապված է տվյալ ժամանակի հասարակական, քաղաքական, մշակութային կարգավիճակից և ըստ այդմ զարգացման կամ անկման իր ուղիով է ընթանում: Իսկ մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացման որոշակի մակարդակ է, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով ու տիպերով: Մշակույթը հասարակարգերի, ազգությունների, ինչպես նաև կյանքի ու գործունեության առանձնահատուկ եղանակների զարգացման մակարդակը բնութագրելու միջոց է: Մշակույթը ժառանգում է նախկին մշակութային

³ Տե՛ս **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևանի համալսարանի հրատ., Երևան 1990, էջ 278:

⁴ **Հովհաննիսյան Հ.**, Բանավեճի տեսություն և արվեստ. փիլիսոփայական քննախոսություն, ԵՊՀ հրատ. 2019, էջ 15:

⁵ **Պողոսյան Պ.**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևանի համալսարանի հրատ., Երևան 1990, էջ 17:

նվաճումները՝ ներառելով դրանք հասարակական հարաբերությունների նոր համակարգի մեջ: Պատմությունը վկայում է, որ հասարակական – քաղաքական խնդիրների հետևանքով առաջացած պայքարները, կենսական նշանակություն ունեցող հարցերը, հրապարակային քննարկումները նպաստավոր պայմաններ են ստեղծում խնդրի ուսումնասիրության համար: Ուստի բանավեճի տեսության ձևավորման փուլերը առավել հասունացան և սկիզբ առան դեռևս մ.թ.ա 5-րդ դարի կեսերից Հունաստանի ակտիվ առաջնային հասարակական-քաղաքական կարգերի, պետական կառավարման առանձնահատկությունների, ապա մշակութային, գիտական, փիլիսոփայական, աշխարհայացքային, կրոնական ու բարոյագիտական բնույթի վիճաբանությունների հետևանքով: Այստեղ հարձակվելու, պաշտպանվելու և պայքարելու միակ զենքը խոսքն էր: Բայց այդ զենքից օգտվելու և ճիշտ գործածելու համար անհրաժեշտ են բավարար գիտելիքներ, հմտություններ, սեփական տեսակետ, տվյալ լեզվի բառապաշարին լավ տիրապետելու կարողություն, խոսքը հստակ, հակիրճ և դիպուկ շարադրելու ունակություն, համոզելու վարպետություն, տպավորիչ և վստահ խոսելու հմտություն: Այս ամենը համախմբված էր և պտտվում էր երեք հարցերի շուրջ՝ ինչպե՞ս ճիշտ մտածել, ինչպե՞ս ճիշտ շարադրել մտքերը և ինչպե՞ս դա անել տպավորիչ ու ազդեցիկ: Եվ այդ երեք հարցերին ի պատասխան մ.թ.ա. 6-5-րդ դդ. ձևավորվեց սինթետիկ գիտելիքի մի ոլորտ՝ դիալեկտիկան:

Ըստ հույն իմաստասերների՝ վեճերի առաջացման պատճառները մարդու, առանձին անհատի սուբյեկտների զգայական առանձնահատկություններն են և այդ անհատների կենսափորձի միջև եղած տարբերությունները: Հին աշխարհի իմաստուններն իմացության զարգացման և գիտելիքի տարածման համար լայնորեն սկսեցին կիրառել երկխոսության մեթոդը՝ իրենց և իրենց հակառակորդների մտքերը շարադրելով հարց ու պատասխանի ձևով: Հին դիալեկտիկայի ամենակարևոր առանձնահատկություններից ու ձեռքբերումներից մեկը հենց նշված մեթոդի՝ բանավիճելու հարցուպատասխանային եղանակի մշակումն ու զարգացումն է: Հին մտածողների ներդրումը բանավեճի արվեստի մեջ մի կողմից սոփեստական, երիստիկական և մյուս կողմից՝ դիալեկտիկական վեճերի տարբերակումն է: Բանավեճն ուսումնասիրողները փորձել են առանձնացնել բանավեճի տեսակները: Դա կատարելու համար անհրաժեշտ է հստակեցնել, թե որ հիմունքով է դասակարգվում բանավեճը: Այս հարցի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Հաճախ բանավեճը դասակարգում են հետևյալ հիմունքներով՝ **ըստ արտահայտման լեզվական ձևի, ըստ դրսևորման կերպի, ըստ ձևավորման եղանակի, ըստ նպատակի, ըստ մասնակից կողմերի քանակի, ըստ անցկացման ձևի**⁶:

Հաշվի առնելով և ուսումնասիրելով Հին աշխարհի իմաստունների, մտածողների հարուստ և տարակարծիք ժառանգությունը, թողնելով բազմազան ճյուղերից բաղկացած դպրոցներ, աշխատություններ, խմբեր, մեթոդներ և այդ ամենը համախմբելով՝ կանխորոշեցին բանավեճի տեսության հետագա զարգացման ուղիներն ու սկզբունքները: Այս շրջանի մտածողները առանձնահատուկ ներկայացրեցին բանավեճի ծագումնաբանությունը՝

հնչեցնելով, տարածելով տարբեր կարծիքներ փաստեր և առաջացման տարբեր հոգեբանական, իմացաբանական և տրամաբանական հիմքեր:

Փորձեր են արվել տարբեր բնագավառներում: Մշակվել և կատարելագործվել են սեփական հայացքների փաստարկման, դրանց ճշմարտացիության և հակառակորդի դրույթների սխալականության մեջ ներկաներին համոզելու որոշ «դասական» եղանակներ ու սկզբունքներ: Եվ ընդհանրապես, բանավեճի խնդիրների հետազոտման կարևորագույն արդյունքը Հին աշխարհում պետք է համարել տրամաբանական գիտության և հռետորական արվեստի հիմնադրույթների ձևավորումը: Այդ շրջանի մտածողների մեծ և կարևոր ներդրումներից մեկը նաև բանավեճի հարցուպատասխանային մեթոդի հետ կապված՝ վեճի մեջ հարցի տեղի ու դերի, դրա նշանակության հետազոտումն էր: Բազմաթիվ հետազոտություններ և մեթոդներ այդ ժամանակաշրջանից արդիական են ժամանակակից աշխարհում, որոնք գործածվում են գրեթե ամենուր:

Նոր ժամանակներում նորովի զարգացած այդ արվեստն ունի իր հիմնադիրները, որոնք իրենց հերթին նոր միտումներ, պնդումներ և հայտնաբերումներ են արել՝ հաշվի առնելով ժամանակակից կյանքը, մարդկանց մտավոր զարգացումը, հնարավորությունները, տեղեկատվության աղբյուրները, իմացության և կրթության մակարդակը, մերօրյա արդի խնդիրները, դրանց լուծման եղանակները և մեթոդները: Ժամանակին համահունչ փոփոխվում է այդ ամենը, հետևաբար, այս արվեստն էլ ունի բազում տարբերություններ, եթե համեմատենք Հին աշխարհի հետ:

Նոր շրջանում առավել տարածում գտավ փաստարկման տեսաբանների ունեցած ծանրակշիռ ավանդը 20-րդ դարի երկրորդ կեսից ի վեր: Ժամանակի թելադրանքով, կապված հասարակական կյանքում հաղորդակցման երևույթների տեսակարար կշռի ավելացման, դրանց նշանակության աճի, բարդ խնդիրների համակողմանի քննարկման, որոշումների համատեղ ընդունման, կոնֆլիկտային հարցերը բանակցությունների ճանապարհով լուծելու սկզբունքների դերի ընդլայնման ու արմատավորման հետ, հետազոտողների շրջանում նկատելիորեն աճեց հետաքրքրությունը փաստարկման երևույթի, դրա առանձնահատկությունների, գործնականում առավել արդյունավետ համակարգերի ու եղանակների կիրառման հնարավորությունների նկատմամբ:

Բանավեճի տեսությունը ներկայումս լիարժեք և ավարտուն մշակված չէ: Բայց այդ ուղղությամբ արվում են քայլեր: Քանի որ հասարակական կյանքում ավելացել են վիճելի հարցերի շուրջ փոխանակության երևույթի դերը և նշանակությունը, հետևաբար բանավեճի նկամամբ հետաքրքրությունը և կարևորությունը մեծանում է: Ավելանում են բանավեճի մասին հոդվածներ, հետազոտություններ, աշխատություններ, որոնք ներկայացված են տարբեր տեսանկյունից: Մեր ժամանակներում ավելի լայն հետազոտություններ եղան 20-րդ դարի 2-րդ կեսից ի վեր:

Անհնար է անտեսել կամ թերագնահատել հաղորդակցման գործընթացների աճող դերն ու կարևորությունը հասարակության զարգացման ճանապարհին: Հասարակական

կյանքի արմատական վերափոխումներով հարուստ մեր ժամանակներում նկատելի է կարծիքների ազատ փոխանակության, հակադիր տեսակետների բախման, հրապարակային քննարկումների ու բանավեճերի յուրօրինակ «մակընթացության» մի իրավիճակ, որն իր հետ բերում է այդ երևույթների գիտական ուսումնասիրության, դրանց արդյունավետ վարման մեթոդների կատարելագործման նկատմամբ հասարակայնորեն ձևավորված պահանջումների ու հետաքրքրությունների նոր ալիք: Բանավեճի տեսության խնդիրների վերաբերյալ պատմափիլիսոփայական հարուստ ժառանգության առավել հանգամանալից ուսումնասիրման, հասարակական գործունեության տարբեր ոլորտներում վեճերի, դրանց առանձնահատկությունների ու մասնավոր կանոնների հետազոտման խնդիրներին զուգահեռ, նոր հեռանկարներ են բացվում բանավեճի երևույթի ուսումնասիրության բնագավառում՝ կապված հաղորդակցման ասպարեզում «համակարգչային հեղափոխության», մտածողության մեքենայացման, արհեստական ինտելեկտի ստեղծման ուղղությամբ իրականացվող գործընթացների հետ:

Բանավիճելու արվեստին տիրապետելու անհրաժեշտությունը, շատ կարևոր է նաև բժշկության ոլորտում: Օրինակ՝ «**Բանավեճ աբորտի խնդրի շուրջ**», որը, ինչպես գիտենք, պատմականորեն, [մանկասպանության](#) հետ մեկտեղ դիտվել է [ընտանիքի](#) պլանավորման, երեխաների գենդերային ընտրության, բնակչության վերահսկողության և տնային տնտեսությունների իրավունքի համատեքստում: ⁶ Այսօր, գերզարգացած տեխնիկայի ժամանակաշրջանում, հղիության 12-րդ շաբաթականում մայրը կարող է իմանալ երեխայի սեռը, տեղեկանալ երեխայի առողջական վիճակի մասին: Հատկապես այն դեպքում, երբ մայրը արդեն գիտի, որ լույս աշխարհ է բերելու հիվանդ երեխա: Ապագա մոր, առավել ևս ապագա երեխայի իրավունքների հարցերը հազվադեպ են հաշվի առնվում: Երբեմն հարցեր էին բարձրացվում աբորտի բարոյականության, [հղիության](#) կանխարգելման և երեխաներին թողնելու մասին (որպես մանկասպանության ձև), չնայած հիմնականում այդ բոլոր միջոցները օրենքով արգելված չէին: Այն ժամանակ, ինչպես և այսօր, նման քննարկումները հաճախ առնչվում էին մարդկային բնույթի, հոգու գոյության, կյանքի սկզբի և մարդկային անհատականության ծագման հարցերին: ⁷ Նույնիսկ եթե ընդունենք, որ սաղմը կյանքի իրավունք ունի, ապա կյանքի իրավունքը, ինչպես իրենք են կարծում, երբեք չի ներառում այլ մարդու մարմինն օգտագործելու իրավունքը: Աբորտի իրավունքի կողմնակիցների տեսանկյունից, ինչպես պետությունը չի կարող մարդկանց ստիպել դառնալ օրգանների կամ

⁶ **Boswell J.** *The Kindness of Strangers: The Abandonment of Children in Western Europe from Late Antiquity to the Renaissance.* — 1998. — ISBN 978-0-226-06712-4

⁷ **Spivack, C.**, *To Bring Down the Flowers: The Cultural Context of Abortion Law in Early Modern England // William & Mary Journal of Women and the Law.* — 2014. — № 1.

արյան դոնորներ, նույն կերպ նա չի կարող ստիպել կնոջը փրկել սաղմի կյանքը՝ վտանգելով սեփական առողջությունն ու կյանքը⁸:

Բժիշկն անցնում է շատ երկար և դժվար մասնագիտական ուղի, որի ընթացքում, ինչպես վերը նշեցինք, ցանկացած զարգացում տեղի է ունենում փոփոխությունների և տարաձայնությունների միջոցով, այդպես էլ պետք է պատրաստ լինել ճիշտ բանավիճելուն և սեփական տեսակետը համոզիչ մատուցելուն: Քանզի հիվանդի հետ հմտորեն վարվելաձևը շատ կարևոր գործոն է բժշկելու գործընթացում:

Սովորաբար բանավեճերը ոչ միայն սեփական տեսակետն ապացուցելու համար են, այլ նաև դիտվում են որպես անձնական զարգացման և սովորելու հնարավորություն: Հակառակ տեսակետների նկատմամբ հարգանքը և լսելու պատրաստակամությունը այս բանավեճերի էական տարրերն են:

Այսօր կրթական հաստատությունները խթանում են բանավեճի ակումբների և մրցույթների կազմակերպումը: ԵՊԲՀ-ում, ինստիտուտներում, քոլեջում ուսանողական խորհրդի և ակտիվ ուսանողների կողմից կազմակերպվում են բանավեճեր, որտեղ ընտրվում և քննարկվում են տվյալ ժամանակաշրջանի համար արդի թեմաներ, ինչպիսիք են՝ Մարիխուանայի լեգալիզացումը, Animal testing (Թեստավորումը կենդանիների վրա), Աբորտներ և այլն: Թեմաները, թիմերը, թիմերի դիրքորոշումը, կազմը որոշվում են վիճակահանության միջոցով: Յուրաքանչյուր թիմի կողմից ներկայացվում են ընտրված թեմայի վերաբերյալ սահմանում, պնդում, փաստարկ, հակապնդում հակառակ դիրքորոշմանը, թեմատիկ հարց հակառակ կողմին: Թիմերը պետք է հնչեցնեն խնդրի լուծման համոզիչ տարբերակներ, որոնք կբավարարեն և՛ կողմ, և՛ դեմ դիրքորոշումներին: Գնահատման ժամանակ հաշվի են առնվում թիմային աշխատանքը, տեղեկացվածությունը, կարգապահությունը, տեսակետի պաշտպանության հմտությունները և այլ հանգամանքներ: Ուսանողների խոսքով՝ բանավեճերը բացի նրանից, որ նպաստում են քննադատական մտքի զարգացմանը և արդյունավետ հաղորդակցմանը, նաև մտերմացնում են մասնակիցներին, հնարավորություն տալիս միմյանց ավելի լավ ճանաչելու, ընկերանալու և երբեմն՝ հակառակվելու: Վերջին տարիներին Հայաստանում շատացել են բանավեճի ակումբներն ինչպես դպրոցներում, այնպես էլ համալսարաններում: Բանավեճի մրցույթներ անցկացվում են տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում՝ հարթակ ստեղծելով ուսանողների համար՝ ցուցադրելու իրենց հմտություններն ու մտավոր կարողությունները:

Ամփոփելով մեր աշխատանքը՝ նշենք, որ մեր նպատակն է խթանել ճարտասանական խոսքի և բանավեճի արվեստի հմտությունների զարգացումը բժշկական բուհերում: Այսօր

⁸ «Джойс Артур. Определение личности: является ли эмбрион человеком?»: Արխիվացված է օրիգինալից 2015-09-26-ին: Վերցված է 2015-09-02:

⁹McDonagh, Eileen L. 1996. Breaking the Abortion Deadlock: From Choice to Consent. Oxford University Press, New York, NY; and Jarvis Thomson, Judith. 1986. In Defense of Abortion. Reprinted in Rights, Restitution, and Risk. Ed. W. Pavent. Harvard University Press, Cambridge. Massachusetts.

այլ է խոսքի զարգացման, դրսևորման, բանավեճի արվեստի առանձնահատկությունների պատկերը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների, սոցիալական մեդիայի զարգացմամբ պայմանավորված՝ ի հայտ են եկել առցանց բանավեճի հարթակներ և ֆորումներ, որոնք հնարավորություն են տալիս ներգրավվել բանավեճերի մեջ միջազգային հանրության հետ: Թվային այս փոփոխությունները ավելի են հարստացրել երկրում բանավեճի արվեստը՝ խթանելով միջմշակութային փորձի փոխանակումը և համագործակցությունը համաշխարհային մասշտաբով: Այս հաստատությունները դաստիարակում են երիտասարդ մտքեր՝ նրանց սովորեցնելով համոզիչ փաստարկներ կառուցելու արվեստը, քննադատական մտածողությունը և արդյունավետ հաղորդակցությունը: Ուստի ապագա բժիշկների ճիշտ, հստակ և գրագետ խոսքը ամենակարևոր գենքն է: Բանավեճի արվեստի դասավանդման կարևորությունն այն է, որ ապագա բժիշկը պետք է սովորի բանավիճելու, փաստարկներով հմուտ խոսելու, համոզելու բոլոր հմտությունները: Այլապես բժիշկը կկորցնի իր հանդեպ վստահությունը:

Օգտագործված գրականության ցանկ

- Արեւշատյան Ս., Հռետորական արվեստի հիմունքները, Հայպետուսմանկերատ, Ե., 1961:
Հովհաննիսյան Հ., Բանավեճի տեսություն և արվեստ. փիլիսոփայական քննախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ. 2019:
Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, Երևանի համալսարանի հրատ., Երևան 1990:
Boswell, J. The Kindness of Strangers: The Abandonment of Children in Western Europe from Late Antiquity to the Renaissance. — 1998. — ISBN 978-0-226-06712-4:
Spivack, C To Bring Down the Flowers: The Cultural Context of Abortion Law in Early Modern England // William & Mary Journal of Women and the Law. — 2014. — № 1:
«Джойс Артур. Определение личности: является ли эмбрион человеком?»: Արխիվացված է օրիգինալից 2015-09-26-ին: Վերցված է 2015-09-02:
McDonagh, Eileen L. 1996. *Breaking the Abortion Deadlock: From Choice to Consent.* Oxford University Press, New York, NY; and Jarvis Thomson, Judith. 1986. *In Defense of Abortion.* Reprinted in *Rights, Restitution, and Risk.* Ed. W. Pavent. Harvard University Press, Cambridge. Massachusetts.

РЕЗЮМЕ
ОБУЧЕНИЕ ИСКУССТВУ ДЕБАТОВ В МЕДИЦИНСКИХ ВУЗАХ
Кошаташян Сильва
Сюзанна Малхасян, Мардиян Мери, Лалаян Седя

В докладе представлен источник зарождения и развития искусства дебатов, изменение целей и структуры дебатов на протяжении веков. Мы особо подчеркнули важность овладения искусством ведения дискуссии и риторики в древнем мире. Были рассмотрены вопросы классификации дебатов и современные возможности ведения дебатов благодаря развитию информационных технологий. Пример психологической стороны дискуссии был приведен из медицинской области. Обсуждался вопрос о том, что врачи должны обладать искусством вести дискуссии, а также обсуждались методы преподавания и обучения дебатов. Была представлена деятельность клуба дебатов, действующего в колледже ЕГМУ.

Ключевые слова: искусство дискуссии, эристика, софист, конфликт, аргумент.

SUMMARY
TEACHING THE ART OF DEBATE IN MEDICAL UNIVERSITIES
Koshatashyan Silva
Malkhasyan Syuzanna, Mardiyan Mary, Lalayan Seda

The report presents the history of the origin and development of the art of debate, as well as the changes in the goals and structures of debates over the centuries. It particularly emphasizes the importance of mastering the art of debate and rhetoric in the ancient world. The report considers the questions regarding the classification of debates and the modern possibilities of conducting debates due to the development of information technologies. An example of the psychological aspects of debates in the medical field is also presented. The need for doctors to master the art of debate and exploring methods of teaching is discussed. Furthermore, the report presents the activities of the debate at the YSMU College.

Key words: art of debate, eristics, sophist, conflict, argument.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սուրբհայան Հենրիետա -Հետաձգված խոսք ուսուցչիս.....	3
Աթաբեկյան Մանե, Բաբայան Միլենա -Ինֆոգրաֆիկայի դերը հայերենը որպես օտար լեզու սովորեցնելիս.....	9
Աղաջանյան Ջարիկ -Լեզվի կանոնարկման սկզբունքներն ու օրինաչափությունները Էդուարդ Աղայանի աշխատություններում.....	18
Աշյան Տաթևիկ -Բժշկագիտական խոսքի առանձնահատկությունները.....	39
Ասոյան Թաթուլ -Էդուարդ Աղայանը և հայերենի հոլովման համակարգի հարցերը.....	47
Ասոյան Իրինա -Դասագիրքը արդյունավետ ուսուցման նախապայման.....	54
Բաղդյան Արփինե -Տերմինների և համարժեք ձևերի գործածումը լեզվում.....	60
Բառնասյան Ջեմմա -Էդ. Աղայանի դիտարկումները հայոց հին ամսանունների հարցի շուրջ.....	64
Գալստյան Անահիտ - Արդի հայերենի նորակազմ բառերի դասակարգման և իմաստակառուցվածքային քննության հարցեր.....	70
Գյուլգաստյան Դավիթ -Լեզվի կերպընկալման աղայանական փիլիսոփայությունը (հայեցակարգերի պատմատիպաբանական ուրվագիծ).....	74
Գրիգորյան Ամալյա և այլք -Հայերենի բայի եղանակների ուսուցման մեթոդանգլախոս ուսանողների համար.....	89
Զաքարյան Հովհաննես - <i>Բերկրանք</i> բառի ստուգաբանությունը.....	101
Թեյյան Լեոնիդ - Շարահյուսության հիմնական միավորը Է. Աղայանի մեկնաբանությամբ.....	106
Խաչատրյան Անահիտ -Ժամանակակից ռազմագիտական հայերեն բառապաշարի կատարելագործման ուղիները.....	114
Խաչատրյան Գուրգեն -Գրաբարի համադրական պատճառական բայերի խնդրառական արժույթը.....	120
Խաչատրյան Վալենտին -Գոյականի հոգնակիակազմության շեղումներն արդի հայերենում. կանոնարկման առաջարկներ.....	131
Կատվայան Վիկտոր -Է. Աղայանը բարբառների մասին.....	145
Հակոբյան Ֆրիդա -Էլեկտրոնային բառարանագրության արդի խնդիրներ.....	153
Ղարիբյան Ալինա, Մարդիյան Մերի, Լալայան Լիա, Մայիսայան Սյուզի – Բժշկագիտական տերմինները Ռուբեն Սևակի «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» երկում.....	162
Միանասյան Միրանուշ -Վաղակատար ներկայով դրված բայաձևերի՝ <i>արդեն, դեռ և նոր</i> մակբայների հետ կիրառության ուսուցումը.....	171
Մուրադյան Վիկտորյա -Տրական հոլովի իմաստային դրսևորումները (ըստ Գ. Մահարու «Օտղկած փշալարեր» վիպակի).....	184
Ներսիսյան Վարսիկ, Բատիկյան Թեմինե -Օտարաբանությունների և փոխառությունների գնահատման հարցը Էդուարդ Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության էջերում.....	197
Շահբամանյան Վրեժ - Գովազդի լեզուն.....	206
Պապիկյան Միլվա -Ժամանակակից հայերենի բառապաշարի քննությունը ըստ Էդ.Աղայանի «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատության.....	215

Պետրոսյան Սարգիս- ADDURU և ERITIA սեպագրային լեռնանունների շուրջ.....	221
Պետրոսյան Վարդան- Հին հայերենի «S + V + S» (<i>յոյ, լաւ, լու</i>) կադապարով եռաբարբառակերպերի տարածամանակյա բնութագրերը.....	234
Սաղաթելյան Ռիտա- Ֆիթնեսային տերմինների գործածությունը մարզական ակումբներում. դրանց հայերենացման խնդիրները.....	241
Վարդանյան Արտակ- Լաչին տեղանվան ստուգաբանությունը.....	254
Тшецяк Лукаш (Trzeciak Łukasz), Обучение поляков фонетике армянского языка: на основе «Армянской грамматики» Анджея Писовича (избранные вопросы).....	260
Քոչատաշյան Միլվա և այլք- Բանավեճի արվեստի դասավանդումը բժշկական բուհերում.....	267

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ
ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
(Երևան, 2023 թ., նոյեմբերի 15-16)

Ձևավորումը և էջադրումը՝ Մ. Խառատյանի
Կազմը՝ Ս. Արևշատյանի

Ժողովածուի խմբագրական խորհուրդը պատասխանատվություն չի կրում հեղինակների
տեսակետների, մոտեցումների համար: